



ԱԿԵՏԻՔ
ԻՍԼԱՄԱՅԻՆ









ԱՎԵՏԻՔ ԻՍԼԱՆԿՅԱՆ

Ե Ր Կ Ե Ր Ի
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՎԵՅ ՀԱՏՈՐՈՎ



«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1977

ԼԵՏԻՔ ԻՍԸ ՆԱԿՅԱՆ

Ե Ր Կ Ե Ր Ի
ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՆԱՏՈՐ ՆԻՆԳԵՐՈՐԳ



«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1977

Ի $\frac{70202(3051)}{701(01)75}$ 77 «Տ»

Տեքստը պատրաստեցին՝

ԱԲԱՍ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Ծանոթագրությունները՝

ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ

ՄՈՒՇԵՂ ՆԱՐՅԱՆԻ

Խմբագրական կոլեգիա՝

Ա. Մ. ԻՆՃԻԿՅԱՆ

Ս. Բ. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

Գ. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Վ. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Հատորի խմբագիր՝

Գ. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԻՄ ՀՈՒՇԵՐԻՑ



10 704-6649

10



ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Ապրիլ ամսի սկզբներին, 1901 թվին, Վիեննայից մեկնում եմ Վենետիկ, թե՛ Մխիթարյանների վանքի՝ հայագիտությանը հարուստ գրադարանից օգտվելու, և թե՛ Իտալիան հընար եղածի չափ տեսնելու:

Ուշ երեկոյան հասնում եմ Վենետիկ: Առավոտ վաղ ոտքի վրա եմ. ուզում եմ ժամ առաջ տեսնել Սուրբ Ղազար կղզին՝ Մխիթարյանների վանքը: Հետաքրքրությանս առաջին գծի վրա սա է կանգնած. պատանի հասակիցս երագել եմ տեսնել Վենետիկը, քայց մանավանդ Ս. Ղազարը:

Նստում եմ ինձ առաջին պատահած գոնդոլի վրա: Մի արևալատ օր է. սև գոնդոլը սև կարասի պես ներդաշնակ սահում է Մեծ կանալի կանաչ ջրերի վրայով: Սա կախարդական քաղաքի ամենամեծ, լայն և երկայն ջրային պողոտան է, որ կիսում է Վենետիկը երկու մասի: Նրա աջ ու ձախ կողմերում շարքով կանգնած են հրաշագեղ պալատներն ու ապարանքները՝ երփներանգ մարմարիոնով, կառուցված վենետիկյան չքնաղ ոճով: Կարծես հեքիաթների միջով եմ գնում, այնքա՛ն անիրական, այնքա՛ն երևակայական են թվում այս բոլորը. սակայն ես հայացքս հստել եմ Լազունայի հեռուները, որոնում եմ Ս. Ղազարի կղզին: Գոնդոլավարը, ճանապարհի ընթացքին հանդիպող կղզիների անունները տալով, առաջանում է և, ահա, ցույց է տալիս ոչ շատ հեռվում՝ Ս. Ղազարը...

Դանդաղ է սահում գոնդոլը: Ես անհամբեր եմ, շտապեցնում եմ գոնդոլավարին: Մոտենում ենք կղզուն. անհագորդ նայում եմ կանաչ ճոճիների միջից երևացող կարմիր շենքերին.—«Սուրբ Ղազարն է սա»,— ասում եմ ինձ և կրկնում:

Ի՛նչ պատկառելի անուններ հնչում են ականջիս՝ Մխիթար Սեբաստացի, Ագոնց, Չամչյան, Ինճիճյան, Բագրատունի... և Ալիշան, որին բախտ կունենամ այսօր իսկ տեսնելու:

Ինչքա՛ն մեծ երախտիք ունի Սուրբ Ղազարի միաբանությունը հայ գրականության, հայագիտության հանդեպ: Ի՛նչ հույակապ գործեր՝ առաջին աշխարհաբար հայ գրականություն, Հայկազյան բառարան, Հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն՝ սովոր հատորներով, հին ձեռագիր մատյանների (մատենագրությունների) հրատարակություններ, կլասիկների թարգմանություններ:

Գոհողը կանգ է առնում: Սրտատրոփ ոտք եմ դնում այս պատմական, թանկարժեք հողի վրա:

Ինձ դիմավորում է մի առողջ, համակրելի երիտասարդ վարդապետ: Եսայի Տայեցի՝ «Անվավեր ավետարանների» հրատարակիչը:

Միաբաններից մեկը, ամեն օր, հերթով, ընդունում է այցելողներին և ցույց տալիս Ս. Ղազարի տեսարժան տեղերը՝ տանար, մատենադարան, թանգարան, տպարան, պարտեզ և այլն: Վանքը լավ համբավ ունի Եվրոպայում, և Վեներտիկի այցելուները չեն թերանում Ս. Ղազարն էլ այցելելու:

Վանքը շրջելուց հետո Եսայի Տայեցին առաջնորդեց ինձ հյուրասենյակը, ուր ծանոթացա մի քանի երիտասարդ վարդապետների հետ, արդեն անուն ունեցողներ՝ Վարդան Հացունի, Էփրիկյան, Միմեն Երեմյան:՝ Հյուրասիրեցին սուրճով և անուշեղեններով: Նրանք շատ հետաքրքրվում էին Կովկասի հայերի կացությամբ, հարցնում էին դպրոցների մասին, գրականության և Էջմիածնի մատենադարանի մասին, Անիի և այլ հնությունների պեղումների մասին:

Այս գրույցից հետո փափագ եմ հայտնում տեսնել հայր Ղևոնդ Ալիշանին: Այս անգամ Միմեն Երեմյանն առաջնորդում է ինձ մեծանուն քանաստեղծի և գիտնականի մոտ:

Ինչքա՛ն, ինչքա՛ն ուրախ եմ, որ պիտի տեսնեմ ամբողջ հայության սիրելի Ալիշանին: 90-ական թվականների մեր

սերունդի համար նա ամենահմայիչ անունն էր. նրա՝ Նահապետի սքանչելի բանաստեղծությունները՝ «Հրագրան», «Պլպուլն Ավարայրի», «Հայոց աշխարհի՛կ, գարունդ է եկել...», մենք անգիր գիտեինք, մեր դասագրքերի գարդն էին նրանք, ոգևորված արտասանում էինք հանդեսներում:

Նրա գրքերին պատկատանքով էինք մոտենում, որոնք մեզ համար բացարձակ հեղինակություններ էին: Նրա աշխարհագրական երկերի վրա («Այրարատ», «Ծիրակ», «Սիսական») սովորում էինք Հայաստանը, և, նրա պես, չտեսած հայրենիքի նվիրական վայրերը, սիրում էինք մի անբացատրելի սիրով:

Մտնում ենք հայր Ալիշանի խուցը, մի ոչ մեծ սենյակ ծովահայաց լուսամուտով: Գրասեղանին հակած է մի ալևոր՝ փոքրամարմին, անարյուն, դալուկ մի սուրբ... և գրում է:

Մի վայրկյան դիտում եմ անշուք խուցը... Ամեն կողմ գիրք՝ աթոռների վրա, սեղանի վրա. մի պարզ անկողին՝ սնարին Աստվածամոր պատկերը. մի փոքր սեղանի վրա մի գրաֆինկա՝ ջրով լի, կողքին մի բաժակ: Եվ ուրիշ ոչինչ:

Ալիշանը բարձրացնում է գլուխը, խոշորացույց ակնոցների միջով նայում են ինձ երկու փայլուն, մեծ աչքեր:

Հուզմունքով համբուրում եմ ջլուտ ձեռքը, որ կերտել է այն պատկանելի հատորները:

— Ապրիք, գորանաք, ուրկե՞ կուգաք,— հարցնում է Ալիշանը տակավին առույգ ձայնով:

Հայր Սիմեոնը պատասխանում է իմ փոխարեն.

— Ուսանող է Վիեննայի, կովկասահայ է:

Ես հայտնում եմ իմ մեծ ուրախությունը, որ բախտ ունեցա տեսնելու մեր բոլորիս պաշտելի Նահապետին և այսպես առույգ, առողջ... Ալիշանը ժպտում է մեղմակի, սպա հարցնում է՝ ի՞նչ եմ ուսանում, ինչքա՞ն պիտի մնամ Վենետիկ:

— Ես կրնամ ձեզի սուրճ հրամցնել. վարդապետ, գնա՛ մեզի համար սուրճ ապսպրե:

Ես շնորհակալ լինելով, հրաժարվում եմ սուրճից:

— Սակայն դուն գնա՛, — ասում է Ալիշանը:

— Կովկասի հայերը սուրճ չեն սիրեր. դուք թեյ կսիրեք:

Ասկէ շատ տարիներ առաջ պարոն Միանսարովը, հայտնի ազգային մը, գիտե՞ք զինքը:

— «Քնար Հայկական»-ի խմբագիրը, թերևս:

— Ապրես, գիտուն մանչ ես. այո՛, ան Պետերբուրգէն այցի էր եկած վանքը ու ինձի սամովար մը նվեր բերած էր. ըսավ ինձի—վարդապետ, թեյ խմել սովորե, աշխատանքի ժամանակ աղէկ է: Զգործածեցի, հոն կննա վանքի մեկ անկյունին մէջ:

Տպարանում գնել էի Ալիշանի մեծ լուսանկարը, հիմա խնդրում եմ, որ բարեհաճի իր անունը գրել նկարի ներքո, որ շատ թանկագին հիշատակ կլինի ինձ համար:

Ալիշանը ամուր ձեռքով, դանդաղ ստորագրում է իր ներշնչող անունը:

Ավելի քան կես դար այս խոցում կամ նման խոցում, իր ողջ երիտասարդությունը, կքել է նա սեղանին, որի վրայով անցել են անթիվ գրքեր հին ու նոր լեզուներով, հայացքը Ադրիականի ոսկի ալիքներին և ականջը մշտամրմունջ ջրերին, և ժողովրդից հեռու, հայրենիքից հեռու, բայց հոգով մոտ, սրտով մոտ, երգել է իր «Նվագ»-ները (հինգ հատոր՝ I հ. «Մանկունի», II հ. «Մաղթունի» և «Բնունի», III հ. «Հայրունի», IV հ. «Տիրունի» և V հ. «Տխրունի»), երազելով հայրենիք, տիեզերք, անհունություն, հավերժություն...

Այս խոցում ներշնչված Մովսէս Խորենացու և Անանիա Ծիրակացու ներկայությամբ, անխնջ համբերանքով և ավյունով պրայտել է ողջ մատենագրությունը՝ պատմական և աշխարհագրական, արդի հայ գրականությունն ու մամուլը, հավաքել է անթիվ տեղեկություններ Հայաստանի ամեն մի վայրի մասին՝ հին և նոր:

Ալիշանը գիտնական աշխարհագետ էր, անդամ եվրոպական աշխարհագրական ընկերությունների. հմուտ ու շատ կարդացած էր. խորապես ծանոթ եվրոպական գիտնականների գործերին՝ Ա. Հումբոլդի, Կ. Ռիտերի, Էլ. Ռեկլյուի, այլև հին ու նոր ուղեգրությունների, սակայն, նա գրքերից կոմպիլյացիա կազմող չէր՝ չոր ու ցամաք, այլ, առանց նյութական աչքերով տեսնելու Հայաստանը, հոգով տեսավ նա դարերի մշուշների մէջ թաղված Հայաստանը, տեսավ տա-

րածություններով հեռու վայրեր, այցելեց Հայաստանի ամեն մի կետը, սիրեց, ապրեց ամեն մի հողի կտորը, շնչավորեց ավերակները, գգվեց, հիացավ նրանցով:

Իր հատորների և մեր հոգիների մեջ վերակերտեց նա Հայաստան աշխարհը և պատեց մի վիպական, բանաստեղծական մթնոլորտով՝ գեղեցիկ, հրապուրիչ, առասպելական, բայց և իրական:

Հայաստանը ո՛չ որ այնպես չգիտե, ինչպես նա, ո՛չ որ այնքան չի սիրել, որքան նա, այս մեծ հայրենասերը: Իրականությունը նրա գրչի տակ երազ է դարձել և երազը՝ իրականություն:

Լուսանկարը վերցնում եմ խորին շնորհակալությամբ, նորից համբուրում եմ բազմաշխատ ձեռքը և խոցից դուրս գալիս:

Տակավին Վեներտիկ էի, երբ Պետերբուրգի հայ ուսանողների մի խմբակից նամակ ստացա: Գրում էին, որ ուսանողների այդ խմբակը ձեռնարկել է ժամանակակից հայ անվանի մարդկանց կենսագրությունը գրել ժողովրդական լայն խավերի համար: Դիմում էին ինձ, որ անմիջապես Ալիշանից կենսագրական տեղեկություններ, փաստեր, դրվագներ խնդրեի, պատմեր ինձ և նույնպես միաբաններից հավաքեի նյութեր, նաև հարցնեի նրա կարծիքը թրքահայերի հարցի մասին (Հայկական հարց):

Այս նամակով զինված, գնացի Ալիշանի մոտ: Ալիշանը հեզմանքով արաց.

— Այդ ի՛նչ ծանր քար են դրած քո մեջքին: Վախեցա՞ր. գրելիք բան մը չկա: Ես կենսագրություն չունիմ:

Ասաց, որ իրեն 8—9 տարեկան հասակում Կ. Պոլսից բերել են Ս. Ղազար, նվիրել են վանքին: Սկսել է աշակերտել միաբանության դպրանոցում, ավարտել է շատ մատաղ տարիքում, ուսանող է եղել և մի քանի տարի էլ Փարիզի Մուրադյան հայ վարժարանում դասատու և վարիչ է եղել:—Եվ քանի մը գրքեր են գրած: Ուրիշ ալ ըսելիք չունիմ: Գրքեգիրք՝ ստ է եղած իմ ճամփան: Ուրիշ տեղեր չեմ գացած:

Հետո ասաց, որ աշխարհականները կենսագրական ունին, կարող են ունենալ: Գործեր կրոնեն, կընկնին, կելնեն: Ծամփորդություններ կկատարեն, կկուլին, դատեր կվարեն, կամուսնանան, երեխաներ կունենան և այլն, և այլն:

Ինչ վերաբերում է Հայկական հարցին, Այլշանն ասաց հետևյալը, որ ես շարադրում եմ արևելահայ բարբառով.

— Իհարկե, հայ ժողովուրդը լավ գիտեր, որ իր սեփական ուժերով չպիտի կարողանար թոթափել թուրքական լուծը, ինչպես առանց Եվրոպայի օգնության չպիտի կարողանային ազատվել ո՛չ Հունաստանը և ո՛չ Բուլղարիան: Հայ ժողովուրդն էլ, նրանց հետևելով, հույսը դրել էր քրիստոնյա Եվրոպայի օգնության վրա, մեծ, քաղաքակիրթ պետությունների մարդասիրության վրա: Այստեղից էլ հայ ժողովրդի մեծագույն և բազմադետ սխալը:

Կոտորածների ժամանակ Թերզյան հայ կարդինալը գնում է Հոռոմ, ընկնում է սրբազան պապի ոտները, աղերսում է, որ պապը դիմում անե քրիստոնյա մեծ պետություններին՝ Անգլիային, Ռուսիային, Ֆրանսիային, Գերմանիային, որ շարդարար թուրքի ձեռքը բռնեն: Սրբազան պապն ասում է.— «Այդ քրիստոնյա մեծ պետություններն են հայերին կոտորողները, ես որի՞ն դիմեմ»:

Եվրոպական պետությունները ո՛չ միայն չօգնեցին և չըպաշտպանեցին իրենց հուսացող հայ ժողովրդին, այլ պատեհ առիթ գտան շահագործելու հայկական արյունը: Հայ ժողովրդին վաճառեցին թուրք դահիճին, փոխարեն ստացան տնտեսական-առևտրական մեծաշնորհներ: Եվրոպացու «բարոյականը ավերված է». բարոյապես սնանկացած է նա. նախնական մարդու բնական մարդասիրությունն էլ չունի անգամ: Նա ստախոս է, շահամոլ է և եսական:

Պետք է վերջ տալ հայերի մեջ եղած հեղափոխական ընկերությունների գործունեությանը. պետք չէ գրգռել թուրքերի մոնղոլական արյունը: Պետք է ընդմիջտ երես շրջել այդ փչացած Եվրոպայից և գարշաձքով երես շրջել:

Թրքահայերի պատրիարք Օրմանյանը քաղաքագետ մարդ է. բարեկամական հարաբերություններ է մշակում նա սուլթանի հետ: Պետք է աջակցել նրան: Մի բառով՝ պետք է

համակերպել. ուրիշ էլք չեմ տեսնում հայերի համար: Հետո ավելացրեց.— Ռուսահայերի վիճակը, համեմատաբար, գեշ չէ. կոտորած, հափշտակություն չկա, բայց այն պատճառով, որ ազգային դպրոցներ չունենք, հայկական դաստիարակություն չկա, լեզու և մշակույթ ճնշման տակ են, այս դրությունը ցանկալի արդյունք չի տալու: Ռուս պետությունը իր բերանով է ասում այս: Մի երկու տարի առաջ վանքն է այցելում ռուսական եկեղեցու սինոդի մեծը (երևի՝ Պոբեդոնոսցև, սինոդի օբեր-պրոկուրորը) իր քարտուղարի հետ: Գրեթե բոլոր միաբանները նրա պատվի համար ոտի վրա են և քայլում են նրա հետ: Նա տեսնում է գեղեցիկ տաճարը, ճոխ գրադարան-մատենադարանը, տպարանը, թանգարանը... Երբ նստում են հյուրասենյակում մի բաժակ սուրճ խմելու, այդ ռուս մեծ պաշտոնյան, շնորհակալություններ հայտնելով միաբաններին, ասում է. —Ես հիացած եմ ձեր աշխատանքի, համբերության և սիրո նկատմամբ՝ հանդեպ ձեր ազգի, բայց ցավում եմ, որ դրանք իզուր ջանքեր են, անօգուտ, աննպատակ: Որի՞ համար են այդ անձնազոհումները. մի փոքր ժողովրդի համար՝ ցրված երկրի երեսին և մատնված կորուստի: Թուրքիայում կոտորում են հայերիդ շարունակ, Ռուսիայում էլ հայերը ոչ ռուս ժողովուրդների հետ դատապարտված են շուտ կամ ուշ ձուլվելու:

Բոլոր միաբանները սուկացին, սակայն, արբահայրը (Իգնատիոս եպիսկոպոս Կյուրեղյան) հանդարտությամբ պատասխանում է. —Հայ ժողովուրդը շա՛տ ավելի ահեղ ժամանակներ ու բռնություններ է տեսել, նվազել է թվով, բայց մնացել է ոգով կայուն և անվթար: Մեր հույսը աստծու վրա է, մեր ժողովրդի տոկունության և պատմության անմահական ընթացքի վրա:

Բոլոր միաբանները անխոս հեռանում են դահլիճից, իսկ մեծանուն պաշտոնյան, քարտուղարի հետ միայնակ, գնում է նավամատույց:

Այիշանն ավարտեց խոսքը, ծանր շնչեց. լռեց մի պահ, ապա ձեռքը մեկնելով ինձ, ասաց.— Բարևներ խոսեցեք Պետերբուրգի ձեր ազնիվ ընկերներին, նաև իմ շնորհակալությունը՝ իմ հանդեպ ունեցած նրանց հարգանքի համար:

Շրջահայա՛ց եղեք, սիրեցե՛ք հայոց լեզուն, Հայաստան աշխարհը և սիրեցե՛ք միմյանց:

Ես խոնարհեցի գլուխս և դուրս ելա նվիրական խուցից:

Երբ մեկնում էի Վենետիկից, գնացի Ալիշանի մոտ՝ վերջին անգամ տեսնելու և հրաժեշտ առնելու:

Օրհնեց ինձ, բարիքներ մաղթեց և ողջույն ողարկեց Խրիմյան Հայրիկին:

— Ինձմեն հարյուր օրով մեծ է ան,— ասաց Ալիշանը,— բայց կըսեն, որ շատ առույգ է, ձի կնստի. հարկավ այդպես է. ան Մասիսի հովին տակ կքնանա, Արաքսի ջուրը կխմե, Հայաստանի հացը կուտե, անոր հողի ուժը կստնե...

1948, դեկտեմբերի 30,

Երևան

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

Սեպտեմբերի մեջ, 1901 թվին, այցելեցի Սուրբ Էջմիածին: Նույն թվի մայիսին, երբ Վեներտիկ էի, մեզ ամենիս սիրելի հայր Ղևոնդ Ալիշանը իմ վրա քաղցր պարտք դրեց «Հայոց Հայրիկին կարոտագինս ողջունելու իմ կողմանե»:

Մի երեկո անմոռանալի քախտ ունեցա Հայրիկի մոտ լինելու և համբուրելու նրա աջը:

Սիրոս ուժգին խիռս էր հուզմունքից և ուրախությունից:

Առաջապիտեց նստել:

— Վեհափառ Հայրիկ,— ասացի ես,— մե՞ծ քախտավորություն եմ զգում, որ ինձ վիճակվել է բերել Նահապետ Ալիշանի կարոտագին ողջունները Հայոց Հայրիկին:

— Ահ, շատ շնորհակալ եմ: Դուն Վեներտիկ էիր, ե՞րբ էիր հոն, ինչպե՞ս է հայր Ղևոնդը, աղե՞կ է:

— Այո, վեհափառ Հայրիկ, այս գարնանը Վեներտիկ էի և պատիվ ունեցա մի քանի անգամ լինելու ալեգարդ Նահապետի մոտ: Նա հիվանդոտ է և թույլ...

— Ափսո՛ւ, ափսո՛ւ,— խոսքս ընդհատեց Հայրիկը,— մենք հասակակիցներ ենք. ես շատ կսիրեմ անոր. անուշ գրիչ ունի: Նա շատ է ազդեր իմ գրչի վրա, նա ինձ շատ բան է ներշնչեր: Ասա, ուրիշ ի՞նչ կընես:

— Նա ինքն էլ էր ասում, որ Հայրիկը իրենից հարյուր օր, միայն հարյուր օր մե՞ծ է, և ասում էր, թե բերկրանքով եմ լսում, որ Հայրիկը ձի է նստում և ժողովրդին այցի է ելնում...

Միշտ նախանձում էր Ձեզ, վեհափառ Հայրիկ, և ասում էր, թե Հայրիկի բանն ուրիշ է. նա առույգ է մնացել, որովհետև Մասիսի շուքին ներքո է բնում, հայոց դաշտերի ծաղկանուշ հովն է ծծում, Արաքսի ջուրը խմում:

Այստեղ Հայրիկը ուրախ և սրտանց ծիծաղեց:

— Ան կնախանձե ինձ, ես վաղը կկարգադրեմ, որ անոր Մասիսի հողեն, Երասիսի ջրեն ու Հայաստանի ծաղիկներեն քիչ մը վերցնեն և փոքրիկ արկղով մը դրկեն Վեներտիկ:

Ինչպէս հետո իմացա, Հայրիկի կողմից ուղարկվել էր մի փոքր արկղ այդ արմաղաններով, բայց մինչ հասնելը, դժբախտաբար, սիրելի Նահապետը արդեն վախճանված էր եղել (1901 թ. նոյեմբերի մեջ):

— Էհ, դուն ալ բարով ես եկել: Ես Կովկասի մեջ երկու բանաստեղծ կճանաչեմ անձամբ ու շատ կսիրեմ անոնց, մեկը մեր ուսուցիչ Հովհաննէս Հովհաննիսյանն է, մեկն ալ Թիֆլիս Հովհաննէս Թումանյանն է, ըջտե, մեկն ալ դուն ես, քեզ ալ հիմա տեսա: Դուն անոնցմէ երիտասարդ ես, այդ է պատճառը, որ միշտ ամպ ու աղբյուր, վարդ ու աղջիկ կը երգես....

Այստեղ Հայրիկը նորից շատ զվարթ ու բարձր ծիծաղեց:

— Ծա՛տ պիտի մնաս հոս, — հարցրեց նա:

— Մի քանի օր ուզում եմ մնալ, վեհափառ Հայրիկ:

— Էհ, լավ է. ամեն երեկո եկ, կխոսենք:

Գլուխ խոնարհեցի ու դուրս ելա:

Ամբողջ գիշեր ես նրա թովիչ ձայնի, նրա արծվենի հայացքի ազդեցության տակ էի: Եվ ինձ թվում էր, որ սարում եմ նահապետական օրերում և երջանկություն եմ ունեցել խոսելու հին նահապետներից մեկի հետ: Հայրիկն իմ երևակայության մեջ միշտ պատմական կամ, ավելի ճիշտ սասած, առասպելական լուսապսակով էր զարդարված: Մանուկ օրերից երազել էի տեսնել Վասպուրականի արծվին, հայ ժողովրդի հույսերի և տենչերի կրող Հայոց Հայրիկին:

Մյուս երեկո Հայրիկը իր քարտուղար-վարդապետի միջոցով ինձ կանչեց Վեհարան:

— Էհ, նստե, տեսնենք, դուն գիտես, որ ես ալ բանաստեղծ եմ ու շատ կսիրեմ բանաստեղծություններ կարդալ: Հոնքոս ու Վիրգիլոս ամենն շատ կսիրեմ:

Ու սկսեց ստույգ շեշտով անգիր արտասանել Իլիականից և Էնեականից գրաբար հատվածներ: Այդ պահին նրա գեղեցիկ աչքերը փայլում էին երիտասարդական ոգևորությամբ:

Երագի մէջ էի գգում ինձ, այնպէս իրականութիւնն ինձ
անիրական էր թւում:

— Բեզի իմ գրքերէն տամ, հարկավ կարդացած կըլլաս,
սակայն բանաստեղծները իրար կնկիրեն իրենց հեղինակ-
ւորութիւններէն, դուն ալ բուկիններէդ ինձի կուտաս:

Եվ Հայրիկը կանգնեց իր պարթևական հասակով, գնաց
մշու սենյակը և բերեց «Ժամանակ և խորհուրդ յուր» և «Պո-
պիկն ու թոռնիկ» գրքերը:

— Ասոնք քեզի Հայրիկէն հիշատակ:

Անհուն շնորհակալությամբ սոս թանկագին նվերները՝
մարմարյա աջը համբուրելով:

Այնուհետև նա թիկն տվեց բարձերին՝ ծալապատիկ նըս-
տելով: Փաթաթում էր հաստ-հաստ պապիրոսներ և իրար
հետևից ծխում: Ծխելով խոսում էր անվերջ, պատմելով Վա-
նի կյանքից, իր մանկությունից, չարանձիություններից: Պատ-
մում էր զանազան դեպքեր մեր մոտիկ անցյալից, նկարա-
գրում էր իր ուղևորությունները: Ես հիացած ականջ էի դը-
նում նրան, այնքան պերճախոս էր և յուրահատուկ պատ-
մող: Նրա խոսքը համեմված էր ժողովրդական դարձվածք-
ներով ու առածներով:

Հիշելով զվարթ դրվագներ իր կյանքից, ուրախ ծիծաղում
էր. այնպէս հուժկու թափով էր ծիծաղում, որ բազմոցը տա-
կին խաղում էր:

Առհասարակ Հայրիկը շատ էր սիրում խոսել-գրուցել:
Հարց էր տալիս և պատասխանի չսպասած՝ ինքը շարունա-
կում էր խոսել, պատմել և ծիծաղել:

Վանքում մնացի մի քանի օր ևս, ու գրեթէ ամեն երեկո
Հայրիկն արժանացնում էր ինձ իր տեսակցությանը: Եվ երբ
մի երեկո մնաք բարևի գնացի և հայտնեցի, որ առավոտյան
մեկնում եմ Էջմիածնից, նա ասաց.

— Տղաս, ամեն անգամ, երբ գաս հոս, Հայրիկին չմոռա-
նաս տեսնել:

1902 թ. հունվարին ես Աորից ս. Էջմիածնի վանքումն էի,
և ինձ համար կրկնվում էին Աորից գեղեցիկ երեկոները:

Գնացի տեսնելու Հայրիկին:

— Էհ, բարով եկար, կերևի Հայրիկին կարտեք ես, վանքի հացն ալ անուշ է: Պատմե՛ն նայեմ, ի՞նչ կա, ո՛ր էիր: Ես պատմեցի ճանապարհորդություններիս մասին:

— Ապրիս, ապրիս, համ կճամփորդես, համ կգրես: Ես ալ այդպես եմ ըրեր: Հա, լավ միտս ընկավ, ես վերջին տեսններս շատ բաներ եմ գրած: Կարդամ լսե, բայց ուղիղ և ճշմարիտ խոսե. բու անկեղծ կարծիքն ըսե, մի վախենար: Հիմա դուն պիտի մտածես, որ Հայոց կաթողիկոսի գրածները չի կարելի քննադատել. կամ անոր շիտակ բան մը ըսել, ինչպես մեր վարդապետները կընեն. երեսիս մի բան կըսեն, դուրսը ուրիշ: Ու գիտցիր, որ բանաստեղծները միշտ ճշմարիտ պիտի խոսին աշխարհիս տերերի առաջ: Մեզ ալ աշխարհը տեր շինեց. Քրիստոսը տեղ չունեք գլուխը դնելու, առաքյալները անտուն ու բոքիկ ման կուգային, բայց հիմա մենք՝ անոնց ժառանգները վեհարաններու մեջ կապրինք: Ասոր վրա բան մը գրել եմ:

Եվ նորից կանգնեց իր պարթևական հասակով, գնաց մշուս սենյակը և բերեց մի տետր, նստեց բազմոցին, ակնոցները դրեց աչքերին և ուժեղ ձայնով սկսեց կարդալ: Բովանդակությունը հետևյալն էր. ինքը գնում է Թադեոս առաքելի վանքը ուխտի, թակում է վանքի դարպասը և ասում. «Բաց, Թադեոս առաքյալ, ես եմ, բո հաջորդը, գահիդ ներկա տերը»: Առաքյալը ներսից պատասխանում է, որ ինքը գահ չունի, այդ ի՞նչ գահի մասին է խոսքը, և որ ինքը բռնակալ, իշխան չէ, որ գահ ունենա:

Հայրիկը պատասխանում է. «Մի՞թե չգիտես, որ գահի ս. Էջմիածնում է, շքեղ Վեհարանի մեջ. շքեղ գահ, ծառաներ, հարստություն»:

«Մեր տեր Հիսուս Քրիստոսը, — ասում է առաքյալը, — անտուն էր ու ինքը ծառա: Դուք նրա աշակերտները չէք. գնա, չեմ ընդունիլ...»:

Եվ Հայրիկին չի ընդունում առաքյալը: Հայրիկը վերջացրեց ու սրտանց ծիծաղեց: Այդ գրվածքի մեջ երևում էր Հայրիկն իր բովանդակ դեմոկրատիկ էությունը:

Այսպե՛ս աս տվեց ինձ գրվածքների տետրը, որ ասանձին

կարդամ և հաջորդ երեկո նկատողություններս հայտնեմ իրեն:

Դրանք ազատ-անհանգ այն ոտանավորներն էին, որ հետագայում տպվեցին Եգիպտոսում «Վերջալույսի երգեր» վերնագրով, բիստ 82-ամյա պատկառելի գրչից:

Մյուս երեկո, խրախուսված Հայրիկի սիրալիր վարմունքից, մի քանի նկատողություններ արեցի, որ ոտանավորները երկար են, և լեզուն խառն է, արևելահայ և արևմտահայ բարբառների խառնուրդ:

— Այո, այո, ես ալ նկատեի եմ, որ իմ լեզուն խառնվեր է: Կովկաս եմ ապրում, ազդվեր եմ, միշտ ալ խառն բարբառով կխոսիմ: Իսկ որ կըսես երկար է՝ պատճառը երկար գիշերներն են,— պատասխանեց նա,— չեմ քնանար, ճանճրույթես ման կուզամ դահլիճին մեջ, կծխեմ ու կերգեմ, այդ միջոցին ալ կգրեմ, մինչև որ քունս գա, այդ պատճառով երկար կըլլա:

— Թույլ տվեք, վեհափառ Հայրիկ, հարցնել, ի՞նչ երգեր կերգեք:

— Ծարականներ կերգեմ, ներբողներ, սուրբ հարց երգեր են՝ Ծնորհալու, Կեչառեցու, Պետրոս Ղաթիանցու, Գրիգորիս Աղթամարցու և Բաղդասար դպիրի սիրո տաղերն ալ կերգեմ: Ղաթիանցին լավ տաղասաց է, Քուչակ Նահապետ անորից վեր է. բայց ժողովրդի երգեր ամենից վեր են. ես շատ կերգեմ մեր Վանա և Մուշի գեղջկական երգեր, որ սովորել եմ վաղուց Վարազա և Ս. Կարապետի ուխտավորներից: Բայց ամենից շատ կսիրեմ Խորենացու ողբը, անոր համար ես մի եղանակ եմ շինել ու կերգեմ: Ինձի կթվա, թե այդ ողբը հայ ազգի ճակատագիրն է ու ամեն դարու ողբը, ինձի այնպես կերևա, թե քերթողահայրն Մովսես այս օրերին համար է գրել...

Հանկարծ հիշեց Նարեկացուն և ոգևորված խոսեց Նարեկի վանքի, Վանա ծովի գեղեցկության մասին, անգիր ասաց Նարեկացու աղոթքներից, պատմեց նրա տեսիլը, նրա մասին եղած ժողովրդական ավանդությունները:

— Նարեկացու կույս հոգին միայն կրցավ հասկանալ Քրիստոսին և տվեց քրիստոնեության բանաստեղծությունը: Այսպես ամփոփեց Հայրիկն իր խոսքը:

Հաջորդ երեկո Հայրիկը շատ ուրախ տրամադրության մեջ էր, պայծառ դեմքով, ծալապատիկ նստած բազմոցի վրա գիրք էր կարդում և իր սիրելի մեծ «Վանիկ» կատունն նրա կողքին անուշ մոմում էր:

— Նստիր, տղաս, խոսիճք, գիշերն երկայն է:— Մի փոքրիկ գավաթով սուրճ խմելուց հետո ոլորեց իր հաստ պայպիրոսը և սկսեց ծխել ու զվարթանալ խոսել:

— Դուն ալ կծխես, տեսել եմ, սուրճին հետ շատ համեղ կըլլա ծխելը, բայց գիտցիր, Հայրիկին մոտ չըլլար ծխել, միաբան մը կնկատե ու աշխարհով մեկ չալ կընե, թե Հայոց կաթողիկոսը թույլ կուտա տղաներուն իր մոտ ծխել,— այստեղ Հայրիկը երկար և բարի ծիծաղեց,— ատոր համար քեզ մուշտուկ մը կնվիրես իմին մուշտուկներից, դուրսը ծխիր:

Ապա վերցրեց Երուսաղեմից ուղարկված ձիթեմու ճյուղից շինված մի մուշտուկ և նվիրեց ինձ:

Դրանից հետո Հայրիկն սկսեց պատմություններ անել, փոքր ծիծաղելի դեպքեր, անցյալի վերահիշումներ:

Որքան նրա հիշողությունը թարմ էր, նույնքան էլ նա թրոհչքներով էր խոսում. մեկ պատմում էր Սուլթան Համիդի մասին, մեկ Մուշի մի գյուղի մասին, մեկ նկարագրում էր բանաստեղծական գույներով մի լեռ Վասպուրականում, մեկ խոսում էր Լոնդոնի մուզեյների կամ Փարիզի մասին: Եվ ինչ որ պատմում էր, բոլորն էլ հետաքրքրական և գեղեցիկ, թե՛ ձևի տեսակետից, թե՛ նյութի: Իր բազմաբովանդակ և նշանակալից անցյալից, ինչպես մի առասպելական հարուստ գանձարանից, հանում էր թանկագին գոհարներ— հուշեր և այդ հուշերով ոգևորվում էր, թարմանում և ստույգանում: Նա ապրում էր իր անցյալով: Այդ հուշերը մեր ժողովրդի 19-րդ դարի ամբողջ պատմությունն էին, մի շքեղ Ողիսական, որի ստեղծողն ու շատ անցքերի ականատեսը բռնած քեզ հայրական ձեռքով տանում է Հայաստանի խորշերը,

վանքերն ու ավերակները և եվրոպական պալատներն ու վե-
հաժողովները: Հսկայական կալեյդոսկոպի մեջ դու տեսնում
ես Մասիս ու Մոն-բլան, Բզնունյաց ծով և Բոսֆոր, հայ աշ-
խատավոր գեղջուկին և ավազակ քուրդ բեկին, հայ գործիչ-
ներին՝ Գրիգոր Օտյանին ու Րաֆֆիին և վայրագ փառանե-
րին, Սուլթանին ու Բիսմարկին և այլն, և այլն:

Զարմանում էի նրա հրաշալի հիշողության վրա, մանրա-
մասն և գեղարվեստորեն նկարագրում էր բնության զանա-
զան տեսարանները և այցելած քաղաքներն ու շքեղ շենքե-
րը: Հիշում էր, օրինակի համար, 40-ական թվականներին
մարդկանց խոսքերը և անցքերի օրերը նույնիսկ, կարծես,
ուշինչ չէր մոռացել:

Երբ դուրս եկա վեհարանից, մտածում էի ինքս իմ մեջ—
մեծ մարդիկ չեն ծերանում:

Հայրիկը նույնպես շատ հարցասեր էր, միշտ հետաքրք-
րվում էր գիտական, գրական, քաղաքական նորություն-
ներով:

Մի երեկո ասաց ինձ.

— Դուն լսած կա՞ս ան գերման գիտունի մասին, Հեկկել
կրսեն:

— Այո, վեհափառ Հայրիկ, նա Դարվինի մեծ աշակերտն
է ներկայումս:

— Անցած օրը ճեմարանի ուսուցիչներեն մեկը պատմեց
իմձ անոր մասին, ան դարվինականությունը հոր և զորավոր
փաստերով կհաստատե, որ Աստվածաշունչի պատմածը
մարդու մասին— առասպել է սոսկ, այլ ճշմարիտն այն է,
որ մարդն անասնական ծագում ունի: Ես այ կկարծեմ, որ
այդպես է. բանգի մարդու մեջ շատ անասնական բան կա:
Քրիստոս ատոր հետ կովելու էր եկել. ան կուգեր մարդուն,
որ անասունի որդի է, ասածու որդի դարձնել: Ծիշտ է Հի-
ստուս, ատոր պիտի ձգտենք մենք՝ ասածուն որդեգրվել:

Մեկ-մեկ պատմել Հայրիկի իմաստուն գրույցները, սը-
րբամիտ խոսքերն ու կատակները և հուշերը՝ մեծ գրության

Այոք է: Ես բախտ ունեցա շատ անգամ լինելու այս հոյակապ մարդու մոտ և շատ բան լսեցի, որոնցից մի փոքր մասըն եմ պատմում այստեղ:

Ամեն անգամ նա սիրով ընդունում էր ինձ. միայն մի անգամ բարկացավ վրաս և դուրս արավ մոտից: Դեպքը սա է:

1904 թվի մի ամսվա ընթացքում ես Հայրիկին պատահեցի մի բանի տեղում՝ Թիֆլիս, Ալեքսանդրասյուլ, Էջմիածին և վերջապես Խոր-Վիրապի վանքում: Վերջին տեղում ներկայացա նրան, ինձ տեսավ թե չէ, ասավ զայրացած— «Օո, դուն կհետևես ինձ ամեն տեղ, աստանա, հայրե, կորի, գնա մոտե...»:

Ես իսկույն փախա, բայց երեկոյան կանչեց ինձ մոտը և սիրտս առավ:

— Տղաս, այսօր սիրտս ելած էր ուրիշ բանի մը առթիվ, բարկությունս բու վրադ թափեցի, բանզի գիտեմ, որ դուն Հայրիկին կսիրես ու անորեն չես նեղանար. ուրիշներու վրա չեմ կրնա բարկանալ. քեզ կսիրեմ, ստոր համար վստահ կբարկանամ վրադ: Հետո ծիծաղելով վրա բերեց.— «Ի՞նչ շատ ման կուգաս Վանա ջրտորտող թոշունների պես: Երանի քեզ, երիտասարդ ես, չես հոգնի, լավ կանես, շրջիր, գնա, ման եկ ժողովրդի մեջ, ինչ կա, չկա ան է, ան տեղ է, հողին հետ. մեծ է ժողովուրդ ասածդ, մեծ սիրտ ունի, անոր հետ եղիր միշտ և բու սիրտն ալ կմեծանա»:

Վերջին անգամ Հայրիկին տեսա 1906 թվի աշնանը, ցավալիորեն թույլ էր և գունատ:

— Հիվանդ է Հայրիկը,— ասաց,— շատ չի ապրի Հայրիկը... Էհ, շատ մարդ կա պատկած հողին տակ՝ փարավուններ, արքաներ, հերոսներ, Խորենացի, Նարեկացի, Վիկտոր Հյուգո... վաղն ալ ես կպատկեմ հողին քնով: Ի՞նչ կուգաս վանքը ու Հայրիկին շիրիմը կտեսնես, կուլաս, չես լա— այդ չեմ կրնար ըսել, բայց այն ժամանակ կզգաս Հայրիկին կարոտը, հոս տեղ ուրիշը նստած կըլլա ու չես կրնար Հայրիկին հետ խոսել ու ծիծաղել...

Տխուր նախազգացումով պաշարված, ուշի-ուշով դի-

տում էի նրա արծվենի հայացքը, ուր դեռ արև կար, հոգե-
թով ձայնը և հնադարյան մագաղաթի նման դեղին աջը:

Զգում էի, որ վերջին անգամ եմ տեսնում նրան՝ հայ ժո-
ղովրդյան այդ մեծ զավակին: Մի երկար ու խորին համ-
բույրով նրա աջն առա և հեռացա մոռյլ ու տխուր:

Ես հավատացած եմ, որ մինչև մահս իմ հոգում անջինջ
և անաղարտ կմնա նա՝ այդ մեծ հայրենասերը:

Երբեք չեմ կարող մոռանալ նրա հայացքը, նրա նվիրա-
կան ձայնը: Այնպես խորն է ազդել իմ հոգու վրա:

Եվ հայ ժողովուրդն էլ չի մոռանա նրան: Քանի հնանա,
այնքան ավելի պիտի պայծառանա նրա հիշատակը: Նա դս-
րերի միջից պիտի նայե հայ ժողովրդին և պիտի խոսի նրա
հետ հարազատ լեզվով նրա նվիրական իղձերից և անմահ
նպատակներից:

Ժողովուրդը նրան չի մոռանա երբեք, որովհետև նրա
սրտից էր եկել և դեպի նրա սիրուն էր գնում:

ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆ

Առաջին անգամ նրա անունը լսեցի «Սոս և Վարդիթեր» անվան հետ միասին: 12—13 տարեկան էի, երբ ձեռն անցավ «Սոս և Վարդիթեր» վեպը: Այս տողերը գրելիս վերապրում եմ այն չքնադ, հափշտակված հոգեվիճակը, որ կրում էի վեպի ընթերցման պահին:

Թառել էի Արփաշայի ափին ջրերի վրա օրորվող ուռենու հաստ նյուդքին և կլանում էի վեպի էջերը: Օրջապատիս իրական աշխարհն այլափոխվել էր, մի ուրիշ երկնքի արև էր շողում գլխիս վերև, Քասախն էր հոսում ոտներիս տակ, և Սոսի ու Վարդիթերի հետ բռնկված՝ թափառում էի Աշտարակի կախարդական այգիներում: Սիրտս թրթռում էր նրանց զգացումների հետ. արցունքներս թրջում էին սքանչելի վեպի էջերը՝ դժբախտ սիրահարների վշտով համակված:

Դրանից հետո կարդացի «Վովածաղիկ» վեպը նույն հափշտակությամբ: Ի՛նչ խորհրդավոր, դյուրական աշխարհ էր պարզում նա իմ մանուկ մտքի առջև:

Այդ երկու վեպերն էլ այնուհետև դարձան իմ անմեկին ընկերները: Եվ ինչքան էլ որ նրանց հերոսները թվում էին ինձ կենդանի, կյանքով բախում մարդիկ, նույնքան ավելի շատ նրանց հեղինակը գերբնական մի արարած, որ ինձ համար մի անբացատրելի հրաշքով կարողացել էր ստեղծել հեքիաթի մի կախարդական աշխարհ: Ա՛խ, երանի նրան տեսնեի, ո՞ր է ապրում նա, մտածում էի ես, արդյո՞ք կարելի է նրան տեսնել, մի՞թե հնարավոր է... Եվ ինչքա՛ն մեծ եղավ զարմանքս, երբ նույն թվականին, Աճի քաղաքում, ուր գրեթե ամեն տարի գնում էի ես մեր գյուղին շատ մոտ գտնվելու հետևանքով, հանդիպեցի մի քանի աշտարակցիների: Հարցուփորձ արի Սոսի և Վարդիթերի մասին և Պոռչլաճի

մասին: Նրանք պատմեցին, որ Սոս ու Վարդիթերը ողջ են, որ Սոսն իրենց դրացին է, իսկ Պոռշյանը, հո, իրենց ազգականն է, որ մեր գեղացիների պես մարդ է, պարզ, հասարակ...

Եվ Պոռշյանը իր երևակայության միջից իջավ, կանգնեց իր հերոսների շարքում՝ իրական և կենդանի:

Տարիներ հետո, 1892 թվին Թիֆլիսում հայոց վանքի բակում ընկերներս ցույց տվին Պոռշյանին, որ մի քանի հասակակից մարդկանց հետ զրույց անելով՝ գնաց առաջնորդարանը: Հայրական տպավորություն ստացա նրանից, և այդ տպավորությունը հարատևում է զգայությանս մեջ՝ մինչև այսօր:

1898 թվին, մարտ ամսում Թիֆլիսումն էի, «Երգեր ու վերքեր» բանաստեղծություններիս գրքուկը նոր էր լույս տեսել. անձամբ գնում էի մեր հոշակավոր գրողների մոտ և խորին ակնածանքով գրքուկս ներկայացնում նրանց:

Գնացել էի հավերժ սիրելի Ղազարոս Աղայանի մոտ, որի հետ բախտ էի ունեցել ծանոթանալու Հովհ. Թումանյանի շնորհիվ:

Այս զարթուղումը անում եմ արձանագրելու համար նրանց կարծիքների զվարճալի տարբերությունը իմ գրվածքիս նկատմամբ:

Գրքուկս ներկայացրի, ժպտով կարդաց իմ անվան գրքած ձոնս, ապա մեջեմեջ մի քանի ոտանավորներ, հետո գրքկեց ինձ, ասելով— «Կեցցե՛ս, համ շնորհքով բանաստեղծ ես, հա՛մ խելացի տղա ես: Խելացի եմ ասում նրա համար, որ գործ ես անել միշտ ուղղագրությունը. վ-ով ես գրել, փոխանակ ու-ի. իրենց գիտնական լեզվաբան հաշվող մեր պրոֆեսորները այդ չեն ըմբռնել, իսկ մի պատանի ըմբռնել է: Կեցցե՛ս: Ծարունակի՛ր այս ուղղությամբ և ժամանակով մեծ բանաստեղծ կդառնաս¹!»:

Մինչև հիմա էլ ես չհասկացա, թե սիրելի Աղայանը «այս ուղղությամբ» ասելով ի՞նչ էր նկատի ասել:

¹ Բառերի մեջ «վ» ենշվող «ու»-ն Աղայանը առաջարկում էր «վ» գրել: Դրա գործածման համար տարիներով նա կրթոտ պայքար էր մղում «ու» պաշտպանողների դեմ:

Մյուս օրը գնացի Պոռշյանի մոտ: Սրտատրոսի բարձրացա
աստիճաններով: Պոռշյանը նստած էր գրասեղանի առաջ
և գրում էր: Անմիջապես աչքիս ընկավ մի մեծ արծաթե ժա-
մացույց՝ սև, հաստ ժապավենով, դրված գրասեղանի վրա:

Գրքույկս մի պահ թերթելուց հետո, Աղայանի պես զըր-
կեց, համբուրեց ճակատս, և «հայրենաշունչ բանաստեղծ ես,
առբես,— ասաց հայրական ձայնով,— Ծիրակից ուրիշ տե-
սակ երգիչ, իհարկե, չէր կարող ծագել: Բայց ափսոս, մեր
տղա, փչացրել ես ոտանավորներիդ էս անպիտան ուղղա-
գրությունը գործածելով»:

Ես ծիծաղեցի մտքիս մեջ և ինձ արդարացնելու համար
ասացի, թե դպրոցում այդպես են սովորեցրել:

— Հիմարություն են սովորեցրել ու քեզ պես ուշիմ տղա-
յին էլ մոլորեցրել: Ազատամտություն են համարում՝ քանդե-
լով դարերով սրբագործված ճշմարտությունները: Ծիտակ է
ասած թե՛ խենթը մի քար գլորեց հորը, քառասուն խելոք չկա-
րողացան հանել: Խոսքս մեր մեծ խենթի վրա է, Աղայանի, գի-
տե՛ս, էլի՛:

Իր մոտ կանչեց երեխաներին. աղմուկով ներս մտան եր-
կու աղջիկ, երկու տղա (մեծ աղջիկը՝ Պերճանուշը, կարծեմ
Բաբու էր ամուսնացած, իսկ մեծ տղան՝ Պոռշը տանը չէր):

— Ահա իմ պստիկ գծերը, թե կարաս սրանց հետ գլուխ
ելնել, քեզ տղամարդ կասես:

Եվ ինձ գովելով՝ ներկայացրեց նրանց: Երեխաները հար-
ցեր տալով կարկուտի պես, թափվեցին վրաս: Կենդանի,
աշխույժ, չարանճի երեխաներ:

Քիչ հետո շուկայից եկավ տիկին Պոռշյանը— մի նիհար,
քնքուշ կին, բարի, թախծալի աչքերով: Տիկինը ինձ ճաշի
պահեց: Երբ առանձին մնացինք, Պոռշյանն ասաց.— կինս՝
Աննան, իմ հոգին է, ինձ պահողն ու հասկացողը: Բախտը
սրանից ավելի մեծ բան չէր կարող տալ ինձ, որ տվեց, ա-
ռանց Անիշկայիս ես կորած մարդ եմ:

Հետագայում ես շատ առիթներով նկատեցի, որ նրանք
իրար անձնվիրաբար սիրում են և օրինակելի ամուսիններ
են: Եվ, առհասարակ, Պոռշյանը անսահման սիրով ու գուրջով
մի հայր էր—հազվագյուտ հայր և ամուսին:

— Աղջիկներս էս ա, սովորում են գիմնագիայում, բայց ուզում են սվարտելուց հետո համալսարան դրկեմ, մեկ որ էդ ծանր բեռի տակ չեմ կարող մտնել. երկրորդ, որ Կնոջն էնքան էլ հարկավոր չէ բարձր ուսում ստանալը: Կինը պիտի տունը կառավարի, երեխաներին մեծացնի, նրանց մարդասիրական հոգի մերշնչի: Ուսում առած կանայք, նկատել եմ, ծովում են: Ազգ, եկեղեցի, ընտանիք երկրորդական են դառնում: Էդ բարձրագույն ասածըը բայքայում է մեր ազգային գոյության հիմքերը, օտարամոլություն է բերում: Հ'ը, դու ի՞նչ ես մտածում:

— Համամիտ չեմ ձեզ, սիրելի հայրիկ,— ասացի ես, — բարձրագույն կրթությունը, իսկական իմաստով, չի կարող չարիք բերել: Կրթությունը և առաքինությունը հոմանիշ են, և կրթված մարդերը լավ սերունդ կմշակեն: Բացի այդ — ժամանակը փոխվել է. կինն էլ տղամարդու հավասար իրավունքներ ունի. նա չի ուզում այլևս մեր նահապետական մայրերի պես լինել: Քաղաքակրթությունը ուրիշ պահանջներ է առաջադրում: Պատմության անփվը անկարելի է ետ դարձնել, օրինակի համար, կարծեմ, մեր դուստր բառը հնդկական ձևի մեջ կաթ կթող կնշանակի, հիմա ո՞վ կարող է ստիպել մեր օրիորդներին, որ կով կթեն...

— Ա՛յ տղա, ի՞նչ լավ բան ասիր, չէի գիտում: Իմաստուն են եղել մարդկության հայրերը: Ի՞նչ փառավոր ժամանակներ են եղել... Ափսո՛ս, ափսո՛ս անցան...

Ու ցավով երերում էր գլուխը:

Ծաշի վրա Պոռչյանը աղջիկներին բացատրեց իրենց նահապատմական, նակատագրական կոչումը: Աղջիկները ճշացին, ծղրտացին, — հայրի՛կ, հայրի՛կ... թե որ էդ գիտեիր, թող Աշտարակում մնայիր, գեղացի կնիկ առնեիր, աղջիկներդ էլ կով կթեին...

— Դրուստ եք ասում, դրուստ եք ասում, բայերս, մեղավորը ես եմ:

Այս առաջին հանդիպմամբ ես խորապես տեսա Պոռչյանի էությունը՝ բարի, անկեղծ, սրտաբաց, պարզ, ժողովրդասեր մարդ, որն այդպես, անայլալ մնաց մինչև կյանքի վերջը:

Այնուհետև շատ անգամ հանդիպումներ եմ ունեցել նրա հետ, առանձին, կամ՝ Աղայանի, Թումանյանի, Փափազյանի ընկերակցությամբ: Պատեմ առիթներով պատմել է ինձ իր կյանքից դրվագներ, իր թափառումներից, անցյալի դեպքերի և վաղեմի գործիչների մասին:

Խաչատուր Աբովյանի հանդեպ անթառամ պաշտամունք ուներ, երբ խոսում էր նրա մասին, հոգեզմայլման մեջ էր ընկնում: Մի անգամ էր տեսել նրան, Աշտարակում, երբ ինը տարեկան էր ինքը:

Մինչև իր կյանքի վերջը Պոռշյանը մնաց այդ հանդիպման միատիկ տպավորության տակ:

Իր մտածումների առանցքն էին կազմում գյուղացու ցավերը, մեր մշակույթի պահպանումը և զարգացումը, մեր լեզվի անաղարտության հարցերը, մեր գրականության խընդիրները:

Ամբողջական մարդ էր՝ կայուն համոզմունքների տեր: Խոսքը պատկերավոր էր ժողովրդական ոճերով, դարձվածքներով, առածներով հարուստ: Ինձ թվում էր, թե հողի ուժով լցված ժողովուրդն է խոսում՝ իր դարավոր աշխարհագրագությամբ, կենսահայեցությամբ:

1903 թվին ես շրջում էի Վայոց Ձորում (Դարալագյազ), եղա Օրթագեղում (թե՛ Բազգեղում, լավ չեմ հիշում). բնակիչները ցույց տվին գյուղի բարձրում հինավուրց բերդի ավերակները, որոնք, ավանդաբար, Պոռշ իշխանին են վերագրում: Պատմեցին, որ տարիներ առաջ, երբ Պերն Պոռշյանը հալ դպրոցների թեմական տեսուչ էր, այցելել է ավերակները, արտասովալից աչքերով համբուրել է քարերը, հայտնելով, որ իր՝ Պոռշյան տոհմի սեփականությունն է եղել:

Թիֆլիս վերադարձիս՝ Պոռշյանից ուզեցի ստուգել դեպքը:

— Այո, ճշմարիտ է: Բա դու չգիտե՞ս, որ աշտարակցի Տեր-Առաքելյանների տունը (իրենց տունը) Գրիգոր Մագիստրոսի շառավիղն է: Այդ փաստ է. բայց ո՞ւմ խոսք հասկացնես:

Մի օր, խոսքի մեջ, Ղ. Աղայանին ասացի այս:

— Գիտեմ, — բարձր ծիծաղելով պատասխանեց Աղայան:

նը.— մենակ ինքը չէ իշխում մեր գլխին. մեր Օվաննեսն էլ (Հովհ. Թումանյանը) իրան Մամիկոնյանների տոհմից է հաշվում: Իրանը ուզում են մեզ իրանց ճորտը շինել. բանի որ բանն էդպես է՝ ես էլ Բյուրոլու սերունդից եմ: Բա դու՞ ոնց պիտի անես, գլխիդ ճարը տես:

1904 թվին, ամռանը, անցնում էի Ղարաբիլիսայով (Կիրովական), լսեցի, որ Պողոսյանը ընտանիքով այնտեղ է: Գընացի մտալ և մի գիշեր հյուր եղա: Բացի Պերճանուշից բոլոր զավակները հետն էին: Դերեճիկ Դեմիրճյանն էլ հյուր էր նրա մոտ: Նաև մի օրիորդ էր ապրում նրա տանը, իր աղջիկների ընկերուհին: Պոլսեցի էր և Եվրոպա պիտի մեկներ ուսանելու:

Պողոսյանը նկատել էր, որ Դերեճիկը և պոլսուհին իրար հետևում են...

Ծատ հուզիչ և միևնույն ժամանակ շատ զվարճալի էր Պողոսյանի հոգատար մտմտունքը նրանց հանդեպ:

— Ա՛յ տղա,— գաղտնաբար ասաց ինձ,— ես երեխեքը իրար վրա աչք ունեն: Աղջիկն ուզում է գնա արտասահման, ով գիտե էնտեղ ինչ շան ու գիլու բաժին դառնա, ախոսս է: Ես ուզում եմ միջամտեմ, բայց նրանք ինձանից քաշվում են, սրտերը չեն բանում: Նրանց սերը պիտի գլուխ բերել, խեղճ են: Դու կարաս, ընկեր տղա է, թե Դերեճիկն է նազ անում՝ էդ գլադին համոզիր, թե աղջիկն է նազ անում՝ աղջկան համոզիր:

— Բյաշալը դեղ գիտենա, իրեն գլխին կանի,— պատասխանեցի ես ամենայն լրջությամբ:

— Աղա, ի՞նչ տեղին բան ասիր. ես էլ ո՞ւմ եմ սխտոր առնելու դրկում...

Եվ երկար ժամանակ ծիծաղում էր իմ պատասխանի վրա: Մամաանոցի խաղաղության մեջ Պողոսյանը զբաղված էր իր «Աղջիկները» կազմելով և Լև Տոլստոյի «Պատանեկություն» գրքի թարգմանությամբ: Հիացմունքով խոսում էր Տոլստոյի արվեստի մասին:

— Դու սիրո՞ւմ ես Տոլստոյին,— հարցրեց ինձ:

— Ես Դոստոևսկուն ավելի եմ սիրում...

— Դե՛ն ձգիր էդ պիանից լուսնոտին,— խոսքս կտրեց

Պողոսյանը,—Տուրգենևն իսկի չի հասնում նրան, ու՞ր մնաց
Դոստոևսկիդ: Տոլստոյը օվկիանոս է, օվկիանոս:

— Իսկ դուք ո՞նց եք միացնում այդ երկու հակասություն-
ները՝ ռոմանտիզմ, ռեալիզմ...

— Դատարկ խոսքեր են՝ ռոմանտիզմ, ռեալիզմ. հան-
ճարը ամեն բան է: Ծնենք բան կա նրանց մեջ. աշխարհ են,
տիեզերք...

— Իրավունք ունեք,—պնկեղծորեն համաձայնվեցի Պողո-
սյանի կարծիքին:

1904 թիվը Պողոսյանի ընտանեկան բախտավորության
վերջին տարին էր: Մի տարի հազիվ անցած՝ շատ ծանր
հարվածներ ունեցավ դժբախտ ծերունին: Մեռավ իր սիրած,
սլաշտած կինը, մեծ որդին՝ Պողոսը, Օդեսայում լեյտենանտ
Շմիդտի կազմակերպած ապստամբությանը մասնակցելու
համար բանտարկվեց և աքսորվեց Սիբիր:

Դժվար էր տեսնել ծերուկ վիպասանին և հոգու խոր-
քից չխղճալ: Իսպառ խորտակվել էր նա, անմխիթար ողբում
էր կնոջ կորուստը և գազազած հայհոյում էր որդուն:

Անսիտի, աննպատակ թափառում էր իր կորուստն ու
վիշտը, կարծես, մոռանալու համար Գնաց Եվրոպա, վերա-
դարձավ իսկույն. ոչ մի տեղ հանգիստ չուներ: Պարզապես,
իր հոգեվարքն էր ապրում խեղճ մարդը:

Վերջին անգամ տեսա նրան 1907 թվի աշնանը՝ Բաք-
վում: Պերճանուշի մոտն էր: Անտեր, անօգնական որբի նը-
ման կույ էր եկել աղոտ սենյակում, վառարանի մոտ, ընկրճ-
ված, կքած իր վրա, փոքրացած, կարծես, զգում էր իր մո-
տալուտ մահը, ինչպես ծեր գյուղացիք են նախազգում: Ցա-
վագնորեն դեղնել էր. արյան նշույլ չկար դեմքին, բոլորո-
վին սպիտակել էր, նույնիսկ հոնքերը, և մորուքը ցանցաու-
ցել:

Նայում էի խորին ցավով, ինչպես որդին է նայում ծե-
րացած, սպառված, սիրելի հորը: Եվ երկյուղ կար սրտիս
մեջ թե՛ վերջին անգամն է, որ տեսնում եմ մեծ վիպասանին:

Նույն վշտագին հանգերգը՝ կնոջ կորուստը, որդու տա-
ռապանքը...

Ես ջանացի մխիթարել, հույսեր տալ որդու ազատ-

ման համար, մոտակա ներման հնարավորության համար, և որ վերջապես որդին տակավին շատ երիտասարդ է. կյանքը առջևն է, իր նման հարյուր-հազարներ կան, Սիբիրում այնքան էլ դաժան չէ կյանքը, և որ գլխավորն է՝ մեծ գաղափարի համար է տատապում, պետք է պարծենալ այդպիսի որդի ունենալու համար...

Մնաս բարևին սրտագին համբուրեցի այս անզուգական բարի, պարզ մարդու, վշտահար հոր ձեռքը, որը մեր ժողովրդին տվել է այնքան թանկարժեք բարոյական ժառանգություն:

Ինքն էլ ինձ համբուրեց. «Աստված թե կամենա, նորից կտեսնվենք, էն է՝ միտք ունեմ շուտով Թիֆլիս գալու, բարևիդ մերոնց...»:

Անցավ մի ամսաչափ. ես մեծ վշտով դիմավորեցի հավերժացած Պոռչյանին Թիֆլիսի կայարանում:

Մահվան անհուն խաղաղությամբ հանգչում էր՝ ներմակ գուլիք ստոր բարձի վրա...

28 օգոստոսի
1937 թ. Սևան

ՂԱԶՍՐՈՍ ԱՂԱՅԱՆ

Ղազարոս Աղայանի անունը 7—8 տարեկան հասակիցս գիտեի ես: Առաջին հայ գրողն էր, որի անունն այդքան վաղ հասակումս լսել էի: Պատճառը հետևյալն է: Մեծ քրոջս սենյակում կախված էր Աղայանի լուսանկարը, սեղանի վրա դրված էր նրա փառակազմ «Երկու քույր» վիպակը: Քրոջս ուսուցիչն էր եղել նա 1870-ական թվականներին Ալեքսանդրապոլի (Լենինական) Արդուրյան դպրոցում: Քույրս պարծենում էր, որ նրա լավագույն աշակերտուհիներից է եղել ինքը և «Երկու քույր» վեպը նվեր է ստացել սիրելի ուսուցչից: Քույրս պաշտամունք ուներ նրա հանդեպ, և երբ ամուսնացավ, նկարն ու գիրքը, բնականաբար, հետը տարավ: Ես նայում էի Աղայանի լուսանկարին՝ մեծ բեղերով, ահագին մորուքով, խոժոռ հայացքով մի մարդ—և վախ էի զգում, մինչդեռ քույրս պնդում էր, որ նա շատ բարի մարդ է, հրեշտակի սիրտ ունի:

Հիշում եմ, որ քույրս մեզ համար կարդում էր «Երկու քույրը»: Մայրս, եղբորս կինը և սպասավորուհին լաց էին լինում, ես էլ տխրում էի դժբախտ Արզումանի ողբերգական մահի համար:

Հիշում եմ նաև, որ քրոջս և ինձնից մեծ եղբորս հետ վեճի էի բռնվել «եղերական» բառի համար: Գիրքը կրում էր այս բնորոշումը՝ «եղերական վեպ»: Նրանք ասում էին, որ եղերական կնշանակե տխուր, ողբալի, իսկ ես պնդում էի թե՛ կնշանակե «եղած, պատահած պատմություն»: Նրանք ծիծաղում էին, իսկ ես զայրանում էի նրանց չհասկացողության վրա:

Երբ շատ տարիներ հետո, 1892 թվին ես բախտ ունեցա ծանոթանալու Ղ. Աղայանի հետ—գրեթե կարդացել էի ամ-

բողջ Աղայանին, նրա առանձին գրքով տպվածներն էլ, ամսագրերի մեջ եղածներն էլ: Սիրում էի հեքիաթներից մի երկուսը՝ «Տորք Անգեղը», անգիր գիտեի «Մախարակը» և «Հիշողությունը»: «Ծիծեռնակը բուն էր շինում, և շինում էր, և երգում»... Իմ մշտական սիրած բանաստեղծությունն էր և է. անգուգական, շատ հուզիչ, խորունկ, հայ աշխատավոր ժողովրդի դարավոր կյանքի ու պայքարի գեղարվեստական պատկերը, սիմվոլը:

Սիրելի էր ինձ շատ «Արություն և Մանվելը», որ պատանեկան իմ գրոն ու փոթորկի հոգեբանությանը համընկնում էր:

Թիֆլիսում, 1892 թվի նոյեմբերի վերջին, թե դեկտեմբերի սկզբին էր, գնացել էի Հովհաննես Թումանյանի մոտ, Կովկասյան հայ հրատարակչության գրասենյակը. Հովհաննեսը պաշտոնավարում էր այնտեղ, կարծեմ, գործերի վարիչ էր. գործ կար, չկար, ինձ հայտնի չէր, այնքան գիտեմ, որ ամբողջ ժամանակը մեկնակ էր նա, ժամերով գրույց էինք անում և խանգարող չէր լինում:

Հիշատակածս օրը, աղմուկ-աղաղակով դուռը բացվեց, ներս մտավ մի հաղթանդամ, թիկնեղ, ալեխառն տղամարդ, հաստ պալտո հագած, բաշլուղով, վալենկաներով, կառններով, իսկույն ճանաչեցի՝ Ղազարոս Աղայանն էր: Նրանք գրկախառնվեցին, կարոտով երկար-երկար համբուրվեցին:

Թումանյանն ինձ ներկայացրեց Աղայանին, ես շփոթվեցի: Աղայանը սրտաբուխ ժեստով ձեռքը մեկնեց ինձ, ես կարծես ամբողջովին կորա նրա հսկայական ափի մեջ: Մի երկու հարց տվեց նա ինձ Ալեքսյոյի իր հին բարեկամների և քաղաքի մասին, ապա դարձավ Թումանյանին, հայտնեց, որ մի-երկու օրով եկել է գյուղից և հենց ուղղակի Օհաննեսի մոտ:

«Ա՛յ տղա, շատ էի կարոտել քեզ, ո՞նց ես, երեխերդ ո՞նց եմ...»:

Թումանյանն ու ես մոտ երեք ամսվա ծանոթներ էինք արդեն, սակայն չգիտեի, թե նա երեխաներ ունի: Չկարողացա զարմանքս թաքցնել — «մի՞թե երեխաները...»:

— Բա՛, — հզոր ձայնով վրա բերեց Աղայանը, — էս Երևան երեք երեխա ունի...

Հարցրեց Թիֆլիսի գրական, հասարակական կյանքի մասին, նորությունների մասին: Խոսեց իր գրական աշխատանքներից. գյուղում հանգիստ պարապում է, աշխատում է, լավ գիճի ունի, բայց մեռակ է, մարդակարոտ է:

— Տո, Օհաննես, մի գիրք եմ կարդում, զարմանալի, հրաշալի գիրք, ձեռնարկել եմ թարգմանել. պոեմա է, Բուդդայի կյանքից է. գրքի անունն է «Ասիայի լույսը» — հեղինակն անգլիացի է՝ Աոնոդո...

Ես հիացած նայում էի Աղայանի վրա՝ առողջ, գեղեցիկ, կենտուրախ, տարերային: Կարծես, հեքիաթների միջից եկած, մեր իրականության մեջ քայլող մի գորապետ իշխան լիներ, լեռների քաջ որսկան, աշխարհե աշխարհ կտրող քարավանապետ... Մտքով Աղայանի և Թումանյանի միջև համեմատություն էի դնում. երկուսն էլ մի կատեգորիայի մարդիկ երևցան ինձ, միևնույն ոճով, միևնույն կոլորիտով, այնքան ներդաշնակ էին միմյանց, իրար լրացնող, ստեղծելով մի ամբողջություն, մի հասկացողություն՝ հայ հինավուրց ժողովրդի հողի և խոսքի ուժն ու իմաստությունը:

1898 թվին, մարտ ամսին Թիֆլիսումն էի, «Երգեր ու վերքեր» բանաստեղծություններիս գրքույկը նոր էր լույս տեսել. անձամբ գնում էի մեր հոշակավոր գրողների մոտ և խորին ակնածանքով գրքույկս ընդկայացնում էի նրանց:

Գնացի Աղայանի մոտ. ակնոցը շտկեց, բացեց գրքույկս, ծպիտով կարդաց ձոնս, ապա մեջեմեջ կարդաց մի քանի ոտանավորներ, հետո գրկեց ինձ ասելով՝ «Կեցցե՛ս, համ շնորհքով բանաստեղծ ես, հա՛մ խելացի տղա: Խելացի եմ ասում նրա համար, որ գործ ես ածել ճիշտ ուղղագրությունը և ու՛ով ես գրել, փոխանակ ու-ի¹: Իրենց գիտնական լեզվաբան հաշվող մեր պրոֆեսորներն այդ չեն ըմբռնել, իսկ

¹ Բառերի մեջ «վ» հնչվող «ու»-ն Աղայանն առաջարկում էր «ւ» գրել, օրինակ՝ «նուեր—ներ», «գրուած—գրած»: Դրա գործածման համար տարիներով նա կրքոտ պայքար էր մղում «ու»-ն պաշտպանողների դեմ:

մի պատանի ըմբռնել է, կեցցե՛ս: Ծարունակիր այդ ուղղու-
թյամբ և ժամանակով մեծ բանաստեղծ կդառնաս»:

Մինչև հիմա էլ ես չհասկացա, թե Աղայանը «այս ուղ-
ղությամբ» ասելով ի՞նչ էր նկատի ասել:

1899 թվին, հունվարին, արքայից վերադարձիս, ես մի
բանի օր կանգ առա Ռոստով—Նախիջևանում, ուր արքայ-
ված էր և Ղ. Աղայանը: Եղա մտալը, Նախիջևանում. կինը,
տղան և սղջիկը հետն էին: Աղայանին գտա հիվանդություն-
նից նոր ապաքինված: Գրել էր «Ժամանակակից ամենա-
խոսությունը» և ոգևորված կարդում էր ինձ համար: Աղա-
յանը իր երիտասարդ թարմ տարիներին, 1860-ական թվա-
կաններին, ռուսական զարթոնքի այդ հույակապ ժամանա-
կաշրջանում ապրել էր Մոսկվա և Պետերբուրգ, կարդացել
էր Դարվին, Բյուսներ, Բոկլ, Չերնիշևսկի, Պիսարև, Նալ-
բանդյան... և այդ բազմապիսի ընթերցումներից ստեղծել էր
իր յուրահատուկ աշխարհայացքը, մի տեսակ խառնուրդ սո-
ցիալիզմի և քրիստոնեության, դեմոկրատիզմի — հումանիզ-
մի, հայրենասիրության և կոսմոպոլիտիզմի, նաև ուրիշ տար-
րերի. և այս ամենը, որ կազմում է նրա էությունը, ես մարմ-
նացած տեսա իր այդ գրվածքի մեջ:

Որոտացող, ներշնչող ձայնով կարդում էր. փայլատա-
կում էին աչքերը, բոլոր հոգով հավատացած էր իր ուտո-
պիային, կրքոտ, տարամերժ մարգարեների պես ստիպում
էր, որ ուրիշն էլ հավատար:

1893 թվին նա շատ գեղեցիկ կերպով գրել, լրացրել էր
Քյոթոլլու արկածներից դրվագներ. հիմա նրա և Քյոթոլլու
կերպարները նույնացան իմ աչքին: Գաղափարական Քյո-
թոլլին էր անձնավորված իմ առաջ, խոսում էր պատգամա-
բերի լեզվով, հոգ չէ, թե՛ ո՛չ ձիու վրայից, այլ բազկաթռո՞ւյ
միջից:

Ռոստով եղած ժամանակս ամեն օր գնում էի Աղայանի
մոտ և խոսում էինք հազար ու մի խնդիրների մասին, բայց
բոլոր խնդիրների կենտրոնը աշխարհը վերափոխելու և
մարդկությունը երջանկացնելու մասին էր:

— «Ժամանակակից արեւնախնությունը» իմ կտակն է,
իմ հավատամքը:

Մնաս բարեկի իր վերջին խոսքն էր սա:

Ղ. Աղայանին ամելի մտերմացա 1900-ական թվերին,
երբ կազմվել էր մեր «Վերնատունը» և հանախակի հանդի-
սություններ ու գրական գրույցներ էինք ունենում Հ. Թուման-
յանի տանը և երբեմն էլ Աղայանի մոտ: Նա այլևս մեր գրա-
կան նահապետն էր: Ինքը գրեթե դադարել էր գեղարվես-
տական բաներ գրելուց, բայց իսկական հոր պես հրճվում
էր մեր վերնատան ընկերների գրական հաջողություններով:
Մենք նրան շատ սիրում էինք և հարգանքով էինք վերա-
բերվում նրա կարծիքներին, նկատումներին: Մեր խնջույք-
ներին երգում էր նա Քյորտլին տակավին իր առնական
ձայնով և լցնում էր մեր սիրտը վշտախառն ուրախությամբ.
— ավա՛ղ, որ ծերացել է մեր թանկագին նահապետը...

1905 թվի հեղափոխական շարժումներին երիտասար-
դական խանդավառությամբ հետևում էր նա և մոտ էր հա-
մարում իր երազների, տենչերի, իր ուտոպիայի իրականա-
ցումը... Ռեակցիան դառնացրեց նրա սիրտը, բայց չկոտ-
րեց հավատը լավագույն ապագայի հանդեպ՝ սնուցած իր ողջ
կյանքի ընթացքին:

Աղայանը խորքով օպտիմիստ էր. վիշտն ու տխրություն-
ը չափազանց կարճատև պահեր էին նրա մոտ: Կարելի է
ասել, որ նա իր կյանքում երբեք չհիասթափվեց, միշտ մնաց
ոգևորված, հավատով: Միտքը վառ էր միշտ՝ հարցասեր,
հետաքրքրվող, ականջը միշտ նորության՝ գրական, հասա-
րակական և գիտական գյուտերի, նվաճումների:

Երագող էր և փլշած երազների տեղ նոր երազներ էր
կառուցում և պատանու պես հավատում էր իր նոր երազների
կենսագործմանը: Ծատ զգայուն մարդ լինելով՝ դյուրավ
վիրավորվում էր, բայց մի վայրկյան միայն: Իր կյանքի վեր-
ջին օրերում մի բանավեճով էր բռնված, չէմ հիշում ում հետ
և ինչ առիթով, կարծում եմ կաթողիկոսական թեկնածուներ
ի մասին էր վեճը: Հենց նոր վիրավորել էին նրան լրագրի
մեջ, ինձ պատահեց և գանգատվեց.

— Գարշելի է մեր իրականությունը, զգվելի, չար մարդկանցով լիքն է. քիչ է մնում, որ մարդ գլուխն առնի, երթա՛, կորչի՛ ու կորչի՛ ու կորչի՛...

Ես սաստիկ ազդվեցի նրա ծանր տրամադրությունից, բայց նա մի պահ հետո զվարթացավ և լցվեց անսովեր օպտիմիզմով, կարծես ոչինչ չէր պատահել:

Աղայանը պարզ, հասարակ, ընկերական մարդ էր. այն ինչ որ ուրիշները փակում էին յոթը կողպեքի տակ, նա սրբաբար ասում էր, պատմում էր իր անցյալից դեպքեր, արկածներ, անեկդոտներ, էպիզոդներ, ստանց մտածելու, թե դրանք կարող էին սովեր ձգել իր անվան վրա: Միամիտ էր շատ, ունեցածը՝ երեխայի խորամանկություն, այնպես թափանցիկ էին նրա մտքերը: Սիրտը լեզվի վրա էր: Բանավեճների մեջ անզուսպ էր, դյուրաբորբոք, անհաշտ, սակայն այդտեղ վերջանում էր նրա չարությունը. գործով չէր վնասում մարդկանց՝ թշնամիներին. զոջում էր շուտով. ներողամիտ էր և վատությունը մոռացող, բնավ ռիսակալություն չուներ. մի չնչին բանով կարող էիր նրա սիրտն առնել և հաշտեցնել իր «անհիծյալ, երդվյալ թշնամիներին» հետ:

Պոռչյանի պես անսահման բարի մարդ էր:

1903 թվին ես շրջում էի Վայոց ձորում, եղա Օրթագեղում (թե Բաշգեղում), բնակիչները ցույց տվին ինձ գյուղի բարձրում բերդի ավերակները, որոնք ավանդաբար Պոռչյանի իշխանին են վերագրում: Պատմեցին, որ տարիներ առաջ Պ. Պոռչյանը այցելել է ավերակները, հայտնելով, որ իր Պոռչյան տոհմի սեփականությունն է եղել: Թիֆլիս վերադարձիս՝ Պոռչյանից ստուգեցի գյուղացիների պատմածը. նա հաստատեց: Մի օր խոսքի մեջ Աղայանին պատմեցի այդ:

— Գիտեմ,— ծիծաղելով ասաց Աղայանը,— մենակ ինքը չէ իշխան մեր գլխին. մեր Օհաննեսն էլ իրան Մամիկոնյանների տոհմիցն է հաշվում: Դրանք ուզում են մեզ իրանց ձորտը շինել, բանի որ բանն էրպես է, ես էլ Քյոթոզլու սերնդից եմ: Բա դու ո՞նց պիտի անես, զլխիդ ճարը տես:

1911 թ. հունիս ամսին Ղարաքիլիսա (Կիրովական) էի, երբ լսեցի Աղայանի մահվան բոթը, շտապեցի Թիֆլիս: Խորագրաց վշտով հողին հանձնեցինք մեր անհուն սիրելի անհապտի մարմինը, և նույն գիշեր ես էլ հրաժեշտ տվի Թիֆլիսի իմ քարեկամներին և Հ. Թումանյանի տանից ուղղակի մեկնեցի կայսրան, այնտեղից էլ Թուրքիայի սահմանը...

Ամբողջ անապարհի ընթացքին և Թուրքիայում հավերժացած Աղայանն էր երկար ժամանակ իմ վշտի և խոհերի առանցքը:

11. 3 1941 թ.
Երևան

ՄՈՒՐԱՑԱՆ

Իմ ժամանակվա պատանիների համար՝ 1890—1895 թվականներին, մեծահոշակ Րաֆֆիից հետո ամենասիրելի արձակագիր հեղինակը Մուրացանն էր: Անշուշտ, շատ էինք սիրում նաև Ծիրվանզադեին և Նար-Դոսին:

Խանդավատված էինք նրա «Ռուզան» հայրենասիրական պիեսով: Սիրով հետևում էինք նրա լույս տեսած ամեն մի մեծ և փոքր գործին: Կարդացել էինք «Խորհրդավոր միանձնուհին», «Իմ կաթոլիկ հարսնացուն» և մյուս պատմըվածքները:

Մուրացանի լեզուն, նրա ճշգրիտ հայերենը՝ գեղեցիկ բառերի ընտրությամբ, պատկերավոր ոճով մեզ համար ուսանելի դարոց էր:

Նա արդեն բավական ժողովրդականություն ուներ: Հիշում եմ մի դեպք: 1897 թվականին Բագրան գյուղումն եմ, Բագրատունիների հնագույն մայրաքաղաքում: Բագրանը հուշակավոր ուխտատեղի էր այն ժամանակ: Սուրբ Գևորգ զորավարի ուխտը, որ տոնում էին սեպտեմբերին: Միջնաբերդի հիմավորց մատուտում գտնվում էր սուրբ Գևորգի գերեզմանը: Ուխտավորներ էին գալիս Ծիրակից, Կարսից, Կաղզվանից, Մուրմալիից...

Ես հյուր էի մի բագրանցի տարեց ուսուցչի մոտ: 1896 թվականին «Արձագանք» հանդեսում տպվում էր Մուրացանի հուշակալ վեպը՝ «Գևորգ Մարզպետունին»: Ուսուցչի մոտ կային «Արձագանքի» համարները: Ես դեռ չէի կարդացել վեպը. հյուրընկալս ոգևորված կարդում էր ինձ համար վեպից՝ իր սիրած էջերը: Համագյուղացիների համար նույնպես կարդացել էր և նրանք շատ խանդավատվել էին, ինչպես վկայում էր հյուրընկալս: Ջերմ հավատով և համոզված ձու-

նով ինձ ասաց, որ ժողովրդի մեջ այն ավանդությունը կա, թե Մարգպետունին թաղված է Բագրանում և մատուռի միջի գերեզմանը մեր գորավարինն է և ոչ թե քրիստոնեական հունական սուրբի:

«Ես մանկությունից լսել եմ այս ավանդությունը: Հայոց պատմագիրներից ոչ մեկի մոտ չկա գրած, թե ո՞ր է թաղված Մարգպետունին: Ժողովրդի ավանդածը միշտ միշտ է: Միայն ժողովուրդը սրբացրել է հայ մեծ գորավարին և նույնացրել քրիստոնեական գորավարի հետ»:

Այս ավանդությունը հետաքրքրական է և պետք էր նշել, գրանցել: Մուրացանը ինքնամփոփ մարդ էր, հասարակությունից հեռու. չէր երևու՛մ ո՛չ թատրոններում, ո՛չ ժողովներում: Նրա նանապարհը տնից գործի տեղն էր, գործի տեղից՝ տուն: Երբեմն պատահում էր փողոցում, մտախոհ դեմքով, մաքուր հագնված: Գլխարկս հանում, բարևում էի նրան՝ մեր մեծանուն վիպասանին առանց ծանոթ լինելու հետը, սուկ հարգանքից մղված. մի վայրկյան հետաքրքիր նայում էր ինձ, ապա ժպտում և բարևիս պատասխանում:

Մուրացանի հետ ծանոթացա միայն 1902—1903 թվականներին, Հովհաննես Թումանյանի մոտ, մեր Վերնատանը: Երբեմնակի գալիս էր նա Թումանյանի մոտ: Ծառ հարգալից էինք նրա հանդեպ: Նստում էր Թումանյանի կողքին և լուռ լսում էր մեզ: Վերնատան նահապետը՝ Ղազարոս Աղալյանը բարձր ու հզոր ձայնով խոսում էր. Թումանյանը ուրախ բաներ էր պատմում, ու Մուրացանի աչքերը ժպտում էին մեղմորեն: Թվում էր, թե հաճելի էր նրան մեր շրջանը: Հաճախ մասնակցում էր մեր խոսակցություններին, գրույցին, հարցերին, սակայն, սովորաբար սակավախոս էր: Եվ երբեք չէր խոսում իր մասին, իր գործերի մասին: Առհասարակ հեզ, համեստ բնավորության տեր մարդ էր: Ես գգում էի, որ նա մի վիշտ ուներ իր սրտի խորքում, որ գաղտնի մաշում էր նրան, մի վիշտ՝ ոչ մեկին հաղորդած: Մեր մեջ նստած՝ միտքը ուրիշ բանի հետ էր, հայացքը մի հեռավոր կետի հատած:

Մուրացանը մեր իրականության մեջ գործող պահպանողական (կոնսերվատիզմ) հոսանքին էր պատկանում, նրա

առաջնակարգ ներկայացուցիչներին էր, ուժեղ գաղափարախոսներից: Նրանք պաշքարում էին հայ ժողովրդի անաղարտ գոյության համար. քարոզում էին պահպանել հայոց եկեղեցին, ազգային սովորությունները, հնադարյան ավանդույթները, նահապետական կենցաղը: Այս գեներով պաշտպանել հայ ազգությունը այլասերումից, ուրիշ ժողովուրդների հետ ձուլումից, ասիմիլյացիայից: Նրանք կատաղի պաշքար էին տանում լիբերալ հոսանքի դեմ, որի մեծ մասը կազմված էր բուրժուական մտավորականներից, որոնց մեղադրում էին կոսմոպոլիտիզմի, ապազգայնության, այլասերման մեջ: Սակայն մյուս կողմից էլ, հասարակության մեջ այն կարծիքն էր խիստ տարածված, թե պահպանողականները հետադիմականներ են, ռեակցիոներ, խախտումներ, հառաջադիմության, պրոգրեսի հակառակ:

Բայց ես Մուրացանի գրվածքների և նրա մեզ հետ ունեցած գրույցների մեջ չէի տեսել այն տարածված կարծիքի առկայությունը: Ես դժվարանում էի Մուրացանին հարցնել այդ մասին, երբ պատահաբար այդ լուծվեց ինձ համար:

Մի անգամ, 1902—1903 թվականին, հայտնի գյուղագիր Արշակ Ագապյանի հետ Թիֆլիսից գնում էինք Երևան: Միևնույն վագոնումն էինք: Խոսում էինք հայ կյանքի ժամանակակից երևույթների մասին. խոսք բացվեց և պահպանողականների նկատմամբ տարածված կարծիքի վրա: Հանգուցյալ Ա. Ագապյանը, որ եռանդուն պահպանողական էր, սաստիկ զայրացած ասաց, որ դա անպատկառ սուտ է. դա իրենց թշնամի լիբերալների տարածած զրպարտությունն է, որ «մեր պահպանողականությունը ազգի պահպանման համար է: Եթե հայ ժողովրդի գոյությունը և կուլտուրան ապահովված լինեին, ինքը և բոլոր իր համախոհները աշխարհի ամենից առաջավոր ազատամիտները և հեղափոխականները կլինեին: Քանի որ այդ չկա, մենք պիտի պահպանենք այն ամենը, ինչ որ ազգին կպահպանի»:

Մուրացանի հզոր տաղանդը լրիվ ընդգրկել է հայ ժողովրդի կյանքը: Ռեալիստական ճշտությամբ նա պատկերել է շունևորների, ընչազուրկների ծանր վիճակը: Պատկերել է գյուղացիների, արհեստավորների աշխարհը, նրանց ազ-

Գիվ աշխատանքը, ձգտումները: Կենդանի գույներով ներկայացրել է ժողովրդի ցեղերին՝ վաշխատուններին, ոռու շինովնիկներին, նրանց դաժանությունը, կաշառակերությունը: Կապիտալիստների շահագործումները, կեղեքումները, նրանց եսամոլությունը, ազահությունը: Ցույց է տվել հայ գյուղերի հետամնացությունը, թշվառությունը, խավարը:

Նա գրել է ո՛չ դրամի համար, ո՛չ անվան համար. նա գրել է, որովհետև խորապես կարեկցել է աշխատող, տանջվող ժողովրդին, անտեր որբերին և խեղճ այրիներին: Նա գրել է գուր զարթեցնելու մարդկանց մեջ թշվառների հանդեպ, գրկվածների հանդեպ: Նա գրել է սուլթանական պետության հայաջինջ կոտորածների մասին, ջարդարար թուրք ոհմակների վայրագությունների մասին, նա գրել է, որովհետև դրանք նրա ցերեկվա ու գիշերվա մղձավանջներն էին: Նա զայրույթով գրել է ցարական այլասերող քաղաքականության մասին, որ խորտակում է հայ հին կուլտուրան, լեզուն, ապագան: Նա գրել է հայ ժողովրդի անցյալից պատմական գեղեցիկ գործեր՝ ցույց տալու համար ներկա սերնդին հին հերոսական Հայաստանը, որ անձնագոհ կոչում է իր հողի, ոգու համար, հայրենիքի ազատության և հավերժության համար: Նա գրել է պատմական երկեր ապրող սերունդներին մղելու դեպի հայրենասիրություն, դեպի հերոսացում հայրենիքի նվիրական սիրո համար:

Ինչ որ գրել է նա, գրել է սրտի ցավով, սրտի արյունով: Համոզմունքով, վառ հավատով:

Նա խորունկ հայրենասեր էր և ժողովրդասեր: Նա տոգորված էր տանջվող, շահագործվող ժողովրդի վշտով: Նա տոգորված էր արյունոտվող հայ ժողովրդի մեծ վշտով:

Գրողի կոչումը նա բարձր էր պահում. նա գրում էր, գիտեր գեղարվեստական խոսքի ներգործուն, վերաստեղծող ուժը, սրտաբուխ պատգամի կրթիչ, հոգեփոխող զորությունը: Մի անգամ, 1907 թվականի աշնանը Ղ. Աղայանին, Հովհ. Թումանյանին և ինձ ճաշի հրավիրեց: Նա ապրում էր, ինչպես վկայում էին, այն բնակարանում, ուր ապրել էր մի ժամանակ Րաֆֆին. կինն ու երեխաները գտնվում էին Բեռլինում. իր հետ էր ծերունի մայրը. մայր ու որդի, էլ

ուրիշ ոչ ոք: Նրա սենյակի մի պատը ամբողջապես գրադարանի էր վերածված, ուր շքեղ, փառակազմ գրքերը խնամքով դարսված էին: Դրանք Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների հրատարակություններն էին՝ Մովսես Խորենացի, Ղազարոս Փարպեցի, Եղիշե, Չամչյան, Ինճիճյան, Ալիշանյան և ուրիշներ:

Մուրացանը տիրապետում էր գրաբարին և ընթերցել էր մեր մատենագիրներին: Երբ խոսք բացվեց գրադարանի կապակցությամբ մեր հին մատենագրության մասին, ես նկատեցի, թե ինչպես մի պահ կայծակեցին աչքերը, և ձայնը առույգացավ: Ոգևորված խոսում էր Խորենացու մասին, Բյուզանդի մասին, Ալիշանյանի մասին,— խոսում էր և չէր հոգևում,— ես տեսա, թե ինչքան լավ, խորապես գիտե և ճանաչում է մեր պատմությունը, մեր ժողովրդին, մեր անցյալը և հոգեկան-կուլտուրական զանձերը: Ես զգացի, և սրգ ինձ շատ ուրախացրեց, որ նա իր բաշված, տխուր կյանքում մի մխիթարություն ունի—իր գրադարանը, ուր մոռանում է նա իր մենակությունն ու տխրությունը և ապրում է իր սիրած հերոսների հետ, իր երազների, տենչերի, իր պաշտած գաղափարների աշխարհում:

Հայ ժողովուրդը չպիտի մոռանա նրան ոչ միայն որպես մեծատաղանդ գրողի, այլև որպես մի պատկառելի, ազնվական անձնավորության, որ ընդունակ էր իր գաղափարների համար ամեն կարգի զոհաբերության:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կան մեզանից հավերժ բաժանվածներ, որոնք միշտ
ներկա են մեր սրտերի մեջ, որոնց հիշում ենք երախտագի-
տությանը և անհուն սիրով:

Այդպիսի անմահներից է բանաստեղծ Հ. Հովհաննիս-
յանը, մեր մոր լիրիկայի փայլուն կերտողներից մեկը:

Նրա անունը թինդ է հանում իմ հոգին, և վերստին ապ-
րում եմ խանդավառ պատանեկությանս այն հրաշալի պա-
հը, երբ հոգուս աչքերի առաջ բացվեց կախարդանքի այն
չքնաղ պարտեզը՝ նրա բյուրեղային լիրիկան:

Բախտորոշ եղավ ինձ համար այդ նվիրական պահը, և
ես գտա իմ ճանապարհը:

Հավերժ երախտապարտ եմ և հավերժ շնորհակալ բա-
նաստեղծության այդ մեծ մոգպետին, իմ կախարդ ուղեցույ-
ցին: Եվ ես բոլոր անկեղծությամբ գլուխս խոնարհում եմ
նրա սրբազան հիշատակի առաջ, նրա անմահ երգի առաջ:

Հասկանալու համար, թե ինչո՞ւմ էր նրա պոեզիայի կա-
խարդական հմայքի գաղտնիքը իմ և իմ սերունդի վրա, պետք
է հետ դառնալ ավելի քան կես դար ժամանակ՝ 80-ական
թվականների վերջերը:

Այդ շրջանում հայ բանաստեղծական գրականության
վրա միահեծան իշխում էր մեծատաղանդ, առնաշունչ Գա-
մառ-Քաթիպան (Ռ. Պատկանյան): Նրա հայրենասիրական-
հրապարակախոսական բոցավառ երգերով տոգորված էր մեր
երկրի հոգեկան արթնաֆերան: Մանր, երկրորդական բանաս-
տեղծները արձագանքում էին նրան: Ինչքան էլ որ մենք՝
պատանիներս վառված էինք Արևմտա-Հայաստանի ազա-
տագրական տենչերով, բայց և այնպես մեր սիրտը ուներ ին-
տիմ, մտերիմ պահանջներ՝ սրտի խոսքեր, սիրո և երազա-

կան վշտի երգեր, մի բառով՝ լիրիկա: Ես, որ 12 տարեկանից ոտանավորներ գրելու փորձանքի մեջ էի ընկել, իմ մանկական թոթովանքների թեման հայրենասիրական մոտիվները չէին. ամբողջ հայ գրականության մեջ ես միայն երկու բանաստեղծություն էի գտել, որոնք շարժում էին իմ երևակայությունը և իմ ցանկացած պոեզիայի ճաշակը տալիս. դրանք էին՝ Մ. Նալբանդյանի «Մանկության օրեր, երագի նման» և Ս. Ծահագիզի «Ես լսեցի մի անուշ ձայն»...

Բայց, երբ հնչեց Հ. Հովհաննիսյանի քնարը, մեր պատանեկան աշխարհը շշմեց, գլուխը կորցրեց. ահա Նալբանդյանը և Ծահագիզը միասին՝ ավելի մեծ քանակով ու ավելի բարձր որակով:

Նրա պոեզիայի գարնանային թարմությունը, բնականությունը, մարդկայնականը, նրա նոր, չքնաղ պատկերները, հիանալի լեզուն, սրտաբոխ երգը հալուցիկացիայի մեջ ձգեցին մեզ: Անգիր գիտեինք նրա ողջ գիրքը:

Նրա լիրիկան մեզ հոգեփոխեց, և հեղինակը դարձավ մեր կուռքը:

Նրա մասին լեզենդներ էին պատմում: Ասում էին, որ նա մուսլ մարդ է, տխուր, գունատ, համաշխարհային թախծով համակված, նա մեռնել է ուզում...

Մեր ցերեկվա ու գիշերվա երագների մեջ տեսնում էինք նրան ոռմանտիկական-բայրոնական մշուշներով պատած: Ո՛չ այս աշխարհից: Եվ հանկարծ ես բախտ ունեցա տեսնելու նրան՝ այդ առասպելական, անգոյ մարդուն իմ աչքերով, մարմնացած իմ աչքերի սուաջ:

Այսպես, առաջին անգամ ես տեսա նրան 1889 թվին, սեպտեմբերին, երբ աշակերտեցի Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Իմ երազած բանաստեղծը իմ ուսուցիչն է հիմա, իմ վարժապետը. ի՞նչ կար սրանից ավելի նախանձելի վիճակ: Առաջին վարկյանից ես սիրեցի նրան ու նվիրվեցի նրան:

Այն ժամանակ նա 26 տարեկան երիտասարդ էր՝ գեղեցիկ, հմայիչ. այնպես բարի, պարզ և քաղցր:

Սրտով սովորում էի նրա դասերը և ուզում էի, որ նա նկատեր ինձ:

Գրում էի ոտանավորներ, բացառապես նրան նմանվելով, յուրացնելու նրա բառերը, պատկերները, ձևերը:

Մի օր, 1890 թվի գարնանը, մեզ ավանդած դասից անմիջապես հետո, ճեմարանի մութ միջանցքում, սրտի ուժգին բարբախտումով մոտեցա նրան և տվի իմ նոր գրած ոտանավորը և խնդրեցի, որ կարդա...

Խնամքով գրված թղթի կտորը՝ ոտանավորս սուսվ և ձեռքիցս բռնելով, ասաց. «Գնանք պարտեզ»: Գնացի՞նք ճեմարանի պարտեզի այն ծառուղին, որ «բանաստեղծ» աշակերտներին մտորումների և երազանքների վայրն էր, ուր հաճախ ջղային քայլվածքով շրջում էր և ինքն իրեն հետ խոսում անմահ Կոմիտասը՝ եղբայր Սողոմոնը, ինչպես կոչում էինք նրան փոքր աշակերտներս:

Ոտանավորին խորագիրն էր «Երկու համբույր»: Դասընկերներս հավանել էին, որով ես սիրտ էի առել այն ցույց տալու վարպետին:

Երկու համբույր: Առաջին համբույրը որպես թե իմ սիրած աղջիկն է տալիս ինձ՝ վարդագույն, բոցավառ շրթներով, իսկ երկրորդ համբույրը մահն է տալիս՝ դժգույն, սառը շրթներով:

Կարդաց և իրեն ասաց. «Սեր և մահ. բանաստեղծության մշտական նյութը». հետո դարձավ դեպի ինձ.— «Իհարկե, այս գրածդ երևակայությունն է: Վաղահաս: Գրի՛ր քո զգացած բաների մասին: Բավական սահուն ես գրել... Երևում է՝ վաղուց ես սկսել գրել, վարժ ես... Վանկեր, հանգեր տեղին են, վատ չեն...»

— Այո՛, վաղուց եմ գրում, մի քանի տարի կա,— պատասխանեցի ես:

— Շատ լավ, մեկ-մեկ ինձ ցույց տուր գրածներդ: Շարունակիր գրել, բայց շատ կարդա, զարգացիր և հայերեն լավ սովորիր:

Երբեմն-երբեմն նոր գրած ոտանավորներս ներկայացնում էի նրան. սիրով կարդում էր, նկատումներ և ուղղումներ անում և անգնահատելի խորհուրդներ տալիս:

Այսպես գնում էր ժամանակը դասերի և անուրջների միջով: Մի օր, 1892 թվին, ցույց տվի մի նոր ոտանավոր.

«Ծաղիկ էի նորարոդորո
Սարի լանջում, երկնի տակ»...

Կարդաց ոտանավորս, նորից կարդաց և քաղցր ժպիտով
ասաց, ուսիս թեթև խիելով. «Կեցցե՛ս, հիմա բանաստեղծ
ես»:

Ոգևորությանս սահման չկար. ամուր սեղմեցի նրա ձեռ-
քը և թուս ընկերներիս մոտ:

Ծեմարանից հեռացա և գնացի արտասահման՝ շատ սի-
րելի ուսուցչիս և ազնիվ մարդու հիշատակը արտիս մեջ
սրբությամբ գուրգուրելով:

1902 թվից սկսած ես հաճախակի լինում էի Վաղարշա-
պատ և միշտ գնում էի այցելության ուսուցչիս և հիմա ար-
դեն ընկերիս:

Նրա տան դուռը բաց էր իմ առաջ և սիրալիք ընդունելու-
թյուն ունեի նրա ազնիվ տիկնոջ և զավակների կողմից: Նրա
հետ ժամանակ անցնելը գերագույն վայելք էր. բարձր ինտե-
լեկտի մարդ, հազվագյուտ զարգացած, բազմակողմանի
կարդացած, դասական ճաշակի և խորունկ կուլտուրայի տեր,
որ պատիվ կբերեր ամեն հասարակության:

Անթերի գիտեր հայերեն և ռուսերեն, գիտեր եվրոպա-
կան հին և նոր լեզուներ, լավ ծանոթ էր հայ բարբառներից
և ֆոլկլորին: Եվ չնայելով իր՝ ֆիլոլոգիկ բարձրագույն կրթու-
թյանը և անցած լեզվական դիսցիպլինային, նա հայերենի
քերականական տարակուսանքները փարատելու համար դի-
մում էր ժողովրդին՝ լեզվի ստեղծողին և անսխալ քերակա-
նագետին:

Պատմում են, որ ճեմարանի աշակերտները մի անգամ
վեճի են բռնվել մի նախդիրի, թե մի բայի մասին, թե ինչ
հույով կամ խնդիր է առնում. վեճը լուծելու համար հարցնում
են նրան: Մի պահ մտածում է նա և ասում. «Եթե դիմեմ
անգլերենին կամ գերմաներենին՝ դուռը կփակեմ, և կսխալ-
վեմք...»:

Այդ ժամանակ անցնելիս է լինում ժողովրդի մի մարդ՝
բեռը շալակին:

— Այ, նրան դիմենք, նա գիտե միշտը:

Մեծ բանաստեղծի այս խորհուրդը ղեկավար պիտի լինի մեզ քոլորիս համար:

Նա ընկերական մարդ էր, սիրում էր հավաքույթներ, շեֆ, կերուխում: Բայց չունեւ Հովհ. Թումանյանի թամադայական շողշողուն ձիրքը, որով քեֆերը դառնում էին շքեղ հանդեսներ, սրամտության եզակի տոներ, ուրախության պահեր: Նա էլ, Թումանյանի պես, գիտեր շատ անեկդոտներ, ժողովրդի կյանքից գեղեցիկ, զվարթ գրույցներ, և տրամադրված ժամերին պատմում էր համով-հոտով՝ ուրախ ժպիտը աչքերի մեջ:

Ավելորդ չի լինի հիշատակել, որ ես իմ մասնակցությունը բերել եմ Հ. Հովհաննիսյանի բանաստեղծությունների 1903 թվի հրատարակության գործին:

Ես մի կարճ ժամանակով Բաքվի «Կուլտուրական միության» հրատարակչության մասի վարիչն էի: Իմ թելադրանքով և իմ հսկողությամբ լույս ընծայվեցին Հ. Հովհաննիսյանի բանաստեղծությունների հատորը, նաև Խ. Աբովյանի «Վերջ Հայաստանին»:

Այդ առթիվ նամակագրության մեջ եմ մտել հեղինակի հետ:

1911 թվին արտասահման գնալով, ընդհատվեցին իմ կապերն ընկերներիս հետ, մանավանդ առաջին իմպերիալիստական պատերազմի և ունյուցիայի տարիներին, երբ նամակագրությունն ընկերներիս հետ գրեթե իսպառ վերացավ: Սակայն հիշածս պատերազմից առաջ, երբ 1913 թվին Կովկասում տոնեցին Հ. Հովհաննիսյանի գրական գործունեության 30-ամյակը, ես Ժնևից նրան ողջույնի նամակ ուղարկեցի, որ հրատարակվեց այն ժամանակվա մամուլում:

1926 թվի աշնանը արտասահմանից վերադարձա հայրենիք: 20 տարի կար, որ չէի տեսել ուսուցչիս, կարոտով գրկեցինք միմյանց:

Տարիները թեթև չէին անցել նրա գլխի վրայից, բավական ծերացել էր և առաջվա նման զվարթ չէր: Պետությունը հարգում, մեծարում էր նրան. նշանակել էր կենսաթոշակ և

այգի էր տրամադրել նրան՝ օգտագործելու համար: Ծառ հաճախ լինում էի նրա տանը և այգում: Հիշում եմ, որ մի անգամ գիշերեցի այգում: Տակավիճ ուշ գիշեր չէր, ուզում էի՛նք արթուն մնալ, սակայն ինքը հոգնած էր, քնել էր ցանկանում:

— Կանուխ է,— ասացի ես,— մի քիչ էլ գրույց անենք:

— Գնա՛ պառկիր և աստղերի հետ գրույց արա,— պատասխանեց նա:

1928 թվի տարեմուտը դիմավորեցինք նրա տանը. բավական հյուրեր կային: Անմոռանալի, սրտագին ժամեր անցրինք. բոլորս հավաքված մեր պեղծիպի ալեհեր նահապետի շուրջը, երգում էինք, պարում, հրճվում մինչև լույս:

Վերջին անգամ չեմ հիշում ուր տեսա նրան, միայն խոտացել էի կիրակի օրը, սեպտեմբերի 29-ին լինել այգում՝ խորոված ուտելու համար:

Կիրակի առավոտը, երբ զարթնեցի, մի տխուր, մոռյլ օր էր. Մասիսը ծածկված էր աշնան մթին ամպերով. ծառերից դեղին տերևները հառաչելով վայր էին ընկնում, և ես շատ տխուր էի՝ անտրամադիր գնալու... Եկավ նրա մորաքրոջ որդին, որ միասին գնայինք. հրաժարվեցի գնալ:

Մյուս օրը, վաղ առավոտյան լսեցի մահվան բոթը:

Մինչև այժմ զգացմունքների մի պայքար կա հոգուս մեջ. ցավում եմ, որ չեմ գնացել և գոհ եմ, որ չեմ գնացել: Ցավում եմ, որ վերջին անգամ չտեսա նրան, չլսեցի նրա վերջին խոսքը, բայց և գոհ եմ, որ չսպրեցի այն զարհուրելի վայրկյանը, երբ այդ հոյակապ մարդը, իմ սիրելին և մտերիմը, պիտի հանգչեր իմ աչքերի առաջ:

Հիմա և միշտ իմ հոգում ապրում է նա՝ գեղեցիկ, բարի, քաղցր՝ իր հայացքով և իր ձայնով, իր ժպիտով և իր թախիծով...

Եվ հավերժ կենդանի կմնա մեծ բանաստեղծի նվիրական քնարը հայ ժողովրդի համար, որովհետև՝

«Միայն այն կապրի, որ միշտ է անմահ—

Սուրբ գեղեցկություն և սուրբ գաղափար.

Վեհ միտքը ազատ, կենդանի կմնա

Ու սերն անձնագոհ խեղճ եղբոր համար»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՌՈՒՄԱՆՅԱՆ

Գևորգյան ճեմարանում աշակերտ եղած ժամանակ՝ 1892 թվին, մի բարեկամ ուղարկել էր ինձ Հովհաննես Թումանյանի բանաստեղծությունների առաջին հատորից մի քանի օրինակ, որ վաճառեի ընկերներս մեջ:

Նույն թվի աշնանը, երբ Թիֆլիս էի, գնացի Թումանյանի մոտ վճարելու գրքի գինը և այդ առիթով ծանոթանալու նրա հետ:

Ներկայացա նրան: Նա պաշտոն ուներ Կովկասի հայոց հրատարակչական ընկերության մեջ. ի՞նչ էր պաշտոնի անունը՝ չեմ հիշում, սակայն միշտ ընկերության գրասենյակում էր: Նա քաղցրությամբ ընդունեց ինձ, հարցրեց, թե ի՞նչ տպավորություն է թողել գիրքը աշակերտների վրա:

Մեր ուսուցիչ-բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի համեմատությամբ առաջին գիրքը մենք գտել էինք թույլ, բայց զգացել էինք տաղանդի շունչը:

— Մենք շատ սիրեցինք ձեր պոեզիայի ժողովրդային տարերքը, — պատասխանեցի ես և արտասանեցի, իբրև ապացույց, որ սիրում եմք, մի երկու ոտանավոր այդ ոճով գրածներից:

Թումանյանն ուրախ ժպտաց և իսկույն նվիրեց ինձ բանաստեղծությունների երկրորդ հատորը, որ նոր էր լույս տեսել:

Առաջին հանդիպումով շատ հաճելի տպավորություն ստացա Թումանյանից: Վարմունքը պարզ էր և ընկերական: Նրա դեմքը ողողված էր, կարծես, մի ներքին լույսով: Փարթամ մազերով, աչքերը խոր ու խոհուն: Ժպիտը միշտ ներկա էր դեմքի վրա: Հազիվ քսան և չորս տարեկան էր, ուրախ, զվարթ, երիտասարդ:

Հաջորդ այցելությանն արտասանեցի անգիր արած մի քանի նոտանալոր նոր հատորից:

— Վա՛հ,— բացականչեց նա,— ի՛նչ լավ հիշողություն ունեք: Ես իմ գրածներից ո՛չ մի տուն չեմ հիշում:

Հետագա հանդիպումներին սիրտ արեցի, հայտնեցի՝ թե ես էլ եմ նոտանալոր գրում:

— Զգում էի,— ասաց նա,— խնդրեմ մեկ բերեք տեսնեմ:

Ուտանալորներիցս ընտրեցի մի տասը-տասնհինգ հատ և հանձնեցի նրան: Օրեր անցան, սպասում էի, որ կարծիք հայտնեք դրանց մասին, բայց նա լռում էր: Մտածեցի, որ չի հավանել և երբեք էլ չհետաքրքրվեցի: Թումանյանի մոտ ծանոթացա Ղազարոս Աղայանի հետ, որ գալիս էր հայրական գյուղից, ուր նա ապրում էր այդ ժամանակ: Հաստ պալտո հագած, վալեռկաներով, կալոշներով, գյուղից՝ ուղղակի Օհաննեսի մոտ: Նրանք ջերմաջերմ գրկախառնվեցին, համբուրվեցին, կարծես երջանկացան իրար տեսնելով: Ըստ նման էին նրանք իրար. երկուսն էլ միևնույն ատաղձից, հայ ժողովրդի նյութից կերտած և միևնույն ոճով ձևավորված: Նաև մեծ մտերմություն տեսա նրանց միջև, իսկ հետագա տարիներում համոզվեցի, որ ամբողջ աշխարհում նրանք իրար ամենամոտ մարդիկ են: Օհաննեսը նրան կոչում էր «Ապան ապեր», նա էլ Օհաննեսին՝ «Ապան բալասի». հետո, երկուսով ծիծաղելով, ասում էին. «Էլ ո՛վ կարող է մեզ հաղթել»:

1895 թվի ձմեռնամուտին Օհաննեսը երևաց Ալեքսանդրապոլում: Իջել էր հյուրանոց. ես տեղափոխեցի մեր տուն: Մի շաբաթ մնաց Ալեքսանդրապոլում: Գալիս էր Թիֆլիսից Ախալցխայի և Ախալքալաքի վրայով, գնում էր Երևան, Էջմիածին: Ինչ-որ միսիայով էր շրջում նա: Հայ կյանքը ալեկոծված էր արևմտահայերի ջարդերի սարսափելի լուրերով և ջարդերին ականատես, փախած հայ գաղթականների սըրտակեղեք պատմություններով: Ամեն գիտակից հայ ծանր մտահոգություններ ուներ արևմտահայերի և հայկական հարցի ճակատագրի նկատմամբ: Անշուշտ, Օհաննեսի ուղևորու-

թյունը կապված պիտի լիներ այդ դրության վերաբերյալ գործերի հետ: Այդ օրերից անցել է ավելի քան 50 տարի և մոռացել էմ, թե ի՞նչ էր Օհաննեսի դերը այդ գործերի մեջ, թեև նա անվերջ տեսակցությունների մեջ էր քաղաքի ինտելիգենցիայի և հասարակության ներկայացուցիչների հետ, հետաքրքրվում էր գաղթականների վիճակով և տնտրակներ էր լեցնում նրանց պատմածներով:

Այդ օրերից մնում է ինձ մոտ մի թանկագին հիշատակ, մի թղթի կտոր՝ Օհաննեսի ձեռագիրը՝ «Երկու սև ամպ» բանաստեղծությունը, որ նոր էր գրել:

Չմեռվա ցրտերին Օհաննեսին ճանապարհ դրինք Երևան:

✓ 1896 թվի գարնանը Թիֆլիսումն էի: Այդ ժամանակ նոր էի ծանոթացել Դերենիկ Դեմիրճյանի հետ, որ Ներսիսյան դպրոցի աշակերտ էր: Մի երեկո նրան տարա թումանյան/մոտ. Օհաննեսն արդեն կարդացել էր «Մուրճ» ամսագրում տպված նրա բանաստեղծությունները և գովեստով արտահայտվեց դրանց մասին: Խոսեցինք գրական նյութերից, ապա Օհաննեսը կարդաց «Մծիրի»-ի իր նոր կատարած թարգմանությունը, որը մենք հավանեցինք՝ մեկ-մեկու նկատողություններ անելով:

Դերենիկը գնաց: Ես գիշերեցի Օհաննեսի մոտ: Տխուր շրջան էր. ցարական հայահալած քաղաքականությունը չարագին բնույթ էր ստացել, կառավարությունը փակել էր հայոց դպրոցները, իրար ետևից փակում էր հայ թերթերը, գրադարանները և կուլտուրական հիմնարկները. բանտերը լցվւլ էին արևմտահայերի ազատագրական շարժման համակրողներով. բանտարկված էին Ղ. Աղայանը, Ծիրվանզադեն:

Ուշ գիշեր էր, երբ պատրաստվեցինք քնելու: Օհաննեսը լամպը ձեռքին կանգնել էր անկողնուս մոտ:

— Ա՛յ տղա, շատ մի՛ տխրիր, վերջը լավ կլինի: Հայ ժողովուրդը ավելի ծանր օրեր է տեսել: Մի՛ հուսահատվիր, էս էլ կանցնի:

Առհասարակ լավատեսությունը գերակշռում էր Օհաննեսի հոգում. ընկճվածությունը մի վայրկյան էր նրա մոտ: Հավա-

տով էր մեր ճակատագրի հանդեպ և պայծառ հեռանկարներ էր տեսնում հայ ժողովրդի սուսը:

Այդ հավատը վարակեց ինձ, ես թեթևացած կարողացա բնել:

1898 թվի սկզբներին, ցարական ժանդարմերիայի կարգադրությամբ, ես մի տարով արտրվում էի Օդեսա քաղաքը: Աքսոր գնալիս, ճանապարհին կանգ առա Թիֆլիս և անմիջապես գնացի Օհաննեսի մոտ: Արդեն օրենք էր դարձել, որ Թիֆլիս գտնվելիս անպատճառ պիտի լինեի նրա մոտ, գրեթե ամեն օր:

Երեկոյան բավական հյուրեր եկան և մեկնեցին ուշ գիշերին. երբ մնացինք մենակ, Օհաննեսը կարդաց «Ռեպի աւն-հունը» պոեմը, որ վաղուց էր գրել: Հիմա վերամշակել էր, տակավին ոչ վերջնականապես: Ասում էր, որ պոեմի նյութը վավերական է, ճշգրիտ իրողություն: Անհանգիստ գիշեր անցրեցի: Երևակայությունս հուզված էր և անհերթեթ երազներ տեսա: Առավոտյան երազներս պատմեցի Օհաննեսին: Նա էլ թե՛ սա լավ նշան է, որ պոեմս ազդեցություն է թողնում, բայց իմ պոեզիայի ոճին չի բռնում: Խորթ զավակ է այս պոեմն ինձ համար, նյութն էլ, գրելաձևն էլ: Բայց թող լինի, իմանան, որ ֆուկլորից դուրս էլ կարող եմ բան գրել:

Այս միասին բացատրությունը շատ զվարճացրեց ինձ:

1899 թվին արտրից վերադարձիս մի քանի օրով մնացի Թիֆլիսում, եղա Օհաննեսի մոտ: Օհաննեսին գտա շատ ընկճված, շատ տխուր: Նոր էր դարձել Ռսեդ գյուղից, ուր գնացել էր հոր հողարկավորությանը:

«Սիրելի հորս թաղեցի: Սրանից ավելի ի՞նչ մեծ վիշտ կա՛ սիրածին թաղել...», — խորին թախծությամբ ասաց նա:

Օհաննեսը շատ էր սիրում հորը և միշտ էլ մեծ հիացմունքով էր խոսում հոր մասին: Տարիներ հետո էլ առանց աչքերը արցունքով լցվելու չէր կարող խոսել նրա մասին:

Գիշերը մնացի մտորը, և մինչև ուշ գիշեր պատմում էր հանգուցյալ հոր բարությունից, ազնվությունից, առաքինությունից:

Օհաննեսը կենտրոնաձիգ անձնավորություն էր՝ հյուրասեր, մարդամոտ: Զրույցի համար հոգի էր տալիս: Օրվա որ ժամին գնայիր նրա մոտ, ձեռքի գործը կթողներ և, ժպիտը դեմքին, կնստեր գրույցի:

Ղ. Աղայանը, Դ. Դեմիրճյանը, ես և մեր մյուս ընկերները կանոնավոր կերպով շաբաթը մեկ-երկու անգամ հավաքվում էինք նրա մոտ՝ իրար տեսնելու և գրույց անելու: Այսպիսով, նրա տունը դարձել էր մեր հավաքատեղին: Թե՛ էինք խմում, ընթրում, խոսում: Զմեռը վատվումն բովաբիկի շուրջը նըստած՝ կատակում էինք, անվերջ գրույց անում, խոսում, վիճում:

Առաջին խոսքը պատկանում էր Ղ. Աղայանին, որին Նահապետ էինք անվանում: Գրականության Նահապետ: Նրան հարգում էինք բոլորս և սիրում: Ուշադրությամբ էինք լսում նրա կարծիքները, դիտողությունները: Մեր երեկույթներին, գիշելով մեր թախանձանքներին, Աղայանը երգում էր սիրած Քյոթոզլու ասպետական երգերը, իրեն՝ Աղայանի հայացրած թարգմանությամբ: Պարթև հասակով կանգնում էր նա, հուժկու ձեռքերը շարժելով, բամբ ձայնով կատարում էր Քյոթոզլին:

Ընթերցում էինք մեր նոր գրած բաները, քննադատում, կարծիքներ փոխանակում: Խոսում էինք հայ, ռուս և օտար գրական նորությունների մասին, հաղորդում իրար մեր տպավորությունները:

Ի՞նչ նյութերի շուրջը ասես՝ չէր դառնում մեր գրույցը: Խոսում էինք հասարակական և քաղաքական երևույթների մասին: Խոսում էինք ազգերի պատմություններից, ժողովուրդների կյանքից, արվեստներից, փիլիսոփայությունից և մանավանդ գրականությունից: Կարդում էինք դասական հեղինակներից՝ արևմուտքի և արևելքի, նույնպես նոր հեղինակների գործերը: Մեզնից յուրաքանչյուրը իր սիրած հեղինակ

ուներ, որ ի մի գումարած ընդգրկում էր վերջ ի վերջո գրեթե բոլոր հանճարները: Կարողում էինք ժողովուրդների ֆոլկլորից և հիանում էինք ժողովուրդների անկեղծ ստեղծագործություններով՝ ռուսական բիլիաններով, սերբական պոեմներով, մեր Սասունցի Դավթով և շատ ուրիշներով: Մեր բոլորի սիրածն էր Սալյաթ-Նովան, որին բարձրացրինք հանճարների դասին, ունեցանք պաշտամունք նրա հանդեպ, մեր բոլոր խնջույքներում երգում էինք նրա տաղերը, որոնք գրեթե մոռացված էին: Վստահ կարող ենք պարծենալ, որ մենք վերականգնանացրինք նրան, տարածեցինք նրա համբավը և արձարծեցինք նրա երգերը:

Ինքնաբերաբար մեր հավաքույթների առաջին շրջանում, լուրջ թե կատակով, փափագ գարթնեց մեր գրական խմբակին, մեր հավաքույթներին անուն տալ: Օհաննեսն ասաց, թե Գոնկյոր եղբայրներն իրենց գրական խմբակն ունեին (որի անդամներն էին՝ Էմիլ Զոլա, Ալֆոնս Դոդե, Տորգենս, Հյուսիմանս...), որ հավաքվում էր Գոնկյորների տան վերնահարկում, որին «Ամբար» անունն էին տալիս: Նույն նմանությունամբ, չեմ հիշում ում կողմից, առաջարկվեց «Վերնատուն» անունը. իսկույն հավանություն տվինք, գտնելով այն շատ պատշաճ և տեղին, որովհետև Օհաննեսի բնակարանը այն ժամանակ չորրորդ հարկում էր: Կնքեցինք «Վերնատուն» անունով մեր հավաքույթների վայրը:

Այդ անունն այլևս ընդմիջտ կապվեց մեզ հետ և քաղաքացիությունն ստացավ: Հասարակության մեջ պարզապես կիրառվում էր՝ «Վերնատան անդամները»:

«Վերնատունը» երբեմնակի հյուր էին գալիս գրողներ, արվեստագետներ, պատմաբաններ, լեզվաբաններ կամ գրականասեր մարդիկ՝ Պ. Պոռչյանը, Մուրացյանը, Վ. Փափագյանը, Կոմիտասը, Ակարիչներ Գ. Բաշինջաղյանը, Փ. Թերլեմեզյանը և շատերը:

Անմոռանալի գեղեցիկ ժամեր ենք անցրել «Վերնատունը», իմաստավորված, բովանդակալից, ներշնչող պահեր:

«Վերնատունը» ապրեց 7—8 տարի: Անդամների բացակայության և ցրվածության հետևանքով նա դադարեց գոյություն ունենալուց 1906—1907 թվականներին:

«Վերնատանը» տեղի ունեցած գրույցներից հիշում եմ Օհաննեսի մի բանի խոսքերը գրականության մասին.

— Իզուր ջանք է՝ անտաղանդ մարդկանց օգնել՝ գրող դառնալու համար: Իր եղջյուրները պախրան ինքը պիտի շինի:

— Ո՛չ մի բննադատ չի կարող իմ լավ ոտանավորը վատացնել և վատ ոտանավորը՝ լավացնել:

— Բանաստեղծությունը չի գրվի հանգով ու վանկով, այլ սրտով և զգացմունքով:

— Գրականությունը հայրենիք չունի, բայց յուրաքանչյուր հայրենիք իր գրականությունն ունի:

1901 թվի սեպտեմբերին, Օհաննեսը Ալեքսանդրապոլ եկավ Աբասումանից, ուր նա բժշկվում էր: Ծանապարհին կանգ էր առել Ախալքալաքում, այցելել էր Փարվանա լիճը, որի հայտնի լեգենդի մասին վաղուց ի վեր մտորում էր: Լսել էր Թմկաբերդի լեգենդը: Չէր կարողացել գնալ բերդը տեսնելու, սակայն Աբով լեռան լանջերից դիտակով նայել էր բերդին, որի բուրգերը հեռվից աղոտ ուրվագծվում էին:

Խանդավառ խոսում էր Փարվանայի ու Թմկաբերդի լեգենդների մասին. նրա երևակայության մեջ կամաց-կամաց կենսագործվում էին այդ շքնաղ պոեմները:

Հիշում եմ այսօրվա պես, որ նա «Թմկաբերդի» նախերգանքի առաջին փորձը արտասանեց՝ մեծ հիացմունք պատճառելով ինձ:

Ալեքսանդրապոլում, իրար ողջագործելուց անմիջապես հետո, Օհաննեսն ասաց.

— Անիում դեռ չեմ եղել, շատ եմ ուզում տեսնել, անպատճառ գլուխ բեր եղ բանը, շատ եմ խնդրում:

— Աչքիս վրա, դրանից էլ հեշտ բան ի՞նչ կա: |

Մի երկու օր անց բանաստեղծ Հովհաննես Կոստանյանցի հետ, որն իմ մորաբորջ որդին էր, ճանապարհ ընկանք դեպի Անի: Կանգ առանք մեր տանը՝ Ղազարապատ գյուղում, հանգրստանալու և մորս տեսնելու:

Օհաննեսը մեր ջրաղացի վարպետին և գյուղացիներին, որոնք հեքիաթներ և ժողովրդական երգեր գիտցողներ էին, հարցնում էր «Հազարան բլբուլի» մասին, գիտե՞ին արդյոք,

և որի՞ ֆուկլորի նյութերի մասին: Ժամերով զրույց էր անում նրանց հետ և լսածները գրում տեսրակի մեջ:

Երկու գիշեր միայն կարողացանք մնալ մեր տանը: Օհաննեսը անհամբեր էր, ուզում էր շուտով տեսնել Անին:

Մեր գյուղից մինչև Անի հազիվ 25 կիլոմետր լինէր:

Այցելեցինք Հոռոմոսի նշանավոր վանքին, որի նախագավիթը սքանչելի է: Հովհ. Կոստանյանը մեզ նկարեց Աշոտ Ռդորմած թագավորի դամբարանի աջ-ձախ կողմում կանգնած:

Մոտենում ենք Անիի հոյակապ պարիսպներին և բուրգերին. Օհաննեսը հուզված է, ոչինչ չի ասում, միայն արագացնում է քայլերը, հայացքը շարունակ պարիսպներին:

— Ի՞նչ ես շտապում,— ձայնում եմ ես,— Սմբատ թագավորը դեռ քո գալու մասին լուր չունի:

Օհաննեսը դառնում, խոժոռ նայում է ինձ և լայն քայլեր նետում:

Օհաննեսը մտածում էր մի դրամա գրել Անիի կյանքից. նյութը Հովհաննես-Սմբատ Բագրատունի «թանձրամիտ ու թանձրամարմին» թագավորն էր, որ իմաստունի համբավ ուներ:

Ես դրա մասին էի ակնարկում, որ Օհաննեսին տհաճություն պատճառեց:

Վերջապես ավագ դռան առաջն էինք...

Օհաննեսը կանգնեց և ուղղակի բևեռվեց իր տեղում: Երկար, լռելյայն նայեց և, գլուխը շարժելով, դարձավ դեպի մեզ:

Արդեն մութն էր, որ հասանք վանահայր վարդապետի բնակարանը, որն այցելողների հյուրանոցն էր միաժամանակ: Մի սարսափելի ճիշի հետ մթության մեջ պայթեց հրացանը, որի գնդակն ուղղակի անցավ մեր երեքիս առաջով, եթե մի քայլ առաջ լինեինք, ով գիտե ինչ պիտի լինէր մեր վիճակը:

Պարզվեց, որ վանահայրը բացակա է, և ծառան վախենալով, թե եկողները ավազակներ են, դիմել է անտեղի ինքնապաշտպանության:

— Տո՛ւ,— ասաց Օհաննեսը ծառային՝ բերդանկա հրացա-

Ան տեսնելով,— մի գյուղով երեք բանաստեղծ պիտի տպու-
նեի՞ր:

— Լավ պրծար, ըսել է՝ ձեր վերջը չէր եկել,— ամենայն
անտարբերությամբ պատասխանեց ծառան:

Վաղ առավոտյան սկսեցինք թափառել պանծալի ավե-
րակների մեջ: Օհաննեսը հիացմունքով և ուշով դիտում էր
ամեն մի բեկոր՝ արվեստի կնիք կրող: Լուռ, մտասույզ թա-
փառում էր՝ անցյալի հետ ներքին խոսակցությամբ տար-
ված. կանգնում էր հրաշակերտ շենքերի առաջ, հայացքը
լարած նայում էր սյուների, կամարների, քանդակների,
սպա աչքերը գոցում և ականջները լարում, կարծես մի երա-
ժրշտություն էր լսում՝ ո՛չ սովորական, ո՛չ այս աշխարհից:

Անին իր վեհաաբանչ ճարտարապետությամբ շատ մեծ
տպավորություն թողեց Օհաննեսի վրա: Երբ մեկնում էինք
Անիից և պարիսպներից դուրս էինք արդեն, Օհաննեսը վեր-
ջին անգամ նայեց Անիին և սասց.

— Ինչքա՞ն մարդ պիտի անբան-անասուն լինի, որ ձեռք
բարձրացնի այս հրաշալիքների վրա:

— Մի՞թե այս գեղեցկությունը պիտի մեռնի առանց հետք
թողնելու հայկական և ուրիշ ժողովուրդների արվեստի վրա:

— Այսօր զարգացման ի՞նչ աստիճանի հասած կլինեք
մեր արվեստը, եթե թուրք, թաթար ցեղերը չքայքայեին մեր
ժողովրդին:

1903—4—5 թվականները հայ ժողովրդի համար ծանր
տարիներ էին: Ճարական հայահալած քաղաքականությունը
ավելի խստացված շարունակվում էր: Փոխարքա իշխան Գա-
լիցիը, հայերին ատելու մեջ ինքնամոռացության հասած՝
անվերջ չարիքներ էր նյութում հայ ժողովրդի դեմ:

Ցարն ու իր ռեակցիոն չինովնիկները հայկական դպրոց-
ներն ու կուլտուրական հիմնարկները փակելուց չհազեցած,
բռնի խլեցին հայ եկեղեցու բոլոր կալվածքները, որ դարերով
նվիրված էին հայ ազգի կողմից Էջմիածնի ու կաթողիկոսու-
թյան պահպանման համար և հոգալու հայ ժողովրդի կրոնա-
կան ու կրթական կարիքները:

Հայ ժողովուրդը, ամենուրեք, զենքը ձեռքին դիմավորեց հաիշտակիչներին և երկուստեք արյուն հոսեց: Բանատը լցրին հազարավոր հայերով, և ձեռք զարկեցին մի դիվական գործի՝ թուրք մասսաները գրգռեցին և զինեցին հայերի դեմ... սկսվեցին հայ-թուրքական արյունոտ կոիվները... Օհաննեսը ամբողջ էությանը կլանված էր մի կերպ վերջ դնելու այս անմիտ եղբայրասպանությանը, որ ծառայում էր միայն ցարերի բռնակալության հարատևման գործին: Այդ ժամանակներին էր, որ նա հայ զինված գյուղացիների գլուխն անցած, Լոռում, գնում է հարևան թուրքերի մոտ և հաշտության դաշն կնքում, որով այդ շրջանի խաղաղությունը պահպանվում է:

Այս տարիներին ես հաճախ հանդիպում էի Օհաննեսին Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Երևանում, Էջմիածնում:

1906 թվին, ամռանը, հուլիսին, գնացի Դսեղ գյուղը՝ Թումանյանի մոտ հյուր: Նա ամբողջ ընտանիքով Դսեղումն էր: Ապրում էին պապեճակյան հին տան մեջ, որի վրա նա փայտաշեն մի հարկ էր կառուցել:

Մեծ ընտանիքը կառավարում էր Օհաննեսի մայրը՝ պառկառելի Նանին՝ շերտիը ձեռքը, իբրև իշխանական գավազան, հրամայում էր մեծին ու պատիկին: Առավոտից մինչև ուշ երեկո ծուխ էր բարձրանում Օհաննեսի երդիկից. ամբողջ օրը թոնիրների ու օջախների մեջ կրակ կար, նրանց վրա եփվում էին կերակրի կնթասները:

Լոռումն էմ. Սարոյի, Մաքոյի, Անուշի հայրենիքում. Օհաննեսի հետ, նրա հարկի տակ: Ի՞նչ կար ավելի քաղցր, քան այդ ժամերը: Օհաննեսի հետ շրջում ենք Դսեղ գյուղում, նրա շրջակայքը: Հին, հնադարյան գյուղ է Դսեղը, ամեն կողմ անցյալի բեկորներ: Գնում ենք գերեզմանատունը, այցելում ենք Օհաննեսի հոր շիրիմին: Օհաննեսի աչքերն արցունքոտվում են. ութ տարի է անցել հոր մահից, բայց վիշտը չի անցել: Եվ նորից, նորից պատմում է նա ինձ իր սքանչելի հոր մասին: Ազնվական, բարի, սիրող սրտով մարդ, բանաստեղծական հոգով:

«Ինչ որ կա իմ մեջ լավ բան՝ հորիցս է», — ասում է նա: Գնում ենք բարձրաքարշ Ս. Գրիգորի հոյակապ վանքը՝ տեսնելու մեր միջնադարյան ճարտարապետության մի փառավոր կոթող:

Գնում ենք լինը տեսնելու, որ դսեղցիք, լոռեցուն հատուկ հիպերբոլով, ծով են կոչում: Բարձրանում ենք մի զամիվեր, որտեղից սկսվում են Մարցի չքնաղ անտառները:

Օհաննեսի մանկության և խաղերի վայրերն են սրանք:

Ամեն կողմից դեպի երկինք են մխրճվում լեռնագագաթները. լանջերը՝ անտառապատ, բարձր ժայռերի վրա հսկա ծառեր կան, ավելի բարձր՝ արծվի բները: Չորակներից ծուխ է բարձրանում. հովիվների բինաներն են, ուր ապրում են ածուհախա ապրուհները:

Օհաննեսը ցույց է տալիս լեռները. ահա Չաթինդաղը, որի գլխին մշտապես հավաքվում են մթին ամպեր, և ամեն օր որոտ ու կայծակ կա: Ահա՛ Քոջաբարա սարը, որ լիքն է ելնիկներով, որոնց ետևից մանուկ Օհաննեսը վազել է օրնիբուն:

Գյուղի շուրջը բազկատարած շառաշում են «կանաչ վիթխարի ընկուզենիները». և արդյոք որի՞ տակ Օհաննեսն օրհնություն ստացավ գյուղի մեծերից:

Չիեր նստած թափառում ենք Լոովա գյուղերը: Գնացի՛ք Օձուն, Սանահին, Հաղպատ և այլուր:

Շրջեցինք գրեթե Լոովա մեծ մասը:

«Մի գրողի նանաչելու համար պետք է լինել նրա հայրենիքում», — այսպիսի մի միտք է հայտնել Գյոթեն:

Լոռին նահապետական մի ինքնամիտի աշխարհ է, հեքիաթի, առասպելի մի վիպաաշխարհ, դյուցազնական աշխարհ: Նրա ամեն մի անկյունը՝ ավանդապեպ, ամեն մի քարը՝ խոսող հերոսական անցյալից:

Ահեղագոչ Դեբեղ (Դև-բեղ) գետի հին կամուրջի վրա ահա նստել է մի գուսան՝ մի աշուղ և պատմում է ու սագերգում դևերի և մարդկանց միջև եղած հին կռիվների, նաև ժողովրդի ծոցից դուրս պոռթկած կտրին ըմբոստների նոր կռիվները հարստահարող թավաղների դեմ, կառավարության բռնակալ և կեղեքող պաշտոնյաների դեմ:

Օհաննեսը գուսանի բերանից ստնում է խոսքը և ոգև-
վորված պատմում է ինձ Չոփուոփ տղոց պատմությունը: 80-
ական թվականներին հարստահարող կալվածատերերի դեմ
ընթրստանում է Չոփուոնեց տղոց մեծ եղբայրը՝ Սողոմոնը,
սպանում է թավադին և երեք եղբայրների հետ դաշաղ է ընկե-
նում սարերը: Նրանց միանում են ուրիշ դժգոհներ, կտրիճներ:
Տարիներով ցարի կառավարությունն իր ստրաժնիկներով,
կազակներով չի կարողանում նրանց բռնել:

Օհաննեսը պատանի հասակից տենչացել է գրել մի պոեմ՝
նրանց հերոսական կոիվների մասին. «Հառաչանք» պոեմի
գարմանալի գեղեցիկ հատվածն այդ չիրականացված պոեմի
թանկագին մնացորդն է:

Քաջությունը, իգիթությունը լոռեցու հատկություններն են:
Օհաննեսի նախահայր պապը Լոովա ձորերի և անտառների
նահապետ քաջ Հովակիմն է՝ Մեհրաբյան-Թումանյան Հովա-
կիմը, որի մասին հոմերական ոճով գրում է Խաչատուր Աբով-
յանը:

Մի հսկա, ժայռեղեն տղամարդ, որը պաշտպանում է Լո-
ոնին անթիվ հաղթանակող կոիվների մեջ, լեզգիների և ղզըլ-
բաշների ավարառու, ավերող արշավախմբերից:

Ինքը՝ Օհաննեսը, քաջ մարդ էր, լավ հրացանաձիգ, որս-
կան:

Երբ շրջում էինք գյուղերում, բոլոր գյուղացիք ճանաչում
էին Օհաննեսին և խորին հարգանքով վերաբերվում դեպի նա:
Օհաննեսը գրեթե ճանաչում էր բոլորին, մանավանդ տարեց
լոռեցիներին, գրույց էր անում նրանց հետ, կատակում Լոովա
համով-հոտով բարբառով:

Գիտեր նրանց շատերի կենսագրությունից դեպքեր, ծիծա-
ղաշարժ անցքեր նրանց հովվական կյանքից, արջերի հետ
ունեցած նրանց գոտեմարտությունից:

Լոռում Օհաննեսն իր տարերքի մեջ էր: Այս հույակապ բնու-
թյան մեջ, այս՝ ավանդույթներով, առասպելներով, հիշա-
տակներով լի չքնաղ սարերում ու ձորերում նա բազմապատկ-
վել էր կյանքով, ապրում էր ամեն մի քարն ու բույր, ճանաչում
էր ամեն մի խորշը, անտառը, աղբյուրը, որոնց հետ նվիրա-
կան հուշերով կապված էր իր մանկությունն ու պատանեկու-

թյունը: Նա գիտեր նրանց մասին անթիվ զրույցներ, դեպքեր, դրվագներ և գիտեր բովանդակ Լոռվա հինավուրց և նոր պատմությունը բոլոր մանրամասներով:

Օհաննեսը ցույց տվեց բարձրաբերձ, վիթխարի ժայռերի մեջ այն քարայրերը, որտեղից վերջին տարիներս հայ հին ձեռագրեր հանեցին: Այդ ձեռագրերը մեր պապերը թուրքերի ավերումներից փրկելու համար թաքցրել էին անմատույց այրերի մեջ:

Դյուցազնական-նահապետական Լոռին իր շքեղ բնությունով, իր ավանդներով ու սովորույթներով, նրա հինավուրց ժողովուրդն իր կենսահայացքով, իր ցավերով, նաև իր պայքարով՝ ազատության և երջանկության համար, եղան Օհաննեսի ներշնչարանը: Այստեղից է հորդահոս գալիս Օհաննեսի ստեղծագործության աննախընթաց ժողովրդայնությունը:

Օհաննեսի լեզուն, ոճը, պայծառությունն այս չքնաղ երկրի՝ անհուն, դարավոր ֆոլկլորից է:

Օհաննեսն իր բոլոր հոգով, իր հոգու բոլոր կրքով ու կրակով սիրում էր Լոռին:

Այս հզոր սերը բոցավառեց, թևավորեց նրա երևակայությունը, գեղեցկացրեց նրա ստեղծագործությունները: Իր հրաշագեղ հայրենիքն իր աշխատող ու պայքարող ժողովրդով բանաստեղծորեն վերակառուցվեց նրա անմահ գործերի մեջ:

Ինչպես ասացի, Լոռին Օհաննեսի անհուն ներշնչարանն էր, ինչպես մեծահռչակ բանաստեղծ Միստրալի համար էր՝ իտալոդի և ձիթենու ալգիներով, հուրթի և հնազեղ հիշատակներով հարուստ իր Դրովանսը, որը նրա չքնաղ «Միրել» պոեմի մեջ, պրովանսական «Անուշի» մեջ մարմնացավ և անմահացավ:

Եվ միայն այս նահապարհով է, ժողովրդային արվեստի նահապարհով, որ անմուկ հայրենիքների և փոքր ժողովուրդների բուսահողից ծնված բանաստեղծները դառնում են համամարդկային մեծություններ, ինչպիսին են Միստրալը և Թումանյանը:

Եվ ինչպես Թումանյանը ներդաշնակվում էր Լոռվա պեղզածին՝ բնակչության, նրա մարմնից մարմին առած, նրա հո-

գուց հոգի առած: Կարծես Իրանի բանաստեղծ Հաֆեզն էր մտորում Շիրազի վարդաստաններում կամ Պուշկինն էր թափառում Ռուսաստանի բազմաշառաչ անտառների և ծափալուն գետերի եզերքներով:

Նա Լոռին սիրում էր այնպես, ինչպես սիրահար, ոտմանտիկ պատանին սիրում է իր երագների կույսին: Ո՛չ մի ձեռք չափտի դիպչի նրան: Ո՛չ մի օտար շունչ, ոչի՛նչ չափտի աղարտի նրա նվիրական կուսական գեղեցկությունը:

Եվ Օհաննեսը Ջոն Ռեոսկինի պես տխրում էր, որ երկաթուղի է անցնում չքնաղ Ալպերի վրայով, Լոովա ձորերով, կուսական անտառներով, որ տեխնիկան ոչնչացնում է անխակերտ բնությունը, ոչնչացնում է եղնիկներին, թռչուններին, հովվերգությունը, լույությունը, խորհրդավորությունը...

Օհաննեսի մշտավատ երագն էր Դսեղում կամ Լոովա մի նկարչագեղ վայրում շինել մի վիլլա, գրադարանը տեղափոխել այնտեղ և բնական ու հոգեկան իր միջավայրում պարսպել և ավարտել «Հազարան բլբուլը», «Սասունցի Դավթի» շարունակությունը:

Մենք թափառելիս կես-լուրջ, կես-կատակ վիլլայի համար պատշաճ վայր էինք փնտրում:

Թումանյանի այս տեղնը չիրականացավ քաղաքական հեղհեղուկ վիճակի և այլ պարագաների պատճառով:

1908 թվի դեկտեմբեր ամսին, ցարական ժանդարմերիան Օհաննեսին և ինձ ձերբակալեց և, զանազան հակապետական մեղադրանքով, վեց ամիս պահեց Թիֆլիսի Մետեխի բանտում: Կամերաներով դրացի էինք իրար: Բանտում լրացավ, փետրվար ամսին, Օհաննեսի 40-ամյակը: Այդ առիթով նա գրեց «Վայրէջք» գեղեցիկ բանաստեղծությունը: Մենք տղաբության ու ուրախության խառն զգացմունքով տոնեցինք նրա տարեդարձը: Բանտում նա գրեց նաև հրաշալի «Մի կաթիլ մեղր» առակը:

1911 թվին, ամռանը ես ստիպված եղա փախչել արտասահման՝ ցարական հետապնդումներից ազատվելու համար: Թիֆլիսից դուրս եկա հունիսի վերջին, Ղազարոս Աղայանի

թաղման օրը: Թաղումից հետո Թումանյանի հետ գնացինք
իրենց մոտ:

Տխուր, սգավոր օր էր: Հավիտյան գրկվեցինք մեր սիրե-
լի Նահապետից, ես էլ պիտի թողնեի հայրենիքս, և, թերևս,
անդարձ: Աննկարագրելի եմ այդ հրաժեշտի ծանր վայրկյան-
ները:

Արդեն ուշ գիշեր էր:

Վերջին անգամ մենք գրկեցինք իրար. երկուսս էլ լուր
էինք. ո՛չ մի խոսք:

Այս եղավ մեր վերջին տեսակցությունը...

Թումանյանը կյանքով բռնկված մարդ էր, մեծ տեսակե-
րամենտի տեր: Նրա էությունն ամբողջովին բաղձանք էր,
տենչանք, ցանկություն: Նրա սիրտը անկուշտ էր և անհաղ,
ուզում էր ամեն բան ունենալ, ամեն բանի հասնել, ամեն տեղ
լինել: Ուզում էր և գրել, և հասարակական ու քաղաքական
գործիչ լինել, այն էլ, առաջին կարգի: Ամփոփվելու ժամեր
չունեի, միշտ խճճված էր վեճերի, ժողովների, քեֆերի մեջ:
Հասարակությունը քաշում էր նրան դեպի իրեն, և ինքն էլ
ձգտում էր դեպի նա, և բոլորվում էր նրա շուրջը: Հասարա-
կության զարդն էր նա, խնջույքների, հրավերների հոգին, շող-
շողուն ջահը: Ամենուրեք թամադա էր նա՝ անգերագանցելի
թամադա: Ամենից հարգված, ամենից սիրված էր նա: Ով որ
նրան մի անգամ տեսներ, կուզեր շարունակ տեսնել: Նրա
հետ լինելը, նրա գրույցները, կատակները, սրախոսություն-
ները լսելը գերագույն հաճույք էր: Ուր որ գնար, զվարճու-
թյունը հետն էր տանում. նրա հետ եղողը մոռանում էր, թե
աշխարհում վիշտ ու ցավ գոյություն ունի:

Նա հարբեցնում էր խնջույքներին ո՛չ թե գինով, այլ իր
հումորով, իր կախարդիչ լեզվով, մտքի, խոսքի, ճաշակի
հմայիչ գյուտերով: Թվում էր, թե Օհաննեսը իրեն բախտա-
վոր պիտի զգար՝ ունենալով հասարակության հարգանքը,
կանանց սերը, գրասեր երիտասարդության պաշտամունքը և
փառք ու համբավ: Սակայն դժգոհ էր նա իրենից, իր վարած
կյանքից: Նա ուզում էր գրել, ստեղծագործել էր ուզում նա:
Ինչ որ տվել էր, համարում էր թույլ, թերի նախափորձ՝ ո՛չ
իրեն հոգին բովանդակ արտահայտող: Ուզում էր գրել «Հա-

գարան բլրով», ուր պիտի գեղեր իր էությունը: Արևելքի «Ֆաուստը» պետք է լիներ նա: Ուզում էր գրել «Արտավազդ» անունով մի դրամա՝ հայոց միֆական անցյալից, շեքսպիրյան համարժեքով: Ուզում էր գրել Սասնա ծռեր՝ ամբողջ էպոսը՝ Հոմերոսի կամ Ֆիրդուսու պես: Նա համոզված էր իր ուժերի կարողության մեջ: Բայց գրելու համար ժամանակ էր պետք, իսկ նա ժամանակ չուներ և, արդեն ժամանակի մասին գաղափար էլ չուներ: Ժամացույց չէր սիրում և չէր ուզում գործածել: Չէր սիրում չափված ժամանակով շարժվել: Երեխայի պես հավերժական ինքնազգացում ուներ և, ներկան միշտ ներկա, իսկ ինքը շոպյում էր թանկ ժամանակը և նրա հետ ավյու՛ն, եռա՛նդ, թա՛փ ու կորո՛վ:

Ամենայն ճշտությամբ Հովհ. Թումանյանը կարող էր ասել Օսկար Ուայլդի պես. «Ես իմ տաղանդը գործ դրի գրականության մեջ, իսկ հանճարս շոպյեցի կյանքի մեջ»:

Ծատ տարիներ հետո, տասնվեց տարի անց, երբ արտասահմանից վերադարձա հայրենիք, ավա՛ղ, չկար Օհաննեսը: Հազար կյանքով ապրող այդ հոյակապ մարդու փոխարեն տեսա մի անշուք հողակույտ և մի մեծ լռություն...

1948 թ.

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՄԱՀ ՀԻՇՍԱԿԻՆ

(Ծննդյան 80-ամյակին)

Կոմիտասը ինձ ժամանակակից մարդ էր. «Եղբայր Սողոմոնը», ինչպես կոչում էինք նրան Գևորգյան ճեմարանում. տարիներ ապրել ենք նույն հարկի տակ. խոսել, կատակել: Ծամփորդել ենք միասին հայ գյուղերն ու ուխտատեղիները (Սևան, Հատին), ուր նա երգեր էր հավաքում: Եղել ենք միասին Եվրոպայում, Ստամբուլում. բայց այս ամենը թվում է ինձ ո՛չ իրական: Կոմիտասը ինձ համար հիմա լեզենդ է, հեռավոր առասպել, և նրա կյանքն ու փառապանծ գործը մի չքնաղ հրաշապատում:

Կոմիտասը մեր ժողովրդի հպարտությունն է. նրա գործը մեր ազգային անսպառ հարստությունը:

Ինչո՞ւ է արժանացել նա մեր ժողովրդի այս բարձր գնահատանքին: Նա ո՛չ օպերաներ է գրել, ո՛չ օրատորիաներ, թերևս մի քանի արիաներ կամ ռոմանսներ միայն: Բայց ավելի մեծ գործ է կատարել, քան այդ բոլորը: Նա հայտնագործել է մեր ազգային երգը, հայկական երաժշտությունը, ազգային մելոսը՝ ինքնուրույն, ինքնատիպ և անաղարտ: Նա հիմն է դրել ազգային երաժշտական կուլտուրայի:

Մարդիկ կային, հայեր և օտարներ, որոնք պնդում էին, թե հայ ժողովուրդը ազգային երաժշտություն չունի, թե նրա երգը նմանողություն է եվրոպականին, թրքականին, քրդականին...

Կոմիտասը անխոնջ աշխատությամբ, իր հանճարի ուժով, իր զարմանալի ինտուիցիայի շնորհիվ, նաև իր տեսական լուրջ պատրաստությամբ ապացուցեց հայկականը, ա-

պացուցեց հայ երաժշտության ինքնուրույն գոյությունը՝ բը-
լամ հայ ժողովրդի հոգուց և դարերի միջով մեզ հասած:
Նա դիմեց հայ երգի ակունքին՝ հայ շինականի, գեղջուկի,
աշխատավորի երգին: Արարատյան դաշտի, Ծիրակի,
Վանի, Մուշի ժողովրդական երգերին: Նա ուզեց հայկական
երկրի բնության մեջ, հայ գեղջուկի շրթունքներից լսել հայ
եղանակներն ու երգի խոսքերը:

Նա խառնվեց այդ երգերը ստեղծող ժողովրդի հետ, ներ-
ծուլվեց նրա հետ, ներսուրեց նրա երգերը և սրտով հասկա-
ցավ, որ հայ երգի ոճը թաքնված է ժողովրդի այդ երգերի
մեջ, միայն պետք է մաքրել այդ երգերը օտարամուտ ժան-
գից ու անտեղի զարդերից, որոնք աղարտել էին հայ երգը:
Եվ ցույց տվեց աշխարհին մեր ազգային երգը՝ մաքրված,
ինքնուրույն և անաղարտ:

Կուլտուրական ժողովուրդները՝ ոռոսները, ֆրանսիացի-
ները, իտալացիները ընդունեցին հայ երաժշտության ինք-
նուրույնությունը և հիացմունքով տեսան մի նոր գեղեցկու-
թյուն, մի նոր երգ, մի նոր համամարդկային հարստություն:
Այսպիսով մեր շինականի երգերը՝ աշխատանքի, բնության,
սիրո, ուրախության և տխրության՝ նա բյուրեղացրեց, բարձ-
րացրեց և որպես ազգային մեծարժեք գանձ դրեց մեր ժողո-
վրդի հոշակապ գանձերի՝ ճարտարապետության և Սասունի
Էպոսի կողքին:

Հիշում եմ մի գեղեցիկ օր: Էջմիածնում հյուր էի Կոմի-
տասի մոտ. նստել էինք նրա փոքրիկ պարտեզում, սովե-
րաշատ տանձենու տակ: Կոմիտասը նոր էր գտել «Մոկաց
Միրզան» և մշակել էր այդ էպիկական հուժկու երգը: Ծառ
նզկորված և երջանիկ էր զգում իրեն այդ գյուտով: Կատա-
րեց ինձ մոտ արվեստի բացարձակ կատարելությամբ: Ան-
կարելի է նկարագրել այդ: Ես հիացած էի և նույնպես եր-
ջանկացած: Դեռ մինչև այսօր ես հոգուս մեջ տեսնում եմ
նզկորված Կոմիտասին և լսում նրա սրտաբուխ ձայնը: Կո-
միտասը հրապուրել, հմայել էր ինձ:

— Այս երգը շատ հին է, — ասաց նա, — հեթանոսական
դարերից, թերևս: Տե՛ս, ի՛նչ հզոր ձայներ կան, ի՛նչ խրոխտ
շեշտեր: Մեր բարձր լեռներից, շառաշուն ջրերից, խոժու

Ճայտերից են ծագում առել: Մեր քաջ նահապետների հոգուց է բխել այս առնական երգը: Այնքա՛ն հին է նա, որ անշուշտ Ջենով Օհանը երգել է, Սասունցի Դավիթը լսել...

Եվ ուրախությունից փայլում էին նրա աչքերը: Մեր գյուղական ժողովրդից վերցրած երգը Կոմիտասը բյուրեղացրած վերադարձրեց նրան: Այդ երգը եկավ քաղաք, բարձրացավ բեմերի վրա, հաղթական հնչեց բոլոր հանդեսներում:

Որ որ հայ կա, այնտեղ է և Կոմիտասի երգը: Կոմիտասը համազգային մեծություն է: Նրա երգով մեր ժողովուրդը ավելի գիտակցաբար զգաց իրեն, ավելի կապվեց իրար հետ, ինքնաճանաչեց: Հայ հասարակությունը զգաց աշխատավոր ժողովրդի վիշտն ու հրճվանքը, նրա աշխատանքի պափոսը, նրա սերը դեպի իր հայրենի բնությունը:

Կոմիտասը հայ երգով լույս աշխարհ հանեց դարերի խավարի մեջ կեղեքված ժողովրդի խուլ բողոքն ու ցասումը բռնության, ստրկության դեմ. նրա խեղդված վիշտը, իրավագուրկ կյանքը և պայծառ ապագայի հանդեպ տածած հավատը:

Կոմիտասը զոհն եղավ թուրք պետության բարբարոսության. նա տեսավ հայ ժողովրդի՝ կանանց, երեխաների, ծերերի, աշխատավորների և մտավորականների երթը դեպի մահ, դեպի գերեզման: Բոլորը, բոլորը անցան նրա մեծ, խորագգաց սրտի միջով, և նա խորտակվեց, ջախջախվեց:

Անհունորեն մեծ է մեր վիշտը, մեր կորուստը. ինչքա՛ն զանձեր նա տարավ իր հետ... Նա կարող էր այսօր մեզ հետ լինել, մեր ազատագրված հայրենիքում, ուր ինչքա՛ն գործ ուներ կատարելու. ի՛նչ հրճվանքով պիտի տեսներ մեր երաժշտական նոր սերնդին, որը Կոմիտասի պաշտամունքն ունի:

Սիրելի՛ Կոմիտաս, այսօր և միշտ դու մեզ հետ ես քո շքեղ երգերով, քո բարձր արվեստով, պատմական սիրալի գործով: Դու անմահ ես. ինչքան ժամանակ, որ հայ ժողովուրդը կապրի, կապրի՛ և քո երգը: Բայց դու հոգնել ես շատ, սիրելի Կոմիտաս, տառապել ես շատ, զարհուրանքներ ես կրել, վայրագ թշնամու սուրն ես տեսել, հանգստացիր հիմա, մայրենի հարազատ հողի գրկումն ես հիմա: Բո սի-

րած Արարատյան դաշտի բուրուննալից երգը ծավալվում է
քո շուրջը, քո երգերը ծփում են քո վրա, քո երգերի հետ
ծփում են աշխատանքի և ազատության հոր, հաղթական կո-
րովի երգեր...

Հանգչի՛ր խաղաղ, սիրելի՛, Ավիրակա՛ն Կոմիտաս...

1949

ԾԱՐՏԱՐԱՊԵՏ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

Թորոս Թորամանյանի հետ ծանոթացա բանասեր Կարապետ Բասմաջյանի միջոցով Ալեքսանդրապոլում (Լենինական) 1903 թ. աշնանը: Նրանք նույն այդ թվականին էին եկել արտասահմանից և ամռանը միասին անցկացրել էին Անի քաղաքում հետազոտությունների համար:

Կ. Բասմաջյանը մեծ գովեստով խոսեց նարտարապետ Թորամանյանի գիտության և կարողությունների մասին ու խնդրեց ինձ և ընկերներին, որ աջակցենք նրան, ինչքան կարող ենք:

Քաջված, անշուք ու լուռ մարդու տպավորություն թողեց նարտարապետը ինձ վրա:

Այս առաջին հանդիպումից հետո, կարծես նա անհայտացավ, մենք էլ մոռանալու վրա էինք նրան, երբ նույն տարվա ձմեռը, պատահաբար, հանդիպեցի նրան: Ես Վաղարշապատ էի գնում, նա ևս: Միևնույն վագոնում, լուսամտի առաջ, նստեցինք դեմադեմ և սկսեցինք զրույց անել: Ես հարցրի առաջիկա տարվա ծրագրերի մասին:

«Անի քաղաքում պիտի աշխատեմ, նպատակս այդ է...»:

Հանկարծ ընդհատվեց զրույցը: Ձյունի ներմակ դաշտերի վրա, ձմեռվա պարզ, կապույտ երկնքի տակ, ցերեկվա պայծառության մեջ ձգվեց Անիի կարմրավուն պարիսպների կախարդիչ կարավանը, որ շարժվում էր, քայլում և մոտենում էր, եզ ավելի ու ավելի... բայց երկաթուղին վազեց, անցավ, Անին սուզվեց բլուրների ետև...

— Այո,— շարունակեց Թորամանյանը,— երկար տարիներ պիտի աշխատեմ այստեղ, ողջ կյանքիս ընթացքում. սակայն մի կյանքն էլ կարճ է Անիի անսահման գանձերն ուսումնասիրելու համար:

Ապա ոգևորված խոսեց իր ծրագրերի մասին— մեծ, ստեղծագործ ծրագրեր,— մի նոր աշխարհ բանալ մեր արվեստի պատմության մեջ, պանծացնել մեր հոշակապ ճարտարապետությունը:

Ես խանդավառված լսում էի նրան, հոգեփոխվեց նա աչքիս և շատ արժեքավորվեց:

Թ. Թորամանյանը ձմեռները գրեթե միշտ ապրում էր Ալեքսպոլում: Այնտեղ դասավորում էր իր հավաքած նյութերը. գրում էր իր ուսումնասիրությունները՝ նրանցից ծագած արդյունքների, եզրակացությունների մասին:

Ալեքսպոլում թեև անտեսում էին նրան հարուստ շրջանները, սակայն մտավորականները հարգում էին նրան, մանավանդ նա շատ սիրված ու գնահատված էր քաղաքի արհեստավորներից, մասնավորապես, որմնադիր վարպետներից, որոնց հոշակը շատ տարածված էր Անդրկովկասում:

Հաճախ տեսնում էի նրան ժողովրդական սրճարաններում համբավավոր վարպետների հետ գրույցի մեջ՝ շինարարական արվեստի վերաբերյալ:

Եվ պիտի ասեմ, որ մեծագույն ճարտարապետը իր դիրքով ու շարժումով գրեթե չէր տարբերվում ուսում չառած, այսպես ասած, տնարույս, ավանդապահ վարպետներից՝ մագոտ երես, անխնամ հագուստ, գունավոր մեծ թաշկինակ, ծխախոտի ժողովրդական տուփ ու սարք...

Մեր վարպետները խորին հարգանքով տեղ էին տալիս նրան՝ վերի գլուխը սրճարաններում և իրենց հարկերի տակ և ճարտարապետ էին կոչում նրան:

«Ճարտարապետն եկավ»:

«Ճարտարապետ, ի՞նչ կուզես»:

«Ճարտարապետին սուրճ բերեք»:

Կային մարդիկ, որ չգիտեին նրա իսկական անունը: Իր կոչումի անունով էին ճանաչում նրան:

Իսկ Անիի և ուրիշ ավերակների մոտ և հեռու գյուղերում կարծում էին, թե «ճարտարապետ» հատուկ անուն է:

Եղել են դեպքեր, որ գյուղերում նորածինների անունը Ճարտարապետ են դրել:

Ճարտարապետը, — ես էլ բազմության պես, յուրացրել

Էի այս ձևը, —1903 և 1905—6 թվականներից սկսած սշխատում էի Անիի մեջ և շրջակայքում, Կամսարականների Օրբակում՝ Մաղասաբերդ, Հոռոմոսի վանք, Տեկոր, Մրեն, Բագնայր, Բագրան...

Այդ թվականները և մանավանդ հաջորդող տարիները Անիի պեղումների և հուշարձանների հետազոտման հերոսական շրջանն էր, որ բացել էր ակադեմիկոս Մառը իր ողու և հայ աշակերտներով, որոնց մեջ էր հետագայի մեր տաղանդավոր ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելին:

Ես հաճախ այցելում էի Անիին, համարյա ամեն տարի, երբեմն տարին մի երկու անգամ:

Ճարտարապետը շատ էր սիրում լավ որակի սուրճ և ծխախոտ, ինչպես և Անիի վանահայր սքանչելի Միքայել վարդապետը:

Սրբազան պարտականություն է, որ գոնե մի-երկու խոսքով պատմության համար արձանագրենք Անիի ավերակների այս անձնվեր պահապանի անունը, որ սրտագին սիրում էր ճարտարապետին, նրա հետ կիսում իր հացը, խնամում, հոգում էր նրա կարիքները: Երախտապարտ ենք այս անհայտ, մեծահոգի մարդու հանդեպ:

Պայման էինք կապել մեր միջև, որ ես ճարտարապետին և վարդապետին սուրճ և ծխախոտ տանեմ, իսկ նրանք կերակրեն ինձ Անիում եղած ժամանակ:

Անմոռանալի գեղեցիկ պահեր են ապրել նրանց հետ չըքնաղ Անիի մեջ:

Մի տարի այնտեղ էր տաղանդավոր դերասան, մեր սիրելի Վրույրը, որ լուսանկարում էր մայրաքաղաքիս հուշարձանները:

Երեքով միասին էինք շարունակ թափառումների, դեգերումների բոլոր ժամանակ:

Երկուսն էլ չափազանց հաճելի ընկերներ էին՝ զվարթ, սրամիտ, կատակասեր:

Մի շաբաթաշափ մնում էի նրանց հետ և ցավով բաժանվում էի՝ խոսք տալով նորից գալու, և կատարում էի խոստումս: Այնքան քաղցր էր նրանց ընկերակցությունը՝ նրանց գործերի հմայիչ մթնոլորտի մեջ:

Երբ լինում էի Անի, վաղ առավոտից սկսած մինչև կեսօր նրանց հետ այրվում էի բարկ արևի տակ, օգնում էի նրանց գործիքները տանելիս, սարքելիս և ուրիշ բաների մեջ: Կեսօրին դառնում էինք տուն ճաշելու: Միքայել վարդապետը պատրաստել էր ճաշը, սեղանը բացել և սպասում էր մեզ: Հանգչում էինք ճաշից հետո և նորից գործի անցնում: Իսկ երեկոները մինչև ուշ գիշեր նստում էինք բացօթյա, ծխում, սուրճ խմում և անվերջ զրույց անում:

Երբեմն լինում էինք ակադեմիկոս Մատի մոտ, երբ նա հանգստանում էր ամբողջ օրվա աշխատանքից հետո և սիրով զրույց էր անում մեզ հետ:

Մի օր ճարտարապետը չափում ու գծում էր Անիի ծիրի մեջ գտնվող «Հովվի» փոքրիկ եկեղեցին, իսկ Վրույրը լուսանկարում էր:

— Այս եկեղեցին պատիկ մի գոհար է. նմանը չունի, բայց դժբախտաբար շատ է խարխլած և իսպառ կործանվելու վրա է,— թախճով ասաց ճարտարապետը,— արդյոք չե՞ս կարող Ալեքսպոլում մի հանձնաժողով կազմել, որան հավաքել, որով կարելի լինի որոշ տեղեր կարկատել, նեցուկներ դնել, որ չմեռնի: Ափսոս է. ի՞նչ ես ասում. մի լավ մտածիր: Ծատ փող պետք չէ:

Նրա ամենից քաղցր ձայնով ասած այս խոսքը բնավ մտածել չտվեց ինձ: Խոսք տվի կատարել սիրելի բարեկամիս փափագը: Եվ Ալեքսպոլում քաղաքացիներ Նիկողայոս Կարապետյանի և Վաղարշակ Ստեփանյանի հետ իսկույն հավաքեցինք մոտ 1000 ուրբլի: Սա հեքիաթային նվեր եղավ ճարտարապետի համար, որ անմիջապես գործադրեց պատիկ գոհարի պահպանման նպատակին:

Ասացի, որ երեկոները զրույց էինք անում. բնականաբար, մեծ մասով զրույցը Անիի պատմության և հայ ճարտարապետության մասին էր լինում:

Անհուն հմտություն ուներ նա ազգերի կառուցողական արվեստի մասին. համեմատում էր զանազան ոճեր իրար հետ և դուրս բերում ոճերի ծագումները, բնաջնջումները, փոխա-

դարձ ազդեցությունները: Այցելած, ուսումնասիրած լինելով մեր կոթողները և հուշարձանները բազմաթիվ վայրերում՝ նա սպասուհի կերպով խորամուխ էր եղել մեր նախնիքների շինարարական արվեստի էության մեջ: Նա ընդհուպ մոտեցել էր հայ արվեստի արմատներին, որ գտնվում են հայկական բնաշխարհում. նա պեղել, փորփրել էր, հետազոտել էր հնագույն արմատները, որոնցով սնվել և բարձրացել է հայ մեծ արվեստի շենքը: Այսպիսով մեր արվեստի միասիական, նրա միամաժ խորհուրդները մերկացած էին նրա պրպտող, թափանցող իմացականության առաջ:

Մեր բնաշխարհի ավեր կամ կիսավեր շենքերը շոշափել էր նա, չափել, գծել, համեմատել, համադրել: Եվ գտել, գտել, բյուրեղացրել էր հայկականը, ինքնահատուկը, ազգայինը, հայ անհատականը: Եվ տիրապես կոել-կոփել էր իր հոյակապ տեսությունը հայ արվեստի նկատմամբ: Ծատ կարդացված և լավ մարսված գրքի պես գոց գիտեր նա մեր արվեստի բոլոր էջերը, նույնիսկ տառերը, շենքերի սյուները, պատվանդանները, խոյակները, կամարների և գմբեթների ձևերը, բանդակները, զարդանկարները և ամեն մի բեկորը:

Եվ ամենը տեղին ու անթերի:

Իսկ Անի՞ն... Անին նրա համար սպրոդ, շնչող իրակացություն էր: Անիի անցյալը նրա աչքում կենդանի ներկա էր. նա տեսնում էր անցած իրերը, դեպքերը, պատկերները: Լսում էր անցյալի ձայնը, զգում էր անցյալը:

Անիում նրա համար մեռած կամ կիսամեռ կամ փլատակ բան չկար: Բոլորը պարիսպներով, տանարներով, բուրգերով, աշտարակներով, բոլորը նրա առաջ լրիվ կանգուն էին՝ անթերի և կատարյալ, որովհետև բոլորը նա վերակառուցել էր արվեստագետի իր հրաշագործ և ճշգրիտ երևակայության մեջ: Կարծես նա աչքով տեսել էր այս հոյակապ շենքերը կառուցող վարպետներին, խոսել էր նրանց հետ, աշակերտել էր, միասին աշխատել, և այսպիսով որսացել էր նրանց վարպետության գաղտնիքները: Ականատեսը և գործակիցը միայն կարող էր լրիվ այսբան գիտենալ:

Եթե չես մոռացել, նա գիտեր, բացի Տրդատ հանճարել

ճարտարապետից, նաև մյուս վարպետների անունները և նրանց սիմվոլները:

Եթե ճարտարապետությունը քարացած երաժշտություն է, ապա Թորոս ճարտարապետը այդ քարացածը վերածել էր կենդանի երգի: Նա մեր հույակապ ավերակների և հուշարձանների նույնքան հույակապ երգիչն է:

Հիշում եմ մի անմոռանալի նվիրական պահ: Ոչ երեկո է, հայկական բարձրավանդակի օգոստոսյան անբացատրելի պայծառ գիշեր, լիալուսին, իսկական լուսին՝ արծաթ ու բյուրեղ: Նստել էինք Մայր եկեղեցու հանդեպ, քարե մի սեղանի առաջ: Արջո-Առիջ լեռներից (Ալանա) հոսում է մի գով, մեղմ, կազդուրիչ հով՝ Ծիրակի դաշտերի հոտավետ չոր խոտերի, ծեթոռնի և վայրի ծաղիկների բույրը հետը քերելով: Ծնկզնկում է հովը ավերակների մեջ, փսփում է, խոսում է սրտիդ հետ: Հովը չի խոսում, ոգիացած ավերակների հինավուրց քարերն են խոսում սրտիդ հետ՝ գաղափարացած, իմաստավորված քարերը, վսեմացած և հավերժական քարերը...

Ծխում ենք անվերջ և լուռ ենք քաղաքների մայր Անիի գիշերային լուռության մեջ: Սուզվել ենք մի երազային տրամադրության մեջ:

Անին արդեն ինքնին տրամադրություն է:

Ծեռն և աղմկալից աշխարհից կտրված, ամայության և լուռության մեջ մեկուսացած, նա կախարդում է քեզ, գերում է, տիրապետում է հոգուդ և ողողում է քեզ մի հատուկ տրամադրությամբ: Երբ խրոխտացող պարիսպներից ներս ես մտնում հնադարյան քաղաքը, ստորյա իրականությունը հեռանում է քեզնից և ոչնչանում, և տեղափոխվում են վայրկենաբար անցյալի մեջ, հին տեսիլներին:

Ամեն մի այցելու իր պատմական գիտելիքների և երևակայության ուժի չափով սիրում է պատկերացնել վաղուցվա անցյալը, կենդանացնել նրան և ապրել նրա ապրած կյանքով:

Նայում եմ Մայր եկեղեցուն, որը լուսնի անբջային լույսի տակ ուրու է դառել, գեղեցիկ, անծայր գեղեցիկ, աննյութացած, որ թվում է, թե ահա թոչելու է վերս, երկնքի անհունի մեջ. գնալու Պլատոնի գաղափարների՝ իդեաների աշխարհը,

Ատոնելու այնտեղ անմահ, հալերժական, կատարյալ ձևերի, նախատիպերի կողքին, իր գահի վրա, որից իջել էր ներքև, հայոց երկրի վրա:

Ձեռքս մեկնելով տաճարին, ասում եմ.

— Դեղեցիկը ա՛յսբան կլինի, ճարտարապետ, սա մեր Պարթենոնն է:

— Ծջմարիտ է. միայն այն տարբերությամբ, որ Պարթենոնը մարմարիոնից է, իսկ մերը՝ հայկական համեստ տուֆ քարից:

Լոռությունը խզվել էր արդեն, և Թորոս ճարտարապետն իր թավ, անդորր և խորունկ ձայնով սկսեց խոսել մեր արվեստի մասին:

— Մեր արվեստը, — ասաց նա, — անարդար կերպով անտեսված է, բայց նա իր արժանավայել տեղը գրաված է, ուզենան-չուզենան: Եվրոպան իրենից դուրս կամ հզոր ազգերի արվեստից դուրս քան չի ճանաչում: Հայն ի՛նչ է որ արվեստ ունենա... այսպես են մտածում նրանք: Թող այդպես մտածեն, մենք մեր գործը կտեսնենք:

— Հայերը են գլխից կառուցող են եղած:

Արարատն ու Մանու երկրները, որոնց միացումով թերևս սերել է Արմինի, Արմենի երկրանունը, լի են հոյակապ շենքերով, որոնց մնացորդները տեսնում ենք մենք Վան-Տուսլում, Սևանի ափերում և այլուր...

Հայերը այդ նախահայրերից ժառանգել են շինարարության արվեստը: Բարաշատ Հայաստանը մեր ճարտարապետների և վարպետներին տվել է անսպառ նյութ: Մեր քարակոփները, մեր որմնադիրները իրենց ձեռքի տակ ունեցել են մի կերպընկալ, հլու միջոց՝ մեր հրաբխային քարերը, որոնց հետ խաղացել են մերոնք և ցանկացած ձևը տվել, կաղապարել նրանց:

Մեր ժողովուրդը այդ հլու, հնազանդ նյութի մեջ մարմնացրել է իր հոգին, բաղձանքները, երազները, ճաշակը...

Ինչպե՞ս է ստեղծվել մեր արվեստը:

Դա իր պատմությունն ունի, որ կարելի է պատմել հանգրվան առ հանգրվան, դար առ դար: Մեր ժողովուրդը տակավին իր նախնական վիճակի մեջ ընդունել է նախահայրե-

րից որոշ հիմքեր, խնամել է նրանց հետ իր տարերքից բխած
նորություններ, կրել է նաև ազդեցություններ հարևաններից՝
պարսիկներից և Միջագետքից, յուրացրել է, շաղախել իր
ունեցածի հետ՝ ավելացնելով նոր տարրեր, նոր զգայություն-
ներ: Համաձայնեցրել է շինանյութերի հետ, կլիմայի հետ.
ներդաշնակել է բնակարարի՝ պելլագոսի հետ և իր մտավոր, հո-
գեկան, կենցաղային պահանջների հետ:

Եվ, այսպիսով ստեղծվել է դարերի ջանքով և կոտա-
կոմով հայկական ոճը՝ ինքնուրույն կնիք, որ այլևս անրեկա-
նելի է:

Անին հայկական մշակույթի հայելին է: Հա՛վ նայիր
Մայր եկեղեցուն, հայեցաբա՛ր նայիր. նա մեր ոճի ոգին է:
Տե՛ս, ինչքա՛ն վեսն է, որովհետև պարզ է: Պարզ է, որովհե-
տև նա մաղվել է դարավոր մշակույթի միջից, գտվել, թոթա-
լիել է վրայից ավելորդ բաները, դառել է բյուրեղ:

Երբ նայում ես Մայր եկեղեցուն կամ Տեկոթի, Երեբունյի,
Հոփսիսի տաճարներին, թվում է, թե լուսեղեն տեսիքի մեջ
տեսնում ես նրանց: Ուրիշ ազգերի արվեստների գեղեցկու-
թյունը հուզիչ է, հաճախ գրգռող և խոռվիչ. իսկ մեր արվեստի
գեղեցկությունը անդորրոդ է, հանգստացնող, հայեցողության
տանող:

Այս է հայ ճարտարապետական արվեստի էությունը, նրա
փիլիսոփայությունը:

Երբ արդեն կատարյալ մարմին առավ մեր ոճը, սկսեց
ճառագայթել:

Մեր քարքարոտ բարձրավանդակից իջան, տարածվե-
ցին մեր արվեստի շնորհները դեպի Բալկանները, Բյուզան-
դիոն, Իտալիա, Գերմանիա, Ֆրանսիա: Մեր գաղթական
վարպետները, մեր թողորակեցի հալածական ճարտար-
ները, արշավող ազգերը տարան այդ շնորհները, որոնք
եղան ներշնչման, մտածման, նմանության, թելադրման և նո-
րությունների ազդակներ բյուզանդական, գոթիկ, ռոմանա-
կան և նույնիսկ արաբական արվեստների համար:

Սա շատ ծանր խնդիր է, որ Եվրոպան դժվարությամբ
պիտի ընդունե, իր պատվին չի կերցնե, անշուշտ, բայց իրո-
ղությունը պիտի հաղթանակե:

Մի բան պարզ է մեծամիտ Եվրոպայի համար, որ հայերի արվեստը բնավ կախված չէ եղել վերև հիշված արվեստներից, որովհետև նրանցից առաջ գոյություն է ունեցել:

Իմ տեսակետով ազդեցության հարցը երկրորդական է, բավական է, որ մեր արվեստը իր անժխտելի տեղն ունի ընդհանուր ազգերի ճարտարապետական արվեստի պատմության մեջ:

Սրանով ես հպարտ եմ և մխիթարված:

Թորոս ճարտարապետը այդպես վերջացրեց իր խոսքը:

Երբ ես հիացած նայեցի նրան, նա դեմքը հատել էր Մայր եկեղեցուն, կարծես, վերացած, լուռության մեջ, հիմա էլ հոգով խոսում էր Մայր եկեղեցու հետ, հայոց ճարտարապետության ոգու հետ:

Եվ մտածում էի՝ ինչպե՞ս այն քաշված, անշուք Թորոս թորամանյանը իր սխրալի գործով բոլոր ժամանակների հայ ժողովրդի համար դառավ Թորոս ճարտարապետ և մեծագույն, պատմականացավ, անմահացավ:

Երբ 1926 թվին Եվրոպայից վերադարձա հայրենիք, մոտ 15 տարի կար, որ ճարտարապետին չէի տեսել: Ժամանակն իր դաժան գործը տեսել էր՝ ծերացել էր նա, սպիտակել, շատ պարարտացել էր և սիրտը հոգնել էր, բայց տրամադրությունը բարձր էր. նույն լավատես, տոկուն, համով, պարզասիրտ մարդն էր:

Նոր էր ապաքինվել ավտոյի մի ծանր արկածից, որից կրած սարսափի և ցավերի մասին պատմում էր ծիծաղով: Ծարունակ անդրադառնում էր իր ձեռագրերի, նկարների, գծագրությունների մի մասի անդառնալի կորուստի մասին, որ պատահել է թուրք բանակի Ծիրակ և Ալեքսյոլ ներխուժման ժամանակ: Երբ հիշում էր այդ աղետը, դեմքը մթնում էր ցավազնորեն, հոնքերը ավելի էին թանձրանում աչքերի վրա, ուր արցունք էի տեսնում:

Արդեն ձեռնամուխ էր եղել իր հոշակապ գործին՝ «Նյութեր հայ ճարտարապետության», որի համար տառապել, նահատակվել էր նա իր ողջ կյանքում, մի մոռումեմտալ գործ, ուր պիտի խտանային իր բոլոր հայտնությունները, մեր ար-

վեստի վերաբերյալ իր պանծալի տեսության հիմնավորումը:

Անսահման նյութ ուներ կուտակված բառսային վիճակի մեջ, որին պիտի հաղթահարեր այդ մեծ մոնումենտը կառուցելու համար: Սարսափ էր պատում ինձ, երբ նայում էի թղթերի, նկարների, գծագրումների այդ հսկա դեզին, բայց նա եռանդով և սիրով, համբերությամբ օրեցօր կարգի և ձևի էր դնում այդ բառերը, միևնույն ժամանակ և միջոց էր գտնում նոր պեղումների մասնակցելու, նոր նյութեր կուտակելու:

Հիշում եմ, 1929 թվին ինչպիսի երիտասարդական ավյունով իր մտերիմ ընկեր, մեծագույն ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի հետ գնաց Երեբույքի նշանավոր բազիլիկի որմերը ամրացնելու նախապատրաստական աշխատանքների համար՝ «Հայաստանի հնությունների պահպանման կոմիտեի» կողմից:

1930 թվին, գարնանը, վերստին արտասահման մեկնելիս «մնաք բարևի» գնացի ճարտարապետին, Վաղարշապատ: Գիշերեցի մտքը: Միասին գնացինք Ջվարթնոց: Ուզեցի թերևս վերջին անգամ տեսնել այս անկրկնելի գեղեցկությունը:

Երկար դեզերեցինք Ջվարթնոցի շուրջը:

Թորոս ճարտարապետը բացատրում էր հին ու հետագա պեղումների արդյունքների մասին: Խոսում էր, խոսում և չէր հագեցնում, որովհետև նյութը Ջվարթնոցն էր:

Ավա՛ղ, այս վերջին անգամն էր, որ տեսա նրան, եղա նրա հետ:

ԼԵՈ

(ԱՌԱՐԵԼ ԲԱԲԱՍԱՆՅԱՆ)

Մեռավ հայ մշակույթի ամենից տրեմաշան և բեղմնավոր աշխատավորներից մեկը՝ Լեոն, 72 տարեկան հասակի մեջ:

Մեր, հին սերունդիս սիրելի ընկերներն ու բարեկամները մեկ-մեկ հեռանում են մեզանից, և, այսպես, աշխարհը դատարկվում է մեզ համար:

Նա լինելով չունևոր ընտանիքի զավակ, նյութական ծանր գրկանքների տակ, ավարտելով Շուշվա քաղաքային դպրոցը, տակավին պատանեկան հասակում նետվեց կյանքի պայքարի մեջ՝ ընտանիքի ապրուստը հոգալու համար:

Անսպաս եռանդի տեր և չափազանց աշխատունակ՝ նվիրվեց ինքնակրթության և իրենից շինեց-կերտեց գրական այն ուժը, որ երկար տարիներ եղավ տիրապետող դեմքերից մեկը կովկասահայ հասարակության մտավոր կյանքի մեջ:

Որպես ինքնաշխատությամբ ստեղծված մի մեծություն, շատ հետաքրքրական օրինակ է Լեոն:

Հազիվ կարելի էր գտնել այդքան չարաչար աշխատող մի մարդ: Անշուշտ դրան նպաստում էր և իր ուժեղ, առողջ ֆիզիկական կազմը:

Առանց ժամանակ կորցնելու, անընդհատ պարապում էր, կարդում ու գրում, գրում ու կարդում դպրոցի օրերից մինչև ծերություն, մինչև աչքերի կես կորության հասնելը:

Նա գրքից և գրելուց դուրս կյանք չունեք, ուրիշ հանույք չգիտեր. եզակի ընթերցասեր էր, գրապաշտ, գրամոլ: Տարին մի քանի անգամ հազիվ կհանդիպեիր նրան դուրսը, փողոցում, հանդեսների, հասարակային հավաքույթների:

Ինչե՛ր չէր կարդացել և ինչե՛ր չէր կարդում— գեղար-

վեստական գրքեր, քննադատական, աշխարհագրական, պատմական, գիտական, փիլիսոփայական: Ռուսական ինքնուրույն և թարգմանական ծով գրականությունը լափում էր և չէր հագեցնում: Իսկ հայերեն հին ու նոր գիրք չըկար, որ նրան անձանոթ լիներ: Անհուն էր նրա հարցասիրությունը:

Տասնևութը տարեկան հասակից ուր դրեց գրական ասպարեզի մեջ՝ յուրացնելով Շպիլհագենի նշանավոր վեպի հեղուսի Լեո անունը, և ամբողջ 55 տարի գրիչ բռնեց և մեռավ գրիչը ձեռքին:

Լինելով Գր. Արծրունու խանդավառ աշակերտը, իր կրթոտ խառնվածքի բոլոր թափով արծարծեց և ժողովրդականացրեց իր պաշտած վարպետի լիբերալ տեսությունները և անողորք պայքար մղեց հայկական պահպանողական հոսանքների դեմ:

Շատ հաճախ աչտոու և կուսակցամոլ՝ նրա գրիչը թույն էր հղում և նշտարի սրություն ուներ:

Բազմաճյուղ են նրա գրական գործունեության ուղիները:

Իբրև հրապարակախոս, նա ստորագրել է անհամար հոդվածներ, որոնք իր ժամանակին կարդացվել են հեկհե, խանդավառությամբ: Իբրև գրական քննադատ, նա հեղինակներին երբեմն գնահատել է անաչտո ոգով, հաճախ գերագնահատել է բարեկամ միջակ գրողներին, և ստորագր-նահատել տաղանդավոր մեծությունները, ինչպես օրինակ, Հովհ. Թումանյանին:

Նրա «Ռուսահայ գրականություն» հատորը պերճախոս ապացույցն է այս իրողության:

Որպես գեղարվեստական գրող, Լեոն, անշուշտ, չի կարելի դասել ռուսահայ գրականության արձակագիր կլասիկների շարքին՝ Րաֆֆիի, Պ. Պողոսյանի, Մուրացանի, Շիրվանզադեի, Նար-Ռոսի, սակայն իր պատվավոր տեղն ունի:

Նրա վեպիկները, օրինակի համար «Կորածները», «Պանդուխտը», «Այծարած Եղոն», «Թաթախման գիշերը» գեղեցիկ իրականացումներ են:

Մանավանդ «Պանդուխտն» ու «Այծարածը», իրապաշտ նշտությամբ գրված, միշտ հանույքով կկարդացվեն: Այստեղ նրա ոճը կտրուկ է, աշխույժ և պատկերավոր, և ժողովրդական դարձվածքներով հարուստ:

Նրա «Մելիքի աղջիկը» պատմական մեծ վեպը, Ղարաբաղի մելիքների շրջանից, Րաֆֆիի թույլ հետևողությամբ, ռոմանտիկ գույներով է թաթախուն, թեև ունի վարպետի էջեր, բայց ընդհանրապես տաղտկալի է և ճապաղ:

Այս անուններից զատ Լեոն ունի նաև ուրիշ վիպակներ ու պատմվածքներ, ինչպես՝ «Վերջին վերքեր», «Ծայրեր», «Գալստական հերոսներ», «Սպանված հայրը», «Արևագին» և բազմաթիվ պատմվածքներ «Մշակ» թերթի կիրակնօրյա համարներում: Սակայն նրանք շատ նվազ արժեք են հայտ բերում:

Լեոն գրել է ուղևորական նոթեր, ինչպես «Ջրաբերդի լեռներում», ուր նկարել է բնությունը և ժողովրդի կենցաղը: Թարգմանություններից հիշենք Մորտովցևի «Հայաստանի ուղևորությունը» հաճելի գիրքը:

Այս հապճեպ գրությանս մեջ անկարելի է թվել նրա գրչի բոլոր արտադրությունները: Հիշում եմ, որ վերջերս Երևանում, մի օր, Լեոնի տանը, միասին հաշվեցինք իր գրածները, որոնց թիվը մի երկու հարյուրի հասավ և դարձյալ թերի մնաց:

Սակայն Լեոն արդարացի համբավը գլխավորապես կալանում է նրա պատմական գործերի մեջ: Նա թեպետ շատ կարդացած էր՝ բազմակողմանի միտք լինելով, բայց անկարող եղավ եվրոպական իմաստով պատմաբան լինելու: Նըրանում պակասում էր հիմնական-սիստեմատիկ կրթություն: Ծանոթ էր եվրոպական պատմագետներին, նրա սեղանի վրա էին Բլոկ, Տեյն, Ռամբո, Մոմգեն, Կլյուչևսկի և այլն, սակայն յուրացումը օրգանապես չէր տեղի ունեցել նրա մտքի լաբորատորիայում:

Եվ շահ տ հուզիչ էր, երբ ես Երևանում տեսնում էի, թե ինչպես մեր սիրելի Լեոն հոգևած տարիքում, հիվանդ աչքերով կքել է գրասեղանի վրա և ճիգով կարդում է Մարքո, Էնգելս, Պլեխանով, Լենին և բազմաթիվ նոր գրքեր, օրը օ-

րին լույս տեսնող նոր սովար գրքեր՝ նոր տերմինոլոգիայով, և տքնում է յուրացնել պատմական մատերիալիզմի մեթոդոլոգիան, նրանով լուսաբանելու Հայոց հին և նոր պատմությունը և վերստին մի անհնարին տաժանքով գրելու Հայոց պատմությունը, ամբողջ պատմությունը նոր լույսի տակ:

Գլուխս ցավագնորեն երերում էր այս համառ, տոկուն մարդու սիզիֆային աշխատանքի վրա և միևնույն ժամանակ հիանում էի նրա դեռ չցամաքած ավյունի, կրքի, անհկուն կյանքի վրա: Աշխատանքի հերո՛ս, իրավամբ:

«Մարդ առնվազը 200 տարի կյանք պիտի ունենա, որ կրծե գիտությունը և կարողանա մի գիտական կոթող կառուցանել», ասաց մի անգամ ինձ՝ ալեհեր գլուխը բարձրացնելով հուսահատեցնող գրքերի վրայից և հոգևած աչքերով նայելով իմ զարմացած աչքերին:

Լեռն իր սոսապելակյան եռանդով և աշխատասիրությամբ տարիների ընթացքում սկսեց իր պեղումները, բերեց ու քրքրեց Թիֆլիսի, Բաքվի, Երևանի, Էջմիածնի, Շուշվա արխիվները, մատենադարանները: Անհամար թվով գրքեր, լրագրեր, ամսագրեր... Եվ սկսեցին մեկը մյուսի ետևից լույս տեսնել նրա պատմական երկերի հատորները, որոնք գերծ չլինելով թերություններից, մինչև այսօր էլ մեր գրականության մեջ երկրորդը չունին: Գրեց Մեսրոպ Մաշտոցի կյանքը, Հովսեփ Կաթողիկոս Արղության, Ստեփ. Նազարյան՝ երկու հատոր, Գր. Արծրունի՝ երեք հատոր, Հայոց տպագրության պատմությունը, շատ ընտիր գործ, երկու հատոր, հայոց պատմության երկու հատոր և անտիպ մասերը, նրա Հայոց հարցի վավերագրերը, Գլադստոնի կյանքը, Երևանի թեմական դպրոցի պատմությունը: Եվ բազմաթիվ պատմական մոնոգրաֆներ ամսագրերի մեջ՝ Սոս. Ռսկյան, Հովհ. Այվազովսկի Ակարիչ, Մեսրոպ Թաղիադյան, Ղ. Աղայան, Ֆրանս-գերմանական պատերազմը, եզվիտների մասին և այլն, և այլն:

Եվ այս վիթխարի աշխատանքի տակ կրեց նրա բարձր ու հաղթ հասակը և հիվանդացավ ծանրապես, կտրելով գրական 30 տարվա դժվարին ուղին: Կովկասահայր օգնության

հասավ, գնահատելով այս վաստակավորին, 1908 թվին շր-
քեղ հոբելյանով մեծարեց նրան, նյութական միջոց տվեց
Եվրոպա մեկնելու՝ բուժվելու համար և նվիրեց մի տուն
Թիֆլիսում, որ մինչև այսօր իրեն է պատկանում:

Շատ տարիներ Կովկասից բացակայելուց հետո, երբ
վերստին դարձա հայրենիք, իմ հին բարեկամ Լեոն տեսա
Երևանում: Վաղաժամ ծերացած գտա նրան և առողջությու-
նը խաթարված, սակայն հոգեպես Ղարաբաղի լեոների
նույն կաղնին էր: Երևանի համալսարանում հայոց պատ-
մություն էր դասախոսում: Եվ դասերից հետո հավերժական
ընթերցում և գրել: Դարձյալ նույն մարդն էր. սենյակը գըր-
քերով լեցուն, դարակների վրա փառակազմ գրքեր (ինչքան
էր սիրում շքեղ կազմով գրքեր, ինչպե՛ս էր գուրգուրում
գրքերը և դողում նրանց վրա). սեղանի վրա գրքեր, աթոռ-
ների վրա՝ գրքեր, լրագրեր, ամեն տեղ՝ գիրք, թերթ, և իր
ճերմակ գլուխը կոացած՝ նակատը մինչև գրքին հասած...

Տարիները ոչինչ չէին փոխել. նույն գրամոլ Լեոն, հի-
վանդագին գրամոլ:

Մինչև ուշ գիշեր, նստած գրասեղանի առաջ, գրույց
էինք անում: Նրա զարհուրելի հիշողությունը, որ բնավ թա-
ռամած չէր, ողողում էր կարծես ինձ: Պատմում էր մանկու-
թյունից, Շուշուց, Ղարաբաղի հնից ու նորից, մելիքների,
կաթողիկոսների, խաների կյանքից, պատերազմներից, գը-
րողներից, հեղինակներից, գրքերից ու գրքերից, և հազար
դեպքեր, դեմքեր, անցքեր, անձեր, անեկդոտներ...

Հավերժ անմոռանալի, սիրելի գիշերներ...

Խոսում էր իր նոր գրածների մասին և գրական ծրա-
գրերի մասին: Գրել էր Ներսես Աշտարակեցու կյանքը, գը-
րել էր մի երկու վիպակներ, գրում էր իր հուշերը, «Անց-
յալից» հատորի շարունակությունը: Ուսումնասիրում էր
քրդերի պատմությունը, բառարանի օգնությամբ կարդում էր
ֆրանսերեն գրքեր քրդերի մասին, գրելու համար քրդերու
պատմությունը՝ հայկական նյութերով ճոխացած:

1927 թվի ամռանը Հայաստանի մտավորականությունը

տոնեց նրա գրական 50-ամյակը: Վերջերս ընդմիշտ թուեց համալսարանում դասախոսությունները: Ստանում էր պետական կենսաթոշակ՝ իբրև վաստակավոր հեղինակ:

Հայաստանի կառավարությունը բարձր էր գնահատում նրա արժանիքը, և հոգաժու էր նրա առողջական վիճակի մասին և միշտ ողարկում էր նրան ստողջարանները՝ պետական հաշվով բժշկվելու:

Մեծ պատերազմում հայ ժողովրդի կրած սարսափներճ ու աղետները դառնությանը լցրել էին նրա հոգին: Այդ անհնարին վշտի ծանրության տակ փշրվել էր նա:

— Հայության վիշտը ես միայն գերեզմանի մեջ կնոռանամ: Բայց ո՞վ է մեղավորը, — ասում էր նա ինձ, — մենք եմք մեղավորը, մենք՝ մտավորականներս, գործիչներս, դու, ես և բոլոր նրանք: Մեր ժողովուրդը մեղավոր չէ: Այլ մենք, որ այնպես հիմար եղանք, տգետ, որ հավատացինք շահամոլ, դրամատիրական-բուրժուական Եվրոպային, որի համար գաղութների ոչխարների կյանքը ավելի արժեք ունեն, քան հայերը, քան փոքր ճնշված ազգերը: Մենք, որ երեխաների պես հավատացինք լուսավոր մարդկության խղճմտանքին, մարդկայնությանը, վաճառվող միջազգային մամուլին, բորենի, շնական դիպլոմատների... Եվ կատաղում էր և բառ չէր գտնում որակելու...

Մենք, պոռոտախոսներս, մեծ խոսողներս, մենք, որ ստեղծեցինք և սնուցինք Դաշնակցությունը և Հնչակյանությունը, որոնց մեջ մարմնացավ հայ մտավորականների պոռոտախոսությունը, պարծենկոտությունը և եղեռնական տըգիտությունը:

Էս կոտրած ձեռքերովս ի՞նչ կոնիվ եմ մղել մեր պանպանողականների դեմ, բայց պատմությունը ապացուցեց, որ Պետրոս Սիմոնյանները, Աշըգյանները, Օրմանյանները իրավունք ունեին: Նրանք իրատես եղան, նրանք ճանաչում էին լիրբ աշխարհը, նրանք գիտեին, որ մեծ պետությունները մեզ պիտի շահագործեն, վաճառեն և վերջը թըքեն մեզ վրա...

Դու գիտես, որ մեր արհամարհած Պետրոս Սիմոնյանը 1880 թվին գրել է, թե՛ վազ անցեք հայկական հարցից, թո՛-

վեր 61-րդ հոդվածը, որ դժբախտությունների դուռ պիտի
բանա: Հայ ժողովուրդը բարեկամ չունի. Հայաստանը Բու-
լղարիա չէ, ետևը ցար կանգնած չկա: Կոտորեն ժողովըր-
դին, մեր արյունով իրենց հաշիվները կմաքեն և այլն, և
այլն... Մարգարեներ էին նրանք, իսկ մե՛նք... Այս բոլորը
դու կկարդաս իմ հիշողությունների գրքի մեջ: Ծա՛տ կուգե-
նայի, որ նոր սերունդը կարդա գիրքս՝ չկրկնելու համար
մեր գործած ոճերները:

Հիմա ես միայն մի միսիթարություն ունեմ— ավերակ-
ված Հայաստանից այս կտոր հողը, թանկ գնով գնած այս
կտոր հողը, ուր հանգիստ կարող եմ գլուխս դնել և որը
վաղը ինձ պիտի ծածկե...

Եվ այսօր, ավաղ, սիրելի Լեո, այս թանկագին հողը
ծածկում է քո վաստակարեկ ոսկորները և թո՛ղ հայրենի
այդ քաղցր հողը ծանր չլինի քո տատապած սրտին...

ՆԱՐ-ԴՈՍ

Գարոցական պատանի էի, երբ սուաշին անգամ կարողացի Նար-Դոսի «Աննա Սարոյան» սրտագին վիպակը, գեղարվեստական այս բարձրորակ երկը, որն անբացատրելի ազդեցություն թողեց հոգուս վրա, և երիտասարդ հեղինակը դարձավ իմ ամենասիրելի հեղինակներից մեկը: Երագում էի նրան տեսնել, ինչպես, առհասարակ, պատանիները տեսնում են տեսնել իրենց սիրելի գրողներին:

Երբ տարիներ հետո Թիֆլիս եղա, չգիտեմ ինչպես պատահեց, չկարողացա նրան տեսնել: Այնուհետև նրան կորցրի: Կարծես, չքացավ նա գրական ասպարեզից: Լսում էինք, որ նա «Նոր Դար»-ի խմբագրատան մեջ սրբագրիչ է, և երբեմն էլ, հետադիմական ոգով բաներ է գրում: Արհամարհված էին կղերա-պահպանողական «Նոր Դար»-ը և նրա մեջ գրողները: Եվ երիտասարդությունը «Նոր Դար»-ը չէր կարողում: Գրիգոր Արծրունին, որ երիտասարդության քուրմն էր, իր լիբերալ գաղափարախոսությամբ կաշկանդել էր մեր միտքը: Նրա և հաջորդների «Մշակ» թերթը իր տարամերժ և անհանդուրժող գրախոսականներով վարկաբեկում, ոչնչացնում էր հակառակ պարտիայի տաղանդավոր գրողներին և գերազանահատում ու պանծացնում իր ուղղության հեղինակներին: Այսպիսով, պահպանողական բանակի տաղանդավոր գրողները (Մուրացան, Նար-Դոս, Շողոպյան, Ագապյան) խուսափում էին երիտասարդության աչքից և թաղվում մոռացության մշուշի մեջ: Սակայն, երբ «Մշակ»-ի կորուսյունից ազատագրված՝ գտնում էինք այդ անտեսված գրողներին, թաքնված գանձեր գտնողների նման էինք զգում մեզ:

Նար-Դոսին անձամբ ճանաչելու օրից սկսած, և շարունակ, ես մի անաշխարհ զգացում եմ ունեցել դեպի այդ հազվա-

զյուտ, ընտիր մարդը — սիրո և հարգանքի զգացում: Նրա հոգին առաքինությունների բյուրեղացումն էր — մարդասեր, ընկերասեր, կարեկցող, ազնիվ և անհունորեն համեստ: Մի առիճընդ ուժ ուներ նա, որին մի անգամ ներհայաց մոտեցողը այլևս ընդմիշտ թովված էր նրանով:

Նար-Ռոսի երևութապես անկիրք, զուսպ դեմքի ետևը, — նրա ներքին ծովում, — մշտնջենական խռովք ու ծուփ կար. վիշտ՝ տանջվող մարդու համար և ցավագին սեր՝ թշվառի հանդեպ:

Այս՝ սփինքսի պես լուռ և, կարծես, ինքն իր վրա գամված մարդը իր ներսում անդուլ տրամախոսության մեջ էր: Լուրջ, ծանր և անկեղծ ապրումների ներկայությունը նրա խորունկ, իմաստուն հայացքի մեջ արձանագրված էր: Եվ նրա գրականությունը այդ լուրջ, ծանր և անկեղծ հոգու կնիքն էր կրում իր բոլոր էջերի վրա: Ամեն անգամ, երբ նրան միտք էի բերում, իմ մեջ խորին հարգանք էր զարթնում դեպի գրականությունը և գրական մարդը, առհասարակ, որովհետև նա ինձ ներշնչում էր այն գաղափարը, թե՛ գիրքը մեծ իրականացում է, արյունով շինված բան, ճշմարտության և արդարության անոթ, և հեղինակը առաքելության կոչված՝ կատարելու համար մարդկության բարձրացման և ազատագրման գործը:

Նար-Ռոսի մեջ մարդը և գրողը իրարից անբաժան էին և իրար ջժխտող: Իսկապես որ՝ նրա գործը իր հոգու դրսևորումն էր:

Սրանից այնպես չպիտի եզրակացվի, որ իբրև թե նա ենթակայական, անձնական գրող էր, վիպական-քնարական տիպի: Բնավ ո՛չ:

Նար-Ռոսը մեր իրապաշտ վեպի մեծ գիտակից վարպետներից մեկն է. բայց նա գիտեր իր հոգին թաղել առարկայականի խորքում, երբե՛ք ակնբախ, երբե՛ք միտումնավոր:

Նա անտեսանելի, խավարի մեջ ծածկված մի դիտարանից ուշադիր հետազոտում էր, մանրագնին դիտում, իրականության լույսի տակ, մարդկային պեկոծվող, ծովածավալ կյանքը — կրքերի բախում, շահերի կոփվ, վիշտ, կեղեքում, տանջանքներ, տառապողներ, ուտողներ և կեր գնացողներ, հաղթողներ և պարտվածներ — հասարակական թրհուրհուր:

Նրա լուսանկարչական գործիքը մանրակրկիտ և անաշտորեն արձանագրում էր իրականության ամեն մի երևույթը, դեպքը, իրը, փաստը, և հետո, իր հոգեկան ստեղծագործ աշխատանոցում անտարբեր գործիքի առարկայական արձանագրությունները կյանք էին ստանում, զատվում, տարոքոշվում. անձերը մարդ էին դառնում՝ արյունով և զգացումներով, դեպքերը արժեքավորվում և իմաստավորվում: Եվ ամենանորբ արվեստագետի վարպետությամբ կարողանում էր նա իր համակրանքն ու հակակրանքը այս կամ այն տիպարի կամ երևույթի հանդեպ, գաղտնաբար, անզգալիորեն ներարկել ընթերցողի մեջ: Եվ ընթերցողը հեղինակի հետ միասին սիրում է նրա սիրած տիպարը և ատում է նրա ատած տիպարը: Այսպիսով նա կատարում է հասարակական կրթիչի դեր, որը, վերջին հաշվով, ամեն իսկական գրողի էական և՛ թաքուն նպատակն է, և՛ գրականության իմաստը: Նրա երկերի մեջ անողոր խարագանում և զայրույթ կա, և՛ ատելություն բոլոր ճնշողների, կեղեքողների, անգութների հանդեպ, տգիտության, նախապաշարումների դեմ, և սեր ու կարեկցություն խեղճների, զրկվածների համար, և հավատ՝ լույսի ու հառաջադիմության և լավագույն սպագայի:

Ուրեմն՝ նրա գրականությունը բացարձակ ժխտումն է այն բանբասանքի, որպես թե նա՝ «Նոր Դար»-ի աշխատակից լինելով՝ հետադիմական գաղափարների ջատագով է: Իրողությունն այն է, որ նա անհամեմատ ավելի շատ տոգրված էր իսկական ազատության և հառաջադիմության գաղափարներով, քան թե «Մշակ»-ի մի քանի գովված գրողները:

Իր ոճը իրեն պես էր: Իրեն պես անկեղծ, պարզ, լուրջ, զուսպ, ճշգրիտ: Զերծ պայթուցիկ ածականներից, պոռոտ ու մանվածապատ նախադասություններից, անբնական և շինծու պատկերներից, որոնք ոռկոկո ոճի արդ ու զարդերն են կազմում: Զզվելի սեթևեթանքներ, որոնցով անբովանդակ, ցուցամոլ գրողները՝ նոր բան ստելու մարմաջով հիվանդ, ձգտում են շլացնել ընթերցողներին:

Նար-Դոսը մեր խոսքի լուրջ վարպետներից և մեր գրականության հարստև փառքերից մեկն է:

Այս տողերը գրելիս նրան պատկերացնում էմ հոգուս աջ
քերի առաջ— ահա նա, քաղցր և հեզահամբույր, նստել է ու
լուռ ծխում է: Ինքնամփոփ, հայեցող, խաղաղ և իմաստուն
աչքերով դիտում է ինձ: Ես գիտեմ, որ նա կարդում է իմ մըտ-
քերը, տեսնում է իմ հոգին և ասում է ինձ. «Մի՛ գովիր ինձ:
Գիտես, որ չեմ սիրում բարձրաձայն արտահայտություննե-
րը: Գիտե՛մ, էլի, որ սիրում ես ինձ: Թո՛ղ, բավական է...»:

Եվ այս եզակիորեն համեստ մարդը տիրաբար ննչում
է ձեռքս...

Ների՛ր ինձ, սիրելի Նար-Ռոս, ների՛ր բոլորիս, որ ստիպ-
ված եմք վիրավորելու քո համեստությունը: Քո գործը, իբրև
մեծարժեք գանձ, վաղուց արդեն մեր մշակույթի գանձարա-
նում իր արդար տեղն ունի. այդ մասին չէ, որ գրում եմք. իսկ
դու չե՛ս կարծում, որ մենք պարտավոր ենք քո պայծառ, ան-
բիծ մարդկային մասին խոսել սերունդներին...

Բնավ մի՛ վրդովվիր, իմ թանկագին ընկեր, սիրելի՛, սի-
րելի՛ Նար-Ռոս:

Փարիզ, օգոստոս, 1933

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՈՎ

Մեծ կոմպոզիտոր Ա. Սպենդիարովի անունը շատ վաղուց էի լսել՝ «Երեք արմավենի» չքնաղ սիմֆոնիայի հետ միասին: Այդ սիմֆոնիան շատ հուզել էր ինձ: Դրանով էլ վերջացել էր իմ ծանոթությունը նրա երաժշտության հետ: Սակայն շատ տարիներ հետո, արտասահմանում, իմ պանդխտության շրջանում, ես չափազանց մի հուզիչ հանդիպում ունեցա նրա երաժշտության հետ:

Վենետիկյան ոսկեվառ աշնան մի երազական երեկոնստել էի Սան Մարկոյի մարմարակերտ պիացիայի մի սրբաբանում, հայացքս հառած ոսկեգօծվող ծովին և Դոժերի հեքիաթական պալատին՝ լսում էի բանդա Մունիչիպալեին (քաղաքային օրկեստրին), որ նվագում էր պիացիայի վրա:

Այս բանդան հռչակավոր է ամբողջ Եվրոպայում, Հոմի բանդայից հետո երկրորդն է համարվում: Այդ երկու բանդաները միջազգային մրցման մեջ միշտ հաղթանակ են տարել:

Այս բանդան նվագում էր կլասիկ և մոդեռն երաժշտության գլուխգործոցները՝ Վերդի, Բրամս, Վագներ, Բիբլե, Գունո, Էտնկալալո և այլն, և այլն:

Հանկարծ լսում եմ հարազատ, արտագին ձայներ՝ հայրենիքից եկած: Սիրտս զարկում է ուժգին. ի՞նչ է սա, պատրանք է, երա՞զ է, որտեղի՞ց է...

Իսկույն կանչում եմ սպասավորին, խնդրում եմ գնա իմանա, թե ի՞նչ պիես են նվագում: Գալիս, հայտնում է՝ Սպենդիարով — էսքիզներ...

Հետո իմացա, որ նրա գործերը շատ հաճախ կատարում են եվրոպական մեծ քաղաքների հայտնի կաֆեներում, օրկեստրներում:

Այնուհետև շատ հաճախ լսում էի նրան, մանավանդ Միլանում, ուր ամեն օր նվագում էին նրա գործերից:

Մեծ երաժշտագետի հետ անձամբ ծանոթացա միայն 1926 թվի վերջերին, երբ նոր էի վերադարձել արտասահմանից: Այդ մեծատաղանդ մարդուց առաջին հանդիպումից այն տպավորությունն ստացա, որ նա այս աշխարհի մարդ չէ: Նրա ոտները հազիվ էին դիպչում այս երկրին. նրա հոգին՝ իր մտորումներով և երազանքներով բարձր ոլորտների, բարձր սֆերաների բնակիչ էր: Իր մեջ ամփոփված այդ փրկություն մարդը լսում էր ձայներ, որոնք մեզ մատչելի չէին:

Դժբախտաբար, երկար չտևեց մեր ծանոթության և բարեկամության շրջանը՝ միայն մի տարի: Այդ պատճառով մեր հանդիպումները թվով շատ չեղան:

Նա հետաքրքրվում էր իմ լիրիկայով և մտորում էր մի քանիսը ձայնագրել, մանավանդ ժողովրդական մոտիվներս, և առհասարակ հայ ժողովրդական երգերը: Սակայն ուզում էր ավելի խորունկ, ընդհուպ ծանոթանալ հայկական ժողովրդական մելոսին: Մի քանի անգամ ժամադրվեցինք երեկոները գնալ այնպիսի տեղեր, ուր ժողովրդական երգ կար՝ լինի հայկական, լինի ադրբեջանական:

Արովյան փողոցում գիշերները մի կույր վանեցի սրինգ էր նվագում՝ լուռության և մենակության մեջ: Սպեկտիարովը ուշադիր լսում էր նրան: Եղանք մի երկու անգամ ժողովրդական փոքրիկ ճաշարանները, որոնց տեղն էլ հիմա հայտնի չէ, ուր նվագողներ ու երգողներ կային:

Մի երկու անգամ եղանք ադրբեջանցիների մի չայխանեում, ուր բազմալար, երկար սազերի վրա աշուղները՝ Երեվանից և Ադրբեջանից եկած՝ նվագում էին ու երգում Քյուր-օղլի, Աշըղ-Ղարիբ, Ասլի և Քյարամ և այլն, մրցելով միմյանց հետ:

Հանդիպեցինք մի քանի անգամ սքանչելի Սաշա Օգանեզաշվիլիին՝ այդ անմրցակից քյամանչիստին...

Ես հիացած էի, նայելով, թե ինչպես ներդաշնակ ձայների այդ անզուգական իշխանը մանկական թարմ զգայնությամբ ընկալում էր դրանք: Եվ ոգևորված բացատրում էր ինձ ժողովրդական երգի՝ Lied-ի բյուրեղյա պարզությունն ու

հնչեղությունը, անմիջականությունն ու անկեղծությունը՝ հուզականությունը: Եվ այն գաղափարն էր արտահայտում, թե ժողովրդի երգի վրա պիտի կառուցվի, նրանով պիտի սնվի ավելի բարձր, կուլտուրական ազգային երաժշտությունը և եվրոպականի հետ սինթեզ պիտի կազմի:

Մի երեկո, — և այդ երբեք չեմ մոռանալու, որովհետև այնքան քաղցր և սրբազան երեկո էր, — Ռոմանոս Մելիքյանը, իմ շատ սիրելի և մտերիմ Ռոմանոսը, եկավ ինձ մոտ, որ տանի մեծանուն ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի մոտ. նրա տարեդարձն էր և ներկա պիտի լինեք նաև Սպենդիարովը: Ի դեպ ասեմ, որ Ռոմանոսին ես «Դոն» տիտղոսն էի տվել, «Դոն Ռոմանոս» — այդպես էի կոչում նրան, ըստ իմ տպավորության, իսպանական ասպետական կոլորիտի և ոճի, շարժ ու կեցվածքի նրա զարմանալի նույնության համար:

Ասեմ նույնպես, որ Ռոմանոսին շատ հաճելի էր «Դոն» տիտղոսը:

Ուրեմն, Դոն Ռոմանոսի հետ գնացինք Թամանյանի տունը:

Թամանյանը ցույց էր տալիս իր ճարտարապետական էսքիզները, հատակագծերը, նկարները, մակետները, Սպենդիարովը նվագում էր իր գործերից, նաև՝ Ռոմանոսը:

Ինչքան որ արխիտեկտուրան և մուզիկան միմյանց հարակից և բարեկամ արվեստներ են, նույնքան էլ այս երկու մեծատաղանդ ստեղծագործողները՝ ճարտարապետ և երաժշտապետ՝ միմյանց բարեկամ էին: Միմյանց խորապես հասկանում էին և համազգում:

Երբ Թամանյանը ոգևորված ցույց էր տալիս իր կառուցված և կառուցելիք շենքերի նկարները, Սպենդիարովը այնքան էր խանդավառվում, ինչքան Թամանյանը, երբ մեծ կոմպոզիտորը նվագում էր իր սիմֆոնիաները և Ռոմանոսը՝ իր և Կոմիտասի ժողովրդական երգերը:

Ճարտարապետությունը և երաժշտությունը այդ երեկո հիանալի կերպով հյուսված էին միմյանց, և հավասարապես հուզում էին մեզ:

Եթե գեղջուկի կամ հովվի պարզ խրճիթը իր չորս պատե-

րով նման է ժողովրդի երգի քառյակին, չորս տողերից, ասենք, «Ջան գյուլումին», ապա Թամանյանի մոնումենտալ շենքերը նման են Սպենդիարովի նույնքան մոնումենտալ սիմֆոնիաներին, «Ալմաստին»... կամ առհասարակ երաժրշտական մեծ կոթողներին: Մեկով մարմնանում էր կամ թարգմանվում մյուսը, և մենք այդ երեկո ապրեցինք մի երջանիկ, ինքնամոռաց պահ— բարձր արվեստի իսկական մի վայելք:

Սպենդիարովի գեղեցիկ առաջարկով ծրագրվեց մի գործ, որ ավա՛ղ, չկենսագործվեց ճակատագրական դժբախտության պատճառով, և մնաց միայն հուշ, մի ցավագին հուշ:

«Հայաստան» անունով մի տեթրալոգիա՝ այդ էր նրա հղացումը, մեր կոնցեպցիան, ուր պիտի ներկայանար Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև՝ այսօր:

Առաջին մասում պիտի լիներ հայ ժողովրդի ծագումը նրա միֆական շրջաններից, աստվածներից, բնության տարերքի և ոգիների հետ ունեցած նրա տիտանական կոիվներից:

Երկրորդ մասում— հայ ժողովրդի բարձրացումը, պետության կազմավորումը, հաղթանակները, փառքը:

Երրորդ մասում— սելջուկների, մոնղոլների արշավանքները, Հայաստանի անկումը, գերության, վշտի դարերը:

Չորրորդ մասում— հայ ժողովրդի ազատագրական պայքարը, վերածնունդը, Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակով Հայաստանի վերականգնումը, նրա վերելքը: Ես պիտի գրեի գրական մասերը, ինքը՝ երաժրշտությունը:

Մտմտում, մտորում էինք դրա մասին, խորհում էինք մանրամասների մասին, երբ կատարվեց կատաստրոֆը և ընդմիջտ փուլ եկավ մեր գործը:

Վերջին հուշը, որ ունեմ մե՞ր հավետ անմոռանալի Սպենդիարովից, հետևյալն է. նա ղեկավարեց 1928 թվի գարնանը «Ալմաստ»-ից հատվածներ մեր Կուլտուրայի տանը:

Վերջի՛ն անգամ...

Տակավի՛ն մինչև այսօր երևակայությանս մեջ կենդանի են նրա շարժումները, նրա ձեռների ու թոմսիկան: Կարծես նա մեզ արդեն մնաք բարով ասաց. մեջքը մեր կողմը դարձրած՝ գնում, գնում, հեռանում էր մեզանից...

Այդ երեկոյից շատ կարճ ժամանակ անցած՝ անսպասելիորեն լսեցի նրա մահվան բոթը...

Ես ծանր վշտով հետևում էի նրա հուղարկավորության թափոթին... և խորհում էի ինձ ու ինձ՝ բնությունը անլիոխարհնեյի, դաժան հարված հասցրեց մեր երաժշտական կուլտուրային... Դժբախտ Սպենդիարովը շատ վաղափեսա գերեզման սարավ չքնաղ ներդաշնակությունների, հոշակապ ծրագրի մի կախարդական աշխարհ, որ լռեց հավիտյան... սակայն այն, ինչ նա թողեց մեզ՝ անմահ է, անկորնչելի, և իր հեռագրեցությամբ ապագա սերունդների ստեղծագործության վրա—անգնահատելի: Նրա ներշնչող մեծ անունը երբե՛ք չի մոռանա, երբե՛ք չի մոռանալու հաչ ժողովուրդը, որին միշտ պիտի հուզեն, ոգևորեն նրա նվիրական անկրկնելի քնա-
ԲԸ:

ԳԵՎՈՐԳ ԲԱՇԻՆՉԱՂՅԱՆ

Մեծատաղանդ նկարիչ Գևորգ Բաշինչաղյանին ես այն-
քան մոտիկ չեմ եղել, բայց շատ անգամ հանդիպել եմ նրան
հասարակական ժողովներում, զանազան ընտանիքներում և
մի երկու անգամ էլ իրեն մոտ:

Առաջին անգամ ես նրան տեսա 1896 թվին «Տարագ-Աղ-
բյուր»-ի խմբագրատանը: Ինձ իբրև մի երիտասարդ քանաս-
տեղծի, ներկայացրին նրան. անունս չէր լսել: Սակայն հե-
տաքրքրվեց և ասաց. «Թերևս կարդացած կլինեմ Ձեր բա-
նաստեղծությունները, բայց սրանից հետո հատկապես ուշա-
դիր կլինեմ»: Այդ ժամանակ նա արդեն հոչակ վայելող նկար-
իչ էր, բարձր գնահատանքի էին արժանացած նրա պեյզաժ-
ները, օրինակի համար՝ «Ջյունահալքը», «Ցարասիների ան-
տառը», «Լեռնականները...»:

Մեր սերունդը հիացած էր նրա ստեղծագործություննե-
րով, և բաց չէինք թողնում նրա ցուցահանդեսները:

Ինձ վրա շատ հմայիչ տպավորություն թողեց նա: Իր
պեյզաժների խաղաղ, անդորր քանաստեղծությունը նրա
դեմքի վրա էր: Մեղմ կանաչի և կապույտին տվող ծովի
գույն աչքեր, գրավիչ ձայն, կիրթ շարժ ու ձևեր:

Հետագա տարիներին մի քանի անգամ պատահել եմ
նրան Հովհ. Թումանյանի տանը: Հիացած լսում էի նրա ճա-
նապարհորդությունների պատմությունները: Ո՞ր չէր եղել
նա— Եվրոպա, Ռուսաստան... մանավանդ շատ լավ ճանա-
չում էր նա Իտալիան, Փարիզը: Գրեթե անգիր գիտեր Հոռ-
մի, Տյորենցիայի Վենետիկի, Լուվրի թանգարանների գե-
ղարվեստական սքանչելիքները:

Նա, ուղղակի, նկարում էր խոսքերով իր տեսածները:
Հիշում եմ Ջանգեգուրի և Ղարաբաղի նրա նկարագրություն-

ները. ինձ թվում էր, թե ես շոշափելի տեսնում եմ նրա շրջագայած վայրերը. այնտեղերի երկնքի, ամպերի գույներն ու երանգները, նրանց անհերթելի և շքեղ ձևերը. գգում էի ժայռերը, դաշտերը, հողը:

Նա, ինչպես հայտնի է, գրում էր պատմվածքներ, տպավորություններ, հուշեր, որոնք գրված նկարներ էին, սակայն իր կենդանի խոսքը շատ և շատ ավելի առաքինող էր:

1903 թե 1904 թվին ես հանդիպեցի նրան Անի քաղաքում (ես գրեթե ամեն տարի Անի էի գնում, դրա համար որոշ չեմ հիշում տարին): Դժբախտաբար, իմ հասած օրը նա մեկնեց. արդեն մի քանի օր էր, նա այնտեղ էր և էտյուդներ էր արել: Ծարտարապետ Թորոս Թորամանյանի և դերասան, Անիի սիրահար, լուսանկարիչ Վրուչրի մոտ ճաշին հյուր եղանք միասին:

Ի՞նչ անխառն ոգևորությամբ, հիացմունքով, գիտակից հպարտությամբ խոսում էր նա Անիի չքնաղ ճարտարապետության մասին, քանդակների մասին, ինչպիսի՞ հմտությամբ վերհանում էր հայկական մոտիվները և ներբողում:

Տեսնում էի՝ ինչքա՞ն խորունկ հայրենասիրություն կար այդ մարդու մեջ: Ես ճանապարհ դրի նրան Անիի պարիսպներից շատ ավելի հեռու, մինչև Հովվի եկեղեցին: Անի վերադարձիս խոսում էի ինքս ինձ հետ նրա մասին: «Ահա կարգին մարդ՝ արվեստագետ, գրականություն սիրող, հայրենասեր...»:

Երբեք չեմ մոռանում մի զվարճալի դեպք: 1908 թվի ուշ աշնանը, գրականության ճահապետ Ղազարոս Աղայանը Հովհ. Թումանյանին և ինձ ասաց, թե՛ հինգշաբթի օրը Գեվորգի մոտ ճաշի ենք կանչված. Գևորգն ասաց, թե՛ «Ղազարոս, տղաներին առ արի, մի քիչ ժամանակ անցկացնենք»:

Տղաները՝ Հովհ. Թումանյանն էր, Կոմիտասը, Վրթանես Փափագյանը և ես:

Հինգշաբթի օրը հավաքվեցինք ժամադրապայր սրճարանում և գնացինք Գ. Բաշինջաղյանի տունը: Ջանգը տվինք. դուռը բացեց Բաշինջաղյանի տիկինը. քաղցր ժպիտով մեզ ընդունեց և առաջնորդեց նկարչի արվեստանոցը, որ միաժամանակ իր նկարների սրահն էր:

— Գևորգը տանը չէ՞,— հարցրեց Աղայանը:

— Ոչ, տանը չէ, հիմա կգա, խնդրեմ մի քիչ սպասեցեք...

Տիկնոջ սիրալիրության տակ ես զգացի մի ինչ-որ շփոթմունք, վարանում:

Ընդարձակ, լուսավոր սրահում մենք սկսեցինք դիտել նրա նկարները, իրար ցույց էինք տալիս այս կամ այն նկարը, հիանում էինք, հրճվում: Այսպես անցավ մի ժամ, թերևս ավելի:

Աղայանը դիմեց ինձ. «Էդ մարդն ո՞ր մնաց. ես էլ քաղցած եմ շատ... ձեռ-ձուռն չի լսվում: Ա՛յ տղա, միջանցքը գնա, մի կերպ նայիր էս ու էն կողմը, մարդ կա՞, չկա՞...»:

Ես մտա միջանցքը, ականջ էի դնում դռներին՝ ձայն չկա, շարժում չկա, զգուշությամբ բաց եմ անում խոհանոցի դուռը— մարդ չկա, և ոչ միայն մարդ չկա, պլիտան էլ լուռ է, կրակ չկա, բացարձակ ամայություն տան մեջ:

Եկա հայտնեցի...

Աղայանը գայրացավ.— «Տո, էս ի՞նչ օյին է...»:

Թումանյանը իր հումորով կպավ Աղայանի օձիքից.

— Ա՛յ մարդ, հե՛նց որ լավ ճաշի անուն ես լսում, գլուխդ կորցնում ես. բա մարդ լավ չիմանա՞ ճաշի՞՞ ենք կանչված թե՞ չայի:

— Ա՛յ գիժ,— գոռում է Աղայանը,— ի՞նչ է՛ հայերեն չեմ հասկանո՞ւմ, խո փիլիսոփայությունն չէր կարդում էդ մարդը... ասաց թե՛ հինգշաբթի... 1

Մենք ծիծաղներս զսպած՝ դիտում էինք նրանց կոիվը՝ Թումանյանի կողմից կատակով, Աղայանի կողմից լուրջ, երբ հանկարծ դուռը արագորեն բացվելով, բարկացած ներս մտավ Բաշինջաղյանը և ուղղակի հարձակվեց Աղայանի վրա.

— Մարդ Քրիստոսի, ես քեզ ի՞նչ ասի...

— Դու ասիր թե՛ հինգշաբթի տղաներին առ...

— Հա է, հա, բայց ես ասի թե՛ էս հինգշաբթի չէ, մյուս հինգշաբթի. էս հինգշաբթի ես ինքս հյուր եմ ուրիշի մոտ, էդ ասի:

— Դեհ, էդպես կասեիր էլի՛, ի՞նչ ես ինձ սարսաղի տեղ դնում...

— Արի՛ էս մարդուն խոսք հասկացրու, — ձեռքերը հուսա-
հատ վար թողեց Ակաբիչը:

Վերջապես մենք միջամտեցինք և երկու մեր շատ սիրելի
բարեկամներին հանգստացրինք:

Բաշինջաղյանը իրեն վերստին գտավ, քաղցրությամբ և
ժպտալով պատմեց, որ հենց մենք տուն ենք մտնում, տիկինն
խսկույն խորհարարուհուն ճամփում է այն տունը, ուր Գևորգը
հյուր էր, հայտնելու, թե՛ եկել են հյուրերը, ինքն էլ գնում է
խանութները գնումներ անելու:

Բաշինջաղյանին հյուրասիրող ընտանիքը ինչ ունեն չու-
նեն, իրենց սեղանից վերցնում են, Բաշինջաղյանի հետ ճա-
նապարհ դնում, մինչ այդ՝ տիկինը բերում է և իր գնումները:

Մի խոսքով բավական ուշ սեղանն աստեցինք և շատ
ուրախ ճաշասեղան ունեցանք, մինչև ուշ գիշեր խոսք ու
գրույց, կատակ ու ծիծաղ: Կոմիտասն էլ երգեց ու նվագեց:

Այդ անմոռանալի օրը Վ. Փափազյանը հավերժացրեց՝
լուսանկարելով մեր խոսքը գեղեցիկ պատկերասրահում:
Այդ նկարը իր ժամանակին լույս տեսավ Գարեգին Լևոնյա-
նի «Գեղարվեստ» հանդեսի մեջ:

Այդ օրից հետո ուրիշ ո՛չ մի ցայտուն բան չեմ հիշում նրա
հետ կապված: 1926 թվին, երբ վերադարձա արտասահմա-
նից, մի օր գնացի, այցելեցի մեծանուն նկարչի և սիրելի բա-
րեկամիս շիրիմը Թիֆլիսի Ս. Գևորգ եկեղեցու պատի տակ՝
մեծ Սայաթ-Նուլայի շիրմի մոտ:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԸՆԿԵՐՈՋՍ ՀԻՇՍՏԱԿԻՆ

Այեքսանդր Ծատուրյանը 90-ական թվականներին ամենից տարածված, ժողովրդական բանաստեղծն էր: Դպրոցում անգիր սովորում էինք նրան, և հանդեսներին ամենից շատ նրա բանաստեղծություններն էին արտասանվում:

Մեր պատանեկությունը՝ Ռուսաստանի մոայլ իրականության մեջ՝ ծարավ լույսի և ազատաշունչ խոսքի, ոգևորվում էինք նրա երգած դեմոկրատիկ-ժողովրդական զգացմունքներով, գաղափարներով:

Հետագայում մենք սիրով կարդում էինք նրա գեղեցիկ բարգամախոսությունները ռուսական և եվրոպական մեծ բանաստեղծներից:

Ես անձամբ ճանաչեցի նրան, երբ 1904 թվին, գարնանը, Մոսկվայումն էի:

Մի կիրակի օր գնացի մոտը: Նա հյուրանոցումն էր ապրում: Ներկայացրի ինձ: Պատանեկության օրերիս տաժաժ հարգանքի արտահայտությունների համար հուզվեց և աչքերը լցվեցին:

Այն ժամանակ նա բառասուն տարեկան էր. քաղցր դիմագծեր ուներ, գեղեցիկ, գանգուր մազեր և ջղալին հիվանդ, կրակով աչքեր:

Սենյակը փոքր էր. մի պատը գրադարանն էր բռնել, ուր կային միմիայն հաչ, ռուս և օտար բանաստեղծների գործերը՝ բոլոր մեծ բանաստեղծները ներկա էին այնտեղ: Բայց գիտական-փիլիսոփայական ո՛չ մի գիրք:

Ինձ տարավ իր հանախած ճաշարանը, ուր երկար և երկար գրույց ունեցանք:

Սիրտը բացեց ինձ մոտ, ինչպես մարդ բացում է վաղեմի ընկերոջ առաջ: Դժգոհ իր վիճակից, վրիպած էր համարում

իր կյանքի ուղին. իր ճակատագրին չէր հետևել. տնտեսական անձուկ պայմանները փշրել էին պատանեկան երազները, հարկադրված եղավ ծառայել վաճառականներից, կյանք մաշել նրանց գարշելի կանտորներում և սակավ ժամանակ և ջարդված տրամադրություն ունենալ միայն՝ զբաղվելու իր սիրած նվիրական գործով՝ գրականությամբ:

Հետագայում նույն այրող և մաշող դժգոհությունն էր հայտնում նա, 1910 թվին, իր սրտահույզ նամակում, որ ստատսիսանն էր իր հոբելյանին՝ իմ գրած շնորհավորական տողերին:

Այնուհետև մի-երկու հանդիպումներ էլ ունեցանք և այնպես ընդմիջտ վերջացան մեր տեսակցությունները: Իր գրքերից նվիրեց ինձ սրտաբուխ մակագրություններով: Մի քանի նամակներ փոխանակեցինք իրար հետ: Ես արտասահման անցա և ընդհատվեց մեր նամակագրությունը:

Սակայն այն սակավաթիվ տեսակցությունները, որ ունեցա Ալ. Ծատուրյանի հետ Մոսկվայում, իբրև նվիրական հիշատակներ, անաղարտ մնացին իմ սրտում, և առանց հուզմունքի չէ, որ վերապրում եմ նրան հիմա, որպես ավագ, սիրելի ընկերոջ, որով ոգևորվել եմ իմ պատանի օրերում, որի երգով խանդավառվել եմ:

Անմոռուց ընկեր, եթե երջանկություն ունենայինք, որ դու հիմա մեզ հետ լինեիր, դու կտեսնեիր քո երգած թշվառ հայրենիքը ազատ և բարգավաճ, քո սերմնացանը տեր իր վաստակին, քո բանվորը իր պետությունը կերտող, հայ գրողը հպարտ իր կոչումով՝ հարգված և գնահատված, որ սերմնացանի և բանվորի հետ միասին բարձրացնում են մեր մշակույթը, ստեղծում են պայծառ ներկան և առավել պայծառ ու բախտավոր ապագան:

ՀԱԿՈՐ ՀԱԿՈՐՅԱՆ

Իմ ծանոթությունը մեր բանաստեղծության ավագ ընկերի հետ մոտ 35 տարվա անցյալ ունի: Առաջին անգամ Հակոբ Հակոբյանին, լավ չեմ հիշում, որտեղ եմ տեսել՝ «Մուրճ» ամսագրի խմբագրատանը, ուր հաճախում էինք իբրև աշխատակիցներ ամսագրին, թե՛ մի ընկեր մեզ ներկայացրել է իրար:

Այդ ժամանակ նա արդեն կազմակերպված բանաստեղծ էր, իր ուրույն և եզակի դիրքն ուներ գրականության մեջ: Ադա Նեգրիի նրա հաջող թարգմանություններից շարունակ արտասանվում էին երեկույթների բեմերից, և «Նամուս ու ղեյթաթը» շատերն անգիր գիտեին:

Երբ, նոր ծանոթացած օրերում, հարցրի, թե որտե՞ղ է պաշտոնավարում, նա մի իմաստալից պատասխան տվեց, որ մինչև այսօր անջնջելի տպավորված է ուղեղիս մեջ:

— Կապիտալիզմի ամրոցում:

— Չեմ հասկանում,— ասացի ես:

— Բանկի մեջ: Բանկերը բուրժուազիայի ամուր բերդերն են, մինչև չգրավենք այդ բերդերը, կապիտալիստները գինաթափ չեն լինի:

Նրան հանդիպում էի «Գուտենբերգ» գրավանդատանցում, որը գտնվում էր այն բանկի մոտ, ուր պաշտոն ուներ նա:

Գրքեր էինք որոնում. նրա հետաքրքրության առանցքը տնտեսական-սոցիալական հարցերն էին, այն ժամանակվա գրաբնությունից թույլատրված գրքեր, որոնք գլխավորապես գիտական-տնտեսական բնույթ ունեին և մասնագետներին մատչելի:

Նկատի առնելով տվյալ ժամանակը, նա բավական է-

րուիցիա ուներ սոցիալիզմի և հեղափոխության հարցերի մեջ, հեղափոխության և սոցիալիզմի հույզերը նրա հոգեկան տարերքն էին կազմում: Հեղափոխությունը և սոցիալիզմը նրա մեջ, եթե կարելի է այսպես որակել, մտազգացում էր— հավատ և գիտություն, պափոս և իմացություն: Եվ այս դրսևորվում էր ամեն դեպքում, ամեն առիթի, թե՛ վեճերի և գրույցների մեջ, թե՛ ծանոթների ընտրության մեջ, երաժշտության և բանաստեղծության մեջ. օրինակ, նրա ամենատիրաժ բանաստեղծներն էին՝ Նեկրասով, Օգարև, Մելշին, Վերհարն, Ադա Նեգրի, որոնց նա անհամեմատ բարձր էր դասում եվրոպական և ռուսական հայտնի բանաստեղծներից:

1910 թվի սկզբում Գարեգին Լևոնյանի «Գեղարվեստ» գրական հանդեսի երրորդ պրակում միաժամանակ լույս տեսան Հակոբյանի «Նոր ստալոտ» և իմ «Աբու-Լալա Մահարի» պոեմները: Երկուսն էլ խանդավառությամբ ընդունվեցին ընթերցողների կողմից: Ես ևս շատ հավանել էի «Նոր ստալոտը»: Հակոբյանը կարողացել էր գեղարվեստորեն, լիրիկական գեղումներով առարկայացնել իր գաղափարների աշխարհը: Դա սոցիալիստական անդրանիկ և հաջող առեմն էր մեր գրականության մեջ:

Փողոցում հանդիպեցինք իրար: Անկեղծորեն և ջերմագին շնորհավորեցինք իրար մեր հաջողությունը և զնացինք ճաշարան՝ տոնելու մեր գրական հաղթանակը: Հակոբյանի տիկինն էլ մեզ հետ էր:)

— Սիրելի Ավետիք,— ասաց նա՝ գինու բաժակը բարձրացնելով,— մեր պոեմները երկու ընտիր ցույեր են՝ իրար դեմ կանգնած, ճակատ-ճակատի... խմենք նրանց կենացը:

— Բայց մեր ցույերը իրար չեն հանդիպում, նրանց ուղիները տարբեր են,— ասացի ես:

— Ծշմարիտ է, դու գնում ես անասպատ, ես գնում եմ գործարան: Զարմանալի բան է,— շարունակեց նա,— երկուսս էլ դժգոհ ենք իրականությունից, հակատակ ենք ցարիզմին, կապիտալիզմին, բայց ինչո՞ւ են մեր ճանապարհները բաժանվում:

— Թերևս տեմպերամենտի՞, միջավայրի՞ արդյունք,— հարցրի ես:

— Մեր ընկերների մեջ հաճախ ենք խոսել քո մասին, ինչո՞ւ մեզ հետ չես քայլում. այ տղա, ուզածդ ի՞նչ է էս աշխարհքից— մի բոստան՝ Արագի ափին, մի Շուշիկ ու աշխատանք... Էդ կտանք քեզ, պրծա՞նք:

— Սիրելիս,— պատասխանեցի ես,— բոստան կարող եք տալ, բայց Շուշիկին՝ երբեք:

Եվ զվարթ ծիծաղեցինք մեր խոսքերի վրա:

1905 թվականի հոկտեմբերի վերջերին էր: Ցարական ճենգ և կեղծավոր սահմանադրությանը հաշորդեցին արյունալից օրեր: Սահմանադրությունը եկավ շղթայագերծ անելու բռնակալական գազանին, միապետության ռեժիմի այրունկզակ հետևորդները զինված, փողոց իջան՝ կոտորելու հեղափոխական ժողովրդին:

Ես Ալեքսանդրապոլից եկել էի Թիֆլիս. ուշ երեկոյան շրջում էի Դվարցովի փողոցում, հյուրանոցից հյուրանոցի դուռն էի բախում՝ գիշերելու համար— վախից դռները փակել էին և հյուր չէին ընդունում:

Ազգական ունեի քաղաքի ձախ ափում, բայց սիրտ չէի անում կամուրջից անցնել, որովհետև զինվորական պահակները խուզարկում էին երթևեկողներին: Ծվարած թափառում էի և մտածում, թե ո՞ւմ մոտ ապաստանեմ այս գիշեր:

Այդ պահին հանկարծ դեմս ելավ Հակոբյանը, որ տուն էր գնում. նա ապրում էր Սոլովակի կողմերը:

— Ի՞նչ ես անում, տուն գնա, վտանգավոր է:

Վիճակս աներկայացրի նրան:

— Ծատ ցավում եմ, որ մոտս չեմ կարող տանել. տունս լիքն է Գանձակից փախած ազգականներով. բայց արի քեզ տանեմ մի բարեկամի մոտ: Գանձակեցի է, լավ մարդ է:

Աբասաբատի հրապարակում մի տուն մտանք. արհեստավորի համեստ ընտանիք էր, թեյ տվին, կալքաս, հաց ու պանիր:

Ես շատ ընկճված էի, գրեթե հուսահատ:

Հակոբյանը քաջալերում էր ինձ, սիրտ էր տալիս, բայց այս բխում էր նրա համոզմունքից, նրա հավատից. «Մի՞ ընկճվիր, կանցնի այս, հեղափոխությունը կհաղթանակե, բանվոր դասակարգն անկարտելի է. ապագան նրանն է»:

Ուշ գիշեր էր, երբ բաժանվեց ինձանից: Ես մնացի մե-
նակ, բայց սիրովաժ էի: Հիացած էի նրա ամբողջականու-
թյան վրա, աներկմիտ, անհողողող: Այդ գիշեր նա շատ
բարձրացավ իմ աչքում, այդ գիշեր զգացի նրա բանաստեղ-
ծության անկեղծությունը: Այդ գիշերը ես երբեք չեմ մոռա-
նալու:

Նրանից հետո շատ տարիներ անցան: 1926 թվի աշ-
նանը ես վերադարձա Եվրոպայից և Թիֆլիսում գնացի հին
բարեկամիս այցելության: Ծերացել էր, ճերմակել, բայց դեռ
հոգին աշխույժ էր, խանդավառ: Հիշեցի՞նք անցյալը:

— Ծատ լավ արիր՝ եկար. շատ լավ արիր. թափառա-
կանի ցուպդ վար դիր, աշխատիր մեզ հետ: Դու հիշո՞ւմ ես,
ասում էիր, թե՛ մեր ցուլերը չեն հանդիպելու իրար, բայց բա-
րեկամների պես իրար հանդիպեցին սովետական իրավա-
կարգի մեջ:

Վերջին անգամ նրան տեսա 1930 թվին. մեկնում էի
Եվրոպա. գնացի մնաս բարևի:

— Ինչո՞ւ ես գնում, դժգո՞հ ես մեզնից:

— Բնավ երբեք,— ասացի ես,— գնում եմ ընտանիքս,
գրքերս, թղթերս հավաքեմ, գամ:

— Վերադարձիր անպատճառ: Այ, մոտ օրերս մի ոտա-
նավոր եմ գրել՝ քեզ ի նկատի ունենալով:

Եվ թղթերի միջից հանեց մի ոտանավոր ու կարդաց.

«Հիմա մեր երկրում բոստանների տեղ
Ագարակներ կան,
Եվ Շուշիկի տեղ՝ կոմերիտուսիք
Կարմիր գլխարկով...»:

Եվ ծիծաղելով, ավելացրեց.— Երբ ուզենաս՝ քեզ ագա-
րակ կտանք բոստանիդ տեղ, իսկ Շուշիկի... Էդ էլ քո շնորհ-
քից է կախված, թեև դրա համար չափազանց ուշացել ես:

Այդ ոտանավորը հետագայում ես հրատարակեցի Փա-
րիզում, «ՀՕԿ» ամսագրի մեջ:

Այս վերջին տեսակցությունն էր, որ ունեցա նրա հետ:
Երկրորդ վերադարձիս չհաջողվեց տեսնել նրան:

Հակոբյանը ընդմիջտ հեռացավ մեզնից: Այժմ կարող

ենք ամփոփ տեսնել նրա կտրած-անցած ուղին, ամենայն իրավունքով կարող ենք ասել, որ նա բախտավոր եղավ: Բախտավոր եղավ նա, որ իր աչքերով տեսավ իր երազն իրականություն դարձած: Տեսավ իր երգած, քարոզած, փափագած աշխարհը կենսագործված, սոցիալիզմի աշխարհը, ուր աշխատավորը տերն է իր քրտինքի արդյունքին, իր պետության կերտողն է, զարգացնողը և պահպանողը:

Նա ապրեց և երգեց պրոլետարիատի համար ու հաղթական պրոլետարիատը սիրեց նրան և երկար ժամանակ պիտի սիրե իր մեծ վաստակավորին:

Նրա երգերը տակավին երկար պիտի պետք զան մարտնչող սերունդներին, որովհետև նրանք ուզվական շեփորի ներշնչող, ոգևորող կոչեր են:

Երևան, 1937

ԱՆՋՈՒԳԱԿԱՆ ԹԱՄԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ամենակսկածալի լուրը, որ կարելի էր ստանալ Երևանից— ճարտարապետ Թամանյանը մեռել է..

Մեծագույն ճարտարապետը Սովետական Հայաստանի, սակավաթիվ մեծագույն ճարտարապետներից մեկը ամբողջ Միության մեջ:

Ալեքսանդր Թամանյան: Մի ամբողջ աշխարհ ճարտարապետական անսպառ հմտությունների, փորձառությունների, խորունկ տեսությունների և անթերի ճաշակի: Կործանվեցավ մի ամբողջ աշխարհ..

Գլուխդ առ ափերիդ մեջ և սուզվիր անհուն վշտի մեջ..

1928 թվականի հունվար ամսի մեջ էր: Ա. Թամանյանի ծննդյան 50-ամյակը տոնում էինք ընտանեքստ, մի խումբ մտերիմներով և բարեկամներով, նրա սիրելի հարկի տակ: Ներկա էին նաև մեծատաղանդ երաժշտագետներ Ալեքսանդր Սպենդիարովը և Ռոմանոս Մելիքյանը: Սեղանի թամադայի պատիվը վիճակվել էր ինձ: Ես իբրև սեղանի պետ, կարգադրեցի, որ թանկագին հոբելյարի աջ կողմը նստի Ա. Սպենդիարովը, ձախ կողմը՝ Ռոմանոսը: Ես բաժակս բարձրացրի և ասացի. «Մեծանուն վարպետ, դու եկար հյուսիսից, դու եկար մեծ Ռուսաստանում քո տաղանդով և ստեղծագործությամբ արդեն արժանի հռչակ ստացած, դու եկար մեր աղքատ, ավեր երկիրը, որը, սակայն, հարուստ է բարձր արվեստի անթառամ կոթողներով, որոնք մեզ ազնվության վկայական են տալիս, դու եկար այս հին գերշնչարանը, ազատագրված մեր հայրենիքը, որպեսզի տեսնես, յուրացնես հին գանձերը, որպեսզի քո հոգու հետ՝ գի-

տությամբ և բանաստեղծությամբ լի, խառնեա, ձուլեա, համադրեա և տաս նոր գեղեցկությունը, ազգային և հանրամարդկային արվեստը, որի գաղտնիքը, վարպետ, դո՛ւ գիտեա միայն:

Դու մեր արժեքնյան Երևանի անմահ Իկթուսը պիտի լինես, դու պիտի կերտես մեր Պարթեանոնը, մեր թատրոնը, մեր թանգարանը, մեր ստադիոնը...

Քեզ հետ եկան նույն հյուսիսից մեծ հայրենաբաղձները՝ Ա. Սպենդիարովը, Ռ. Մելիքյանը և Մ. Սարյանը, արվեստի տարբեր մարզերի հսկա վարպետները, քեզ պես, քեզ հետ ստեղծելու հայկական մշակույթը, միակ անկորչելի պարծանքը մարդկային էակի»:

Ինչքա՛ն ուրախացար դու, սիրելի վարպետ, ինչքա՛ն ուրախացավ Սպենդիարովը, որ մանկական ժպիտը աչքերում, գրկեց և համբուրեց քեզ:

Նվիրական անուններ՝ Սպենդիարով, Թամանյան, Ռոմանոս, նվիրական սիմբոլներ, դուք չեք մեռել, դուք ապրում եք ձեր ստեղծագործությունների մեջ, սերունդների սրտերի մեջ, դո՛ւք մեր գեղեցիկի անմահ փառքերը:

Ծակատագիրը շատ դաժան եղավ Թամանյանի հանդեպ: Հները պիտի ասեին, թե աստվածները նախանձում էին նրան և հարվածեցին: Տարիներ առաջ գեղեցիկ, ծաղկափթիթ աղջկա կորուստը խորտակել էր նրա սիրտը, և վերքը տակավին չգոցված, վրա հասավ երկրորդ մահացու հարվածը՝ երկրորդ աղջկա կորուստը՝ նույնքան գեղեցիկ և ծաղկափթիթ:

Ես զարմանում էի, երբ լսում էի նրա մասին, թե՛ տակավին աշխատում է...

Աշխատում է: Աշխատանքն էր արդեն իր միակ մխիթարությունը. իր մեծ տեսիլներով, մեծ հղացումներով բռնված աշխատանքի մեջ մոռանում էր վիշտն ու ցավը: Իր հանճարը, իր սերը հայ ժողովրդի հանդեպ, իր վիշտն ու տառապանքը առարկայացնել — բոլոր մեծ տառապողների պես, իրականացումներով, ստեղծագործություններով...

Ես տեսնում էի նրան միշտ քայքայված ստողջությամբ, քայքայված մարմնով, սակայն միշտ գործի գլուխ կանգնած: Նրա հզոր ոգին էր, որ տակավին ոտքի վրա էր պահում մաշված ոսկորները, որ ամեն վայրկյան փլուզումի մոտ էին:

Ես տեսնում էի նրան միշտ՝ իր աշխատանցում, հանճարեղ գլուխը կախած զանազան նախագծերի, հատակագծերի վրա, աշակերտներին հրահանգներ տալիս, կառուցվող շենքերի մոտ, ամեն մի մասին ուշադիր, որմնադիրների, բանվորների հետ խոսքի բռնված:

Թամանյանը անհագորդ ուսումնասիրող էր, իր անհուն գիտությունը չէր բավարարում իրեն: Իր բազմազբաղ ժամերից պահեր էր գտնում՝ հետազոտելու հայկական հին ճարտարապետության նորագույն նմուշները՝ ուսանելու համար, անդուլ ուսանելու:

Մեր մյուս մեծանուն ճարտարապետը՝ հանգուցյալ Թ. Թորամանյանը, — նրանք եղբոր պես սիրում էին իրար, — մխրճել էր նրան մեր արվեստի մեջ և նրա ուղեցույցը դարձել: Նրանք իրար լրացնում էին, իրար ուսուցանում:

Թամանյանը «Հնությունների պահպանման կոմիտեի» նախագահի հանգամանքով երբեմն գնում էր հնադարյան սվերակներին այցի, ձեռնարկած նորոգումները ղեկավարելու:

Մի անգամ բախտ ունեցա երկու հսկաներին՝ Թամանյանին և Թորամանյանին ընկերակցելու: Գնացինք Արմավիր: Աշխարհի ամենահին քաղաքներից մեկը, պատմության սկզբներից, մշուշներից, աստվածներից, առասպելներից ծագած այս անեղծվածային քաղաքը, ուր տեղի վրա ուզում էին նրանք որոշել պեղումների հարցը: Նրանք դիտում էին, գնում, չափում, գծում, խոսում, վիճում իրար հետ: Լսում էի՝ Խարրի, Խալդի, Ուրարտու, Արմեն... խորհրդավոր անուններ, բայց ի՞նչպես նրանց համար ժամանակն ու տարածությունը ջնջված էր և նրանց աչքերը տեսնում էին, անշուշտ, Խարրիի, Խալդիի, Ուրարտուի, Արմենների կանգուն տաճարները, բուրգերը, սպարանքները, պարիսպները...

Ինչպիսի՛ն Գկարագեղ պատկեր— երկու հսկաներ բնե-
ռագրերով խոսող Արմավիրի բազմահազարամյա քարերի
առաջ:

Ծաքաթվա մեջ մի երեկո, որոշ օր, Թամանյանի հարկի
տակ հավաքվում էին նրա բարեկամները՝ ճարտարապետ-
ներ, արվեստագետներ, մտավորականներ: Այնտեղ կհան-
դիպեինք մայրաքաղաքը այցելող օտար անվանի արվեստա-
գետների, որոնք առանց համբավավոր ակադեմիկոսին տես-
նելու չէին մեկնում: Ծատ հարգելի տիկին Թամանյանը, ու-
սական գեղարվեստի պատմության մեջ հռչակ վայելող
մի ընտանիքի զավակ, իր ամուսնու հետ, իրենց սրտագին
հյուրընկալությամբ իրենց տունը դարձրել էին Երևանի ամե-
նից հարգելի, սիրելի, գրավիչ, բովանդակալից ժամադրա-
վալըը: Գեղարվեստական և մտավորական ի՛նչ մեծ վայելք
ճաշակած հեռանում էին հյուրերը— սրտատրոսի սպասելով
հաջորդ երեկոյին:

Ի՛նչ անմոռանալի պահեր, ի՛նչ քաղցր հիշատակներ:

Թամանյանին ամենից շա՛տ կիզող, մաշող, նաև թևա-
փորող հարցը ժողովրդական տան կառուցումն էր: Այդ
նրան մտալլկող դևն էր: Տարիների ընթացքում որքա՛ն աշ-
խատեց, տքնեց նա, գծեց, ջնջեց, գծեց, ջնջեց, բազում անգամ
փոխեց հատակագծերը և միշտ դժգոհ, փորձերը գտնելով ան-
համաձայն իր ներքին շքեղ տեսիլին, միշտ ձգտելով կատարե-
լության, մինչև որ մի օր, վերջապես, բավարար համարեց
և ձեռնամուխ եղավ իրականացմանը:

Երբ Եվրոպա մեկնելիս գնացի նրան հրաժեշտ տալու,
գլուխը բարձրացրեց ժողտան անթիվ թղթերի վրայից և
ասաց.

— Ա՛խ, ի՛նչքան բախտավոր պիտի լինեմ, որ վերա-
դարձիդ տեսնես շենքս վերջացած: Պիտի շտապեմ, ժամա-
նակը իմ բարեկամս չէ:

Ես հասկացա նրան և սրտիս մեջ հառաչեցի: Այնու-

հետև երևակայության մեջ միշտ տեսնում էի նրան իր հոյակապ երազի մարմնացման աստիճանների վրա օրեցօր բարձրանալիս: Ավա՛ղ, անողորմ ճակատագիրը չթողեց, որ նա հասներ իր գործի կատարին: Բոլորովին թերի մնաց նրա երազը, որ մեր բոլորիս երազն էր: Անհուն ցավը սրբտի՛ն՝ անջատվեց նա իր մեծագույն ձեռնարկից. այդ ցավը այսուհետև մերն է լինելու:

Սակայն ինչ էլ որ լինի ժողտան ճակատագիրը՝ պիտի ալարտով՝ հեղինակի կաղասարի համաձայն, թե պիտի այլափոխվի— մի բան անաչաչելի իրողություն է, որ նոր Երևանի անունը հավերժապես կապված է Թամանյանի անվան հետ: Նրա դրոշմի տակ է Երևանը: Նրա մեծաթև շունչը ամենուրեք է: Նրա տրամաբանված, կշռված հատակագծի վրա է, որ բարձրանում է մեր մայրաքաղաքը: Չքնաղ Երևանի պողոտաները պիտի թռչեն դող անջուն Զանգվի վրայից, պիտի բացվեն Արարատյան դաշտի հրաշքներից ակնդետ, պիտի ձգտեն դեպի Մասիսի լույսերը:

Եվ երախտագետ Երևանը, սերունդներով, հարգալից գլուխ պիտի խոնարհե մեծ արվեստագետի, մեծ հայրենասերի հիշատակի առաջ:

Փաբիգ, 20 փետր., 1936 թ.

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

Վահանի եղբայրներին՝ Ջալալխեցուն և Արամին ճանաչում էի վաղուց և գիտեի, որ նրանք եղբայր ունեն Լազարյան ճեմարանում, իսկ իրեն՝ Վահանին առաջին անգամ տեսա Մոսկվայում, 1904 թ. մարտ ամսին:

Այցի էի գնացել Լազարյան ճեմարան: Ինձ շրջապատեցին մի քանի ուսանող-աշակերտներ, որոնց մեջն էր Վահանը: Բոլորն ինձ հարցեր էին տալիս և հարցերիս պատասխանում: Ցույց էին տալիս ճեմարանի սրահները, գրադարանը, դահլիճը և այլ անկյուններ, պատմում էին ճեմարանի հիմնավորց ավանդություններից, մինչդեռ Վահանը լուռ ու անխոս հետևում էր մեզ՝ աչքը վրայիցս չհեռացնելով: Երբ խոսք էի ուղղում նրան, կարմրում էր նա, շփոթվում:

Մնաք բարեկին՝ Վահանը ձեռքս ամուր սեղմեց և շքնջաց. «Ծատ ուրախ եմ, որ Ձեզ տեսա»: Ես հրավիրեցի նրան ինձ մոտ: Մի երկու օր հետո Վահանն իր ընկերոջ հետ մոտս եկավ: Որքան ուղեկցող ընկերը սիրում էր շատախոսել, նույնքան նա լուռ էր կամ սակավախոս: Առաջինը հետաքրքրվում էր Կովկասի քաղաքական կացությամբ, 1903 թվի հայոց եկեղեցական կալվածների գրավման հետևանքով ծագած կոիվներով, իսկ Վահանը հետաքրքրվում էր գրականությամբ, ինչ են գրում Ղ. Աղայանը, Ծիրվանգադեն, Հ. Թումանյանը, Դ. Դեմիրճյանը և ուրիշները:

Երբ ես նայում էի նրան՝ հուզվում էր, գլուխը կախում: Ջգում էի, որ հայացքս ճնշում է այս երկչոտ, վեհերոտ տղային, և խուսափում էի նրա աչքերին նայելուց:

Իմ հարցին, թե՛ արդյոք ուսանողությունը հետևում է հայ գրականությանը, Վահանը, կարծես, բոլոր ուսանողների

կողմից, իբրև պատասխան, կարմրելով արտասանեց իմ
նուանավորներից մի երկու մտուշ:

Հետագայում ես իմացա, որ նրանք ձեմարանում կազմել
էին աշակերտական մի փոքրիկ խմբակ հայ գրականություն-
ընդ ճանաչելու նպատակով և, եթե չեմ սխալվում, հրատա-
րակում էին աշակերտական մի գրական թերթ, ձեռագիր,
որի խմբագիրը ինքը՝ Վահանն էր:

Հաջորդ տարին, 1905 թվին, ամռանը Ախալքալաքի գա-
վառումն էի: Թափառումներիս ընթացքին հյուր եղա Վա-
հաննեց ընտանիքի մոտ, Գանձա գյուղում: Կարծում եմ, որ
մի շաբաթի չափ մնացի: Վահանի հայրը քահանա էր, մի
շատ տարօրինակ և հետաքրքրական մարդ: Բոլոր որդի-
ները, մանավանդ Վահանը, ապշեցուցիչ մասնություն ունեին
իրենց հորը՝ սև, ներքին հրով վառ աչքեր, սուր հայացք,
թուխ մազեր, ջղային կազմվածք: Չնայելով բավական ծե-
րացած էր տերտերը, բայց անհագ հարցասեր էր, մշտաբթուն
միտք: Այդ օրերը Լ. Տոլստոյի ավետարանն էր համեմա-
տում ավետարանիչների վարիանտների հետ, և զանազան
ստովածարանական-մետաֆիզիկական հարցերով չարչա-
րում էր իր ուղեղը:

Վահանի մայրը վաղուց վախճանված էր, և տունը քույրն
ու մեծ հարսն էին կառավարում: Ընտանիքը հուզիչ գուրգու-
րանք ուներ Վահանի հանդեպ, որ տան կրտսերն էր, և Վա-
հիկ էին կոչում նրան: Ես էլ յուրացրի այդ անվանումը: Վար-
դավառի կիրակին էր, մի պայծառ օր: Գնացինք Գանձայից
ոչ շատ հեռու ս. Հովհաննեսի մատուռը, որ ուխտատեղի էր:
Հինավուրց մատուռը կանգնած էր դալարագեղ մի բլու-
րի վրա, որի ոտների տակ ծփում էր Սաղամոյի կանաչ լճա-
կը:

Երջակա գյուղերից ահագին բազմություն կար հավաք-
ված: Մի քանի ձեռք դավուլ-գուռնա կար, կային և աշուղ-
ներ՝ սազները կրծքներից կախ: Որոտում էին դավուլ-գուռ-
նաները և ուխտավորների խմբերը պարում էին մատուռի
շուրջը: Երիտասարդներ, պատանի տղաներ, աղջիկներ և

հարսներ: Ծատերը տոնական համեստ զգեստներ էին հագել, ոմանք խեղճ, անշուք հագուստներով, բայց բոլորն էլ թոշում էին զվարթ ու խանդավառ:

Տարեց տղամարդիկ քեֆ էին անում. գետնի վրա բացել էին իրենց պարզ սեղանները՝ հավկիթ, պանիր, սոխ ու հաց, երբեմն էլ սառը մսի կտորներ, բայց արաղի բաժակն անընդհատ ձեռքե ձեռք էր պտտվում, խմում էին ու կենացներ ասում, ծիծաղում էին ու գոռոռալով երգում էին ու նորից խմում: Աշուղի սազն ու արաղի թասը մոռացության գետն էին գետել նրանց դաժան առօրյայի հոգսերը:

Ես ու Վահանը նստել էինք մատուռի տակ, ծխում էինք ու դիտում պարողներին և քեֆ անողներին:

Վահանի լեզուն բացվել էր, այլևս չէր բաշվում ինձնից:

— Նայի՛ր,— ասում էր Վահանն ինձ,— ա՛խ, ի՛նչ տխուր աչքեր ունեն մեր գլուղացիները, ի՛նչ մտահոգ դեմքեր՝ արևով, անձրևով այրված ու բովված: Ի՛նչ դառն աղքատություն է կաթում վրաներից, բայց ուրախանում են: Բայց ի՛նչ թախծոտ ուրախություն է այս: Իբրև թե ուրախ երգեր են երգում, բայց ի՛նչքան վիշտ ու մորմոք կա սրանց ուրախ երգերի մեջ: Դարերի տատապանքն է խոսում սրանց բերանով: Այս ժողովրդին մեր ինտելիգենցիան չի կարող հասկանալ, ո՞ր մնաց օտարը: Մեր նոր գրողներից Թումանյանը և դու, միայն երկուսդ, զգում եք մեր ժողովրդին: Ձեզնից հետո կամ նոր, բոլորովին նոր երգ պիտի ասել, կամ պիտի լռել:

Մյուս օրը առավոտյան գնացիկը տեսնելու Փարվանա լիճը և նրա ճերմակ ամրոցը, որը թեև առասպելը սուզել է ջրի տակ, բայց, ինչպես վկայում են գլուղացիները, սուր աչքը, վճիտ պահերին, կաթող է նշմարել բուրգերի ծայրերը...

Մեզ շրջապատող բնությունը վայրկյանե վայրկյան փոխում էր իր տրամադրությունները. մերթ զմրոխտյա մարգագետիններ, կարկաշուն առուներ, ցորենի ծփծփան արտեր, մերթ լռիկ ձորակներ, անհեթեթ կերպարանքներով ծայրեր ու գունագեղ քարեր:

Բարձրացանք մի բլրակի վրա, որ իշխում էր շրջակայքին: Մեզն ու մշուշը, որ սքողել էին լեռները, հետզհետե

պատուում էին և հրաքխային սուր գազաթները, տեգերի պես, ցցվում էին՝ շողշողալով նորածագ արևի ոսկով: Փարվանա լինը ծխում էր իր կապույտ ծխով... Մի պահ հետո պարզեց իր արծաթափայլ հայելին, ուր արևի դեմքը ցույց ավելի բանաստեղծական, քան որ երկնքումն էր: Լեռների շարանը ձգվում էր հեռուն, բայց մեր բլուրի կատարից գրկելու չափ մոտիկ էին երևում հեռուն և հեռացողը... Վահանը հափշտակված նայում էր՝ հայացքը թափառելով ամեն կողմ, և արտասանեց յուրովի Հովն. Թումանյանի «Փարվանայից».

«Բարձրագահ Արուլն ու Մըթին սարեր»...

— Ծատ եմ սիրում իմ բարձրագահ հայրենիքը և նրա խոնարհ ժողովրդին, որ աշխատում է ու երագում, տքնում է ու երգում...

«Այս պատանու հոգին,— մտածում էի ես,— պարտրված է երագով, ինչպես իր հայրենի լեռներն ու լճակները՝ կապույտ մշուշով...»:

Եվ այս սրտագին զրույցներից այն խորին տպավորությունն առա, որ ես բանաստեղծական էության հետ գործ ունեմ, որ այս զգայուն հոգում ապրումները մթին խորության մեջ են կատարվում, որ նա աշխարհն զգում է երագներով և երագների մեջ:

Գեղեցիկ գյուղ է Գանձան, բարձրադիր, ձորի վրա կախված, հոյակապ բնության մեջ:

Անջնջելի կենդանի են իմ հոգում այն քնքուշ երեկոները և անդորր գիշերները, որ ապրել եմ Վահանի մայրենի գյուղում, պատանի Վահանի հետ միասին:

Հոգնած արևը թեքվում է դեպի Արուլ լեռը, գազաթները հրդեհվում են և դժգունանում, անրջային կիսալույսերով կամաց-կամաց իջնում է մթնշաղը, նախիրը տուն է դառնում հանդից. վառվում են տների նրագները, գյուղի աղմուկները լռում են սակավ առ սակավ, հանգչում են բոլոր շշուկները... Աստղերը մեկը մյուսի ետևից շողում են ու կայծում. հովիվները խարույկ են վառում Արուլի վրա, երեկոն գիշեր է դառնում անտես, աննկատելի քայլերով... լռություն. միայն ձորի

առուն է մրմնջում նիրհի մէջ սուզված. լճից շվշվում է զեփյուռի մեղմ սրինգը...

Վահանը ականջիս տակ, սրտի ձայնով, շնջում է չքնաղ հատվածներ համաշխարհային և հայկական քնարից— Գլորիե, Հայնե, Բողեր, Վեռլեն, Լերմոնտով, Սոլոգուբ, Բլյուսով, Դուրյան, Հովհաննիսյան...

Լոում է Վահանը... Հովիվների խարույկը մարել է, խորին գիշեր է, մթին ու խորհրդավոր լռություն... բոլոր իրերը ձևալուծվել են, չքացել, աննյութացել. իրական աշխարհը անզգալիորեն սահել է դեպի անիրականը: Մենք երազում ենք, սավառնում ենք անրջային ոլորտների մէջ, ուր խճճված միտքը ձերբազատվում է և լարված միտքը հանգիստ գտնում...

Օ՛, Գանձայի քնարական երեկոներ, դուք թոցրիք Վահանի հոգին բանաստեղծական և գերզգայական ոլորտները, դուք անմահացաք նրա տաղանդի կախարդանքով, դարձաք երգ ու հեքիաթ, մաքուր սփոփանք և բարձր արվեստ...

1906 թվին, հունվարին, Վահանին և իր դասընկերոջը հանդիպեցի Թիֆլիսում: Հեղափոխության հուզումնալից իրադարձությունների հետևանքով ժամանակավորապես գոցված էր Լազարյան ճեմարանը, ուստի նրանք վերադարձել էին Կովկաս: Նրանք ուզում էին հեղափոխական աշխատանք, պրոպագանդ տանել ժողովրդի մէջ: Ընդատաջելով նրանց փափագին, որոշեցի նրանց հետս տանել Ալեքսանդրապոլ (Լեհնակյան) և ուղարկել Ծիրակի գյուղերը, որպեսզի ժողովրդին բացատրեն Ռուսաստանում տեղի ունեցող անցքերը:

Այսօրվա պես հիշում եմ.— Վահանն ու դասընկերը՝ ահագին, սև ծոպավոր փափախները գլխներին՝ ոգևորված վագոն նստեցին: Ալեքապոլ հասնելուց հետո, մեկնեցին Ծիրակի գյուղերը:

Ալեքապոլում հաճախ լինում էին նրանք ինձ մոտ, ես էլ նրանց մոտ, հյուրանոցում: Մինչև ուշ գիշեր գրույց էինք

անում, բայց ոչինչ չեմ հիշում հիմա այդ գրույցներից: Միայն երկու դեպք եմ վերհիշում:

Մի երեկո Վահանի ընկերը ինձ ասաց, թե Վահանը բանաստեղծություններ է գրում: Ես արդեն գուշակել էի այդ: Վահանը կարմրելով ուրացավ, բայց պնդումիս վրա զիջեց և սեղանի վրա դրեց մի տետրակ՝ սև կալենկոթով կազմած, որի վրա դանակով փորագրված էր «Արիւն» բառը: Չարմանքով գոչեցի.— «Ինչ, մի՞թե արյան երգեր ես գրում»: Ընկերը ծիծաղեց և մատով ցույց տվեց, որ հակառակ կողմից կարդաս: «Նիրա»: Իրական թե անըջական իր սիրած աղջկա անունն էր Նիրա, որին նվիրված էին ոտանավորները: Վահանը դողդոջ ձայնով կարդաց մի քանի հատ: Բնավ չհավանեցի, դժգույն բաներ էին, մեծ մասով իմ ոտանավորների, Թումանյանի և ուրիշների նմանություններ:

Բանաստեղծական տրամադրությամբ լցված մի երիտասարդ, լավագույն կերպով պատրաստված, տեղյակ հին ու նոր գրականության... և այսպիսի թույլ բաներ: Ծատ հիասթափվեցի: Վահանը դեռ իրեն չէր գտել. հրաշքը դեռ տեղի չէր ունեցել:

Երկրորդ վերհուշս այս է:

Նրանք գյուղերը շրջելիս, եղբորս մոտ հյուր էին եղել Ղազարապատ գյուղում. այնտեղից էլ ձմեռ օրով գնացել էին Անի:

— Անասիման գեղեցիկ է Անին,— ասում է Վահանը: Եվ իրոք, Անին իր ճարտարապետական հուշարձաններով ազդել էր նրա մտքի և երևակայության վրա:



1908 թվին, ամռանը Թիֆլիսում պատահեցի Վահանին: Պիտի հրատարակեր իր բանաստեղծությունների առաջին գրքույկը՝ «Մթնշաղի անուրջները»: Տպելուց առաջ Հ. Թումանյանի մոտ կարդացել էր ձեռագիրը, ուզեց ինձ մոտ էլ կարդալ՝ «անկեղծ կարծիքս» իմանալու համար: Հյուրանոցիս սենյակում եմք: Հուզված կարդում է ոտանավորները, մեկը մյուսի ետևից. քանի առաջանում է ընթերցումը, սովելի է հուզվում. ես սրտով և ուշով հետևում եմ ընթերցումին:

Տետրակը չավարտած՝ ես անհամբերությունից մղված՝ գո-
չեցի. «Կեցցե՛ս, Վանիկ ջան, հրաշալի բաներ են, բյուրեղա-
ցած զգացումներ՝ անթերի ձևերի մեջ: Իսկական քնարեր-
գությունը սա է— մաքուր լիրիկա»: Ջարմացա, որ «Նիրա-ից
այստեղ ոչինչ չկար:

Վահանի ներհուն աչքերը փայլատակեցին ուրախու-
թյամբ:— «Հ. Թումանյանն էլ շատ հավանեց: Երկուսիդ կար-
ծիքը բացարձակ արժեք ունի ինձ համար: Այլևս քննադա-
տությունից վախ չունեն»: Երեկոյան եղա Հ. Թումանյանի
մոտ և հիացմունքս հայտնեցի Վահանի բանաստեղծու-
թյունների նկատմամբ:

— Հա է՛, շատ դրուստ ես ասում: Ծատ գեղեցիկ են և՛
գրեթե մեր լիրիկայի մեջ բոլորովին նոր բաներ: Պատկերնե-
րը թեև թույլ են և քիչ են, բայց լեզուն՝ մաքուր գտված և
արծաթե զանգի պես՝ հնչում: Իմ ազդեցությունը բնավ չտե-
ւա այնտեղ, բայց բո և Դերենիկի տրամադրությունների
արձագանքը կարծես կա, մանավանդ՝ բո: Դու ի՞նչ ես կար-
ծում, համենայն դեպս՝ մեր վերնատան մեջ պատվավոր տեղ
ունի...

Երկու տարվա ընթացքում հրաշքը կատարվել էր, Վա-
հանը գտել էր իրեն և արվեստի գաղտնիքը: Վահանի երևու-
նով մեր քնարերգության մեջ մի նոր էջ բացվեց, նոր մեկ-
նակետ՝ սիմվոլիզմը, որից ծայր առան նոր բանաստեղծներ,
որոնք ավելի կամ նվազ շնորհքով սկսեցին նմանվել և կրո-
կընել այս անգերագանցելի տաղանդին:

Վահանը հաճախ գրում էր ինձ Մոսկվայից: Հայտնում էր
իր ծրագրերի, իր գրածների և գրելիքների մասին: Նամակ-
ներից մեկի մեջ գրում էր, որ սկսել է թարգմանել Էրազմ
Ռոտերդամցու «Հիմարության գովքը» նշանավոր գիրքը:

1909 թվին, ամառը, Ախալքալաք գնալիս Վահանը կանգ
առավ Ալեքսոլում, մի քանի օր ինձ մոտ հյուր մնալով՝ կար-
դաց իր նոր գրած «Ոսկի հեքիաթ» ցիկից: Ես էլ գրել էի՝
«Աբու-Լալա Մահարին», ցույց տվի նրան, հավանեց և մի
քանի նկատողություններ արավ: Նրա խորհրդով նախեր-
գանքի մեջ,— Մահարու հակիրճ կենսագրականում,— փու-

փոխություն մտցրի, որ մինչև այսօր էլ չգիտեմ լավ արեցի, թե վատ:

Ավելորդ չեմ համարում մեջ բերել այդ: Գրել էի այսպես.

«... Եվ մի գիշեր, երբ շատ լքված էր նա և սրտաբեկ, դուրս հանեց երևակայության միջից քաջագնաց ուղտերի մի քարավան՝ ընտիր սարքով, և մինչ Բաղդադը քուն էր մտել Տիգրիսի նոսրածածկ ափերի վրա— գաղտնի հեռացավ քաղաքից...»:

Վահանը գտավ, որ սա շատ անիրական կթվա, շատ անհամոզիչ: Եվ, ուրեմն, իբրև թե ավելի համոզիչ կլինի, եթե Մահարին իրական քարավան ունենա: Այդ նկատողությունն այն ժամանակ խելքիս նստեց և փոխելով՝ նախերգանքին տվի այն ձևը, ինչ որ այնուհետև հայտնի է հասարակությանը:

Այս տեսակցությունը, դժբախտաբար, վերջինը եղավ. էլ չտեսանք իրար: Ո՞վ կարող էր երևակայել, թե այս հազվագյուտ տաղանդն իր ստեղծագործական փթթումի պահին պիտի թողնի մեզ... այսպես վաղաժամ:

Հիշում եմ, երբ ճանապարհ էի դնում նրան Ախալքալաք, թոչնոդ տրուկայի միջից ձայնեց.— «Ավո ջան, խոստումդ կատարիր, ձմեռը Մոսկվա եկ: Սպասում եմք»:

1911 թվի ամառը Ռուսաստանից փախա Թուրքիա: Կ. Պոլսից նամակագրության մեջ էի Վահանի հետ: Այնտեղ էր, որ ստացա իր բանաստեղծությունների նոր լույս տեսած հատորը մի նամակի հետ, ուր գրում էր, որ նշեմ իմ հավանած բանաստեղծությունները: Անմիջապես պատասխանեցի, և որքան հիշում եմ, այդ նամակի մեջ գրեցի թե՛ «Հիմա, սիրելի Վահան, քո հազարն է» (քո շրջանը, ժամանակը):

Նույնպես Կ. Պոլսում, Վահանից ստացա թարգմանական պատվեր, դրամ և նոր ոուսական հետաքրքրական գրքեր: «Գարուն» արձանախի համար թարգմանեցի Ա. Շնիցլերի «Լոյտընանտ Գոստըր» և հանձն առա թարգմանել Գյոթեից, Պուշկինից և Լերմոնտովից սրտիս ուզած գրվածքները:

Վահանը մի քանի ընկերների հետ ստեղծել էին հրատարակչական մի ֆոնդ, որ լույս պիտի ընծայեր համաշխարհային գրականության երկերից՝ հայերեն լեզվով:

Ես սիրով ձեռք զարկեցի թարգմանություններին, բայց իմպերիալիստական պատերազմը վրա հասավ և խորտակեց այնքան լավ գործ ու ձեռնարկ:

Պատերազմի առաջին տարիներին, ԺՆԱ, մի երկու ամսակ ստացա Վահանից: Վերջինը գրված է 1917 թվին, հունվար-փետրվար ամիսներին (ամսաթիվ չկա) Սուխումից: Նրա մեջ հավատք է հայտնում մեր շուտափույթ տեսակցության, գրում է իր չարաբաստիկ հիվանդության մասին, սակայն լավատես է, հույս ունի, որ հայրենի սարերը պիտի բուժեն իրեն, ուր ամառը պիտի գնա, այն բարձրագահ սարերը, ուր հովիվները կրակ են անում և ձայնում են իրար հին, հայրենի բարբառով, այն ազատ սարերը, ուր թռչում է անհայտին ավար իր գերի, տանջված հոգին... Ապա պայթեց ռուսական մեծ հեղափոխությունը և անծայրածիր Ռուսիան, կարծես ընկավ անհայտության մեջ՝ ոչ մի լուր, ոչ մի ստույգ տեղեկություն:

— «Ի՞նչ եղավ Վահանը»,— մտալլկանքի մեջ շարունակ հարցնում էի ինձ, և անփոփոխ տխրությամբ կրկնում էի անվերջ Վահանի զարմանալի գազելը՝ «Հրածեշտի երգը»: Չարագուշակ տեսիլ էր այդ աննախընթաց գեղեցիկ գազելը:

1919 թվի ընթացքում, հատուկոր, հակասական լուրեր լսեցի Վահանի մասին, սակայն նորից հնարավորություն չունեի կապ հաստատել նրա հետ, որովհետև ամեն հարաբերություն խզված էր Մոսկվայի և ԺՆԱի միջև:

Բայց մի օր, մարտ ամսի մի ցուրտ, միգամած առավոտ, 1920 թվին, ԺՆԱնում կարդացի Կ. Պոլսի մի թերթի մեջ զարևոտելի բոթը... Օրենքուրգում երիտասարդ Վահան Տերյանը...

Սիրտս փղձկաց, և օրերով խորին տխրության մեջ տվայտում էի ես:

ՇՈՒԹԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ

Եթե չեմ սխալվում, մենք ծանոթացել ենք 1893 թվին:

Նիհար, բարձրահասակ, խոհուն, գեղեցիկ աչքերով աղջիկ, մոտ 16 տարեկան, սովորում էր գիմնազիայում:

Ամառները Արդուոյան դպրոցի դահլիճում հավաքվում էինք պատանիներ— տղա և աղջիկ, երգում էինք, պարում:

Հիշում եմ, 1895 թվի աշնանը Արշակ Չիլինգարյանի հարսանիքն էր. կային գիմնազիայի աշակերտուհիներ, իրենց չքնաղ սրճագույն հագուստներով, որ ջահելներին համար բանաստեղծական գեղեցիկ պատկեր էր, երագ:

Նա աղջիկների մեջ տիրական դիրք ուներ, լսում էին նրան:

Այդտեղ շատ մտերմացանք. ես նոր էի Եվրոպայից դարձել, իսկ նա գիմնազիան ավարտելու վրա էր: Ինձ հայտնեց, որ գրում է... Խոստացավ ցույց տալ, բայց չկատարեց իր խոստումը:

Նա լուրջ բնավորություն ուներ, ընթերցասեր էր, աչքի էր ընկնում ընկերուհիների մեջ իր զարգացմամբ:

Այնուհետև բաժանվեցինք:

1899-ին նա արդեն ամուսնացել էր իմ ընկերներից մեկի հետ՝ Արշակ Կուրղիճյան, որը թեև իր հոր պաճառական խանութում էր աշխատում, բայց գրականություն սիրող տղա էր:

Ես շուտ-շուտ հաճախում էի նրանց: Ծուշանիկը ցույց էր տալիս իր ուսանավորները. քրոջ պես լսում էր մե՞ծ եղբոր խորհուրդները:

Հետո տեղափոխվեցին Ռոստով Դոնի վրա: Արշակը խանութ էր բացել: Ծուշանիկը այդ շրջանից մի քանի անվակ գրեց ինձ, որոնցից մի երկուսը կան մոտս:

Ռոստովից անցնելիս, երբ գնում էի Եվրոպա կամ Մոսկովա-Պետերբուրգ, այցելում էի նրան: Այդ շրջանից ունեմ նըրա լուսանկարը: Տառապում էր խիստ հայրենասրտածությամբ: Այդ շրջանից ինձ նվիրել է երկու բանաստեղծություն:

1908 թ. լույս ընծայեց իր գիրքը՝ «Արշալույսի դողանցներ», որի մասին ես մեծ ջերմությամբ և սիրով գրախոսել եմ. չեմ հիշում՝ ո՞ր ամսագրում և ո՞ր թերթում:

Վերջին անգամ տեսա նրան 1907 թվի վերջերը, Ռոստովում, խանութի ետևը մի սենյակ կար, լուսամուտը՝ շատ վերևից, պատից:

Մի խորհրդավոր տպավորություն ունեցա Շուշանիկից: Ես երևաց որպես մի իսկական Սիրիլ, կախարդուհի, գուշակուհի, միհար, բարձրահասակ, ջղուտ, ֆուֆորային աչքերով, միանգամայն հեռու ընտանեկան հանգամանքներից: Սենյակը՝ խառնափնթոր, ոչ մի տնտեսուհու ձեռք՝ առարկաների վրա, տան մեջ. տունը գնում էր ինքնահոսով. ինքը կլանված էր միայն իր մտքերով, իր բանաստեղծություններով, իր երազներով— գրքե՛ր, գրքե՛ր, թերթեր...

Մեր ոչ մի գրողի, բացառությամբ հայր Ալիշանից և Մուրացանից, չեմ տեսել ուրիշ մեկին այդքան վերացած, ներանձնացած իր գաղափարների, իր մտքերի, իր պատկերների աշխարհում:

Ամուսնություն, ընտանիք նրա համար չէր, թեև խորունկ սիրող մայր էր և գիտեր, որ իր կոչումը այլ է և ցավագնորեն ապրում էր այդ ողբերգությունը...

Աչքիս առջևն է նա հիմա. կանգնել էր լուսամուտի առջև, որից իջնում էր լույսը նրա մազերի վրա. մազերը անխընամ սանրած, ոգևորված կարդում էր իր բանաստեղծությունները, որ կազմեցին «Արշալույսի դողանցները»:

Ես լարված, հուզված ապրում էի նրա պաթոսը, արհնաբը՛ն՝ նրա տառապանքը (հունարենն առումով):

Երբ վերջացրեց, մոտեցա նրան, համբուրեցի ձեռքը, և նա գրկեց ինձ, և հարազատների պես համբուրվեցիմք... արտասովում էր նա...

Մի խորունկ ցավ կա սրտիս մեջ, որ երբեք չի ամբքվի.

Եւ շատ տմարդի վարվեցի նրա հետ, որի արդարացումն եմ
փնտրում և չեմ գտնում:

Երբ 1926—27 թվին վերադարձա Երևան, լսեցի, որ Շու-
շանիկը հիվանդ է եւ արվարձանում է. կանչեց ինձ տեսնելու.
Եւ նոր եկած, սաստիկ կարոտած մեր երկրին, թափառում
էի գյուղերը ու սար-ձոր, քեֆեր, խնջույքներ և հետաձգում
էի գնալ մոտը, հետո եւ գրիպով ծանր հիվանդացա. այդ
ժամանակ նա վախճանվեց. ձմռան մի տխուր օր. մղկտում
էր սիրտս և կշտամբում էի ինձ. գլուխս առել էի ափերիս
մեջ, նայում էի նրա պատկերին, և նրա աչքերը քրոջ պէս
նայում էին ինձ, և չէին հանդիմանում ինձ. և գիտեմ, որ նա
ներում է ինձ, որովհետև սիրում էր ինձ՝ եղբոր պէս:

ՉԱՐԵՆՅԻ ՀԵՏ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ

Մեծատաղանդ բանաստեղծ Եղիշե Չարենցին առաջին անգամ ես տեսա Վենետիկում, 1924 թվականին: Չարենցը եկել էր Հայաստանից Եվրոպա ճանապարհորդելու: Ինձ մոտ եկավ նա Հոռոմից: Առաջին տպավորությունը, որ ստացա նրանից, փայլուն չէր: Վտիտ մարմին, կարճահասակ, բայց խոհական, խելացի աչքերով: Մնաց մի ամբողջ ամիս Վենետիկում, և մենք շատ և շատ խորին կերպով բարեկամացանք, մտերմացանք: Ամբողջ օրը միասին էինք: Առավոտը կանուխ գալիս էր հյուրանոցից, մնում էր մինչև ուշ գիշեր մեր տանը: Թափառում էինք հրաշալի Վենետիկում՝ ջրանցքներով, գոնդոլներով. գնում էինք ծովափ, հետո գնում էինք Մխիթարյանների վանքը՝ Սուրբ Ղազար:

Խոսում էինք անվերջ ամեն հարցերի մասին՝ գիտության, գրականության, փիլիսոփայության, հեղափոխության, բոլոր այն մեծ խնդիրների, որ կան, և փոքր խնդիրների նաև, որ հուզում են մարդկանց:

Վենետիկի հասարակությունը իր պարսպ ժամերը անց է կացնում աշխարհի մեջ ամենագեղեցիկ հրապարակի՝ Սուրբ Մարկոսի հրապարակի վրա: Մի կողմը Սուրբ Մարկոսի հրաշալի տաճարն է, մյուս երեք կողմերը թանգարաններն են, սրճարանները՝ բոլորն էլ մարմարակերտ պալատներ: Եղիշեի հետ էլ մենք անցկացնում էինք Սուրբ Մարկոսի հրապարակի զանազան սրճարաններում: Սուրբ Մարկոսի հրապարակը լեցուն էր աղավճիներով, որ կոչվում էին Սուրբ Մարկոսի աղավճիներ՝ հազարավոր, տասնյակ հազարավոր, և կառավարությունը կերակրում է նրանց: Հրապարակում ծախում են հունդեր, սիսեռներ՝ կերակրելու համար աղավճիներին: Հասարակությունը, մանավանդ տուրիստական հասարակությունը, շարունակ նկարվում էր՝ ափերում սիսեռներ բռնած: Աղավճիները գալիս, նստում են

կոցահարելու համար, և՛ ուսերի վրա, և՛ գլխարկների վրա: Ահա ես ու Չարենցն էլ նկարվեցինք Սուրբ Մարկոսի հրապարակի վրա՝ աղավճիների հետ միասին: Չարենցը բախտավոր եղավ, որ նրա վրա նստեցին 3—4 աղավճի, իսկ իմ ձեռքը մնաց դատարկ:

Չարենցը խոհուն, զարգացած, մեծ երուդիցիայի տեր անձնավորություն էր, անհանգիստ բնավորություն, ըմբոստ և եռուն: Բոլոր ազգերի գրականությունները գիտեր, լավ ճանաչում էր և մեծ ճաշակի տեր էր: Արդեն ես նրան ճանաչում էի նախքան նրա հետ ծանոթանալը: Ես կարդացել էի (Վեներտիկի վաճառում է հայկական ամեն մի հրատարակություն, ուր էլ որ լինի) Չարենցի երկհատորյակը, որ տպված էր Մոսկվայում 22 թվականին: Ինձ վրա մեծ տրպավորություն թողեցին նրա «Դանթեական ստաստելը» և «Տաղարանը», լիրիկական մի շարք բանաստեղծություններ, մանավանդ նրա հայրենասիրական բանաստեղծությունը՝ մեծ խորքով՝ «Ես իմ անուշ Հայաստանին»: Ինձ համար, առանց չափազանցության, բոլորովին օբյեկտիվ կերպով կասեմ, որ հայ տառերով, հայ բառերով այդպիսի բանաստեղծություն չի գրված՝ հայրենասիրության տեսակետից: Դա եզակի, աննախընթաց բան է: Նույնիսկ կարելի է ասել, որ եվրոպական, համաշխարհային գրականության հայրենասիրական ժանրի բանաստեղծություններ, այդպիսի թափով, այդպիսի ընդարձակ խորքով գրված բան՝ գոհե ես չեմ հիշում:

Պետք է ասեմ, որ Չարենցը Հոկտեմբերյան սոցիալիստական Էպոխայի ամենամեծ բանաստեղծն է հայ գրականության մեջ և նա բազմակողմանի կերպով ազդեց հայ գրականության վրա, մանավանդ ուրիշի, լեզվի, տաղաչափության, պոետիկայի կողմից:

Եղիշե Չարենցի կորուստը հավիտյան ողբալի է, և եթե նա ողջ մնար, դեռ ինչե՛ր կարող էր տալ: Համենայն դեպս, նա ինչ որ տվեց, դա մի անմահ կոթող է հայ գրականության մեջ:

Հարգանք նրա հիշատակին:

1957, սեպտեմբեր

ՍԱՐՅԱՆՆ ԱՍԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻՆՆ Է

Տասնյակ տարիներ Հայաստանից հեռու լինելով, ես շատ կարոտցել էի հայրենական սիրելի, հարազատ պեյզաժներից, սարին ու ձորին, գետերին ու դաշտերին, ժողովրդի կենցաղային պատկերներին:

Եվ շատ մեծ եղավ ուրախությունս, երբ 1924 թ. Մարտիրոս Սարյանը եկավ Վեներտիկ՝ միջազգային նկարչական ցուցահանդեսին մասնակցելու:

Մ. Սարյանի անունը լսել էի, բայց նրա վրձնի ոչ մի արտադրանքը տակալից չէի տեսել:

Սովետական պավիլիոնում ես նայում էի Մ. Սարյանի նկարներին, անհամբեր, մի նկարից մյուսին էի շտապում, նայում հափշտակված, ինքնամոռաց, երջանկացած.— իմ աչքերի առջև կարոտած Հայաստանն է՝ բանաստեղծորեն իրականացած: Ահա՛ հայրենիքի կապույտ երկինքը, լուսառատ մթնոլորտը, ահա՛ վեհապանծ Մասիսը իր կորյունի հետ՝ առյուծի պես նստած, գլուխը երկնքում, սպիտակ բաշերով: Ահա՛ Հայաստանի դաշտերը, ցորենի ոսկեցուլ արտերը, որ ծփում են, փայլուն գետերը, որ կարկաշում են, ճամփաների եզրերին կանգնած բարձրուղեշ բարդիները, ահա՛ խաղողի ողկույզները, մրգերը, վարդերը, երփներանգ ծաղիկներ, չքնաղ ծաղիկներ, որոնց բույրն առնում ես, իրապես առնում ես. իսկ ժայռի կատարից նարդ եղնիկը, նազելի եղնիկը՝ գոհար աչքերով, ապա նախածամանակներից եկած խորհրդավոր գոմեշը, որի հնամենի ձայնը կարոտով ուզում ես լսել, և այս բոլորը մեծատաղանդ նկարչի կախարդ վրձինով շունչ առած, կյանք ու ոգի առած:

Մ. Սարյանի արվեստը լավատես է, կենսուրախ՝ զարնանային թարմությամբ թաթափուն: Կյանքի սեր է զար-


թեցնում մեր մեջ նա, ապրեցնող է, բերկրանք հորդող: Արե-
վաբուխ է նրա արվեստը, նրա վրձինը հյուսված է արևի ճա-
ռագայթներից, ավելին՝ արևը ինքն է իր բոլոր արտահայ-
տություններով նրա նկարների մեջ, արևը, որ գույն է ու ե-
րանգ, որ ջերմություն է ու լույս, որոնցով կառուցված են նը-
րա գործերը:

Ես պավիլիոնում կանգնել էի Մ. Սարյանի նկարների
մոտ, ուզում էի լսել այցելողների կարծիքները, նրանց տը-
պախորությունների արտահայտությունները: Ես խոսում էի
ինքս ինձ հետ, — «Սարյանը Հայաստանի պեյզաժների, բր-
նուրյան, վառ երանգների երգիչն է, արդյոք ի՞նչ են զգալու
օտարները»: Ես հուզված էի և անվերջ կրկնում էի մտքիս
մեջ՝ «Հայաստանի երգիչն է, Հայաստանի երգիչն է...»: Ա-
հա մոտենում է երկու տիկիների հետ Վենետիկում բնակ-
վող գերմանացի անվանի նկարիչ Զիմելը: Կանգնեց Սար-
յանի նկարների առջև. «Ա՛յ, սա հետաքրքիր է, հետաքրքիր
գործեր են, թարմ է, նոր գեղեցկություն է ինձ համար, ու-
րույն կոլորիտ ունի. տեսնես ի՞նչ երկրից է...»: Ես մղվեցի
դեպի նա: «Արմենիա» — ասացի ես ներքին հպարտությամբ:
«Զե՞ր գործերն են», — հարցրեց տիկիներից մեկը:

«Ո՛չ, իմ ընկերոջն է՝ Մարտիրոս Սարյան», — պատաս-
խանեցի ես:

Նկարիչ Զիմելը մի անգամ էլ նայեց նկարներին և դար-
ձավ ինձ, ժպտալով. — «Ես սիրեցի ձեր Արմենիան»:

Մ. Սարյանի գործերը մեր նկարչական արվեստի հաղ-
թանակն են, մեր կուլտուրայի անթառամ զարդերը: Բայց
որ գլխավորն է, Սարյանը ազգային կոլորիտի նկարիչ է:
Նրա արվեստի արմատները սուզվում են մեր հին արվեստի
մեջ: Սակայն, երբ օտարը հիանում է մի ուրիշ ժողովրդի
արվեստով, հասկանում է, գնահատում և սիրում, ապա այդ
արվեստը անվիճելիորեն դառնում է համամարդկային, բո-
լորի սեփականությունը: Եվ ճշմարիտ ողին սա է՝ ազգային
արվեստի միջով դեպի համամարդկայինը: Մարտիրոս Սար-
յանի արվեստը բովանդակ աշխարհինն է, սիրելի է բոլորին:



ՄՈՂԿՈՒՐԳ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



УДК 62-50
А. А. КОЗЛОВ
И. И. СМОЛДИН



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԳԻՔՈՐԸ»

Հովհաննես Թումանյանի «Գիքորը» մի գեղարվեստական սիրուն պատմվածք է՝ պատանեկան հոգու տրագեդիա:

Երբ կարդում եք այս փոքրիկ պատմվածքը, ձեր սիրտը լցվում է մի թախիծով և երկար ժամանակ մնում եք կսկծեցուցիչ տպավորության տակ:

Մարդ զարմանում է, թե ինչպես այս նախկին պատմվածքը թաքցնում է իր մեջ այնքան լիրիզմ, այնքան անմիջական զգացմունք և այնքան իրական կյանք:

Ամենից շատ մեզ հիացնում է պատմվածքի լեզուն՝ այն բյուրեղային վճիտ ոճը, որ սակասում է մեր շատ գրողներին: Փակագծի մեջ ասենք, որ մեր գրողներից շատերը այն անգեղարվեստական ըմբռնումն ունեն, թե որքան ճապաղ, ձգձգված և ճոռոմ բառերով գրեն և որքան խրթին լինի գրքի վածքը, այնքան նա բարձր արժանիքներ կունենա, այնինչ ուրիշ հասակությունը և պարզությունը մտքի հասակությունն ու բյուրեղացումն է. պերճասանության դարն անցել է. նրանով կարելի է շքմեցնել անճաշակ ընթերցողներին միայն:

Հովհ. Թումանյանի լեզուն այնքան վճիտ է և, մինևույն ժամանակ, այնքան պատկերավոր՝ նման լեռնային վտակին, որի հատակում շողշողում են նախշուն ավազահատիկները: Ձեզ թվում է, որ դուք լսում եք խելոք երեխայի բերանից մի պատմվածք, որ անմիջապես, անպաճույճ բխում է նրա սրբուհից, բայց, ինչպես ֆրանսիացին ասում է, թե թոչունի քայլվածքից երևում է, որ նա թոչել գիտե, և այս միամիտ գրքի տողերից տեսնում եք, որ նրանց վրայից անցել է իսկական տաղանդի տիրական ձեռքը:

Ձեռք ուզում պատմել բովանդակությունը. մենք ցանկանում ենք, որ ամենքը, հասակավոր թե մանուկ ընթերցողը

(և իսկապէս, այս պատմվածքը ունի և այն արժանիքը, որ
նա թե՛ մեծերի և թե՛ փոքրերի համար է), ինքը կարդա և
տեսնի, թե ինչպէս խեղճ գյուղացի Համբոն իր երեխա Գի-
բորին բերում է անսիրտ քաղաքը, անվարձ հանձնում է մի
խանութպանի, որ վերջինս «մարդ» դարձնե Գիբորին, տես-
նի Գիբորի տառապանքն ու հյուծումը, ինչպէս անտեր մեռ-
նում է այդ բնության զավակը, հազարավորներից մեկը, և
ինչպէս Համբոն թաղում է որդուն, դառնում է գյուղ և «կռան
տակին տանում է Գիբորի շորերը, որ մերը լաց լինի վրե՛ն»:

Այս փոքր պատմվածքը Հովհ. Թումանյանի լավագույն
երկերի շարքն ենք դասում մենք վստահորեն:

Գրքույկը տպված է հարազատ միջավայրից վերցրած
շատ սիրուն և հաջող նկարներով, գունատիպ: Այսպիսի գե-
ղեցիկ հրատարակություն, եթե չեմ մեղանշում, առաջինն է
մեր մանկական գրականության մեջ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄՆ.ՆՅԱՆ

Համբույրով ու կարօտով նրա անմահ հիշատակին

Հեղեղի պես իջավ նա առասպելական Լոռու վայրենի լեռներից, բերելով իր հետ միամբողջ բնություն, հուռթի և բազմատարր, մի ամբողջ հինավուրց ժողովուրդ՝ իր տոհմիկ երգով ու խոսքով, հույզերով ու երևակայությամբ: Եվ ինչպես ստեղծող մեծ բնությունը՝ փռեց նա մեր հոգու առջև իսկական, անկեղծ բանաստեղծությունը:

Պղտոր էր սկզբում այս տարերային հեղեղը, բայց ժամանակի մեջ զտվելով ու մաքրվելով, բյուրեղացավ ու ոճավորվեց այն սքանչելի անմահ լեզուների և պոեմների մեջ, որ կազմում են մեր գրի անմահ փառքն ու գոհարակերտ բարձունքը, որից այն կողմ չի անցել մեր թոռիչքը:

Հովհաննեսը ծնվեց պատմական բնագավառում, մի հին ընտանիքից, որի նախահայրերը եղել են գյուղի պետեր, կտրին մարդիկ՝ կոհիվների մեջ եփված, Լոռվա ձորերի մեջ քաջ որսորդներ ու ասպետներ:

Նա աչքը բացեց մի մթնոլորտի մեջ, որ վիպական է, դյուցազնական, ամեն մի խորշը՝ ավանդական, ամեն մի քարի կտոր՝ խոսող հերոսական անցյալից:

Եվ շուրջը նրա մարդիկ, պատկառելի ծերեր, որ կարդացել են թե՛ մեր երկաթագիր մագաղաթները և թե՛ գիտեն հազարավոր գրույցներ անցած ժամանակներից, և իրենց ապրած օրերից, որոնց մեջ իրենք ևս բաժին ունեն իրենց իիզախ արկածներով: Հեքիաթի նման է գեղեցիկ Լոռին, Տաշիրի աշխարհը, կախարդանքի, հոմերական երկիր. անտան

ունի իր շահապետը, որ հսկում է եղնիկներին, այրերը լե-
ցուն են դներով ու չարքերով, գետերը՝ ջրի հարսնեղով, և
այս ամենը բաց աչքով տեսել է լոռեցին և, իբրև ականա-
տես, պատմել է մանուկ Հովհաննեսին:

Խենթ ու խելառ Դեբեդ գետի կամուրջի վրա նստում են
թափառական գուսանները և ուղևորներին պատմում են եր-
գով ու հեգելով մարդկանց ու դևերի կոնվները, քաջ հովիվ-
ների և թագավորի աղջիկների սիրային վեպերը...

Այսպիսով, վիպերգական աշխարհում մեծացավ Հովհան-
նեսը, և հանդես ելավ հոգին բռնկված հաչունի երկրի չըք-
նաղ տեսիլներով ու առասպելներով, և երևեցավ ինքը, որ-
պես մարմնացած վիպերգություն՝ իր կյանքով ու էությանմբ,
իր խորքով ու ձևով, որպես հին օրերի Գողթան գուսան՝
ոսկի բամբիռը ձեռին, նոր օրերի մեջ:

Եվ ինչպես հեքիաթական դարի ասպետ՝ իր ասպետա-
կան հասակով ու խոսքով կանգնեց հայության առջև, Կով-
կասի ժողովուրդների առջև:

Այլացեղ Կովկասն ու հալը ամբողջ իր բյուրեղ ձևերով
կաղապարված էր նրա մեջ. նա ինքը կենդանի ոճն էր բա-
նաստեղծական-հերոսական Կովկասի: Եվ մի՞թե կարելի է
երևակայել Կովկասը առանց Հովհաննեսի:

Մեծ էր նրա հմայքը ողջ Կովկասի մեջ. ամենից սիրած
մարդկանցից մեկն էր հայերիս մեջ, սիրված ու հարգված
ոռուներից, վրացիներից, թուրքերից: Ազգերի եղբայրացման
ոսկե օղակն էր նա կովկասյան ժողովուրդների միջև, և որ-
պես այդպիսին անմահ պիտի մնա նրա հոյակապ պատկե-
րը, որ պիտի ոգևորեն սերունդները դեպի վերջնական անթե-
րի համերաշխությունը:

Հովհաննեսին սիրող և ճանաչող հոգիների համար, լինի
մտերիմ ընկեր, բարեկամ, թե ծանոթ, ամենից առաջ խորա-
պես զգացվում է դառնությունը այս ահավոր կորստի, որպես
կորուստը մի մարդու, անզուգական մարդու, որ բոլորի սրբ-

տի մեջ էր ապրում և ուր գնում էր, ուրախության արև էր իր հետ տանում. լույս ու կյանք տվող և ապա կորուստը մեծագույն բանաստեղծի, որ համաշխարհային գրականության մեջ ի՛նչ ի՛ր փղոսկրե գահն ունի:

Նրա հանճարեղ խոսքերն ու իրեն հատուկ ձևերը, նրա սրախոսություններն ու առակները ամենի բերանումն էին և թև առած թռչում էին ամեն քաղաք ու ավան:

Երբ նա երևում էր հասարակական ժողովներում, հանդեսներում և մեծ ու փոքր խնջույքներում, բոլորի ուրախությունը բազմապատկվում էր, որովհետև նա պիտի լիներ նախագահն ու սեղանապետը, և հեղեղի պես թափվում էին նրա շողշողուն կատակներն ու սրամտությունները, որոնք իրենց նմանը երբեք չեն ունեցել, որոնք կրում էին իր հանճարի շնորհն ու գոհարը, իր անսպառ բանաստեղծության համն ու հոտը, հազար-հազար գույները:

Այդ հանդեսներն ու ժողովները դառնում էին գերագույն գեղեցիկ վայելք, խնջույքները դառնում էին ծափի ու բերկրանքի անմոռանալի քաղցր ժամեր: Եվ երջանիկ էին զգում իրենց մարդիկ, որ ներկա են եղել այդ խնջույքներին, և ամեն դասակարգի հայ բախտ էր համարում տեսնել Հովհաննեսին, լսել նրան: Եվ լսում էին նրան ու չէին հագեցնում նրանից:

Այդպիսի դյուրական մարդ էր նա իր առօրյա կյանքում: Եվ առօրյա Հովհաննեսը իր կյանքով, ոճով ու ձևով, իր խոսքով ու առակով դարեր պիտի ապրի Կովկասի հայի հիշողության մեջ և պիտի անցնի առասպելական մարդկանց շարքը:

Մեծ է մեր կորուստը, հայության սրտին զարկված այս մեծ ցավը, որ անուն չունի: Ընկճվում, ոչնչանում ես կույր ճակատագրի առջև, որ մի հարվածով փշրեց այս հսկա գեղեցկությունը իր հանճարի հորդ տարիների մեջ:

Անհուն կակիծ, անհուն մորմոք, անհուն հուսահատություն քայքայում է հոգիդ, երբ գիտակցում ես, թե նա այլևս... չկա: Չես կարող հավատալ, շրթներդ վրա չեն գա ասելու, թե նա մտել է... Եթե նա չկա այլևս այս աշխարհում, ապա

ուրեմն էլ ի՞նչ կա այս դատարկ, ամայի աշխարհում... Այն-
պես անիմատ է թվում աշխարհը, այնպես ունայնացում է
աչքիդ ամեն ինչ...

Բայց մի՞թե իսկապես մահ կա Հովհաննեսի համար: Այն
անկշռելի հարուստ ավանդը, որ նա թողեց, բավական է, որ
նա հավերժացած լինի. նրա համար մահ և մոռացություն
չկա: Եվ հավիտյան այս երկրիս վրա եկող ու գնացող հաշ
սերունդները պիտի կրկնեն նրա իմաստուն խոսքերը.

«Անց են կենում նորն ու հինը,
Գեղեցկություն, գանձ ու գահ,
Մահը մերն է, մենք՝ մահինը,
Մարդու գործերն են անմահ...»:

5 ապրիլի, 1923, Վենետիկ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄՍՍԵՀՅԱՆ

Հ. Մասեհյանը եզակի տեղ է գրավում հայ իրականության մեջ: Նրա բարձր դիրքը և հայրենասիրությունը, հեզաբարոյությունը հավակնություն չունի իր կյանքի մեջ: Տիրապետելով կատարելապես անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, արաբերեն, պարսկերեն, հայերեն լեզուներին— լեզու ասած դժվարին բանը նրա ձեռքում խաղալիք է դարձել:

Դեռ շա՛տ երիտասարդ հասակում, Թեհրանում, Նասրադին շահի սիրելի թարգմանիչն է եղել, անվերջ զեկուցումներով ներկայացել Իրանի վեհափառին՝ քաղաքական հարցերի մասին, թարգմանելով զանազան լեզուներով լույս տեսած գրքեր Պարսկաստանի մասին, պալատական թատերական ներկայացումների համար թարգմանելով Մոլիերի պիեսները— և այդ ամենը կարճ ժամանակի միջոցին:

Նրա այս լեզվական աննման ընդունակությանն ենք պարտական, որ նա կարողացել է հաղթահարել Ծեքսպիրին, որի լեզուն աշխարհի մեջ բոլոր հեղինակներից, բացի Ասուլածաշնչից, ամենաշատ բառ պարունակողն է:

Ավելի քան 30 տարի, գրեթե իր գիտակից կյանքի ողջ շրջանում Մասեհյանն իր բազմազբաղ պաշտոններին կից, անընդհատ զբաղվել է Ծեքսպիրի ուսումնասիրությամբ. մի զարմանալի տոկունություն, որ փառավոր կերպով վկայում է նրա հաստատուն նկարագիրը, մտավոր կյանքի սերը: Իր գրադարանը լեցուն է Ծեքսպիրի շուրջ եղած գրականությամբ, լուսաբանությամբ և զանազան լեզուների թարգմանություններով, մի հարուստ գրականություն, որ նա համբերանքով ու բարեխղճությամբ ուսումնասիրել է, շարունակ ձեռք բերելով նոր հետազոտություններ Ծեքսպիրի մասին:

Այս ամենը նկատի ունենալով, վստահ կարող ենք ասել,

որ Մասեհյանը ոչ միայն հայերիս մեջ միակ և առաջին շեքսպիրագետն է, այլև համաշխարհային մասշտաբով առաջնակարգ տեղ է գրավում, ինչպես այս ապացուցվեց Շեքսպիրի 300-ամյա հոբելյանական հանդեսին, երբ նա պատվով հրավիրվեց Լոնդոն:

Առաջին անգամ, սրանից մոտ 30 տարի առաջ, չույս տեսան՝ Թիֆլիս նրա «Համլետ», «Արքա Լիր», «Ռոմեո և Ջուլիետա» և ընդունվեց հրճվանքով, սակայն այդ թարգմանությունները ուղղակի փորձեր էին, նրանցից հետո է, որ Մասեհյանը կատարեց իր հաղթանակը: Նրա ներկա թարգմանությունները, իմ կարծիքով, անթերի են, կատարյալ, լավագույնը մենք չենք կարող ունենալ երկար ժամանակ, գուցե և ընդմիջո, որովհետև դյուրին բան չէ գոտեմարտի բռնվել անգլո-սաքսոն հանճարի հետ:

Շեքսպիրի ազդեցությունը անկշիռ է եղել գրականությունների վրա և այն գրականությունը, որ կարողացել է յուրացնել Շեքսպիրը՝ ընկել է իսկական, ստույգ ուղիի վրա՝ թափանցել մարդկային հոգու խճճված անտառի մեջ, լուսաբանելու համար կրքերի-զգացումների ծագումն ու ձևը, խորությունն ու էությունը. չէ՞ որ ողջ տիեզերքը ոչ այլ ինչ է, եթե ոչ մեր հոգին, կամ մեր հոգու սիմբոլը:

Այսպիսով, Շեքսպիրը իր բարերար ազդեցությունը պիտի անպատճառ ունենա մեր եթե ոչ ներկա, բայց գալիք գրականության վրա. մենք պիտի դեռ հասունանանք, բարձրանանք Շեքսպիրին հասկանալու, յուրացնելու, որ տանք մեր ուժերին համաձայն շեքսպիրներ:

Մասեհյանը ինձ գանգատվում էր, որ իր գրքերը հայերի մեջ գրեթե սպառում չունեն, և նույնիսկ սրան-նրան նվիրված գրքերը չեն կարդացվել: Հանցավորը մենք ենք, ոչ Շեքսպիրը և ո՛չ նրան վերաստեղծողը: Հանճարները նման են ուշ տաքացնող մեծ վառարանների, բայց որ մեկ տաքացնեն, այլևս մշտական են:

Դժբախտաբար ես չգիտեմ անգլերեն, որ կարողանայի թարգմանությունը բաղդատել բնագրի հետ ավելի ճիշտ կարծիք հայտնելու համար, սակայն տարիների մեջ ես համեմատել եմ նրանք գերմանական կլասիկ դարձած Շլեգել-

լի թարգմանության հետ և հիացել եմ հայ թարգմանության
կատարելության վրա:

Պրոֆ. Նիկ. Մառը, որ գիտականորեն գիտե հայերենը,
կարդալով Մասեհյանի թարգմանությունները, անվերապահ
զարմանք է հայտնել, թե Մասեհյանի շնորհիվ աշխարհա-
բար մանուկ հայերենը ի՞նչ ճոխության ու ճկունության է
հասել, որ անպակաս կերպով կարողացել է մի գծի վրա հա-
վասար կանգնել Շեքսպիրի լեզվին՝ մի փոքրիկ, տրորված
ազգի լեզու մի մեծ, քաղաքակրթված ազգի լեզվի ընկեր:

Ինչ կա սրանից ավելի պատվալոր մեզ համար:

1922—24 թ.թ. Վենետիկ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՅԻ «ՍԵՎ ՅԵԼԵՐԻ ՍԵՐՄՆԱՅԱՆԸ»

Բակունցը մեր արձակի ամենատաղանդավոր ներկայացուցիչն է:

Նրա ստեղծագործությունների վրա,— թեև որոշ չափով ազդված Կնուտ Համսունից և Մարսել Պրուստից,— անհատական կնիք է դրված. այնքան թարմ են և ինքնուրույն և զգացված ամեն մի պատկերն ու արտահայտությունը: Ձեղուն, խորունկ լիրիզմով տոգորված են նրա պատմվածքները, առանց ոտքի տակից կորցնելու իրականությունը: Եվ նրանց վրա ծփում է բնության մեծ Պանի հզոր շունչը:

Զարմանալի գեղարվեստական-օրգանական կերպով կատարված է նրա բանաստեղծության մեջ ենթակայականի և առարկայականի ներդաշնակ ձուլումը:

Հզոր է Ակսելի մեջ բնապաշտական (պանթեիստական) զգացությունը. նա ապրում է, զգում է հողը, տարերքը, եղբայրական մի բարությանը համակված է դեպի բույսերը, թռչունները, կենդանիները...

Հատկապես ինձ շատ սիրելի է Ակսելի աշխարհագրացումը: Այս ժողովածուի մեջ կան շատ մեծ վարպետությամբ ստեղծված պատմվածքներ: Գեղեցիկ են, շատ, «Սպիտակ ձին», «Ծիրանի փողը», «Միրհավը», «Սև ցելերի սերմնացանը», իսկ ամենագեղեցիկը «Բրուտի տղան» է: Այնպե՛ս նորք են հյուսված այս պատմվածքները, մանավանդ «Միրհավը», «Բրուտի տղան», այնպես նորք, կարծես հեքիաթ են, կարծես երազ են տեսնում. այնպես կախարդորեն հավում են իրար մեջ անցյալն ու ներկան, որ հուշը դառնում է ներկա և իրական, ներկան դառնում է երազ, սուտ, անդրաշխարհային...

Գիրքը տպված է ճոխ և գեղեցիկ:

Հեղինակի չափն անարհիշը (Հ. Կոջոյանը) զգացել է պատ-
մելիքների մթնոլորտը, որ լցված է հայրենի բնանկարնե-
րով:

Նույն բնապաշտիկ համագգացումով իրականացած են
Արա նկարները՝ լեռներ, ժայռեր, ծառեր, թռչուններ, ձիեր,
եզներ, ոչխարներ...

Փարիզ, 1934 թ., 3 նոյեմբերի

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆԻ ՄՍՀՎԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻՆ

Պուշկինն ազատատենչ, ըմբոստ ոգի էր՝ բռնկած իր ժամանակի ժողովրդասեր, հեղափոխական և առաջադեմ գաղափարներով, որով նա անհավասար պայքարի մեջ էր ցարական դեսպոտիզմի և ազնվականության դեմ, այն խավարամիտ, ռեակցիոներ դարի դեմ:

Իր զենքը իր հանճարեղ գրիչն էր, իր ձաղկիչ սատիրաները, իր հեղափոխական օդաները, իր թունոտ Էպիգրամները՝ ուղղած իր դաժան թշնամիներին, հանգիստ չէին տալիս Եվրոպայի ժանդարմ Նիկոլայ Պալկինին և նրա սինլքոր ազնրվականներին՝ կալվածատերերին, որոնց ծանր կրունկի տակ հեծում էր ու հյուծվում բազմամիլիոն և բազմազգ Ռուսաստանը: Պուշկինի այս բուռն գրվածքները թոչնոմ էին բերնեբերան մեծածավալ երկրի հասարակայնության ամենատարբեր խավերում և կործանիչ ու ստեղծարար գործ էին կատարում ժամանակի քաղաքական մտայնության և տրամադրությունների մեջ:

Պուշկինը ցարական ազնվապետական ռեժիմի մղձավանջն էր:

Հենց այս պատճառով ցարի և նրա ստոր կամարիլայի ինտրիգներին և դաժան վրեժխնդրությանը զոհ գնաց իր հանճարի ամենահասուն շրջանում:

Բայց ինչպես մարգարեացել էր նա՝ «Իր նվիրական քնարն անմահ մնաց»:

Եվ այսօր նրա անմահության առաջ միլիոնավոր գլուխներ խոնարհվում են խորին և սրտագին սիրով, և՛ հարգանքով, և՛ երախտագիտությամբ, թե՛ հսկա Միության մեջ և թե՛ Միությունից դուրս ամբողջ աշխարհում, որովհետև բոլոր կուլտու-

րական ժողովուրդների համար նրա անունն այնքան սիրելի է և բարձրացնող, ինչքան Դանթեի, Շեքսպիրի, Սերվանտեսի, Գյոթեի անունները:

Ո՛չ միայն այս ներամիտիման պահին է, որ մենք ապրում ենք Պուշկինին: Մենք բոլորս մեր մանկության օրերից մինչև մեր կյանքի վերջը կախարդված ենք նրա Ապոլոնյան հանճարով: Նա միշտ մեզ հետ է, միշտ ներկա՝ մեր հոգիների մեջ:

Երբ մենք մանուկ էինք, նրա ոսկի հեքիաթները թոցրել-տարել են մեզ երևակայության երջանկաբեր աշխարհները:

Երբ պատանի էինք, մեզ հաիշտակել է նրա սիրային չըբ-նաղ լիրիկան: Մեր երազն ու թախիծը խառնել ենք նրա երազին ու թախծին և նրա նվիրական ստվերի հետ թախտել ենք ոռուսական մեծ հայրենիքի քնարական դաշտերում, նրա հզոր գետերի ափերին, շառաչող անտառներում՝ աշնան ոսկի տերևաթափի տակ:

Մեր երիտասարդ տարիներում մեզ թևավորել է նրա ազատաբաղձ ոգին: Նրա խիզախ, մրրկաբաշ երգերը մղել են մեզ դեպի կոիվ, դեպի զոհաբերում...

Իսկ երբ ծերանում ենք, հակում ենք մեր գլուխը նրա վաղահաս իմաստության վրա, խորհում ենք մարդկանց և իրերի նրա խորունկ ճանաչողության մասին:

Պուշկինը Ռուսաստանի ազգային բանաստեղծն է, նրա հրաշունչ մարգարեն: Պուշկինը ոռու մեծ ժողովրդի հանճարն է:

Ժողովրդի հանճարը ծնվում է ժողովրդի թանձրության ճնշումից, ինչպես ադամանդը՝ քարածուխի ճնշումից: Եվ այդ ադամանդը ժողովրդի զգացմունքների, նրա տենչերի, երազների, նրա տառապանքների, նրա զայրույթների և կամքի խտացումն է և կոնկրետացումը:

Նրա մեջ արտացոլում են ժողովրդի աշխարհաըմբռնումը, նրա կենսազգացումը:

Հանճարը ժողովրդի ոգու դրսևորումն է, նրա համր ու թաքուն գիտակցության հայտնաբերումը՝ նրա ինքնագիտակցությունը, նրա իմաստուն խոսքը:

Ժողովրդական հանճարը գտավ և ժողովրդական ներ,

ժողովրդի հրաշագործ ոճը: Նա ընդհուպ մոտեցավ ռուս մեծ ժողովրդի կենդանի լեզվին: Նա հեռացավ իրենից առաջ կիրառվող գրական մեռած լեզվից՝ կեղծ կլասիկ, սեթևեթ, շինծու, փքուն լեզվից:

Մահացու հարված տվեց, խորտակեց այդ գրքաբույր, ճարտասանական, ժնգլիորական լեզվին: Ժողովրդական լեզվի անսպառ գանձարանից առավ նա իր լեզվի առաղձը, մաքրեց, մշակեց, ներդաշնակեց, բյուրեղացրեց և ստեղծեց իր անթերի արվեստի գործիքը՝ հակիրճ, պարզ, պատկերավոր, կենդանի, երաժշտական, մի հոյակապ լեզու, որով սնվեցին, կրթվեցին հետագա գրական հսկաները՝ Գոգոլ, Լերմոնտով, Տոլստոյ և այլն:

Այսպիսով, ռուս գրական լեզվի հիմնադրի փառքը պատկանում է Պուշկինին:

Պուշկինը հանդիսանում է նաև ռուս նոր գրականության հիմնադիրը գրական բոլոր սեռերի մեջ (լիրիկա, էպոս, թատերգություն, վեպ):

Անշուշտ, Պուշկինից առաջ եղած գրողները պատրաստեցին նրա գալուստը, եղան, մի տեսակ, նրա ենթահողը, բայց Պուշկինի երևումը եղավ ժխտումը նրանց գործի, ո՛չ թե նրանց սինթեզը:

Պուշկինը նոր հուն բացեց: Մոտենալով ռուս ժողովրդի անգիր բանահյուսությանը, ֆոլկլորին, նա մոտեցավ ռեալիզմին, որովհետև ժողովրդի արվեստը ռեալիզմն է ինքնին:

Ժողովրդից սովորեց նա ռեալիզմը, իրականության վերածումն արվեստի:

Նա գրականության դեկն ուղղեց ռոմանտիզմի կապույտ մշուշների և զգացական փոթորիկների միջով դեպի ճշմարիտ, իրական արվեստը:

Մոտեցավ ռուս ժողովրդի տարերքին՝ գյուղացիներին, աշխատավորներին, նրանց սրտին և կյանքին: Նոր ձևերով, նոր պատկերներով, ճշմարտությամբ վերարտադրեց նրանց ներաշխարհը փոթորկող ապրումները՝ նրանց տառապանքները, հոգսերը, նրանց զայրույթը, իղձերը, նրանց մաքառումները— այս ամենն իրականացած ռուսական հողի վրա, կենդանի պեյզաժների մեջ: Հատու էր նրա ռեալիզմի սուրը:

Նրա «Եղբայր ավագակները» մի հարվածով սպանեցին իտալական, իսպանական ասպետներին, այդ դեկորատիվ ավագակներին, որոնց չգործած քաջություններով ոգևորված էին նրա նախորդները:

Նրա ռեալիզմը դարձավ տիրական դպրոցը ռուս գրականության, ուր ուսան, հանդես եկան ապագայի մեծ ռեալիստ հեղինակները, որոնց վրա դրված է մշտապես Պուշկինի հրգոր և բարերար դրոշմը:

Անչափելի մեծ է Պուշկինի ազդեցությունը ռուսական բովանդակ կյանքի վրա:

Նրա ստեղծագործություններով դաստիարակվել են սերունդներ, ուսանել են գեղեցիկն ու ճշմարիտը:

Նրա տիպերը մտել են կյանքի մեջ, աֆորիզմները մասսաների սեփականությունն են դարձել. նրա երկերով ներշնչվել են ռուս մեծ երաժշտագետները՝ Գլինկան, Մուսորգսկին, Չայկովսկին... Եվ վերջապես նրա ազատաշունչ երգերով («Իաշույն», «Գյուղ», «Ներքող ազատության») ոգևորվել են դեկաբրիստները, որոնք ծառայան ժողովուրդների դահիճ, արյունարբու ցարիզմի դեմ: Նրա ազդեցությունը, ինչպես ասում է Բելինսկին, կվերանա միայն ռուսական լեզվի մահով:

Պուշկինը բոլոր ժամանակների մեծ հումանիստների առաջին շարքումն է— նրա սիրտը բաբախել է ամբողջ մարդկության համար: Նա ոգևորվել է ճնշված ժողովուրդների՝ հույների, սերբերի ազատագրման պայքարով: Նա խանդավառվել է իր դարի հեղափոխական գաղափարներով: Նա մարտնչել է իր դարի չարիքների դեմ:

Տառապող մարդկության ազատագրումը բռնակալություններից թշվառությունից՝ եղել է նրա երազանքը:

Հառաչադիմություն, լուսավորություն, երջանկություն բոլորի համար, անհատի ազատություն, զարգացում կուլտուրայի և տեխնիկայի, գիտության նվաճումները՝ ահա նրա իդեալը:

Այսպիսով, ռուսական մեծագույն ազգային բանաստեղծը պատկանում է նաև բովանդակ մարդկությանը, որովհետև մեծ արվեստն ազգայինի և համամարդկայինի սինթեզն է:

Եվ որովհետև նա արտահայտել է իր դարի առաջավոր տենչանքները, իդեալները, իբրև իր դարի հանճարեղ գա-վակը, նա դառնում է նաև բոլոր կուլտուրական աշխարհների բաղաբացին:

Մեր անձայրածիր հայրենիքի համար, որ կառուցում է սո-ցիալիզմը, որ կերտում է նոր աշխարհը և նոր, ընկեր-մարդը, մեր սոցիալիստական հայրենիքի համար Պուշկինը թանկա-զին է, հարազատ է և այժմեական:

Որովհետև նրա ոգին հնչում է մեր Հայոխայի հեղափոխա-կան ոգու հետ: Մեր Հայոխան հերոսացնող գաղափարները նրան բնավ օտար չեն:

Որովհետև Պուշկինը, խանդավառված լուսավորության դարի գաղափարներով և ֆրանսիական հեղափոխական վեհ նշանաբաններով— ազատություն, հավասարություն, եղբայ-րություն— իր վառ տեմպերամենտի բոլոր կրքով ատել է ցարական արսուլյուտիզմը, գյուղացու ճորտությունը, դրամի-չար իշխանությունը մարդու վրա («Ժլատ ասպետ», «Պիկո-վայա դամա») և իր հումանիստական ազատախոս բնարն այն «դաժան դարում փառաբանել է ազատությունը և գութն ընկածների հանդեպ»: Պայքարել է նա այդ ծանր ու դժնյա-չարիքների դեմ հանուն լավագույն ու լուսավոր ապագայի, և որի համար հալածվել է, արտրվել, չարչարվել:

Անմահ Պուշկինի մոռումեանտալ պոեզիան մեր աշխատա-վորությանը կտա ո՛չ միայն գեղարվեստի մաքուր վայելք և անհուն երջանկություն, այլև կզինի նրան լուսավորությամբ, պայծառությամբ, կենսուրախությամբ: Նրա հրեղեն պոեզիան կմղե մեզ նոր գոտեմարտերի, նորանոր նվաճումների, կօ-ծանդակի իսկական հումանիզմին, որ մենք իրականացած ենք տեսնում հաղթական սոցիալիզմի մեջ միայն:

Այս զուգադիպությամբ հիշում են Պուշկինի ծննդյան հարյուրամյակի տոնը: 1899 թվին էր, ցարական կառավա-րությունը Թիֆլիսում կազմեց հոբելյանական մի հանդես: Ներկա էր բյուրոկրատիան, չինովնիկներ, իշխաններ, գե-ներալներ՝ ոսկեվառ զգեստներով, մեծ վաճառականներ և ինտելիգենցիա:

Եղան կազդոննի, շարլոն ճառեր, Էսպես Պուշկինին վար-

կարեկող: Սակայն ժողովուրդը չկար այնտեղ, բանվոր աշխատավոր ժողովուրդը չկար. մասսան լուր չունեք այս բոլորից: Այնպես էր երևում, թե մասսան Պուշկինի համար և Պուշկինը մասսայի համար գոյություն չունեին:

Սակայն մարդկային հաշիվներն այս երկրի վրա է, որ մաքրվում են:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը՝ դեկավարված հանճարեղ Լենինով, փշրեց, փոշիացրեց ցարերի եղեռնագործ գահը, ֆեոդալական անարգ մնացորդները, կապիտալիզմի զարհուրելի լուծը: Ազատագրեց ոտնահարված ժողովուրդներին, ազատագրեց աշխատավորությունը դաժան կեղեքումներից, բերեց իսկական հավասարությունը և եղբայրությունը և երջանիկ կյանքը բոլորի համար: Լենինյան հոյակապ դարագլուխը դարագլուխ եղավ համատարած կրթության, զանգվածների գիտակցության վերելքին, ազատագրված ժողովուրդների կուլտուրաների անկաշկանդ զարգացման: Դարագլուխ եղավ սոցիալիստական անդրանիկ կուլտուրայի:

Եվ այս կրկնակի պատճառներով է, որ այսօր ցարիզմից և բուրժուազիայից արհամարհված մասսաները, իբրև հարազատ ժառանգները իրենց սիրելագույն բանաստեղծի, տեր դարձան նրա անսպառելի և մեծարժեք հարստությանը:

Եվ սոցիալիստական հայրենիքում անզուգական բանաստեղծը դրվեց իր բարձր գահի վրա, որին այլևս չեն կարող հասնել բունակալների, ժանդարմների և շահագործողների արյունոտ ձեռքերը:

Հիմա միայն կենսագործվեց հավերժական Պուշկինի մարգարեական շքեղ տեսիլքը:

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ԾՆՆԳՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ

1899 թվին Օդեսայի հսկա նավահանգստի ժխորի մեջ թափառելիս հանկարծ առջևս հպարտ կանգնեց մի բույակ՝ ինտելիգենտ դեմքով, և ձեռքը մեկնելով դեպի ինձ, ասաց.

— Ընորհեցե՛ք հանուն Մաքսիմ Գորկու:

Առաջին անգամն էմ լսում Մ. Գորկու անունը: «Արդյոք ի՞նչ նոր սուրբ է»,— մտածում էմ ես:

Հարցնում էմ նրան.— «Ո՞վ է Մաքսիմ Գորկին»:

— Նա մեր բանաստեղծն է, մեր ընկերը, մեր փիլիսոփան,— պատասխանում է նա:

Նույն օրը գնում էմ Գորկու պատմվածքների երկու հատորը և սկսում էմ կարդալ. հնարիշտակված կարդում էմ և նորից կարդում: Կարծես Գորկին ինձ համար էր գրել:

Թափառելու պոեզիան իմ սրտի սերն է:

... Մ. Գորկու հետ, նրա բույակների հետ թափառում էմ մեծ Ռուսաստանի լայնքն ու երկայնքը՝ Վոլգա, Սև ծովի ափերը, Մոլդավիա: Մանավանդ Վոլգան, անտուն, ընչազուրկ բույակների իսկական Մայր Վոլգան, որի լիաշունչ տափաստաններում, դարերի ընթացքին ապաստան են գտել Մոսկվայի ցարերի խստասիրտ օրենքներից, Պետերբուրգի ցարերի բռնություններից փախած ըմբոստ, ազատատենչ ոգիները, բոլոր նրանք, ովքեր փախել են հասարակության կաշկանդող պայմաններից, ֆեոդալների հարկերից, հարրստահարությունից: Վոլգան՝ ազատության, ընդվզումի էպիկական օրորանը, ուր շտապել են անասնձ կամքի հզոր երգերը, հերոսական արկածները, Ստենկա Ռազինը, Պուգաչովը...

Բոլոր բունտար, տարերային ոգիները, որոնք ուզում են կործանել մեշչանական-գյուղացիական աշխարհը, ուր չնչին

մարդիկ բանտարկված են իրենց խեղդուկ քաղաքների մեջ, ողորմելի խրճիթների մեջ, խճճված իրենց ստրկացնող աշխատանքների մեջ, իրենց «հոգեւայան հարստությունների» մեջ:

Ճղճիմ, արգահատելի աշխարհ, իսկ բույսակների շղթայագերծ աշխարհը՝ հակապատկերը բթամիտ, ինքնագոհ մեջանիզմի, սնապաշտ, նյութամոլ գյուղացիության: Երկուսն էլ օրենքով, սովորույթներով, ավանդություններով ապշացած ու կաշկանդված, իսկ բույսակը՝ ազատ թռչունի պես, մեծաշքեղ բնության ներշնչող գրկում, գետերի, հողմերի թափառական ընկեր, պայծառ աստղերի խորհող և երագող ընկեր, հեռավոր հորիզոնների սիրահար: Պիտի քանդել հին, ստրկական աշխարհը և շինել նորը՝ լայն ու ազատ բնության մեջ, հանդուգն, գեղեցիկ, երջանիկ մարդկանց ազատ աշխարհը:

Այս երկու հրապուրիչ, ազատաշունչ հատորները կարճ ժամանակի մեջ տիրեցին բովանդակ Ռուսաստանին, դարձան նրա հոգեկան մթնոլորտը, և մի երկու տարի հետո Գորկին այնպիսի հոշակ և փառք ստացավ, որի նմանը չի տեսել ոչ մի ոռու հեղինակ:

Ի՞նչ էր Մ. Գորկու հմայքի գաղտնիքը:

Անշուշտ և՛ նրա տաղանդը, և՛ նրա նոր հայտաբերած բույսակների աշխարհը, և՛ նրա թարմ, առույգ արվեստը, բայց գերազանցապես այն, որ նրա բողոքի, ըմբոստացման ոռմանտիկան համընկավ, ներդաշնակվեց հասարակության տրամադրությանը, հասարակության զգացումների և մտքերի գոյավիճակին:

Նա խոսում էր միլիոնների սրտից, միլիոնների տենչերից ու երագներից, միլիոնների լեզվով:

Անտարակույս, հանկարծակի, հանկատրաստից չէր Գորկու երևումը: Մի կողմից՝ ոռուական հոշակապ գեղարվեստական գրականությունը՝ բացառապես հումանիստ, ժողովրդասեր գրականությունը ողջ Եվրոպայում, և մյուս կողմից՝ ոռուական փառապանծ հրապարակախոսությունը և քննադատությունը, որ դարավոր պայքարի մեջ ցարիզմի և ճորտության դեմ՝ պատրաստել էին կովի մի ողջ արսեճալ. այդ երկու հոգեկան մեծ ազդակները առաջ բերին Գորկուն:

Անցել էր 80-ական թվականների ռեակցիան: Ռուսաստանում հեղափոխական ահագին պայթուցիկ կյոթ էր խոսացել: Ռուսաստանը քաղաքականապես, տնտեսապես և մտավորապես հասունացել էր ներքոժ, մեծածավալ գոտեմարտի՝ ցարիզմի ու երիտասարդ ռուս կապիտալի հետ, նրանց փլատակների վրա բարձրացնելու ազատ, երջանկացնող մի նոր իրավակարգ:

Երիտասարդ ռուսական պրոլետարիատի գրոհի և փոթորկի ահեղ շրջանն էր ծայր առնում: Այստեղ էր, որ 1900—1901 թվերից պրոլետարիատը հանեց Գորկուն լումպենների անիշխանական-բունտարական գաղափարախոսությունից, բաշեց դեպի իրեն, զինվորագրեց իր նպատակներին և պայքարին: Դարձրեց նրան մոտալուտ մրրիկի նախագուշակ, մարգարեական մրրկահավը:

Պրոլետարիատը կապեց Գորկուն հեղափոխական սոցիալ-դեմոկրատիային, կապեց «Իսկրա» թերթի հետ, որի ղեկավարն էր հեղափոխության մեծ նարտարապետ հանճարեղ **Լենինը**: Այս բախտորոշ հարաբերությունների շնորհիվ էր, որ Գորկին ամբողջապես ներգրավվեց սոցիալիզմի մեջ, հասկացավ, որ իր բույակներով չի կարելի փոխել, վերակառուցել աշխարհը: Հասկացավ, որ պրոլետարիատին է պատմականորեն տրված այդ մեծ դերը: Կապիտալիզմի գերեզմանափորը պրոլետարիատն է, իրական արժեքները ստեղծողը, և պրոլետարիատը իրեն ազատագրելով ստրկությունից, կազատագրի նաև ողջ մարդկությունը:

Այս գաղափարաբանական ամուր պատվանդանի վրա կանգնեց Մ. Գորկին և դարձավ այն, ինչ ուզում էր պրոլետարիատը, որ դառնա նա: Այս պատվանդանի վրա կանգնելով, բարձրացավ նա և դարձավ պրոլետարական գրականության հիմնադիրը, համաշխարհային պրոլետարիատի տանջանքների, պայքարի երգիչը, սոցիալիզմի մունետիկը:

Մ. Գորկու արվեստը դարձավ սոցիալիզմի արվեստը:

Որպես ռոմանտիկ, նա պրոլետարիատի և ամբողջ աշխարհի աչքերի առաջ հայելացրեց ապագա սոցիալիստական երջանիկ աշխարհը, ազատ, արդար և մարդկային բարձր կոչման վայել նոր կյանքը: Եվ որպես ռեալիստ, ցուցադրում

Էր գեղարվեստական ճշմարտությամբ կապիտալիստական լծի՝ բոլոր լծերից ծանրագույնի չարիքները, դրամի անբարոյացնող իշխանությունը, աշխատավորների տառապալից վիճակը, ստեղծագործ ուժերի հյուծումը՝ ախտերի, ցրտի, քաղցի, կարիքի ճիրաններում:

Նա ամբողջական մարդ էր. նրա խոսքն ու գործը միաձույլ էին: Քարոզող էր և գործող, գրող էր և մարտնչող: Իսկական ինտերնացիոնալիստ էր, սիրող և հարգող բոլոր ժողովուրդներին՝ լինեն մեծ կամ փոքր: Մեծ մարդասեր էր. իր անձի վրա զգալով ցուրտը, քաղցը, կարիքը, հուսահատությունը, իր բոլոր էությանը ցանկանում էր և իր կյանքն ու տաղանդը ի սպաս դնում, որ վերանան երկրի վրալից ամեն կարգի թշվառությունները, և բոլորի համար ծաղկեն ուրախություն, երջանկություն, գոհ և ազատ կյանք: Ատում էր տանջանքը, ցավը, բռնությունը, ստրկությունը: Մ. Գորկու հոյակապ գործը Դանկոյի սրտի պես պիտի բոցավառե և խանդավառե իր արյունով և սիրով բոլոր մարտնչողներին և պիտի լուսավորե նրանց պայքարի ուղին վերջնական հաղթանակի համար, կոմունիզմի համար, որը պատմական-տրամաբանական երկաթե օրենքով պիտի գա և պիտի առնի իր փրկարար լույսերի մեջ ողջ երկրագունդը:

ՀԱՆԳԻՊՈՒՄ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՀԵՏ

Մ. Գորկին 1928 թվականի հուլիսին Երևան եկավ: Այն ժամանակ Խորհրդային Միությունը տոնում էր նրա ծննդյան վաթսունամյա տարեդարձը, և Հայաստանի աշխատավորությունն էլ կամեցավ իր հին բարեկամին ունենալ իր մոտ և պատվել նրան իր հարկի տակ:

Ես Մ. Գորկուն տեսել էի տարիներ առաջ, Իտալիայում: Գրեթե չէր փոխված այն օրից ի վեր. միայն բարձր հասակը ավելի կոացել էր:

Երբ ինձ ներկայացրին նրան, ասաց.— Անունով ճանաչում եմ ձեզ: Իմ ժողովածուի¹ մեջ գետեղել եմ ձեր բանաստեղծություններից: Ա. Բլոկը, Վ. Բրյուսովը շատ էին սիրում ձեզ: Ի դեպ՝ հանճարեղ Թումանյանը գրել է «Քաջ Նազար» հեքիաթը. նույնը՝ ընկեր Դեմիրճյանը և Դուր: Ծատ եմ հետաքրքրվում Ձեր այդ հեքիաթով. մարդկային մտքի հանճարեղ ստեղծագործություններից մեկն է, խնդրում եմ ձեր վերսիան ինձ տաք... Ես էլ մտածում եմ... Գիտեք, ոռուներս էլ ունենք այդ հեքիաթի տարրերը...

Բանվորների, ուսանողների, աշակերտների, կոմերիտականների հոծ բազմությունը «կեցցե»-ներով, խանդավառ ցույցերով ուղեկցում էր Մ. Գորկուն, երբ նրան տանում էինք հիմնարկությունից հիմնարկություն, համալսարան, թանգարան, գրադարան, գործարան, ցույց էինք տալիս Երևանի հինն ու նորը: Հետաքրքրությամբ դիտում էր, հարցուփորձ անում, ուշադիր լսում, նոթեր անում տետրակի մեջ և իր գոհունակությունը կարճ, կտրուկ խոսքերով հայտաբերում:

1. Խոսքը վերաբերում է 1916 թ. Մ. Գորկու խմբագրությամբ լույս տեսած «Сборник армянской литературы» ժողովածուին:

Բայց չեմ մոռանում մի բան: Մ. Գորկին այս թախտումների ընթացքին իր խոհուն, աշխարհ, մարդիկ և պատմություն տեսած հայացքը գրեթե չէր հեռացնում Արարատից: Հափըշտակված նայում էր կապույտ անհունի մեջ սուզված նրա գագաթին, որ իր հավերժական ձյուները անսպասելիորեն բոցավառել էր ամառվա արևի տակ: Գորկին իր ներքին տրամախոտությանը պատասխանում էր անընդհատ, բթի տակ մրմնջալով. «Այո՛, հոյակապ է... նմանը չկա... հրաշալի է...»:

Երեկոյան Մ. Գորկու պատվին հանդես եղավ Կոստուրաների այգում, մեր պայծառ երկնքի փարթառ աստղերի տակ: Լուսավորված այգում ասեղ ձգելու տեղ չկար: Մեծ գրագետին և մեծ պաշարողին պատշաճ ողջուններից հետո տեղի ունեցան երգեր և պարեր: Մ. Գորկին հոգնած էր և տաղտուկով, ցրված ուշադրությամբ, քաղաքավարությունից դրդված, ճիգ էր անում հետևելու եվրոպական և ռուսական երգերին, երաժշտական կտորներին:

... Մ. Գորկու համար նորություն չկար, ակներև ձանձրանում էր նա:

Երբ հնչեցին հայ գյուղացու աշխատանքի և սիրո երգերը, կենդանացավ Մ. Գորկին, աչքերը փայլեցին, ծպտում էր և գլխով հավանություն տալիս... Երբ սկսեցին պարերը, Գորկին խանդավառվեց, երբ ազգային տարազի մեջ շատախցիների վայրագ և տարերային, լեռնաշունչ պարը մրրիկի պես դոփեց և խելահեղ պտույտ եկավ և փոթորկեց բեմը, Մ. Գորկին ոգևորված, ընդոստ ոտքի կանգնեց... Հազարավոր հանդիսականների հայացքը բևեռվեց Գորկու բարձր և հսկա հասակի վրա: Նա երկար ձեռքերը տարածեց դեպի բեմը, ծափեց, անվերջ կրկնելով. «Ա՛յո, ա՛յո, ա՛յո, ա՛յո», և խնդրեց կրկնել: Հասարակությունը խանդաբորբոք ծափահարում էր Մ. Գորկուն՝ «կեցցե՛»-ներ որոտալով...

Այգին ցնծում էր ուրախությամբ և ոգևորությամբ:

Այդ օրը իրավամբ Մ. Գորկու 60-ամյակի հետ միասին տոնվեց և փառաբանվեց հայ գեղջուկի դարավոր արվեստը, որ այնպես անկեղծորեն խանդավառեց և համակեց մեծ արվեստագետին:

Գիշերը հայտնի գրողները բանկետ տվին Մ. Գորկուն։ Խնդրեցինք, որ նա իր հայացքները հայտնի պրոլետարական գրականության, արվեստի, առհասարակ, պրոլետարական մշակույթի պրոբլեմների մասին։

Նա զգացված խոսքերով իր հիացմունքի տուրքը տալով հայ ժողովրդական արվեստին, հայտնեց, որ ինքը հոետոր չէ, բացի այդ հոգնած է, անկարող է ճառ ասել և խնդրեց գրույցի ձև տալ այդ պրոբլեմների լուսաբանմանը և հարցեր առաջարկել։

Նրա մտածված պատասխաններից անթերի երևում էր, որ նա՝ դպրոց և համալսարան չտեսած այս մարդը, միայն ինքնուրույնությամբ զարգացած և իր ջանքերով իրեն մշակած այս մեծ արվեստագետը քաջ, հմուտ է արվեստի և մշակույթի պրոբլեմների փիլիսոփայական խորքին։

Հիշում եմ նրա բանաձևը պրոլետարական մշակույթի մասին։ Պրոլետարական մշակույթը պիտի լինի այսուհետև բոլոր նոր մարդկության համար, բոլոր գալիք դարերի համար հաստատուն, ամուր հիմքը։ Այդ մշակույթը իրեն լրացնելու, զարգացնելու, ճոխացնելու համար, որպեսզի դառնա համամարդկային ու համայնապարփակ, պիտի օգտվի բոլոր նախընթաց մշակույթներից, ավատական, բուրժուական մշակույթներից, գեղարվեստի բոլոր մարզերի մեջ՝ լինի բանաստեղծություն, երաժշտություն, պար, նկարչություն, քանդակագործություն, ճարտարապետություն։

Խորհրդային Միությունը բաղադրող ազգերը, ժողովուրդները, մեծ կամ փոքր՝ միևնույն է, պիտի կանգնեն պրոլետարական մշակույթի վրա՝ պահելով ազգային հին մշակույթի գույնն ու համը, ձևն ու ոճը։ Այս երեկո անմոռանալի հաճույքն ունեցա վայելելու ձեր հին մշակույթից մի չքնաղ պահ. այդ ինձ համար մինչև այսօր անծանոթ մշակույթը հուզեց, խանդավառեց ինձ, ապրեցրեց, երազել տվեց, համակեց, որովհետև նրա խորքը մարդկային էր— աշխատանք, սեր, վիշտ, տենչանք. բայց այդ ամենը հայկական զգեստ հագած, հայկական ձև ու ոճ, որ գեղեցիկ էր, ինքնուրույն... Եվ երևակայում եմ, թե այդ ինչքան հաճելի, խենթ թացնող ուժ ունի հայ ժողովրդի համար։ Պրոլետարիատի

հոգուն հարազատ ձևով, ոճով, լեզվով, գույներով պիտի կա-
ռուցանել նրա աշխարհը, աշխատավոր մարդկությունը, նոր
մարդը...

Ես մի քանի մեջ համոզված եմ, ընկերներ, և դրա համար
պայքարում եմ, քանի ողջ եմ— կոմունիզմը չի վերածում
մարդկությանը մի ստանդարտ հոտի, դիմագուրկ, կուշտ
բազմության, կազմակերպված մարդ-մեքենայի, այլ նա է, որ
պիտի ազատե մարդուն մեքենայի ճիրաններից, հացի գերու-
թյունից, ներկա բուրժուական գործարանների մեջ դիմա-
գուրկ դարձած հոտային բանվորությունից. նա է, որ պիտի
ստեղծե նոր մարդը, ազատ, անկաշկանդ անհատը, բարձր
անհատականությունը... Թշնամիների խոսքին մի հավատա-
ցեք: Ապրեցեք, գրեցեք, ստեղծագործեք այս մեծ իդեալի
համար, մարդու ազատագրման համար: Ազատ մարդը աստ-
ված է:

Նույն խանդավառությամբ, ինչպես ընդունել էինք, ճա-
նապարհ դրինք մեր մեծ բարեկամին և ընկերոջը մինչև Հա-
յաստանի սահմանները: Նա բաժանվեց Հայաստանից՝
տանելով իր հոգում Արարատի հոշակապ տեսիլը և սեր ու
համակրանքը դեպի մեր աշխատավոր և գորեղ ժողովուրդը:

ՓՈՐՁ ՄԵՐ Է ԳՈՍԻ ԳԻՅԱՒԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մեր բազմաբովանդակ դյուցազնավեպը իր վարիանտներով, ինչպես հայտնի է, գրի է առնված 9-րդ դարի վերջին քառորդից սկսած, անմիջապես ժողովրդի ասացողների բերանից:

Մեր վեպը դարեր ու դարեր պատմել են ու երգել մեր ումիկ ասացողներն ու գուսանները, ավանդելով սերնդե սերունդ և հասցրել են մինչև մեր ժամանակները: Գրական մշակումի չի ենթարկվել նա, գրական միջամտություն չի ունեցել լիվրեսկ ոչ մի կնիք չի կրել նա, որպիսին եղել են հունական էպոսը, «Ծահ-Նամեն», «Նիբելունգների երգը»:

Մեր վեպը լեռներից բխող աղբյուրի պես անարատ և անխոռով հասել է մեզ— այս թանկագին գանձը:

Մեր վեպը, այսպիսով, բացառապես ժողովրդական ստեղծագործության արդյունք է: Այս տեսակետից եզակի նշանակություն ունի նա և ուսումնասիրությունների համար՝ անչափելի արժեք:

Մեր ժողովուրդը հայ պատմագիրներից անկախ բանահյուսել է իր բազմադարյան գոյության և լինելության պատմությունը— այս վիպերգանքը:

Երբ նայում ենք այդ պատմության վրա, մեր առջև ծավալվում է մի մեծ աշխարհ, որի սահմանները կորչում են անհիշատակ դարերի մշուշի մեջ, ժամանակների սկզբների, դիցաբանության և հեթանոսության դարաշրջանների մեջ...

Ինչքան բազմաթիվ և բազմատեսակ տարրեր կան այդ բարդ վեպի մեջ— անիմաստական և տոտեմական աշխարհաըմբռնման խորունկ հետքեր, կոսմիկական ուժերի՝ բնության տարերքի աստվածացում և անձնավորում, աստվածների մարդեղացում և մարդկանց հերոսացում և աստվածա-

ցում: Նաև քրիստոնեական աշխարհայացքի և մորալի ոչ նվազ ազդեցություն: Նաև հայկական հնագույն պատմության մեծ անցքերի հիշատակներ: Եվ, վերջապես, բանաստեղծական-վիպական վերարտադրությունը միջին դարերի (7—10-րդ) պատմական ռեալ դեմքերի և դեպքերի:

Ժողովուրդն ինչպե՞ս է ստեղծել այս վեպը:

Նա՛ դարերի մեծ բանաստեղծը, իր անսանձ երևակայությամբ, խորտակելով ժամանակագրական և աշխարհագրական բոլոր սահմանները, իր ստեղծագործական բուրայի մեջ լցրել է իր հին ու նոր աստվածներին, իր հին ու նոր հավատալիքները. իր հին ու նոր հերոսներին, իր հին ու նոր պատմական հուշերը, նաև էպիկական ընդհանուր մոտիվները և ազգային առանձնահատուկ առասպելները և խառնել է բոլորը ի մի ու ձուլել է նրանցից իր հանճարեղ պատմությունը, միաժամանակ իր բարոյական հայացքները, իր բաղձանքները և հավատը լավագույն ապագայի համար՝ իր բովանդակ հոգին:

Կարծես ժողովուրդը կործանել է իր հերթանոսական մեհյանները և քրիստոնեական տաճարները և նրանց քարերից նոր շաղախով բարձրացրել է իր մոնումենտալ նոր շենքը— Մհերին՝ մարգարեական լուսապսակով զարդարված:

Համաշխարհային բոլոր մեծ էպոսների մեջ հերոսների ճնողները աստվածներն են, այսինքն, միֆիկ շրջանի մարդկանց աշխարհայացքի համաձայն կոսմիկ ուժերի աստվածացումներ և անձնավորումներ: Աստվածացած և անձնավորված են հողն ու ջուրը, հողմն ու ամպրոպը, երկինքն ու նրա լուսատուները՝ աստղեր, արեգակ, լուսին:

Սկսենք Սանասարի մորից: Մեր հերոսների նախամայրը՝ Ծովլյալ խաթունը կամ Ծովինարը, ջրային տարերքի՝ ծովի անձնավորումն է: Ֆիլոլոգները բացատրում են Ծովինար անունը, որ նշանակում է «Ծովի հարս», Ծովանուշ: Երաշտ եղանակներին գյուղերում պատանհների պտոցրած անձրեվաքեր տիկինը— խրտովիլակը կոչվում է «Նուրի, նուրին»: Քրդերը այդ խրտովիլակն անվանում են «Բուկա բարանե», որ նշանակում է «հարս անձրևի»: Ժողովուրդը փայլակն անվանում է Ծովինար: Այս ամենքն էլ ջրային տարերքի հետ բաց-

որոշ առնչություն ունեն և գալիս են, անշուշտ, խոր հնու-
թյունից:

Գիտենք, որ Սանասարը ծնվել է Ծովհնարից և ջրից:

Ջուրը (ծովը) բնության մեջ ամենաընդարձակ, անեզր և
հզոր տարերքն է. նա միշտ ըստ հին կոսմոլոգիայի, շրջապա-
տում է ցամաքը, հողը և միանում երկնքին, երկնային ծովին:
Միշտ ընդունվում էր երկու ծով՝ երկրային և երկնային՝ իրար
միացած: Խորհրդավոր է ծովը՝ անպարփակելի, անպարտե-
լի: Արևը նրա միջից է ելնում և նրա մեջ սուզվում: Ամպրույզ,
ահեղ կայծակը նրա զայրույթի արտահայտություններն են.
նա կատաղում է, նա որոտում է: Ահավոր աստված է նա:

Սանասարը այդ ահեղ տարերքի զավակն է, Ծովաստծու
որդին:

Ասացինք, որ էպոսների հերոսները աստծու որդիներն
են՝ դյուցազներ:

Ասոր-Բաբելոնի Գիլգամեշի մայրը Իշտար աստվածուհու
զավակն է: Հնդկական Մահաբարատայի հերոսները դյու-
ցազներ են, ինչպես և հունական էպոսի հերոսները, Նիբե-
լունգների Ջիգֆրիդը Վոթան աստծու թոռն է, օսերի դյու-
ցազն Ամրանը Խուցաու աստծու ազգականն է, և վերջապես
մոնղոլական էպոսի Օղուզը, որից բոլոր թուրք ցեղերը իրենց
էթնիկ անունն են առել, ծնվել է աստվածուհի լուսնյակից:

Մեր ժողովուրդը քրիստոնեական իր նոր կրոնից (աստ-
վածաշնչից) վերցրել է Ասորեստանի արքայազուն Սանա-
սարին, դարձրել է նրան իր էպոնիմը Հայկի փոխարեն և,
համաձայն իր հեթանոսական-դիցաբանական ըմբռնման,
տվել է կոսմիկական ծագում, դյուցազնացրել է նրան:

Սանասարը լցված է աստվածային ծովի հզորությամբ, և
նրա սերունդը՝ որդիներն ու թոռները ժառանգել են աստվա-
ծային տարերքի ուժը և դարձել են անպարտելի, ամպրուպա-
յին դյուցազներ, հրեղեններ:

Անշուշտ, ժողովուրդը իր հին աստծուն՝ ծովային-ամպ-
րուպային Վահագնին նոր անվան տակ է վերականգնեցրել,
և նույնությունը անթերի լինելու համար, նրան՝ Սանասարին
էլ է դարձրել վիշապաբաղ, ինչպես իր նախատիպարը
սպանում է վիշապ Ածդահակին և իր քրոջն ազատում, այն-

պէս էլ Սանասարը սպանելով Կանաչ քաղաքի վիշապին՝ մահվան դատապարտված աղջկան ազատում է նրա ձեռքից:

Բացի այդ Սանասարի կովի մէջ՝ ընդդէմ վիշապի, մարմնացած է ավելի հին գաղափար՝ մարդկային ճիգը բնության անզուսպ ուժերը ենթարկելու մարդկության բարօրության համար: Ինչպէս ֆիննական «Կալևալայի» հերոսները կովում են բնության տարերքի դէմ և ընկնում դրանց ժողովրդի բարիքի համար, նույնպէս էլ Սանասարը, սպանելով վիշապին, կորզում է ջուրը, այդ անհրաժեշտությունը մարդկային գոյության համար:

Դյուցազների ջրային ծնունդ լինելու միջը ուրիշ ժողովուրդների դիցաբանության մէջ հաճախակի երևույթ է:

Հնդկական դիցաբանության մէջ Ինդրայը, Ինդրան և Ագնին, այս աստվածները ամպերի ծնունդ են, ջրածիններ, ատիաներ: Ինչպէս և հունական միֆոլոգիայի մէջ Օվկիանիդները, նաև մոնղոլների Էպոնիմ Օղուզը՝ հին Օքսուզ (Ներկա Ամուդարիա) գետի անձնավորումն է: Ավելորդ չի լինի հիշել, որ Օղուզի որդիներից մեկը կոչվում է Դեմիզ (Դեմզիզ ծով):

Օսերի Ամրան դյուցազնը հանձնվում է Ծովին: Ծովը նրան սնում է, հզորացնում, վերածնված վերադարձնում է նրա եղբայրներին: Ջրային տարերքի գորությունը այնքան զնահատված է եղել ժողովուրդների մէջ, որ Էպոսների բոլոր դյուցազները, աղբյուրների ջուրը խմելով կամ ավազաններում լողանալով՝ մեծանում են, աճում, հզորանում:

Ամպրոպային-ծովային ծագում ունի և Սանասարի (Ջոջանց տուն) անմահ ձին, Քուոկիկ-Չալային, կապուտակ ձի՝ Լրկնքի և ծովի գույնով:

Հին սոսապելաբանությամբ՝ հրեղեն ձիեր են ապրում ծովակների և լճերի մէջ: Ներկայումս էլ ժողովրդի հավատալիքով Հայաստանում կան լճեր (Խաչլվա լիճը, Չանդլվա լիճը և մեր մոտիկ Այդր լիճը), որոնք ունեն իրենց խորքում հրեղեն, թևավոր ձիեր, հրաշք-ձիեր:

Քուոկիկ-Չալային անան է Ալեքսանդր Մակեդոնացու սոսապելական Բուցեֆային, նրա պէս իմաստուն է, կանխատես և խոսում է մարդկային լեզվով:

Ամսարոսայիցն է նաև Թուր-Կայծակի ծագումը: Հին հասկացողությամբ՝ կայծակը և թուրը հոմանիշներ են, միևնույն նյութից են կուած— երկաթից: Կայծակը բաշում է երկաթին, երկաթը՝ կայծակին, իբրև հարազատներ:

Կայծակե թրի մեջ ապրում է այն առասպելը, որ իբրև թե երկաթը վար է ընկել երկնքից, ասուպի միջոցով գտված դրությամբ. մինչ այդ, մարդկանց ծանոթ չէր երկաթը, նա խառնված էր ուրիշ տարրերի հետ: Այդ դեպքից հետո մարդը ծանոթացել է երկաթի հետ և նրա մշակելու ձևն իմացել:

Օրինակի համար, հոների Աթթիլան, որին սովորաբար ձիավոր իմաստն են տալիս, Նիբելունգների մեջ կոչվում է Էտցել, իսկ հունգարների մոտ՝ Ակցել, որ ներկայումս էլ նշանակում է պողպատ: Եվ վերջապես Լեակ-Թեմուրի անունը նույն երկաթ բառն է¹:

Մեր էպոսի վարիանտներից մեկ-երկուսի մեջ կա կայծակե-թրի (կամ Հավլունի թրի) մասին մի լեգենդ: Դավիթը նախիրը արածելիս մի կտոր քար է վերցնում և նետում եզան վրա. քարը ծակում-անցնում է եզան մարմնի միջից: Ձենով-Հովանը, տեսնելով քարի այս հատկությունը, նրանից թուր է դարբնում, որից առաջանում է Թուր-Կայծակին կամ Թուր-Հավլունին (հավլունի բառը, ի միջի այլոց, պարսկերեն գորեղ կնշանակե):

Մման լեգենդ կա և «Բյորսոլու» պոեմայի մեջ, հերոսի թրի ծագման մասին: Այս թրերի ծագման մեջ կենդանի է ասուպային երկաթի լեգենդան:

Չմոռանամ ասել, որ երկաթը հայերիս մեջ էլ պաշտամունքի առարկա է՝ նա «չարխախան է»:

Դյուցազն Դավիթի մեջ լրիվ կերպով շոշափվում է հայ ժողովուրդը:

Դավիթը հայրենասեր է, ժողովրդասեր է, ուզմիկի և աշխատավորների պաշտպան, անձնուրաց քաջ է, մարդասեր և խաղաղասեր. Դավիթը լինելով հայ ժողովրդի ամենասի-

¹ *Sh'u L. Cahu n. Introduction a l'Histoire de l'Asie... Pars, 1896.*

րելի հերոսը, իր հոգին, ժողովուրդը նրան տվել է աստվածային տիտղոս՝ «Դավիթ» կոչումը:

Ո՛չ իբրև պարադոքս, այլ իբրև հիպոթեզ պիտի ասենք, որ «Դավիթ» կոչումը գալիս է չափազանց շատ խորին հընությունից: Հնդկական Վեդաների մեջ աստվածների ընդհանուր անունը Դյավ է, որ նշանակում է ամենազոր, լուսավոր, պայծառ:

Կարելի է մտածել, որ Դավիթ անունը հոմանիշ չէ բիբլիական նշանավոր հովիվ թագավորի՝ Դավիթի հետ, այլ, հավանաբար, վերջինս էլ նույն վեդայական աղբյուրից է ծագել:

Հետագայում Զրադաշտի Ավեստայի մեջ հնդկական բարի և պայծառ աստվածները վերածվել են չարի, խավարի ոգիների՝ դևերի: Սա իրարամերժ կրոնների հատկությունն է՝ մի կրոնի բարի աստվածները ուրիշ կրոնի համար դառնում են չար: Դիվացման օրենքն է սա: Օրինակի համար՝ Լյուցիֆերը— Արուսյակը, որ առավոտու պայծառ աստվածությունն էր, դարձել է դև, չար: Բահալը (Բել), Մովսեսը, Մուհամեդը՝ թշնամի կրոնների կողմից հոչակվել են չար սատանա, դևեր:

Սակայն թուրքական և մոնղոլական առասպելների մեջ Դյավը պահել է իր նախկին իմաստը, լեզվական էվոլյուցիայի մեջ հետզհետե ընդունելով Տվեն, Տվին, Տեք, Տաբաթ, Տուբաթ, Տուվաթ, Տավութ, Դավութ ձևերը: Մոնղոլական Էպոսի մեջ առասպելական Չինգիզ-խանը կոչվում է Դավութ կամ Դավիթ, որ նշանակում է հենց մոնղոլ լեզվով էլ՝ աստվածային:

Հայտնի է համաշխարհային գրականության պատմությունից, որ քրիստոնեական կրոնը վտարել է Էպոսների միջից դիցաբանությունը և նրա տեղը դրել է քրիստոնեական դոգմաները, կերպարները, հրաշքները, ինչպես «Ռոլանդի երգը», «Սիդը», «Պարսիֆալը», սակայն քրիստոնեությունը իր երկարատև գոյությամբ չի կարողացել խաթարել Սասունի տան դիցաբանական էությունը, ինչպես և՛ Նիբելունգների երգիչը:

Ուրեմն, իր սկզբնական բնույթով Դավիթը աստվածա-

յին է՝ Դյավ-աստված է, այսինքն կոսմիկական մի ուժի աստվածացումը:

Մեր վեպի մեջ Դավիթ կոչումը ունեցել է և մի ուրիշ է-վոլյուցիա. նա դարձել է հասարակ գոյական անուն. նա ստացել է քաջի, կտրիճի, փեհլևանի, հսկայի իմաստ: «Ջո-ջանց տան» վարիանտի մեջ կարդում ենք. «Աթոռ մը թա-լեցին Տավիթի տակ, նստած մեջ էն 39 տավիթներանց, որ ուրեմն առաջ աշղներ եկել-բերել էին... էն 39 տավիթներ-րուն»:

Մհերի թեոգոնիկ ծագման արմատները թաղված են վե-դայական իրանական-հայկական միֆոլոգիայի մեջ: Վեպի Մհերը արդեն իր նախահայրերի գծով տարերային-կոսմիկ ծնունդ ունի: Սակայն կասկածից դուրս է, որ Մհերը հայկա-կան հեթանոսական Միհր աստծու անվան փոխված ձևն է: Վեդայական և գրադաշտական Միթրա աստվածը հայերի մեջ կոչվում էր Միհր: Նա Ահուրամազդայի որդին էր, հոր գիճակիցն ընդդեմ չար, խավար, կործանիչ Ահրիմանի (Ան-գրա-Մայնի):

Նա արև-աստվածն էր: Իրանյան էտիմոլոգիայով Միթ-րա նշանակում է արև-աստված:

Հանգուցյալ ակադեմիկ Ն. Մառի բացատրությամբ, վը-րաց առասպելի «Ամիրան» և օսերի էպոսի «Ամրան»— մեր Մհերի անվանակիցները, արխագերեն «a-mra» կամ «a-mer» բառն է, որ արև իմաստն ունի: Թերևս մեր ամառ անունը նույն արմատից է բխել:

Միհրին պաշտում էին ամբողջ անտիկ աշխարհում, մա-նավանդ ժողովրդի խոնարհ խավերում: Հռոմում այսպես էին դիմում նրան—Deo Soli invicto Mithrae, անհաղ-թելի արև-աստծուն՝ Միթրային:

Միհրապաշտները Հռոմում կոչվում էին «արևաբաղաբա-ցիներ», և մեծ մասով սրանք ստրուկներն էին, որովհետև ըստ Ավետալի՝ «Միթրան բերքերի առատության արդար և հավասար բաշխողն էր մարդկանց մեջ», և հավատաց-յալների համայնքի մեջ կիրառվում էր լիակատար հավա-սարություն:

Նա նշմարտության, բարության և բարոյական մաքրու-

թյան աստվածն էր, և չարաչար վրեժխնդիր էր նեղգության, ստության և խաբէության:

Որպէս ոխտի և հավատարմության աստված, դաշինքներ կապելիս երդվում էին նրանով. ոխտադրուածներին, որոնք կոչվում էին mitrodrukhs— Միթրոդրուծ, այսինքն Միհրադրուծ, խիստ պատժում էր անաչատ Միհրը:

Միթրան լույս է և լույսի պէս ամեն տեղ մտնում է. նա ունի 10.000 աչք և 1000 ականջ, որի շնորհիվ նա ամենատես է և ամենալուր, դրա համար էլ նա ամեն բան գիտէ, կանխատես և կանխագետ է: Ամեն վայրկյան, աննինջ, հրկում է ողջ աշխարհին:

Նա տալիս է մարդկանց մաքոր խիղճ, իմաստություն և երջանկություն: Նա ամենուրեք հասնում է իր հավատացյալներին՝ չարից ազատելու և բարիք անելու համար:

Վեդաների Միթրան, նրա նախատիպարը, նույն լուսավոր, բարի արևաստվածն է:

Միհրի ներկայացուցիչը երկրի վրա, շոշափելի սիմվոլը կրակն էր, որ անշեշ վատվում էր տաճարների ատրուշանների վրա:

Դարսկաստանում Միհրին նվիրված նշանավոր զոհաբանները կոչվում էին «Der-i Mihr»— Դեր-ի Միհր, բառացի— «Մհերի դուռ»:

Մաթեմատիկական նշտությամբ համապատասխանում է մեր «Մհերի դուռ»-ին:

Միհրը հին հայերի ամենասիրելի աստվածներից մեկն էր. ամեն տարի շքեղ հանդեսներ նվիրում էին նրան, որոնք կոչվում էին «Միհրական տոներ»: Հայկական ամիսների հին անուններից մեկը նրա անունն էր կրում՝ «Մեհական կամ Միհրական»: Հայոց հեթանոսական տաճարները նրա անունից են ծագել և կոչվում էին «Մեհյան», լատիներեն— Միթրայում:

Միհրի պաշտամունքի նշանավոր վայրերիցն են հին Հայաստանում Ագուավաքար, Դարբնացքար, Վան քաղաքը՝ Ծամիրամակերտ (Ծահ-Միհր-կերտ) և Թորդան ավանը՝ հին Միթրոդան:

Հայերի և վրացիների մեջ արական և իգական շատ ա-

նուններ կան Միհրի ծագումով, օրինակի համար՝ Միր,
Միհր, Միհրդատ, Միհրներսեհ, Մեհրուժան, Միհրան, Միր-
վան: Աղվանից պատմությունից հասել են մեզ պատմական
անձերի հետևյալ անունները՝

Միհրավան թագավոր՝ 4-րդ դար,
Միհր անհապետ՝ 7-րդ դար,
Միհր եպիսկոպոս՝ 7-րդ դար,
Միրհյան՝ 7-րդ դար,
Զար-Միհր իշխան՝ 7-րդ դար,
Ասկ՝ Միրհավան քաղաք՝ 7-րդ դար,
Ներս-Միհրի վանք՝ 4—8-րդ դար:

Հայոց պատմությունից հայտնի են մեզ հետևյալ անձերը.

Մեհրուժան Արծրունի՝ 4-րդ դար,
Մեհենդակ Ռշտունի՝ 4-րդ դար,
Միհր-Ծապուհ՝ 5-րդ դար,
Միհր-Արտաշիր, Սյունյաց տեր՝ 6-րդ դար,
Մահեվանք, Սյունյաց ազատատոհմ՝ 11—13-րդ դար:

Վերջին դարերում հայտնի են Մուշ քաղաքում Մեհեր-
յանների ընտանիքը՝ 18-րդ դարում, և Մհերի տոհմը՝ Մհե-
րենք Սասունում՝ մինչև մեր օրերը: Այդ տոհմի ժառանգե-
րից մեկը դեռ 1902 թվին Կաղզվանում կենդանի էր: Մհերի
անունով Հայաստանում կան հետևյալ աշխարհագրական
վայրերը՝

Մհերի դուռ Վանում,
Մհերի բերդ Սասունում,
Մհերի տապան լեռ և ամրոց Սասունում:

Այսպես տարածված ու արմատացած է եղել Միհր-Մհե-
րի անունը հին Հայաստանում և հարևան երկրներում:

Միհր աստծու նշանակությունը, սակայն, մազդեական
կրոնի մեջ շատ ու շատ ավելի մեծ է. նա համարվում է և
ակնկալվում իբրև փրկիչ, մեսիա (Ավեստական մեսիա
Սաոշիանտ կամ Կաշխանտ):

Դարերի վերջում Միհրը գալու է, հաղթելու Ահրիմանին,

Հարության հեղինակին, ազատելու է մարդկությունը չարիքից և մահից, և փառքով իշխելու է վերանորոգված տիեզերքի վրա: Նա մեռելներին հարություն պիտի տա աշխարհի անցման վերջին օրում, վերջին դատաստանը պիտի անե և արդարներին դրախտ պիտի տանի:

Այս դրությունից պարզ երևում է, որ մեթոդայիզմը մեծ ազդեցություն է արել քրիստոնեության ձևավորման վրա¹, սակայն, այս հանգամանքից անկախ, Միհրի պաշտամունքը արևելքում և արևմուտքում քրիստոնեական կրոնի տարածման դեմ ամենաուժեղ խոչընդոտն եղավ: Այս երկու մեսիական կրոնները իրար կատաղի մրցակիցներ և թշնամիներ եղան: Քրիստոսի հաղթանակը ճակատագրական եղավ Միհրի համար, ուրիշ խոսքով, աստվածորդի Միհրը, որ մարմնացել էր երկրի վրա, կրակի մեջ, այս խոլ տարերքը դարձնելով քաղաքակրթության և մարդկության առաջադիմության կուլանը, ենթարկվեց մետամորֆոզայի՝ դիվացման. քրիստոնեական կրոնը այն վերածեց չար, կործանիչ սատանայական ոգու:

Արդեն 9-րդ դարում Թովմա Արծրունու մոտ Միհրի նվիրական անունը դարձել էր ածական անուն՝ զգվելի, ճողկալի, չար, պղծող իմաստով՝ վատ Միհր:

Բայց և այնպես Քրիստոս հաղթելով Միհրին՝ յուրացրեց նրան փառաբանող լուսավոր մակդիրները: Քրիստոսին ըսկրեսցին փառաբանել. «Արեգակն արդար, առավոտ լուսո, լուսատու տիեզերաց, առաջին լույս, հուր փայլակնացյալ»:

¹ Անվերջ փաստեր կարելի է բերել ցույց տալու համար միևրապաշտության ազդեցությունը քրիստոնեության և նրա ծեսերի վրա: Միևրական համայնքի անդամները իրար եղբայր էին համարում և եղբայրական սեր պիտի տածեին իրար հանդեպ: Համայնքի մեջ մտնողին ջրով լվանում էին, որ մի տեսակ մկրտություն էր. հանդեսներին հավատացյալները հաց և գինի էին ճաշակում, որով միանում էին Մեհրին՝ քրիստոնյաների հաղորդության ծեսը: Դեկտեմբերի 25-ին տոնում էին Միհրի ծնունդը, նույն և քրիստոնյաները՝ Քրիստոսի ծնունդը, և վերջապես, շաբաթվա 7-րդ օրը նվիրված էր Միհրին, քրիստոնյաների կիրակին:

Մենք Միհր աստվածն է. Մենք կրակն է, կայծակն,¹
ամպրոպն է. Մենք արևն է¹:

Եվ մեր վեպի մեջ ժողովուրդը իր հին աստված Մհերին,
Միհրի փոխնակին, դարձրեց Սասունի հերոսական ծներից
մեկը, բայց ամենաողբերգականը և ամենավեհը. հանդես
բերեց նրան միջին դարերի պատմության. իրադարձություն-
ների մեջ, տալով նրան չարափոխված Միհրի դիվական
գծերից, բայց նաև վերապահելով միհրական հին ազնիվ,
նվիրական հատկություններից էական տարրեր, որոնք մենք
տեսնում ենք շատ ցայտուն շեշտված:

Էպիկական Մհերը դիպելկոթիկ հակասությունների մի
կոմպլեքս է.— նա բարի է, նա չար է, վերջնական սինթեզի
մեջ բարի է նա:

Նա վրեժխնդիր է լինում իր դյուցազն հորը նենգաբար
սպանողից: Նա սպանում է քրիստոնեական կրոնի պաշ-
տոնյա վարդապետին, որն իր ուխտը դրժելով մատնում է
Մհերին՝ իր կրոնի և հայրենիքի թշնամի արաբների ձեռքը:
Մհերը վարվում է իր սկզբնական էության համաձայն. չէ՞
որ նա նենգության և ուխտազանցության վրեժխնդիր պատ-
ժիչ աստվածն էր:

Եվ զարմանում ենք, թե ինչպե՞ս ժողովուրդը տրամա-
բանորեն, միհրական հին ոգուն հարազատ, կառուցել է իր
էպոսը:

Մհերը կոպում է իր երկրի թշնամիների դեմ, որոնք հրով
ու սրով, ծանր հարկերով ուզում են ստրկացնել Հայաստա-
նը. նա կոպում է ներքին թշնամիների դեմ, ֆեոդալների, ո-
րոնք կեղեքում են աշխատավոր ժողովրդին, ոսմիկին:

Նա դժբախտ, հալածված մարդ է. հայրը սպանվում է,

¹ Առյուծաձև Մհերն էլ, որ Մհերի երկճյուղումն է, մեր վեպի մեջ
հանդես է գալիս արևային մակդիրով: Առյուծաձև չի նշանակում առյուծ
ձևող, պատառող, այլ առյուծակերպ: Առյուծը հիմ գարսիկների և հայերի
ըմբռնումով՝ սրբազան կրակի սիմվոլն է առյուծարև, պարսկերեն՝ Շիր-
խուրշիդ, հոմանիշներ են: Եվ առյուծաձև Մհեր կնշանակե առյուծակերպ
Մհեր, առյուծ Մհեր, ինչպես Հովհ. Թումանյանը կիրառել է արդեն իր
«Սասունցի Դավիթ» պոեմում «Առյուծ Մհերը զարմով դյուցազուն»:

մայրը ինքնասպան է լինում, հորեղբայրը զրկում է նրան հայրական ժառանգությունից և վտարում է Սասունից դուրս. նա աղքատ ու զուրկ թափառում է երկրե-երկիր, մասնակցում է ժողովրդի ծանր աշխատանքին, նա տեսնում է ամեն տեղ զրկանք, կեղեքում, անարդարություն, ոչ մի տեղ հանգիստ չի գտնում, ոչ մի տեղ «մոր և հոր նման քաղցրիկ ու սիրող մարդիկ»:

Նա տրտնջում է, բողոքում է աստծու դեմ, որովհետև վերջին հաշվով աստվածն է պատճառը, հանցավորը և միակ պատասխանատունն աշխարհի այսպիսի վատթար կառուցման համար: Եվ աստված իր հրեշտակների միջոցով հաղթում է նրան. հողը թուլանում է, փխրում է նրա ոտների տակ, նրա ձիու ոտները խրվում են հողի մեջ (ինչպես պարսից հսկայի՝ Ռուստամի և ոռուսաց բոգատիր Սվյատոգորի):

Եվ հետո իր ձիու հետ միասին բանտարկվում է Ագուվու քարայրի մեջ: Աստծու ծանր ձեռքը իջավ Մհերի վրա, աստված պատժեց նրան, իբրև աստծու դեմ մարտնչողի, աստծու դրած բնական և հասարակական օրենքների դեմ զնացողի, իբրև չար, կործանիչ ոգու, դևի, Նեոի (Անտի-խրիստի):

Քրիստոնեական հաղթանակը կատարյալ է այստեղ:

Այսպիսով, Մհերը, որպես աստվածամարտ, մտնում է աստծու դեմ մարտնչողների համաշխարհային ըմբոստ հույլի մեջ: Մհերի ազգակիցներն են ամենից առաջ բիրլիական սատանան (հրեերեն կնշանակե՝ հակառակ), որ կովեց աստծու միահեծան, բռնակալ կամքի դեմ, պատժվեց զահավեժ լինելով դժոխքի մեջ. հավիտյան և անմահ: Ավետալի մեջ Բյուրասպ-աժդահակը, որ քարոզում էր համայնական կյանք, սոցիալական հավասարություն, մասնավոր սեփականության վերացում, մի դրություն, որ հանելի չեղավ աստծուն և իշխող դասերին, պատժվեց և շղթայակապ բանտարկվեց Դմավենդ սարում. հունական Պրոմեթեոսը, որ երկնքից կրակը բերեց մարդկության համար՝ հակառակ

ատովածների կամքին և պատժվեց Ջևահի՝ շղթայվելով Կովկասի ժայռերի վրա¹:

Արարատ լեռան վիհերի մեջ բանտարկված հայոց թագավոր Արտավազդը², որի դուրս գալուն սպասում են, ըստ եզմիկ Կողբացու, հայ հեթանոսները այն հուսով, որ նա պիտի ելնի և տիրի հայոց աշխարհին, ինչպես հրեաները սպասում են Դավիթ արքայի վերստին գալուն, որ նորոգե կորած թագավորությունը:

Վրաց առասպելի Ամիրանը (որ նույն Միհրն է, Արևատվածը), որ Քրիստոսի սանիկն էր և հակառակ Քրիստոսի խորհրդին, երկնքից փախցրեց կրակը մարդկանց համար և պատժվեց ու բանտարկվեց «Սա-Կորնե» Ագոավի լեռան մեջ³:

1 Պրոմեթեոսը նույնպես ջրածին է՝ մայրը Օվկիանիդ Կլիմենեն է: Հույները Պրոմեթեոս անունը բացատրում են, որպես թե նշանակում է նախատեսող, գուշակող: Ուրեմն վեղայական և իրանական Միթրայի հատկություններով օժտված: Իսկ ակադեմիկ Ն. Մառը ասում է, որ լեզվի վերաբերյալ հաբեթական նոր տեսությամբ Պրոմեթեոս նշանակում է բառացի «ելլկրի որդի», սակայն գիտության մեջ վաղուց արձարծված է այն բացատրությունը, որպես թե Պրոմեթեոս բառը սանսկրիտ Praman-ta (Պրամանտա) և Pram athys (Պրամաթիուս) գաղափարներից է ծագել: Պրամանտա այն գործիքն է սվաստիկայի փայտաձողերով շինված, որի միջոցով, վեղայական շրջանում, շփելով կրակ էին ստանում, իսկ պրամաթիուս՝ կրակ հանող մարդը: Ուրեմն Պրոմեթեոս կնշանակի կրակ հանող:

Մի պահ կարելի է ենթադրել, որ Պրոմեթեոսը հնդկական ծագում ունի, ոչ թե հաբեթական:

2 Առայժմ Արտավազդ անվան հետախուզության վրայից անցնում ենք, բայց և այնպես այդ անունը իր ծագումով կապված է մագդեական դիցաբանության հետ, կրակի, արևի գաղափարների հետ:

3 Միերի և Ամիրանի բանտարկվելը՝ Ագոավի անվան հետ կապված վսյրերում շատ նշանակալից է և մի անգամ ևս ցույց է տալիս նրանց նշանակությունը: «Ագոավը հրապաշտների սրբազան թռչունն էր, որովհետև հին հասկացողությամբ կրակի հափշտակությունը ոչ միայն վերագրվում է դյուցազներին, այլև թռչուններին՝ ագոավին, արծվին: Հնդկական մի առասպելով արծիվը հափշտակել է կրակը ժայռից: Հունական դիցաբանության մեջ, հաճախ Պրոմեթեոսը հանդիսանում է արծվի տիտղոսը:

Ագոավն էլ, իբրև հափշտակիչ կրակի, սուրբ էր հռչակված: Հայտնի

Օսերի Էպոսի Ամրանը, որ գոտեմարտի է կանչում ին-
ցառու աստծուն, կոչում է նրա հրեշտակի հետ և պատիժը
կրում է լեռան մեջ բանտարկվելով, և վերջապես գերմանա-
կան Լյուցիֆերը, որ Տիրոլի լեռներում փակված է, եթե դուրս
գա՝ աշխարհը պիտի ավերե՛:

Նրանք մարտնչեցին աստծու դեմ, աստծու ստեղծած
տարերային չար ուժերի դեմ՝ խավարի, ցրտի, երաշտի,
երկրաշարժի դեմ, աստծու կողմից օրհնված հասարակային
սարք ու կարգի դեմ, և աստված իր հրեշտակների և սրբերի
բանակով հաղթեց նրանց և դատապարտեց հավիտենական
տանջանքների ու բանտարկման:

Սակայն ժողովուրդները չհաշտվեցին չարափոխված,
բայց իրենց սրտի խորքում միշտ սիրելի հին աստվածների
և տիտանների ճակատագրին: Եվ ժողովուրդները սպասում
են իրենց բարերարների ազատագրմանը:

Հայ ժողովրդի հոգին նույնպես չհաշտվեց իր հերոսի
տրագիկ ճակատագրի հետ:

«Մհերի դուռը», որի ետևը փակված է դյուցազնը, սիմ-
վոլիկ իմաստով նաչում է «Սուրբ արևին»: Այրի մեջ, Մհերի
գլխի վերևը, օր ու գիշեր վառվում է մի անշեշ նրագ՝ խոր-
հրդանշանը արեգակնային Մհերի. այդ նրագից, ըստ մեր
Էպոսի, կրակ է վերցնում ժողովուրդը, երբ հանգչում է իրենց
տան նրագը: Եվ «Մհերի դուռը» դարերի ընթացքում, մինչև

են գերմանների Վոթան (ոգին) աստծու երկու ազոավները. հունական
արև-աստծու՝ Ապոլոնի մոտ էր միշտ սնաթույր ազոավը: Սրանք հարա-
կից գաղափարների կոմպլեքս են: Արև-աստվածները բանտարկված են
կրակի սրբազան թռչունների մոտ:

¹ Ռուսաց բոգատիրները՝ Իլյա Մուրոմեց, Ալյոշա Պոպովիչ և մյուս-
ները «անձանոթ ուժից» պարտվելով, փախչում են, ապաստանում քա-
րայրում և քարանում են: Սրանց քարացման ու մեր արևային աստված-
ների և դյուցազների ժայռերում բանտարկման մեջ մենք մեծ առնչու-
թյուն ենք տեսնում: Ըստ արիական հավատալիքների, քարածայր սուրբ
է. կրակը ծագում է կայծքարից. արծիվը, ազոավը կրակը պոկել են ժայ-
ռերից: Միթրան-Միհրը, համաձայն հունական միֆոլոգիայի, ծնունդ է
առել ժայռից և կոչվում է վիամծին, Միհր վիամծին:

Ռուսական դյուցազները, թերևս միհրական ծագումով, նորից միացել
են իրենց մայր տարերբին:

մեր օրերը, եղավ սրբավայր, ուր ժողովուրդը ուխտ էր գնում, իսկ ծխում՝ հավատալով Մհերի փրկչական սառչիանտ միսիային¹:

Մեր ժողովրդի համար իր հերոսների վեպը ստրկության ծանր դարերի մեջ եղավ իր ոգևորության աղբյուրը և ներշնչարանը: Այդ անսպառելի գինարանից զենքեր է առել նա՝ տոկալու և կովելու իր ինքնության և հավերժության համար:

Իր անմահ վեպի մեջ ժողովուրդը դրեց իր բովանդակ բոգին՝ անվերջանալի պայքարով և դառնությամբ լի իր պատմության փիլիսոփայությունը, իր փորձը աշխարհի իրերի մասին, իր դարավոր իմաստությունը, իր նվիրական իդեալները:

Եվ կերտելով Մհերի վսեմ, մարգարեական, մեսիական կերպարը, մեր վեպը ազգային շրջանակից ելնելով, ընդունում է համամարդկային որակ և դառնում է աշխարհահեղաշրջման և աշխարհավերակառուցման պատգամախոս:

Շահագործող, չար աշխարհը պիտի բանդվի մի անգամ ու վերակառուցվի մարդկության երջանկության համար:

Մհերի մեջ սիմվոլացած է տառապող և ազատություն աննշող աշխատավոր մարդկությունը:

Մեր վեպի մեծ կերպարները՝ Դավիթ, Մհեր, հասնում են, ամենայն իրավունքով, գեղարվեստի իսկական բարձունքին՝ համաաշխարհային սիմվոլներին:

Մեր վեպը իր հնությամբ, իր բարձր արվեստով, իր դեմոկրատիկ, ինտերնացիոնալ, հումանիստ գաղափարախոսությամբ մտնում է դասական, առաջնակարգ էպոսների պանթեոնը:

Նա տալիս է մեզ հպարտության արդար հիմք, գոյության գրավական ու ազնվության վկայական:

Այսօր Սովետական մեծ Միության եղբայրական ժողո-

¹ Հաղթանակող քրիստոնեության հալածանքներից ազատվելու համար Հոռոմում և ուրիշ տեղեր միեւրականները գաղտնի կատարում էին իրենց կուլտը՝ քարայրներում կամ ժայռերի մեջ, սրբազան կրակի պաշտամունքի սեղաններ շինելով: Այդ վայրերը կոչվում էին «Միթրայի ժայռեր»: Անշուշտ մեծ առնչություն կա Միհրի դոսների, վիժածին Միհրի, հրածին սուրբ քարերի և այս «Միթրայան ժայռերի» միջև:

վորդների հետ միասին, մեր ժողովուրդը սոճում է իր սարսնչող ոգու հաղթանակը:

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության այս լույսի տակ պարզվում է Մհերի ստեղծվածային կերպարը:

Ինչպես բրետոնները սպասում են իրենց փառապանծ Արտուր թագավորին, որ խորհրդավոր կղզուց պիտի վերադառնա՝ հայրենիքը ազատելու անգլո-սաքսոնների լծից, ինչպես գերմանացիք սպասում են Ֆրիդրիխ Բարբարոսս կայսրին, որ իր քարայրից պիտի ելնի մի ճոր բախտավոր դարաշրջան ստեղծելու Գերմանիայի համար, և ինչպես ոռու մուժիկը սպասում էր Ստեֆկա Ռազիկին, որ իր Ժիգուլկի ժայռից պիտի ելներ և ազատեր մուժիկին ցարից և պամեշչիկներից, այնպես էլ հայ ժողովուրդը սպասում էր Մհերին:

Համաշխարհային պատմությունը հայ ժողովրդին վիճակեց մի հայրենիք՝ աշխարհակալ մեծ ազգերի բառուղու վրա, և այդ եղավ հայ ժողովրդի ծանր ճակատագիրը: Միշտ երկու ջաղացքարերի միջև տրորվեց հայ ժողովուրդը, բայց իր անզուգական հերոս Դավթի նման մնաց կենդանի, դարերի մեջ անթիվ Մորա մելիքներ զարկեցին նրան հսկայական գուրգերով և թրերով, բայց նա մնաց մշտապես կենդանի: Անշեջ պահեց և զարգացրեց իր դասական ճոխ լեզուն, բարձրացրեց իր հոյակապ ճարտարապետությունը, գուրգուրեց իր սրտաբուխ մելոսը, և որ զարմանալին էլ ամենից, նա շարունակական ջարդերի, ավերումների, բայթայումների մեջ իսկ երբեք չխախտեց իր անընկճելի հավատը, երբեք չթուլացրեց իր բոցավառ անխորտակելի տենչանքը լավագույն ապագայի համար, և այս բովի միջով հրաշակերտեց իր հանճարեղ հերոսավեպը:

Ազատագրեց Մհերին՝ հայ ժողովրդին, դարավոր բանտից:

Հայ ժողովուրդը իր ոտների տակ հող ունի հիմա և այդ հողը շատ ամուր է:

Լենինյան իմաստուն և հանճարեղ ազգային քաղաքականությունը ազատագրված հայ ժողովրդի առաջ բացեց անհուն կարելիություններ՝ անկաշկանդ առաջադիմելու և ապրելու իմաստավորված ու երջանիկ կյանքով:

Բոլշևիկյան մեծագործ կուսակցությունը ճոր թափ և ուժ տվեց հայ ժողովրդին՝ զարգացնելու իր հիմնավորց կուլտուրան՝ համաձայն իր էպոսի դեմոկրատիկ, ինտերնացիոնալ ոգու և նրա պոտենցիալ սոցիալիստական էության:

ԽՍ.ՉԱՏՈՒՐ ԱՔՈՎՅԱՆԸ ԵՎ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ»-Ն՝

Ծատ վաղ հասակից ծանոթ էր ինձ Խաչատուր Աբովյացի անունը:

Մայրս ցավելով պատմել էր, որ իմ աշխարհ գալուց տարիներ առաջ, որոշ չէր հիշում՝ երբ, Ալեքսանդրովն ինչ-որ դեպքի կապակցությամբ ժանդարմական խուզարկություն է տեղի ունեցել հայ տներում և մերոնք երկյուղից վառել են Աբովյացի գիրքը՝ «Վերք Հայաստանին»:

Մենք, պատանի տղաներս, շատ բան էինք լսել մեր մեծերից Խ. Աբովյացի կյանքի մասին. լսել էինք, մոկտացել և վրեժով լցվել ոռու թագավորության դեմ, որը բռնել էր Աբովյանին, սև կատերի մեջ դրել և տարել էր Սիբիր, մի զարհուրելի աշխարհ, որովհետև նա մեծ ազգասեր է եղել (այդպես էին կոչվում առաջ հայրենասերները) ժողովրդին գրգռել է ոռուսաց թագավորի դեմ:

Պատմում էին, որ նա դեռ ողջ է, Սիբիրի խորքերում տեսել են նրան, սաստիկ ծերացած, սպիտակ մորուքը մինչև գոտին, բայց դեռ կրակով ու կյանքով լի, թեև չի ասել իր ինքնության մասին, բայց ճանաչել են շատերը, և երբ հարց են տվել նրան, թե ե՞րբ պիտի դառնաս հայրենիք՝ նա պատասխանել է, թե դատապարտված եմ ցմահ մնալու Սիբիրում, թեև շատ ծերացել եմ, բայց մինչև չտեսնեմ Հայաստանի ազատությունը, չեմ մեռնելու:

Աբովյանը արբազան սիմվոլ էր դարձել մեզ համար. հայ ժողովուրդն էլ դատապարտված է ստրկության, բայց չի մեռնում, նա պիտի տեսնի Հայաստանի ազատությունը...

1 «Վերք Հայաստանի»-ի 100-ամյակին նվիրված երեկոյին արտասանած ճառը:

Եվ կրակված երգում էինք Աղասու երգերը, որոնք շատ տարածված էին այն ժամանակ ժողովրդի մեջ՝ «Սար ու ձոր ընկած, մեկ չոր թփի տակ», «Ա՛խ, վաթան, վաթան, քո հողին դուրբան»:

Սակայն «Վերք Հայաստանին» մեր ձեռքը չէր ընկնում. քաղաքում երևի շատ քչերն ունեին և խիստ պահում էին, արգելված գիրք էր համարվում:

Խ. Արուվյանը մեր հոգում նահատակի լուսապսակով էր զարդարված, ազգային նվիրական նահատակի, և խորհրդավոր էր իր «Վերք Հայաստանին», որին երազում էինք միայն և չէինք հավատում, թե երբևէ կարող ենք տեսնել այդ կախարդական, անմատույց գիրքը: Ամառները ես միշտ գնում էի մեր գյուղը՝ Ղազարապատ, և գյուղի տերտերից երբեմն գրքեր էի վերցնում կարդալու. Էջմիածնում տպված գրքեր էին դրանք՝ պատմական, աշխարհագրական, այլև «Արաբատ» ամսագիրը: Հանկարծ, մի օր, նրա գրքերի դարակում տեսա մի լավ կազմած գիրք, նայեցի— և աչքերիս չհավատացի— «Վերք Հայաստանին»:

Հուզված թերթում եմ գիրքը— երկրորդ էջի վրա կարդում եմ. գիրքը նվեր է բժ. Գ. Քուշարյանից. որտեղի՞ց որտեղ:

Տերտերը բացատրում է.— շատ տարիներ առաջ այդ բժիշկը, որ շատ ազգասեր մարդ էր, ման էր գալիս մեր գավառում և քաջ Աղասու գիրքը նվիրում էր գյուղի վարժապետներին, որպեսզի կարդան և պատմեն ժողովրդին Աղասու քաջագործությունները:

Տարա տուն, կարդում եմ,— ասեմ, որ ես հազիվ 15 տարեկան էի այն ժամանակ,— հասց ու ջուր մոռացած կարդում եմ, հափշտակված, վերացած: Միևնույն է՝ հասկանալով, չհասկանալով գնում եմ առաջ, վերջացնում եմ գիրքը, գյուղի ընկերներիս պատմում եմ բովանդակությունը. նրանք խնդրում են, որ միասին կարդանք, մինչդեռ ես մտածում եմ գիրքը սեփականացնել: Միջոցներ էի մտածում գիրքը ձեռք բերելու: Վերջապես, ընկերներիս հետ գնացինք տերտերի մոտ. ես խնդրեցի նրան, որ գիրքը տա ինձ, նվիրե կամ ծախե, քանի որ ինքը կարդացել է, իսկ մենք ջահելներս ուզում

ենք միշտ կարդալ. «Ռե՛հ, ջահել մարդու գիրք է, տերտեր ջան»,— ուզում ենք համոզել նրան:

Խնդրում ենք, թախանձում. տերտերը համաձայնում է, սառն է ինձ. «Ձեր տանը աշխարհաբար լեզվով ավետարան եմ տեսել, էդ տուր Աղասու պատմության դիմացը, և էլ,— դիմում է գյուղացի տղոցը,— մի սալա ձուկ կուտաք, մենակ խոշոր տեսակից»:

Գնացինք ձուկ որսացինք Ախուրյան գետից, և սալան լիքը ձկով բերինք, տվինք տերտերին, ավետարանն էլ հետը:

Թանկագին գիրքը մերն էր:

Խմբով գնում էինք գյուղից դուրս, մեր հանդում որոշ տեղից պարզ երևում էին Անին, նրա պարիսպները, նստում էինք այնտեղ, երեսներս դեպի Անին, կարդում էինք գիրքը, նայում Անիին, և կարդում, կարդում...

Ի՛նչ սրբազան պահեր, ի՛նչ աննկարագրելի ոգևորություն:

Մենք չէինք ապրում այլևս ներկայի մեջ, իրական աշխարհում. երևակայության մեջ էինք սավառնում, հայ ժողովրդի փառապանծ անցյալի մեջ և խորհրդավոր, լուսավոր գալիքի հանդես:

Եվ երբեք մենք չզգացինք վերք ու ողբ, մենք չտխրեցինք, մենք չընկնվեցինք հայկական վշտով ու վերքով, թեև լցվեցինք վրիժառությանը, այլ սակայն գերազանցապես վառվեցինք հայրենասիրությամբ, արիությամբ, հերոսությամբ, մենք թևավորվեցինք սպագայի շքեղ տեսիլներով: Մենք տեսնում էինք Անին՝ վերակենդանացած, հոյակապ պարիսպներով, ներշնչող բուրգերով, զինվորներով, զորավարներով, սպարապետներով՝ սաղավարտներով, քաջ ժողովրդով՝ ազատ, անշոթա:

Մենք կենդանի տեսնում էինք քաջ Աղասուն՝ իր քաջ ընկերներով՝ Մուսին, Կարոն. մենք տեսնում էինք Աղասու կապուտակ ձին՝ վրնջալով, շառաչելով, դոփելով անցնում էր մեր մոտով, մեր վրայով, թոչում էր նա, սլանում էր նա, և փայլատակում էին նրա պայտերը, և փայլատակում էին ու զրնգում Աղասու գեները:

Մենք բացառություն չէինք, անշուշտ. 19-րդ դարի «Վերքի» ընթերցողները նույն սպրումներն ու տեսիլներն են ունեցել, — խանդավառություն, հերոսական գործերի մղում, — և ճշմարտություն է, որ Աղասին իր կապուտակ ձիով՝ դոփելով, փայտակելով ու զրնգալով, քառամբակ անցել է հայ ժողովրդի հոգու միջով և մեր 19-րդ դարի գրականության արժեքավոր երկերի միջով:

Թերևս արժեր այստեղ վերջացնել իմ խոսքը, որովհետև սրանով արդեն պարզ է Խ. Աբովյանի և նրա «Վերքի» այսպիսի աննախընթաց հզորագույն ազդեցության չափի մասին, նրա ներշնչող, նրա կաղապարող, նրա հոգեփոխող և հեղափոխող զորության մասին...

Բայց թող ներվի ինձ մի երկու խոսք ևս ասելու:

Պերճ Պողոյանը այն կարծիքն է հայտնել, թե Խ. Աբովյանը իր ժամանակից կանուխ է ծնվել. ես հակառակն եմ խորհում. նա ծնվել է իր ժամանակին, ոչ մի բոպե կանուխ և ոչ մի բոպե ուշ. — հայ ժողովրդի պատմության հասած պըտողն է նա, միանգամայն տրամաբանական և պատճառաբանված:

Հայ ժողովուրդը ստրկության, խավարի դառն ու դժար դարերից անցել՝ հասել էր 19-րդ դարը, լուսավորության, դեմոկրատիզմի, հեղափոխությունների դարը, զարմանալի գյուտերի, առաջացող տեխնիկայի, բայց մանավանդ, մանր, ենթակա ազգերի զարթոնքի և ազատագրությունների դարաշրջանը — և կանգնել էր անգիտակ, բայց մանավանդ խճճված մտքերով:

Մեկը պիտի ծագեր հայ ժողովրդի հոգուց՝ մի առաքյալ, մի մարգարե, մի մեծ բանաստեղծ, որ ժողովրդին բերեր վերածնունդի իմաստուն պատգամներ, հրեղեն խոսքերով խանդավառեր նրա սիրտը, ամբացներ նրա կամքը անձնագոհ հայրենասիրությամբ, լուսավորեր նրա բախտորոշ անապարհները դեպի ինքնագիտակցություն, ըմբոստացում, ազատություն:

Հին փիլիսոփաները հավատում էին, որ եթե աստված ուզում է մարդկային աշխարհում պատմական մի մեծ գործ կատարել՝ ստեղծում է իր կամքի կատարածուն, առնում է

մարդկանց միջից մեծագույնը, ընտրելագույնը, նոր լեզվով
ասած՝ ժամանակը, իր ձգտումները, հարցերը, իր առաջա-
դրանքները խտացնում է մի մեծ մարդու մեջ, մի գլխավորող
հանճարի մեջ՝ կենսագործելու համար տվյալ էպոխայի այդ
գաղափարները, ձգտումները...

Արովյանը ազգային այդ վեհ միսիայի ընտրելագույն
պատգամախոսն էր, ծնված իսկ Հայաստանի պատմական
կենտրոնից՝ Արարատյան դաշտից, ժողովրդի դարավոր ըն-
դերքից:

Նրանից ավելի մեծը, ավելի կատարյալն ու հարմարա-
գույնը, հայկական զարթոնքի շեփորը հնչեցնելու համար,
չէր կարող ստեղծել հայ արգանդը: Նա, որ Մասիսի երկնա-
հույ բարձունքից տեսել էր հայ աշխարհը իր լեռներով,
հովիտներով, լճերով և իր մեծ հոգում դրոշմել էր նրա սրբ-
բազան պատկերը, նա, որ գիշերներ էր լուսացրել նվիրական
մագաղաթների վրա և ընդգրկել էր հայ ժողովրդի հազար-
ամյակների պատմությունը, նա, որ անձամբ իսկ ճանաչում էր
ժամանակակից հայ ժողովրդին՝ գյուղացուն ու քաղաքացուն,
նրա լեզուն, ավանդները, կենցաղը, ցավն ու կարիքը, և վեր-
ջապես, նա, որ եվրոպական հոգեկան կուլտուրան յուրացրել
էր, գիտեր լեզուներ, կարդացել էր մեծանուն հանճարների՝
համայնագետ էր՝ ստեղծագործական կարողություններով լի,
բազմակողմանի զարգացած, ձեռներեց, նա միայն կարող էր
դառնալ առաքյալ, վերածնող, վերանորոգիչ, հիմնադիր
ջրաբաշխական նոր բարձունքի, որից պիտի ծագում առնեին
գրականության նոր գետերը՝ դյուցազներգություն, քնարեր-
գություն և այլն, և ուրիշ ոչ ոք:

Արովյանը խտացումն եղավ հայ ժողովրդի երազանք-
ների, ձգտումների, ցավերի ու տառապանքի, նրա հոգու
և իմաստության, նա եղավ հայ ժողովրդի լեզուն, սրտագին
լեզուն:

Մեր ժողովուրդը կուտակել էր իր սրտում դարերի մեջ
բռնակալներից կրած հալածանքների, կեղեքումների, ոճիր-
ների ցասումը, իր ազատության տենչերը, իր անդրդվելի հա-
վատը լավագույն ասպագայի հանդեպ, մի խոսքով՝ այն բոլոր
հոգեկան տարրերը, որոնք անհրաժեշտ են մի ժողովրդի

ինքնության ու հարատևության և ազգ դառնալու համար, և սակայն լուռ էր, հասն էր նա, և երբ վերստին նրա գլխին փայլատակեցին պարսկական թերը ու նոր տիրապետողի՝ ռուսական կայսրության ավելի կտրուկ թուրը՝ ցարիզմի այլատերող վտանգը, բացվեց նրա լեզուն, խոսեց հրեղեն լեզուն,— «Էդ ում վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում...»: Այդ լեզուն «Վերք Հայաստանին» էր, «Ողբ Հայրենասերին»:

«Վերք Հայաստանին» դա գիրք չէ, միմյանց ետևից շարված տառեր, թուղթ ու մելան, չափված, ձևված, դա հոգուց պոռթկած, սրտի խորքերից շղթայազերծված մրրկա-արշավ է, հրաբուխ: Ինչպես 1840 թվին դարերով լուսծ Մասիսը պոռթկաց կրակ ու բոց, և հեղեղեց, և շարժեց հայոց աշխարհը բովանդակ, այնպես էլ նույն թվին՝ Աբովյանի մեծ սիրտը... հեղեղեց և կրակ ու բոց որոտաց, և շարժեց հայ ժողովրդի ներաշխարհը բովանդակ, և կայծակի նման ճեղքեց սպագայի մութն ու մռայլը, ցույց տվեց փրկության ուղին՝ հայ ժողովրդի ազատագրման— անկախության ուղին՝ պահպանումն ու պաշտամունքը մայրենի քաղցր ու մեծաքանակ լեզվի, լուսավորություն, անձնագոհ հայրենասիրություն, սիրալի, հերոսական քաջագործություն:

Չարմանալի՛, անհունորեն՛ գարմանալի հրաշք-երևույթ է «Վերք Հայաստանին»:

Այնտեղ Հայաստան աշխարհն էր իր տարերային-տիտանային պեյզաժներով, որոնք դարձել են բնապաշտական, կոսմիկական երաժշտություն, օրատորիաներ: Այնտեղ հայ ժողովուրդն է՝ իր միֆական և պատմական անցյալով, իր հին առասպելներով և ավանդություններով, մի հին ազգ, որը կոթնած դարերի վրա, զինված իր երկաթե տոկունությամբ, իր հոյակապ ճարտարապետության բեկված կոթողների շուրջը, թեև ցնցոտիների մեջ, սակայն հարուստ է փառավոր անցյալի ծիրանին հագած, թեև լծի տակ, սակայն հպարտ է և իբրև տեր հայրենի երկրի՝ արհամարհում է ներխուժող բրոնզակալներին՝ վայրենի, անցյալ չունեցող բարբարոսներին...

Ես չեմ կարող որոշել, թե ի՞նչ է «Վերք Հայաստանին»:
Թողնենք նրա տեղը համաշխարհային գրականության մեջ,

դա երկրորդական, մեզ չհետաքրքրող հարց է, սակայն նրա տեղն ու դերը մեր նոր գրականության մեջ եզակի է, անմըր-ցելի: Նա մեզ համար հավերժական մի բան է, որին անուն չեմ կարող տալ:

Մեր գրական ամեն տեսակների սկիզբն է նա, դյուցազ-նական է և լիրիկական, բոցավառ դիդակտիկա, ապոստո-լիկ քարոզներ:

Սասիրա, յումոր, ֆոլկլորային անբավ նյութ՝ խառնված միմյանց հետ:

Հանճարեղ հանգույց ոռմանտիզմի, ռեալիզմի, նատու-րալիզմի: Անասնձ, փոթորկավառ երևակայություն, անհան-գիստ կայծակնալից հոգի, մտորումների, մտքի թռիչքների բուռն, հախտուն զգացմունքների մշտահույզ օվկիան... և վեր-ջապես մեր համազգային, դարերի և դարերի պաֆոսը, մեր կիրքը՝ հայ ժողովրդի ինքնորոշումը, ձերբազատումը բռնա-կալներից, օտար տիրապետություններից, մի համառ, ան-խորտակելի, անփոխարինելի պաֆոս, որ լուսեղեն շանթի պես անցել է մեր գրականության սկզբից՝ Խորենացուց, Ղ. Փարպեցուց, Եղիշեից, Սեբեոսից, Չամչյանից, Ալիշանից, Գամառ-Քաթիպայից, Րաֆֆուց մինչև Հայաստանի ազա-տագրումը, մինչև Խորհրդային Հայաստանը:

Այսօր հայ հասարակայնությունը՝ երախտագիտության և հպարտության ազնիվ զգացմունքներով լցված՝ վառ հիաց-մունքով տոնում է 100-ամյակը իր մեծագույն զավակի հան-ճարեղ գործի, որը սերունդների սրտի մեջ վառել է քաջու-թյան, անձնագոհության սրբազան հուրը հայրենիքի ազա-տության համար, մայրենի լեզվի հաղթանակի համար:

Խաչ. Աբովյանը մեր նոր միֆն է, մեր նոր Մհերն է նա՝ ազատագրված, շղթայազերծ:

Ժողովրդի իմաստուն բնագոյը նրան չի մեղցրել: Քարա-շատ Հայաստանը նրա վրա քար չգցեց, որովհետև նա չի մեռել, նա գերեզման կունենա միայն հայ ժողովրդի հետ, իսկ հայ ժողովուրդը, ինչպես ամեն մի ժողովուրդ, հավի-տենապես անմահ է. նա երբեք չի մեռնի:

ԽՈՍՔ ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԳԵՍԻՆ

(Երևանում)

Միրելի բարեկամներ, հյուրեր, ընկերներ:

Ես վերջերս ֆիզիկական շատ ծանր վիճակ անցրեցի. նոր եմ միայն լավացել և այսօր եմ միայն տևից դուրս եկել՝ ներկա լինելու իմ հորեղյանական հանդեսին:

Այս բոլոր ուղերձները, օվացիաները, ծափերը, մի խոսքով՝ ձեր բոլորիդ այսքան խանդավառ, սրտագին ողջույններն իրենց մեծագույն մասով ինձ չեն պատկանում:

Որովհետև, եթե դրանք միայն իմ անձի և գործի համար են՝ գտնում եմ չափազանց և հիպերբոլիկ: Դրանց արդար տեղը հայ ժողովրդի բազմադարյան գրականությունն է: Հայ գրականությունը համամարդկային գրականության ամենահետաքրքրական և խորունկ էջերիցն է, և որպես այդպիսին արժանի է շատ և շատ մեծարանքի:

Ես գլուխս խոնարհում եմ այս վստմական սրբությունների առաջ:

Ես իմ ողջ էությունս պարտական եմ նրանց՝ իմ պոեզիայով, իմ արվեստով:

Եվ ես հպարտ եմ և բախտավոր, որ երկար տարիներ հավատարիմ և անձնվեր մշակներից մեկը լինելով հայ խոսքի և մտքի անդաստանում, այսօր արժանացել եմ իմ ժամանակակիցների բարձր գնահատանքին:

Հարմանալի է և շատ երախտական մեր ժողովրդի պատմությունը: Աշխարհի մեջ մեզ վիճակվեց մի հայրենիք՝ հզոր, մեծաքանակ ժողովուրդների ճանապարհի վրա, աշխարհակալ պետությունների բախումների հանգույցի մեջ— և այդ եղավ մեր ճակատագիրը, և շատ դաժան եղավ այդ ճակատագիրը, ուրեմն և մեր ժողովրդի պատմությունը, դարերի մեր անցյալը, մինչև երեկ, մինչև սոցիալիստական Հայաստանի յիսատը:

Փոշիացան մեզ բախտակից ժողովուրդներ, ջնջվեցին ազգերի ցանկից, մեռան, գնացին,— պետք է որ հայ ժողովուրդն էլ ոչնչանար, չէ՞ որ ավելի հզորները ոչնչացան, բայց հայ ժողովուրդը մնաց. հայ ժողովրդի ապրելու կամքը չափազանց հզոր էր, իր թշնամիներից հզոր:

Հայ ժողովուրդը կորցրեց պետություն և իշխանություն, գորք, բանակ, նախարարներ և պարիսպավոր բերդաքաղաքներ, դարձավ գերի, ուսյա, հարկատու օտար զազանաբարո տերերի՝ խաների և շահերի, խալիֆաների և սուլթանների, բայց պահեց իր լեզուն, ամեն բանից բարձր, և իր ապրելու կամքը կենսագործեց իր գրականության և իր բանահյուսության՝ ֆոլկլորի մեջ:

Ամեն բան քայքայվեց Հայաստանում, հայ ժողովրդի շուրջը ամեն բան փուլ եկավ, բայց կանգուն մնաց լեզուն՝ հարուստ, հոյակապ, պատկառելի:

Իսկ լեզուն՝ պետականությունը կորցրած, ստրկացած մի ժողովրդի համար ամեն ինչ է:

Լեզուն փոխարինել է և՛ պետություն, և՛ բանակ, և՛ բերդ: Ժողովուրդների պատմական փորձը ապացուցեց, որ երբ մի ոտնահարված, ստրկացած ժողովուրդ պահում է իր լեզուն, նա ունի իր ազատության բանալին իր ձեռքում, գերության զնդանից ուշ կամ կանուխ ազատվելու բանալին: Հայ ժողովուրդը իր ազատության ոսկե բանալին միշտ կրում էր իր հետ, որի համար նա ոչինչ չխնայեց, դարերով արյուն թափեց և ոչինչ չխնայեց:

Հայ աշխատավոր ժողովուրդը ներքնապես երբեք չհաշտրվեց իր ստրկացած վիճակի հետ. ազատության և անկախ հայրենիքի գաղափարները միշտ ներկա էին նրա հոգում:

Հայ ժողովրդի մշտաբորբոք պաֆոսը եղավ հայրենիքի սերը, ազատության երազը:

Հայ ժողովրդի հոգին՝ չնայած բռնության լծին ու շղթաներին, ըմբոստ և կենդանի մնաց շնորհիվ այդ պաֆոսի, շնորհիվ այդ բոցավառ երազի:

Եվ իր երգի, իր բանաստեղծության, իր էպոսի մեջ լիովին թափեց, հեղեղեց իր բովանդակ հոգին: Իր վշտերն ու հույսերը, զայրույթն ու բողոքը, սերն ու կարոտը, իր տենչանքներն

ու իդեալները: Բովանդակ իր հոգին իր լեզվի մեջ, միակ մեծագին հարստությունը, որ չկարողացան կողոպտել:

Եվ ուր որ գնաց հայ ժողովուրդը, հայ մարդը, — իսկ ո՞ւր չգնաց նա, — տարավ իր հետ իր հայրենի գանձը՝ իր հետ թափառող հայրենիքը, հոգեկան հայրենիքը: Այնտեղ խոսում էին նախնիքները իրեն հետ հարազատ բառով, մայրն էր խոսում այնտեղ ամենաարտագին լեզվով:

Իր հին չքնաղ ավերակները այդ լեզվով էին պատմում իրենց փառքի մասին: Այդ լեզուն հավատ, կորով ներշնչեց նրան, մեր աշխատավոր ժողովրդին՝ կովելու լավագույն ապագայի համար, զենքեր տվեց թշնամիներին հաղթահարելու համար:

Եվ, վերջապես, հայ ժողովուրդը դարերով նվիրագործած իր տենչանքը ազատ, անկախ գոյության՝ անձնավորեց իր հոյակապ դյուցազնի՝ Սասունցի Դավթի մեջ և ստեղծեց, և հավատաց, և պաշտեց իր մարգարեական Մհերին, որի մեջ ամփոփեց դարերի իր կենսափորձը՝ հույսն ու հուսահատությունը միաժամանակ, չար, բռնի անարդար աշխարհի մի անգամ խորտակման անհրաժեշտության և վերակառուցման մասին:

Հայ լեզուն և հայ ժողովուրդը միմյանց պահելով, պաշտպանելով հասան սոցիալիզմի դարաշրջանին, սովետական պետականությանը, երբ լեհիկյան ազգային հանճարեղ քաղաքականությամբ մեր առջև բացվեցին դարերով փակ դռները դեպի մեծ, իսկական, մարդկային կուլտուրան: Չկան այլևս ցարական այլասերող քաղաքականության մեթոդները: Այժմ ամեն հնարավորություն տրված է հայ աշխատավորությանը՝ խորացնելու և լայնացնելու ազգային ձևը՝ ճարտարապետություն, երգ, լեզու:

Այսօրվա հանդեսի իմաստը սա է՝ մայրենի լեզվի և գրականության սերն ու պանծացումը:

Սիրելի բարեկամներ.

Հին հույները կարծում էին, թե՛ աստվածները ում որ սիրում են, նրանց շուտ են տանում իրենց մոտ: Երևում է, որ աստվածները ինձ չեն սիրել, ակալն դրա համար ես ոչ

գոհ եմ, ոչ դժգոհ, որովհետև շատ լավ և շատ վատ բաներ եմ տեսել կյանքում:

Ամենից առաջ տեսա այս անսպառ հետաքրքրական աշխարհը, բնության գեղեցկությունները, տեսա մայրական դեմքը, տեսա Անին, տեսա բանաստեղծներ Հ. Հովհաննիսյանին, Հ. Թումանյանին, լսեցի Կոմիտասին:

Տեսա գիտության և տեխնիկայի զարմանալի գյուտերը՝ տելեֆոն, ֆոնոգրաֆ, սավառնակ, ռադիո և այլն, որոնք կոչված էին մարդկությանը երջանկացնելու, սակայն, սվա՛ղ, նրանք դարձան նաև սպանության ամենահզոր գեներեից մարդկության զարհուրելի թշնամու՝ պատերազմի ձեռքում:

Տեսա շատ և շատ վատ բաներ. աչք բացի թե ոչ՝ ցարական հալածանքները հայության դեմ՝ հայ դպրոցների փակումը, կուլտուրական հիմնարկների խափանում, տեսա 1905—1906 թվերի հեղափոխության պարտությունը, ցարիզմի խելագար վրեժխնդրությունը, կախաղանների շարքը, տեսա բուրժուական-կապիտալիստական հասարակարգը, ուր արքայություն չափանիշն է փողը, ուր աշխատավորը քաղցած է, անաշխատ դրամատերը՝ կուշտ և հղիացած:

Եվ վերջապես հայկական կոտորածները: Հայ ժողովրդի կոտորվելը նոր բան չէ. այն օրվանից, երբ մոհոլ ու թաթար ցեղերը ներս խուժեցին Հայաստան, սկսվեցին ջարդերը. բայց այն զարհուրելի չափերով, ինչ որ կրեց հայ ժողովուրդը 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում՝ ազգերի պատմության մեջ աննախընթաց է:

Սուլթանական քայքայվող Թուրքիան իր վրեժը հանում էր հայերից: Սուլթանն ու ցարը միանման շահագրգռություն ունեին՝ ջնջելու հայությունը, Հայաստանը թողնելու առանց հայերի:

Առաջին իմպերիալիստական պատերազմին սուլթանական պետության կատաղությունը հասավ գագաթնակետին, և ամենայն վայրագությամբ կոտորեց, բնաջնջեց մի ամբողջ ժողովուրդ՝ իր մեծով ու պստիկով, իր հին անցյալով, իր հարուստ ֆոլկլորով, իր կուլտուրայի հնագույն գանձերով:

Երբ սուլթանական Թուրքիան յաթաղանը քաշած՝ այրելով, քանդելով, ջարդելով առաջ էր գալիս ի կատար ածե-

լու իր դարավոր իղձը — հայ ժողովրդի բացարձակ ոչնչացումը — վրա հասավ Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը, ռուս մեծ ժողովրդի օգնությունը, կարմիր հզոր բանակը, և արյան սարսափելի հունձը կանգ առավ:

Հայ ժողովուրդը հավիտյան չի մոռանալու այս փրկարար օրը և հավիտյան նա երախտագետ է և շնորհակալ ռուս մեծ ժողովրդին, բոլշևիկյան մեծագույն կուսակցությանը, անմահ մեծ Լենինին:

Հայաստանը ծնվեց հրի և սրի միջից, դարձավ Մեծ Միության ընտանիքի հավասար անդամ: Այդ օրից սկսվում է մեր վերածնունդը, որի նվաճումների, հաղթանակների փառավոր հանրագումարը՝ տոնը, 20-ամյա հոբելյանը կատարեցինք մի ամիս առաջ:

Սովետական Հայաստանը օրեցօր բարձրանում է, և ես բախտավոր եմ, որ գտնվում եմ ազատագրված իմ հայրենիքում, իմ կենսագործված երազների աշխարհում: Բայց մանավանդ ես հպարտ եմ շահտ, որ դարերի ու ժողովուրդների խորթ զավակ փոքրիկ Հայաստանը՝ այսօր մեծացած և հզորացած Միության եղբայրական գործակցությամբ, կանգնել է կոմունիզմի դրոշի տակ, առաջավոր մարդկության գլուխն անցած՝ կերտում է, կառուցում է ամբողջ տառապող մարդկության փրկության համար այն աշխարհը, որի անունն է կոմունիզմ:

Ես խոսքս վերջացնում եմ, հայտնելով իմ խորագին և սրտագին շնորհակալությունները բոլոր նրանց, ովքեր ուզեցին տոնել իմ 65-ամյա հոբելյանը և կատարեցին ամենայն փայլով ու շուքով:

Ամենից առաջ մեր հարազատ պետության ղեկավարներից եմ շնորհակալ, բոլշևիկյան կուսակցությունից, Համամիութենական գրողների միությունից, հայ գրողների միությունից, եղբայրական հանրապետությունների գրական միություններից, հասարակական կազմակերպություններից, մեր հիմնարկներից, մեր շրջաններից, հասարակությունից:

Կեցցե՛ հայ գրականությունը:

Կեցցե՛ Մեծ Միությունը:

ԽՈՍՔ ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԳԵՍԻՆ

(Լենինականում)

Իմ հայրենի քաղաքն այսօր տոնում է իմ հոբելյանը: Այս հանգամանքը հատկապես հուզիչ է ինձ համար: Անկեղծ խանդավառությամբ ընդունում եք ինձ և հոգուց բխած հըրճվանքով ողջունում եք ինձ՝ ձեր համաքաղաքացուն:

Իմ սիրտը պրունկե-պրունկ լցվում է անհուն, անարտահայտելի բերկրանքով:

Ինչպե՞ս փոխարինեմ ես այս սրտաբուխ վերաբերմունքին: Թույլ տվեք, ուրեմն այս առիթով իմ երախտագիտական խոսքն ասել իմ հայրենի Ծիրակին և իր մաշտաքաղաքին՝ հին Գյումրիին, նոր Լենինականին:

Սիրելագույն Ծիրակն ինձ համար տիեզերքի կենտրոնն է եղել, որովհետև այստեղ է, որ սկսել է բարախել իմ սիրտը: Այստեղ եմ գգացել աշխարհը: Այս կենտրոնումն է սկիզբ առել իմ աշխարհաճանաչումը: Այստեղ եմ լսել և սովորել մեր հոյակապ մայրենի լեզուն: Այստեղ, մեր անուշ տատիկներից լսել եմ հոգի կախարդող հեքիաթներ, մեր փորձաշատ պապիկներից՝ իմաստուն զրույցներ, խոսք ու առած:

Մեր թափառական գուսաններից և գյուղացի աղջիկներից լսել եմ մեր ժողովրդի չքնաղ տաղերն ու խաղերը, մեր մելոսը՝ արտահույզ երգերը:

Մեր հնադարյան, խորիմաստ ֆուլկլորը, որին ես այնքան ու այնքան երախտապարտ եմ...

Մեր հովիվների շվին, մեր աշուղների սազը, մեր գունան ու փողը լցրել են իմ սիրտը մարդկային նուրբ գգացմունքներով, վառել են իմ երևակայությունը և թևավորել իմ պատանի հոգին:

Այստե՛ղ, այստե՛ղ...

Հայկական անցյալ փառավոր կուլտուրայի այս վայրում՝ նվիրական Ծիրակումն եմ հյուսել իմ շքեղ երազները՝ նրա

գմրուխտե Մանթաշում, Ալազյազի ադամանդե կատարի վրա, բյուրեղ աղբյուրների զրնգոցի մեջ, Արփաշայի ափերում, բոստաններում, ջաղացներում և Անիի ներշնչող պարիսպների և առյուծաբաշ բուրգերի տակ:

Թիրակումն է իմ հոգին խոչացել արդար հպարտությամբ ի տես մեր նախնիքների կերտած այդ զարմանալի գեղեցիկ և ներդաշնակ ճարտարապետության, որի մասին հռչակավոր գիտնական Ստոռոթիգովսկին ասում է. «Մի արվեստ, որ կարող է մրցել Հելլադայի և ռոմանական-գոթականի հետ առաջնության դափնու համար»: Այդ վեսն արվեստն է ինձ ամուր հավատ ներշնչել այն հայակեր մուսլ շրջանում, թե հայ ժողովուրդը չի կորչի, որովհետև ստեղծել է ինքնուրույն ոճ, և որովհետև ոճ ստեղծող ժողովուրդները չեն կորչում...

Այսպիսով, իմ սիրելի բարեկամներս, ես չստիպվեցի երախտապարտ եմ իմ հավերժ սիրելի Թիրակին, որովհետև նա ինձ կազմավորել, ոգևորել և դարձրել է հայ հինավուրց ժողովրդի անմահ ու վեհ գրականության անուններից մեկը, կրտսերագույնը: Այստեղ եմ ճաշակել հայ գրականությունը, որից ստացել եմ ես սրբազան պատգամներ՝ դարերի մեջ կրոած, կոփված, և երկյուղածությամբ ծառայել եմ նրանց:

Այնուհետև, ինչքան հասակ եմ առել, այնքան ընդարձակվել եմ Թիրակի սահմանները և վերջը գրկել եմ ամբողջ Հայաստանը:

Եվ Հայաստանը ես միշտ և հանապազ կրել եմ իմ հոգում, ուր որ եղել եմ, Հայաստանը տարել եմ ինձ հետ: Նայել եմ Մոնթբլանին, բայց տեսել եմ Մասիսը, կանգնել եմ Աթենքի Պարթենոնի առաջ, բայց զգացել եմ Երեբունյքը և Հոփսիսիմե տաճարը: Լսել եմ Նեապոլի ժողովրդական երգերը, բայց հուզվել եմ մեր ժողովրդի երգով:

Սակայն, իմ մաքուր, բնական հայրենասիրությունը վիրավորվեց, արյունոտվեց իմ ժողովրդի կրած աներևակալելի ողբերգությամբ: Երբ իմ հերոսական ժողովուրդը անհավասար կռիվի մտավ՝ թոթափելու ստրկության դարավոր լուծը, սուլթանը կոտորելով մեզ՝ հայտարարեց. հայ ժողովուրդը գերեզմանի տեղ միայն կստանա, իսկ ցարի սատրապ Գալիցինը՝ Կովկասի փոխարքան, փակելով հայ դպրոցները և

կուլտուրական ֆակտորները ջնջելով, հայտարարեց. այդ ընթացում ժողովրդից պիտի թողնեն, իբրև մուզեի մնուշ, միայն մի հայ:

Այս կոտորածները ու սխառեմատիկ հալածանքները իմ սիրտը լցրին պեսիմիզով և դառնությամբ, նաև զայրույթով:

Ծանր, մղձավանջալիկ գիշեր հայ ժողովրդի համար, անօգնական, անպաշտպան ընկած գրեթե ամբողջ մարդկության անտարբերության ենթակա... սակայն, ես տեսա, որ այդ մարդկությունն էլ իր սեծագույն մասով դժբախտ է. տեսա, որ միայն հալը չի տառապում, բովանդակ աշխարհը լաց ու կոծի մեջ է. բոլոր ժողովուրդները լծի տակ են առնված, ուժեղը լափում է թուլից, ամենուրեք բռնակալություններ, ճնշումներ, արյունահեղ պատերազմներ ընչաքաղց պետությունների միջև, և պագրոմներ և, վերջապես, ամենուրեք ֆեոդալիզմի կամ կապիտալիզմի ծանրագին լուծերը, շահագործում, հարստահարություն, աշխատավոր մասսաների՝ գյուղացիների, բանվորների ստրկական տնարդի չարաշահություն, փողի անբարոյականացնող իշխանություն, դասակարգերի արյունոտ ահակասություն, տնտեսական վայրագ անարխիա, անագորույն կոիվ՝ ամենքը ամենքի դեմ, ամենուրեք ոճիրներ, եղեռներ, նախնիրներ...

Ի՞նչ անել, մարդկությունն ինչպե՞ս ազատել այս դժոխքից: Պետք է խորհել, որոնել, ելք գտնել... Իհարկե՞ սա մեծամտություն, մեգալոմանիա չէր իմ կողմից, ինչքան էլ որ տիեզերական այդ խնդիրները լուծելու համար չնչին լինեին իմ հոգեկան կարողությունները:

Աշխարհի մասին խորհելը, նրա չարիքները վերացնելու մասին ելք որոնելը միայն մեծ մարդկանց մենաշնորհը չէ, ամեն մի անհատ բնական մղում ունի այդ չարալիկոդ հարցերին պատասխան փնտրելու, սարի հովիվը այնքան, ինչքան մեծ մարգարեները:

Ես սկսեցի որոնել ճշմարտությունը, որոնել փրկությունը մեծ փիլիսոփաների, մեծ գիտնականների, մեծ մարգարեների մոտ և իմ սրտի մեջ:

Երկրե-երկիր թափառեցի և ուսմունքներից ուսմունքներ, կոնցեպցիաներից կոնցեպցիաներ:

Ի՞նչ հին ու նոր փիլիսոփայական՝ էթիկական, սոցիոլոգիական սխառնանքով չեմ տարվել ես— շատ և շատ, հակասական, տարամերժ...

Եվ ես շատ դեգերումներից հետո, վերջ ի վերջո և վերջնականապես կանգ առա վերստին սոցիալիզմի վրա:

Ես այնպես եմ համոզված, թե՛ սոցիալիզմի վերջնական հաղթանակը, կոմունիզմի հաղթանակը ողջ երկրագնդի վրա, միայն և միայն դա կարող է փրկել ողջ չարատանջ մարդկությունը դարերի հասարակական բոլոր չարիքներից, ոճիրներից, սարսափներից, միայն և միայն դա կարող է վերացնել պատերազմները՝ մարդկության ամենից դիվական այդ թշնամին, դատակարգերը, բռնակալությունները, մարդու շահագործումը մարդու միջոցով, բոլոր տեսակի ստրկությունները և աղքատությունը, և սովը, և համաճարակ հիվանդությունները:

Միայն և միայն կոմունիզմը կարող է բերել հավերժական խաղաղություն, թե մեծ և թե փոքր ժողովուրդների իսկական եղբայրություն, երջանկություն բոլորի համար այս երկրի վրա:

Նա միայն կարող է մարդկային ստեղծագործ հանճարի բոլոր զսպված ուժերին ազատել և զարհուրելի կոիվը մարդկանց մեջ ուղղել բնության դեմ, տարերքը հնազանդեցնելու՝ մարդկության ի նպաստ, բովանդակ մարդկության բարօրության, կատարելագործման և անսահման հատաչաղիմության համար:

Հայ ժողովուրդն իր փորձով տեսավ սոցիալիզմի փրկարար հատկությունը: Նա իր գոյության ամենադաժան՝ օրհասական վայրկյանին, երբ կանգնած էր բնաջնջման դիմաց, վրա հասավ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը և փրկեց մի հին դասական ժողովրդի մնացորդները:

Հայ ժողովուրդը սա տեսավ, տեսավ իր իսկական բարեկամին՝ ռուս մեծ ժողովրդին, անհասանելի հանճար Լենինին, բոլշևիկյան հզոր կուսակցությանը: Եվ հայ ժողովուրդը հավիտենապես շնորհակալ է այս մեծագործության համար:

Մեր ժողովուրդը վաղուց էր նախատեսել իր ազատագրումը՝ պայմանավորելով այն չար աշխարհի մի անգամի կործանումով և վերստին կառուցումով:

Նա ստեղծել էր Մհերին որպես իր զինված մարգարեին, որ ազատությունը և արդարությունը սրով պիտի կենսագործե, իր Թուր-Վայծակիով: Լավ ըմբռնելով, որ ազատությունը և արդարությունը առանց ուժի՝ ունայն հնչյուններ են:

Ես արտասահման էի, երբ ազատագրվեց Հայաստանը, և սովետական կարգերը հաստատվեցին այստեղ և սկսվեց սոցիալիզմի կառուցման հաղթանակող գործը:

Եվ ես վերադարձա հայրենիք: Ինչպե՞ս չվերադառնայի իմ բազմաշարշար հայրենիքը՝ վերածնված հիմա, հոգով-սրբ-տով գուրգուրված այն նվիրական հողը, ուր կան այնքան քաղցր ձայներ, հին-հին դարերից եկած, հարազատների ձայներ, նահատակների ձայներ, հերոսների ձայներ: Ուր կան մտերիմ դեմքե՛ր, քնարական դաշտե՛ր, վիպական լեռնե՛ր, մայրենի բարբառ, ժողովրդական երգի սրտագին մթնոլորտ, վերջապես հայ ժողովուրդը՝ աշխատավոր և արդար, Հայաստանի պատկառելի ժայռերից ծնված, քարից հաց հանող և քարից հրաշքներ կերտող հայ ժողովուրդը:

Ես ապրում եմ հիմա սոցիալիստական Հայաստանում, Մեծ Միության մեջ, իմ երազների, իմ դեգերումների վերջնական հանգրվանում:

Ես ապրում եմ իմ ժողովրդի հետ, տեսնում եմ նրա կուլտուրական և տնտեսական աճն ու վերելքը՝ համալսարան, անթիվ դպրոցներ, թատրոններ, օպերա, կոնսերվատորիա, գործարաններ...

Ես հպարտությամբ տեսնում եմ նրան Մեծ Միության ժողովուրդների հետ, կողք-կողքի, կոմունիզմի վեհապանծ դրոշակի տակ, կոմունիզմի աշխարհաերթ բանակի մեջ, ինչպես դիպուկ ասել է մեր տաղանդավոր բանաստեղծ, սիրելի Նսիրի Չարյանը:

Սիրելի՛ ընկերներ, իմ տարիքն ու փորձը թույլ են տալիս ինձ այս նշանաբանները տալու ձեզ.

Հայրենիք,

Մայրենի լեզու,

Ժողովուրդների եղբայրություն,

Ինտերնացիոնալիզմ,

Կոմունիզմ,

Բոցավառ շրթունքներով համբուրում եմ այս նվիրական
նշանաբանները և հանձնում եմ ձեզ, սիրեցեք դրանց, պաշ-
տեցեք և կիրառեցեք ամենայն հավատով, քաջությամբ և
անձնվիրությամբ:

Խոսքս վերջացնելով, հայտնում եմ իմ սրտաբուխ շնոր-
հակալությունը Լեւոնականի բուլճիկյան կուսակցության ըն-
կերներին, քաղսովետին, հոբելյանական հանձնաժողովին,
«Բանվոր» թերթի խմբագրությանը, գրչակից եղբայրներին,
դերասաններին, երգիչներին, բոլոր համաքաղաքացիներին...
բոլորին, որ անվերապահ ջանք թափեցին այսպես փառավոր,
սիրազեղ տոնելու իմ հոբելյանը:

Կեցցե՛ հայ գրականությունը:

Կեցցե՛ Մեծ Միությունը:

ՄՏՔԵՐ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայ ժողովուրդը պատմության հորիզոնի վրա առաջին անգամ երևում է 6-րդ դարում մեր թվականությունից առաջ, և նրա՝ որպես քաղաքականապես ձևավորված պետության հետ՝ պայքարում է պարսից արքա Դարեհ Վչրասպյանը: Սակայն, դարերի այդ խորքից մեզ ոչ մի գրավոր վկայություն չի հասել: Միայն 5-րդ դարի պատմաբան Մովսես Խորենացին, կազմելով հայ ժողովրդի պատմությունը, օգտորվել է մեր թվականությունից առաջ և հետո հյուսված բոլոր առասպելներից: Իր ժամանակակից պատմական ըմբռնման սահմաններում Մովսես Խորենացին իրեն մատչելի բոլոր միջոցներով ջանացել է լուսաբանել հայ ժողովրդի ծագման և հետագա զարգացման հարցերը: Նա մանրակրկիտ կերպով ուսումնասիրել է մեր նախահայր Հայկի՝ բարելացի Նեմրոդի Բելի վրա տարած հաղթանակի հայկական էպոպեան: Այս առասպելա-հերոսական դարաշրջանից մեր օրերն են հասել միայն գողթան երգիչների՝ գուսանների երգերի, թեև չափազանց արժեքավոր, բայց առանձին հատվածները:

Մեր վավերագիր գրականությունն սկիզբ է առնում հայոց նոր այբուբենի գյուտից և աստվածաշունչը հայերեն թարգմանելուց հետո:

Հինգերորդ դարը մեր գրականության պատմության մեջ վերին աստիճանի նշանակալի երևույթ է: Սկսվում է մի աննախընթաց ծաղկում, երևան է գալիս պատմաբանների փայլուն պլեադան՝ Ղազար Փարպեցի, Զենոբ Գլակ, Փավստոս Բյուզանդ, Մովսես Խորենացի, Եղիշե փիլիսոփաներ՝ Եզնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ: Թարգմանվում են Պլատոնը, Արիստոտելը և ուրիշները:

Այդ օրվանից սկսած մինչև մեր օրերը, 1500 տարվա ընթացքում հայ ժողովրդի միտքն ու սիրտը շարունակել են անընդհատ երազել, հավատալ, և այս կամ այն ձևով ջանա-ցել են լուծել ներքին և արտաքին կյանքի հարցերը:

Այն, ինչ իրականացրել է ժողովրդի հանճարը այս երկար ժամանակամիջոցի ընթացքում գրականության ասպարեզում, այնքան հարուստ ու բազմազան է, որ այդ գրականությունը պատիվ կբերեր իրենց պատմական նշանակությամբ ու իրենց տարիքով հայ ժողովրդին չզիջող շատ ու շատ ժողովուրդների: Բավական է հիշատակել, որ չխոսելով անհետ կորած մեծաքանակ գրավոր մատուցների մասին, մեզ հասել են 22 հազար հատորից ավելի գրական կոթողներ, որ անփոխարինելի օժանդակություն է Մերձավոր Արևելքի ժողովուրդների կյանքում տեղի ունեցած պատմական դեպքերն ուսումնասիրելիս:

Հայ ժողովրդի հայրենիքը շարունակ եղել է գործողության թատերաբեմ ամեն տեսակ նվաճողների համար:

Երբ հենվելով հայ ժողովրդի բազմադարյան պատմության և նրա խիստ հարուստ գրականության վրա, մենք ջանում ենք երևան հանել նրանց, այսպես ասած, փիլիսոփայական էությունը, անխուսափելիորեն հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

Մեր գրականության հավերժ շողջողացող բովանդակությունն է եղել ազատության անշեշ ծարավը, պայքարը, հայրենասիրությունը և մարդկային արժանապատվության հարգանքը:

Դեռ հայ հնագույն հումանիստներից մեկը՝ Սեբեոսը, նշում է, որ մեր ժողովրդի նվիրական երազը եղել է հայրենի երկրի բարգավաճման համար ապրելն ու յնճելը:

Այս երազը կայծակի նման անցել է մեր պատմության միջով՝ սկզբից մինչև մեր օրերը:

Հայ ժողովուրդը, և հանձին նրա ողջ հայ գրականությունը, դարերով պայքարել է հայրենի երկրի անկախության ու ինքնավարության համար: Հինգերորդ դարի բանաստեղծ-պատմաբան Եղիշեի դյուցազներգությունը մի հիմն է ի փաստ հայ ժողովրդի՝ պարսից փաղանգների դեմ նրա

մղած պայքարի առթիվ: Այս պայքարն ու այս երգը շարունակեցին մեր գրողները մինչև ամենավերջին ժամանակներս: Այս բոցավառ կյանքով և ուժով աղեցուն, նվիրական հեղինակները նպաստել են մեր ժողովրդի ազատագրվելուն արաբ գիշատիչների, պարսից շահերի, մոնղոլ լյաների, տաճկաց սուլթանների և ռուսական ցարերի լծից:

Հավերժաբար արյամբ ողողված, շարունակ ճնշված բազմաթիվ ժողովուրդների մոտ միշտ կարելի է գտնել այս աստիճան հայրենաբաղձ, այսքան հոգեզմայլ երգեր, մանավանդ հայրենիքի կարոտը արտահայտող երգեր (կսկծալի տարեգրությունների հետևանքով), ինչպես հայ գրականության մեջ պատահող երգերը:

Անարդարության, բռնության, ջարդերի դեմ, աստծու դեմ արտահայտված դատն և ուժեղ վրդովմունքն ու տըրտունջը կազմում է հայ գրականության երկրորդ բնորոշ առանձնահատկությունը:

Երկրային ուրախ կյանքից հրաժարվել պահանջող քրիստոնեական ասկետիզմի դեմ մղած պայքարը մի բողոք է հանուն սիրո, ուրախության և երջանկության (Կոստանդին Երզնկացի, Գրիգոր Ախթամարցի, Նահապետ Քուչակ): Տրտունջը և իրենց ու տիեզերական աշխարհից դեպի մի երևակայական անհոգ ու երջանիկ աշխարհ փախուստը (Հովհաննես Հովհաննիսյան, Վահան Տերյան): Բողոք ընդդեմ տիրող հասարակարգի, ընդդեմ սոցիալական անարդարության, ընդդեմ ազգային դասակարգային ճնշման, ընդվզում հանուն արդար ու ազատ իրավակարգի (Ֆրիկ, Միքայել Նալբանդյան, Գաբրիել Սունդուկյան, Ծիրվանզադե, Թումանյան, Դանիել Վարուժան, Ծուշանիկ Կուրդինյան, Հակոբ Հակոբյան):

Հումանիզմը և ժողովրդայնությունը հայ գրականության գլխավորագույն բնորոշ առանձնահատկությունն է՝ կարեկցություն ու սեր դեպի մերժվածները, դեպի հասարակական անարդարության զոհերը, տառապողներն ու ընչազուրկները (Լևոն Մանվելյան, Հակոբ Պարունյան, Գրիգոր Զոհրապ, Նար-Ռոս, Դերենիկ Դեմիրճյան):

Հայ գրականությունն իր զարգացման առաջին շրջա-

նում որոշ չափով կրել է հունական և արաբական ազդեցություն: Հետագայում նա շատ բանով պարտական է ոուսական, շատ թե քիչ անգլիական, ֆրանսիական և գերմանական գրականություններին: Նրա մեջ արտահայտվել է ընդհանուր շատ բան նրանց դեմոկրատական, հումանիստական և հեղափոխական հոսանքներից: Այնուամենայնիվ, հայ գրականության ամբողջ ստեղծածը միանգամայն ինքնուրույն է: Այստեղ մենք տեսնում ենք հնագույն ժողովրդի ներքին կյանքը, նրա վիշտն ու տառապանքները, նրա նվիրական իդեալների ծաղկումը, այն ամենը, ինչ կազմում է հայ ժողովրդի փառքն ու պարծանքը և հանդիսանում է նրա գոյության աղբյուրը:

Սովետական իրավակարգը, ազատագրված Հայաստանը կերտեցին նոր գրականություն:

Սովետական պետությունն ամեն կերպ ընդառաջում է մեր երիտասարդ գրողներին: Դա պարտավորում է նրանց ստեղծել լեհիճյան դարաշրջանի տիտանական ոգով համակված երկեր:

1941

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՈՐՅԱԿԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Հայ ժողովուրդը ստեղծել է հույակապ կլասիկ լեզու, անգուգական հնադարյան էպոս՝ Հայկի, Արամի, Արայի և Արտաշեսի մասին, ստեղծել է միջին դարերի հերոսական էպոս՝ Սասունցի Դավթի և նրա որդի Մհերի վիպասքը, դյուցազունների, որոնց մեջ մարմնավորված է ժողովրդի իղձը հայրենիքի հաղթության, նրա ազատագրման և աշխարհի վերափոխման մասին:

Հայ նարտարապետությունը սքանչելիորեն ներդաշնակում է երկրի պեյզաժի հետ. նա կարծես թե մեր լեռների ու ժայռերի իմաստալից շարունակությունն է: Նա խիստ է իր գուսպ ձևերի մեջ, ունի շատ քիչ օրնամենտ:

Միջնադարյան գրականությունը հիմնականում լիրիկական է. նկարագրելով հայրենիքի հարուստ, ճոխ բնությունը՝ ձյունապատ բարձր լեռները, գեղեցիկ հովիտները, կիզիչ արևը, նա զարդարված է արևելյան պոեզիայի վառ գույներով, միևնույն ժամանակ ազատ է չափազանցություններից, հիպերբոլիզմից, սակավաբառ է ու սեղմ: Սերն այդ պոեզիայի մեջ գուսպ է, մաքուր և անարատ:

Մեր ժողովրդի հերոսն էմոցիոնալ է, նուրբ և սրտագին: Բազմազան և հարուստ ժողովրդական ստեղծագործության մեջ մարմնավորված են մեր ժողովրդի բնավորության լավագույն գծերը, նրա անհողդողդ կամքը հաղթանակի նկատմամբ, ակտիվությունը: Արվեստի, ժողովրդի ստեղծագործության կերտվածքները դարեր շարունակ ծառայել են նրան նաև որպես պայքարի անխորտակելի զենք: Ժողովրդական երգիչները՝

...Մեր գեղջուկի պարզ խրճիթում,

սուրբ օջախի շուրջը նստած,

Գուսանները մեր խանդավառ, առջևները
 զինի ու եաց,
 Վիպերգեցին հաղթանակը դյուցազների
 մեր մեծագոյ
 Եվ ծաղրեցին պարտությունը ոսոխների
 մեր բյուրավոր...
 Տեսան շքեղ մեր ապագան, անընկճելի
 ազատ ոգին,
 Հայրենիքի սիրո համար միշտ
 բարձրացած Թուր-Կայծակին:

Հայաստանը դարեր շարունակ ծառայել է իբրև հզոր
 պետությունների միջև ահեղ ընդհարումների թատերաբեմ:
 Օտտ հաճախ հայ ժողովուրդն ևս պայքարելով իր հողի ու
 գոյության համար, կուլել է անձնվիրաբար, արյուն է թափել,
 կատարել է հերոսական սխրագործություններ, զենքով պահ-
 սխանել է իր ազգային կուլտուրական արժեքները:

Ես իրավամբ հպարտանում եմ, որ այդ մարտնչող, հերո-
 սական ու անմահ ժողովրդի զավակն եմ:

Ես ծնվել եմ Հայաստանի պատմական Շիրակի գավա-
 ռում: Այստեղ մանկական իմ երևակայությունը թևավորվեց
 դարերի խորքից եկող բանաստեղծական ֆոլկլորով, գուսան-
 ների ու գյուղացիների երգերով, անցյալի ազնիվ հուշարձան-
 ներով: Ես ջերմորեն սիրեցի ճարտարապետության հուշար-
 ձանները, որոնք, թեև կիսավեր, բայց այնուամենայնիվ հզոր
 էին, ինչպես հզոր է ոտքի վրա մեռնող ոսպմիկը:

Ես տեսել եմ Անին, հրաշակերտ Անին, Բագրատունյաց
 մայրաքաղաքը, որտեղ 10—11-րդ դարերում ծաղկեց ու իր
 գագաթնակետին հասավ հայկական ճարտարապետությունը:

Մայրս սովորեցնում էր սիրել ամբողջ աշխատավոր մարդ-
 կությունը, սիրել հայրենի երկիրը, նրա բնությունը: Եվ հայ գը-
 րականության հուշարձանները իմ մեջ սեր էին դաստիարա-
 կում դեպի հայրենիքը, դաստիարակում էին քաղաքացիական
 գիտակցականություն: Համաշխարհային և ուսական առաջա-
 վոր գրականությունը բերում էր հումանիզմի, ժողովրդայնու-
 թյան նույն այդ գաղափարները: Իսկ ուսական արգելված
 գրքերը ոգեշնչում էին հեղափոխական պայքարի, անձնագրի

կովի՝ ընդդէմ կեղեքման ու բռնության, հանուն աշխատավոր ժողովրդի ազատագրման:

Ցարիզմը ճնշում էր իմ հայրենիքի ժողովրդին, սերմանում էր արհեստական, թունուտ ատելություն հայերի ու աղքատ քեջանցիների միջև, հայերի ու վրացիների միջև, ոռուների ու հրեաների միջև: Իմ հայացքն ուղղվում էր դեպի արևմտյան Եվրոպա, որտեղ մի ժամանակ հնչեց ֆրանսիական հեղափոխության շեփորը:

Այդ՝ անցյալ դարի վերջի, ներկա դարի սկզբի տարիներն էին:

Բոլորովին երիտասարդ հասակում ես գնացի Արևմուտք: Ավա՛ղ, այստեղ ևս պոետին սպասում էր հիասթափությունը— նողկալի մարդատյացություն, հակահումանիստական զգացմունքների խրախճանք, ուսանողների սեղանների վրա ոռասյական թեորիայի մասին շքեղ հրատարակված հատորներ, թշմամական գրքույկներ մեծ ու փոքր ժողովուրդների մասին...

Այնքան խորն էր ինձ վրա հայ երգի և ճարտարապետության ազդեցությունը, որ ուր էլ գնայի ես, Հայաստանն էի կրում իմ սրտում: Նեապոլում ես լսեցի իտալական ժողովրդական երգեր, բայց ականջիս հնչում էին իմ հեռավոր հայրենիքի երգերը: Նայելով Աթենքի սքանչելի կոթողներին, ես տեսնում էի միայն գեղեցիկ Անին:

Իսկ շուրջս՝ Եվրոպայում, ամենուրեք, կատալարող դասակարգերը արհամարհանք, ատելություն էին հրահրում դեպի Ասիայի ու Աֆրիկայի ժողովուրդները, դեպի գաղութային ժողովուրդները, որոնց վրա նրանք նայում էին իբրև դաշտերի պարարտանյութի: Հանցավոր մարդատյացությունը հասել էր սարսափեցուցիչ չափերի:— Մենք սարսուցիկն փաշաների ու բէլերի գազանություններից, որոնք կազմակերպում էին հայերի կոտորածը: Ոչնչանում էր հնադարյան հարուստ կուլտուրա ունեցող մի ամբողջ ժողովուրդ, սրի էին քաշում մեծերին ու փոքրերին, երեխաներին ու կանանց: Հայերին խոշտակում էին ավելի անխնա ու անողոք կերպով, քան թե քարհատն է վարվում իր քարերի հետ:

— Հայերը ստորին ոռաս են, հայը մարդ չէ, նա չունի հո-

դի և ազատության իրավունք, նա տեղ չունի արևի տակ: Ազ-
նիվ ուսասյի շենքը պետք է կառուցվի հայերի ոսկորների վրա:

Այսպես էին ասում հայ ժողովրդին կեղեքողները: Դա
մարդատյացական ծանոթ ունոցն էր:

Հին Իրանի մարգարե Զրադաշտն ասում էր. «Իսկ ե՞րբ,
հապա, մարդկության քարավանը կընթանա արդարության
ուղիով»:

Անսահման հուսահատության մեջ, ես այն ժամանակ կրրկ-
նում էի. «Երբե՛ք, երբե՛ք, երբե՛ք»: Ուզում էի փախչել արյու-
նով ներկված մոլորակից, հեռանալ ժամանակից, տարածու-
թյունից, տիեզերքից...

Բայց իսկական մարդկային սիրտը չէր կարող բոլորովին
մեռնել:

Հրդեհվող քաղաքների, արյան հեղեղների, աննպատակ
ու անհամար զոհերի վրայով, վերջապես, մեզ էլ հասավ դա-
րերի մեծագույն հաճմար Լենինի մարգարեական, զգաստաց-
նող ձայնը:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը
փրկեց և կյանքի կոչեց հայ ժողովրդին, որը կանգնած էր գե-
րեզմանի եզրին: Սկսվեց իսկական վերածնությունը, որի մա-
սին ժողովուրդը երազել էր դարեր շարունակ:

Այդ նվիրական օրից անցել է միայն 20 տարի, բայց նախ-
կինում ավեր Հայաստանը դարձել է միանգամայն անճանա-
չելի: Նա իրավահավասար անդամ է Մեծ Սովետական Միու-
թյան ժողովուրդների ընտանիքում: Օրեցօր ամրապնդվում են
սիրո և բարեկամության կապերը Հայաստանի, Վրաստանի,
Ադրբեջանի ժողովուրդների միջև, որոնց ցարիզմը հրահրում
էր միմյանց դեմ:

Մեծ Միությունը կազմող ժողովուրդները ոգևորված են
միևնույն գաղափարով, նրանք պայքարում են միևնույն, բո-
լորին ընդհանուր նպատակի համար: Մեկի կուլտուրան ու
տնտեսական նվաճումները հրճվանք են պատճառում մյուս
բոլորին: Չկան մերձավորներ ու հեռավորներ, ոչնչացված է
բաժանումը բարձր ու ստորին ուսասների, կեղեքողների ու
կեղեքվողների:

Սովետական Միության մեջ «հետամնաց» ժողովուրդները

ցույց տվին իրենց հոգևոր հարստությունը՝ ֆոլկլորը, էպոսը, երգերը, խոր հարգանքի արժանի արվեստը: Կարճ ժամանակում նրանք անցան զարգացման վիթխարի ուղի՝ կառուցեցին քաղաքներ, բաց արին բազմաթիվ դպրոցներ, ստեղծեցին թատրոններ, իրենց գրականությունը: Նրանք տիրապետեցին տեխնիկային, որը, ինչպես կարծում էին առաջ, միայն «ընտրյալ ազգերի» սեփականությունն էր հանդիսանում:

Ժողովուրդների իմաստուն առաջնորդ վեճ բոլշևիկյան կուսակցության ամենօրյա հոգատարության շնորհիվ աճում է հայ ժողովրդի տնտեսական բարեկեցությունը, բարեկարգվում են քաղաքները, ջրանցքները կենդանություն են տալիս երբեմնի ամալի դաշտերին, անընդհատ աճում է ֆաբրիկաների ու գործարանների թիվը, ծաղկում են համալսարանը, կոնսերվատորիան, ամեն տիպի ուսումնարանները, սքանչելի օպերան, շքեղ թատրոնները, կինոները և թանգարանները:

Գրքերի հրատարակությունը Հայաստանում հասել է չըտեսնված չափերի: Լույս են ընծայվում բազմաթիվ գիտական ու գեղարվեստական գրականություն, ռուսներից և եղբայրական ժողովուրդների լեզուներից կատարվող թարգմանություններ, վերահրատարակված են հայ կլասիկների շատ երկերը:

Հայ ժողովուրդն աճում է և զարգանում: Ազատություն տալով նախկինում խեղդվող իր ստեղծագործական եռանդին, նա ոգևորված ու համարձակ միացել է սոցիալիստական հասարակությանը, նրա ակտիվ, հարձակողական շարժմանը դեպի առաջ:

Օգտագործելով պատմական լավագույն տրադիցիաները, Խորենացու, Նարեկացու, Քուչակի, Սայաթ-Նովայի, Կոմիտասի կլասիկ ժառանգությունը, հայ ժողովուրդը ստեղծում է նոր արժեքներ՝ կոմունիզմի ոգով:

Հոգատար պահպանվում են հնադարյան ճարտարապետության հուշարձանները, կատարվում են նոր պեղումներ, հավաքում են ֆոլկլորը, ժողովրդական երգերը:

Օգտվելով մեր ամենահարուստ ֆոլկլորից, ես մշակեցի «Սասնա Մհեր» էպոսը և այժմ աշխատում եմ նրա վրա, լրբացնելով այն: Իմ դեռ կիսավարտ վեպ-էպոս «Ռուտա Կարոն» նույնպես իր մեջ կրում է ֆոլկլորի շատ տարրեր: Այժմ

ես նյութեր եմ հավաքում և աշխատում եմ Լենինի մասին Էպի-
կական երկի վրա, նույնպես հիմք ընդունելով Էպոսը, ռուսա-
կան բիլինաները:

Պատմությունն ազդում է ժողովուրդների երջանկության
վրա, ամբողջ աշխարհի եղբայրության ու ազատության վրա:

Պատմական բախտի բերումով ամբողջ աշխարհում ցիրու-
ցան հայ աշխատավորների հայացքներն ուղղված են դեպի
Սովետական Հայաստանը, դեպի ավետյաց երկիրը, հայերի
սրբազան հայրենիքը: Այդ հայրենիքը ես գտա Սովետական
Միության մեջ, սոցիալիզմի երկրի եղբայրական ժողովուրդ-
ների հարազատ ընտանիքում:

1941

ԿՈՒՆՎԻ ԱՌԱԿՆԵՐԸ

Ամբողջ մի դար Կոիլովի առակների անմահ գիրքը եղել է ռուս ժողովրդի և կուլտուրական մարդկության համար իմաստուն ուղեկից՝ մանուկ օրերից մինչև ծերություն:

Կոիլովը խոսել է մեր բոլորիս հետ իր չքնաղ առակներով, խրատել է և դաստիարակել:

Առակները, բանայաները, գիտափյան տերմինով՝ ֆաբլները մարդկային հանճարի ամենահին ստեղծագործություններըն են: Բոլոր ժողովուրդների ֆոլկլորը հարուստ է դրանցով:

Այդ ստեղծագործությունները մի մասով հենված են կենդանական էպոսի վրա, ուր կենդանիները և բույսերը, բնության անշունչ առարկաները օժտված են մարդկային հատկություններով, խոսում են ու գործում, որպես թե՛ մարդիկ լինեին:

Մյուս մասով առակները հենված են միֆայան դիցաբանական ըմբռնումների վրա: Նրանց մեջ աստվածներն են գործում, նաև մարդիկ. վերջիններս երբեմն գործում են այնպես, որպես թե՛ կենդանիներ լինեին:

Այսպիսով, անասունները դառնում են ասուն, և ասունները՝ անասուն (անտրոպոմորֆիզմ և զոոմորֆիզմ):

Այս երևույթները մարդկության մանուկ հասակի անիմաստական աշխարհաճանաչության արդյունք են, երբ բնությունը շնչավորված և ոգևորված էր ներկայանում նախամարդու աչքին:

Հետագա զարգացման ընթացքին կենդանական էպոսն ստացավ այն ձևն ու իմաստը, ինչ որ հասկանում ենք հիմա առակի ժանրի տակ՝ դիդակտիկական-խրատական: Մյուսեւոր ծառայում է իբրև իլյուստրացիա խրատին, այսինքն մորալին: Եվ իբրև պեգորիա, այլաբանություն՝ հարմարագույն ձևը մարդկանց դաստիարակելու:

Ժողովուրդները կենդանիների և արանց խարակտերիստիկ բնագոյների դիմակի տակ ցուցադրեցին մարդկանց բնավորությունները և տիպերը, դասակարգային հակասությունները, մարդկանց կրքերը, ձգտումները, թերությունները և հիմարությունները: Չաղկեցին, ծաղրեցին, խարազանեցին բարոյական այդ պակասությունները, այլանդակությունները:

Ժողովուրդները, ավանդաբար, գայլի մեջ տեսան դաժան մարդուն, աղվեսի մեջ՝ խորամանկին, անպաստասկի մեջ՝ վախկոտին, ինչպես առյուծի մեջ՝ բռնակալին, իսկ ոչխարի մեջ՝ հլու ժողովրդին և այլն, և այլն:

Ժողովուրդները շատ են սիրել առակները, դրանք արանց իմացության ֆորմուլաներն են հանդիսացել, և անվիճելի են իբրև արսիոմներ:

Ժողովուրդը իր մտքի ճշմարտության վկա է բերում դրանց: Պատմության մեջ շատ անգամ մեծ մարդիկ, ինչպես Լենինը, ոգեկոչել են առակախոսներին:

Գիտության մեջ վեճ կա, թե առակները ամենից առաջ որտե՞ղ են ծագել՝ Հնդկաստանում, Եգիպտոսում, թե՞ Հունաստանում: Եթե հունական անտիկ աշխարհի առակախոս թրակիացի Եզոպոսը, ըստ ավանդության, ապրել է մեր Էպոխայից վեց դար առաջ, ո՞նպա էթովպացի Հաբիս Լոխմանը, դարձյալ ըստ ավանդության՝ մեր Էպոխայից տասը դար առաջ: Աստվածաշունչը լիքն է առակներով, Բուդդան և Կոնֆուցիոսը խոսել են նույնպես առակներով: Ժամանակագրական տվյալները անվիճելի չեն:

Ճշմարտությունն այն է, որ բոլոր ժողովուրդները ստեղծել են առակներ, որոնք երկրագնդի հետ միասին թավալվել են նրա առանցքի շուրջը: Հազարների է հասնում դրանց թիվը: Դրանք թափառել են մի ժողովրդից մյուսի մոտ: Քարավանները, պատերազմներն ու գերիները տարածել են դրանց: Այդպիսով, առակները ժողովրդից-ժողովուրդ անցնելով, ընդունել են տեղական կոլորիտ, համ ու հոտ, ազգայնացել են՝ հարմարվելով կենցաղին, վարքերին ու բարքերին, տեղական ֆլորային ու ֆաունային: Ընդունել են բազմաթիվ մոծումներ՝ ինտերպոլացիաներ: Եվ թափառելով, շրջելով, նորից եկել են իրենց հայրենիքները, իբրև նորություններ, վարիանտներ:

Այս խաչածնումների շնորհիվ ժողովուրդներն ազդել են միմյանց վրա, հարստացրել են մարդկային հոգեկան գանձերը, դարձրել են առակները սիջազգային, բոլոր ժողովուրդների հարազատ սեփականություն:

Ե՞րբ են գրական մշակման ենթարկվել առակները:

Եզոպոսին վերագրված առակները, որոնք Փոքր Ասիայի ժողովուրդներինն էին, և Եզոպոս ավելի շուտ ժանր է նշանակում, քան հեղինակ, և եզոպոսյան տերմինը ընդհանուր հասկացողություն է— այդ առակները, ըստ ավանդության, Սոկրատեսը բանտում ոտանավորի էր վերածուս, սակայն րբանցից ոչ մի գրավոր հետք չի մնացել:

Առակների ամենահին գրական մշակման պատիվը պատկանում է Հնդկաստանին: Առակների առաջին գրավոր դրույմենտը՝ «Ջակայթա» գիրքն է, սանսկրիտերեն գրված հինգ դար նախքան մեր էրան: Սրանից ծագել է ավելի ճոխացած նշանավոր Պանչա Տանտրան, սրանից՝ ուրիշ ասպեկտի տակ, Հիտոպատան: Սրանք գրված են հնդիկների լեզվով և կան մինչև այսօր: Վերև հիշվածներից ծնունդ է առել պարսկա-արաբական մշակումներով և հավելումներով հռոչակավոր «Կալիլա և Դիմնան» մեր Էպոխայի 4—5 դարում, որ Եվրոպայում հայտնի եղավ Բիզպայ կամ Պիլպայ հնդիկ Բրահման իմաստունի անունով:

Այնուհետև գալիս են պարսկական և թուրքական նոր վարիանտները «Թութի-Նամեները» և Հմայուն-Նամեն:

Հայկական առակագիր Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու (XI—XII դարերում) ինքնուրույն առակների կողքին կան նաև սիջազգային առակների սյուժետներ՝ ազգայնացրած և յուրացրած, բայց մանավանդ ճոխացրած հայկական ֆոլկլորի ստեղծագործություններով: Նույնը կասենք 18-րդ դարի վրացական առակագիր Սուխան Սաբա Ծրբեխանու «Իմաստություն ստի» գրքի մասին:

Եզոպոսի առակների գրական մշակումը հունական լեզվով կատարել է Բաբրիուս՝ 2-րդ դարում մեր էրայից առաջ, և լատիներեն Փեդրոս՝ 2-րդ դարում մեր էրայի: Սրանք հասել են մեզ: Եզոպոսին մենք ճանաչում ենք սրանց շնորհիվ:

Առակների գեղարվեստական մշակումը իր կատարելու-

թյանը հասավ Եվրոպայում շնորհիվ երկու մեծ առակագիր-
ների՝ Լաֆոնտենի՝ 17-րդ դարում և Կոիլովի՝ 19-րդ դարում:

Իվան Կոիլովը ծնվել է 1768 թվին, զինվորականի ոչ ու-
նկոր ընտանիքում. վաղ հասակում որբացավ և 17 տարեկանից
սկսած հարկադրված եղավ իր աշխատանքով պահել մորն
ու եղբորը: Նա ունեցավ ծանր, կարիքավոր պատանեկություն.
գրեթե դպրոցի երես չտեսավ և չստացավ կարգին կրթու-
թյուն:

Սակայն, իր բնական մեծ խելքի և նույնչափ ուժեղ կամքի
շնորհիվ, իր անխնց աշխատանքով, իր անհազ ընթերցասի-
րությանը հասավ զարմանալի հաջողությունների:

Ինքնուսուրյամբ սովորեց ֆրանսերեն, գերմաներեն և շատ
ուշ հասակում հունարեն: Բնագրերի մեջ կարդաց Ռասին,
Մոլիեր, Ռուսո, Վոլտեր ու Հոմերոս և այլն:

Վաղ հասակից սկսեց գրել պիեսներ, կոմեդիաներ և բա-
նաստեղծություններ: Այդ ժամանակ Պետերբուրգում գոյու-
թյուն ունեին գրական խմբակներ՝ թշնամական տրամադրու-
թյամբ վելոմոժաների դեմ: Կոիլովը այդ խմբակներից մեկի
անդամն էր: Այդ խմբակների անտեսանելի ոգևորողը և ու-
սուցիչը նշանավոր հեղափոխական և ազատաբաղձ Ռադիշ-
չևն էր: Նա էր նաև Կոիլովի ներշնչողը: Իր «Հոգիների սուր-
հանդակ» թերթում Կոիլովն արտահայտում էր Ռադիշչևի
և առաջավոր հասարակության ազատասիրական, ժողո-
վրդապաշտպան տրամադրությունները: Պայքարի պաֆո-
սով վառված երիտասարդ Կոիլովը իր պիեսներում և հող-
վածներում մարտնչում էր սոցիալական չարիքի դեմ. կատա-
ղի հարձակվում էր ճորտատեր-կալվածատերերի վրա և
ցույց էր տալիս ազնվական դասակարգի անբարոյականու-
թյունը և քայքայումը: Իր կծու սատիրայով և դառն երգիծան-
քով խարազանում էր կաշառակեր չինովնիկներին, վաճառ-
վող դատավորներին, կալվածատերերին, որոնք քամում
էին ճորտերի ուղն ու ծուծը և նրանց քրտինքով հղիանում՝
անձնատուր լինելով իրենց անսանձ կրքերին: Թատերական
վարչությունը մերժում էր բեմադրել նրա պիեսները. ազնվա-
կանների միջավայրից դուրս եկած գրողները խորապես վի-
րավորված էին նրա հարձակումներից: Այսպիսով, Կոիլովի

դեմ շատ թշնամիներ առաջացան, միևնույն ժամանակ ձերբակալվեց Ռադիշչևը և արքայվեց Սիբիր. ոստիկանությունը փակեց «Հոգիների սուրհանդակ» թերթը, խուզարկեց տպարանը, և Կոիլովն ընկավ կառավարության կասկածանքի տակ: Նա զգաց վերահաս վտանգը, հեռացավ մայրաքաղաքից և գնաց գավառ, մի տեսակ անհայտացավ:

Տարիներ հետո Կոիլովը վերադարձավ Պետերբուրգ և սկսեց խոսել ճոր լեզվով— եզոպոսյան լեզվով—ալեգորիաների, բանյանների: Նա իր ժամանակի ամենախելացի, ամենաշրջահայաց մարդկանցից մեկն էր, շփվելով ամեն դասակարգի մարդկանց հետ՝ և՛ գազաթի, և՛ հաստակի, ձեռք էր բերել մարդաճանաչություն, մարդկային գործերի շարժառիթների ներթափանցում, մեծ կենսափորձ և դարձել էր արտագետ:

Տեսել էր գահակալների փոփոխություն, բայց բռնակալական ռեժիմի նույնությունը— նույն իշխաններն ու վելմոժանները, նահանգապետներն ու բյուրոկրատիան, ցարական իշխանության սյուները, այս երկրի տերերը, որոնց ձեռքին է և՛ ուժը, և՛ փողը, և՛ իրավագուրկ ժողովրդի ողջ գոյությունը: Բայց և գյուղացիության նույն ծանր վիճակը, որի բարեփոխության մասին մեծաշոհինդ, կեղծ ու պատիք խոստումներն ու ռեֆորմները ավելի էին ծանրացնում ճորտերի դրությունը: Եվ նա դարձել էր սկեպտիկ՝ ռուսական կյանքի որևէ բարելավման հանդեպ: Նա սկսեց ամփոփվել իր խղճմտանքի մեջ՝ հավատարիմ մնալով իր ներքին ձայնին, իր թունավոր ատելությանը դեպի ցարիզմի բռնակալական, ստրկացնող մեխանիզմը, հավատարիմ մնալով ժողովրդի շահերին՝ հումանիզմին, ազնիվ հայրենասիրությանը: Սրեց իր սպանիչ սատիրայի խայթոցը և ծպտվեց իր ալեգորիաների մեջ, որոնք տարան նրան դեպի անմահություն և դարձրին նրան քաղաքական մեծ գրող և ռուս ժողովրդի մեծ ուսուցիչ:

Բովանդակ Ռուսաստանը իր թագավորով, դասերով և դասակարգերով նա տեղափոխեց կենդանական աշխարհի մեջ. մարդկանց մի մասին տեղավորեց կեղեքող, զարկող, բռնաբարող կենդանիների մեջ, և մյուս մասին՝ զոհվող, շահագործվող կենդանիների մեջ: Բոլորի գլխին կանգնած առ-

յում թագավորը, իսկ հատակում խեղճ ոչխարը՝ ժողովուրդը: Կենդանական-մարդկային մի հսկա պատկերասրահ, ռեալիստական ճշմարտությամբ նկարագրված, ուր ամեն ոք իր ներքին անկեղծության մեջ կտեսներ իր պատկերը՝ առանց, սակայն, իր վրա առնելու այն և վիրավորվելու հեղինակից:

Այսպիսով, Կոիլովի կոմեդիաների հին սատիրան, որ ուղղված էր սոցիալական չարիքի դեմ, հիմա ավեգորիայի բնույթ ստացավ, բայց ո՛չ միայն չոչնչացավ և չխորտակվեց, այլ նրա իմաստալից բանայաների մեջ բյուրեղանալով, գեղարվեստական կատարելության հասավ:

Կոիլովի առակների մի որոշ մասը, ոչ շատերը, իր ժամանակի դեպքերի հետ են կապված, կոնկրետ դեմքերի հետ, պատմության համընթաց, բայց մեզ համար նրանք հիմա ներկայացնում են պատմությունից, տեղից ու ժամանակից դուրս երևույթներ—համամարդկային սիմվոլներ բոլոր ժամանակների մարդկանց հոգին ու գործերը հասկացող և մեկնաբանող, ծաղրող և խրատող, ամոթ և գութ զարթեցնող: Այս պատճառով Կոիլովը բարձրանում է ժամանակի անձուկ շրջանակից շատ վեր և հանդիսանում է իբրև անտիկ աշխարհի մի պատկառելի իմաստասեր, որ խոսում է բոլոր դարերի մարդկության հետ, հավերժության հետ:

Կոիլովը իր առակների սյուժետների մի մասը վերցրել է համաշխարհային, աշխարհասփյուռ ֆոլկլորից, ինչպես Եգոպոսից և Լաֆոնտենից, նաև ռուսական ֆոլկլորից, մի մասն էլ ստեղծել է իր երևակայությամբ: Սակայն նա չի կրկնել փոխառած հին առակները: Նա վերաստեղծել է: Նա ազգայնացրեց, ռուսացրեց փոխառումները: Գեղարվեստականացման իսկական ճանապարհը սա է, որով ազգային հանճարն ու ազգային արվեստներն ընթանալով հասնում են համաշխարհայնության: Նա տոգորեց իր առակները ռուս կենցաղով և՛ անձերով, և՛ ռուս մտայնությամբ, և՛ զգայնությամբ:

Պուշկինը, Բելինսկին և ռուս քննադատությունը նրան համարում են ռուս ժողովրդի ոգու ներկայացուցիչը, ռուս կյանքի հայելին, ռուս կենսական իմաստության և ժողովրդ-

դայնության մարմնացումը, վերջապես՝ ոռու գրականության փառքը, ամենաժողովրդական ոռու բանաստեղծը:

Ռուս հասարակությունը շատ սիրեց Կոհիլովին, նրա գիրքը դարձավ ամենօրյա գործածության գիրք. նրա առակներից դիպուկ տողեր, իբրև աֆորիզմներ, մտան կյանքի և գրականության մեջ: Եվրոպական քննադատությունը նույնպես շատ է դրվատել Կոհիլովին, որի կենդանության ժամանակ նրա առակներից թարգմանվել են ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն:

Ռուս գրական լեզվի շինարարության տեսակետից նրա դերը շատ մեծ է:

Պուշկինի հետ միասին նա ստեղծեց գրական այն հրաշալի գործիքը, որի միջոցով բարձրացան ոռու գրականության հոյակապ մոնումենտները:

Բելինսկին հատկապես ասում է՝ Կոհիլովը նախապատրաստեց լեզու և ստիխ (ոտանավոր) Գրիբոյեդովի անմահ կոմեդիայի համար:

Կոհիլովի լեզվի ուժն ու հմայքը ժողովրդայնության մեջ է: Նրա լեզուն սնվել է ոռու ժողովրդի ստեղծագործությունների (հեքիաթ, բիլինա, առածներ) կենսավետ նյութերից և անցել է բանաստեղծի գեղարվեստական մշակման բովից՝ մաքրվելով, բյուրեղանալով: Նրա ոճը, այսպիսով, պարզ է, պատկերավոր, ճշմարիտ և հանգիստ:

Հակառակ տարածված զավեշտական փաստերին Կոհիլովի լեգենդար ծուլության մասին, նա անխոնջ աշխատում էր իր առակների վրա, որոնց թիվը 200-ի չափ է, բազում անգամ գրում էր ու ջնջում, մշակում, հղկում, որով նա իրավունքով գրավեց համաշխարհային համբավ և առակագրության կլասիկայի բարձունքը:

Հայ ժողովուրդը միշտ սիրել է առակների գրականությունը, այդ է պատճառը, որ Կոհիլովի կենդանության ժամանակ իսկ սկսվեցին նրա առակների հայերեն թարգմանությունները:

Կոհիլովի առակների առաջին թարգմանությունները տպագրեցին Վենետիկի Մխիթարյանները 1843 թ., 1845 թ. Հ. Տեր-Չաքարյանը և 1849 թ. Հ. Կեոքչեյանը: Սրանց բոլոր

թարգմանությունները գրաբար լեզվով են: Իսկ սրանցից առաջ անմահ Խաչատուր Աբովյանը մի քանի թարգմանություններ է կատարել աշխարհաբար իր աշակերտների համար: Առակների լիակատար թարգմանությունը տվեց 60-ական թվականներին Գ. Այվազյանը Ղրիմի հայերի բարբառով, կենդանի, աշխույժ ոճով ու կոլորիտով:

Տաղանդավոր առակագիր Աթաբեկ Խնկոյանը կատարեց շատ գեղեցիկ փոխադրումներ, բավական մեծ քանակով՝ տալով կենդանի ժողովրդական շունչ, կոլորիտ, ինքնուրույնություն իր փոխադրումներին:

Կոիլովի այս փառավոր հոբելյանը զուգադիպում է Հայրենական պատերազմի վերջնական հաղթանակի նախօրյակին, և այս կապակցությամբ չենք կարող չհիշել ուս ժողովրդի մեծապահած պատմությունից մնաց հոշակապ դրվագը՝ առաջին հայրենական պատերազմը Նապոլեոնի դեմ:

Գալը, այսինքն Նապոլեոնը (պատմում է Կոիլովի առակը՝ «Գալը շնաբակում») ներս է խուժել Ռուսաստան ոչխարի մսի երագով, բայց դեմն են էլնում քաջ պահակները մեծ զորավար Կուտուզովի գլխավորությամբ, և ջարդված, կորիզուխ փախչում է Նապոլեոնը անպարտելի Ռուսաստանից:

Մարդագալ Հիտլերը՝ անեզ և ուխտադրուժ, որ նույնպես ներս էր խուժել նույն չարաբաստիկ երագով, կարմիր բանակի մահացու հարվածների տակ, փշրված ողնաշարով սողոսկում է հիմա իր ոճրածին բույնը:

Սովետական Միության հերոսական պահակները՝ եղբայրական բոլոր ժողովուրդները իրենց կյանքի գնով ջախջախեցին հզոր ու անեզ թշնամուն և քշեցին մեր հայրենիքի նվիրական հողերից դուրս, և հալածելով ֆաշիստական միջնադարյան խավարը, տարածում են լուսավորություն, հումանիզմ և դեմոկրատիկ կարգեր, այն ամենը, ինչ որ սիրում ու քարոզում էր անմահ բանաստեղծ, առակախոս Իվան Կոիլովը:

ԱՆՏՈՆ ՉԵԽՈՎ

Ավելի քան 60 տարի է, որ Չեխովի հանճարը ծիծաղեցնում և տխրեցնում է, փիլիսոփայական խորհումների մղում բովանդակ Ռուսաստանը և կուլտուրական մարդկությունը:

Չեխովի հմայքը ապրեց երկու մեծ պատերազմ և պատմության մեծագույն հեղափոխությունը՝ առանց գունատվելու, նսեմանալու, մնալով միշտ վառ, առիւքնող, ներշնչող:

Մեր սերնդի (90—900-ական թվականների) սիրելագույն հեղինակն էր նա և մնաց նույնը: Նա մեր հոգու անմեկին ընկերն էր:

Այսօրվա պես հիշում եմ, թե ինչպես խորին կսկիծ պատճառեց նրա վաղահաս մահը ռուս հասարակությանը և մանավանդ ինտելիգենցիային, մեր սերունդին: Մտավորականությունը կորցրեց իր հարազատին, իր քնքուշ, բարի, ազնիվ մարգարեին, մեծ հումանիստին: Ողջ Ռուսաստանը ողբաց այդ թանկագին կորուստը, որ սրտաբուխ արտահայտվեց բազմաթիվ ոտանավորների և հոդվածների մեջ՝ նվիրված նրան, մի երևույթ, որ գրեթե աննախընթաց էր ռուս գրականության պատմության մեջ:

Ինչո՞ւմն էր այս հմայքի գաղտնիքը:

Երբ հավերժ սիրելի Վսևոլոդ Գարշինը իր ողբերգական մահից մի քանի շաբաթ առաջ, 1888 թվին կարդաց Չեխովի «Տափաստան» պատմվածքը՝ հիացած և ոգևորված ամեն տեղ ման էր ածում այդ, ցույց էր տալիս գրողներին և քրննադատներին, ողջունում էր գրական հասարակությանը մի նոր տաղանդի երևան գալով, մի նորաշունչ, հզոր գեղարվեստական տաղանդի:

Նրա հմայքը այս թարմության և նորության մեջ էր, նրա ստեղծագործական այն նորք և կուլտուրականացած մեծ շը-

նորհքի, որ կարողացավ տալ իրականության ճշգրիտ հայե-
լացումը գեղարվեստական վերակառուցումով:

Այս երևույթը նկատի ունենալով է, որ մեծ Տոլստոյը,
բարձր գնահատելով Չեխովի տաղանդը, ասել է. «Չեխովին,
որպես արվեստագետ, չի կարելի համեմատել ոռու նախկին
գրողների հետ. նա իր ֆորման ունի»:

Նախկին գրողները փոքր ծավալով պատմվածքներ՝
«թուշուցի կտուցի չափ» համարյա չէին գրում. պատահական
եղածներն էլ հարգի չէին, և մանավանդ այդպիսիների մեջ
չեշտը գլխավորապես դրվում էր մտքերի, տենդենցների վրա,
քաղաքական էին ու ճառային: Սակայն Չեխովն իր չքնաղ
պատմվածքներով ստեղծեց նոր որակ և նոր ճաշակ: Նա
փոքր պատմվածքները հասցրեց ձևի հնարավոր կատարելու-
թյան. նա կարողացավ քիչ բառերով շատ բան ասել. վար-
պետ նկարիչների պես մի երկու շտրիխով տրամադրություն և
կոլորիտ ստեղծել. նյարդային վրձիների հպումով տալ էա-
կանը, տպավորիչը, կերպարների բնորոշողը և անհրաժեշտը,
իրականության զգացումը: Նա կարողացավ վարպետի
հմտությամբ ժանրերը խառնել իրար, հումորը, սատիրան՝
հոգեկան ապրումների հետ, էպիկական հանդարտ նկարա-
գրությունները՝ նրբին զգայնությունների հետ:

Չեխովի պեյզաժները դարձան ո՛չ թե ինքնանպատակ
կամ ավելորդ զարդարանքներ, այլ տեղին, տրամադրություն
ստեղծող, հոգեկան վիճակի թարգմանիչներ, որոնք հյուս-
վեցին ներաշխարհի պեյզաժներին: Լիրիկական զգացմուն-
քով թաթախուն պեյզաժներ:

Նրա լեզուն, նրա ոճը բարեհնչուն, ընտրված բառերի,
գույների, արտահայտությունների մի սրտագին երաժշտու-
թյուն է, որ թվում է, թե նա չի պատմում, այլ նվագում է մի
նորրե գործիքի վրա, մի նվագ, որով տոգորված են նրա բո-
լոր երկերը՝ մեծ կամ փոքր:

Չեխովից հետո այլևս կարելի չէր գրել հին ձևով:

Նրանից հետո անեց և զարգացավ փոքր պատմվածքների
գրականությունը, որոնց մասին Էմիլ Զոլան ասում է, թե
նրանք՝ «մեծ վեպերի էսենցիան են հանդիսանում»: Նրանց
մեջ հեղինակը իրականության էական գծերի վերհանումով

կամ հատկանշական մանրամասնի հայտաբերումով ստեղծում է օդ և բնություն, լուսաբանում է մարդու հոգին, որ թաքնված է մթնոլորտի մեջ ուրիշների աչքից:

Չեխովի գրականությունը կարելի է երկու մասի բաժանել— 1880 թվից մինչև 1888 թվերը, «Տափաստանի» երևան գալը և այս էտապից մինչև մահը:

Առաջին շրջանում, 20 տարեկան հասակից սկսած, Չեխովը գրում է երգիծական թերթերի համար զավեշտական թեթև անեկդոտային պատմվածքներ, որոնք թե՛ ընթերցողին էին զվարճացնում, թե՛ հեղինակին: Դրանց նյութը ոռուսական իրականությունն էր՝ մանր մարդիկ իրենց մանր հոգսերով և հույզերով. քաղթենիներ իրենց նեղ հայացքներով, կուշտ, ապահով կյանքի ձգտումներով, կաշառակեր չինովնիկներ իրենց սնափառությամբ և այլն, և այլն, մի խոսքով՝ այդ իրականության տխուր, նղմիմ, դժգույն վշտերը, երազները, գոեհկությունը, ուրախությունը՝ այս բոլորը հեղինակի կողմից նայված զվարճալի, ծիծաղաշարժ տեսանկյունից և զբրված միշտ փայլուն տաղանդով:

Եվ այս զվարճահանդեսը մի զարհուրելի ժամանակաշրջանում, երբ ոռուսական մեծ երկիրը ծայրեծայր հեծում էր ցար Ալեքսանդր 3-րդի երկաթե կրունկի տակ, ռեակցիայի տեղորի տակ, երբ ոռու ժողովրդի հերոսական զավակների ազատատենչ ոգորումները խեղդում էին տանջալից զնդանների մեջ, երբ կախաղաններն էին ցարական կուլտուրայի ուղեհիշները:

Երկրորդ շրջանը, որ բացվում է «Տափաստան» պատմվածքով, դարձյալ նույն իրականությունն է, սակայն տխուր, թախծալի հայացքով դիտված, խորագննիչ և խորագգաց հոգով. հիմա ավելի ընդարձակ տեսադաշտով, որի բազմազան երևույթները այլևս չեն ուրախացնում հեղինակին և ընթերցողին. այլ տխրեցնում են, լցնում սիրտը վշտով, մոռալով, անհուսությամբ: Դա ցարական խեղդիչ միապետության իրականությունն էր, հոգեապան բյուրոկրատիան, գիշատիչ բուրժուազիան, սևամեջ մեշչանիզմը, հարստահարված մուծիկը,

Վաշխատուները, ոստիկանները, ստարոստաները: Դա աղտի և ոչիլների մեջ թաղված կյանքն է անհամար թշվառների: Հոգեկան կյանքից, ներքին ազատությունից զուրկ բազմություններ՝ սնոտիապաշտ, ստրկամիտ, ստորաբար: Ուժերից վեր աշխատանքից անասունի պես բթացած դժբախտներ: Իսկ նրանց կողքին՝ պորտաբույծ, սանձարձակ բնագղներով ոճրագործներ, սրիկաներ:

Եվ անկարող, միայն երազել կարողացող ինտելիգենցիան, որը համալսարանների իդեալական ոլորտից կյանք մտնելով, բախվում է գոեհիկ իրականությանը և կուլի սուաջին գրոհից խորտակվում է, գոլորշիանում են նրա ալտրուիստ, ազատաբաղձ իդեալները, դառնում է կամազուրկ ցնցոտի, որոնում է օժիտավոր հարսնացու, տարվում է թղթախաղով, հարբում է և հարբած պահին ողբում իր կորցրած իդեալները և ձեռնաթափ հատաչում՝ «միջավայրը ինձ կերավ»:

Չեխովի հոգում հիմա նույն հին պատճառները տարբեր գույն են ստանում, նույն պայմաններից տարբեր հոգեբանություն՝ տարբեր շրջաններում:

Երկրորդ շրջանի կազմվելուն գերակշռող լիցք տվեց Չեխովի այցելությունը Սախալին կղզին: Սախալին, ահավոր անուն, տաժանակիր աշխատանք, ցմահ բանտարկություն, ուր միլիոնավոր մարդիկ փտում են շղթաների և կապանքների մեջ, անմարդկային մի ուժիմի տակ, հանձնված գազանաբարո պահակների, բանտապետների քմահաճույքին: Սախալինում նա կանգնեց դեմառդեմ դաժան իրականությանը, տեսավ ցարերի կառավարությունը մերկացած իր բոլոր անգլթությամբ և մարդակերությամբ: Խորապես ըմբռնեց, որ ոուսական կայսրությունը հիմնված է անլուր բռնությունների, վայրագության և խավարի վրա: «Անարտահայտելի տառապանքների կղզուց» նա վերադարձավ միապետությանը որպես թշնամի:

Չեխովի ուսումնասիրության, դիտողությունների արդյունքը եղավ հույակապ «Սախալին» գիրքը 1890 թվին, որը հանդիսանում է անհերքելի փաստերով կոփված մի հզոր մեղադրական ակտ ցարական բռնապետության դեմ:

Երկրորդ շրջանի Չեխովը խորապես գիտակցում է գրողի մեծ կոչումը. նա ասում է.— «Եթե ես գրող եմ, պարտավոր եմ խոսել ժողովրդի մասին, նրա տանջանքների մասին, նրա ապագայի մասին, գիտության մասին, մարդու իրավունքների մասին և այլն, և այլն»:

Գրողի այս վեհ ինքնագիտությամբ զինված՝ նա դարձավ ուսական իրականությանն արձագանքը, սակայն ո՛չ լերկ ժայռին դիպչող անզգա արձագանքը: Այդ արձագանքը բեկվեց նրա հոգում ո՛չ միայն ընդունելով գեղարվեստական զրտում և մշակում, այլ մանավանդ իրերը թաթախվեցին նրա հոգեկան լիրիզմով, վշտակիր տրամադրությամբ: Եվ այս է պատճառը, որ նրա պատմվածքները՝ թեև միշտ հավատարիմ ուսական հոշակապ վեպի ռեալիզմին՝ լցվեցին հեղինակի սրտի ջերմությամբ և անձնականությամբ, հուզականությամբ և դարձան արյունով գրված էջեր:

Նրա պատմվածքների մեջ մենք շոշափում ենք, մենք զգում ենք մարդուն իր տանջանքներով, ուրախություններով, հույզերով և երազներով և ապրում ենք նրա հերոսների, այդ միջակ և մանր մարդկանց, այդ կամազուրկ, հիվանդագին երազողների, այդ թշվառ, ամեն կողմից աղքատ բազմությունների բախտն ու նակատագիրը:

Զմոռանա՞նք ասել, որ Չեխովը երազում էր լինել ազատ, անկաշկանդ արվեստագետ, զերծ քարոզից, դիտավորյալ մըտքերից, թեգիսներից, տենդենցիոզ գաղափարներ արծարծելուց: Լինել էսթետ՝ արվեստը արվեստի համար, օբյեկտիվ, դիտող և վերարտադրող: Գիտությունը բացատրում է բնության օրենքները, իսկ արվեստը ստեղծում է նոր բնություն: Սակայն, ի՞նչ է նոր բնությունը: Նոր մարդկություն, նոր փոխհարաբերություններ, նոր աշխարհ, նոր հոգի: Չկա մեծ արվեստ առանց մտքերի, գաղափարների, նպատակադրման: Մեծ արվեստագետները մեծ մարգարեներ են:

Ռուսական մոսայ իրականության ծանրությունը, մարդկության ծովածավալ թշվառությունը, տառապանքները, պատերազմները, սովը, հիվանդությունները, պրոստիտուցիան,

ստրկացումն՝ այս ամենն այրելով Չեխովի նորք ու բարի հոգին, բարձրացրին նրան վե՛սն առաքելության: Հրաշքի պէս Չեխովի արվեստը շաղկապվեց, ձուլվեց տենդենցի հետ և Չեխովը դարձավ տառապող մարդկության կարեկիցն ու սիրտիչը, ներքին և արտաքին ազատության ջատագովը, ցավակից մտրակողը ծուլության և ձրիակերության, տգիտության և գոեհկության, սրբությունը, ազնվությունը ու աշխատանքը նվիրագործողը և փրկության ավետաբերը:

Չեխովն իր համեմատաբար գրական կարճ կյանքի ընթացքում բավական շատ է գրել՝ նովելների և պատմվածքների ավելի քան 300 մամուլ:

Այդ մեծաքանակ գրվածքների մեջ նա լիովի արտահայտել է անթիվ մարդկանց կյանքն ու հոգեկան աշխարհը՝ բուշոբ դասակարգերից և խավերից վերցրած՝ պաշտոնյաներ, բժիշկներ, գեմատվոյի գործիչներ, արվեստագետներ, զինվորականներ, գյուղացիներ... արտահայտել է բովանդակ Ռուսաստանը հուզող հարցերն ու գաղափարները՝ կրոնա-փիլիսոփայական խմորումների ու հոսանքների մասին, տնտեսական-քաղաքական հեղաշրջման ձգտումների մասին, նարոդնիկների և տոլստոյականների մասին:

Այդ փոքրիկ պատմվածքների մեջ, մանր մարդկանց խեղճ կյանքի ֆոնի վրա, նա կարողացել է նաև արծարծել մեծագույն պոռթմաները. առհասարակ մարդուն հավերժապես չարչարող մետաֆիզիկական հարցերը՝ կյանքի իմաստի մասին, տիեզերքի նպատակի մասին, մահվան, հոգու անմահության և վերջապես աստծու գոյության մասին:

Այդպիսի հարուստ, բազմակողմանի հատկությունների շնորհիվ Չեխովը հանդիսանում է ոռուսական կյանքի էնցիկլոպեդիան և առհասարակ մարդու ներաշխարհը թափանցելու անգնահատելի միջնորդ:

Անշուշտ, հեղինակները մեծ չեն միայն տիպեր կամ խարակտերներ հայտ բերելու մեջ, կան և մեծության ուրիշ հատկանիշներ, բայց որպես այդպիսին էլ Չեխովը օժտված է տիպեր և խարակտերներ կերտելու մեծ տաղանդով. օրինակի

համար, արդեն հասարակ անուն է դարձել «Ունտեր Պրիշի-բեկը», «Պատենավոր մարդը» և ուրիշ ընդհանրացումներ:

Չեխովի պատմվածքները համարյա բոլորը գեղեցիկ են, բարձրորակ, բայց որոշ գրվածքներ արդեն համաշխարհային գրականության մնայուն արժանիքներից են, ինչպես՝ «Տափաստանը», «Զորում», «Մուծիկները», «Պալատ № 6», «Տաղտկալի պատմությունը», «Պատենավոր մարդը», դրամաները՝ «Ծալը», «Երեք քույրերը»— դրանց մեջ Ռուսաստանը խոսացած է, հավաքված և սիմվոլած:

Մի՞թե «Տափաստանը» գոեհիկ, ձանձրալի մեշչանիզմը չէ, «Պալատ № 6-ը» ոռու ինտելիգենցիան չէ, որ խորհում է, զգում է իրականության ահավորությունը և փրկության ելք չգտնելով՝ խելագարվում է, ծեծվում և մեռնում, կամ «Զորում»-ը ոռու գյուղացին չէ՝ աղքատ, կեղեքված, ցրտի ու խավարի մեջ, մտրակի իշխանության տակ և զարհուրելի վողկայի ավերումները, կնոջ հլու ստրկությունը, և ընդհանրապես բոլորի հյուծումը, ոչնչացումը, «Տաղտկալի պատմությունը» նույն ինտելիգենցիայի խորտակումը իդեալներից, հեռանկարներից:

Չեխովի կարապի երգը եղավ «Հարսնացու» պատմվածքը, որ գրել է մահից քիչ առաջ: Այստեղ Չեխովը, կարծես, ամփոփել է իրեն: Խորագին զգվանք և ատելություն գոեհկության և տափակության, հին, ճահճային, խոզային կյանքի հանդեպ և հավատով վառ սեր ապագայի հանդեպ: Տակավին պարզ չէ այդ ապագան, սակայն, հերոսը, ատելավառ, ընդմիջտ երես դարձնելով քարացած անցյալից՝ թռչում է դեպի ապագան, ուր զինվելով գիտություններով, անձնվեր աշխատանքով պիտի իրագործե իր լուսավոր, արտրուիստ երազները:

Սովորաբար, Չեխովին համեմատում են Մոպասանի հետ: Մոպասանը խորապես համոզված պեսիմիստ է, անհույս մոռյլ ողջ մարդկության ճակատագրի հանդեպ, կյան-

քը դսժան է և ողորմելի՝ բռնված հավերժական կուլի մեջ. միշտ պետք է լինի պարտվող թշվառ և հաղթանակող բռնունցք. մարդկությունը չունի հեռանկար, մարդկությունն իր անպետք կուլտուրայով, իր սուտ գիտությամբ դատապարտված է մահվան, նաև երկրագունդը, որի վրա խաչված է մարդը: Ամեն ինչ սուտ է, պատրանք, երազ, մահն է միակ ճշմարտությունը, միակ իրականությունը:

Չեխովի պեսիմիզմը բխում է ոռուսական մոռյլ իրականությունից, նրա հոգեկան աղջամուղջը երեկոյի աղջամուղջը չէ, որին հետևում է գիշերվա անթափանց խավարը, այլ առավոտու աղջամուղջը, որին պիտի հաջորդի լույսը, արեգակը: Չեխովը հավատարիմ է լույսին և արևին՝ ազատության, պրոգրեսի, կուլտուրայի արևին, որ անպատճառ պիտի ծագի:

«100 կամ 200 և կամ 300 տարի հետո ամբողջ աշխարհը ծաղկած պարտեզ կդառնա, և կյանքը այն ժամանակ կլինի աննախընթաց կերպով թեթև և լավ, և մեր տանջանքները ուրախության կփոխվեն նրանց համար, ովքեր գալու են մեզանից հետո»:

Եվ Չեխովը, ինչպես ամեն մի առաջավոր մեծ հեղինակ, հանդիսանում է մի երջանիկ իրավակարգի մարգարե, կանխագուշակ: Կոնկրետ կերպով նա արդեն «Կիսահարկով տուն» և «Երեք տարի» պատմվածքների հերոսների բերանով խոստովանում է սոցիալիստական իրավակարգի (ստանց սակայն սոցիալիզմ անունը տալու) նպատակահարմարության մասին և աշխարհը նրա սկզբունքներով վերակառուցելու մասին:

Նա գտնում է, որ սոցիալիզմը այն պայմանների կոմպլեքսն է, ուր մարդը՝ հրաշքներից ամենահրաշալիս և տիեզերքի բոլոր իրերից ամենավսեմը, հնարավորություն կունենա ծառայելու իր կոչմանը՝ գտնելու բացարձակ ճշմարտությունը և կյանքի իմաստը: Մարդը ազատվելով փողի լծից և տնտեսական գերությունից՝ կնվիրվի գիտությանը, իսկ գիտությունը Չեխովի համար անկասկածելի և ամենակարող ուժ է, հզորություն: Գիտության միջոցով տեղի է ունենում պրոգրեսը, որին հավատում էր նա պատանի հասակից. գիտության միջոցով մարդը հաղթահարում է բնությունը, տա-

րերը ենթարկում է իր կամքին՝ օգտագործելով նրա կուսի-
կական անսպառ կարողությունները մարդկային երջանկու-
թյան համար: Գիտությամբ միայն մենք կազատվենք ցավե-
րից, հիվանդություններից, աղքատությունից և, վերջապես,
գիտության շնորհիվ մենք կիրականացնենք իդեալական ի-
րավակարգը:

Մարդկության ապագան գեղեցիկ է, հզոր և պայծառ: Ինչ
որ մարդկությունը դարերի ընթացքում նվաճել է մինչև աչ-
սօր կուլտուրայի ասպարեզում՝ դա հավատ է ներշնչում ա-
վելի և ավելի, անհունորեն ավելի մեծ նվաճումների, որոնց
առաջ մեր ներկա կուլտուրական-գիտական նվաճումները
սկիզբ են միայն և նախնական:

Չեխովը նվիրական է մեզ համար, հավերժ կենդանի և
մոտիկ, և ներկա է միշտ մեզ հետ: Թեև նա կանուխ մեռավ,
թեև նա չտեսավ իր երազների այնքան մոտալուտ իրագործ-
ման խիզախ ձեռնարկումները, բայց նրա մարգարեական
հոգին լսեց նոր աշխարհի հաղթական քայլերգը:

Նա գալիք ժամանակների մարդն է, ապադասակարգա-
յին իրավակարգի քաղաքացին, գիտության, աշխատանքի և
պրոգրեսի խանդավառ մուցետիկը:

ԴԵՄԻՐՃՅԱՆԻ «ՎԱՐԴԱՆԱՆՔ»-Ը

Մոտ օրերս լույս տեսավ Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմական վեպի առաջին գիրքը:

Առհասարակ տաղանդավոր և անվանի հեղինակների ամեն մի էջը վառ հետաքրքրություն է զարթեցնում ընթերցողների մեջ: Շտապում ես օր առաջ կարդալ այն:

Դ. Դեմիրճյանը վաղուց արժանի տեղ ունի գրաված մեր գրականության մեջ: Նա հասուն գրող է, իր հոշակապ տաղանդի հետ ունի գրական մեծ փորձ և ճաշակ: Նա հոգեբանական անալիզի վարպետ է, ունի դիտող սուր աչք, թափանցող միտք, օժտված է հումորով: Նրա լեզուն իրահատուկ է՝ անհատական մի ոճ, որ գեղեցիկ է ինքնին՝ հարուստ ինքնուրույն պատկերներով, անսպասելի մետաֆորներով, թևավոր դարձվածքներով. այս բոլորը, որոշ չափով, նոր գեղեցկություն են բերում գրական ոճի մեջ:

Նա հաջողությամբ գործել է գրական բոլոր ժանրերի մեջ: Գրել է լիրիկական մի շարք գեղեցիկ, խորագագ բանաստեղծություններ, գրել է փիլիսոփայական իմաստալից պոեմա՝ «Կյանքի տեսիլը» և պատմական արժեքավոր «Լենկ-Թեմուր» պոեման: Իբրև թատերագիր նրա հանրածանոթ «Քաջ Նազարը» անմրցելի կոմեդիա է, որ օպերայի վերածված, չեխ կոմպոզիտորի կողմից ներկայացվել է չեխական բեմի վրա Պրագայում, 1936 թվին: Գրել է շատ պատմվածքներ՝ գեղարվեստական մեծ արժանիք ունեցող, ինչպես «Ջութակն ու սրինգը», «Ավելորդը», «Հողը», «Սաթոն», «Գիրք ծաղկաց», «Բժիշկը» և այլն: Հիմա այս տաղանդավոր, բազմափորձ հեղինակը ներկայանում է մեծ կտավով, ստիպար վեպով: Ուշի-ուշով կարդացի «Վարդանանք»-ը. անցնելով էջից էջ, կարծես, քայլ առ քայլ հեռանում էի ինձ շրջապա-

տող իրականությունից, հետզհետե ավելի և ավելի արագ մխրճվում էի ուրիշ աշխարհի մեջ՝ հայկական հինգերորդ դարի իրականության մեջ: Տեղափոխվեցի մեր պատմության ամենաներշնչուն դրվագի մեջ, ականատես մի ամբողջ ժողովրդի անձնուրաց կռվին՝ ազատության համար, հայրենիքի համար, ինքնուրույնության համար՝ գաղափարների և հոսանքների բախումներից...

Հերոսական և փառապանծ դար:

Այս վեպը գրական խոշոր և շատ ուրախալի երևույթ է մեր կյանքում, և ես կուզեի իմ անմիջական տպավորությունները հաղորդել ընթերցող հասարակությանը: Ամենից առաջ ասեմք, որ վեպը կարդալուց հետո երկար ժամանակ մնում ես նրա հմայքի տակ: Սա ինքնին պերճախոս գրավալյան է վեպի գեղեցկության և գրավչության:

Անկասկած, վեպը ունի շատ թերություններ թե՛ լեզվական և թե՛ ոճային տեսակետից, թե՛ հապճեպության հետքեր, որոշ ձգձգվածություն:

Սակայն, շտապեմք ասել, որ վեպը տակավին կիսատ է և վաղահաս է ամբողջացնելուց առաջ խոսել նրա ճարտարապետական կառուցվածքի մասին, տիպերի և կերպարների մասին, մանավանդ երկու գլխավոր կենտրոնական անձերի՝ Վարդանի և Վասակի մասին, որոնք պիտի լրացվեն երկրորդ գրքի ընթացքում:

Այնուամենայնիվ, մենք կարող ենք ներկա հատորի նրկատմամբ նշել որոշ բացեր, թերություններ: Օրինակի համար՝ բացակայում են քաղաքների, ամրոցների նկարագրությունները: Համարյա բացակայում են ժողովրդի կենցաղի, նախարարական տների նիստուկացի, կահ-կարասիքի, զգեստների նկարագրությունները, որոնք կոլորիտ կտային և կկենդանացնեին իրականությունը:

Ժողովրդի ներկայությունը բավարար չափով չի ընդգրծված, թեև կան մասսայական պոթիկումներ, բայց դրանք տարերային են: Անհրաժեշտորեն պետք են ժողովրդի, ավելի բարձր որակի, գիտակից խոյանքները, նրա ուժի դրսևորումները, հերոսական արարքները:

Պարսկական ճնշիչ լուծը խորապես չի պատկերացած՝

հարկերի ծանրությունը, տնտեսական շահագործումները, կեղեքումները, պարսից իշխանների, հարկահանների վիրավորանքները՝ հասցրած ժողովրդի ազգային պատվին, ինքնասիրության, ահա այն բոլորը, այն կոմպլեքսը, որով պատճառաբանվում է մի ողջ ազգի՝ իր բոլոր դասերով ու դասակարգերով՝ ըմբոստացումը, ցատումը մի հզոր, աշխարհակալ բռնապետության դեմ և իբրև օրինաչափ անհրաժեշտություն՝ պատերազմի էլնելը կրոնական նշանի տակ, որպես ժամանակի ոգու զգայնության և մտայնության արտահայտման ձևի: Կրոնի դրոշի տակ մի բարդ կոմպլեքսով:

Աչքի ընկնող թերություններից մեկն էլ այն է, որ հեղինակը հարկ եղած չափով չի պատճառաբանել Վարդանի համաձայնությունը բռնելու ուխտադրության ուղին և դա մեծ չափով թուլացնում է Վարդանի կերպարի ճիշտ պատկերմը: Հուսանք, որ երկրորդ գրքում հեղինակը կվերացնի այդ բացը:

Սակայն, ներկա հատորի առավելությունները՝ նրա կենդանի, բաբախուն շունչը, ստեղծած հոգեկան մթնոլորտը, պաֆոսը այնքան և այնքան շատ են, որ ծածկում են թերությունները և մոռացության տալիս:

Հեղինակը ապրել է իր երազը, իր ստեղծագործությունը. գրել է ոգով և ավյունով, գրել է կրթով, երիտասարդական խանդավառությամբ, մեծ հայրենասիրությամբ, վարակող տրամադրությամբ:

Վեպը վառվում է ուժգնական կրակով, յուրաքանչյուր էջից, կարծես, վրնջում են նծույգները: Կորովի երիտասարդները պատրաստ են կովել և զոհվել հայրենիքի համար:

Հրաշալի են հայրենի պեյզաժի զգացված պատկերները: Գեղեցիկ են գողթան գուսաններին նմանված երգերը, որ ախոռապետ Վարաժի մոտ խնջույքին երգում են գուսանները՝ Տիգրան Երկրորդի սխրալի գործերի մասին: Ուղղակի հասնում են էպիկական բարձունքի:

Վեպը հագեցված է իմաստուն մտքերով, խորհրդածություններով, աֆորիզմներով:

Վեպը ունի բազմաթիվ հոյակապ գլուխներ, օրինակի համար. մասսայական, հոգեբանական տեսարանները Արտա-

շատում և էջմիածնում: Նախարարների ժողովը Արտաշատում՝ Հազկերտ արքայի հրովարտակի ընթերցումը և պատասխան գրելը: Եղիշեն, Ղևոնդ Երեցը, Եզնիկ Կողբացին, Դեմշապուհը Վասակի մոտ, Արտակ իշխանը վարդապետների մոտ, ուր խտացած է վեպի փիլիսոփայությունը: Կողակի ըմբոստացումը: Նախարարները Հազկերտի մոտ, Վարդանի կեցվածքը: Արտակի քնարական սիրո և Արսենի ու Խորիշանի իրական սիրո դրվագները և այլն, և այլն:

Մինչև այժմ մեր ոչ մի վիպասան չէր փորձել դիպչել այս նյութին՝ Վարդանանց էպոպեային: Կրոնական գաղափարախոսություն էին տեսել այդ շարժման մեջ՝ կոիվ եկեղեցու և կրոնի համար, և այդ չի ոգևորել նրանց: Բայց Դերենիկ Դեմիրճյանը սառույցը կտրեց. նա փորձեց ցույց տալ, որ արտաքին կեղևով հավատի, եկեղեցու պաշտպանության այդ կոիվը իր ներքին իմաստով ազատության, ազատ խղճի և կամքի կոիվ է. ինչպես այդ մասին այնքան համոզիչ ճանում է քաջարի Ղևոնդ Երեցը:

Վարդանանց պատերազմը՝ դա պատերազմ էր ազգային գոյության պահպանման համար, հայրենիքի ազատության համար՝ ընդդեմ բռնության, ձուլման, այլատերման:

Ծատ ճիշտ է Դ. Դեմիրճյանի պատմա-փիլիսոփայական այս կոնցեպցիան և ապացուցված է այս անժխտելիորեն:

Հայ ժողովուրդը պատմության ասպարեզ մտնելու օրից իրեն տեսավ մեծ, աշխարհակալ պետությունների միջև ընկած, համեմատաբար քանակապես փոքր, բայց միշտ պայքարի և գոյամարտի մեջ: Քրիստոնեության մուտքը Հայաստան բոցավառեց պարսիկներին անհաշտ թշնամությամբ դեպի հայերը, սակայն քրիստոնեությամբ հայերը ապահովվեցին այլակրոն պարսիկների հետ ձուլվելուց: Բյուզանդիան ձգտեց հավատակից հայերին ձուլել իր գրականությամբ, իր լեզվով: Մեսրոպ Մաշտոցի տառերը փրկեցին հայ լեզուն և կուլտուրան բյուզանդական խառնարանի մեջ սուզվելուց, նաև այդ նպատակով հայությունը չհարեց քաղկեդոնությանը, թեև մնաց մենակ, բայց իր ինքնությամբ, իր կուլտուրայով, իր ոգով:

Իրենց գոյությունը պահպանելու համար կյանքի և մա-

հու կոիվ մղեցին հայերը հզոր բռնակալությունների դեմ Պարսկաստանի և Բյուզանդիոնի:

Երբ մի ժողովուրդ կովում է իր ազատության և գոյության համար, նա ապրում է, նա չի կորչում, եթե նույնիսկ նա պարտվում է մարտում, գոնե մնում է նրա հերոսական պատմությունը, որ սերունդներին ապրեցնում է, բարձրացնում, հերոսացնում և այդպիսով կորցրածը նորից ետ է առնում: Նա հաղթանակում է:

Տեսեք մեր վսեմ նախնիներին. մեր անմահ հերոսները ի՞նչ պայծառ ու խորունկ ըմբռնողություն ունեն ազգային սկզբունքների նկատմամբ, որոնց հաղթանակի համար մի վայրկյան իսկ չեն վարանել զոհելու իրենց կյանքը, և ի՞նչ հրեղեն լեզվով են խոսում:

Վարդանն ասում է. «Մեր նախնիները մեզ կտակեցին հավատ, պատիվ և ազգ: Արյամբ պահպանեցին նրանք մեր ազատությունը, լեզուն ու մեզ հրաման թողին անբասիր պահել այդ սրբությունները: Պաշտպանենք մեզ կտակած գանձերը: Մեռնենք՝ չտանք թշնամուն ոչինչ»:

Ղևոնդ Երեցն ասում է. «Պիտի գան (պարսիկները), մահեն մեր ընտանիքները, ոչնչացնեն մեր լեզուն, ապակահեն մեր բարքերը, խառնակություն մտցնեն մեր ընտանիքում: Ի՞նչ, պարսկերե՞ն պիտի խոսեմ, գողթան երգե՞րը մոռանամ, հոյակապ մատենագրությամբ խորթանամ, նախնյաց ճարտարապետությունը լքեմ... Ո՛չ, առավել քաղցր է մահը»:

Արտակ Մոկացին, փիլիսոփա հոգևորականների մոտից հեռանալուց հետո, խորհում է. «Մի ազգի ուժը նրա գիտակցության մեջ է, գիտակից ազգը չի կորչի: Գիտակցությունը մեծ ուժ է: Գիտակից ազգը ինչքան էլ փոքր լինի ու չնչին իր թվով՝ մեծաթիվ ազգից էլ ուժեղ է, եթե ունի պայծառ գիտակցություն, որ ինքը ինքն է»:

Այս արժեքավոր վեպը՝ տոգորված ազգային արժանապատվության բարձր գիտակցությամբ, իր հուզականությամբ ապրեցնում է մեզ, ցնցում է, թափահարում է մեզ: Կրթիչ, ուստիարակիչ վեպ է, բարձրացնող, ոգի կազդուրող: Մեր ներկա մեծ էպոխային՝ Հայրենական պատերազմի օրերին

բացարձակ համընկնող. ոգևորիչ խոսք՝ իր ժամանակին ասված: Նա պիտի խանդավառի մեր մարտիկներին օրինակ առնելու մեր հերոսական նախնիներից՝ վարդապետներից, անձնագոհաբար կոչելու հայրենիքի ազատության համար, կուտուրայի պաշտպանության համար նոր Հազկերտի՝ Հիտլերի դեմ, որ եկել էր ընկնելու մեր հայրենիքը, ոչնչացնելու մեր կուլտուրան, ոտքի տակ տալու մեր պատիվն ու ազատությունը:

Մենք բոլոր սրտով ցանկանում ենք մեր ընկեր տաղանդավոր հեղինակին առողջություն, որ կարողանա լրացնել այս գեղեցիկ գործը ավելի մեծ հաջողությամբ, որին հավատում ենք:

Երբ բախտ ունենանք տեսնելու երկրորդ հատորը ավարտած, համոզված ենք, որ այս հայրենաշունչ վեպը ամենայն իրավունքով կդասվի մեր ժողովրդին շատ սիրելի պատմական վեպերի շարքին:

ԱՆՄԱՀ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

Սայաթ-Նովային ես չկարողացա պատկերացնել... Նրա դեմքը փոխվում է շարունակ իմ երևակայության մեջ և հասակը նույնպես:

Սայաթ-Նովայի դեմքը ինչպե՞ս էի պատկերացնում, ինչպես՝ գերմարդկային: Աչքերը կապույտ՝ Հայաստանի երկնքի նման, հավերժական կապույտ, ծովերի նման՝ խորն ու վճիտ, հաճախ ալեկոծ...

Ո՛չ, սև ու խորունկ վշտի պես, բարի ու թախժոտ աչքեր՝ իմաստությանը, բանաստեղծությանը ծովացած գեղեցիկ ներդաշնակություն: Երաժշտական, մուզիկալ: Ծակատը՝ խոհուն: Զայնը... Ամեն ինչ հմայիչ, աներևակայելի— մի խոսքով՝ գեղեցիկներից-գեղեցիկ, վեհագույն...

Ու՞մ նման, գողթան գուսանապետի՞ն, արդյոք Նահապետ Զուչակի՞ն...

Մերթ տեսնում եմ նրան՝ ջուլհակի սարքի առաջ՝ պատանի մաքուրը նետում է աջ ու ձախ, բայց տխուր հայացքը երագում է հեռուները, կկոցում է աչքերը, հեռուները բաներ է տեսնում և լսելիքը լարում է, ինչ-որ ձայներ է լսում...

Մերթ տեսնում եմ նրան՝ ընտիր զգեստներ հագած, գեղեցկուհիների շրջանում, սադաֆե քյամանչան ձեռքը նվագում ու երգում, բոլորը հիասքանչ, հիագմայլ լռել, լսում են նրան, շատերի աչքերը արցունքով են լցվում, շատերը հառաչում են, սպասավորները մատուցարանները ձեռքների՞ն՝ քարացած են...

Ինձ թվում է, թե պարտեզում թռչունները լռել են, չեն ճովողում, լսում են նրան...

Մերթ տեսնում եմ նրան կորաքամակ, ալեհեր, ցուպը ձեռքին, կրունականի զգեստով քարձրանում է գառիվերը,

միստիկ հայացքը դեպի ներս թաքցրած, տեսնում է աշխարհի, բնության, տիեզերքի խորքերը, գաղտնիքները, մարդկանց՝ աշխարհի մեջ ելն ու մուտը և տեսնում է իր մահը՝ նահատակի վախճանը, պատրաստ չար աշխարհի մեջ միշտ դիմագրավելու իր հավատի, իր գաղափարի, իր պաշտամունքի իդեալի համար և մեռնելու միշտ հոժար, պատրաստակամ...

Եվ տեսնում են հանկարծ՝ առույգ, կտրիճ, վստահ իր հանճարին և հրապարակում, ահագին բազմության մեջ մըրցում է նշանավոր աշուղների հետ, պայքարում է և նվազում իր հաղթական զենքով՝ քյամանչաչով և հաղթանակում է նրանց՝ մրցակից աշուղներին, որոնք իրենց զենքերն ու զրահը թողած փախուստ են տալիս: Սայաթ-Նովան գրավում է նրանց զենքը, և ժողովուրդը հիացած է իր հերոսով...

Սիրով խենթացած Մեջնունի պես թափառում է՝ մի տեղ չնստելով, անդադար: Այրվում է...

Նայել է, աշխարհը մի պատուհան է: Նայում է աշխարհի պատուհանից մեծ, անհուն, անսահման աշխարհին, իրականությանը, և խոցվում է նրա սիրտը, ձեռքն է առնում քյամանչան և ախ է հանում սրտից, և երգում է աշխարհի վիշտը, ցավերը, տառապանքները...

Սեր, մահ, երազանք, տենչեր, վիշտ, թախիծ, տիեզերական վիշտ, արևելյան երաժշտություն՝ հայկական անհատականության միջով անցած, հայկական կուլտուրայի միջով անցած... Արևելքը՝ հայկական բեկումնով... Նրա բարդ և կատարյալ տաղաչափությունը, երաժշտությունը, լիրիզմը, լիրիկական փիլիսոփայությունը կամ փիլիսոփայական լիրիկան: Զգայականությունը՝ զուսպ...

Նույնացնում են ինձ նրա հետ, զգում են, ինձ թվում է՝ որ իմ ուղին էլ նրա պես է ընթանալու, ճակատագրված է ինձ նա:

Աշակերտում են նրան, ծնկի եկած նրա առաջ կարդում են փետուրե գրչով գրված տողերը.

«Թե կու գակսիմ, քիզ կու գակսիմ աշխարհիս մե մագ չի գակսի...»

Չեն հանդգնում նրան ասելու, որ՝ վարպե՛տ, ես կուզեի այսպես գրեիր.

«Թե կու պակսիմ, ինձ կու պակսիմ, աշխարհիս մե...»

Երբ կարդում եմ.

«Հենչանք ըի՛ դուն վրես լաս մազըտ շաղ տալով, աչքի լույս...»:

Սիրտս փղձկում է:

«Սայաթ-Նովու գերեզմանըն Հինդ, Հաբաշ, Արաբ մի անի...»

Տեսնում եմ ինձ հայրենիքից հեռու, գերեզմանս հեռավոր անապատներում:

Սայաթ-Նովայի մեջ տեսնում եմ քարավաններ, որ գալիս են հեռավոր աշխարհներից՝ Հինդ ու Չինից, բեռնած թանկագին զարդերով՝ դումաշ, ատլաս, անուշահոտ յուղերով, Արաբիայի խումկերով, համեմունքներով... Լսում եմ զանգակների ձայնը...

Հետը գնում եմ, ման եմ գալիս վանքերը մեկ-մեկ, երկյուղած ծունկի եմ գալիս մթին, վսեմ վանքերի մեջ...

Պատանի հասակից դյուրված, ավելի շուտ երևակայությունս էի հասկանում նրան: Սովորական իրականություն չէր նա, այլ հեքիաթական, առասպելական: Ե՛վ նրա կյանքը, գործը, մահը: Կախարդական ապարանք և... կախարդական պարտեզ, որ ամեն մի նոր քայլին նոր հրաշք է բաց անում:

Ծաղիկներ, վարդեր բուրումնավետ, լալ ու գոհար...

Այսպես էի երևակայում նրան՝ քյամանչան, դեմքը, երգը...

Մինչև հիմա կախարդել է ինձ և չեմ կարող ելնել երևակայական դյութանքից:

Ավելի քան 150 տարի նա կանգնել է մեր զարգացման ճանապարհի հանգույցներից մեկի գլխին և իր քնարով ներշնչում է մեզ— աղքատ սիրել, գիր սիրել: Նա մեր մթնոլորտըն է, մեր սերը, մեզ ուրախություն ու թախսիծ տվողը... Մեզ հետ է միշտ՝ մեր ուրախության և վշտի պահերին:

ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ

Պատիվ ունեւ Սովետական Հայաստանի գրողների կողմից ջերմագին ողջունելու պատկառելի Երվանդ Ժահագիզին՝ հայտնելով մեր խորին հարգանքը և երախտագիտությունը հայ ուսուցիչների Նահապետին, դարավոր աշխատանքի անխոնջ հերոսին՝ իր փառավոր իննսունամյակի առթիվ:

Հայ ընթերցող հասարակությունը երկար տարիներ կարդացել է նրա գործերը և շատ բան է սովորել նրանից և այսօր հանդիսավոր կերպով բերում է իր շնորհակալությունը հայ բանասիրության վետերանին:

Իմ ժամանակի նորահաս սերունդը շատ երախտապարտ է նրա պատմա-բանասիրական գործերի հանդէպ: Հետաքրքրությամբ կարդում էինք նրա բազմաթիվ հոդվածները, մոնոգրաֆիաները ամսագրերում և գրական հանդեսներում — հայոց նախարարությունների մասին, մեզ ոգեշնչող Մ. Նալբանդյանի կենսագրությունը, հայոց վանքերի դերը, հայոց մտավոր շարժման մասին 6—7-րդ դարերում:

Դրանց շնորհիվ մենք հարստվցնում էինք մեր ճանաչողությունը հայ պատմության և գործող մեծ դեմքերի նկատմամբ և լցվում գիտակից հայրենասիրությամբ:

Ընթերցող պատանեկությունը սիրում էր նրան, բայց ինձ համար հատկապես սիրելի էր նրա անունը, որովհետև ես լսում էի մի անուշ ձայն՝ կապված այդ անվան հետ. բանաստեղծ Սմբ. Ժահագիզի երազի անուշ ձայնը:

Առաջին անգամ տեսա նրան 1904 թվին, Նոր Նախիջևանում, ուր նա թեմական դպրոցի բազմամյա ուսուցիչ էր՝ սիրված և հարգված ժողովրդի կողմից: Նա հասցրել էր արդեն մեծ թվով աշակերտների սերունդ, որոնց մեջ տեսնում էնք մեզ համար շատ թանկագին անուններ — քժշկապետ. Քեչեկը,

քանասեր Մինաս Բերրերյանը, բուսաբան հանգուցյալ Բե-
ղեյանը և, վերջապես, մեր փայլուն գիտնական Ալեքսանդր
Զիվեյեկյանը:

Երբ կարդում ենք սիրով ու սրտով գրած նրա երկերը՝
ուսումնասիրությունները, կենսագրությունները 19-րդ դարի
մեր լուսավորիչների կյանքի և գործի վերաբերմամբ, այնպես
մանրակրկիտ և բարեխիղճ կատարված, այնպես հմուտ և
անթերի, որ մենք տարվում ենք հավատալու, որ Երվանդ
Ծահագիզը գալիս է անմիջապես այդ մեծությունների մոտից,
եղել է նրանց հետ, ներկա է եղել նրանց հոգեկան ապրում-
ների: Մենք մեր երևակայության մեջ կենդանի տեսնում
ենք նրանց, լսում ենք նրանց ներշնչող ձայնը և նրանց սրտա-
գին անձնվիրումը հայ ժողովրդին, նրա բարեկեցությանը,
նրա լեզվի և գրականության հարստացմանը:

Այսպիսով, Երվանդ Ծահագիզը իր ավելի քան 35 շահե-
կան երկերով ամբողջ 3—4 սերունդ ուսուցել է, սովորեցրել
է և կապել մեր անցյալի հետ, մեր համամարդկային և ազ-
գային իդեալների նվիրական դարբնողների հետ:

Ծատ շահեկան, նաև հանելի են Ծահագիզի քանավոր
գրույցները: Ամեն անգամ, երբ հանդիպում ես նրան և զրույց
անում, լսում ես այնքան պատմական նորություններ, որոնց
ոչ մի տեղ չես կարդացել: Նա պատմում է մտերիմ բաներ
մեր մեծ գործիչների կյանքից, հոգեբանական դեպքեր,
անեկդոտներ և դրվագներ: Մի կենդանի հիշատակարան և
հուշարան՝ անսպառ և ճշմարտապատում: Մեզ շատ հեռուն
կտաներ խոսել նրա աշխատությունների մասին: Նրա կեն-
սագրականները— Նալբանդյանի, Էմինի, Սունդուկյանի,
Սմբատ Ծահագիզի, Գաբր. Պատկանյանի, Գալֆայանի, նրա
պատմական ուսումնասիրությունները՝ Երևան քաղաքի, Աշ-
տարակի, Նորքի, չերքեզահայերի և Նոր Նախիջևանի հա-
յերի, բայց մանավանդ նրա կազմած դիվանները՝ Նալբանդ-
յանի, Ռափ. Պատկանյանի և Արովյանի, մեծարժեք ներ-
դրումներ են հայկական կուլտուրայի մեջ: Նրանք արգասիք
են արխիվային բազմամյա, տքնաջան հետազոտությունների
և պրպտումների: Միակ գիտական ուղին՝ կառուցելու փաս-

տական, ճշմարիտ պատմություն, ոտքի հանելու մի անցած-
զնացած աշխարհ:

Հերոսական, անփոխարինելի աշխատանք:

Մենք մի վայրկյան կանգ առնենք նրա վերջերս լույս
տեսած գործի մասին՝ Խ. Արովյանի կենսագրությունը: Դա
մի զարմանալի գործ է, նախ և առաջ զարմանալի, որ հեղի-
նակն արդեն բավական հառաջացած տարիքում, 85—86
տարեկան, ձեռք է զարկել գրելու այնքան աշխույժ լեզվով,
Լենդանի պատկերներով, չափազանց հետաքրքրաշարժ մի
գիրք: Բովանդակալից, բայց և սեղմ, առանց ավելորդաբանու-
թյունների և կրկնությունների: Մի համայնապատկեր, ուր կեն-
դանացած հանդես են գալիս այնքան մոռացված և կիսամո-
ռացված դեմքեր: Այս կենսագրությունը ավելի շուտ Խ. Արով-
յանի մի տեսակ պոխոգրաֆիա է, հոգեբանություն: Մենք դը-
րանով թափանցում ենք 19-րդ դարի մեր ամենամեծ մարդու,
մեր նոր գրականության հիմնադրի ներաշխարհը: Էպոիան
ներկայացնելու միջոցով մարդն է նկարված այստեղ, Խ.
Արովյանի սիրտն ու հոգին՝ այնքան բարդ, խառն, հսկա-
սություններով լի, կոմպլեքսային: Ոգևորության և հուսախա-
բության միջև դեգերող. ռոմանտիկ թռիչքներով, հիվանդա-
գին նուպաներով: Մի այրվող հոգի՝ ճակատագրված մեծ առա-
քելության և ցավագին վախճանի:

Այս գիրքը կարդացվում է գեղարվեստական երկի պես:
Թվում է, թե սրանով սպառված է ինչ որ կարելի է ասել Ա-
րովյանի կյանքի մասին:

Ուսանելու շնորհակալ նյութ է Երվանդ Ծահագիզի կյան-
քը և մանավանդ երիտասարդ գիտաշխատողների համար
ընդօրինակելի: Անխուճ, տոկուն, մեթոդիկ աշխատանք,
համբերությամբ լի, ժամանակ չվատնող, ողջախոհ, հարցա-
սեր, որով միշտ վառ և արթուն է մնում նրա միտքը, և սիրտը
երիտասարդի ավյունով լեցուն:

Իսկ տարիքավորներիս համար— սքանչելի, խրախուսիչ
հեռանկար, որ մենք էլ կարող ենք հույս տածել հասնելու
նրա տարիքի բարձունքին՝ առողջ մտքով, ապրող հոգով:
Իհարկե, մենք գիտենք, որ ծերությունը հարաբերական երե-
վույթ է, որ բանաստեղծ Սասադին 100 տարեկան հասակում

գրում էր սիրո ներբողներ և 90 տարեկան մեծ նկարիչ Տի-
ցիանոն նկարում էր գեղեցիկ վեճուսներ: Սակայն այլ է, որ
մենք ականատես եմք մեր միջավայրում մի անթառամ իմա-
ցականության:

Տարիներ առաջ Փարիզում մի թերթ-ժուռնալ մրցանակ
նշանակեց այն մարդուն, որ կասեր մարդկային լեզվի ամե-
նասրբազան բառը՝ միայն մի բառ: Բազմաճազար մարդիկ
արձագանքեցին: Հազարավորներ գրել էին, որպես սրբազան
բառեր— հայրենիք, մայր, սեր և այլն և այլն: Սակայն ժյուրին
մրցանակը տվեց նրան, ով գրել էր ծերություն բառը: Եվ
բոլորը խոստովանեցին այդ ճշմարտությունը:

— Ծերությունը ամենասրբազան բառն է: Ծերություն
կնշանակե— պատմություն, իմաստություն, ավանդություն և
հաղթանակ:

Բախտավոր եմք, որ ունենք մեր մեջ Երվանդ Ծահագիզին,
որ պատմում է մեր մեծ հայրերից, որ իմաստուն խորհուրդ-
ներ է տալիս մեզ, որ նվիրական ավանդներ է փոխանցում
մեզ և գոտեպնդում է մեզ հաղթելու կամքով:

Եթե կյանքը կովի ասպարեզ է, ուր աշխատանքով, համ-
բերանքով պիտի հաղթես գիտություններին և արվեստներին,
խոչընդոտներին և թշնամիներին, որպեսզի մարմնացնես քո
սրբազան գաղափարները և կառուցես գործեր, ապա ուրեմն
մեր սիրելի Երվանդ Ծահագիզը իր բեղմնավոր կյանքի եր-
կարամյա պայքարի մեջ ավեզարդվել և դուրս է եկել հաղթո-
ղի պակով:

Բոլոր սրտով ցանկանում եմք նրան երկար և երկար
կյանք և առողջություն, որ կարողանա նոր գործեր տալ և
տեսնել իր աշքերով իր սիրելի ժողովրդի ևս ավելի բարօրու-
թյունը, նրա կուլտուրայի ևս ավելի ծաղկումը և նրա երազած
նպատակների կենսագործումը:

«ՈՒԼԵՆՇՊԻԳԵԼ» ՎԵՊԻ ՄԱՍԻՆ

«Ուլենշպիգել» վեպը Բելգիայի, նաև ողջ եվրոպական գրականության առաջնակարգ գործերից մեկն է: Նա թարգմանված է գրեթե կուլտուրական բոլոր լեզուներով: Հայերենի այս թարգմանությամբ, որ առաջին անգամն է, մեր գրականությունը հարստանում է մի նշանավոր երկով: Հայ հասարակայնությունը միջոց կունենա հիմա մայրենի լեզվով վայելելու նրա գեղեցկությունները:

«Ուլենշպիգելի» հեղինակը քելգիացի է՝ Ծարլ Թեոդոր Անրի դը Կոստեր: Նա ծնվել է 1827 թվի օգոստոսի 20-ին, Մյունխենում, ուր նրա հայրը Հոռմի պապի դեսպանի պաշտոնյա էր: Կյանքի առաջին տարիները նա անցկացրեց Մյունխենում: 1833 թվից նրա ծնողները արդեն տեղափոխվել էին հայրենիք և հաստատվել Բրյուսելում: Հոր վաղաժամ հոգով դը Կոստերն ունեցավ զրկանքներով լի պատանեկություն: 17 տարեկանից պաշտոնավարում էր Բրյուսելի մի բանկում և ազատ ժամերին նվիրվում էր գրական աշխատանքի, որի համար նա մեծ սեր և հակում ուներ: 1850 թ. թողնում է պաշտոնը և մտնում համալսարան, որն ավարտելուց հետո, պետական արխիվում պաշտոն է ստանձնում: Արխիվային դոկումենտների ուսումնասիրությունները հմտորեն ծանոթացնում են նրան Բելգիայի անցյալին և ֆրանսիական հին լեզվին: Այս հանգամանքը շատ նպաստավոր դեր կատարեց նրա հետագա գրական գործերի նկատմամբ: Նա հաջորդաբար լույս ընծայեց «Ֆլամանդական լեգենդներ» և «Բրաբանտական պատումներ» գրքերը, որոնք, սակայն, հաջողություն չունեցան: 1867 թվին լույս տեսավ «Ուլենշպիգել» վեպը, որի վրա աշխատել էր տասը տարի՝ խորապես ծանոթանալով և օգտագործելով հին ժամանակագիրներին,

16-րդ դարի Գիդեուլանդական պատմագիրներին և նույն դարի գրողներին ու հրատարակատուներին:

Դր Կոստերը մեռավ 1879 թվին, մայիսի 7-ին, մեռակ և կարիքավոր վիճակում. նա չտեսավ արդար գնահատանքը իր մեծարժեք գործի, որը շատ ուշ միայն գրավեց իր գահը և անմահացրեց հեղինակին՝ դասելով նրան գրական հանճարների շարքին:

Վեպի լրիվ խորագիրն է՝

«Ուլենշպիգելի և Լամմե Գուդակի լեզունը և նրանց հերոսական, գլխարձալի և պանծալի արկածները Ֆլանդրիայում և այլուր»: Այս գիրքը իրավամբ համարվում է բելգիական գրականության գլուխգործոցը: Սակայն իրական առումով բելգիական գրականություն գոյություն չունի, որովհետև գոյություն չունեն բելգիական ազգ և լեզու:

Մի փոքր շեղվենք դեպի պատմական անցյալը:

Առաջին դարում, մեր թվականությունից առաջ, Հուլիոս Կեսարի գրաված երկրների մեջ հիշատակվում է Բելգիան, որի մեջ մտնում էր Գալլիայի մի մասը: Այն ժամանակվա Բելգիան կազմված էր կես առ կես գերման և կելտ ցեղերից: Հետագայում գերմանները կոչվեցին ֆլամաններ, կելտերը՝ վալոններ: Ռոմանական լեզուներից ամենից շատ վալոնների լեզուն է մոտ ֆրանսերենին, իսկ ֆլաման լեզվի բարբառները խառնվելու չափ մոտ են հոլանդերենին, այսպիսով պատկանում են գերման լեզվախմբին:

Դարերի ընթացքում, կողք-կողքի գնացել են երկու ժողովուրդների՝ վալոնների և ֆլամանների գրականությունները, սակայն ֆրանսերենը և հոլանդերենը իբրև ինտելիգենտ և արիստոկրատ դասերի լեզուներ, ճնշել են նրանց՝ վերածելով բարբառային և պրովինցիալ գրականությունների, որոնք հետզհետե տեղի են տվել իշխող պետական լեզուներին՝ ֆրանսիական և հոլանդական գրականություններին, թեև ներկայումս էլ ապրում են նրանք իբրև ժողովուրդների խոսակցական լեզուներ, և մեծ մասով կիրառվում են լիրիկական բանաստեղծությունների համար, և որոնք իբրև մայրենի խոսք՝ ավելի ընդունակ են արտահայտելու սրտագին ապրումներ: Երբ 1830 թվի հեղափոխության հետևանքով

Բելգիան անջատվեց Հոլանդիայից և կազմեց անկախ պետություն՝ ֆրանսերենն ընդունվեց պետական լեզու և հետևապես նաև որպես գրական լեզու: Այդ առաջնությունը գալիս էր պատմությունից. միջին դարերից սկսած ֆրանսիական կուլտուրան և գրականությունը իրենց հզոր ազդեցության տակ էին պահում Բելգիան:

Այսպես, ուրեմն, բելգիական գրականությունն ասելով հասկանում ենք Բելգիան կազմող վալոն և ֆլաման ժողովուրդների գրականությունը՝ ֆրանսիական լեզվով գրված:

Տաղանդավոր հեղինակներ վալոն կամ ֆլաման ծագումով՝ ինչպես դը Կոստեր, Մետեղիմկ, Ռոդենբախ, Վերհարն, Լըմոնիե և ուրիշներ, գրում են ֆրանսերեն: Այս էլ ասենք, որ բելգիական գրականությունը չի մտնում ֆրանսիական գրականության մեջ:

Դը Կոստերի վեպը հետաքրքրական է իր կառուցվածքով. նա պատմական վեպի և լեգենդի հյուսվածք է: Բովանդակությունը 16-րդ դարի Նիդեռլանդիայի ժողովրդի անհաշտ պայքարն է իսպանական բռնակալ տիրապետության դեմ: Կատաղի գյուգերի, այսինքն մինչև «մուրացկան դառնալը», մինչև «մուրացիկի տոպրակը» աչքի առաջ ունեցող մանր ազնվականության և չքավոր դասերի, նույնպես և գյուղացիության անձնուրաց կոհվն է ազատվելու մոլեռանդ, մարդատյաց Ֆիլիպ 2-րդի լծից, նրա արյունարբու զորավարների, ինչպես դուքս Ալբայի խժոժություններից և պապական ինկվիզիցիայի զարհուրանքներից:

Վեպի խորքը պատմական իրականությունն է, և չնայելով, որ վեպի մեջ լիքն են 16-րդ դարի պատմական դոկումենտների բնագրեր, ժամանակի նշանավոր եկեղեցականների քարոզներ և հիմ երգեր, բայց և այնպես նա զուտ պատմական վեպ չէ: Եթե կարելի է ասել, սա պատմական վավերագրերով հարուստ, իրական դեպքերով լցված լեգենդ է, նույնչափ հարուստ է նա հրաշապատումներով, առասպելներով: Ամենից սուսը վեպի հերոսը՝ Թիլ Ուլենշայիգելը իրական և երևակայական, պատմական և առասպելական անձնավորություն է: Թերևս բնավ չի էլ եղել: Համեմատյալ դեպս, Թիլը կենսագրություն ունի. ըստ ավանդության,

նա ծնվել է 13-րդ դարի վերջում՝ Բրաունշվեյգի Կնայտլինգեն գյուղում, հոր անունը՝ Կլասս, մորը՝ Աննա: 17-րդ դարում գյուղում ցույց էին տալիս Թիլի հայրական տունը: Թիլը մեռել է 1335 թվին, Մյուլն քաղաքում (Շլեզվիգ), ուր մինչև այսօր կա նրա գերեզմանը՝ հետևյալ տապանագրով.

«Այս քարը ոչ ոք
Չպետք է վերցնե.
Ուլենշպիգելը կանգուն՝
Այնտեղ թաղված է»:

Թիլ Ուլենշպիգելը զվարճալի և գոեհիկ արկածների հերոս է, ծաղրածու, խեղկատակ, թափառաշրջիկ, խորամանկ և խաբեբա, սրամիտ և կատակաբան:

Նրա արկածների հավաքածու գիրքը 15-րդ դարում եղել է Ֆլանդրիայում, սակայն կորել է, չի հասել մեզ, գերմանական վարիանտն է հայտնի, որը վերջնական ձևավորումով տպվել է առաջին անգամ Օտրասբուրգում, 1519 թվին՝ հետևյալ անունով.

«Թիլ Ուլենշպիգել, ժողովրդական զվարճալի գիրք»: Դարերով ժողովրդի սիրած գիրքն է եղել:

Կասկածից դուրս է, որ Թիլ Ուլենշպիգելը հավաքական տիպ է՝ ստեղծված անձնավորություն, որի շուրջը ֆլաման և գերման ժողովուրդները համախմբել են իրենց սիրած արկածները, սրամտությունները, առակները, կատակները և շվանկները: Թիլի արմատները ֆոլկլորի, նաև միջազգային թափառիկ սյուժեների մեջ են: Ուլենշպիգելի անունը անշուշտ շինծու է և հետո դրված՝ համաձայն նրա արարքների էության: Այդ մականունը զանազան բացատրություններ ունի. գերմաներեն նշանակում է «բու և հայելի», այդպես էլ նկարել են Թիլին ժողովրդական գրքերի մեջ՝ մի ձեռքին բու, մյուսում՝ հայելի: Այդպես էլ քանդակված է նրա գերեզմանի վրա: Ինքը՝ դը Կոստերը հետևյալ ձևով է բացատրում. «Ուլիգեն Շպիգել», այսինքն՝ ձեր հայելին — հիմարների, անհեթեթ մարդկանց, սինկբորների և տվյալ ժամանակի հայելին:

Այս բոլորից պարզ երևում է, որ Ուլենշափգելը Թիլի տոհմային անունը չէ, այլ մականուն՝ հետո հերյուրած:

Դը Կոստերը վերցրել է 14-րդ դարում գործող Ուլենշափգելին, տեղափոխել է 16-րդ դարը, ուրեմն երկու դար հետո: Տեղափոխել է նրան նիդերլանդական ժողովրդի պատմության ամենից փոթորկահույզ շրջանը, երբ բովանդակ երկիրը ազատագրական կռիվ էր մղում մի վայրագ բռնապետության դեմ:

Դը Կոստերը Թիլի մանկությունն ու պատանեկությունը կազմել է ժողովրդի գրքի արկածներից և շվանկներից, նաև՝ ֆոլկլորային նույնանման նյութերից: Այդ կոպիտ, նյութասեր, ծաղրածու թափառաշրջիկին հեղինակը կերպափոխել է Վերածնունդի մի կենսուրախ, ազատաբաղձ զավակի, որին աստիճանաբար ներգրավում է ժողովրդի ապստամբական, հեղափոխական շարժման մեջ, լրջացնում է, հոգեփոխում և սիմվոլացնում: Թիլը դառնում է ժողովրդի ազատության ձգտումների և ոգորումների մարմնացումը:

Թիլը տեսնելով իր ժողովրդի անհուն տառապանքները, անասելի կեղեքումներն ու հարստահարությունները բռնակալների ձեռքից, տեսնելով ինկվիզիցիայի դահիճների՝ կաթոլիկ կղերին, որոնք խարույկների մեջ այրում էին ֆլամանդական ազատախոհ մարդկանց և անմեղ բնակիչներին՝ դառնում է անձնվեր հասարակական գործիչ, հեղափոխական կազմակերպիչ, միանում է ապստամբ գյուղերի ազատարար կովին: Վերածնունդի կենսուրախ զավակը ամբողջապես նվիրվում է հեղափոխական-մասսայական շարժմանը, մի գիտակցական և տարերային շարժում, որ համակել էր բովանդակ Ֆլանդրիան: Քաղաքների, անտառների և ծովերի գյուղերը սասանեցնում էին իսպանական բռնապետության և պապական ինկվիզիցիայի հիմքերը: Հեղափոխության գործը կենդանի, միշտ առույգ, զվարթ գործ է Թիլի համար. այդ գործին ծառայում է նա անձնուրաց արիությամբ: Դառնում է նրա հոկետորը, մուկետիկը, լրտեսում է թշնամուն, ապստամբների հետ կապեր է ստեղծում և իրար կապում կովող խմբերը, սուրհանդակներ ուղարկում ամեն կողմ, դրամ հավաքում նրանց համար, զենքեր հայթայթում, ժողովրդի մեջ միություն և տոկու-

նություն քարոզում: Ժողովրդի ծովածափալ տառապանքներից զգայակից՝ Թիլը կրում է և անձնական շատ ծանր աղետներ, ինկվիզիցիան այրում է հորը՝ Կլասսին, մայրը մեռնում է վշտից, Կատլինը խելագարվում է ինկվիզիցիայի տանջանքներից: Կլասսի աճյունի մի մասը, որ Թիլը մի քսակի մեջ դրած միշտ կրում է իր սրտի վրա, նրան բորբոքում է, մղում վրեժի, կովի:

Ամեն անգամ, երբ թրթռում է, շարժվում այդ նվիրական աճյունը, Թիլը կրկնում է իր ուխտը՝ «Ես ուզում եմ ազատել հայրենիքս և վրեժ հանել», և աճյունը դադարում է շարժվելուց:

Թիլը մեռնակ չէր իր գործերի մեջ. նրա հետ է միշտ իր սիրած աղջիկը՝ բարի, հեզ և մաքուր Նելեն, և ուղեկից ընկերը՝ պարզամիտ, դանդաղաշարժ Լամմե Գուդակը, որի անդալանան սերը այնքան սրտառուչ է, հուզիչ և այնքան հրաշալի գրված հեղինակի կողմից:

Ժողովուրդը անմահ է, և նրա հերոսը, նրա սիմվոլը նույնպես անմահ է:

«Ես մարմին չեմ, ես հոգի եմ, Ֆլանդրիայի հոգին: Ես երբեք չեմ մեռնի»,— ասում է Թիլը: Իր սիրած Նելեի հետ նա ապրում է մի աշտարակում, որի բարձունքից տեսնում է բովանդակ Ֆլանդրիան և հսկում է նրա բախտի վրա: Եվ երբ մի առեղծվածային մահով թվում է, թե Թիլը մեռավ, գալիս են քահանաները նրան թաղելու, նա հանկարծ հարություն է առնում, վեր է կենում և բացականչում է.

«Դուք թաղո՞ւմ եք Ուլենշպիգելին, մայր Ֆլանդրիայի ոգուն և Նելեին՝ նրա սիրտը: Ֆլանդրիան կարող է քնել, բայց մեռնել՝ երբեք: Ե՛կ, Նելե՛:

Եվ հեռու յալ նա այնտեղից Նելեի հետ և երգեց իր վեցերորդ երգը, բայց թե ո՞ր պիտի երգե վերջին երգը՝ այդ ոչ ոք չգիտե»:

Վեպը գրված է ֆրանսիական միջին դարերի լեզվական արխայիզմների ստիլիզացիայով: Նա հարուստ է ալեգորիաներով և սիմվոլներով, որոնք արխայիկ ոճի հետ միասին մի ա-

նանձին հմայք են տալիս գործին՝ ստեղծելով մի խորհրդավոր մթնոլորտ: Դը Կոստերն իր հոշակապ վեպի նախաստիպ է ընդունել Ռաբլեին և 16—17-րդ դարերի հոլանդական վարպետներին, նրանց դյութիչ և պերճ, գունեղ արվեստը:

Բնապաշտական զգայնությամբ է տոգորված վեպը. ուժգին զգացվում է ֆլաման երկիրը, նրա արևն ու օդը, հողն ու բույսը:

Մեծ վարպետի վրձինով, որ մրցակից է ֆլաման հոշակավոր ժանրիստների կոլորիտին, հեղինակը լայնորեն նըկարում է ֆլամանդական ժողովրդի կենցաղը, այդ եռացող տարերքը, քաղաքների ժխորը, մարդկանց առօրյան, զբաղմունքները և զվարճությունները, պանդոկների, ճաշարանների հորդուն կյանքը, ազատ վարքի կանանց, անվերջանալի հոգևորականներին, ուխտագնացներին, կերմեսների (ուխտատեղերի) խայտաբղետ եռուզեղը, կերուխումը, մոլեռանդությունը: Չի զլանում նկարագրել խորտիկների ճոխությունը, տապակած արտույտների բույրը, փարթամ ճաշասեղանները, որ ֆլաման ժողովուրդը իր առասպելական որկրամոլությամբ վայելում է, ինչպես և անհագ Թիլն ու մանավանդ Լամմեն:

Ռուբենայան ապրող, վայելող, ճարպոտ տիպերն են, որ կուշտ ու կուտ ուտելով կոիվ են բացել քրիստոնեական ասկետիզմի դեմ, փրփրալից գարեջրով և զինհներով փառաբանելով Վերածնունդի ուրախ և կենսախիճ կյանքը:

Կովի անմար պաթոսով, մեծ կրքով և ատելությամբ ողողված է վեպը իսպանական տմարդի տիրապետության դեմ, Ֆիլիպ թագավորի դեմ, որ հսկայական սարդի պես թաքնված իր մոսլլ պալատում՝ Էսկուրիալում ծծում է իր անասհման պետության բոլոր ժողովուրդների և մանավանդ ֆլաման ժողովրդի արյունը: Այնքան հզոր է հեղինակի ատելությունը Իսպանիայի հանդեպ, որ թվում է, թե հեղինակը կրում է այդ ծանր լուծը այսօրվա իրականության մեջ, իր օրով, և ոչ թե պատմական աղոտված անցյալի վերհիշումով:

Գլուգերի ապստամբությունները, ինկվիզիցիայի սուկալի արարքները, մասսայական շարժումները, զայրութի և ըմբոս-

տացման պողոթյունները ցուցադրված են զարմանալի ուժգընություններով:

Վեպը օժտված է նաև առողջ և սուր հումորով: Հեղինակը Թիլի բերանով սպանիչ ծաղրի է եմթարկում ֆեոդալական կարգերը, եկեղեցական դասերը, կաթոլիկությունը և պապի խավարակոտ իշխանությունը: Այս գիրքը սիրո և վրեժի գիրքն է. սեր դեպի տառապող հայրենիքը, սեր դեպի կեղեքված, ստրկացած մարդը, և հրեղեն վրեժ բոլոր տեսակի բռնակալներից և կեղեքիչներից՝ բոլոր ճնշվածների և գրկվածների համար:

Ռոմեն Ռոլանն ասում է, որ այս գիրքը էպիկական ձայնն է ազատության:

Եվ իրավամբ: Բոլոր ճնշված ժողովուրդների և ոտնահարված մարդկանց ձայնը: Նահատակ Կլաասի կտակը իր որդուն՝ բոլոր ժամանակների համար է. «Որդյա՛կ, երբեք ո՛չ մի մարդու և նույնիսկ ո՛չ մի կենդանու ազատությունը չ՛լսես՝ ամենամեծ գանձը այս աշխարհում»:

Ինչ Կոստերի գիրքը՝ «Թիլ Ուլենշպիգելը» արդեն բոլոր հմուտ գրականագետներից բարձր գնահատականի արժանացել է որպես գրական մի անմահ կոթող, որ իր հաստատուն տեղն ունի համաշխարհային գրականության մեջ, սակայն սա Բելգիայի համար ավելի մի բան է, քան մի որևէ հանճարեղ գիրք: Բելգիայի նշանավոր գրող Կ. Լըմոնիեն իր դամբանական ճառի մեջ՝ դը Կոստերին նվիրված, ասում է. «Ուլենշպիգելը ֆլամանդական բիրլիան է, հայրենական գիրքը: Սա մեր բովանդակ հայրենիքն է, սա մեր վաղն է, սա մեր ողջ պատմությունն է»:

Բելգիացի հռչակավոր բանաստեղծ է. Վերհարնը այսպես է գնահատում. «Ուլենշպիգելը՝ գրված հին ֆրանսերենով, առաջին գիրքն է, ուր մեր ժողովուրդը վերստին գտավ իրեն: Ուլենշպիգելը՝ ինքը բանաստեղծ է, իսկ բանաստեղծը ամբողջ ժողովուրդն է»:

Մի ուրիշ հեղինակ՝ Մ. Օմբիո, կարծես լրացնում է Վերհարնին, ասելով. «Սա առաջին գիրքն է, որ տվեց բելգիացիներին իրենց երկրի բույրն ու ճաշակը: Այս գրքից սկսվում է բելգ գրականությունը»:

Գրքեր կան, որ տակավին ազգային միության չհասած ժողովուրդներին տալիս են ազգային գիտակցություն, կոուն են նրանց բախտը և գծում ...ն նրանց ապագա ուղին:

Դը Կոստերի գիրքը այդ նակատագիրն ստեղծող սակավաթիվ նվիրական գրքերից մեկն է: «Ուլենշպիգել» վիպական լեգենդը ստեղծեց մի նոր ժողովուրդ, մի նոր հայրենիք:

1946

ԲԱՅՄԱՆ ԽՈՍՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԳ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Սիրելի ընկերներ.

Նախ և առաջ պատիվ ունեմ հայ գրողների միության կողմից սրտագին ողջունելու մեր սիրելի հյուրերին, որոնք հաճեցին գալ մասնակցելու Հայաստանի գրողների երկրորդ համագումարի աշխատանքներին:

Պիտի ասեմ, որ ես շատ բախտավոր եմ, որ ինձ վիճակվեց նախագահելու այս ժողովին, ուր հեռու վայրերից եկել են մասնակցելու արտասահմանի հայության մտքի և սրտի լավագույն ներկայացուցիչները: Սա մեր նորագույն պատմության մեջ առաջին դեպքն է՝ ներշնչող և ոգևորող, որ վերածնված Հայաստանի մայրաքաղաքում, ազատ և անկաշկանդ պիտի խոսենք մեր գրականության մասին, մեզ խանդավառող գաղափարներից և մեր հեռանկարներից:

Բարով եք եկել, սիրելի հայրենակիցներ: Դուք կլսեք զեկուցումներ մեր գրական նվաճումների մասին, դուք կլսե՞տե՞նեք մեր աճը. կտեսնե՞ք առհասարակ մեր հայրենիքի տնտեսական, կուլտուրական վերելքը. կտեսնե՞ք, որ 25 տարվա ընթացքում շատ մեծ գործ է կատարվել ազգային և համամարդկային իմաստով:

Մեր համագումարի ամենաարժեքավոր արդյունքն այն կլինի, որ ավելի սերտանան և մտերմանան մեր փոխադարձ հարաբերությունները մայր հայրենիքի և սփյուռքի գրականությունների միջև: Ներդաշնակվեն մեր ձգտումները, կառուցենք պայքարի ճակատ ընդդեմ ֆաշիզմի և ռեակցիայի ի շահ ժողովրդի բարգավաճման և միավորման, մեր պետության Է՛լ ավելի ամրապնդման, մեծ Միության իդեալների կենսագործման:

Մեր՝ գրողներիս պայքարի զենքը գրականությունն է:

Գրականությունը առաջադիմության մեծագոր ֆակտոր է. նա ժողովուրդների դաստիարակման վեհագույն բեմն է. նա, հին լեզվով ասած՝ մարգարեական պատգամաբեր է, առաջատար, մարդասեր գաղափարների մուկետիկ:

Գրականությունը ինքնանպատակ չէ, նա գեղեցիկ արվեստով ասված անկեղծ խոսք է՝ բարձրացնելու մարդուն, եղբայրացնելու միմյանց հետ և հոգեպես պատրաստելու իդեալական հասարակարգի համար:

Մարտը և ազնվորեն պահենք մեր նվիրական զենքը:

Սիրելի ընկերներ, թույլ տվեք մի երկու խոսք ասել հայ գրականության մասին:

Մի գրականություն՝ մի ժողովուրդ է: Մի որևէ ժողովրդի գրականությունը նրա ձգտումների և բանձանքների, նրա տատալանքների և հավատքի, նրա խիզախումների և անկումների գեղարվեստական պատմությունն է: Այդպես է և հայերի գրականությունը: Սակայն հայ ժողովրդի գրականությունն ունի առանձնահատուկ իր դոմինանտը: Համաշխարհային պատմությունը հայ ժողովրդին վիճակել է հայրենիք՝ շրջապատված հզոր, աշխարհակալ պետություններով, որոնք ձգտել են հայ ժողովրդին ստրկացնել, կոր ուստել և ոչնչացնել: Եվ այս դարձել է հայ ժողովրդի դաժան ճակատագիրը:

Այսպիսով, հայ ժողովրդի գրականությունն ազգային գոյամարտի գեղարվեստական պատմությունն է ընդդեմ իր ճակատագրի:

Մեր գրականության իշխող պաֆոսը, նրա միսիան դարերի անհաշտ պայքարն է հանուն հայրենիքի ազատության, ազգային կուլտուրայի և անկախ պետության, ընդդեմ բռնության, ստրկության:

Մեր գրականությունը բռնակալների, հարստահարողների, ջարդարարների գրականությունն է, այլ մարտնչող, բողոքող, ազատաբաղձ ոգու՝ տոգորված աշխատանքի, հումանիզմի, արդարության վսեմ իդեալներով:

Այդ պայքարի ոգին կայծակի պես անցել է հայ գրականության մի ծայրից մյուս ծայրը, սկսած Մովսես Խորենացուց, Եղիշեից, Սեբեոսից, միջին դարերի միջով, մեր ֆուկ-

լորի միջով, մինչև Խաչատուր Աբովյան, Միքայել Նալբանդյան, Պատկանյան, Րաֆֆի, Ծերենց, Թումանյան, Սիամանթո, Վարուժան, Վ. Տերյան ներառյալ:

Հայ գրականությունը պատկերելով հայ ժողովրդի բուն ասելությունը և արյունոտ պայքարը նրան ճնշող բռնակալների դեմ, եղել է նաև նրա դաստիարակը դարերի ընթացքում: Նա փրկել է հայ ժողովրդին այլասերումից և ապագագայնացումից: Նա տվել է հայ ժողովրդին հումանիզմի և դեմոկրատիայի գաղափարներ, ժողովրդասիրության և համաշխարհային եղբայրության իդեալներ, լավագույն, արդար և ազատ աշխարհ ստեղծելու հույս և հավատ և այն կենսագործելու պատրաստակամ զոհաբերություն, այն, ինչ որ անհրաժեշտ է խորտակելու բռնության և կեղեքման աշխարհը: Հայ ժողովրդի ոգու և նրա ձգտումների սիմվոլիկան պերճախոս կերպով քանդակված է նրա Սասունի Էպոսի մեջ: Այդ Էպոսը մեր նվիրական ավանդույթների հին գանձարանն է և դառն ու դաժան ժամանակների մեր վեհ ներշնչարանը, մեր պատգամաբերը: Նա պարունակում է գրականության բոլոր թեմաները՝ շինարարություն, աշխատասիրություն, հումանիզմ: Նա պարունակում է մեր պայքարի բոլոր ձևերը՝ ներքին կոիվ շահագործող ու շահագործվող դասակարգերի միջև, ազգային կոիվ արտաքին, օտար բռնակալների դեմ, համամարդկային կոիվ հին, անարդար աշխարհի դեմ՝ նրա կործանման ի խնդիր, հանուն նոր, արդար և ազատ աշխարհի կառուցման: Կոիվ աստծու դեմ՝ ճակատագրի դեմ, բռնության դեմ՝ հանուն բացարձակ ազատության, բացարձակ մարդու: Սասուն Էպոսը մեր պատմության, գրականության փիլիսոփայությունն է: Հայ ժողովրդի պայքարը ավելի ծանրացավ, դարձավ օրհասական, երբ սելջուկ-թուրք-մոնղոլ արշավանքները ողողեցին Հայաստանը, խորտակեցին հայ պետությունը, հաչրենի երկիրն ընկավ վայրագ բնազդներով գործող բարբարոսների լծի տակ: Ավերվեցին շեն քաղաքները, հրդեհվեցին մատենադարանները, սրի քաշվեցին ժողովրդյան զանգվածներ, գերի տարվեցին-ամաչացավ Հայաստանի մեծագույն մասը և հայ բնակչության փոխարեն նոմանդները բնակվեցին և հոյակապ ավերակների վրա դը-

րեցին իրենց յորդերը և ամեն տեղ իրենց նախամարտու
յասաքը հաստատեցին:

Հայ ժողովուրդը շատ արյուն թափեց այս անհավասար
գոյամարտի մեջ, կոտորվեց և նվազվեց շատ, բայց և այն-
պես կարողացավ իր նվիրական մատչանների շնորհիվ, իր
գութանի և աշխատանքի շնորհիվ պահպանել իր լեզուն, իր
ոգին և ազգությունը:

Երբ 19-րդ դարի սկզբին ռուս պետությունը Կովկաս ի-
ջավ և նվաճվեցին հայկական մարզերը, կովկասահայի հա-
մար շատ բարենպաստ եղավ այս պատմական անկյունա-
դարձը: Չնայելով ցարիզմի հալածանքներին, նա վայելեց
կյանքի և գույքի ապահովություն: Կրեց ռուս մեծ կուլտուրայի
և գրականության կենսատողջ ազդեցությունը: Ամրացավ հայ
ժողովրդի կապը և բարեկամությունը ռուս մեծ ժողովրդի
հետ:

19-րդ դարը հանդիսացավ հայ ժողովրդի լուսավորու-
թյան, գրականության նոր վերելքի և զարթոնքի շրջան: Այս
ժամանակաշրջանը մեծ տաղանդով և նույնչափ մեծ զգաց-
մունքով արտահայտված է 19-րդ դարի մեր գեղարվեստա-
կան փայլուն գրականության մեջ, իր սկիզբն, իր ներշնչումն
առնելով հանձարեղ Խաչատուր Աբովյանից: Երբ Հոկտեմ-
բերյան մեծ հեղափոխության հաղթանակի շնորհիվ սովետա-
կան կարգեր հաստատվեցին Հայաստանում, սովետահայ
գրականությունը, որ իր իդեական ծագումն առել էր բանաս-
տեղծներ Հակոբ Հակոբյանից, Ծուշանիկ Կուրդիմյանից և
արձակագիր Արագիից — նոր կազմակերպված փուլի մեջ
մտավ: Հանդես եկան շնորհալի, տաղանդավոր գրողներ՝
Դերենիկ Դեմիրճյան, որ հնից էր գալիս, Ստեփան Զորյան,
Ազատ Վշտունի, Գևորգ Աբով, Նաիրի Զարյան: Նոր գրա-
կանությունը երգեց ու արտացոլեց հասարակական աշխա-
տանքը, սոցիալիստական շինարարությունը, սոցիալիստա-
կան կարգերի մարդկային նոր փոխհարաբերությունները,
ժողովուրդների եղբայրությունը, բոլշևիկյան կուսակցության
սխրագործությունները և այլն: Սակայն, եղավ, դժբախտաբար
նաև շեղումների շրջան, բայց ազգային ձևի և սոցիալիստա-
կան բովանդակության իմաստուն ֆորմուլայով, արվեստն

ու գրականությունը գտան իրենց բնական հունը: Սրա շնորհիվ գրեթե վերջին տասնամյակում մեր կյանքն ու գրականությունը նոր զարթոնքի շրջան ապրեցին: Հրատարակվեցին Մովսես Խորենացի, Կորյուն Սքանչելի, Անանիա Ծիրակացի, Աբովյան, Ռաֆֆի, Մուրացյան, Ծերենց և ուրիշ արժեքավոր գործեր: Մեծափառ շքեղությամբ տոնվեց «Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյակը: Այս գեղեցիկ գործերը կատարվեցին մշտական հոգացողությամբ և խրախուսանքով մեր հայրենիքի կոմունիստական կուսակցության:

Երբ վայրենի ֆաշիզմը հարձակվեց Սովետների Միության վրա, և վտանգ էր սպառնում մեր մեծ հայրենիքին, հայ ժողովրդի հետ սովետահայ գրականությունը անձնվիրաբար զինվորագրվեց հայրենական սուրբ պատերազմին: Մեր գրողները հրեղեն խոսքերով երգեցին և փառաբանեցին այն բոլոր վեհ զգացմունքները և բարձր գաղափարները, որոնց սիրուն մեր սքանչելի ուղեգրերը գնում էին կովի դաշտ, թշնամու դեմ մարտնչում և հերոսանում՝ այսինքն հայրենի հող, լեզու, կուլտուրա, ընտանիք, մայր, կին, երեխա պաշտպանում: Խրախուսում էին նրանց, գովերգում նրանց սխրալի գործերը և անմահացնում նրանց հերոսական անձնագրերունը: Սովետական հայրենասիրության չքնաղ երկեր տվին մեր վիպասաններն ու բանաստեղծները, ինչպես Դ. Գեմիրճյանի «Վարդանանքը», Ստ. Զորյանի «Պապ թագավորը», Ն. Զարյանի «Արա գեղեցիկը», ինչպես Արազիի, Սիրասի, Քոչարի, Քր. Թափալցյանի, Արաքսի, Անանյանի արձակ երկերը, Գեղամ Սարյանի, Ծիրազի, Ա. Տարոնցու, Սարմենի, Վ. Գրիգորյանի, Հո. Պողոսյանի, Աղավնու, Համո Սահյանի, Սուրեն Վահունու, Բորյանի, Սիլվա Կապուտիկյանի, Մարո Մարգարյանի բանաստեղծությունները: Արտասահմանում մեր զինակիցներն էին տաղանդավոր գրողներ Կ. Սիտալ, Ա. Զարրգ, Ծահան Ծահնուր, Լևոն Մեսրոպ, Ռոբունի, Արամ Երեմյան, Հայկ Գարազաշ, Աղբաշյան, Վահե Հայկ, Անդրեասյան, Վահե Վահյան, Հ. Ղուկասյան և այլն: Մեր բանաստեղծ ընկերներից, երգը շուրթերին և զենքը ձեռներից, թշնամու դեմ գնացին և ընկան հերոսի մահով՝ Թաթույ Հուրյան, Մեսրոպ Մերուժան, Եփրեմ Լոռենց, Ա. Ծահ-

պագ, Մ. Բալասանյան, Նորիկ Նազարյան, Թևան Խաչ-
յան, Ավետիք Դեբենց և Ֆրանսիայում ֆաշիզմի դեմ հերոս-
ներ՝ Միսաք Մանուշյան, Լաս՝ Լուիզա Ասլանյան և Սեմա:
Հավիտյան փառք նրանց հիշատակին:

Սովետահայ գրականությունը պատվով կատարեց իր
հայրենասիրական պարտքը և արդար հպարտությամբ իր
մասն ունեցավ հայրենիքի փառավոր հաղթանակի մեջ:

Սովետների Միությունը ջախջախիչ հաղթանակ տարավ
ֆաշիստական Գերմանիայի վրա: «Պատերազմը ամեն մի
ժողովրդի նյութական և հոգեկան բոլոր ուժերի բազմակողմա-
նի քննությունն է», — ասում է մեծ Լենինը: Միությունը բըռ-
նեց այս ծանր քննությունը, և այս պատմական իրադարձու-
թյան տարողությունը երևան կգա գալիք ժամանակների մեջ:
Պանծալի կարմիր բանակը փրկեց Գերմանիայի ծանրության
տակ հյուծվող եվրոպական մի շարք ժողովուրդների: Նա
դարձավ փոքր ազգերի ազատության պաշտպանը և միևնույն
ժամանակ համաշխարհային խաղաղության հզոր գորավիզը:
Սրանով նա զարդարեց հավերժական փառքով սովետական
ժողովուրդների ճակատը, ժողովուրդներ, որոնք ոռու մեծ և
հերոսական ժողովրդի գլխավորությամբ կովեցին ահեղ թըշ-
նամու դեմ ու հաղթեցին: Արդ, մեր մեծ հայրենիքը մտել է
ստեղծագործ խաղաղության շրջանի մեջ: Այն անմահ հե-
րոսությամբ, որ ժողովուրդները էլան կովի, նույն հերոսու-
թյամբ ձեռնամուխ են եղել հիմա աշխատանքի՝ բուժելու
պատերազմից ստացած անհամար վերքերը, վերականգնելու
ավերված քաղաքներն ու գյուղերը, գործարաններն ու ֆաբ-
րիկաները: Հնգամյա պլանը փառավոր դարաշրջան է բաց
անում. նա աննախընթաց շեշտով պիտի բարձրացնե երկրի
տնտեսությունը, տեխնիկան և կուլտուրան: Նա մեր մեծ հայ-
րենիքը մի հսկայական քայլով ավելի պիտի մոտեցնի կոմու-
նիստական հասարակարգի կենսագործմանը: Սովետական
Միության գրականությունը, որ գաղափարապես ամենից ա-
ռաջատար գրականությունն է աշխարհի մեջ, սակայն պիտի
բազմապատկե իր ջանքերը այս մեծագույն դարաշրջանին
արժանի բարձրակ երկեր ստեղծելու:

Մեր բոլշևիկյան կուսակցության Կենտրոնական կոմի-

տեի որոշումները «Զվեզդա» և «Լենինգրադ» ժուռնալների մասին՝ պիտի ղեկավարող ուժեր հանդիսանան սովետական ընդհանուր գրականության վերաբերմամբ: Մեր գրողները լենինյան գաղափարների լուսարձակի տակ, սոցիալիստական ռեալիզմով և սոցիալիստական ռոմանտիզմով զինված պիտի պատկերեն մեր կյանքը, նրա ակտուալ երևույթները, ֆաշիզմի և ռեակցիայի դեմ պայքարող, սոցիալիզմի հռչակապ շենքը կառուցող խիզախ և անձնվեր մարդկանց ներքնաշխարհը, պիտի դաստիարակեն նորաբողբոջ սերունդներին, ժողովրդին երջանկացնելու և բարձրացնելու ոգով և բոլորի կամքերը մղեն դեպի մարդկային պատմության վերջնական նպատակին՝ կոմունիզմի հաղթանակին:

Սովետահայ գրականությունը Մեծ Միության գրականության մի ջոկատն է, տոգորված նույն իդեալներով և իդեալներով: Նա միշտ ընթացել է համաքայլ իր մեծ բանակի հետ. բոլոր հոգով ցանկանում ենք, որ նա խիզախի հանդես բերելու գաղափարներով հագեցած, կյանքով բաբախուն, շող-շողուն գործեր, արժանավայել մեր հռչակապ էպոխային:

Աշխարհում ցրված գաղութահայությունը, որ գործով և սրտով մասնակցել է Հայրենական պատերազմին և երազել է նրա հաղթանակը, հավատալով, որ մեծագոր Սովետական Միությունը, որ փրկեց հայությունը բնաջնջումից, այժմ էլ պիտի վերջ դնի նրա տառապանքներին:

Այսօր գաղութահայությունը վերադառնում է իր ազգային կենտրոնը, Սովետական Հայաստան: Գալիս են մեր հայրենաբաղձ, հայրենագուրկ եղբայրները, աշխարհի զանազան մասերից: Հարյուր հազարներ, միլիոն է նրանց թիվը: Այսօր եկել են մի քանի տասնյակ հազար: Նրանք պիտի գան, ոչ մի ուժ չպիտի կարողանա արգելակել նրանց վերադարձը: Հիմա արտասահմանի մեր գրական ընկերների վերա սրբազան պարտք կա դրված՝ աջակցել ներգաղթի հաջողությանը: Նրանք պիտի տանեն գաղութահայերին այն խնդրալից պատգամը, որ Սիչյուոքի բոլոր հայերը Սովետական Հայաստանի վաղվա քաղաքացիներն են:

Մեր գրչակիցները պիտի երգեն և արժարժեն սեր դեպի Սովետական Հայաստանը, բոլոր հայերի հայրենիքը:

Պիտի վառ պահեն ազգային ինքնագիտակցությունը և ազգային պատկանելիությունը: Բոլոր միջոցներով պիտի ձգտեն հեռու պահել հայությունը ալլասերումից: Նրանք պիտի կամորջ դառնան տարածելու Սովետական Հայաստանի կուլտուրայի, արվեստի և գրականության արժեքները և ստեղծելու միասնական գրականություն՝ սովետահայ գրականության շուրջը:

Ընկերներ, ես համոզված եմ, որ համագումարը խորը կերպով հասկանալով բոլշևիկյան կուսակցության Կենտրոնական կոմիտեի օգոստոսի 14-ի պատմական որոշման իմաստը և զինվելով այդ որոշմամբ, հանրագումարի կթերի նաև գրականության մեջ եղած բացերն ու առանձին սխալները և կմշակի գործարար միջոցառումներ մեր գրականության հետագա բուռն զարգացման համար:

Ընկերներին հետ միասին վստահեցնում եմ բոլշևիկյան կուսակցությանը, որ ներշնչված նրա իմաստուն ցուցումներով, սովետահայ գրողները կստեղծեն գեղարվեստական ու գաղափարական մեծարժեք գործեր՝ արժանի մեր մեծ դառաշրջանին:

Խոսքս վերջացնում եմ, հայտնելով մեր խորին շնորհակալությունները մեր կուսակցության և մեր կառավարության ղեկավարներին, որ ամեն դյուրություններ ընծայեցին մեզ փայլուն կերպով կատարելու մեր գրականության այս նշանակալից ստույգ:

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՄԱՀ ՀԻՇՍԱՍԿԻՆ

Հայ հասարակայնությունն այսօր խորագին հարգանքով նշում է մեծ հայրենասեր, հեղափոխական դեմոկրատ Միք. Նալբանդյանի մահվան 80- ամյակը:

Մենք վերստին ապրում ենք մեր մի հին թանկագին կորչատյան դառն վիշտը, որը, սակայն, միշտ կա մեր սրտերում և տեղափոխվում է սերունդների սրտերի մեջ:

Երևեցավ նա որպես զինված մարգարե՝ մի ձեռքում ջահ, մյուսում՝ սուր: Գրեթե մի ամբողջ դար նա լուսավորում էր մեր ուղին՝ ցույց տալով զարգացման, առաջադիմության ճշմարիտ ուղին, մարտնչելու բռնության դեմ, ստրկական կարգերի և մտայնության դեմ՝ հանուն հայրենիքի և հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական ազատության, հանուն մարդկային ու համամարդկային ազատության և եղբայրության:

Սերունդներին ոգեշնչել է նա վսեմ իդեալներ, անձնագոհություն, իդեալների կենսագործման խնդիր, ազատության բուռն, անպարփակելի սեր և տենչանք:

Վերադառնում եմ իմ վաղ պատանեկության տարիները. դա 90-ական թվականներին էր: Մ. Նալբանդյանի անունը մենք արտասանում էինք սրբազան պատկառանքով: Նա մեր նոր կյանքի քաջարի ասպետն էր, որի հոգին վաղ հասակում պաշարեց գիտությունը՝ յոթ ծանր հայացքով աշխարհի վրա, և ազգի դառն վիճակի գիտակցությունը ծանրացավ նրա սրբտին: Իր անունը գաղափարի և ազգի նահատակի և հերոսի լուսապսակով էր զարդարված: Նրա «Երկրագործություն» խստիվ արգելված գիրքը միայն ձեռագիր տետրակներով ունեինք. կարդում էինք աչքերով և սրտով, բազմիցս կարդում, ոգևորվում, թնավորվում էինք, թռչում, զինվորվում պայքա-

րի համար. չէ՞ որ նվիրական հեղինակը մեզ էր նվիրել, հայկական երիտասարդությանը, իր պատգամաբեր գիրքը: Անգիր գիտեինք շատ էջեր, աֆորիզմներ էինք յուրացրել՝ «Ազգությունը անմեղանչելի է և ամենայն ընդունելության արժանի», «հող, լուսավորություն, ազատություն», և շատ ուրիշները:

Այդ վառվուռն գրքի շնորհիվ ընդարձակվել էր մեր մտահորիզոնը. քաղաքական, տնտեսական, պատմական հասկացողություններ էր տալիս մեզ:

Մենք տեսնում էինք եվրոպական, մասնավորապես Անգլիայի քաղաքականության աստառը՝ փոքր ժողովուրդներին քաղաքակրթելու դիմակի տակ նրանց ստրկացնելու և շահագործելու էգոիստական նպատակներ: «Եվրոպական տերությունքը,— գրում է Մ. Նալբանդյանը,— անդադար օգնություն են տալիս Թուրքիային, որ նա դիմանա և չկործանվի, որպեսզի ստրկացած հայ, սլավոն և հույն ժողովուրդները քաղաքակրթիչ հոգաբարձուից չզրկվին»: Ինչքան այժմեական է հնչում այս:

Չարմանալի, անբացատրելի ներգործություն ուներ մեր բոլորիս վրա այդ արտասովոր գիրքը և նրա հետ միասին «Ազատն աստված» հրեղեն բանաստեղծությունը, որ երգում էինք միշտ խանդավառությամբ և հուզմունքով:

Ինքնին Մ. Նալբանդյանը զարմանալի, անբացատրելի երևույթ է մեր նորագույն պատմության մեջ:

Այնքան կարճատև կյանք ապրելով, տնտեսական ոչ այնքան նպաստավոր պայմաններում, թույլ առողջությամբ, տիրացուական նախակրթությունից հասնել մինչև ժամանակակից փիլիսոփայական, գիտական, քաղաքական մտքի բարձունքները և կանգնել իբրև ինքնուրույն դեմք և միտք... Սովորել և տիրապետել լեզուներ, ընդգրկել ո՛չ միայն հայ ժողովրդի պատմությունը և նրա ընթացիկ հարցերն ու պահանջները, այլև, կարելի է վստահ ասել, ամբողջ աշխարհի պատմությունը և մարդկությանը շարչարող հարցերն ու մեծ առեղծվածները:

Համայնապարփակ միտք, Էնցիկլոպեդիկ զարգացում, անհագուրդ հարցասեր, անալիտիկ, բազմակողմանի:

Օժտված անբեկանելի կամքով, մարտնչող տեսպերամենտով, գործելու, իրականացնելու անսպառ եռանդով: Քաջ, անխուճ, ձեռներեց: Իսկ նրա գործունեության օրյեկտների և ծրագիրների դիապագունը անչափելի է՝ զուգահեռը շունենցով:

Հայաստանի ազատագրման նպատակով թափառել Եվրոպայում, կապեր հաստատել արևմտահայ նշանավոր դեմոկրատ գործիչների հետ, նույնիսկ իտալական մեծ հայրենասեր Գարիբալդիի ընկեր Մածծիմիի հետ:

Անհավասար կոիվ մղել ցարիզմի դեմ, բյուրոկրատիայի, կալվածատերերի, շահագործողների դեմ: Հայկական միջավայրում կոիվ ֆեոդալ-կղերական հզորների դեմ, Ներսես կաթողիկոս Աշտարակեցու, Խալիպյան սուլայի, Ալվազովսկու — հանուն նոր, լուսավոր կյանքի, առողջ դաստիարակության, կնոջ ազատության և այլն:

Հեռավոր Հնդկաստան գնալ, Նոր Նախիջևանին հասանելիք կտակի գումարները անհուն դժվարություններ հաղթելով՝ կորզել անգլիական բանկից:

Գրական բոլոր տեսակների մեջ կենտրոնական դեմք դառնալ, որպես փայլուն, անզուգական հրապարակախոս, երգիծաբան, ժողովրդական տրիբուն, բոցաշունչ բանաստեղծ, թարգմանիչ, առաջնակարգ գրաքննադատ, հին հայ պատմիչների ուսումնասիրող, մեկնաբանող, աշխարհաբարի համար կորովի պայքարող և հաղթանակող և աշխարհաբարի քերականություն կազմող, կանոնավորող և վերջապես ժողովրդական հանրամատչելի գիտական-գործնական գրքեր գրող. «Շերամապահության ձեռնարկ», «Համառոտ քիմիա» և այլն, և այլն:

Նալբանդյանն իր Էպոխայի ամենատիրական և ներշնչող դեմքն է իր գաղափարների նորությամբ, իր համարձակ պայքարով, լավատեսության հավատով տոգորված՝ շքեղ ապագայի հանդեպ. և վերջապես իր առնական լեզվով, որ կատարյալն էր ժամանակի նկատառումով՝ կտրուկ, կայծակնային նոր ոճով, թարմ, կյանքոտ պատկերներով: Նրանից ներ-

շնչված են մեր գրական և քաղաքական խոշոր դեմքերից՝ Ռաֆֆին և Ծերենցը, իրենց սկզբնական շրջանում Սմբատ Ծահագիզը, Հովհ. Թումանյանը: Նրա ազդեցությունը տավրալին կանգ չի առել:

Նալբանդյանը բազմաթիվ թելերով կապված էր ուս մեծ ժողովրդի կյանքի հետ: Ռուսական մեծածավալ օվկիանոսի փոթորկումներն ու ելևէջները անցնում էին նրա սրտի միջով: Նա իմաստուն պայծառատեսությամբ ըմբռնեց, որ հայ ժողովրդի ազատությունը և բարգավաճումը ուս ժողովրդի ազատության մի մասն է, և՛ պատմականորեն, և՛ տրամաբանորեն կապված է Ռուսաստանի հետ: Եվ զինվորագրվեց այն իգոր, ըմբոստ, աննահանջելի պայքարին, որ գլխավորում էին Գերցենը, Օգարևը, Չերնիշևսկին և շատերը, հերոսական պայքար, կյանքի և մահի կոճի՛վ՝ ընդդեմ ցարի բռնակալության, հանուն հողի, ազատության, դեմոկրատիայի: Նա զոհվեց այդ սրբազան պայքարի մեջ, սակայն նրա գործը պըսակվեց հաղթանակով:

Փա՛նք Միքայել Նալբանդյանին, մեծ հաչրենասերին, անմահ բանաստեղծ-հրապարակախոսին, ազատության անձնվեր զինվորին:

ՆԻՉԱՄԻ ԳՅԱՆՁԵՎԻ

Նիզամի Գյանջևիին Արևելքի մեծագույն բանաստեղծներից մեկն է: Ութ դար է նրա անմահ անունը փառաբանվում է արևելյան ժողովուրդների մեջ. նրա ծննդավայր Կովկասից մինչև Հնդկաստան՝ Գանգեսի ափերը, նաև արևմուտքում, քիչ չեն նրա գնահատողները: Արևելյան և արևմտյան բազմաթիվ լեզուներով թարգմանված են նրա լիրիկական-էպիկական սյուեմները:

Նիզամիի բանաստեղծության հմայքը մինչև այսօր իսկ իշխում է տիրաբար իսլամական աշխարհի բանաստեղծների վրա: Չթվելով նրան հետևող երկրորդական հեղինակների անունները, մենք կհիշատակենք երկու շատ խոշոր բանաստեղծների՝ ուզբեկական գրականության հիմնադիր հուշակավոր Ալիշեր Նավոյիին և Ադրբեջանի նույնչափ հուշակավոր բանաստեղծ Ֆիզուլիին: Նաև հնդիկ բանաստեղծ Խոսրով Դեհլևիին և Իրանի բանաստեղծ Ջամիին, որոնք ոգեշնչված են նրանով:

Նիզամի Գյանջևիին, ինչպես իր անունը վկայում է, հին աղվանների Գանձակ քաղաքից է, Ադրբեջանի Գյանջա, ներկայիս Կիրովաբադ քաղաքից: Պետք է ասել, որ նրա կենսագրության վերաբերյալ տեղեկությունները կցկտոր են: Որտե՞ղ և ինչ է սովորել, ովքե՞ր են եղել նրա ուսուցիչները, հայտնի չէ: Նա ծնվել է 1140 կամ 1141 թվին և վախճանվել է 1203 թվին: Նրա իսկական անունն է Գյանջևի (գյանջեջի) և Աբու Մուհամմետ (այսինքն Մուհամմետի հայր), իր որդու Մուհամմետի անունով: Նրա բանաստեղծության կենսակազմ, իմաստուն բնույթի համար Նիզամիին անվանել են նաև «հեքիմ» Նիզամի, այսինքն իմաստուն Նիզամի:

Նիզամին անխոնջ աշխատանքով յուրացրել է ժամանա-

կի գրեթե բոլոր գիտությունները՝ փիլիսոփայություն, աստ-
վածաբանություն, իրավաբանություն, բժշկություն, ֆիզիկա,
մաթեմատիկա, աստղաբաշխություն, որով նա իր դարի լու-
սավորված, բազմակողմանի զարգացած մարդկանցից մեկն
է հանդիսացել: Այս հանգամանքի շնորհիվ է, որ նրան կոչել
են նաև «Գյանջալի իմաստուն» և ամեն դասից մարդիկ դի-
մել են նրա իմաստուն խորհուրդներին: Նիզամին, իբրև խոր-
հող փիլիսոփա-բանաստեղծ, իր ժամանակի լուսավոր, ա-
ռաջադեմ գաղափարները կրող, ներքուստ չէր դավանում
մահմեդական կրոնի ուղղափառությունը: Հակառակ իր Իս-
լամի դոգմաներին, մոլեռանդությանը, խավարամտությանը,
նախապաշարմունքներին, ջատագով էր խղճի ազատության,
կնոջ ազատագրման, ժողովուրդների եղբայրության գաղա-
փարներին: Մահմեդական աշխարհի բոլոր ականավոր բա-
նաստեղծների պես ջերմորեն համակիր էր սուֆիզմին: Եվ
այդ պատճառով Նիզամուն տվել են Ծելխ տիտղոսը՝ Ծելխ
Նիզամի: Սակայն, շատերի նման նա բոլորանվեր չէր հա-
փրջտակված սուֆիզմի գաղափարներով: Նա միշտ անկախ
էր պահում իր անհատականությունը և իր քննադատական
մտքի ազատությունը չէր կաշկանդում մի որևէ վարդապե-
տության ընդունված բովանդակ սկզբունքներով: Բայց և այն-
պես սուֆիական աշխարհայացքով թաթախված են նրա
ստեղծագործությունները: Մի երկու խոսք սուֆիզմի մասին:
Սուֆիական վարդապետությունը բազմատարր երևույթ է:
Նա արաբ-պարսկական փիլիսոփայության և միստիկայի
արդյունք է, մի տեսակ խառնուրդ: Ըստ այդ ուսմունքի, մար-
դը աստվածության էմանացիան է և ձգտում է վերստին միա-
նալու աստվածությանը: Կատարյալ մարդը նույնանում է
աստվածության հետ, նաև բնությունը նույնանում է աստվա-
ծության հետ՝ բնապաշտություն, պանթեիզմ: Ուրեմն՝ մարդը
որպես աստվածություն, պետք է ազատ լինի ամեն դոգմա-
ներից և կաշկանդող օրենքներից:

Ամենամեծ մորալը՝ սերն է, ամենագովական բանը՝ գե-
ղեցկությունը: Պետք է հաղթահարել դասակարգերին և ձուլ-
վել իրար հետ: Բացարձակ ներդաշնակությունը արդարու-
թյունն է, և իսկական կրոնը՝ իմաստությունը: Պայքար իս-

լամական ալլահի դեմ, Իսլամի դոգմաների դեմ՝ հանուն ներքին ազատության, անհատականության:

Պայքար տիրող բռնակալ իրավակարգի դեմ, ամեն ձևի շահագործումների դեմ, իշխանավորների դեմ: Սեր և գուրջ աղքատների, թշվառների, գրկվածների, բռնության զոհերի հանդեպ: Այս կրոնա-սոցիալական շարժումը, որ ունեցավ իր գաղափարական նահատակները, ներգրավել էր ժամանակի բոլոր հարստահարվածներին, ընչազուրկներին և խորհող ու զգացող մարդկանց:

Նիզամին գրել է իր լիրիկական դավթարը՝ բազմաթիվ գազելներ և ոտբայթներ, սակայն այդ դավթարից մնացել են բեկորներ միայն: Բարեբախտաբար, նրա փառքը կազմող հնգամատյանը՝ «Խամսեն» կամ «Փյանջ գյանջը» — հինգ գանձը — հասել են մեզ ամբողջապես:

Նիզամին գրել է իր բոլոր գործերը ֆարսերեն՝ պարսկերեն, ժամանակի կիրթ, մշակված, կիրառվող, կուլտուրական լեզվով, ինչպես միջին դարերում Եվրոպայում գրում էին լատիներեն: Այս պատճառով էլ գրականագետներից ոմանք Նիզամուն դասում են պարսիկ յոթ մեծ բանաստեղծների շարքում՝ Ֆիրդուսիից հետո:

Երիտասարդ Նիզամին Ադրբեջանի աթաբեկներին նրվիրված իր ներբողների համար կանչվեց պալատ, որ ժամանակակից ուրիշ պանգոգիրիկների պես վայելում էր իշխան տեկենասների շնորհներն ու նյութական բարիքները, սակայն նա շուտով հեռացավ պալատի ստորացուցիչ, այլասերող մթնոլորտից և սնամեջ կյանքից, ամփոփվեց իր փոքրիկ կավածքում և նվիրվեց իր երազների ու գաղափարների աշխարհին և կերտեց իր պոեմները՝ «Խամսեն», որ բաղկացած է 30.000 բեյթից, այսինքն 60.000 տողից:

Նիզամին իր դիդակտիկական-փիլիսոփայական, ողմանտիկ-ասպետական և ֆանտաստիկական պոեմների նյութերը քաղել է Արևելքում հին ժամանակներից ի վեր տարածված ավանդություններից, լեգենդներից, գրույցներից, նաև իր ժողովրդի ֆոլկլորային գանձարանից: Սակայն այդ նյութերը նա կրավորական կերպով չի վերարտադրել, այլ նրանց տգործել է իր հարուստ անհատականությամբ, իր աշխարհա-

չացքով և աշխարհագրացումով: Ֆանտաստիկան հնարավոր չափով իջեցրել է իրական գեանի վրա, հյուսել է Ադրբեջանի ժողովրդի կենցաղի հետ, կապել է Ադրբեջանի և Կովկասի պատմական անցքերի և աշխարհագրական անունների հետ:

Նիզամիի առաջին պոեմը «Խամսեի» ցիկլից՝ «Գաղտնիքների գանձը» բարոյախոսական-դիդակտիկական գրվածք է, ներշնչված Սանայի Սուֆի միստիկ բանաստեղծի ոգով: Նովելների ժողովածու է դա, որի մեջ Նիզամին խրատում է հոգրներին, թագավորներին՝ արդար լինել, չշահագործել ժողովրդին, կարեկցել նրան. դատարիետում է չար, ընչաքաղց իշխաններին, նրանց բռնությունները, հափշտակումները:

Երկրորդը «Խոսրով և Ծիրին» պոեմն է: Նյութը Արևելքում թափառող սիրո լեգենդան է՝ Սասանյան Փերվիզ Խոսրով թագավորի և քարակոփ Ֆահրատի սերը գեղեցիկ հայ իշխանուհի Ծիրինի հանդեպ: Այդ ասպետական ռոմանտիկ պոեմը գրված է խորունկ զգացմունքով և մեծ արվեստով: Այստեղ սերը դեպի Ծիրինը սուֆիական ալեգորիա է, որ պատկերացնում է մարդկային ոգու անշեջ ձգտումը՝ առ աստված: Սակայն պոեմը այնքան իրական է գրված, մարդկանց հոգեբանությունը, զգացմունքները, կրքերը այնքան կենդանի, որ շղարշում են ալեգորիան և թաքցնում մեր աչքերից:

Ծիրինը կնոջական իդեալական տիպարն է՝ չնաշխարհիկ գեղեցիկ, բարոյական վսեմ առաքինություններով զարդարված, անձնուրաց սիրող, անձնվեր ամուսին:

Այս չքնաղ պոեմի մեջ սերը հրաշագործ է՝ ազնվության, մարդկայնության և հերոսացման մղող:

Երրորդ պոեմը՝ «Լելլի և Մեջնուն» արաբական մի շատ հուզիչ և ցավագին զրույց է մի սիրահար զույգի դժբախտ սիրո մասին, նման Եվրոպայում տարածված ողբերգական վախճան ունեցող սիրո զույգերի՝ Տրիստան և Իսուրդի, Ռոմեո և Զուլիետայի:

Այս պոեմի մեջ սերը խոցող է և չար: «Ծիրինի» մեջ երգված սիրո բոլորովին հակապատկերը: «Ծիրինի» մեջ սերը վսեմացնող է և ստեղծագործ: Այդ սիրո շնորհիվ վայրագ Խոսրովը վերածնվում է, դառնում ազնիվ, մարդասեր իշխան:

Իսկ քարակոփ Ֆահրատը կատարում է աներևակայելի սրի-
րագործություններ: Այսպիսով, «Շիրիհի» սերը հանդիսանում
է անձնուրաց սիրո սիմվոլ: Այնինչ «Լեյլի և Մեջնունի» սերը
տարերք է՝ խորտակող, թշվառացնող, ոչնչացնող: Սա Արե-
վելքի ամենատոմանտիկ պոեմն է՝ շատ սիրված ժողովուրդ-
ների կողմից: Դարերի մեջ ունեցավ իր հետևորդները. Ա-
դրբեյջանի մեծանուն բանաստեղծ Ֆիզուլին նրանով ոգևոր-
ված գրեց իր հրաշալի «Լեյլի և Մեջնունը»:

Չորրորդ պոեմը «Հաֆթ Պեյքեր»՝ յոթն պատկեր, այսինքն
յոթն գեղեցկուհիներ: Այս գեղեցիկ պոեմը՝ կազմված յոթ նովել-
ներից, նվիրված է Սասանյան թագավոր Բահրամ Գուրի ոռ-
մանտիկ արկածներին:

Այս պոեմի մեջ Նիզամին հանդես է բերում պատմողա-
կան հիասքանչ կարողություն, և երևում է նրա՝ մարդկային
զգացմունքներին, հույզերին, կրթերին անզուգական գիտակ
լինելը, խոր հոգեբան լինելը:

Վերջին պոեմը՝ «Իսկեևդեր Նամեն»՝ Նիզամիի ամենա-
սովար երկն է: Նյութը Ալեքսանդր Մակեդոնացու կյանքն
ու գործերն են՝ սակայն պատմական աղավաղված իրակա-
նության հետ մեծ քանակով խառնված են Արևելքում վաղուց
ի վեր տարածված լեգենդներն ու առասպելները Ալեքսանդր
Մեծի մասին: Արևելյան գույներով և կենսազգացումով թա-
թախված է երկը:

«Իսկեևդեր Նամեն» «Խամսեի» առաջին պոեմի նման
դիդակտիկական բնույթ ունի և գերազանցապես փիլիսոփա-
յական է: Այս պոեմով Նիզամին հանդիսանում է որպես լավ
ծանոթ անտիկ աշխարհին և դասական փիլիսոփաներին՝
Սոկրատին, Պլատոնին, Արիստոտելին...

Պոեմի հերոսի հոյակապ կերպարը մի սինթեզ է մարդ-
կային առաքինությունների. նա իրացնում է իր մեջ քաջ
մարտիկին, իմաստուն և մեծահոգի իշխանավորին, որ եկել
է կառավարելու մարդկանց և ժողովուրդներին:

Նիզամին իր հասարակական իդեալներն իրականացրել
է Ալեքսանդրի մեջ—արդարադատ թագավոր՝ ժողովրդի բա-
րօրությանը նվիրված, խեղճերի, ճնշվածների պաշտպան:
Որպես աստվածային գաղտնիքների հասու, նա գիտե միայն

Ժողովրդին երջանկացնելու միջոցները: Նրան հայտնագործվում է այն կատարյալ, երջանիկ աշխարհը, որ գտնվում է հեռավոր հյուսիսում: Իդեալական աշխարհ, ուր չկան իշխողներ և ենթականեր, մեծեր և փոքրեր, հարստահարողներ և հարստահարվողներ, ուր բախտավորություն և լիություն կա բոլորի համար:

Սա չիճական շատ հին առասպել է՝ երջանիկ աշխարհի մասին, որին մշտապես երազել են մարդիկ և ժողովուրդները:

Նիզամին չի՞ ներկայանում մեզ իբրև սուկ սիրո, վայելքի, գեղեցկության և երազանքի քնարերգու բանաստեղծ, այլ առավելապես մարգարե բանաստեղծ՝ բռնության դեմ մարտընչող, ազատության պայքար, ժողովուրդների եղբայրության մունետիկ:

Նիզամին իր երազած նախնական ուտոպիայով ութ հարյուր տարվա թանձրության միջից ձեռք է մեկնում առաջավոր հումանիստ գաղափարներով ոգևորված մարդկությանը և կանգնում է նրա շարքերում պայքարելու ժողովուրդների ազատության, բարօրության համար, համամարդկային մեծ իդեալների վերջնական հաղթանակի համար:

Նիզամին թանկ է և նվիրական Ադրբեջանի ժողովրդի համար, որի հոգում ներարծարծել է լավագույն ապագայի հեռապատկեր և հաստատուն հավատ նրան հասնելու և ազգային ու համամարդկային իդեալներ. նա նույնչափ թանկ է և նվիրական մեզ համար, Կովկասի ժողովուրդների համար: Ընդհանրապես իր հումանիստ և ազատախոհ գգացմունքների, նա հանդիսացել է և հանդիսանում է կովկասյան ժողովուրդների եղբայրացման մեծագույն զոդողներից մեկը, որը միշտ պիտի ներկա լինի մեր՝ կովկասցիներին փոխհարաբերությունների մեջ:

Նիզամին ոչ միայն Ադրբեջանի պարծանքն է, այլև մեր՝ Կովկասի ժողովուրդների՝ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի հոգեկան մեծագին նվաճումներից մեկը: Նիզամին, Ծոթա Ռուսթավելիի «Վագրենավորը», Հայաստանի ճարտարապետությունն ու միջնադարյան լիրիկան, այն փառապանծ

Աերդրումներն են, որ մուծել է Կովկասը համամարդկային
Կուլտուրայի հավերժական գանձարանի մեջ:

Եղբայրական Ադրբեջանի ազգային մեծ տոնին մենք
բերում ենք մեր սրտագին ողջույնը և խնդակցությունը, նաև
անմահ Նիզամիի չքնաղ «Լեյլի և Մեջնունի» հայերեն չա-
փածո թարգմանությունը:

1948

ՄԵԾԱՀԱՆՃԱՐ ԳՈՒԾԿԻՆԸ

Սովետների Մեծ Միության մեջ, բոլոր հանրապետությունների մայրաքաղաքներում և բազմաթիվ վայրերում, եղբայրական 76 լեզուներով, խորին հիացմունքով, սիրով և խանդավառությամբ տոնվում է մեծագույն և հանճարաշատ բանաստեղծ Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկինի ծննդյան 150-ամյակը:

Երկրագնդի բոլոր առաջավոր և դեմոկրատ ժողովուրդները նույնպես ջերմ զգացմունքներով տոնում են կուլտուրական այս հանդեսը, որովհետև մեծ բանաստեղծները պատկանում են համայն մարդկությանը:

Լուսավորված ժողովուրդների սրտին Պուշկինը այնքան մոտ է և սիրելի, ինչքան Հոմերոսը, Դանթեն, Շեքսպիրը, Սերվանտեսը, Գյոթեն:

Պուշկինն իր դարի զարգացած մարդկանցից մեկն էր, գիտեր հին ու նոր լեզուներ, կարդացել էր հույն և լատին կլասիկներին և եվրոպական նշանավոր հեղինակներին: Ուշադիր կարդացել էր իր ժամանակակից և նախորդ ոռու գրողներին:

Պուշկինը լավագույն կերպով նախապատրաստված էր ի սպաս գրական ասպարեզի: Նա լուրջ վերաբերմունք ուներ գրականության և նրա հասարակական դերի նկատմամբ: Եվ զգում էր իր վերանորոգիչ միսիան:

Նա իր նուրբ ճաշակով մաքրեց ժողովրդի լեզուն, մշակեց, բյուրեղացրեց, բանաստեղծականացրեց, ստեղծեց իր անթերի արվեստի գործիքը՝ պարզ, պատկերավոր, երաժրշտական մի հոյակապ ներդաշնակ լեզու, որով սնվեցին, կրթվեցին հետագա գրական հսկաները՝ Գոգոլ, Լերմոնտով, Տոլստոյ և մյուսները:

Նա մոռեցավ ռուս ժողովրդի տարերքին՝ գյուղացիներին, աշխատավորներին, նրանց սրտին ու կյանքին:

Այսպիսով, Պուշկինը հիմնեց ռուս նոր գրականությունը՝ ռուս լեզվով և ռուս ոգով: Եվ դարձավ ռուս մեծ ժողովրդի ազգային բանաստեղծը:

Որպես ազգային բանաստեղծ, Պուշկինը մտավ համաշխարհային հանճարների Պանթեոնը՝ մարդկությանն ասելու իր խոսքը՝ ռուս ոգուց բխած:

Ռուս գրականության մեջ ամեն ինչ սկիզբ է առել նրանից, գրական բոլոր ժանրերը՝ պոեմ, դրամա, վեպ, ոտանավորների նոր ձևեր: Բոլոր ռուս գրողները ներշնչված են նրանից մինչև այսօր: Պուշկինը ռուս ժողովրդի բոցաշունչ մարգարեն է. նրա հանճարը լուսավորել է ռուս կյանքի, մայրենի գրականության բոլոր ուղիները:

Նա ժողովրդի արվեստից սովորեց ռեալիզմը, որովհետև ժողովրդի արվեստը ռեալիզմն է ինքնին, բայց այդ նախակերտ ռեալիզմը գեղարվեստական բարձունքի հասցրեց, և այնուհետև ռեալիզմը դարձավ տիրական դպրոց ռուս գրականության մեջ և ծնունդ տվեց ապագա նշանավոր ռեալիստ հեղինակներին:

Պուշկինը ռուս ժողովրդի հանճարն է. նրա մեջ արտացոլվում են ժողովրդի աշխարհայացքը, երջանիկ ապագայի բաղձանքները: Նրա մեջ ամփոփված է ռուս ժողովուրդը:

Պուշկինը ռուս ժողովրդի փառքն ու հպարտությունն է: Նրան սիրում էր անմահ Լենինը: Նրան սիրել են և փառաբանել Բելինսկին, Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը, Գերցենը, Գոգոլը, Լեռմոնտովը, Տոլստոյը, Դոստոևսկին, Գորկին:

Նրա երկերով ներշնչվել են ռուս մեծ երաժշտագետները՝ Գլինկան, Մուսորգսկին, Չայկովսկին, որ գրել է աշխարհի ամենակատարյալ օպերան՝ «Եվգենի Օնեգինը»:

Իր հարազատ ժողովրդի ցավագին վիճակը նորաստի-րական կարգերում խորասպես խոցել էր նրա հոգին և բուռն ատելությանը ու թշնամանքով լցրել Նիկոլայ Պավկինի և նրա չարագործ ազնվականների դեմ:

Պուշկինի զենքն իր հանճարեղ գրիչն էր, իր ձաղկող սատիրաները, իր հեղափոխական օղաները, իր թունուտ

Էպիգրամները, ուղղված ժողովրդի թշնամիներին՝ կալվածա-
տերերին, չինովնիկներին:

Եվ այս պատճառով ցարի, նրա ստոր կամարիլայի ին-
տորինգներին և դաժան վրեժխնդրությանը զոհ գնաց՝ ծանր
սուգի մեջ թողնելով բոլոր ազատասեր, հայրենասեր ոռունե-
րին:

Բայց, իհարկե, Պուշկինը կա, նա անմահ է, նրա աշ-
խարհահռչակ անունը ոռու փառապանծ ժողովրդի հետ պի-
տի ապրի դարեդար:

Հայ ժողովուրդը հարյուր տարի է, ինչ ճաշակում է Պուշ-
կինի պոեզիայի քաղցրությունն ու վեհությունը, հայերեն
թարգմանությամբ 1843 թվից սկսած: Նա գիտե Պուշկինի
մարդասիրությունը, գիտե, որ Պուշկինը ոգևորվել է ճնշված
ժողովուրդների՝ իր բախտակից հույների և սերբերի ազա-
տագրման պայքարով՝ թրքական դաժան բռնակալության
դեմ:

Հայ գրողները սիրել են նրա բարձր արվեստը, խանդա-
վառվել են նրանով և ներշնչվել, ինչպես Սմբատ Ծափագի-
զը, Հովհաննես Հովհաննիսյանը, մանավանդ Հովհաննես
Քումանյանը:

Պուշկինն իր հումանիզմով, բռնության դեմ տածած իր
ատելությամբ և մարդկության ապագայի նկատմամբ իր լա-
փատեսությամբ սիրելի է շատ ամբողջ հայությանը: Պուշ-
կինի ստեղծագործությունների գրեթե մեծ մասը թարգման-
ված են հայերեն, որոշ գործեր մի քանի անգամ:

Նա տեսնում էր հեռավոր ապագան, զգում էր պատմու-
թյան առաջընթացը, այդ պատճառով էլ Բելինսկին ասել է,
որ նա ապագայի մեջ պիտի ապրի և գալիք սերունդների ու-
տուցիչը պիտի լինի:

Եվ այսպես, Պուշկինը իր հեղափոխական պայթույթով, իր
ազատասիրությամբ, իր հայրենասիրությամբ առնչվում է մեր
հոյակապ Էպոխային, դառնում է մեզ շատ թանկագին, այժ-
մեական, մեր ժամանակակիցը և իմաստուն խորհրդատուն:
Ռանաստեղծական հանճարը միացնող հատկություն ունի:
Նա միացնում է զգացմունքներ, կամքեր, նպատակներ:

Պուշկինի ապոլոնյան բնարը այսօր միացրել է մեծա-

Ճավալ Միության բազմաթիվ ժողովուրդներին հանուն նրա
երգած ազնիվ գգացումքների և խոհերի, հանուն ազատու-
թյան և լույսի, հանուն սիրո և գույթի դեպի տառապողները,
տանջվողները, դեպի զրկվածները:

Հավե՛րժ փառք մեծահանճար Պուշկինին:

1949

ԿԱՐԵՂՈ-ՖԻՆԱՆՍԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԷՊՈՍԸ

(«Կալկալայի» հարյուրամյակին)

Կարելո-ֆիննական ազգային Էպոսը, «Կալկալան», արդեն անվիճելիորեն դասվում է համաշխարհային Էպոսների շարքին—Հոմերոսի, «Էդդայի», «Նիբելունգների երգի»:

Կարելո-ֆիննական Էպիկական զանազան ուուների մասին, որոնք երգվում էին ժողովրդի մեջ, տակավին հայտնի էին 16—18-րդ դարերում, սակայն սրանք մի կոտ ամբողջություն չէին կազմում ու ներկայացնում էին իրարից հեռու կամ մոտիկ վարիանտներ՝ երբեմն նույնիսկ հակասական կամ անկապ: Իսկ այն ձևով, որ մենք ունենք հիմա «Կալկալա» անվան տակ, վերջնականապես կազմվել է 1849 թ. գիտնական և բանաստեղծ Էլիաս Լենրոտի (1802—1884 թ. թ.) անձնվեր ջանքերի շնորհիվ:

Տարիներով Է. Լենրոտը շրջեց կարելո-ֆիննական գավառները, անմիջապես գյուղացիների և թափառող գուսանների բերանից հավաքեց մեծ քանակով ոուներ (երգեր) և ասքեր և ձեռնարկեց նրանց բյուրեղացմանը: Բազմաթիվ վարիանտներից խորթ և անհարիր միջադեպերից ընտրեց, գտավ բուն, անաղարտ նյութը: Միացրեց ընտրածները մի կոտ ամբողջության մեջ, առանց իրենից մի տող ավելացնելու, տվեց հանգույց և լուծում, հղկեց, ներդաշնակեց և վերաստեղծեց կարելո-ֆիննական ազգային վեպը: Սակայն վեպը անուն չուներ, ուստի Լենրոտը նրան կոչեց այն գավառի անունով, ուր մի ժամանակ ապրել են վեպի հերոսները—«Կալկալա», կալկալների երկիր, որը ֆիններեն կնշանակե հերոսների երկիր:

«Կալկալա» Էպոսը՝ բաղկացած հիսուն ոուներից և մոտ քսաներեք հազար տողերից, լույս տեսավ 1849 թվին, որի հարյուրամյակը տոնվում է այժմ:

Է. Լենրոտի հայրենասիրական այս սխրագործությունը մեծ խանդավառություն պատճառեց կարելո-ֆինն ժողովուրդներին, զարթեցրեց ազգային գիտակցությունը, բոցավառեց նրանց սերը դեպի հայրենիքն ու մայրենի լեզուն:

Գրականությունը ժողովրդային ոգի ստացավ, ետ մոեց շվեդական լեզվի գործածությունը, որ իշխում էր գրականության և հասարակության վերին խավերի մեջ: Տիրական դարձավ «Կալևալայի» հարուստ, պատկերավոր, հյութեղ և կոլորիտային լեզուն: «Կալևալան» դարձավ կարելո-ֆինների ազգային փառքն ու հպարտությունը, և Է. Լենրոտի անունը՝ ամենասիրելի և պատկասելի անունը հայրենիքի մեջ:

«Կալևալային» վիճակվեց բոլոր մեծ էպոսների բախտը, այսինքն, նա հանդիսանում է կարելոֆինն ժողովուրդների հին ազգային էպիկական երգերի գեղարվեստական վերաձևակումը, խմբագրումը և ամբողջացումը. ինչպես, օրինակի համար, հոմերական ռապսոդիաները, որոնք Պիսիստրատի օրով ենթարկվեցին մշակման և ամբողջացման՝ ստանալով Իլիական և Ոդիսական անունները:

«Կալևալայի» հռչակը իր հայրենիքից անցավ դուրս՝ Ռուսիա, Գերմանիա, Ֆրանսիա, ջերմ ընդունելություն գրտավ. թարգմանվեց զանազան լեզուների: Նրա շնորհիվ կարելո-ֆինները ճանաչվեցին որպես կուլտուրական ժողովուրդ, անցյալ, լեզու, գրականություն ունեցող:

Կարելո-ֆինների էպոսը կազմվել է երկար դարերի ընթացքում, նրա սկզբնավորությունը հասնում է մինչև միջին դարերը, իններորդ դարը: Այնտեղ կան արձագանքներ վիկինգների շրջանից, նրանց հանդուգն արշավանքները ծովերի և մեծ գետերի վրա ընկած քաղաքները և նրանց կոդոպտումներն ու ավերումները, այլև պատմական, անորոշ ժամանակների աղոտ հիշատակումներ:

Էպոսի էությունը կարելո-ֆինն ժողովուրդների դարավոր անեղ պայքարն է դաժան հյուսիսի դեմ՝ առասպելական

Պոհեւա երկրի դեմ, որ Լապլանդիան է, և Սամպո կախարչ-
դական ջրադացի տիրապետման համար:

Դյուցազներգության դրական հերոսներն են Վեյնեմեյ-
նեն՝ իմաստուն, մարգարե և գուսան, որ ստեղծել է ֆինների
ազգային նվագարան գործիքը՝ «կանթելե». երկրորդը Էլմա-
րինեն՝ ուժեղ, հսկա դարբին և երրորդը Լեմեյկենին՝ կա-
նանց սիրելին, անհոգ երիտասարդ և քաջ ձկնորս:

Ավագ դյուցազնի՝ իմաստուն Վեյնեմեյնեի խորհրդով
ժողովրդին երջանկացնելու համար, հնարագետ դարբին Էլ-
մարինեն երկարատև, ծանր ու դժվարին աշխատանքով շի-
նում է «Սամպո» ջրադացը, որ օր ու գիշեր անընդհատ գոր-
ծում է մի բոտ հացահատիկից նա ահագին քանակությամբ
ալյուր է աղում և տալիս ժողովրդի կարիքի-պետքի համար,
երկրորդ բոտից նույնչափ ալյուր է տալիս վանատելու հա-
մար, երրորդ բոտից՝ պաշարի, պահեստի համար: Այս կա-
խարդական ջրադացը, կամ ավելի որոշ ասած՝ ջրադացքը
ինքնադաց հեքիաթական մեքենա է, որ առատ հաց և բա-
րեկեցություն է ընծայում ժողովրդին: Սամպոն նախնական
ժողովրդի երազն է և հավատքը ապագայի նկատմամբ, որ
Վարդկությունը պիտի ապրի երջանիկ և հոգսերից ազատ՝
անընդհատ հառաջադիմության շնորհիվ:

Այս ինքնադացը մարդկային ստեղծագործ հանճարի
խորհրդանիշն է՝ գիտության, արհեստների և տեխնիկայի
փրկարար գործը մարդկության համար:

Դժբախտաբար, հյուսիսի մոսյւ երկրի չար և կախարդ
տիրուհին՝ Լոհուին, նախանձից և միայն իրեն սեփականաց-
նելու շահամոլությունից, հափշտակում է Սամպոն և գրանի-
տե ժայռերի մեջ թաքցնում:

Նորից շինել ինքնադացը՝ անհնարին գործ է, ուստի երեք
հերոսները արշավում են Պոհեւայի երկիրը և նրա վհուկ տի-
րուհուց պահանջում են հրաշագործ Սամպոն:

Տեղի են ունենում կատաղի, երկարատև կռիվներ, որոնց
մեջ Լոհուինն օգնության են հասնում բնության ուժերը՝ կայ-
ծակ, փոթորիկ, ձյուն, սառնամանիք, երկիր ու երկինք: Բայց
վերջը պարտվում է Լոհուին, ամուսինը սպանվում է, գորքն
ու ժողովուրդը մեծ կորուստներ են կրում:

«Կալևալայի» դյուցազները ձեռք են բերում Սամպոն, սակայն, այս երկարատև կռվի մեջ, ուր մասնակցում են բընուրյան տարերային ուժերը, փշրվում է Սամպոն և նրա կրտորները սուզվում են ծովի մեջ: Կարելո-ֆինն ժողովուրդները դարեր երազել են և հավատում են, որ նոր Սամպո կունենան, որով կհաղթեն խիստ և ժլատ բնությանը և բախտավոր կապրեն:

Այս էպոսի մեջ մարմնացած, սիմվոլացած է կարելո-ֆինների և նրանց շրջապատող բնության միջև մղվող մշտական կռիվը: Խիստ, ցուրտ, աղքատ հյուսիսը թշնամի է, պիտի կռվել նրա դեմ՝ հաց և բարեկեցություն կորզելու նրանից՝ այդ թշնամուց, դաժան բնությունից:

Առհասարակ «Կալևալան» իր իմաստի էությանը մարդու հերոսական, հավերժական պայքարի վեպն է բնության դեմ՝ նրան ընկնելու և օգտագործելու մարդկային բարօրության համար:

«Կալևալայի» մեջ դրսևորված է նաև կարելոֆինն ժողովուրդների պայքարը լույսի և բարիի համար, ընդդեմ խավարի և չարի: Մի հավերժական նյութ, որ գրեթե բոլոր էպոսների մեջ անժխտելի տարր է:

«Կալևալան» ազգագրական գիտության և ֆոլկլորի ուսումնասիրության տեսակետից անբավ նյութ է ամփոփում: Նախնական կենցաղի, նախապատմական կուլտուրայի, մայրապետական շրջանի առկայության բազմաթիվ փաստեր և տեսարաններ կան: Աշխարհաստեղծման առասպելներ, աստվածների մասին դիցաբանական հետաքրքրական տեղեկություններ և համաշխարհային վեպերի թափառաշրջիկ նյութեր շատ և շատ կան այնտեղ: Իսկ կարելո-ֆիննական կյանքը իրական գույներով լիովի պատկերված է այնտեղ: Նրանց ընտանեկան կենցաղը, կնոջ դրությունը, մարդկանց փոխհարաբերությունները, զգեստները, տան կահ-կարասին, սշխատանքի տեսակները և առօրյա զբաղմունքը: Եվ այդ սովոր, աշխատավոր ժողովրդի աշխարհայացքը: Վեպի լեզուն, ոճը իրահատուկ է, ունի միևնույն տողի տարբեր կրկը-

նություններ, հարուստ է պիտեքացիաներով և հիպերբոլաներով, որ շատ լավ է հնչում ընդհանուրի հետ: Էպոսի այս նոր ու թարմ գեղեցկությունը ներշնչման աղբյուր է հանդիսացել Լոնգֆելդի հոշակավոր պոեմի՝ «Հայավարի երգի»:

Հայ հասարակայնությունը «Կալևալայի» մի քանի ոտների հայերեն թարգմանությամբ հայտնում է իր անկեղծ հիացմունքը չքնաղ «Կալևալային» և նրան ստեղծող եղբայրական կարելո-ֆիննական ժողովրդին, բոլոր սրտով ցանկանալով նրան է՛լ ավելի երջանկություն, առաջադիմություն և հաջողություններ իր գրական-գիտական-տնտեսական վերելքի մեջ՝ ի փառս մեր ընդհանուր մեծ հայրենիքի՝ Սովետական Միության, որը տվեց ազատություն և անկախություն կարելո-ֆինն ժողովրդին, ստեղծեց պայմաններ նրա կուլտուրայի և գրականության զարգացման համար: Հանձին Սովետական Միության, այսօր կարելո-ֆինները Սովետական Միության ողջ ժողովուրդների հետ միասին հանդիսավոր կերպով նշում են իրենց հոշակավոր Էպոսի հարյուրամյակը:

ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻ ՀԻՇՍՏԱԿԻՆ

Վ. Բրյուսովը, որի ծննդյան 75-ամյակը հարգանքով տոնում է հայ հասարակությունը, իր կենդանության ժամանակ արդեն մեծ հռչակ էր վայելում որպես ռուս առաջնակարգ բանաստեղծներից մեկը և որպես տեսաբան-բանասեր:

Ռուս կուլտուրային և գրականությանը մատուցած նրա վաստակները եզակի են և անգնահատելի: Որպես պուշկինագետ, Պուշկինի պոեզիան հետազոտող՝ նա անփոխարինելի տեղ է գրավում:

Նրա հետաքրքրության և հարցասիրության օբյեկտները սահման չունեին՝ ողջ տիեզերքն էր ուզում ընդգրկել նա: Տարված էր իմացության անհագ ծարավով: Նրա էրուդիցիան առասպելական էր: Գիտության, արվեստի, փիլիսոփայության ոչ մի բնագավառ անծանոթ չէր նրան: Նա կարող էր սպասիչ կերպով խոսել և՛ ջրասույզ եղած լեգենդական Ատլանտիդի մասին, և՛ մաթեմատիկայի մասին, և՛ էլեկտրոնների մասին:

Մաքսիմ Գորկին հիացած ասում է, որ Բրյուսովն ամենակուլտուրական գրողն է Ռուսաստանում:

Բրյուսովը գիտեր բազմաթիվ հին ու նոր լեզուներ՝ սանքսկրիտ, լատիներեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն և այլն, գիտեր գրեթե բոլոր փոքր և մեծ ժողովուրդների գրականությունը, և պատրաստվում էր տալ, եթե մահը վաղահաս չլիներ, «Համաշխարհային պոեզիայի սինթետիկան» վիթխարի անթոլոգիան:

Բրյուսովն, իր համեմատաբար կարճատև կյանքի ընթացքում (50 տարի ապրեց նա), գրել է բանաստեղծություններ, պատմվածքներ, վեպեր, դրամաներ, որ տասնյակ հատոր են կազմում, իսկ բազմաթիվ ակնարկները, քննադատա-

կան հողվածները, ուսումնասիրությունները և թարգմանությունները՝ մի քանի տասնյակ հատորներ:

Նա թարգմանել է Էդգար Պոլից, Շ. Բոդլերից, Վեդլենից, Վերհարնից, Գյոթեի «Ֆաուստը», Վիրգիլիոսի «Էնեականը» և շատ ու շատ բանաստեղծություններ զանազան ժողովուրդներից:

Բրյուսովը թերևս առաջին ուրբանիստ գրողն էր Ռուսաստանում, որ սկսեց երգել քաղաքը, մեծ ինդուստրիալ քաղաքը, նրա մեծ շունչն ու շտաշը, նրա լուսավոր և մութ կողմերը:

Նա երգում էր աշխատավոր, կազմակերպված բանվոր դասակարգին, նրա իդեալները, նրա ցավերն ու պայքարը կապիտալիզմի դեմ՝ հանուն նոր, լավագույն ապագայի, հանուն ընդհանուրի երջանկության:

Նա, թեև սիմվոլիստ, սակայն ուրիշների պես չէր կտրվել կյանքից, չէր ամփոփվել մարմարյա աշտարակի մեջ, որի գունագեղ լուսամուտից նրանք դիտում են աշխարհը՝ հեքիաթների պես գեղեցիկ և չեն տեսնում դասակարգերի դաժան պայքարը, մասսաների թշվառությունը: Իսկ նա, որպես ներքին կոշտմով պոետ-քաղաքացի, ապրում էր շահագործվող դասի տառապանքները բոլոր սրությամբ: Նա ուներ պատմության մեծ զգացողություն և հումանիստ մեծ սիրտ, որով կարողացավ իր կապերը կտրել սիմվոլիզմից և կապիտալիստական աշխարհից և ոգևորված ողջունեց Հոկտեմբերյան հեղափոխությունը ու կանգնեց բոլշևիկների շարքերում:

Ոտանավորի առաջնակարգ վարպետը իր գիտությունը և հմուտ գեղարվեստագետի փորձը սովեց սովետական երիտասարդ գրողներին:

Վ. Բրյուսովը առանձնապես թանկագին է մեզ, հաշերիս համար այն շատ նշանակալից գործի պատճառով, որ նա կատարեց հայ կուլտուրայի և գրականության արժեքավորման և գնահատման վերաբերմամբ:

Այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը ապրում էր մի սուկալի ողբերգություն՝ իր դժբախտ պատմության մեջ նույնիսկ աննախընթաց, երբ թուրք գազանացած պետությունը կոսու՝

րում էր հայ ժողովրդի արևմտյան հատվածին՝ ծերերին, երիտասարդներին, կանանց և երեխաներին, ջնջելով մի ամբողջ ժողովուրդ, նրա կուլտուրան, անցյալը և նրա ապագան միաժամանակ, որպեսզի դրանով ընդմիշտ վերացներ հայկական հարցը, կոտորում էր Գերմանիայի խրախուսանքով, նաև Անգլիայի ու Ֆրանսիայի լուռ համաձայնությամբ, այդ ժամանակ հայ ժողովրդի մեծ բարեկամ Մ. Գորկու հետ հանդես եկավ Վ. Բրյուսովը՝ պաշտպանելու հայ ժողովրդի կուլտուրան, նրա արդար դատը:

Նա եկավ ցույց տալու Ռուսաստանին և «քաղաքակիրթ» կոչված Եվրոպային, թե բարբարոս թուրքերը ինչ անողղելի, ինչ սարսափելի ոճիր են գործում կոտորելով մի հին, դասական ժողովուրդ, որ կուլտուրական դեր է կատարել աշխարհում և ընդունակ է կատարելու:

Վ. Բրյուսովը սիրով, եռանդով, իրեն հատուկ համատ աշխատանքով սկսեց ծանոթանալ հայ լեզվին, հին, միջին և նոր գրականությանը, հայ պատմությանը և ստանձնեց «Հայաստանի պոեզիան» անթոլոգիայի խմբագրությունը, ռուս անվանի տաղանդավոր բանաստեղծների գործակցությամբ: Մի շատ ծանր, դժվարին գործ, որ պսակվեց փայլուն հաջողությամբ:

Անթոլոգիան կազմվեց հայ գեղարվեստական խոսքի ընտիր անուշներից՝ վերցված հնագույն ֆոլկլորից և էպոսից, միջին և նոր դարերի բանաստեղծություններից:

Այդ ստվար հատորի բանաստեղծությունների մեծագույն մասը թարգմանել է ինքը՝ Բրյուսովը իր անթերի տեխնիկայով և կոլորիտի զգացողությամբ:

Բրյուսովը բարեխիղճ և մանրամասն ուսումնասիրությունից հանգեց այն եզրակացության, թե հայերի դարավոր հարուստ պոեզիան այն թանկագին ներդրումն է, որ Հայաստանը մուծում է ընդհանուր մարդկության գանձարանը:

Մեծատաղանդ, ժողովուրդների գրականությանը խորապես իրազեկ Բրյուսովի սերն ու գնահատանքը հայ պոեզիայի հանդեպ փայլուն գրավականն է նրա իսկական արժեքի՝ բոլոր ժամանակների մեջ:

Բրյուսովից բավական բանաստեղծություններ կան հու-

յերեն թարգմանված. Վահան Տերչանի կատարած թարգմանություններն սքանչելի են. թարգմանված է «Հայաստանի պոեզիայի» առաջաբանը և «Հայոց պատմությունը» մոնոգրաֆիան:

Բրյուսովի անունը հայ ժողովրդի սրտի մեջ է: Խորին երախտագիտությամբ հիշում է նա միշտ իր մեծ և արդարամիտ բարեկամին:

1949

ՏԱՐԱՍ ԵՆՎՉԵՆԿՈՒ

Մեծահոշակ բանաստեղծ, հեղափոխական-դեմոկրատ Տարաս Շևչենկոն ծնվել է 1814 թվին, Կիևի նահանգի Մորիցի գյուղում ուկրաինացու ընտանիքում: Տարասի հայրը հարուստ կալվածատեր Էնգելգարտի ճորտն էր, մի դաժան ու շահամոլ բարին: Տարասի հայրն ու մայրը չարքաշ աշխատում էին կալվածատիրոջ տնտեսության մեջ և հազիվ կարողանում էին պահպանել իրենց բազմաճյուղի ընտանիքը՝ Մշտական կարիքի ու հոգսերի մեջ էին նրանք: Շևչենկոն ասել է, որ մայրը վշտով պարուրել է, վշտով օրորել և այսպիսով վշտով թաթախվել է դժբախտ երեխան:

Տարասը ինը տարեկան էր, երբ մայրը մեռավ: Ընտանիքը կառավարելու համար հայրը երկրորդ անգամ ամուսնացավ, սակայն խորթ մայրը չսիրեց Տարասին, նրա ուժեղ, ըմբոստ բնավորության համար: Հայրը ուզում էր, որ Տարասը ուսում ստանա, բայց սուղ տնտեսական միջոցները այդ չէին թույլ տալիս, բայց և այնպես կարողացավ գյուղական դպրոց ուղարկել որդուն, որը շատ լավ և հեշտ սովորեց կարդալ-գրել և քերականությունը:

Այդ ժամանակները նրա մեջ զարթոնեց նկարելու փափագ. նկարում էր ձեռն ընկած ամեն մի կտոր թղթի վրա, տախտակների, պատերի վրա: Առհասարակ նա շատ ընդունակ և ուսումնասիրավ տղա էր:

Մանուկ Տարասին ճակատագիրը շատ ծանր հարված հասցրեց. մեռավ նրա հայրը: Տարասը տասնմեկ տարեկան հասակում մնաց որբ, գրեթե փողոցի պատերի տակ: Այդ օրվանից սկսվեց նրա համար իրական կյանքը լի զրկանքներով, տանջանքներով, գոյության պայքարով: Վերջացավ մանկությունը:

Նա ծնվեց ճորտ, աղքատության և խավարի մեջ, տգետ

միջավայրում, ենթարկված կալվածատիրոջ կեղեքումներին, ազգային ճնշման պայմաններում, ուր արգելված էր ցարի կողմից ուկրաիններեն լեզուն և ազգային կուլտուրան հալածված: Սակայն պատանի Տարասը չընկճվեց. ամենաձանր վայրկյաններում իսկ գլուխը չէր խոնարհում, երազում էր իր ապագայի մասին, հավատում էր իր աստղին և իր հաղթանակին:

Մանուկ Տարասը հարուստ երևակայությամբ և բանաստեղծի զգայնությամբ օժտված էր. նա հաիշտակված լսում էր և յուրացնում ուկրաինական ֆոլկլորը՝ ժողովրդի երգն ու զրույցը, ավանդությունները: Նրա հարյուրամյա պապը և ուրիշ ծերունիներ պատմում էին ճորտ գյուղացիների ապրտամբությունները և արյունոտ կոիվները կալվածատերերի և լեհական շլյախաի դեմ:

Ծերերի հուշերը, կորգար- գուսանների պատմությունները և ըմբոստ երգերը— այս բոլորը հետագայում իրենց արձագանքը գտան Ծնչեհկոյի քնարի մեջ, ինչպես օրինակ՝ «Գայդամակի» պոեմը:

Թափառաշրջիկ կորգարները և կույր բանդուրիստները ոգևորված երգում էին ու պատմում ուկրաին ժողովրդի հերոսական պայքարը հայրենիքի ազատության համար, նրա անձնագոհ կոիվները թուրք-թաթար արյունարբու, ավազակ հորդանների դեմ, սուլթանների և խանների բռնությունների դեմ: Ուկրաին ժողովրդի սխրագործությունները, ուկրաինական երգերը լցնում էին Տարասի հոգին բուռն հայրենասիրությամբ, արիությամբ, ասեղությամբ ժողովրդի թշնամիների դեմ, թե էին տալիս նրան և ոգի էին ներշնչում: Ուկրաին ժողովրդի մելոսը, ֆոլկլորը— նրա երգերը, նրա խորագաց դումաները շատ գեղեցիկ են և սրտազին: Այդ բոլորը ամեն ինչ է ուկրաինացու համար— և՛ պատմություն է, և՛ հերոսական անցյալ, և՛ ժողովրդի վշտերը, ազատության տենչերը, և՛ հայրենի հող, և՛ հայրենական տուն, և՛ ծնողների գերեզմաններ...

Խորթ մայրը Տարասին գյուղի խոզերի և հորթերի հովիվ դարձրեց. մաղախն ուսին տանում էր նա հուտը ընդարձակ

ամայի դաշտերը, ցանուցիր կուրգաններով, այդ խորհրդավոր գերեզմանները, որոնց տակ, ժողովրդի պատումներով, քաջեր, մարտիկներ են թաղված, այդ ստեպների լուռության մեջ Տարասը երգում էր կոբզարների հայրենաշունչ երգերը և երագում:

Պատանի Տարասը ապրում էր ժողովրդի հետ. մի հասարակ նկարիչ-նեղկարարից մյուսի մոտ գնալով, նկարչություն սովորելու հույսով, թափառում էր զանազան գյուղեր, տեսնում էր հարազատ ժողովրդի թշվառ կյանքը, ցարական զարշելի չինովանիկների մտրակի տակ, ճորտ, ստրկացած, կեղեքված. բաժանում էր նրանց հետ ցուրտն ու քաղցը և լցվում էր վրեժով բոլոր կեղեքիչների, տերերի դեմ:

Տարասը տասնևհինգ տարեկան էր, ճորտատեր էնգելզարդի մոտ իբրև խոհանոցի ծառա մտալ: Երկու տարի հետո ճորտատերը տեղափոխվեց Պետերբուրգ և Տարասին հետը տարավ սենյակի սպասավորի պաշտոնով, մինևույն ժամանակ ցանկանալով նրան նկարիչ դարձնել կալվածքի պետքերի համար— պատերը ներկել, զարդարել, իր սիրելիների պատկերները գծել:

Պետերբուրգում բարի պատահականությամբ ծանոթացավ հայրենակիցների հետ— նկարիչ, գրող, մտավորական ուկրաինացիներ, որոնք ջերմ ընդունեցին Տարասին, ներկայացրին նշանավոր նկարիչ Բյուլովին: Տարասը սիրով ու հիացմունքով աշակերտեց մեծանուն նկարչին, որը սիրեց և գնահատեց նրան: Մաշրաքաղաքի առաջավոր, նշանավոր մարդիկ Բյուլովի մոտիկ բարեկամներն ու ծանոթներն էին: Տարասը շատ օգտվեց նրանց խոսակցությունից, հայտնած գաղափարներից. նրանք խիստ քննադատում էին ցար Նիկոլայի բռնակալ ուժիմը և թշնամաբար էին տրամադրված դեպի նա: Լցվեց պաշտամունքով դեկաբրիստների հանդեպ, ծանոթացավ նրանց գաղափարների և գործերի հետ, ծանոթացավ նաև Գերցենի գրքերի հետ: Նկարչի ճոխ գրադարանը նրա ձեռքի տակ էր, անվերջ ընթերցում էր և հարըստացնում էր իր գիտելիքների քանակը և լրացնում իր զարգացման բացերը:

Տարասը շատ էր փափագում իր նկարչական կրթությունը

շարունակել Պետական գեղարվեստական ակադեմիայում, սակայն ճորտերին արգելված էր բարձրագույն դպրոցի մուտքը. ազատ մարդկանց համար էր նա: Պետք էր ազատագրել Տարասին. նրա տերը՝ Էնգելգարդը փրկագին էր ուզում, չմարգելով ո՛չ մի միջամտություն:

Բրյուլովը նկարեց Ժուկովսկու պատկերը, որը վաճառեցին և ստացած գումարով, 2500 ռուբլի, կալվածատերից գնեցին Տարասին: 1838 թվից նա դարձավ ազատ քաղաքացի և մտավ ակադեմիա, իբրև ուսանող: Սակայն ինչքան էլ որ նա սիրեր նկարչությունը, նրա խորագին սերը, պաֆոսը, բանաստեղծությունն էր, ոտանավորներ գրելը: Ակադեմիայի շքեղ դահլիճներում կամ Բրյուլովի մոտ նկարելիս, նա մտքով փայփայում էր կույր բանդուրիստներին, որոնց հետ երազով թափառում էր Ուկրաինայի լայնք ու երկայնքով: Նրանք խանդով ու կրակով ներթողում էին խիզախներին, ժողովրդի վրիժառու հերոսներին: Նրա մտքի առջև փոփում էր խորհրդավոր կուրգաններով ծածկված ստեպը, տեսնում էր իր սիրելի Մայր Ուկրաինային, խեղճ, ճորտ ու ստրուկ, սակայն իր անարատ, մելամաղձիկ գեղեցկությամբ: Նա իր հայացքը չէր կարող հեռացնել նրա հարազատ, դյուրթիչ հրապույրներից և գրում էր սրտի ավյունով ոտանավորներ, ուր արտահայտում էր իր սերն ու նվիրվածությունը հայրենիքի հանդեպ, գրում էր մայրենի լեզվով: Թախծալի էին, վշտալից էին այդ երգերը, որովհետև ժողովրդի անհուն վիշտն ու տառապանքն էին դրսևորում նրանք:

1840 թվին լույս տեսավ բանաստեղծությունների մի փոքրիկ ժողովածու, ուկրաիներեն, «Կոբզար» անունով: Բովանդակ Ուկրաինան հափշտակվեց այդ հարազատ, մտերիմ, արտառուչ բանաստեղծություններով, մայրենի լեզվով երգած: Հիացան, հուզվեցին, լացեցին. սիրով ու պաշտամունքով շրջապատեցին Ծնչենկոյին և հռչակեցին որպես Ուկրաինայի առաջին կոբզարը:

Ցարական ժանդարմերիան հետապնդում էր նրան. խուզարկություն կատարվեց նրա մոտ և գրավեցին անտիպ բա-

նաստեղծությունների մի շարք. նրանց մեջ կային «Կովկաս»
և «Երազ» գրվածքները:

«Կովկաս» ոտանավորի մեջ մերկացված էր ցարական
գաղութային քաղաքականությունը, կովկասյան ժողովուրդ-
ների ստրկացումը և շահագործումը, իսկ «Երազը» մի սատի-
րական գրվածք էր, ուր ծաղրված էր ցարը և թագուհին:
Ժանդարմական դատարանը ծանր պատիժ նշանակեց. ցարը,
որ սաստիկ բարկացած էր մանավանդ թագուհուն վիրավո-
րելու համար, հաստատեց վճիռը և իր ձեռքով գրեց,—
«Խստիվ արգելել նրան գրել և նկարել»:

Նրան արքային 1847 թվից, իբրև շարքային զինվոր,
բանտային ռեժիմի և հսկողության տակ, սկզբում արքայա-
վայր Օրենբուրգ, հետո Անդրկասպյան չոր ամալի վայրերը,
ծովից ո՛չ հեռու:

Ամբողջ տառը տարի մնաց նա արքայում, բանտերի մեջ,
դառնազին պայմաններում, տանջանքի և զրկանքների մեջ:
Նա ազատության հույսը չէր կտրում, հավատում էր ցարիզ-
մի տապալմանը, որովհետև այսքան աղետներով, չարու-
թյամբ և ժողովուրդների վրեժով և ցասումով լցված բռնա-
պետությունը ինչպե՞ս կարող է դիմանալ, հարատևել:

Շնչենկոյի միևնույնությունը այն գաղտնի պահերն էին,
որ նա կարողանում էր ծածկաբար նկարել և գրել: Նա արքա-
րում ամենուրեք իր հոգում կրում էր կարոտած հայրենիքի
անհունորեն գեղեցիկ պատկերը, լսում էր կապույտ Դնեպրի
առիճքնող ձայնը, տեսնում էր նրա ափերի ճերմակ խառտա-
ները— և ստեղծում էր բանաստեղծություններ, արյունով
գրած, այրող զգացմունքներով:

Երբ Նիկոլայ ցարը մեռավ, Շնչենկոյի բարեկամների
միջնորդությամբ Ալեքսանդր Երկրորդն ազատեց նրան ար-
տրից և թույլ տվեց Պետերբուրգ վերադառնալ: Տասը տար-
վա արքայի դժվարին պայմանները հյուծել էին նրան ֆիզի-
կապես, սակայն բարոյապես ավելի հատունացած էր և ամրա-
ցած: Նա վերադառնում էր բռնկված ավելի մեծ ատելությամբ
ցարիզմի և կալվածատերերի դեմ, քան արքայ գնալիս:

Պետերբուրգում մի պահ մնալուց հետո, մեկնեց Ուկրաին-
ա իր հարազատներին և ժողովրդին տեսնելու, որոնց նա

շատ կարոտել էր: Վաղէմի նույն ստրուկ, խեղճ, անմխիթար վիճակի մէջ տեսաւ ողջ Ուկրաինան: Եվ Պետերբուրգ վերադարձաւ խորունկ վշտով և գայրույթով, որոնք մարմնացան նոր ոտանավորների մէջ: Պետերբուրգում ծանոթացաւ մեծ հեղափոխական-դեմոկրատ Չերնիշևսկու և նրա գլխավորած հեղափոխական խմբակի հետ, նաև մեծատաղանդ Դորբոլյուբովի հետ: Նրանք շատ բարձր էին գնահատում Ընչեկնոյի բանաստեղծությունների հեղափոխիչ ուժը, նրա խոշոր դերը ուկրաինական ժողովրդի գրականության և հասարակական զարգացման մէջ: Ընչեկնոն մտերմացաւ նրանց, ուսումնասիրեց նրանց գրությունները, գրքերն ու գործերը և տեսաւ նրանց մէջ իրեն գաղափարակիցներին: Նրանց պէս նա ընդունում էր հեղափոխության անհրաժեշտությունը տապալելու ցարիզմի և կալվածատիրական հասարակարգը, նվաճելու բոլոր ժողովուրդների ազատությունը ազգային և սոցիալական կաշկանդումներից, ժողովուրդների իրավահավասարությունը և եղբայրակցությունը:

Աքսորից և ծանր տառապանքներից ազատված, ոգևորված նոր ընկերների սիրով և գաղափարների եղբայրությամբ՝ Ընչեկնոն պատրաստվում էր հասարակական նոր գործունեության, ծրագրեր էր կազմում և ձգտում էր կենսագործել, ինչպէս ձեռնարկում էր Չերնիշևսկու հետ թերթ հրատարակելու... սակայն մահը շուտ վրա հասաւ, նա վախճանվեց 1861 թ. փետրվարի տասին:

Բովանդակ Ուկրաինան ողբաց իր մեծ և բազմաչարչար որդու մահը, որի բոլոր օրերը ամբողջապէս նվիրված էին հայրենիքի ազատությանը և բարօրությանը: Նրան հանձնեցին հայրենի հողին Կանևի մոտ, լայնաշառուչ Դնեպրի բարձրադիր ասիին, իր սիրած վայրում, կուրգանի վրա, որի շուրջը փոխում է անծայրածիր գեղեցիկ Ուկրաինան:

Ժողովրդի համար ամենից նվիրական վայրը Ուկրաինայում այդ շիրիմն է. այնտեղ այրվում է Ուկրաինայի սիրտը:

Ժողովուրդը ուխտի էր գնում նրա շիրմին, նրան համարում էր մարգարէ, նրա ամեն մի խոսքը՝ պատգամ. հավատում էր, թէ գերեզմանում պահվում են սրբազան դաշույնները... շուտով կփշրվեն ստրկության շղթաները, կխորտակվի

կալվածատերերի լուծը, աշխատավոր գյուղացին կտիրանա իր հողին և ազատությամբ:

Արդարև, Շևչենկոն Ուկրաինայի զինված մարգարեն է, նա պայքարեց ժողովրդի երջանկության համար, նա լուսավորեց ժողովրդի ճանապարհը և առաջնորդեց: Նրա հրեղեն բանաստեղծությունները զինավառեցին դեպի կոիվ, դեպի ազատություն: Ամբողջ մի դար իշխում է նա ուկրաինացու զգացմունքների և մտքերի վրա: Շևչենկոն ամեն ինչ է Ուկրաինայի համար. նա հիմք դրեց նոր գրականության և նոր կենդանի լեզվի: Առանց Ուկրաինայի չի կարելի պատկերացնել Շևչենկոյին և առանց Շևչենկոյի չի կարելի զգալ, հասկանալ Ուկրաինան:

Շևչենկոն ժողովրդին տվեց ազգային և համամարդկային իդեալներ. հայրենասիրություն և հումանիզմ:

Մահից տարիներ առաջ գրած իր կտակը անմահ խոսք է.

«Երբ մեռնեմ ես, թաղեցեք ինձ

Մեր Ուկրաինայում.

Մի բարձրաբերձ բլրի վրա

Արձակ տափաստանում.

Որ արտերը, Դենպրը լուրթ

Եվ ափերը ժայռոտ

Երևան ինձ, լսեմ գետի

Շառաչուն ու որոտ:

Թաղեցեք ու ելեք ոտքի,

Շղթաները կտրեք.

Եվ թշնամու չար արյունով

Ազատություն ցողեք:

Եվ ինձ այդ մեծ ընտանիքում

Ե՛վ ազատված, և՛ նոր

Մի՛ մոռանաք, հիշեցե՛ք ինձ

Խոսքով անչար, անդորր...»¹

Շևչենկոյի հույակապ երազը իրականացավ. ժողովուրդների բանտ ցարական պետությունը խորտակվեց: Ժողովուրդները ազատվեցին, և համաշխարհային պատմության մեջ առաջին անգամ իրականացավ ժողովուրդների եղբայրությունը և համագործակցությունը՝ մարդկության երջանկության, բարօրության նպատակաուլացումով:

ՀԱՎԵՐԺ ՍԻՐԵԼԻ ՏԵՐՅԱՆԸ

Վահան Տերչանի ողբալից մահից անցել է 35 տարի, բայց նրա պոեզիայի հմայքից մի նշանախեց չի պակասել: Նա մընում է իր առաջին օրվա գեղեցկության մեջ, միշտ անփոխարինելի, միշտ անմրցելի:

Եվ արդեն «Մթնշաղի անուրջներ» գրքուկի լույս տեսած օրվանից նրա հեղինակը գրավեց իր հաստատուն տեղը հայկական լիրիկայի առաջնակարգ վարպետների կողքին:

Վ. Տերչանը պատանեկության և վաղ երիտասարդության ամենասիրելի բանաստեղծն էր, նրանց քնարական զգացմունքների արտահայտիչը, նրանց երազական սիրո և թախիծի նուրբ երգիչը:

Վ. Տերչանի կորուստը հայ գրականության համար չգոցված վերք է: Այնքա՛ն թարմ ու այնքա՛ն կակծալի է նրա թանկագին կյանքի վաղահաս բեկումը: Նրա քնարը փշրվեց երգչի ամենասիրթուն հասակում, բայց, չնայելով դրան, նա մեծ և մնայուն գործ կատարեց հայ պոեզիայի զարգացման նկատմամբ: Նա մի նոր գույնով, մի նոր ձայնով երգեց և՛ սերը, և՛ հայրենիքը, և՛ բնությունը: Նա թարմացրեց հայ պոեզիայի և՛ նյութը, և՛ լեզուն: Հայ բառերին կարծես երաժշտականություն ներշնչեց, հին, արիսայիկ, գրքային բառերն ու ձևերը կենդանացրեց, արդիացրեց:

Նվազայնություն, բանաստեղծականություն՝ ահա նրա պոետիկայի էությունը:

Հայ չափածոյի մեջ նա նորություններ ներմուծեց. մեր, գրեթե սիլաբիկ, տաղաչափության հանդեպ՝ նա հաջող փորձեր կատարեց տոնիկ տաղաչափության: Նա կիրառեց ոտանավորների նոր ձևեր հայ լիրիկայի մեջ՝ գազել, տրիոլետ: Սիմվոլիստական գրական հոսանքից առողջ տարրեր տեղա-

փոխեց մեր պոեզիայի մեջ: Նրա բանաստեղծություններից
անվիճելի մի քանակ կմնա որպես հավերժական արժեքներ
բոլոր ժամանակների համար, որպես մարդկային բյուրեղա-
ցած զգացմունքներ և անխառն գեղեցկություններ:

Հայ ժողովուրդն իրավունք ունի հպարտանալու իր մեծա-
տաղանդ բանաստեղծով, համարելով նրան իր գրականության
անմահ փառքերից մեկը, միշտ սիրո, միշտ գուրգուրանքի և
ափսոսանքի արժանի:

1955

ԽՈՂ ԱՔՈՎՅԱՆԻ ԱՐՁԱՆԻ ՄՈՏ

Այցի ենք գնում Խ. Աբովյանի արձանին: Հրազդան գետի ձախ ափին, բարձրում, մանկական երկաթուղու մոտ, ծաղկավառ մարգերի մեջ կանգնած է մեր մեծագույն բանաստեղծի արձանը: Գործ վաղամեռ արվեստագետ Անդրեաս Տեր-Մարությանի: Ես հին ծանոթ էի հեղինակի հետ Երևանից, Ֆրանսիայից: Աբովյանի արձանը կանգնեցնելու կոմիտեն հանձնարարել էր արձանագործ Տեր-Մարությանին իրականացնելու այդ: Առաջին իմպերիալիստական պատերազմը վրա հասավ, արձանի գործը հետաձգվեց, հետագայում էլ գրեթե մոռացվեց: Այդ միջոցին Ա. Տեր-Մարությանը վախճանվեց և գործը մնաց անտեր, իսկ արձանը՝ Փարիզի մի ձուլարանում ընկած: Ես 1920 թվի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Փարիզում էի: Լսեցինք, որ ձուլարանի տերը հայտնել է ինչ-որ հայերի, թե արձանի ձուլման ծախսերի հատուցումը լրիվ չի ստացել հանգուցյալ Տեր-Մարությանից, և եթե հայերն ուզում են ստանալ արձանը, պետք է վճարեն մնացած պարտքը, հսկառակ դեպքում, նա իրավունք ունի արձանը վերածուլելու այլ նպատակների համար:

Չեմ հիշում՝ ինչպես եղավ, Կովկասից եկած մի բժիշկ տեր կանգնեց արձանին, մի քանի մտավորականների հետ դրամ հավաքեց հայկական շրջաններից, պարտքը վճարեց ձուլարանի տիրոջը՝ ֆրանսիացուն և արձանը փրկեց կորստից:

Գնացինք ձուլարան արձանը տեսնելու, անմոռանալի պահ էր. հավետ անմոռանալի: Հայրենիքից դուրս, օտար ափերում, կարոտալից աչքերով հանդիպեցինք հայ հանճարեղ գրողին, մեծ սիրտ կրողին... Հուզված նայում ենք համեստ չափերով կերտված այս արձանին, որն առաջին անգամն է մեր պատ-

մության մեջ որևէ հայ գրողի համար իրականացած: Անդրա-
նիկ արձանը: Աբովյանի ոգին, սիրտը, վերքն ու վիշտը մեծ
տաղանդով և զգացմունքով մարմնացած: Ոգեշնչված գործ:
Ներշնչված գործ: Գլխարկներս հանեցինք և խորին սիրով ու
երախտագիտությամբ ոգեկոչեցինք տաղանդավոր քանդա-
կագործ Ա. Տեր-Մարությանին, որի անունը այլևս մնալու է
հայ ժողովրդի սրտում:

Շատ տարիներ են անցել այն անմոռանալի օրից, ես
նույն զգացմունքով կանգնել եմ այսօր նրա պատվանդանի
տակ և խորհում եմ: Աբովյանը հայ նոր գրականության հիմ-
նադիրն է, աշխարհաբարի տիրական հաղթանակողը: Նա
պայքարել է լուսավորության համար, միջնադարյան խավարի
դեմ, նա պայքարել է պարսկական և թուրքական վայրագ
քոնապետությունների դեմ: Հայ ժողովուրդն անհուն սեր ունի
նրա հանդեպ: Անմահության փառքով է պսակված նա: Մատ-
նացույց է անում նա մեր գնալիք ուղին. նա մեր պատգամա-
բերն է, մեր մարգարեն՝ հավերժ կենդանի: Կանգնել է նա
մտախոհ, հանճարեղ գլուխը մի փոքր կախած, աջ ձեռքում
գիրքը՝ «Վերք Հայաստանին», մեր զարթոնքի հույսըսպ
Էպոսը, անձնագոհ կոնիվը, մարտնչունը պարսիկ և թուրք
բարբարոսների դեմ, դաժան խաների և փաշաների
դեմ. հերոսական, դարերի պայքարը, անհաշտ կոնիվը հայ
ժողովրդի փրկության, Հայաստանի ազատության համար...
քաջերի, կորիճների անձնուրաց խիզախումները, մահն ու
դյուցազնացումը: Այս է «Վերք Հայաստանին»:

Չորս գիրք ունի հայ ժողովուրդը, որ, ինչպես չորս
բարձր սյուններ, կրել են հայ ժողովրդի ոգին, նրա պայքարի
իմաստը, նրա լավագույն ապագայի տենչանքները, նրա ի-
դեալները: Մովսես Խորենացու Հայոց պատմությունը, Եղի-
շեի Վարդանանց պատերազմը, Նարեկացու խոսքը անմա-
հության և հավերժության հետ և Աբովյանի «Վերքը»: Այս նը-
վիրական գրքի մեջ հրեղեն լեզվով արտահայտված է մեր
ժողովրդի խորագին վիշտը, նրա պայքարը և անշիջանելի
պայթուղ:

Գրքեր կան՝ ժողովուրդներ են դաստիարակում, բարձրաց-
նում, կոում նրանց կամքը, պահում-պաշտպանում:

Խորենացին, Եղիշեն մեր Աերշնչարանն են եղել դարերի մեջ, մեր հոգեկան հայրենիքը, մեր ճանապարհի լուսարձակները:

«Վերք Հայաստանին» ձեռքին կանգնել է մեծագույն հայրենասերը հայերի սրբազան հողի վրա. Աերքևը իր սիրած Հրազդանն է դողանջում, մոտիկը Հայրենական պատերազմի զոհված հերոսների հուշ-աղբյուրներն են կայլակում, մրմնջալով Նելսոն Ստեփանյանի, Սարգիս Օհանյանի, Հունան Ավետիսյանի անմահ անունները: Երգելով, խմբով անցնում են մանուկները, պատանիները, աշակերտները, պատկառանքով նայում են հայ ժողովրդի ուսուցչին, որն ավանդել է մեզ նվիրական պատգամներ: Մենք բոլորս՝ նրա աշակերտները սրբությամբ պիտի կատարենք նրա պատգամները՝ սիրել, փաշտալել մայրենի լեզուն, սիրել մեզ ծնող ժողովրդին, աշխատել նրա հզորացման համար, անձնուրաց պայքարել հայրենիքի ազատության և հավերժացման համար:

1955

ԱՆՄԱՀ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

Երեսուն տարի է անցել այն օրից, երբ մեր մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը հեռացավ մեզանից:

Երեսուն տարվա ընթացքում նրա շքեղ և հումանիստ պոեզիայի հմայքը ոչ միայն չնվազեց չնչին մի չափով, այլ ընդհակառակը՝ անեց, զարգացավ: Նրա պոեզիան դարձավ ազգային թանկագին սեփականություն, ելավ իր հայրենիքի սահմաններից դուրս, գրավեց հարևան և հեռավոր ժողովուրդների սերն ու հիացմունքը:

Մեծ մարդկանց մահով սկսվում է նրանց անմահությունը, նրանց հուլերժական կյանքը: Նրանք անմահ են սերունդների հետ, նրանք անմահ են ժողովուրդների հետ, նրանք անմահ են մարդկության հետ:

Հ. Թումանյանը անմահ է, նա ապրում է մեզ հետ: Հայ ժողովուրդը կարդում է նրա չքնաղ պոեմները, նրա երկերը, լսում է նրա խոսքն ու խոհը, համակվում է նրա ջերմ պիրով դեպի հայրենիքը և հայ լեզուն, դեպի մարդն ու աշխարհը:

Հ. Թումանյանը դարավոր հայ գրականության առաջնակարգ ստեղծագործողներից է, գերազանցապես առաջնակարգ իր ազգային ոգով ու ոճով, գույնով ու բույրով: Թումանյանը մեծ շնչով երգեց հայ ժողովրդի հերոսամարտը թշնամիների դեմ հայրենիքի ազատության ու բարօրության համար: Երգեց հայ ժողովրդի իղձերը լավագույն ապագայի համար և նրա նվիրական ավանդներն ու իդեալները:

Նա իր այս պոեմների մեջ գեղարվեստական խտացումով կերտեց դյուցազնական Հայաստանը, նահապետական և պատմական Հայաստանը:

Թումանյանի արձակը կրում է իր վրա նույն մեծ հեղինակ-

կի կախարդական ձեռքը— ճշմարտացի, գունեղ, կենդանի «Գիքորը» անմրցելի գործ է, մաքուր գոհար:

Այսօր մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում Թումանյանին, որովհետև նա շատ մեծ երախտիք ունի հայ գրականության հանդեպ: Հասկանալու համար Հ. Թումանյանի ահագին տեղը հայ գրականության մեջ՝ երևակայեցեք մի պահ, որ չի եղել նրա գրականությունը. չի եղել «Անուշը», չեն եղել «Թմկաբերդը», «Հատաչանքը», «Մարոն», «Մի կաթիլ մեղրը» և այլն, որոնք հայ ժողովրդին դաստիարակել են, բարձրացրել: Ի՞նչ դատարկություն կմնար նրանց տեղը, ի՞նչ թափուր, ի՞նչ աղքատություն...

Այո, Հովհ. Թումանյանը մեր ժողովրդի գանձն էր ու պարծանքը, մեր գրականության զարդն ու փառքը...

Հայաստանի սովետական կառավարությունը, հավերժացնելու համար Թումանյանի հիշատակը, կառուցեց նրա շքեղ տուն-թանգարանը, ուր տեղավորված են մեծ պոետի գրասենյակը, նրա ճոխ գրադարանը, նկարներ և նրա հետ կապված բազմաթիվ առարկաներ, որոնք թանկագին հիշատակներ են հայ ժողովրդի և հայ գրականության համար:

Մենք, գրողներս, հայտնում ենք մեր շնորհակալությունը մեր հոգատար կառավարությանը այս կուլտուրական գեղեցիկ ձեռնարկի համար:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Օհաննեսը մի լուսավոր աստղ էր, հայության հանճարին դարերով պատիվ բերող, և սիրելի էր շահ, և նրա թողած տեղը միշտ կմնա բաց, միշտ պետք է մորմոքեն մեր սրտերը:

Երբ երագում էի Կովկաս գնալ, առաջին կարոտս էր՝ տեսնել նրան, լսել նրան. մեծ հրապույր ունեք, մեծ մարդ էր:

1923 թ.

Նա նախանձով ասում էր ինձ. երանի քեզ, որ կարող ես գնալ ձեր ջրաղացը, քո սենյակը, ուր դրել ես գրադարանդ և կարդում ես, մենակ ես...

Երագում էր՝ Լոռում, Դսեղ թե այլուր, տուն շինել, գրադարանը տեղափոխել և պարսպել. ե՞րբ, երբ որ աշխարհը, վրդովված մեր երկիրը խաղաղվի...

Գրքեր էր գնում ապագայում կարդալու համար. միշտ ապագա էր երագածը առանձնության մեջ:



Օհաննեսին դժվար կարելի էր հասկանալ. իր՝ հայ գյուղացու կեցվածքի (խոսքի) ձևի տակ թաքնված էր մի կծիկ, հոգեբանական մի սֆինքս:



Հովհաննեսի կորուստը քանի գնում ավելի խորն է ազդում վրաս. դա վշտի ամենեն գեշ տեսակն է:

1923 թ.



Վերջ. անմոռանալի կորուստ է, վաղահաս մեռավ. մնաց կիսատ, անավարտ «Սասունցի Դավթի» շարունակությունը, «Հազարան բլրուլը», «Հառաչանքը»...

Ինձ մոտ կարդաց «Երկու սև ամպը» և մի օրինակ գրեց, տվեց ինձ, որը կորավ. սա 1895 թ. դեկտեմբերն էր:

Արտասանեց «Թմկաբերդը» և նախաբանը 1901 թ. Ղազարապատում:

Կարդաց «Դեպի անհունը», 1898 թ. մարտին: Պատմեց, որ իրողությունն է, պատահած փաստ:

«Հառաչանքը» չափազանց հավանեցի: Նա այնքան չէր գնահատում, ասում էր՝ կիսատ է:

1939 թ.

Երբ շրջում էինք Օհաննեսի հետ Անիում, թվում էր, թե չէր ընդհատված մեծ կուլտուրա ունեցող Անիի կյանքը:

Օհաննեսը Անիի քաղաքացի է, նա իր ծննդավայրը Անիում է գտնում և միայն այստեղ նա հանգիստ է, երջանիկ և հարազատ. մյուս բոլոր տեղերում՝ օտար է, պանդուխտ. այստեղ է գտնում նա իր հանգիստը՝ «Պանդուխտ եմ, քույրիկ». այստեղ նա գտել է յուրայիններին:

1943 թ.

Օհաննեսը պիտի դարեր ապրեր, որ հասներ իր բոլոր բաղձանքներին, այնքան շատ էին նրա բաղձանքները:

Օհաննեսը ուզում էր հասարակական գործիչ լինել, ամբոխները վարող հերոս, ուզում էր մեծահարուստ լինել, ունենալ պալատներ, շոպյություն, խրախմանքներ. ուզում էր աշխարհի գեղեցկությունները իր մոտ լինեին՝ հնություններ, գոհարներ, զարդեր, արվեստի կոթողներ, ձիեր, գրադարաններ, թանգարաններ:

Ուզում էր իմաստուն լինել, ամենակարդացած մարդը, բոլոր գրքերն ունենալ և կարդալ, գրել, գրել ուսումնասիրություններ, դրամաներ. մանավանդ դրամաներ, թատերգություններ:

Ուզում էր ամեն տեղ հասնել, ամեն գործի մեջ լինել, ամեն քեֆի թամադան, ամեն ժողովում, ամեն հարցերի մեջ ընտրովի նախագահ, պատգամավոր անդամ, ձևակերպող: Ահա այսպես մի բարդ, անհագուրդ ֆաուստյան ոգի:

Թիւմանները շոտայ էր ամեն բանի մէջ՝ սիրո, քեֆի, զավակների ունենալու, առհասարակ ամեն բան անելու մէջ:

Գո՞հ էր կյանքից— ո՛չ: Կյանքը ժլատ էր նրա հանդէպ. ինչ որ տվել էր կյանքը՝ կին, երեխաներ բազմաթիւ, սերեր, բանաստեղծական հանճար— այդ բոլորը քիչ էր նրա համար:

Թումանյանը, օժտված լինելով բնությունից առողջ և մեծ խելքով և ունենալով հզոր ինտուիցիա, հոտն էր առնում գալիքի և ընդառաջ գնում ծայր տվող ալիքին:

Թումանյանը, իբրև տարերային խոլական բանաստեղծ, չէր կարող սեղմվել ոչ մի դոզմայի մէջ:

Նրա էությունը հայկական էր, հայրենասիրական: Միշտ էլ նա եղավ հայ տառապանքի հետ, հայրենիքի հետ, եղավ միշտ այն հայը, որ ոգևորվում էր խնկաբույր Նարեկով և ուխտի էր գնում մեր մամոռտ սուրբ ավերակներից, միշտ վերածնության, ազատության հույսը հոգու մէջ:

Նա ինքը կենդանի վիպասանություն էր, ոճով մարդ, կենցաղը, զրույցը ոճ էր: Գյուղացու պես բնապաշտ էր, կենդանիներ սիրող, հողը սիրող, զրույց սիրող, հեքիաթաբան:

Թումանյանի արձակ գրվածքները ֆիլիգրաֆիկ են:

Ես Հովհաննէսի աշխարհագրացումով եմ ուզում մեռնել՝ իջնել իմ սարիս ետևը:

Նա վերստեղծեց իր երկերի մէջ դյուցազնական Հայաստանը, նահապետական Հայաստանը, պատմական Հայաստանը և բովանդակ Հայաստանը հայացի ազգային ոճով, բույրով, գույնով:

Մշակելով հայկական հարուստ ֆոլկլորը՝ կառուցեց հրաշալի պոեմներ, նաև մանկական գեղեցիկ, հարազատ, մայրենի գրականություն:

Հովհ. Թումանյանը ամենահայկական, ամենաազգային

գրողն է, խնացումը հայ ժողովրդի աշխարհայացքի, աշխարհ-
զգացման, նրան կարդում են Հայաստանում ծերերն ու
մանուկները, մեծերն ու դպրոցականները: Օտար երկրներում
հայ մարդը երկյուղածությամբ կարդում է նրան հաղորդվե-
լու համար հեռավոր, քաղցր հայրենիքի հետ, տեսնելու
մեր սեզ լեռները, պատմական կոթողները, շնչելու հայրենի
դաշտերի բուրմուռքը, հայրենիքի կարոտն առնելու:

ԽՈՍՔ ԻՐ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ՀՈՒՅՆՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻՆ

Ամենից առաջ բոլոր սրտով, սրտիս բոլոր ջերմությամբ հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը ձեզ, շատ սիրելի հայրենակիցներ, բույրեղ և եղբայրներ, գաղափարի և մեծ գործի ընկերներ, որ եկել եք եղբայրական հանրապետություններից ողջունելու իմ 80-ամյակը: Սրտագին շնորհակալություննս եմ հայտնում իմ հարազատ սովետական պետությանը և կոմունիստական մեծագործ կուսակցությանը, որ ջանք չխնայեցին շքեղորեն տոնելու իմ հոբելյանը:

Սիրելի ընկերներ, խնդրում եմ թույլ տաք ինձ այս օրվա առթիվ մի համատոտ խոսք ասելու:

80 տարին բնության կողմից մեծ զիջողություն է տրված մարդուն: Պետք է որ այս շնորհը լավագույն կերպով օգտագործվի: Իհարկե, մարդ չպիտի մտածե աշխարհից բան տանելու մասին, այլ աշխարհում բան թողնելու մասին: Մնացածը ունայնություն է:

Դժբախտաբար ես շատ քիչ բան եմ թողնում հայ ժողովրդի համար, որովհետև ժամանակիս մեծ մասը ես ծախսել եմ երազանքների և որոնումների, թափառումների և ընթերցանությունների վրա: Սակայն ինչ որ թողել եմ, այսինքն՝ ինչ որ գրել եմ— գրել եմ ներշնչված հայ ժողովրդի հին և մեծ գրականության տրսդիցիաներով, միշտ հավատարիմ մնալով այդ նվիրական ավանդների՝ հայրենասիրության և ժողովրդասիրության, ազատասիրության և հումանիզմին, և բարեկամությանը ոռու մեծ ժողովրդի, նաև մեր դարավոր հարևանների՝ վրացի և ադրբեջան ժողովուրդների հետ:

Հայ պետականությունը կործանվելուց հետո, հայ ժողովրդի պահպանության գործն ու պայքարը գլխավորեցին

հայ կուլտուրան և հայ գրականությունը: Հայ լեզվով գրված գրականությունը:

Համաշխարհային պատմությունը հային վիճակեց մի հայրենիք, մեծ, աշխարհակալ պետությունների՝ Հոմի, Բյուզանդիայի, Պարսկաստանի, արաբների, Ռուսաստանի և օսմանցիների բախման ճանապարհի վրա, ճանապարհների, հանգույցի մեջ: Դա եղավ մեր ճակատագիրը և շատ աղետաբեր եղավ այդ ճակատագիրը: Այդ աշխարհակալները միմյանց ձեռքից խլում էին Հայաստան երկիրը, պատառ-պատառ անում, ավերում գյուղ ու քաղաք, կեղեքում, տրորում, հյուծում բնակչությանը:

Դարեր շարունակ ներխուժում էին թուրք-սելջուկ և մոնղոլ հորդաները, կողոպտում ու կոտորում հայ շինականին ու քաղաքացուն, գերի վարում բազմություններ, քար-քարի վրա չթողնելով:

Կյանքի ու մահվան անհավասար կովի մեջ բռնված ժողովրդին հայ գրականությունն էր, որ ոգի էր ներշնչում, քաջալերում դիմադրելու, տոկալու, պահելու ազգային անաղարտությունը և ինքնուրույնությունը, պաշտպանելու իր իդեալները:

Հայ գրականության հրեղեն, մարգարեական խոսքը բոցավառեց և ամրացրեց հայ ժողովրդի հավատը իր լուսավոր ապագայի հանդեպ, ազատ, երջանիկ ապագայի հանդեպ:

Հայաստանի մեծագույն մասը լամայացավ, ժողովուրդը տասանորդվեց, կոտորվեց, քայց չալլասերվեց, հոգեպես չալլանդակվեց. մնաց որպես մի ուրույն ազգություն իր ոճով, իր մելոսով և էպոսով և իր ներհատուկ կյանքով:

Հայ ժողովրդի պայքարը հանուն իր ոգու, հայրենիքի և կուլտուրայի եղավ իր գրականության մշտալստ պաֆոսը, որ թուր-կալծակի պես անցավ բոլոր իր ստեղծագործությունների միջով, բոլոր ժամանակների միջով:

Սիրելի ընկերներ. ես շատ եմ սիրել Շիրակը, իմ ծնած վայրը, իմ աշխատող ու բանաստեղծող ժողովրդին, մեր ֆոլկլորը, մեր երգն ու պարը: Սիրել եմ Շիրակը, նրա ցորենի արտերը, ծաղկավառ դաշտերը, կարկաչուն գետակները.

չքնաղ Արագածը, ղողանջուն ձորերը, Բագրատունիների Օիրակը, ուր ամեն մի քար խոսում է իմ նախահայրերի սխրալի գործերից, ուր դեռ կանգուն են իմ ժողովրդի հանճարեղ խիզախումները՝ ճարտարապետական հուշակապ կոթողները:

Ես երագում էի միշտ ապրել Օիրակում՝ հորս տանը, մորս մոտ. և երգել իմ Օիրակը և նրան իմաստավորող ժողովրդին: Բայց իմ այդ համեստ երազը չկենսագործվեց. քաղաքական հանգամանքները և հալածանքները ինձ նետեցին հեռուները...

Թախառեցի աշխարհե-աշխարհ, օտար դոներ, օտար ափեր: Կարոտում էի իմ հայրենի ծովսին, մեր սրբազան ցորեն հացին, կենդանի խոսքին... հեռվից-հեռու այրվում էի երկրիս քախտով:

Բռնկվեց համաշխարհային աշխարհավեր առաջին պատերազմը: Արյունոտվում էր իմ սիրտը, լսելով սրտանմիկ դեպքերի մասին օսմանյան պետության կատարած, նույնիսկ իրենց՝ օսմանցիների եղեռնաշատ պատմության մեջ աննախադեպ ջարդերի մասին: Զարհուրելի ջարդեր, որոնք գործադրվեցին հայ ազատաբաղձ ժողովրդի ամբողջական բնաջնջման նպատակով:

Դա աշխարհի մեջ ամենամեծ ոճիրն է, որի անունը գեղնափղիզն է: Մի ժողովրդի ամբողջական ոչնչացումը:

Այդ ոճիրը կատարեցին դահիճ Թալիսթան ու Էնկերը և նրանց ոհմակը: Լուս ցերեկով «քաղաքակիրթ» կոչված Եվրոպայի մեծ պետությունների աչքերի առաջ, որոնք հայի արյունով թորքերի հետ առևտուր էին անում:

Երկրագնդիս բոլոր բորենիները նախանձելով նախանձում են այդ եղեռնագործություններին...

Եվ ծագեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և բազմաշարժար Հայաստանը առավ իր փրկարար լույսերի մեջ: Խորտակվեցին ցարական կարգերը: Հին կայսրությունը քաղադրող ժողովուրդները ստացան ինքնորոշման իրավունք, հայ ժողովուրդն էլ կազմակերպեց իր Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը. հավասար անդամ սովետական եղբայրական հանրապետություն:

ների՝ ընտանիքի: Նոր Էսոլմա բացվեց աշխատույններ հայ ժողովրդի համար: Սկսվեց երկրի շինարարությունը աննախընթաց չափերով և բոլոր ասպարեզներում՝ բարոյական և տնտեսական: Վերընձուղվեց հայ դասական ճարտարապետությունը, զարգացան արվեստները՝ նկարչություն, բանդակագործություն, երաժշտություն: Կուլտուրական մեծ նվաճումներ՝ համալսարան, տեխնիկումներ, բազմաթիվ դպրոցներ ավաններում և գյուղերում, անթիվ գրադարաններ, թանգարաններ, օպերա, թատրոն և այլն, և այլն:

Սակայն ամեն մի ժողովուրդ ունի իր ռեալ ներկան, ռեալ հայրենիքը և բացի դրանցից նա ունի իր երազանքների, տենչանքների շողշողուն հայրենիքը. նա ուզում է տեսնել հարուստ, ավելի լրիվ հայրենիք, ավելի երջանիկ, իր բաղձանքները կենսագործված հայրենիք. իր երազած ապագան: Առանց այդ երազի ժողովուրդները, հատկապես քանակով փոքր ժողովուրդները, չեն կարող ապրել:

Սիրելի բարեկամներ, ես արդեն երկու ոտքով ձերության մեջ եմ, բայց տակավին միտքս առողջ է, կարողանում եմ խորհել, երևակայել, երազել: Ես տակավին կարող եմ գրել:

Իմաստուն Հնդկաստանում մի սովորույթ կա. նրանց գաղափարով կյանքի սահմանը 70 տարին է: Այդքան տարի ապրելը ամեն մարդու արդեն իրավունքն է՝ բնությունից տրված: Ավելին ապրելու համար պետք է գնել այդ շնորհը. տվյալ մարդը իր մարմնի ծանրությամբ պիտի մի շոշափելի բան տա համայնքին: Նա նստում է կշեռքի մի նժարի վրա, մյուս նժարին դնում է հավասարակշռող ֆոխարժեքը. հարուստը դնում է ոսկի, արծաթ, կերպաս, քիչ ունևորը՝ պտուղ, միրգ, բրինձ... այսպիսով նա գնեց իր ապրելիք ժամանակը:

Ես նույնը կանեմ իմ դրությամբ:

Ուրեմն կարող եմ ապրել:

Սիրելի բարեկամներ, ձերությունը բյուրեղացում է: Նրա մեջ ամբողջ աշխարհը, մարդը և բոլոր իրերը զտված են, մաքրված, բյուրեղացած, անաչառ կերպով գնահատված, ստուգված, հասած ճշմարտությանը, էությանը...

Եվ դա իրավունք է տալիս, արտոնում է ձերունուն ասել իր բաղձանքները:

Ես կցանկանայի, որ հայ ժողովուրդը լիներ ինքնավստահ, բարձր պահեր ազգային արժանապատվությունը:

Կցանկանայի, որ նա, մայրենի լեզվի պաշտամունքն ունենար: Ավելի գիտակից կառչեր հայրենի հողին:

Կցանկանայի, որ նա խնամքով պահեր իր հինավուրց կուլտուրայի կոթողները և դրանցով հպարտանար:

Կցանկանայի, որ մեր արվեստը և գրականությունը ազգային կոլորիտի և ձևերի միջով արտահայտեին համամարդկային զգացմունքներ ու մտքեր, կերտեին արժեքավոր գործեր և կերպարներ:

Կցանկանայի անցյալի հին, հրակայուն և ամուր խարիսխների վրա բարձրանար հայ ժողովուրդը, նորոգվելով և վերանորոգվելով առաջանար և ետ չմնար արդիական գիտությունների և կուլտուրայի պրոգրեսի առաջամարտիկների շարքից:

Կցանկանայի, որ Մեծ Միությունը կազմող հանրապետությունները ավելի սերտ կապվեն միմյանց հետ, ավելի սիրեն և օգնեն միմյանց: Միահամուռ ջանքերով աշխատեն Մեծ Միության առաջադիմության և հզորացման համար. բոլորը միասին պայքարեն մեր ամենօրյա հացը ստեղծող աշխատավորության ազատագրման համար շահագործումից:

Հայրենասիրության դրոշի տակ՝ անդուլ և անձնագոհ պայքար սոցիալական արդարության, ժողովուրդների եղբայրության համար, հումանիզմի և համաշխարհային խաղաղության համար՝ բովանդակ մարդկությանը փրկելու կործանումից և վայրենացումից:

Կեցցե՛ Սովետական Մեծ Միությունը:

Կեցցե՛ Սովետական Հայաստանը:

Կեցցե՛ հայ գրականությունը:

ՄԱՆՈՎՐԴԻ ՀԵՏ



257

ՀԳՄՈՐՈՍ



ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀԱՅՍՍՏԱՆՈՒՄ

Մեր հին հայրենիքում, մահից հարություն առած մեր նոր Հայաստանում տակավին ես նորեկ քաղաքացի եմ:

Գրում եմ այն, ինչ որ, առայժմ ցանուցիր, տպավորել է հոգիս:

Ես ականջ էի միայն դարձել՝ հլու և ուշադիր, և լսում էի ամենքին, որոնք սիրում էին ինձ հետ խոսել:

Եվ լսեցի ականատեսներից մեր ժողովրդի դառնագին կրածներն աշխարհը հոշոտող պատերազմից սկսած մինչև քաղաքացիական կռիվների վախճանը, մինչև խորհրդային կարգերի հաստատման շրջանը:

Դառնակսկիծ կրածները մեր սիրած, մեր զարկված ժողովրդի՝ հազար-հազար բույրերի, եղբայրների, ընկերների...

Լսեցի արյունազանգ գրույցներ, ճիվաղային հեքիաթներ, մղձավանջային գիշերների պես՝ զարհուրանք բոլոր չափերից անց, հավաստիքի բոլոր սահմաններից վեր, բայց իրական, բայց կոկորդ խեղդող բռունցքի պես իրական և նույնպես վերածնված Հայաստանի փաստի պես իրական:

Սով և ստոնամանիք, թշնամություն, ասելություն, մահ ամենքի համար, փողոցներում, դռների առաջ, գյուղերը տանող ուղիներում՝ դիակներ, դիակներ, անթաղ, անուեր և արյուն, արյուն ամենուրեք:

Լսեցի նույնպես, թե ինչպես վերապրվեց մեր ժողովուրդը, շնորհիվ իր ապրելու երկաթե կամքին, որ ապառաժը ճեղքելով հաց է հանել և տան կտորը հերկել է փայտով ու ցորեն ցանել:

Եվ շնորհիվ մեծ հեղափոխությունը գլխավորող ոռոսական հզոր ժողովրդի, որի երկայնաբազուկը հասել է օգնու-

թան, ինչպես իմ աչքերի առաջ հասավ տարերքին զո՞հ եղած Շիրակին ու Լեհնակահին:

Ես աչք էի դարձել միայն և նայում էի շուրջս: Բոլոր նեղ-միտ նկատառումներից վեր, մաքուր բարձունքից նայում եմ շուրջս՝ մոտիկն ու հեռուն:

Տեսնում եմ՝ ավերի և մոխիրների միջից, խաղաղությամբ գրահավորված, կանգնում է աշխատավորական, Խորհրդա-յին Հայաստանը՝ համամարդկային գաղափարներով, համաշ-խարհային բովանդակությամբ և ազգային ոճով ու դեմքով:

Մեր փոքրիկ ածուն, համազոր և համահավասար համա-միութենական հսկային, որ իր տիտանյան ուսն է դրել մարդ-կությունը վերստեղծող ավելի արդար, բացարձակ արդար կյանքի ստարկայացման գործի տակ:

Ցարական կրունկի ներքո դիմազրկված զանգվածներն ուղղում են իրենց ողնաշարը, անձնավորվում են ու մարդա-նում:

Մեր հինավուրց մշակույթից վերապրած արժեքների վրա բարձրանում են նոր արժեքներ:

Տեսնում եմ այդ գործին լծված բոլոր ստեղծագործ ու-ժերը, և տեսնում եմ ավելի հեռուն, ուռնացած մեր մշակույթն հորդում է և թափվում ասիերից դուրս՝ լույսի ալիքներով:

Անկաշկանդ հնչում է մեր մայրենի լեզուն դպրոցներում ու դատարաններում, գործարաններում ու զորանոցներում, ա-կումբներում ու շուկաներում:

Պետական լեզուն—և օր օրի վրա նոխանում է նա, խորա-նում ու երանգավորվում՝ դառնալու ճշգրիտ թարգմանը գի-տության նվաճումների բոլոր նյութերում, և գեղարվեստա-կան կոթողների:

Տեսնում եմ սևաչյա մանուկներին՝ գրքերն անութների տակ, բզզում են դեպի փեթակ: Պատանիներն շտապում են դեպի համալսարան վեճով ու բրբիջով: Խոնվում են ընթեր-ցարաններում, գրախանութներում:

Աչքերդ բերկրանքով բախտավոր նայում ես՝ համալսա-րան, թատրոն, երաժշտանոց, թանգարան, գրադարան, ար-հեստանոց, գործարան՝ հոյակապ և ստեղծող:

Տեսնում ես տողանցը կարմիր բանակի: Հայկական այրու-

ձին հրեղեն երգերով: Թնդում են փողոցները սմբակների տակ:

Թնդում է սիրտդ նրանց հետ:

Եվ ուզում ես գնալ նրանց բոլորի հետ, այդ սևաչյա մանուկների հետ, բանվորների և գյուղացիների հետ և զինվորների հետ:

Գնալ նրանց հետ, ուր որ գնում են նրանք, սրտով և հոգով, բոլորանվեր գնալ նրանց հետ:

Եվ երանի ես տալիս նրանց, ովքեր գործում են, որովհետև նրանք են կոում կամքերը, և կամքերն են, որ ստեղծում են մեծագույն ժողովուրդներ:

Երանի նրանց, որ սալն են ծեծում հզոր բազկով:

Երանի նրանց, որ ակոս են քաշում և ցորեն թաղում:

Երանի նրանց, որ քար են կտրում և տուն շինում, երանի նրանց, որ ծառ են տնկում և առու փորում:

Եվ երանի նրանց, որոնք սովորում են և սովորեցնում:

Որովհետև նրանք են շինում մեր նյութական և հոգեկան հացը:

Որովհետև նրանք են կերտում բոլորի համար արդար հայրենիքը:

Որովհետև նրանք են դարբնում մեր վաղն ու իրականը:

Որովհետև նրանք են սրում մեր գեները՝ բնության ուժերը ծառայեցնելու և գետին տապալելու գիշատիչ անատունին, որ ոռնում է մեր մեջ:

Սլանում է Արարատյան լուսաթաթախ դաշտերով լերկ ուղին:

Տեսնում ես գյուղացու և բանվորի արյունով և հաղթանակող հեղափոխությամբ յուրացրած մեր հարազատ հողը:

Բամբակի և ցորենի հանդերը, արևի տակ հուրհրան, և առունները, որ օրհնություն են բերում, և շոռուտները, և դեղին արոտները, ուր արածում են ոչխարները, որոնք կաթ են տալիս իրենց գառներին և մեր մանուկներին:

Արմավիրի դաշտերում հասակ են նետել բարձրուղեշ բարդիները, որոնց սաղարթները արծաթյա ձնձղանների պես

հնչում են անդու՛ անըջային Մասիսից և մայրական Արագածից թև առած հովերի մեջ:

Համեստ գյուղերի գորշ խրճիթներից ծծում ես անրաթուխ հացի անուշ բույրը և հնձանների զվարթ հոգին:

Փռչոտ, երևակայությունդ հետները տանող ճանապարհներով ոլորվում եմ սալերը՝ ծանրաբեռն ու ճոճնուն:

Ակոսների պես երկարաձիգ փովում է առնական հորովելը և ըմպում ես ճեղքված հողի տաք շունչը:

Եվ ուզում ես գրկել, ընդգրկել բազուկներիդ բոլոր տարողությամբ այդ նվիրական, շեկ ու սև հողը և նրան գաղափարացնող և իմաստավորող աշխատավորներին:

Սեղմել հոգուդ, համբուրել այդ՝ շղթաները կտրած, ազատ հողը, որ բռնն է դարձել այսօր և այսուհետև: Անբուժելի ցավ ես զգում, որ հեռու ես եղել նրանից, որ կորած եմ անցել օտարությանդ երկար տարիները:

Եվ մի տենչ է վառում հոգիդ հիմա՝ դնել գլուխդ այդ հողին, աչքերդ գոցել ու երագել:

Եվ հնչում է հոգիդ.

Ակութներից հին հայրենի
Ծուխն է ելնում բարի.
Ուղիներով ազատության
Թռչում ես դու արի:
Մալասմբակ թռչում ես դու
Նոր օրերի աստղին,
Հավատարիմ թեզ ուժ տվող
Հին օրերի հողին:
Խոչ ու խութերն թշնամական՝
Թռիչքդ չեն կասում,
Աշխարհաջահ ճշմարտության
Նոր խոսքեր ես ասում:
Դո՛ւ, հին երկիր, նոր ու պայծառ,
Իմ ժողովուրդ, իմ հա՛ց,
Արևաթև անմահ թռչուն՝
Հուր ու սրից ծնած...

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ

Թախանձագին ներողություն եմ խնդրում հարգելի հասարակությունից և սիրելի ուսանող ընկերներից, որ հիվանդությանս պատճառով անկարող եղա բանալու այս հանդեսը, որի նախագահության պատիվը մատուցեց ինձ Փարիզի հայ ուսանողական միությունը:

Հայտնում եմ արտագին շնորհակալություններս ինձ մատուցած հարգանքի համար:

... Ուսանողությունը միշտ դեպի իդեալն է թևերը թափահարել. խոսքս նրա լավագույն տարրերի մասին է, նրանց, որոնք կյանքի իմաստը բնագդային հաճույքների մեջ չեն գտնում, այլ կյանքի մեջ տեսնում են վեհ իմաստ և բարձր նպատակ:

Այդ ուսանողությունը, իբրև թարմ, երիտասարդ և դյուրագագ տարրը հասարակության մեջ ներկայացել է առաջին կրողն ու մունետիկը դարաշրջանի ամենեն առաջադեմ և լուսավոր գաղափարների:

Նրա թևավոր հոգին՝ ընդունակ իդեալով խանդավառվելու, զգացել է և հավատացել այդ քանդիչ և ստեղծիչ գաղափարներին, որ փայլատակել են հասարակական ճահնացած և քարացած կարգերի և դրությունների վրա:

Նա ոգևորված գետնել է կովի ասպարեզ, ընդդեմ մարդկային զարգացումը կասեցնող և կաշկանդող ուժերի, և որպես առաջամարտիկ զինվոր ընկել է այդ կովի մեջ, բայց հաղթանակելով:

Այսպես է եղել բոլոր ժողովուրդների մեջ և այսպես է եղել մեր հայկական պատմության մեջ:

Հայ ժողովրդի արևելյան և արևմտյան հատվածների մեջ ուսանողությունն է եղել հայ կյանքը խմորողը. Գորպատի,

Պետերբուրգի, Փարիզի և այլ համալսարանների հայ ուսանողներն են եղել Խ. Աբովյան, Ս. Նազարյան, Մ. Նալբանդյան, Ռ. Պատկանյան, Գ. Արծրունի, Ռուսիցյան, Մամուրյան, Ոսկան, Գր. Օտյան, Ծերեկեց, որոնք ներշնչված ժամանակի առաջավոր գաղափարներով, հեղափոխության, դեմոկրատիայի, ազատագրման, սոցիալիզմի տեսիլներով մտել են հայ իրականության մեջ և հուզել են մեր կյանքի բոլորսնած ճահիճը:

Պայքար են մղել ամեն տեսակի բռնությունների, խավարանտությունից, հետամնացության դեմ:

Պայքարել են միջնադարյան կղերի, ամիրանների, էֆենդիների, բորժուանների դեմ, օտար-բռնակալների և նրանց չարաշահության դեմ: Կռվել են գրիչով, կռվել են խոսքով, իրենց փետ գաղափարները իրականացնելու համար կրել են բանտ, շրջա, աքսոր, հազար տեսակ զրկանքներ:

Երբե՛ք չեն ընկրկել, երբե՛ք չեն դավանանել, այլ միշտ բարձր են բռնել մարդու ազատագրման և երջանկացման դրոշակը, որ մարդկության ազնիվ ներկայացուցիչները՝ սկըսած մեծ մարգարեներից, մեծ բարոյախոսներից, մեծ փիլիսոփաներից բարձրացել են դարերի խավարի միջից և հանձնել են սերունդե սերունդ, մինչև մեր օրերը:

Այդ փետն դրոշակն է—

Մարդկայնություն,

Կատարելագործություն.

Ազատագրում մարդը մարդու ձեռքով շահագործումից.

Ազատագրում ճնշված ժողովուրդների.

Ազատագրում սեռերի, դասակարգերի, ցեղերի առանց գույնի.

Ժողովուրդների եղբայրություն.

Անհատների ազատություն.

Հավասարություն, եղբայրություն:

Մեր առաջամարտիկ ուսանողներն են եղել մեր վերածննդի վարպետները, ոահվիրաները: Նրանք են կերտել մեր նոր մշակույթը, մեր նոր լեզուն, գրականությունը:

Չեք առաջ, սիրելի ուսանող ընկերներ, բացվում է ավելի

մեծ ու կոնկրետ առաքելոց, բան որ ձեր նախակարասյեւ-
ներին էր վիճակված:

Այս երկրագունդը, որ ընչաքաղց կապիտալիզմը արշունի,
ծովերով շաղախեց, ուր խողխողվեցան բազմամիլիոն երի-
տասարդ կյանքեր և մեր չարատանջ ժողովրդի կեսը, այս
երկրագնդի մի վեցերորդի վրա ծագեց և բարձրացավ դարե-
րով երազած փրկության արեգակը, որի շնորհիվ կենսա-
գործվեցավ նաև մեր բազմաչարչար ժողովրդի հին երազը:
Մեր ազգային ազատությունը իջավ, մարմնացավ մեր եր-
կաթե լեռների և ցորենի դաշտերի վրա:

Այսօր մենք ունենք մեր հայրենիքը, Խորհրդային Հայաս-
տանը, իրավահավասար ընկերը Մեծ Միության և նրա բույր
հանրապետությունների:

Այնտեղ կառուցվում է մի դրություն, ուր վերջ է գտել
մարդկային շահագործումը, ուր իշխում է աշխատանքը և
դարբնում բախտավորությունը բոլոր նրանց համար, ով աշ-
խատում է և ստեղծագործում:

Այնտեղ իրականացնում են մեծ գործեր՝ ազգային և հա-
մամարդկային իմաստով: Ստեղծում են նոր, արդար իրավա-
կարգ, նոր մարդկություն:

Այնտեղ ունենք մեր մշակույթը՝ հոգեկան և նյութական
բոլոր մարզերի մեջ, իր բոլոր ազդակներով. համալսարան,
բազմաթիվ դպրոցներ, կոնսերվատորիա, թատրոն, օպերա,
թանգարան և այլն:

Մեր աշխատավոր ընկերները՝ բանվոր և գյուղացի, գոր-
ծակից ունենալով լավագույն մտավորականները, տքնաջան,
զոհողություններ կրելով, կառուցանում են հսկա շենքեր,
գործարաններ, ջրանցքներ, ճանապարհներ, էլեկտրակա-
յաններ... Մշակում են նոր տեխնիկայով հանքերը, անտառ-
ները, դաշտերը: Կերպարանափոխում են երկիրը, հալթա-
հարում են բնության տարերքը բոլորի բարեկեցության հա-
մար:

Ունենք մեր գիտակից բանակը՝ պաշտպանելու համար
աշխատավորական հայրենիքը:

Դ՛ո՛ւք, ուսանող ընկերներ, ձեր ուսանողության տարի-
ներում, թաթախված և վառված վերածնվող և վերակերտվող

հայրենիքով, պիտի այստեղ ամենայն տոկունությամբ կրծեք գիտության ապառաժը, ամբարեք մարդկության նվաճած գիտելիքներն ու տեխնիկան, այն բոլոր մտավոր դիսցիպլինները, որոնցով հզոր է ներկա մարդը, և զինված, գոտեպընդված այդ թանկագին պաշարով՝ դառնաք հայրենիք:

Դառնաք հայրենիք և լծվեք անձնավիրաբար ստեղծագործ աշխատանքի, ձեր ժողովրդի հետ կողք կողքի, և ուր պիտի գտնեք ձեր բարձր պահանջների լիուլի բավարարությունը և ձեր անձնական երջանկության գոհացումը միաժամանակ:

Աշխատող կամքերի համար գրկաբաց է մեր հայրենիքը:

Գնահատեցե՛ք ձեր թանկ ժամանակը և պատրաստվեցե՛ք այդ փայլուն ասպարեզի համար:

Իմ շնորհակալություններս ձեզ, սիրելի ընկերներ և քաղաքացիներ, որ այսօր եկել եք մասնակցելու ձեր հարազատ ուսանողների ուրախությանը:

Ես համոզված եմ, որ դուք լավ կգիտակցեք ուսանողության դերը, և ինչքա՛ն բախտավոր պիտի զգաք ձեզ, եթե ավելի գուրգուրանքով, բարոյական և նյութական միջոցներով սրաշարեիք ձեր մատաղ հայրենակիցներին՝ ուսանելու իրենց կարիքավոր տարիներում:

Չէ՞ որ նրանք են մեր վաղվան իրականության տերերը լինելու և մեր փառփայած հույսերի մարմնացնողները:

Կեցցե՛ Փարիզի հայ ուսանողությունը:

1 ապրիլի, 1933, Փարիզ

**ՄՐՏԱԳԻՆ ՈՂՋՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՓԱՌԱՊԱՆԾ 15-ԱՄՅԱԿԻՆ**

Այս տողերը գրում եմ անհուն ցնծությամբ: Լեւինի հանճարով և բազմամիլիոն աշխատավորների գերմարդկային մաքառումներով և զոհողություններով հաղթանակող Հոկտեմբերյան մեծագործ հեղափոխությունը խորտակեց ցարիզմի աշխարհաճավա միապետությունը, ֆեոդալական հին կարգերի մնացորդները, կապիտալիստական շահագործող տնտեսակարգը, վերջ տվեց նաև փոքր ազգերի ստրկական դրությանը:

Համայնավարական տնտեսության, անդասակարգ հասարակության սկզբունքները դրվեցին իբրև հիմք և միաժամանակ իդեալ նոր պետականության: Կյանքի կոչվեցին բանվորա-գյուղացիական աշխատավոր զանգվածները, իրականացան փոքր ազգերի ինքնորոշման իրավունքները:

Հայ ժողովուրդն էլ, որ դարեր տևող անհավասար և զարհուրելի պաշարի մեջ էր ընդդեմ բարբարոս բռնակալությունների, իր հողի, աշխատանքի և մշակույթի ազատության համար, շնորհիվ Հոկտեմբերյան-Նոյեմբերյան հեղափոխության, ձեռք բերեց իր երազած կապույտ թռչունը— ազատությունը, ունեցավ սեփական հող իր ոտների տակ:

Այսօր 15 տարին բոլորեց այդ պատմական օրից: 15 տարին ազգերի գոյության մեջ 15 օրերի համարժեքն ունին: Սակայն, այս 15 օրը հաշվական հազարամյա կյանքում դարերի ծանրության կշիռը ունեցավ:

Հայաստանի խորհրդայնացման այս ժամանակաշրջանը մեր մոռյլ պատմության դարձակետը եղավ: Աշխատավորական երկաթե հզոր մուրճով փակվեց ու գամվեց դուռը դարավոր թշվառության վրա, և բացվեց նոր կյանքի դարագլուխը, վերածննդի էջեր՝ արևի բոցով գրված:

Ես չեմ գտնում մեր բազմադարյան տևողության մեջ ավելի նշանակալից, ավելի հոյակապ մի շրջան, քան որ ունեցանք: Մի շրջան, իրոք, անգուգական, աննախընթաց՝ հարուստ իր բովանդակությամբ, իր գաղափարաբանությամբ, իր ստեղծագործությամբ և իրականացումներով, իր հեռանկարներով:

Այդ շրջանում հաստատվեց, խորացավ և արմատացավ մեր պետությունն իր բոլոր ստորոգելիներով՝ բանակ, օրենսդրություն, դատարաններ...

Տնտեսական մարզի մեջ դրվեց ամուր հիմնաշենքն ինքնուրույն տնտեսության: Երկրի ընդերքից արևի լույսին ելան դարերով նիրհած հանքային հարստությունները և ենթարկվեցին գիտական մշակումի: Մտքի և բազուկի աշխատավորների հերոսական ջանքերով և անպատում՝ զրկանքներով, նահապետական-գեղջկական մի նախակերտ տնտեսություն վերածվեց բարձր արդյունաբերական ձևերի: Գիտական մեթոդով և նորագույն տեխնիկայով օգտագործվեցին հողն ու ջուրը: Բովանդակ երկիրն ու ժողովուրդը մրրկաբաշ ընկավ կառուցողական դինամիզմի մեջ, և շատաչեցին հիդրոկայանները, բարձրացան գործարանների ծխնելույզները, էլեկտրական ուժն ու լույսը ողողեցին քաղաքներն ու գյուղերը:

Կառուցողական այս շրջանը դյուցազներգություն է: Ստեղծվեց կոմպակտ հոգեբանություն, ընդհանուր, միասնական լեզու:

Մշակույթի մարզի մեջ՝ խոշոր նվաճումներ ընդհանուր կրթություն տարածելու գործում: Հայաստանն ունի մոտ 1300 գյուղ, գրեթե բոլորի մեջ դպրոցներ. բազմաթիվ կրթական հաստատություններ, տեխնիկումներ, նկարչական դպրոց, երաժշտանոց, ինստիտուտներ, համալսարան. հարուստ թանգարան և գրադարաններ. առաջնակարգ թատրոններ՝ առաջնակարգ դերասաններով, սինեմաներ, և վերջապես հայկական օպերա. հրատարակչություն՝ հազարավոր գրքերի:

Ասպարեզ եկան տաղանդավոր նկարիչներ, երաժիշտներ, ճարտարապետներ և բանաստեղծների շողջողուն հույլը:

Կենսագործվեց մի մեծ քաղաքական հաղթանակ— սերտ

եղբայրություն և շահերի ու զգացումների ներդաշնակություն հարևան ժողովուրդների աշխատավորության հետ—կովկասյան համադաշնակցությունը (ֆեդերացիան):

Գերազանց երևույթ է, սակայն, նոր մարդու կերտումը՝ Տնտեսական և իրավական նոր հիմքերի վրա դաստիարակվում է նոր սերունդը: Ստեղծվում է նոր մարդու ներաշխարհը:

Ընկերավարական և համայնավարական գաղափարների կոմպլեքսը դարձել է մեր երկրի մթնոլորտը, որով սնվում ու մեծանում է նոր մարդը: Իրականության տերն է դարձել մի նոր սերունդ— կորովի, զորավոր, առողջ և զվարթ, հանդուգն և ինքնավստահ, որ գիտե կամենալ և անվհատ, համառ կովով իրագործել գիտակցաբար կամեցածը, որ ձգտում է բարձունքների, դժվարությունների: Կամքի և գործի սերունդ: Հաղթահարելու և հաղթանակների համար մարտնչելու, որ ծարավի է գիտության և տեխնիկայի նվաճումներին, որոնց զենքով ճակատում է բնության դեմ, ընկնելու տարերքը իր համայնքի բարօրության համար:

Ծարավի է ծանոթությունների՝ տեսական և գործնական. ուսումնասիրում է անցյալը և նրա արժեքները՝ ճանաչում: Ծգնում է ընդլայնել իր մտքի և ճաշակի հորիզոնը:

Նա սիրում է աշխատանքը, երգով և խինդով նվիրվում է աշխատանքին, հպարտ է աշխատանքով. իսկ կոլեկտիվ աշխատանքը,— ամենից հզոր ազդակը բարոյական և առաքինի մարդ ստեղծելու,— նրա մեջ դաստիարակում է ընկերական սեր, համերաշխ ոգի, իրար օգնություն:

Նոր սերունդը, շնորհիվ ներկա ազատ և բնական պայմանների, հնարավորություն ունեցավ զարգացնելու իր ընդունակությունները, լավ ունակությունները, ստեղծագործ կարողությունները, մի խոսքով՝ զարգացնելու իր անհատականությունը՝ հավաքականության համար: Նոր մարդու մեջ համադրված է անհատն ու կոլեկտիվը:

Նոր սերունդը սիրում է իր հայրենիքը, որ ծաղկեցնում է իր աշխատանքով, գուրգուրում է հայրենի հողը, բայց և միջազգային է. սիրում է բոլոր աշխատավորների հայրենիքը և

նրանց հետ կոչում է հաիշտակիչների, շահագործողների դեմ:

Մեր հայրենիքը և մեր աշխատավոր ժողովուրդը ներկայանում է ինձ մի լուսավոր պատկերով.— ամենից առաջ նա կազմակերպված է, և այդ անգնահատելի գործություն է ինքնին. նա խանդավառված է համամարդկային գաղափարներով. զինվում է գիտությամբ, տեխնիկայով. աճում է քանակով և որակով, և թևավորված է ամեն ժամանակների մեծագույն իդեալով՝ սոցիալիզմով:

Խորհրդային իրավակարգի պայմաններում՝ ես փառավոր եմ տեսնում մեր երկրի ապագան՝ չարագործ կապիտալիզմից ազատագրված ամբողջ մարդկության մեջ, նա հավերժապես իր տեղը պիտի ունենա արևի տակ. պիտի ունենա իր արդար հացը, և՛ անկաշկանդ, և՛ անարգել պիտի ձգտի մշակութային բարձունքների, կատարելությունների...

Բոլոր սրտով և մտքով ներկա եմ 15-ամյակի այս փառապանծ, շքեղ տոնին և հարյուր հազարավոր աշխատավոր իմ ընկերների հետ միասին ցանկանում եմ մեր բարձրացող հայրենիքին երջանկություն, արևշատություն, հավերժություն, և նրանց հուժկու ձայների հետ, գոչում եմ ամբողջ էությամբ՝

Կեցցե՛ Խորհրդային Հայաստանը:

Կեցցե՛ Մեծ Միությունը Սոցիալիստական խորհուրդների:

Փարիզ, 5 նոյեմբերի, 1935

ՆՐԱՆՅ ՄՈՏ ԵՎ ՄԵԶ ՄՈՏ

Վերջին վեց տարիները ես ապրում էի Փարիզում, որ կիզակետն է եվրոպական մտավոր կյանքի, և ուր ֆաշիստական և հիտլերյան հալածանքներից փախած, ապաստանած են շատ արվեստագետներ:

Այս տեսակետից դիտողը մեծ հնարավորություններ ունի տեսնելու Եվրոպայի արվեստի ներկա վիճակը և հեռապատկերները:

Կապիտալիստական և ֆաշիստական երկրներում գրականությունը, գրեթե բացարձակ մեծամասնությամբ, հլու գործիք է փառաբանելու շահագործողների տիրապետունը, հավերժացնելու համար աշխատավոր դասակարգերի ստրկությունը: Մարդասոցության, անմիտ ցեղակրոնության և հարձակողական ազգայնության թուլնով հագեցած գրականությունն է, որ իշխում է հիմա այդ երկրներում:

Ի դեպ, ես ճանաչում եմ վիեննացի՝ անունով մի գրողի, որն ինձ ասաց, թե հաց ունենալու համար կամ պիտի ներքողես կապիտալիզմը, կաթոլիկ եկեղեցին և շովինիզմը և կամ պիտի գրես էրոտիկ կամ ոստիկանական, արկածախնդրական վեպեր: Ես ընտրեցի չարիքի փոքրագույնը— ոստիկանականը: Այլ թեմաներ արգելված են:

Դասակարգային պետության կամ բուրժուական, քաղքեցի կարգերի և կենցաղի դեմ ըմբոստացած մի քանի գրողներ— դրանք են փրկում մթազնող Արևմտյան Եվրոպայի պատիվը:

Հանույքով պիտի հիշատակեմ Ռոմեն Ռոլանի, Հ. Մանի, Մալրոյի, Արագոնի, Ֆոլխտվանգերի, Լյուդվիգ Ռեների և Ֆոն-Օսեցկու անունները, որոնք, այսպես կամ այնպես, բուռն

պայքարի մեջ են տիրող կարգերի դեմ, և իդեալ ունեն՝ սոցիալիզմը, կոմունիզմը, նոր ազատագրված աշխարհը:

Եվրոպական տնտեսական կրիզիսի—ճգնաժամի շնորհիվ կապիտալիստներն այնպես են կորցրել իրենց գլուխը, որ դադարել են իրենց գրպանի փշրանքներից մաս հանել այն հեղինակներին, որոնք պաշտպանում են և ներբողում դրամի իշխանությունը: Սակավաթիվ հոշակ ունեցող գրողներ տակավին ոտքի վրա են (Պ. Մորան, Ֆ. Կարգո) միայն այն հանգամանքի շնորհիվ, որ հիմա զբաղվում են ռեպորտաժով, ուղևորական թղթակցություններով:

Մնացորդ մեծամասնությունը գրողների ապրում են դառն և ծանր օրեր, բարեգործական էժան և անհամ ճաշարաններում մի բան ուտելու երազով: Հին գրողներ, նույնիսկ անուճով, երեսի վրա ձգված, խեղճ, թշվառ, ծերության մեջ տվայտող:

«Բանաստեղծների թագավոր» կոչումը ստացած Պոլ Ֆորի համար անցյալ տարի հանգանակություն էին բացել Ֆրանսիայի թերթերը: Գրում էին, թե ավուր հացի կարոտ է: Նույն երևույթը գեղարվեստի մյուս մարզերում: Նկարիչները, արձանագործները չունեն հանախորդներ, պատվերներ տվողներ: Իրենց գործերը նրանք փոխանակում են ապուխտի, գետնախնձորի, քարածուխի, հագուստի հետ...

Միջին դարերն անհամեմատ ավելի լավ էին. հարուստ տերերը գոնե վարձատրում էին իրենց գեղեցկացնողներին, անմահացնողներին, իրենց ապարանքները, տաճարները զարդարողներին:

Բայց իրականությունն ինչքա՛ն հակոտնչա է Խորհրդային Միության մեջ: Արվեստն այստեղ իր տարերքի մեջ է. տաղանդը և աշխատանքը գնահատված են: Ստեղծագործական ուժերով զեղուն տարիքի առջև բացված են մեծ հնարավորություններ, և լայն մասսայականացում: Եվ ապահովված, հարգված ծերություն:

Հայկրիխ Հայնեն ողբում էր, թե սոցիալիզմի դարում իր չքնաղ երգերը պիտի ծառայեն ձուկ կամ քթախոտ փաթեթելու համար. ինչքա՛ն է սխալվել իմ պաշտելի Հայնեն, երբ իր բուրժուական հայրենիքում այրում են նրա գրքերը և արչ

ձանը փշրում, իսկ հեռավոր աշխատավորական Հայաստանում խանդավառվում են նրա պոեզիայով և նրան երագում:

Ես ունեմ շատ նյութեր հավաքած զանազան գրությունների համար: Ունեմ պատմվածքներ, առակներ, հուշեր, ուղևորական տպավորություններ, որոնք վերջին մշակումի ենթարկելով, պիտի հրատարակեմ:

Ծրագրել եմ շրջել Հայաստանում, Միության մյուս մասերում, դիտելու, տեսնելու նոր կյանքի երևույթները և գեղարվեստորեն վերարտադրելու այն, եթե, իհարկե, հաջողվի ինձ:

Շատ դժվար գործ է դիմամիկայի մեջ բռնված մի արագավազ կյանք բռնել և արվեստով ներկայացնել: Ստեղծագործության մեջ, գիտակցությունից առաջ, անհրաժեշտագույնն է ենթագիտակցությունը, որ ժամանակի կարոտ խնդիր է և մանավանդ՝ հասակի:

Տեսնենք, փորձը ի՞նչ ցույց կտա:

1937, հունվար

ԻՄ ԱԶԱՏ ԵՎ ԱՏԵՂԵԱԳՈՐԾ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ

Ընկերներ,

Երեկ մեր շատ հարգելի ընկեր Կիրպոտինը իր գեղեցիկ ելույթի մեջ խոսեց նաև իմ անձի և իմ գրականության մասին: Այս շատ հուզեց ինձ, որովհետև նա ճիշտ կերպով կարգաց իմ սիրտը, տեսավ իմ հոգեկան շրջադարձը, որը ինձ բերեց իմ ստեղծագործ ժողովրդի մոտ, մեր աշխատավորական հայրենիքը— բերեց ձեզ մոտ:

Նրա խոսքը տոն տվեց ինձ գրելու այս երկտողը, որ, կարծեմ, ավելորդ չսխտի տեսնեք: Այո՛, ես վերադարձա հայրենիք՝ ձեզ հետ աշխատելու և պայքարելու սոցիալիզմի մեծ գործի համար: Դժբախտաբար, ես տակավին այնքան երիտասարդ չեմ, որ շատերիդ հետ կիսեմ պայքարի դժվարությունները, բայց, բարեբախտաբար, այնքան էլ ծեր չեմ, որ վերմակը գլխիս քաշեմ և միայն օր մթնացնեմ:

Ես եկել եմ, ընկերներ, դեպի Մեծ Միությունը շատ հակասական ուղիներ անցնելով: Պատանի հասակիցս ինձ մշտապես հուզել է, մտալլկել է աշխարհիս մեջ գոյություն ունեցող չարիքը, մարդկությունը տառապեցնող չար իրերը՝ աղքատություն, տգիտություն, բռնություն, շահագործում, ոճիրներ: Ինձ տանջել է հայ աշխատավոր ժողովրդի դառն վիճակը՝ սուլթանի և ցարի դաժան լուծերի տակ, և այդ չարիքները վերացնելու գործը, փրկության միջոցները:

Ինչո՞վ չեմ տարվել, ի՞նչ փիլիսոփայական, էթիկական, հասարակագիտական սխտեմներով՝ ազատագրելու տառապող մարդկությունը:

Եղել եմ տոլստոյական, անցշեական, Գերմանիայում, ուսանող ժամանակս՝ սոցիալ-դեմոկրատ: Հուսահատված՝ դարձել եմ անիշխանական, պեսիմիստ: Տարվել եմ Բողոքա-

յով: Ոգևորվել են հայկական մարտական ազգայնությամբ, բանտեր են նստել, աքսորվել, փախել հայրենիքից:

Ըմբոստացել են կապիտալիզմի դեմ, հասարակության դեմ, ամեն ինչի դեմ: Եվ վերջ ի վերջո, երկար խորհելուց, կշռելուց, դատելուց հետո, վերստին եկել-կանգնել են սոցիալիզմի վրա, և տարիներ են անցել, որ կանգնել են այդ փրկության լաստի վրա: Եվ ահա՛ ազատ կամքով, համոզվունքով, այրելով բոլոր նավերը, անվերադարձ, վերստին եկել են այն աշխարհը, ուր մեժ, հոյակապ գործ է կատարվում՝ ազգային և համամարդկային իմաստով:

Ամենից առաջ խոսեմ ազգայինի մասին: Մեր սերունդը երազում էր մի կտոր անկախ հող, ուր կարողանայինք հայերս ապրել ազատ և անարգելք զարգացնելիք մեր ինքնուրույնությունը, մեր լեզուն, մեր մշակույթը, զգայինք մեզ մեր տանը: Եվ ոգևորված էինք մի ափ հողով՝ հեռավոր Զեյթունով:

Ո՛վ կարող էր երևակայել, որ մեր իղձերը այսպես շուայրեն կարող էին իրականանալ: Հոկտեմբերյան մեծագույն հեղափոխությունը կատարեց այդ հրաշքը, և լենինյան ազգային քաղաքականությունը ամրացրեց ինքնորոշման հիմքերը և մեր ժողովրդի առջև բացեց հեռու հորիզոններ և մշակույթի բարձունքներ:

Մենք ունենք հիմա հող մեր ոտների տակ, մենք ունենք կազմակերպված, կոմպակտ ազգաբնակչություն, ունենք մեր պետությունը՝ հավասար անդամ 11 հանրապետությունների, մեր սահմանադրությունը, մեր բանակը, մեր համալսարանները, մեր անթիվ դպրոցները և այլն: Մենք այլևս ազգերի փոթորկահույզ օվկիանոսում մեր փոքր ալիքներով չենք ձգտում շինել մեր անջատ պատմությունը, այլ միացած ուսական մեծ ժողովրդի հետ և եղբայրական ժողովուրդների հետ:

Մեր առջև այնպիսի շքեղ հեռանկարներ կան, որոնց համար իմ հին սիրտը օրորվում է բոլոր երիտասարդ էնտուզիաստ սրտերի հետ:

Ընկերներ, սոցիալիզմը, իհարկե, նոր գաղափար չէ, նոր կոնցեպցիա չէ նա: Բոլոր դարերի առաջավոր հանճարները

երազել են, փորձել են ստեղծել մի ներդաշնակ աշխարհ, որ մարդը լինի ազատ, չշահագործվի իր նմանից, ապրի բախտավոր, վերանան ոճիրները, սպանությունները, պատերազմները: Բուդդիզմը, հուդայիզմը, պարսկական Մազդակը, Պլատոնը, Թ. Մորը, մեր թոնդրակեցիք այդ են երազել և երազել... Սակայն, իհարկե, մեր խոսքը ի նկատի ունի գիտական սոցիալիզմը և ուտոպիստներից մաքրված՝ մարքսիստական-լենինյան ուսմունքը:

Մենք համոզված ենք, որ կապիտալիստական տնտեսակարգը պիտի փլչի: Պատմության բոունցքը բարձրացել է այդ փուսած դրության վրա, և պատմության բոունցքը իջել է արդեն աշխարհի մեկ վեցերորդում շահագործող դասակարգերի գլխին և ջնջել է շահագործումը, կապիտալիզմը:

Մենք համոզված ենք, որ համաշխարհային աշխատավորության հաղթանակով, սոցիալիզմի տիրապետությանը, անդասակարգային հասարակության մեջ, հավերժապես մարդկությունը պիտի ձերբազատվի կեղեքումներից. արյունարբու դաժան կոիվը մարդկանց միջև պիտի վերանա և ուղղվի բնության և տարերքի դեմ:

Լենինի գործը պատմական վիթխարի և անչափելի հեղինակություն ունի, որովհետև նա էր, որ ձեռք զարկեց սոցիալիզմի-կոմունիզմի կենսագործմանը, կառուցմանը:

Ինձ համար սոցիալիզմը կազմակերպության, օրգանիզացիայի հարց է, և շատ, չափազանց շատ դժվարին գործ: Աշխատանքի կազմակերպումը ըստ ունակությունների, կարողությունների, արդյունքի բաշխումը ըստ կարիքի, պետքերի:

Մեծ Միությունը մտել է այս դժվարին ճանապարհը, շրջապատված կապիտալիստական թշնամի աշխարհներով: Նա տարել է շատ հաղթանակներ այդ ճամփու վրա, կառուցում է սոցիալիզմ և սերունդներ պիտի լծվեն այդ վեհ գործին, նվիրաբերվեն, զոհվեն: Եվ գրողներս ո՛չ թե ետ չպիտի մնանք սոցիալիզմը կերտողներից, այլ պիտի կանգնած լինենք նրանց առաջին շարքերում:

Սոցիալիզմը, ընկերներ, մարդկային համակեցության բարձրագույն ֆորմացիան է, բարձրագույն գոյաձևը: Տնտեսագետները, ինժեներները, տեխնիկները թող վերակառուցեն

օրչեկտը՝ աշխարհը, իսկ մենք պիտի կառուցենք սուրբչեկտը՝
ներաշխարհը: Պատրաստենք մարդուն այդ ֆորմացիայի հա-
մար:

Մենք հոգու ճարտարապետներ ենք: Սոցիալիզմը մենք
պիտի կենսագործենք մարդկանց հոգիների մեջ: Մարդկանց
դարձնենք իսկական ընկերներ, ընկերավարներ, սոցիալիս-
տական անհատներ:

Օրչեկտը և սուրբչեկտը պիտի կազմեն ներդաշնակություն,
հարմոնիա: Սա է նպատակը:

Մենք պիտի, ուրեմն, թևավորենք մարդուն դեպի սիրո,
հումանիզմի, բարության բարձր ոլորտները, դեպի իդեալը,
կատարյալը:

Ընկերներ, գրողների նոր սերունդը, որ աչքը բացել է
հաղթանակող հեղափոխության մեջ, շատ բախտավոր է,
քան եղել ենք մենք՝ հմերս:

Ձեր առջև բաց է առպարեզը, ձեզ հովանավորում է աշ-
խատավոր պետությունը, միջոցներ է տալիս, միայն գրեցե՛ք,
գրեցե՛ք անկեղծորեն, ոգևորված, ներշնչված այս մեծ գաղա-
փարներով:

Ամեն էպոխա իր արվեստն ունի. դուք պիտի էպոխային
վայել արվեստով պատկերեք մեր հոյակապ էպոխան:

Երիտասարդ ընկերներ, ձեր ձեռքը տված է մի դյուրա-
կան միջոց ստեղծագործելու համար— դա սոցիալիստական
ոճալիզմն է: Իմ կարծիքով այս գրական ամենակատարյալ
ձևն է, որովհետև նա հին, չոր, նատուրալիզմին մոտեցնող
ոճալիզմը չէ, այլ դիալեկտիկական, համադրական ոճալիզ-
մը, որի մեջ խտացած են բոլոր ժանրերի, գրական դպրոց-
ների լավագույն հատկանիշները:

Տաղանդը նախապայման, բայց անհրաժեշտ է աշխա-
տանքը, ջանքը, կամքը: Պետք է շատ կարդալ, ուսումնասի-
րել հին և նոր հեղինակները, բոլոր ազգերի ֆոլկլորը, պետք
է ուսումնասիրել սոցիալիզմի տեսաբաններին— Մարքս,
Էնգելս, Լենին: Պետք է կարդալ գիտական—փիլիսոփայա-
կան գրքեր, զարգանալ անվերջ և երբեք չգոհանալ:

Այրվել մեծ հարցերով— համամիութենական, համա-

մարդկային, դուրս գալ իր ցանկապատից, ազատագրվել շովինիստական թույնից, ազգային ատելությունից:

Նոր թեմաների խնդիրը երբեք դժվար լուծելի խնդիր չէ, մանավանդ երիտասարդ գրողների համար:

Բոլոր թեմաների էությունը բնությունն է, մարդը, նրա հոգին, նրա աշխատանքը:

Ես վերջերս, մի օրով, ընկերների հետ գնացի Ղամարլուի շրջանը, իջանք մի բանի գյուղեր: Ինչպես մի փոքր լուսամտից, ես տեսա մի կտոր կյանք, նոր կենցաղի մի կտոր — կոլխոզնիկների գործն ու կյանքը: Վեպի, պատմվածքի ամեն տարրերը կան այնտեղ, այսինքն, կրկնում են՝ բնություն, աշխատանք, գաղափարներ, մարդը, մարդկային հոգին, նրա տենչանքները, պայքարը, հոգսերը, ապրումները:

Պետք է միայն սիրել, խորանալ, դիտել, տեսնել, զգալ, հուզվել և նյութը արվեստի վերածել:

Գալով ինձ, ես տակավին մոռանալու շատ բան ունեմ, որպեսզի կարողանամ նոր բան սովորել: Եվ հետո՝ ես շատ բեռնավորված ուղտ եմ, մինչև հին բեռներս չթափեմ, նոր բեռ չեմ կարող վերցնել: Քսան-քսանհինգ հատ մանր ու խոշոր բաներ ունեմ ավարտելու և գրելու, որոնք օր ու գիշեր ճնշում են ինձ:

Նոր մեծ բանի չեմ կարող ձեռք զարկել: Փոքրիկ բաներ, օչերկներ, տպավորություններ հնարավոր են:

Իհարկե, փափագը չէ, որ պակասում է ինձ, այլ օբյեկտիվ ժամանակը:

Ընկերներ, վերջին 7 տարիներին, սկսած 1930 թվից, ես հեռու եմ եղել Խորհրդային Հայաստանից և նրա իրականությունից: Արտասահմանում ես կանգնած եմ եղել միշտ Խորհրդային Հայաստանի պաշտպանության դիրքերի վրա, իմ ուժերի չափով պայքարել եմ նրա թշնամիների դեմ՝ կրելով անվերջ լուսանքներ ու հայհոյանքներ դաշնակցականներից անձիս ուղղված: Իմ անվերապահ նվիրվածությունը Հայաստանի հանդեպ բազմիցս փորձված է, սակայն, ես, անշուշտ, շատ սխալներ գործած կարող եմ լինել, որոնք վերագրելի են այն հանգամանքին, որ ես հազար կիլոմետրերով հեռու եմ

եղել մեր իրականությունից: Եվ, հետևապես, չէի կարող իրագեկ լինել:

Մեր գլխին պայթած սուկալի աղետներից իմաստուն է դարձել մեր ժողովուրդը և հաստատական ընտրել է մի ուղի, որ արդար իրավակարգի և ազգերի եղբայրության ուղին է և տանում է մեզ պայծառ ապագայի և լավագույն հնարավորությունների:

Ռուսական պրոլետարիատը փրկեց մեզ վերահաս կործանից, կանգնեցրեց ոտքի և իրեն հավասար պատվանդանի վրա դրեց: Մենք անհունորեն պիտի սիրենք ուս մեծ ժողովրդին, պիտի սիրենք մեր եղբայրական ժողովուրդներին՝ վրացի, ադրբեջան և բոլոր մյուսներին, և խորին երաստագիտությամբ պիտի պարզենք մեր ձեռքերը նրանց՝ միասին բարձրացնելու կոմունիստական անհաղթ, պանծալի դրոշակը, որ ամբողջ տատապող մարդկության հույսն է, փրկության գրավականը, որին հատել են բազմամիլիոն աշխատավորների հոգեվառ աչքերը և մարտընչող բազուկները ողջ երկրագնդի վրա:

1937, ապրիլ

ԼԵՆԻՆԻ ՄԱՀՎԱՆ ԼՈՒՐԻ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1924 թվի հունվարի 23-ին Վեներտիկի «Ֆենիչե» թատրոնում չեխ աշխարհահռչակ ջութակահար Յան Կուրելիկը համերգ էր տալիս:

Մեծ արվեստագետի համբավը հսկա թատրոնը ծայրե-ծայր լցրել էր Վեներտիկի երաժշտասեր հասարակությամբ: Ծքեղ օթյակները բռնել էին վեներտիկյան հին ազնվականու-թյան՝ մարքիզների, կոմսերի շառավիղները, հին և նորահա-րուստ բուրժուանների անթիվ ներկայացուցիչները: Պարտերը լցված էր մտավորականներով, արվեստի մարդկանցով, իսկ գալերեյը՝ ուսանողներով, բանվորներով...

Բոլորը, բոլորը, կարծես խոսք մեկ արած՝ խորին լու-թյամբ լսում էին արվեստագետին, հափշտակված նրա չքնաղ իրականացումներով... Ապա անվերջանալի ծափերը դղըր-դացնում էին հոյակապ դահլիճը: Մի պահ անց, երբ Յան Կու-րելիկը պիտի սկսեր հաջորդ նվագը, մի մարդ, ներս մտնե-լով բեմը, դանդաղ հառաջացավ, կանգնեց լուռ մի վայրկյան և ապա, բառերը հատ-հատ արտաբերելով, ասաց.

«Հեռագիրը հայտնում է Մոսկվայից. Լենինը մեռել է»:

Միայն այսքան...

Մի շշուկ, մի սարսուռ անցավ բոլոր ներկաների մեջ. ապա իջավ մի ծանր, հանդիսավոր լուրջուն...

Գլուխները հակվեցին կրծքների վրա— ամեն ոք խորհում էր, ամեն ոք խոսում էր իր սրտի հետ:

Այսքան ներշնչող է, խորագրու մեծագույն մարդու մահը: Այս բոլոր ժամանակ, որ Կուրելիկը կանգնած էր լուռ, մը-տամփոփ և գլխահակ, վերցրեց աղեղը, դրեց կախարդական ջութակի լարերի վրա,— բոլորի ուշադրությունը դարձավ դեպի նա,— և քաշեց աղեղը. բոլորս, բոլորս զարմացած, չա-

փազանց զարմացած լսեցինք որոշակի— լարերը հնչեցին մեծ գույժը՝ «Լենին է մորսո» (Լենինը մեռավ)։

Տպավորությունն աննկարագրելի էր. ամբողջ թատրոնը քարացել էր... Քիչ անց, գալերեից և զանազան կետերից լսվեցին հառաչանքներ, արտասովախառն ձայներ։

Նվագի շարունակությունն անցավ շատ սառն, ոգևորությունը չքացավ, ծափեր տեղի չունեցան։

Երբ ես դուրս եկա փողոց և անցնում էի հոժ բազմությանը լցված փողոցների միջով, այնպես զգացի, թե աշխարհը դատարկված է, այլևս մարդ չկա երկրի վրա...

1939

ԼԵՆԻՆԸ

Լենինը հանդիսանում է տիրող հասարակարգի դեմ ընդ-վըզող պատմական մեծ ժողովրդավարների՝ Գրակիսյան եղ-բայրների, Սպարտակի գործի մեծածավալ շարունակողը և հաղթական գլխավորողը:

Պատմության մեջ մեծ հումանիստների՝ երազատեսների իղձերը՝ աշխարհը վերակառուցել այնպես, որ վերանան շահագործող և շահագործվող կասեգործիքները, որ կոխվը ամենքը ամենքի դեմ՝ վերածվի բնության և տարերքի դեմ կրո-վի, անհատի անարգելք զարգացման և բարօրության համար՝ Լենինի հաղթանակի մեջ գտան իրենց իրագործումը և պսակումը:

Երբ 19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում ընչաքաղց կապիտալիզմը մտավ իմպերիալիստական իր գերագույն փուլի մեջ և գաղութների և շուկաների գրավման ու հափըշտակության համար բոցավառեց աննախընթաց մի պատե-րազմ, ուր աշխարհի կեսը կանգնեց մյուս կեսի դեմ, երբ բուրժուազիան աշխատավոր զանգվածներին նետեց պատե-րազմի մատակց մեքենայի մեջ— այդ ժամանակ հնչեց Լենին-նի մարգարեական հզոր խոսքը.

— Պատերազմ պատերազմի դեմ, զենքը շրջել կապիտա-լիստների՝ պատերազմ ստեղծողների դեմ, քաղաքացիական կոխվ, պրոլետարիատի համաշխարհային հեղափոխություն, բռնի միջոցով խլել իշխանությունը, հաստատել պրոլետարա-կան դիկտատուրա, որպես անհրաժեշտ էտապ գնալու հա-մար դեպի սոցիալիզմ:

Պատերազմի արյունոտ մղձավանջի վերև կանգնած Լե-նինն իր ձեռքի մեջ բռնած ուներ հեղափոխության կայծակ-ները և մարդկության ճակատագիրը:

Երբ փետրվարյան հեղափոխությունը խարխլեց ցարի գահը՝ Լենինը տվեց սկսվող կռիվի կարգախոսը՝ պրոլետարիատը բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ ջարդելով բուրժուազիային ու նրա արքանյակներին, պիտի գրլխավորի ուսական հեղափոխությունը: Պրոլետարական դիկտատուրա, հողը գյուղացիներին, իշխանությունը ժողովրդին, ազգությունների ինքնորոշման իրավունք, աշխատավոր մասսաների համագործակցություն:

Ռուսական պրոլետարիատը և գյուղացիությունը անձնան անձնագոհությամբ, էպիկական, հույակապ, ամենուրեք ծավալվող ճակատամարտերով խորտակեցին ցարական և ֆեոդալական հին Ռուսաստանը, իլեցին իշխանությունը շահագործողների ձեռքից, տիրեցին արտադրության բոլոր միջոցներին: Ազատագրվեցին ժողովուրդների բանտ՝ ցարական ուժիմից ճնշված ազգությունները, ստեղծեցին ռուս մեծ ժողովրդի հետ միասին խորհուրդների Մեծ Միությունը, սոցիալիստական հանրապետությունների եղբայրական ընտանիքը:

Լենինի հաղթանակով բացվեց նոր դարագլուխ, պատմության նոր էջ ողջ երկրագնդի վրա: Որպես այդպիսին բոլոր դարերի համար Լենինը կմնա համաշխարհային պրոլետարիատի և ճնշված ազգությունների ազատագրման մեծագույն և հանճարեղ ղեկավարը:

Ծնշված, ռոնահարված հայ ժողովուրդը դարերի ընթացքում երագում էր ազատություն և իր նյութական ու բարոյական կուլտուրայի անարգելք զարգացման հնարավորություններ: Եվ միայն Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի մեջ գտավ իր ազատության երագի իրականացումը, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ ջարդեց բոնակալ դաշնակցության լուծը և փրկվեց վերահաս բնաջնջումից:

Այսօր հայ ժողովուրդը իրավահավասար անդամն է եղբայրական Միության: Նա ավերակների միջից ելել կանգնել է ոտքի, կառուցում է իր հայրենիքը, զարգացնում է իր տրնտեսությունը, բարձրացնում է իր կուլտուրան, տարածում է իր բազմաթիվ դպրոցների ցանցը, բերկրանքով և եռանդով լցված քայլում է առաջ՝ անշեջ հավատով իր էլ ավելի լուսա-

վոր ապագային: Եվ մեր ժողովուրդը երախտագետ է անմահ
Լենինին:

Ժողովրդի քնարն ամեն լարերով ցոլացնում է իր երախ-
տագիտությունը.

Կարմիր դրոշակի գունը,
Կեցցե՛ Լենինի կոմունը:
Երևանու բերին աղը,
Ըլիմ Լենինի մատաղը:

Անգրագետ գյուղացին ինչպես է հասկացել հեղափոխու-
թյան բարիքը.

Սարք ու կարգ տվեց մեր աշխարհին,
Չոբանին տվեց ուտում.
Հային, թուրքին խնայեցրացուց:
Լենին աշխարհ շինեց դրախտ,
Բերեց քյասիբ-քյուսուբաց բախտ:
Աշխարհի փրկիչ Լենին,
Մեզի ազատիչ Լենին:

Դարերի համրին լեզու է տվել Լենինը.

Տղա, քո լըկված լեզվի տեղ
Էտա ճարտար խոսքեր
Ո՞վ է տվե բեզ:
Լենին է տվե, ո՞վ է տվե:

Իսկ Ծաղկի Սեփոյի «Լենին փաշա» նաղը կմնա բոլոր
ժողովուրդների նորագույն ֆուկլորի մեջ մի չքնաղ կոթող և
հայ ժողովրդի զգացմունքի ամենաճշգրիտ կոնկրետացումը:

Լենինի անունը հայ ժողովուրդը հավերժական երախ-
տագիտությամբ պիտի գուրգուրե իր սրտում, և դարերի մեջ
հազարավոր քնարներ պիտ արձագանքեն նրա փառապանձ
գործը:

ԼԵՆԻՆԻ ԾՆՆԳՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ

Ամեն անգամ, ամեն առիթով, երբ հնչում է Լենինի կախարդական անունը՝ մեծագույն գաղափարների մի ամբողջ կոմպլեքս վառվում է մեր ուղեղի մեջ:

Վ. Ի. Լենին: Այնքա՛ն մոտիկ և այնքա՛ն հեռավոր:

Թեև մեր ժամանակակիցն է նա, մեզանից շատերի հասակակիցը, թեև շատերը տեսել են նրան, լսել են նրան, բայց մարդ չի հավատում, թե իրոք մեր ժամանակակիցներից տեսել և լսել են նրան: Որովհետև, կարծես թե նա անսկիզբ է, եղել է միշտ, կամ որպես ամենահին դարերի մշուշի մեջ սուզված մի մարգարե, մի մեծ պատգամախոս բոլոր ժամանակների համար: Եվ արդեն նա դարձել է սիմվոլ, բովանդակ մարդկությունը ոգևորող և համաշխարհային պատմությունն առաջ մղող գերագույն, լուսավոր իդեալների կատարին դասված: Մի՞թե հեռու է այն զարհուրելի Էպոխան, իմպերիալիստական առաջին պատերազմը, երբ «քաղաքակիրթ» երկրները, միլիարդ բնակչություն, գազանային բնազդներով բռնկված, տարիներ կոտորում էին իրար, անխնա ջնջում իրար, ոչընչացնում դարերի մեջ կուտակված հարստություններ, կուտուրայի գանձեր: Երբ պատերազմի սարսափելի մատակց մեքենայի մեջ աշխարհի տերերն՝ թագավորները, կապիտալիստները լցրին թշվառ ժողովուրդների աշխատավորների, բազմությունների, կանանց, երեխաներին հոշոտեցին, փրշրեցին իրենց ընչաքաղց նպատակների համար, անհագուրդ նյութական շահերի համար: Ստրկացրին փոքր ժողովուրդներին հանուն «սրբազան» շուկաների, հանուն բուրժուազիայի աշխարհակալության:

Եվ ահա այդ պահին որոտաց Լենինի պատգամը, նրա հրեղեն խոսքը, որ անմիջապես գործ դարձավ: Նրա խոսքը՝

բոլոր կայծակների թափով պայթեց աննախընթաց արյունահեղության գլխին, և անեղ պատերազմը ճեղքեց երկու մասի՝ պատերազմ պատերազմի դեմ, պատերազմ բոլոր բռնակալների դեմ, արյան ծարավիների դեմ, աշխարհակալների դեմ, բայց ազատություն, խաղաղություն, հաց և լույս բոլոր տառապածներին, հարստահարվածներին, աշխատավորներին: Մի նոր արդար աշխարհ հին վայրագ աշխարհի փլատակների վրա:

Մի՞թե մոտիկ է մեզ այդ վեհ պատգամի օրը, թեև դրանից անցել է ժամանակի մի չնչին տարածություն, և սակայն շատ հեռու է թվում մեզ, որովհետև այդ ժամանակաշրջանը այնքան իմաստալից, բազմաբովանդակ, այնքան հարուստ անցավ, որ կարծես դարեր ենք ապրել:

Եվ մի՞թե կարելի է առանց այդ գաղափարների ապրել, համ երբևէ կարո՞ղ է մարդկությունն առանց այդ պատգամների ապրել, ստեղծագործել, բարձրանալ:

Այն օրվանից Լենինի պատգամների կոմպլեքսը դարձավ մարդկության անհրաժեշտությունը, դարձավ բնության ֆինգերորդ տարրը: Օդի, ջրի, հողի և կրակի պես անհրաժեշտ և կենսական:

Եվ այսօր, երբ նորից քաղաքակիրթ մարդկությունը թաթախվում է արյան մեջ, և թերևս ավելի սուկալի և երկարատև, Լենինի պատգամը, նրա ուսմունքը, իբրև հավերժական ռարերք, նույն ակտուալությամբ, նույն հզորությամբ խոսում է տառապող մարդկության ականջին և սրտին:

ՖԱԳԻԶՄԸ ՊԻՏԻ ԽՈՐՏԱԿՎԻ

Արդեն բավական ժամանակ է անցել այն չարաբաստիկ օրից, երբ հիտլերական Գերմանիան՝ անձգ և ուխտադրուծ, հարձակվեց Մեծ Միության խաղաղ քաղաքների ու ազգաբնակչության վրա: Բազմազգի մեր հսկայական երկիրը զայրույթով ոտի կանգնեց պաշտպանելու իր նվիրական հողը: «Հայրենական պատերազմ», սրբազան պատերազմ արյունարբու ագրեսորի դեմ, և բովանդակ սովետական հայրենիքը դարձավ ուսուցանական: Երկու աշխարհ՝ վառված անհուն աստելությամբ՝ կանգնած են իրար դեմ՝ ստրկության և ազատության աշխարհները, հին ու նոր աշխարհները: Հազարամյակների պատմության մեջ չտեսնված ճակատամարտեր են տեղի ունենում. միլիոնավոր և միլիոնավոր զինվորների արյունահեղ բախումներ. մի աներևակայելի գոտեմարտ, որ որոշում է ամբողջ մարդկության բախտը՝ պրոգրեսի հաղթանակը ռեակցիայի վրա:

25 տարի առաջ Վիլհելմ կայզերը՝ մեծամոլ ու դեգեներատ, շղթայազերծեց զարհուրելի մի պատերազմ, ուր 20 միլիոն կյանքեր զոհվեցին, կոտորակվեցին ժողովուրդներ, հագուրդ տալու համար նրա աշխարհակալական տենչանքներից, ձեռք բերելու համար հեգեմոնիա Եվրոպայի վրա, գրավելու համար շահագործման գաղութներ և շուկաներ, ստրկացնելու և ոչնչացնելու համար ժողովուրդներ, որոնց ոսկորների վրա պիտի բարձրանար «մեծագույն Գերմանիան»:

Փշրվեց այդ մոլեգար երազը կայզերի գահի հետ մեկտեղ: 25 տարի հետո Հիտլերը, նրա հարազատ զավակը՝ դաժան ու տմարդի, նորից մարդկությանը թաթախեց արցունքի, արյան մեջ, նորից աշխարհի գլխին բերեց ավելի մեծ

մասշտաբով այս կատաստրոֆան՝ նույն նպատակների համար:

Հիտլերյան բանդան իրեն անվանում է «նացիոնալ-սոցիալ»՝ ազգային սոցիալիստ, սակայն մասսաների աչքին փոշի շաղ տալ է, ըստ էության, հիտլերիզմը ո՛չ մի առնչություն չունի սոցիալիզմի հետ. ընդհակառակը, նա բացարձակորեն հետադարձ շարժում է՝ ռեակցիա ընդդեմ ժողովուրդների իրավահավասարության, աշխատավոր մասսաների ազատագրման կապիտալիզմի լծից, ընդդեմ դեմոկրատիզմի, սոցիալիզմի, հետադարձ շարժում դեպի միջնադարյան պետականությունը՝ տերերի և ստրուկների կաստայացումը:

Մենք ճանաչում էինք ու սիրում կլասիկ Գերմանիան՝ «Բանաստեղծների ու փիլիսոփաների հայրենիքը», ոռմանտիկական կապույտ ծաղիկի երկիրը, իդեալիստ և երագող, այն Գերմանիան, ուր, երբ էր նեստ Ռեկանը, 19-րդ դարի առաջին կեսերին, այցելեց, ծունկի եկավ և համբուրեց նրա հողը: Գյոթեի Գերմանիան: Սակայն այդ Գերմանիան ճգմվեց պրուսական յունկերի կրունկի տակ, Ֆրիդրիխ Մեծի երագած ֆելդֆեբելյան կրթությունը այլատերեց երիտասարդությունը, միլիտարիզմը դարձավ կրոն, պատերազմը՝ պաշտամունք: Պոտոդամի ագրեսոր-ռեակցիոներ ոգին՝ հումանիստ Վայմարի փոխարեն: Խելագարության հասած շովինիզմը՝ այլամերժ և ատելավառ դեպի ոչ-գերմանացին, արհամարհանքով լցված աշխատավոր մասսաների հանդեպ: Բռնության և բռնի ուժի ներքողում, աստվածացում: Հեզեմոնիա աշխարհի վրա՝ «Գերմանիան բոլորից բարձր», բոլորին հրամայող:

Ֆաշիստ գաղափարախոսները հավատացնում են գերմանացի քաղքենիներին, 20-րդ դարի այս նոր հաշիշյաններին, թե Հիտլերը գերմանական 2000 տարվա պատմության ակնկալած, երագած փրկիչն է, գերման ժողովրդի փրկիչը:

Ի՛նչ ծաղր պատմության...

Հիտլերը պաթոլոգիկ մի տիպ, ֆրեյդյան, պատանեկան օրերից չբավարարված մեգալոմանիայով և չարությամբ լցված կոմպլեքսային—հիստերիկ ճիվաղ, թերուս, բարոյա-

կան բոլոր նորմաներից և զսպանակներից զերծ, բացարձակ անմորալ, հարբած՝ շիկացած շովինիզմով, ուսանչով, ժողովուրդների արյունով հափրացած, դիակներ հոշոտող անհագուրդ բորենին՝ փրկի՞չ, մեսիա՞:

Հին գերմանների՝ վանդալների և տևտոնների արթնացած կործանիչ բնագոյով, վագրային նենգությամբ ընկնում է Հիտլերը ժողովուրդների վրա՝ կողոպտելու և ոչնչացնելու, խաբէքա և խարդախ, երեկ դաշն է կապում և փաղաքշում բարեկամի պես՝ այսօր հարձակվելու համար: Դավաճան, անագնիվ, անամոթ ու անգուր:

Իր գոված արիական ցեղի «սոսաքինություններից» թափուր, որդեգրել է իր արհամարհած մոնղոլական ցեղերի տակտիկան՝ տեռորը: Կոտորածներով, հրդեհներով, նախահրներով ահաբեկել խաղաղ բնակչությանը, կանանց, երեխաներին, ծերերին: Հիտլերականները խոստովանում են, ասելով թե՛ երբ Աթթիլան ներս էր խուժում մի երկիր, թըռչուններն իրենց ձագերին բռնած կտուցների մեջ, փախչում էին, իսկ մենք այնպես պիտի անենք, որ ոչ մի շունչ կենդանի չազատվի մեր ձեռքից...

Ի՞նչ են ուզում ակնարկել սրանով...

Տեռոր՝ անհատական և մասսայական, քիմիական դիվային պատերազմ, որը մարդկության բնաջնջման ահավոր գեներն է:

Տարիներ սուսջ Հիտլերի համհարզ Գյորիևգի ամուսնության գիշերը, այն ժամին, երբ հանդիսավոր կերպով հարս ու փեսան ձեռքները միացնում են իրար՝ նրա նկուղում չորս կոմունիստի գլխատում են կացիկով...

Տեռորական սիմվոլ՝ սվաստիկայի հետ միասին՝ կախված ահաբեկված գերմանական ժողովրդի վրա:

Անասնձ, հիվանդագին, երևակայության բոլոր սահմանները գլող-անցնող ահաբեկիչ միջոցներով, թունավոր կոնֆետներով, նարինջներով, պայթուցիկ սանրերով, զգեստներով... մահ ու սարսափ տարածել ժողովրդի մեջ, խունապի մատնել և այլն, և այլն:

Ահա ֆաշիստական «նոր կարգի» պրակտիկան:

Ո՞րն է ֆաշիստական «փրկչի» իդեոլոգիան: Երբ փոր-

ձում ես ծանոթանալ այդ իդեոլոգիայի հետ խնձվում ես հակասությունների սումբուրի մեջ, ուր ամեն դրույթ գիտության և լոգիկայի հակասակ է՝ հերչյուրված գերմանական տիրապետության շահերին և քմայքին: Ֆաշիզմը հավաքածո է բոլոր ռեակցիոն կոնցեպցիաների, որ երբևէ եղել են աշխարհում: Հիտլերը և իր բանդան իրենց մարդակեր իդեոլոգիան կարկատել են իրար բոլորովին ներհակ դոկտրինաներից:

Մաքիավելին, առաջին հերթին, սակայն նրա «իշխանը» Յեզար Բորչիան, որի անմորալ քաղաքականությունը Մաքիավելու իդեալն էր, Հիտլերի առաջ նա մի նախվ գթաուստ բռնակալ է: Չընդունելով Դարվինի էվոլյուցիոն թեորիան, նրանք որդեգրել են կենդանական աշխարհում նրա գոյության կովի կոնցեպցիան՝ թույլի ոչնչացումը ուժեղից, և այն տարածել մարդկային հասարակության վրա: Նույնիսկ իրենց անսահման աստելի հրեա ցեղից ծագած Բերգսոնի ինտուիցիայի գաղափարը շաղախել են իրենց սումբուրի մեջ: Սորելի բռնության կոնցեպցիան, Ջեմսի պրագմատիզմը: Նույնիսկ գերման հին միստիկ հեղինակներից:

Այս և նման բոլոր խառն գենքերով լցված արսենալից վերցնում են իրենց պալքարի գործիքները՝ փրկելու համար փլչող կապիտալիզմը, հողատեր արիստոկրատիզմը, քայքայվող յունկերությունը:

Ինչպես ասացինք վերևում, հիտլերիզմը ռեակցիայի իդեոլոգիան է: Ինչ վեհ, պայծառ բան, որ ստեղծվել է եվրոպական վերածնունդից—հումանիզմից սկսած, ֆրանսիական հեղափոխության նշանաբանները (եղբայրություն, ազատություն, հավասարություն), ուտոպիստական ու գիտական սոցիալիզմը, մանր ժողովուրդների և բանվոր դասակարգի ազատագրումները—այս բոլորը հրի ու սրի պիտի մատնվեն և ոչնչանան՝ հավերժացնելու համար մարդու շահագործումը մարդու ձեռքով: Հիտլերի «նոր կարգը» աշխարհի վրա կեղեքման և տիրապետության նվիրագործումն է: Իշխողի, կապիտալիստի, կալվածատերի դասակարգը հավերժական կատեգորիա է, սորուկների, բանվորների դասակարգը նույնպես հավերժական կատեգորիա է: Սորուկը սորուկ է և աղպես էլ պիտի հարատևի՝ իր ներքին օրինաչափության

համաձայն: Ամբոխը, այսինքն աշխատավոր մասան, պետք է միայն ֆիզիկապես աշխատի, իբրև խոսուն մեքենաներ անխոս մեքենաների՝ անասունների հետ և նրանց պես: Նա չի կարող խորհել և հոգեկան արժանիքներ ստեղծել. նա իներտ զանգված է, կիսահոգի. նրա նակատագիրն է մեռաֆիզիկական ինչ-որ բերումով՝ ծառայել բարձր, ազնիվ դասակարգին՝ հյու և հնազանդ, և դրա մեջն է,— երևակայեցեք,— ստրուկների փառքն ու հաճույքը, գոյության իմաստը:

Եվ, վերջապես, հին երգը՝ առանց ստրուկների կուլտուրա չկա: Իհարկե, ճշմարիտ է, չկա ֆաշիստական կուլտուրա: Եվ սակայն Հիտլերը հետևողական լինելով, վախենում է մասաներին լուսավորելուց, կրթություն տալուց, նույնիսկ գրաճանաչ դարձնելուց: Լավ գիտեն, որ նրանց գիտակցության զարթման մեջ է իրենց կորուստը:

Հիտլերյան ավազակներն ասում են.— Ֆիզիկական աշխատանքը բթացնում է մարդուն, ուստի մեծերը, իշխողները չպիտի աշխատեն, նրանք պիտի միայն հրամայեն և իշխեն:

Ամբոխը, այսինքն աշխատավորությունը, դեր չունի պատմության մեջ. վերջինս երկու շարժող ֆակտոր ունի միմիայն՝ «մարգարեի խոսք (ֆյուրերի) և հերոսի գործ». ամբոխը կրավորական գնդակ է սուկ հերոսի ձեռքում և հերոսը գիտե այն անշեղ նետել թիրախին՝ ազգության (այսինքն՝ տիրող դասի) գերագույն նպատակների իրագործման համար:

Տիրող դասը պետք է լինի ուժեղ, անգութ և բռունցքավոր: Իր կամքը չթուլացնելու համար՝ նա չպիտի գիտությանը և գեղարվեստով զբաղվի. նա մարտիկ է, ուազմիկ: Միջին դարերի ներբողված հասարակարգը՝ բարոններ, մարկգրաֆներ, ֆեոդալներ՝ ճստած իրենց դղյակներում, ներքևում՝ գրաստ-աշխատավոր ժողովուրդը, դղյակից դղյակ թափառող միննեզինգերները՝ բանաստեղծները, գովերգում էին իշխողների «քաջությունները» և նրանց տիկիներին, իսկ վանքերում՝ գիտությանը պարապող վարդապետները: Այս կետում էլ նրանք այնքան հետևողական են, որ «նոր կարգի» մեջ ժխտում են գիտությունը: Գիտությունը մեղցնում է արիությունը, ուստի նա պիտի սակավաթիվների գործը լի-

նի, և պիտի հանդուրժվի այն չափով, ինչ չափով նա կնկատուի տերերի իշխանությանը մասսաների վրա:

Ֆաշիստական ոհմակը սոցիալիզմի կատաղի թշնամին է, «կարմիր դրոշը» հիտլերյան ցուլերին գրգռող, խենթացնող տորենդորի կարմիր կերպասն է: Ֆաշիստներին ատելի է սոցիալիզմը, որովհետև նա ըմբոստացնում է ստրուկներին տերերի դեմ, նա զենք է տալիս նրանց, նա ամենամեծ վտանգն է աշխարհում, պիտի արմատախիլ անել սոցիալիզմը մարդկության գիտակցության միջից: Բանվորներին կեղեքման սիստեմի մեջ պահելու համար պիտի ուժեղացնել տիրող դասակարգերը, ռազմականացնել կապիտալիստներին, կալվածատերերին, կուլակներին, ստեղծել նոր լատիֆունդիաներ, մագնատներ, մի խոսքով՝ վերադարձնել ֆեոդալիզմը իր բոլոր նախկին ուժով, լիազորությամբ:

Ծարունակենք նրանց բանդագուշանքները թվել:

Ուժեղը պետք է իշխի, թույլը պիտի հնազանդվի նրան և աշխատի նրա համար: Հետևապես ուժեղ ժողովուրդները, ազգերը պիտի բանեցնեն թույլ ժողովուրդներին, թույլ ազգերին: 19-րդ դարի սկզբներին մի կես բանաստեղծ ու կես գիտնական ֆրանսիական գրաֆ Արտյուր Գոբինո, սալոնների շաղակրատ, գտավ, որ ցեղերի մեջ արիական ցեղն է ուժեղը և ստեղծագործողը, կուլտուրտրեզերը, և արիական ցեղերի ժողովուրդների մեջ ամենամաքուր արյունը կրողը, գերմանացին: Մեր ժամանակներում անգլիացի Հուստոն Չեմբերլենը տխուր հոշակ ձեռք բերեց իր գերմանապաշտությամբ, հրեասոցությամբ և սոհասարակ, գերմանացիներից բացի, բոլոր ազգերի սոցյալությամբ: Նրա գիրքը Վիլհելմ կայզերը հարյուր հազար օրինակներով, էժանագին հրատարակությամբ տարածել տվեց Գերմանիայում:

Անքննադատելի և սրբազան դոգմա—թաբու—միֆ դարձրին ֆաշիստներն այս անգիտական կոնցեպցիան և կառչեցին նրան: Ռասայիզմի իդեոլոգան արդեն թիվել՝ պատրաստ էր. եկան շարունակողներ՝ Օ. Ամոն, հիտլերիստ Ռոզենբերգը և ուրիշներ: Ռասան բիոլոգիական կատեգորիա է և ոչ թե պատմական երևույթ. նա միասնական-նախասկզբնական ծագում ունի՝ բնության հիմնգերորդ էլեմենտը:

Գերմանացին, իբրև արիական մաքուր արյուն կրող՝ բնությունից իրավունք ունի իշխելու և ծառայեցնելու մյուս ժողովուրդներին: Ռասայական այս գառանցանքը միացավ պրուսական շովինիզմի հետ: Հիտլերականների լուպաագությունը բոլոր չափերից անցավ: «Աստված ստեղծեց մարդկությունը և զոջաց, ապա ստեղծեց Գերմանիան, որ ուղղե մարդկությանը»: Եվ Հիտլերն անօրինակ ոճիրներով սկսեց «ուղղել», «դաստիարակել» մարդկությանը: Սկսվեցին հրեաների ինկվիզիցիական հալածանքները և ջարդերը: Ֆաշիստներին հատուկ լրբեմի դեմագոգիայով սկսեցին բարբաջել գերման քաղքենիությանը, թե Գերմանիայի թշվառությունների պատճառներից մեկն է հրեա բուրժուազիան: Սկսեցին կողոպտել հրեաներին. բայց պրակտիկայում այն եղավ, որ Հիտլերի գայրույթից կաշառքով պրծան հրեա հարուստները և չարաչար տուժեցին հրեա աղքատները, աշխատավորները...

Գերման «ազնվացեղ» ժողովուրդը՝ դա տերերի կաստան է: Նա այն հարաբերության մեջ է մյուս ժողովուրդների հետ, ինչպես մարդը անասունի հետ՝ լծի տակ քաշել և բանեցնել:

Սակայն հիտլերականները դեմ առան մի խոշոր հակասության առաջ: Իսկ գերմանացի բանվորը, չէ՞ որ նա էլ արիացի է՝ գերման, ի՞նչպես վարվել նրա հետ, հավասարը հավասարի հե՞տ, թե՞ ինչպես տերը ստրուկի հետ: Հիտլերի «հանճարը» գտավ ելքը. ոսասայիզմը երկու դեմք ունի՝ արտաքին և ներքին: Արտաքին դեմքը արտաքին աշխարհի համար՝ գերման ժողովուրդը, իբրև զուտ, անխառն արիական արյուն կրող, ընտիր, ազնիվ՝ իրավատերը մյուս ազգերին գերիշխելու, իսկ ներքին աշխարհի համար ներքին դեմքը տիրող դասակարգը՝ արիատուկրատները, մագնատները, բարոնները, որպես ցեղի էսենցիան, դարերով մաքուր մնացած՝ մարտնչող և ակտիվ՝ իրավունք ունեն իշխելու նույն ժողովրդի ստորին աշխատավոր խավերին, որոնք իբրև վախկոտ և պասսիվ էլեմենտներ՝ ժամանակի մեջ խառնվել են ուրիշ ժողովուրդների հետ, հիբրիդ են, խառնարյուն, չունեն մաքուր ցեղարյուն և որպես այդպիսին, բնական օրինաչափությամբ՝ ծառաներ են, ենթարկվողներ:

Անտրոպոլոգիական գիտության մեջ վաղուց ու շատ վաղուց հերքված, ջախջախված է ուսասյական հիպոթեզը, և ոչ մի քննադատության չի դիմանում. ծաղրի առարկա է գիտական շրջանում այն մարդը, որ հարց կբարձրացնի դրա մասին: Բացարձակ աքսիոմա է այն, որ իրականության մեջ ոչ մի մաքուր ուսաս գոյություն չունի: Ավելորդ է կանգ առնել այս գաղացանքի վրա, որ ոռզենբերգները նորից ասպարեզ են հանել: Իսկ Սովետական Միության պրակտիկան ցույց տվեց բովանդակ խարխլությունը այդ փտած մտքի. 20—25 տարվա մեջ «հետամնաց» կոչված ցեղերը, ժողովուրդները կտրեցին անցան հառաջադիմության այնպիսի փառավոր ճանապարհ, որը դիտողին հիացմունք է պատճառում. նրանք ստեղծեցին քաղաքներ, ամեն տիպի դըպրոցներ, գրականություն, արվեստ և այլն, և այլն:

Ժողովուրդների դահիճ Հիտլերը իր աշխարհաստրկացման գաղացանքները իրականացնելու համար գործի է դրել երկու քստմնելի մեքենա՝ գեստապոն և ֆաշիստական մեթոդներով կիրառվող պատերազմը:

Ինկվիզիցիայի ոճիրները, խոշտանգումները վաղուց նշանակաւ են գեստապոյի զարհուրելի գազանությունների առաջ, որոնց սուկ թվարկումը խենթացնում է, թունավորում է մարդու ուղեղը: Պատմությունը բլուր նզովքներով պիտի խարան են այդ մարդակեր սրիկաների արարքները. այդ ծանր մղձավանջը հավիտյան հոմանիշ պիտի դառնա Հիտլերի նողկալի անվանը:

Պատերազմը իր բոլոր բարբարոսություններով, սարսափներով, արյան հեղեղներով՝ ֆաշիստների գերագույն հանույքն է: Հիտլերն ասել է, որ ինքը պատերազմն է: Պատերազմի Մոլոխը, մսադաց մեքենան: Կոիվը, սպանելը, ասում են ֆաշիստները, առաքինություն է, տղամարդը պիտի մարտիկ-գինվոր լինի, նա ծնվել է կովելու համար, վախկոտ հրեաների մարգարեն ասել է. «Մի սպանիր», իսկ գերմանացի «փրկիչն» ասում է. «Սպանի՛ր»:

Պատերազմը պողպատե դուշ է, — ասում են նրանք, — նա կազդուրիչ է և կրթիչ: Նույնիսկ պատերազմ՝ պատերազմի

համար: Պատերազմի աստվածը գերման բանակի մեջ է գիշերում: Կեցցե՛ պատերազմը, կորչի խաղաղությունը:

Եվ արյունածարավ Հիտլերը իր վայրագ հորդանքերը բաց թողեց Եվրոպայի վրա՝ նենգությանը, խաբեությանը, սարսափներով, նախահրկներով նվաճեց խաղաղասեր ժողովուրդներին և ճգմեց իր բրոնզե կոշիկի տակ: Ընկավ գեղեցիկ Ֆրանսիան, ընկան քաջամարտիկ Սերբիան, Արքից արյունոտվեց Թերմոպիլեի նվիրական կիրճը, և պղծվեց չքնաղ Պարթենոնը՝ սլաստիկայի գարշելի ճշանը կրելով իր սրբազան մարմարիոնների վրա:

Գալլի ախորժակով, դավադրաբար, ստոր ավազակի պես Հիտլերը հարձակվեց մեր հուռթի դաշտերի վրա, սոցիալիզմի երկրի վրա, բայց... Արա բլից-կրիգի կայծակը փշրվեց մեր պատմեջի ժայռերին դիպնելով: Այստեղ է, որ վերջնականապես պիտի ջախջախվի նրա՝ ոճիրների բույն ճակատը և ժանգիքը:

Առաջավոր՝ ռազմատեխնիկայով զինված հերոսական կարմիր բանակը, մեր անգերազանցելի ավիացիան՝ վառված այն գիտակցությամբ, որ բովանդակ մարդկության աչքը իրենց վրա է հառած, որ նվաճված ժողովուրդների փրկությունը իրենց զենքի հաղթանակի մեջ է՝ կովում են անձնվիրաբար՝ առաջնորդ-հրամանատար ունենալով մեր մեծագործ բոլշևիկյան կուսակցությունը, որ զսպելու է մոլեգնած ուժերը, խորտակելու է ֆաշիզմը՝ համաշխարհային ռեակցիան:

Ռուս մեծ ժողովրդի գլխին պատմության մեջ շատ փորձություններ են պայթել, բայց նա հաղթանակել է բոլորին. ռուս ժողովուրդը վերջնականապես խորտակել է մոնղոլների աշխարհակալությունը և հետ շարտել Եվրոպայից. մահացու հարվածներ է տվել Նապոլեոնի և Վիլհելմ կայզերի բանակներին, և հիմա նրան ամենապատվաբեր միսիան է վիճակվել՝ խորտակելու ֆաշիզմը և փրկելու մարդկությունը հիտլերյան եղեռնագործ բանդաներից, հորդաններից: Մենք խորապես հավատացած ենք, որ ճշմարտությունը և արդարությունը պիտի հաղթանակեն չարության վրա: Մեր սրբազան կոիվը կլինի վերջին կոիվը:

Բոլոր ոտնահարված ժողովուրդները կյանք կստեն նորից,

ազատությունը կգա բոլորի համար, նաև գերմանացու համար, նաև իտալացու համար: Հին աշխարհի փլատակների վրա այնուհետև աճարգել կբարձրանա մարդկության աշխարհը, սոցիալիզմը:

Մեր գործը արդար է, պատմության լոգիկան մեր կողմն է. մեր կողմն է նվաճված ժողովուրդների համակրանքը, մեր կողմն է համայն աշխարհի աշխատավորների համակրանքը, մեզ հետ են Անգլիան և համաաշխարհային դեմոկրատիան:

Մեր պանծալի կարմիր բանակը, մեր քաջակորով ավիացիան, մեր նավատորմիդը անձնուրաց հերոսությամբ ջախջախիչ հարված են տալիս ժողովուրդների ոխերիմ թշնամուն, և մեր վերջնական հաղթությունը ավանդույորիստ ավազակի՝ Հիտլերի վրա ապահովված է:

Հիմա ամեն խոսն և գործ հաղթանակի համար, միայն և միմիայն հայրենիքի պատվի և հաղթանակի համար:

1941, օգոստոսի 8

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԵՆՎԻՆ

Հենված ավելի քան 20 տարվա կուլտուրական և տնտեսական զարմանալի իրականացումների վրա, բովանդակ Սովետական Միությունը թևակոխեց 1941 թվականը՝ ոգևորված նոր մեծ պրոյեկտներով և ծրագրերով, որոնք պիտի մարմնակաշին ընթացող տարվա մեջ:

Սակայն տարվա կեսին մեր խաղաղ և ստեղծագործ աշխատանքը ենթարկվեց աննկարագրելի փորձության, ֆաշիստական Գերմանիան դեռ շարտեց բարեկամական դիմակը և իր էության հատուկ նենգությամբ և վայրագությամբ հարձակվեց մեր հայրենիքի վրա՝ նպատակ ունենալով ոչընչացնել մեր բոլոր նվաճումները, թալանել, կոտրել և ստրկացնել Սովետական Միության ազատ և իրավահավասար ժողովուրդներին:

Ամբողջ Միությունը անհուն զայրույթով բոցավառվեց ներխուժած բարբարոսների դեմ: Մեր հերոսական կարմիր բանակի ծանր հարվածների տակ թշնամին արյունոտվելով, հյուծվելով, սողեսող մոտեցավ նվիրական Մոսկվայի մատույցներին, և այսօր մենք անհուն հրճվանքով և խորագին երախտագիտությամբ հանդեպ մեր դյուցազնական մարտիկների՝ տեսնում ենք թշնամու նահանջը, նրա պրեստիժի խայտառակումը, նրա արյունոտ երազների խորտակումը:

1942 թվի նոր տարվա շեմքին, ողջ հայ ժողովրդի հետ միասին մեր սրտագին բարեմաղթությունները հղում ենք մեր անձնվեր կարմիր բանակին և նրա քաջ զորավարներին:

Սովետական Միությունը կատարում է պատմական մի աննախընթաց միսիա՝ նա ջախջախում է ֆաշիստական զարհուրելի ռեակցիան, ժողովուրդներին սպանող և ստրկացնող հիտլերյան իմպերիալիզմը. նա փրկում է բովանդակ աշխար-

հը ֆաշիզմի դիվական տիրապետումից և ինկվիզիցիայից: Ազատասեր ժողովուրդներն աչքերն հառած մեր կարմիր բանակի և մեր թիկունքի հերոսական պայքարին, մեզ հետ միասին բոլոր հոգով ցանկանում են և բարեմաղթում Սովետական Միության սրբազան պայքարի հաղթանակը:

Ցանկանում ենք, որ մեր զոհված մարտիկների և կենդանի մարտնչողների արդար փափագները՝ թշնամու իսպառ ոչնչացումը արագ կատարվի:

Ցանկանում ենք մեր քաջարի զինվորներին աննկուն հավատ և համոզմունք վերջնական հաղթանակի հանդեպ, բարեմաղթում ենք ավելի տոկունություն, կորով և խիզախություն:

Համոզված ենք, որ շուտով մեր հերոսական եղբայրների սրբազան արյունով ազատագրված հողերի վրա նորից կծավավի ընդհատված խաղաղ և ստեղծագործ աշխատանքը:

Ցանկանում ենք նաև, որ գերմանական աշխատավոր և տանջվող ժողովուրդն իր տան մեջ ջախջախելով եղեռնագործ ֆաշիզմի մնացորդները և ֆաշիզմի մտայնությունը, և ընդմիջտ ազատագրվելով իրեն արյունաքամ անող ոճրագործներից՝ իր ձեռքն սոցիալիստիկ հայրենիքի դեկը և, տոգորված հումանիզմի զգացմունքներով, մտնի դեմոկրատական ժողովուրդների եղբայրական ընտանիքի մեջ և պայքարի հանուն խաղաղության, հանուն մարդկայնական վերածնունդի և պրոգրեսի:

ՄԱՀ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՕԿՈՒՊԱՆՏՆԵՐԻՆ

Երբ խեղճ նյարդերիդ վրա անհնարին ճիգ թափելով կարդում ես գերմանական իշխանությունների հրեշավոր գազանությունների մասին, պարզապես կորցնում ես ժամանակի և տարածության զգացումը՝ ե՞րբ և ո՞ր են կատարվել այդ եղեռները: Նախնական դարերո՞ւմ արդյոք, գազաններից գրեթե չգանազանվող, կզակն ուժեղ նախասարդու օրերո՞ւմ, թե՞ ասորա-բաբելոնական շրջանում, հին Չինաստանի կամ ինկվիզիցիայի բանտերում, թե՞ մոնղոլական խաների և սուլթանների ներխուժումների ժամանակ: Սակայն, երբ գիտակցում ես, որ այս ամենը կատարվում է այսօր, 20-րդ դարում, մեծ փիլիսոփաների և մեծ բանաստեղծների հայրենիքի տիրապետողների ձեռքով, «քաղաքակրթված, շիկահեր, ազնվացեղ» Գերմանիայի ներկայացուցիչների հրահանգով, արյունոտ սառչում է սրտիդ մեջ, ուղեղդ քրքրվում է և մի մտալլ հուսահատություն է տիրում հոգուդ: Ուրեմն, իզո՞ւր անցան գերմանական ժողովրդի համար Հերդերի, Շիլլերի մարդասիրական պատգամները, իզո՞ւր անցավ Կանտի բարոյական իմպերատիվը: Ուրեմն այլևս Գերմանիայի գլխի վերև չե՞ն շողշողում հավերժական աստղերը և բարոյական օրենքը չի՞ սպրում նրա սրտում:

Հրեշավոր գազանություններ են գործում... Մի՞թե գազաններն, իրոք, այսքան վայրագ են, այսքան կատարելագործված չար են, ինչքան հիտլերականները: Ո՛չ: Բոլոր գազանները կնախանձեին Հիտլերի վայրագություններին: Եթե գերմանական ըմբռնումով պատերազմը պետական քաղաքականության հարցերի լուծումն է ոչ խաղաղ, անարյուն միջոցով, այլ զենքի, բռունցքի, արյան,— շատ լավ. մի պահ ընդունում ենք այդ.— թո՛ղ ապա, ուրեմն, պատերազմե նա նակատ

ճակատի զինվորի հետ, ռազմիկի հետ, զենքը ձեռքին զարկե-զարկվի զենք կրողի հետ, ազնվորեն, տղամարդու պես՝ հավատարիմ իր գովված արիական «առաքինություններին», արիական պատերազմի «մորալին»: Ինչու՞ համար են այս անլուր վայրագությունները, անպաշտպան երեխաների և ծերերի սպանությունները, կանանց բռնաբարումներն ու խոշտանգումները, անզեն, խաղաղ բնակիչների ջարդը, զարհուրելի ոճիրները, կուլտուրական արժեքների, ազգային սրբությունների անգութ ոչնչացումները, համատարած հրդեհները, ավերումները...

Մի՞թե Հիտլերին հանգիստ չեն տալիս աթոթիլաների, չինգիզ-խանների, շահ-աբասների արյունոտ դափնիները, մի՞թե նա ոտքի տակ տալով մորալ, միջազգային օրենքները՝ ուզում է դարերի նզովքով խարանել ամեն մի գերմանացու ճակատ, մի՞թե նա ուզում է ժողովուրդների ստելությամբ զարհարել գերմանական պատմությունը:

Ի՞նչ արժեք ունեն այս ամենը Հիտլերի և իր ռիմակի համար. նրանք ավելի քան ոտքի տակ են տվել և՛ ժողովրդի պրեստիժը, և՛ պատմության դատաստանը, և՛ ողջ մարդկության բարի կարծիքը հար և նման բարոյական բոլոր նորմաներից թափուր սինկթորների պես:

Արյունահեղության կուլտով մոլեգնած ասում է Հիտլերը. «Բնությունը դաժան է, ես էլ եմ դաժան»: Իսկական մարդը վաղուց է հեռացել և բարձրացել բնությունից: Նա բնության վրա ստեղծել է իր բարոյական աշխարհը, մորալ է ստեղծել, հաղթահարել է տարերքին, նոր բնություն, նոր որակ է ստեղծել՝ մարդկայնություն, կուլտուրա:

Բայց առածն ասում է. «Գայի գլխին քարոզ չեն կարդա»:

Մարդու պատիվը փրկելու համար, հազարամյակների կուլտուրան ֆաշիստական «նոր կարգի» վերածելուց փրկելու համար մի քարոզ կա միայն՝ ջախջախել տմարդի, ճիվաղ Հիտլերի և նրա ռիմակի գլուխը:

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Պատերազմի տարելիցի առթիվ

Մի քանի օրից հետո բոլորվում է պատերազմի տարին, ազգերի պատմության մեջ աննախընթաց այս պատերազմի, որ արյունաթաթախ Հիտլերը, նենգ ու դավադիր հարձակումով, շղթայազերծեց Սովետների Միության դեմ: Սոցիալիստական հանրապետությունների բոլոր ժողովուրդները ոգևորությամբ կանգնեցին մեր անպարտելի դրոշի տակ՝ անձնվիրաբար կովելու հայրենի նվիրական հողերի համար, պաշտպանելու համար մեր մեծ կուլտուրան և համամարդկային իդեալները: Երկրագնդի գրեթե բոլոր ազատասեր և դեմոկրատ ժողովուրդներն իրենց դրոշները միացրին մեր դրոշին՝ աշխարհի բախտը որոշող այս պատերազմի մեջ, մի անչափելի պատերազմ, որ գիշեր ու ցերեկ մղվում է մթնոլորտի մեջ, օվկիանոսների և հսկայական տարածությունների վրա՝ չար, մթին ուժերի դեմ: Մի ահավոր ռեակցիայի դեմ, նացիստական-ֆաշիստական ռեակցիայի, որ գազազած գալիս է մահացու հարվածներ տալու կուլտուրայի առաջապահ ժողովուրդներին, ոչնչացնելու նրանց հույակապ քաղաքները, արվեստի հրաշակերտները, կողոպտելու նրանց ինչքը և բռնագրավելու նրանց հողերը և, վերջապես, լծի տակ քաշելու աշխատավոր մասսաներին, նորից միտնելու ազատագրված մարդկությանը միջնադարյան ստրկական, խավար կարգերի մեջ, որոնք «հիտլերյան նոր կարգ» անունով պիտի վերակենդանանան՝ միաժամանակ իրենց հետ վերակենդանացնելով ինկվիզիցիայի սարսափները, ֆեոդալների անսանձ շահատակությունները, հոգու և մարմնի նորտությունը և թանձր տգիտությունը:

Սակայն պատմության փիլիսոփայությունը մեզ ուսուցանում է, որ մարդկությունը վայրենի, կանիբալ վիճակից, նա-

խամարդու անասնական դրությունից՝ միշտ խորտակելով իր
անասապարհի վրա կանգնող խոշորդոտները, դիմամիկորեն
գնում է առաջ, դեպի լույս ու գիտություն, դեպի տիրապե-
տումը բնության և չար ուժերի վրա, դեպի ազատություն և
կատարելագործում՝ դեպի բարձրագույն կուլտուրան: Եվ
կուլտուրան, որպես անողոք թշնամի ռեակցիայի չար ուժե-
րի դեմ, միշտ անդառնալիորեն հաղթանակ է տարել և պրո-
գրեսի հզոր անիվի տակ ջախջախել է իր թշնամիներին և
պիտի ջախջախե հավերժապես:

Այսօր նորից կուլտուրայի առաջ ցցվել է հին թշնամի
նախամարդը՝ բորենու ժանիքներով և արյունկզակ, սպա-
ռագեն և սպառնալից. մի տարի է, որ նա դոփում է աջ ու
ձախ, մոլեգնում է, կայծակներ է թափում, սակայն, փշրվում
են նրա կայծակները՝ դիպչելով մեր քաջարի կարմիր բանա-
կի բրոնզե վահաններին, օրեցօր խորտակվում են նրա ժա-
նիքները, հազարգլխանի հրեշի գլուխները օրեցօր կտրվում
են և տեղը նորը չի բուսնում: Ավելի և ավելի մոլեգնում է
նա՝ ապարդյուն ավեր, արյուն-հրդեհ տարածելով, սակայն
հաղթանակը օրեցօր հեռանում է նրանից, օրեցօր կորցնում
է նա իր կորովը, նսեմանում է նրա անպարտելիության
առասպելի կեղծ փայլը: Մինչդեռ մարդկության անմահ
լիեալներով գոտեպնդված ազատասեր և դեմոկրատ ժողո-
վորդների այս սրբազան զինակցության հաղթանակի լու-
սապասկը հյուսվում է օրեցօր: Եվ հեռու չէ այն փառավոր
օրը, երբ պիտի խորտակվեն չար ուժերի ոհմակները, պիտի
փշրվի խավարի բռնակալությունը և տառապած մարդկու-
թյան համար պիտի գա երջանկության, ազատության, ազ-
նիվ աշխատանքի և ստեղծագործության մի նոր, պայծառ
ժամանակաշրջան:

Լույսի և ազատության այս փրկարար և մեծագույն պայ-
քարին իր սրտատույ մասնակցությունն է բերում հայ փոքրիկ
ժողովուրդը, որ մեծ է, սակայն, իր քաջ որդիների հերոսու-
թյամբ, որոնք իրենց հալրենասիրությամբ, անձնագոհու-
թյամբ վերստին տալիս են իրենց մայր-ժողովրդին ազնվու-
թյան նորանոր վկայականներ: Հայ ժողովուրդն աշխարհի
հին, քաղաքակրթված ժողովուրդներից մեկն է՝ համառ և

անվհատ մարտնչող իր կուլտուրայի, ինքնուրույնության և հայրենիքի համար: Իր անունը որպես անհաշտ ըմբոստ ճակատողի՝ տակավին մեր թվարկությունից 600 տարի առաջ դրոշմել է տվել Բիսուտունի ժայռերի վրա Դարեհի աշխարհակալության դեմ:

Հայ ժողովուրդը՝ ճակատագրի բերմամբ կանգնած լինելով արևելյան և արևմտյան աշխարհակալ հզոր պետությունների հանգուցային ճանապարհի վրա՝ գոյության անտեղիտալի կոիվ է մղել և զարհուրելի բախումների մեջ կոտորակվելով և վերստին կոտորակվելով, այնուամենայնիվ, մնացել է միշտ կանգուն իր նվիրական հողերի վրա, և միշտ հոգով աննվաճ, ազատատենչ և լուսաբաղձ: Իր արյունոտ մաքսուման էպոսը կռել-կոփել է իր համար Թուր-կայծակին, որ երբեք ճա ձեռքից վայր չձգեց: Մի ձեռքում Թուր-կայծակին՝ պաշտպանել է ճա իր հայրենի տունն ու ապրելու իրավունքը, մյուս ձեռքում կուլտուրայի գեները՝ հերկել է իր հողը և կերել իր արդար հացը, ստեղծել է հոյակապ դասական լեզու, արվեստի հրաշալիքներ: Վայրագ բարբարոսներն անընդհատ ներխուժել են նրա հայրենիքը: Արաբական մոլեռանդ խալիֆները, նրանց մարդակեր ոստիկանները՝ բուղաներն ու կաշմերը հրդեհել են նրա հոյակերտ քաղաքները, կոտորել են նրա ծերերին և երեխաներին: Ալի-Ասլանը ավերելով չքնաղ Անին՝ նրա պարիսպների առաջ հայ մանուկների արյունով լցրել է ավազանը և լողացել է այդ արյունատենչ գազանը:

Մոնղոլական տափաստանների մարդագայլերը՝ Չինգիզխան, Չարմաղան, Լենկ-Թեմուր, քարը քարի վրա չեն թողել Հայաստանում. հրաշակերտ քաղաքների և տաճարների ավերակների մեջ գանգերից բուրգեր են կանգնեցրել... սակայն հայ ժողովուրդը՝ անմահ ոգով, նորից ոտի է կանգնել բոլոր փլուզումների և կոտորածների միջից, նորից վառել է իր գոյության օջախը իր սրբազան ավերակների վրա, նորից և նորից կերտել է՝ իր նման անմահ մեր քարերին տալով գեղեցկություն և իմաստ. նորից հավերժացրել է իր մագաղաթյա մատյանները: Եվ կերտելով ու ստեղծելով նորից և նորից իրականացրել է իր ապրելու հզոր կամքը: Եվ ավելի մեծ

հույսով ու հավատով հասունացել է և հավատացել իր փառավոր ապագային, արդարության և ճշմարտության գաղափարներին, հառաջադիմության և կուլտուրայի հաղթանակին: Եվ ստեղծել է իր երազանքների, հավատի ու ոգու պատգամախոսին, մարգարեական Մհերին՝ չար, անարդար աշխարհի կործանման և բարի, արդար աշխարհի նորակառուցման պատգամախոսին և իրականացնողին:

Հայ ժողովուրդն ունեցել է բարբարոս, ավերիչ շատ թշնամիներ, որոնց դիտել է իբրև տարերային չարիքի և նրանց լծի տակ հեծելով հանդերձ՝ նա իր ստեղծագործական ոգու բարձունքից արհամարհել է նրանց և հաճախ կամեցել է ներել, մոռանալ նրանց, սակայն չի կարողացել մոռանալ «քաղաքակրթված» մի ժողովրդի պետությունից ստացած մահացու հարվածները, մի ժողովրդից, որն իրեն «կուլտուրորեզներ» է կոչում՝ գերմանական պետությունը: Ահա այդ՝ հավերժապես անարգելի փաստն է նկատի ունեցել գեներալ Գյորրինգը, երբ նա Միության դեմ սկսած պատերազմի նախօրյակին «Կանաչ գրքի» մեջ հրահանգներ է տվել իր գորբին՝ Միությունը կազմող ժողովուրդների հանդեպ ինչպիսի դիրք բռնելու նկատմամբ: Մասնավորապես հայերի մասին հրահանգում է նա՝ ի նկատի ունենալ հայերի առանձնապես անբարյացակամ վերաբերմունքը գերմանացիների հանդեպ:

Հայ ժողովուրդը՝ հելլենիզմի կրողը Եվրասիական սահմանագծի վրա, վերածնունդի առաջին ճառագայթն արձակողներից մեկը, շրջապատված և ոտնահարված լինելով մոնղոլական և այլ ժողովուրդներով, դարերի ընթացքում աչքը հանել էր եվրոպական լուսավոր ժողովուրդներին՝ նրանցից սպասելով իր փրկությունը: Եվ ահա XIX դարում սկսվեց փոքր ժողովուրդների՝ հույների, սերբերի, բուլղարների և այլոց ազատագրումը սուլթանական լծից, հնչեց և հայ ժողովրդի փրկության ժամը: Սակայն գերմանական կանցլեր Բիսմարկն էր, որ խոչընդոտ կանգնեց՝ հայտարարելով, թե հայ ժողովուրդը չարժե մի պոմերանցի (գերմանացի) զինվորի փոսած ոսկորներին:

Եվ հետո, Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը, որ արևմտահայերի համար կուլտուրայի որոշ ավտոնոմիա

էր նախատեսում, Բեռլինի ժողովում, նույն կանցլերի ջանքերով և խարդախությամբ, վերածվեց 61-րդ մեռած հողվածին, որ, սակայն, հայության սխտեմատիկ բնաջնջման գեներդարձավ Աբդուլ Համիդի ձեռքում: Այնուհետև, երբ Հայաստանի գյուղերն ու քաղաքները թաթախվեցին հայկական արյան մեջ, այլասերված Վիլհելմ II կայզերը ցինկիկաբար հայտարարեց, որ հայերից պիտի թողնել միմիայն մի մարդ՝ իբրև Էթնոգրաֆիկ մուզեի օբյեկտ, և ուխտի գնաց նույն սուլթանի մոտ՝ խրախուսելով հայկական ջարդերը: Իսկ առաջին իմպերիալիստական պատերազմին նույն կայզերը իր բորենիներով՝ Իմհոֆ, Սանդերս, Ֆոն դեր-Գոլց գեներալներով և դեսպան Վանկենհայմով թև տվեց Իթթիհատի պանթոնրքական բանդագուշանքին և... ջնջեցին ողջ արևմտահայությունը, մի հինավուրց ժողովուրդ իր կուլտուրայով, արվեստով, ֆոլկլորով, սրբեցին մի ողջ ժողովուրդ իր բազմադարյան հայրենիքից, ջնջեցին նրա և՛ անցյալը, և՛ ներկան, և՛ ապագան...

Մոռնկլ դրած գերման վայրագ սպաների հոհոռցի տակ՝ ծովը թափեցին երեխաներին և մանուկներին, մայրերին...

Կուլտուրական բարբարոսները և մոռնող բարբարոսները միացան՝ ստեղծելու համար մի նոր չինգիզ-խանյան հրեշապետություն Համբուրգից մինչև Չինական պարիսպները: Հայ ժողովուրդը գերմանացիների ձեռքից ստացավ մի անբուժելի վերք...

Հայ ժողովրդի սրտի մեջ շիկացած երկաթով անջնջելիորեն գրված է այս ամենը:

Ահա այս պիտի գիտենա հայ զինվորը, երբ հանդիպի գերման զորքին: Եվ պիտի գիտենա նաև, որ հայ ժողովուրդը իրավունք ունի մահի պես ստելու իր թշնամուն և սիրելու իր բարեկամին՝ ոռու մեծ ժողովրդին: Եվ ահա ինչ ո՛ւ, երբ բոցավառվեց սոցիալիստական հեղափոխությունը, հայ ժողովուրդը նրա մեջ տեսավ իր դարավոր փափագների կենսագործումը: Նրա մեջ գտավ իր փրկությունը: Այն, ինչ որ խել էին նրանից կայզերներն ու նրանց վարձկանները՝ նաև ստացավ սոցիալիստական հեղափոխության հաղթանակից, սովետական իրավակարգից՝ ապրելու իրավունք, սե-

փական հայրենիք, պետականություն: Լենինյան ազգային քաղաքականությունը եղավ նրա ազգային կուլտուրայի զարգացման կովանն ու լայն հնարավորությունների ընձեռումը: Բոլոր հոգով նվիրվեց նա իր հայրենիքի վերածաղկման վսեմ աշխատանքին, սովետական իշխանության ամրացմանն ու պաշտպանությանը:

Երբ պատերազմը ծագեց, հայ ժողովուրդը խորապես գիտակցեց պատմական վայրկյանի բախտորոշ էությունը՝ իր լինելու և չլինելու հարցը: Պետք է, ուրեմն, կովել և հաղթանակել հանուն իր նորանվաճ ազատության, հանուն իր հին հայրենիքի պահպանման, հանուն իր մեծ հայրենիքի՝ Սովետական Միության: Լցված այս վսեմ գիտակցությամբ, հայ ժողովրդի զավակները պատերազմի բոլոր ճակատներում, կարմիր պանծալի բանակի մեջ, հայտ բերին հերոսական նվիրվածություն, պայքարի աննկուն ոգի: Ծատ և շատ են այն այլևս անմահ կտրիճների անունները, որոնց քաջագործությունները մեր նոր էպոսի հոգեցունց դրվագներն են կազմելու և Հայրենական պատերազմի ոսկե գրքի փառավոր էջերից մեկից ավելին: Այս նոր հերոսների մեջ վերակենդանացել է հայության հին հերոսների ներշնչող, անձնուրաց ոգին՝ Վարդան և Վահան Մամիկոնյանների, Թեոդորոս Ռշտունիների և Թաթուլ Վանանդեցիների մարտնչող ոգին: Սմբատ սպարապետի և Վահրամ սպարապետի, Խուրեցի Հովնանի և Սյունեցի Դավիթ Բեկի արյունը վառվեց վերստին նոր հերոսների սրտերի մեջ: Իսկ թիկունքում հայ ժողովուրդը՝ այր ու կին, ծեր ու պատանի, լծվել են անդուլ աշխատանքի, որպեսզի մարտնչողներին օգնեն ամեն ձևով, բավարարեն նրանց կարիքները և ավելին, քան անհրաժեշտ է: Այս տարի մեր կոլխոզնիկները ավելի հերկել են ու ցանել, քան խաղաղության տարիներին: Գյուղ և քաղաք սիրով հանձն են առել զրկանքներ և զոհաբերություններ իրենց մարտիկների՝ որդիների և եղբայրների, բայց նամանավանդ՝ վերջնական հաղթանակի և հայրենիքի պատվի համար:

Այսօր, պատերազմի երկրորդ տարվա շեմքին, հայ ժողովուրդը նորից կանգնած է ոռու մեծ ժողովրդի կողքին, եղբայրական ժողովուրդների հետ միասին, կովում է անձ-

նորացությանը վայրագ թշնամու դեմ, և խորապես հավատացած է մեր արդար գործի հաթանակին, և, սակայն, որքան էլ նա փոքրաքանակ լինի, միշտ պատրաստ է պայքարելու իր հայրենիքի ազատության և իր հին կուլտուրայի պաշտպանության համար: Նրա ոգու մեջ միշտ կենդանի է իր հին հերոս Վահան սպարապետի հրեղեն խոսքը, երբ նա, V դարում պարսից բռնակալության դեմ կռվելիս, ասաց. «Մենք պատրաստ ենք ուրախությանը մեռնել, քան թե ծառայել ձեզ»:

Հայ ժողովրդի համար սուրբ է միշտ այս պատգամը, ավելի լավ է մեռնել, քան թե ծառայել բռնակալներին:

1942

ԱՆԳՐՎՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒԴՆԵՐԻ ԵՂՔԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՍԱՍԱՆԵԼԻ Է

Տաշխատական վայրագ ոհմակները եկել, ծեծում են Անդրկովկասի երկաթե դռները: Կողոպտելու տենչով մոլեգնած՝ նրանք ուզում են ներխուժել մեր հարուստ երկիրը, հափշտակել մեր հացը, մեր նավթը, տանել մեր այգիների բերքը: Ուզում են քայքայել կովկասյան ժողովուրդների մեր սրբազան միությունը, բաժանել դարավոր եղբայրներին մեկը մյուսից, ջլատել և ստրկացնել մեզ:

Վրացին, հայը, ադրբեջանցին՝ դարերի նվիրական ավանդներով և տրադիցիաներով կապված մի համերաշխ ընտանիք են՝ աճած միևնույն հողի վրա և հասակ առած միևնույն արևի տակ: Յուրաքանչյուրն ունենալով իր ազգային, անհատական հատկությունները, բայց բոլորը միասին ունեն ընդհանուր ընտանեկան հոգեքանություն, որը զալիս է երկար ժամանակների մեջ միասին ապրած պատմությունից, արտաքին թշնամիների դեմ միասին վարած պայքարից, մեր ընդհանուր շահերից և հոգսերից, մեր կենսափորձից, մեր չքնաղ և վեհ պելյզածից: Մեզ հավասարապես ոգևորում են ադամանդե սաղավարտ հագած մեր լեռնագագաթները, մեր բարձրաթոփչ արծիվները, մեր արագուտն մարալները: Մեր լեզվով խոսում են մեզ հետ մեր շատաչուն անտառները և մեր փրփրաբաշ գետերը: Մեր Ղարաբաղի գծույզները մեր կտրին պապերին և մեր ներկա քաջերին մխրճել են մեր բոցաշունչ դաշտերի մեջ և խոր ձորերի մշուշների մեջ և թոցրել են անդունդների վրայով:

Մենք հավասարապես զգում ենք մեր սազն ու չոնգուրը. նրանք ներբողում են մեր Էպիկական երկիրը, փառաբանում են մեր լեգենդար հերոսներին, արտահայտում են մեր ժողովրդի վիշտը և ուրախությունը, սերը և ատելությունը՝ մեր

սագի և չոնգուրի լարերը մեր ժողովրդի սրտի լարերից են հյուսված:

Մեր ժողովուրդների ստեղծած իմաստուն խոսքերը, հեքիաթներն ու լեգենդները՝ մեր ընդհանուր հոգեկան սեփականությունն են, մեր կյանքի ուղեկիցները՝ մանկության օրերից մինչև ծերություն: Մեր ժողովուրդների աշխարհայացքը միևնույնն է. մենք հաճախ, առանց խոսելու, հասկանում ենք իրար: Հայ և վրացի ժողովուրդների եղբայրությունը և բարեկամությունը շատ և շատ հին է. նա ծագում է առել ժամանակի սկիզբներից, միֆական շրջաններից, աստվածների, Մհեր-Ամիրանի օրերից: Նրանք միասին կերտել են, յուրաքանչյուրը իր հոգով և իր դրոշմով, այն զարմանալի և փառավոր կուլտուրան՝ գրականություն, ճարտարապետություն, որը բովանդակ Սովետական Միության կուլտուրաների մեջ ամենահինն է՝ անվերապահորեն վկայված:

Միասին գոյության արյունոտ, անվեհեր կոիվ ենք մղել օտար, բարբարոս աշխարհակալների դեմ՝ պաշտպանելու համար մեր հայրենիքը, մեր կուլտուրան, մեր լեզուն՝ ընդդեմ ֆանատիկ արաբների և աշխարհավեր սոնդուների: Այդ բարբարոսների դեմ Հայաստանն հաճախ վահան է հանդիսացել Վրաստանի համար, իսկ Վրաստանը հյուրընկալ, եղբայրական ապաստան՝ հայերի համար:

Մենք ունեցել ենք կուլտուրական փոխադարձ ազդեցություններ և փոխառումներ, թարգմանություններ մեկը մյուսից: Վրացի Ջաքարիա պատմիչը գրել է հայերեն և մեկից ավելի հայեր գրել են ու երգել վրացերեն, ադրբեջաներեն:

Այսպիսի սերտ գործակցությամբ և պայքարով մեր ժողովուրդները կարողացել են պահել և դաժան դարերի միջով հասցրել են մեզ ազգային նվիրական մեր գանձերը՝ ոգի, ոճ, լեզու, ֆուկլոր, գրականություն:

Կովկասի եղբայրական ժողովուրդները՝ վրացի, ադրբեջան և հայ միասին, մի կամքով ու մի բազկով կուլել են Ծահ-Աբասի անգութ հրոսակների և ավերումների դեմ, արյունոտ աղա-Մահմեդ խանի արշավանքի դեմ: Միասին կուլել են ցարական ալլասերող քաղաքականության դեմ: Եվ, վերջապես, ռուս մեծ ժողովրդի հետ միասին խորտակել են ցա-

րիզմի և կապիտալիզմի լուծը և իրականացրել են Սովետների իշխանությունը, որը բերեց մեր ժողովուրդների համար ազգային ազատություն, սեփական հայրենիք, պետություն, ազգային և համամարդկային կուլտուրայի անարգել զարգացման բոլոր պայմանները:

Սովետական կարգերի մեջ ավելի ամրացավ Անդրկովկասի մեր ժողովուրդների եղբայրությունը, որն իր նվիրագործումը գտավ Հայրենական պատերազմի մեջ մեր հերոս մարտիկների թափված արյունով և ժողովուրդների նվիրվածությամբ՝ ընդհանուր արդար գործի համար:

Այսօր Հիտլերը իր ոհմակները կուտակել է մեր դռների առաջ. ուզում է ներխուժել մեր տունը, խլել մեր անկախությունը, մեր նվաճած ազգային ինքնուրույնությունը:

Միայն մի կարգախոս ունենք մենք հիմա՝ կովենք և չթողնենք, որ թշնամին պղծի մեր նվիրական ընտանիքի շենք: մեր պողպատակուռ լեռների պես կանգնենք թշնամու առաջ, կովկասյան դռները մեր կրծքով փակենք թշնամու առաջ: Անենք ավելին, քան ինչ որ կախված է մեզանից. ամեն գնով փրկենք մեր ընտանիքի պատիվը, մեր հոգեկան և նյութական հարստությունները:

Մեր երկնահույ լեռները՝ տակավին հազարամյակներ առաջ ականատեսներ են մեր նախահայրերի եղբայրական միական սխրագործություններին: Մեր էրայի առաջին դարերից իսկ՝ մեր ժողովուրդները՝ վրացի, հայ, ադվան, զենքը ձեռքին պահակ էին կանգնած կասպիական դռների առաջ սկյութական և սարմատական ելուզակ հրոսակների դեմ, և քաջաբար պաշտպանում էին ընդհանուր հայրենիքը: Հինգերորդ դարում քաջ զորավար Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ մեր ժողովուրդները Դերբենդի երկաթե դռների առաջ, կյանքի և մահի կոիվ մղեցին սարսափելի հոռետի դեմ, որոնք վայրենի կրքով ձգտում էին Անդրկովկաս մտնել, կողոպտել, ավերել, հրդեհել գյուղ ու քաղաք, սպանել, ջնջել ժողովուրդներին. սակայն մեր նախահայրերի անձնագոհ հերոսությունը ջախջախեց արշավող հոռետիին և զարհուրելի Աթթիլան պարտված փախավ Կովկասի դռների առջևից:

Պատմությունը կրկնվել է: Մեր օրերի Աթթիլան՝ Հիտլերը, բախում է մեր հայրենիքի դռները: Մեր երակների մեջ տակավին այրվում է մեր հերոսական հայրերի արյունը, կովելու և հաղթելու մեր կամքը առաջվա պես հզոր է և միասնական. մեր երկնահույ լեռները նորից նայում են մեզ և նորից ականատես կլինեն մեր եղբայրական միական սխրագործություններին:

Եվ բացի այդ, մենք այսօր մենակ չենք, մեզ հետ է նաև հերոսական ոռու ժողովուրդը: Լենինյան պանծալի դրոշը ծածանվում է մեր կովկասյան դռների վրա: Այդ վեհ դրոշի տակ, Անդրկովկասի եղբայրական ժողովուրդներս, կարմիր անհաղթ բանակի շարքերում, քաջաբար կմարտնչենք, կկռվենք վկայելու համար, որ մեր դյուցազն նախահայրերի արժանի զավակներն ենք, որ մենք պատրաստ ենք կովել և սեռնել մեր հայրենիքի և մեր լեզվի համար, մեր ազատության և մեր ապագայի համար:

ՄԵՐ ԲԱՂՁԱՆՔՆԵՐԸ

Քսանհինգ տարի առաջ, երբ այսօրվա պէս մոլեգնած իմպերիալիզմը ամբողջ քաղաքակիրթ աշխարհը թաթախեց արյան մեջ և տակապին չէր հագեցնում միլիոնավոր զոհերի թափված արյունով, բոցավառվեց Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը:

Լեւինի հերոսական կուսակցության ղեկավարությամբ, ռուսական պրոլետարիատը և կեղեքված գյուղացիությունը խորտակեցին ցարերի պետությունն ու կապիտալիզմի լուծը, և հաստատեցին սովետական իրավակարգը՝ աշխատավոր դասակարգի և ռոմանարված ժողովուրդների ազատագրումը:

Հայ ժողովուրդն իր քաղաքական անկախությունը կորցնելուց հետո, օտար բարբարոս իշխանություններին բռնաբար ենթարկված՝ դարերով չհաշտվեց իրերի դրության հետ, անընդհատ պայքարեց բռնակալների դեմ՝ ազգային անկախությունը վերստին ձեռք բերելու համար, սակայն տուժեց չարաչար, կոտորվեց և կրկին կոտորվեց: Բայց հայ ժողովրդի ճակատին պատմությունը գրել էր՝ ապրել ու բարձրանալ:

Առաջին իմպերիալիստական պատերազմից քայքայված, հյուծված հայ ժողովրդի համար հնչեց փրկության ժամը. նա սոցիալիստական հաղթանակող իրավակարգի մեջ տեսավ իր ճակատագրի որոշմունքը՝ կյանք և ազատություն: Բոլոր անձնավիրությամբ, սիրով և հավատով փարվեց նոր իրավակարգին: Հայ ժողովուրդը սոցիալիստական հեղափոխության շնորհիվ ստացավ իր տեղը արևի տակ, սեփական հայրենիք և պետություն: Վայելեց խաղաղության բարիքները, ունեցավ իր կուլտուրայի անարգելք զարգացման բոլոր միջոցներն ու հնարավորությունները:

Սակայն այսօր գերմանական արյունոտ Ֆաշիզմը մեծ փորձության առաջ է կանգնեցրել Մեծ Միությունը: Վրտանգված են նաև հայ ժողովրդի ազատությունը, կուլտուրական նվաճումները: Մեր ժողովուրդը՝ զինավառ երիտասարդությունը և աշխատավոր թիկունքը, հերոսական կարմիր բանակի և բոլոր եղբայրական ժողովուրդների հետ միասին՝ անձնվիրաբար կռվում են թշնամու հորդաների դեմ, փշրում են նրա կենդանի ուժն ու տեխնիկան, կասեցնում նրա աշխարհավեր ներխուժումը:

Այս ահեղ օրերին մենք բոլոր սրտով ցանկանում ենք, ամենից առաջ, կայունություն և հերոսություն մեր մարտիկներին ու թիկունքին:

Ցանկանում ենք, որ մեր ժողովուրդը լինի ավելի զգաստ և գիտակից ներկա այդ բախտորոշ պահին: Աչքի լույսի պես պահի Միության ժողովուրդների դաշնը և չենթարկվի դրսից կամ ներսից եկող պրովոկացիաներին, որոնք միայն ջուր կլցնեն թշնամու ջրաղացին:

Ցանկանում ենք մեր մարտիկներին ավելի խիզախություն և աննկուն հավատ՝ վերջնական հաղթանակի հանդեպ: Ցանկանում ենք մեր թշնամու շուտափույթ ջախջախումը, ցանկանում ենք, որ այս աշխարհասասան պատերազմը օր առաջ վերջանա, վերջանա մեր հաղթանակով՝ ճշմարտության, արդարության, ազատության հաղթանակով:

Ցանկանում ենք, որ սովետական ժողովուրդների համար այս փորձությունը լինի վերջինը, գա նորից խաղաղության բարերար շրջանը, նորից սովետական ժողովուրդը ձեռք առնե մաճն ու մուրճը, գրիչն ու վրձինը, աշխատե, հերկե ու հնձե և ստեղծագործե, և վայելե երջանիկ օրեր լենինյան փառապանձ դրոշի տակ:

ՀԱՂԹԱՆԱԿԸ ՊՐՈԳՐԵՍԻ ԿՈՂՄՆ Է

Հայրենական պատերազմի այս անդ օրերում մենք տոնում ենք սովետական իշխանության իրականացման պանծալի 25-ամյակը:

Մենք տոնում ենք Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության փառավոր հաղթանակը իմպերիալիզմի և կապիտալիզմի վրա. մենք տոնում ենք հաղթանակը դարերով երազած գաղափարների՝ դեմոկրատիզմի, հումանիզմի, հավասարության, ինչպես և աշխատավոր, շահագործվող մասսաների և ոտնահարված ժողովուրդների ազատագրման հաղթանակը:

Բոլշևիկյան մեծագույն կուսակցության և նրա հանճարեղ առաջնորդ Լենինի ղեկավարությամբ, նախկին ոռուսական պետության պրոլետարիատը և ընչազուրկ գյուղացիությունը խորտակեցին ցարական բռնապետությունը, ֆեոդալա-բուրժուական կարգերը, և նրանց ավերակների վրա դրեցին նոր իրավակարգի հիմքերը՝ ազատագրված ժողովուրդների հանրապետությունների միության՝ Սովետների Մեծ Միության:

Միայն քառորդ դար է անցել պատմական այդ մեծակշիռ իրադարձության օրից, — ժողովուրդների կյանքում մի շատ կարճ ժամանակամիջոց, — որի տևողության ընթացքում, սակայն, հրաշքներ կատարվեցին: Աշխարհի վեցերորդ մասում, ցարերի նախկին պետության մեջ, խեղդող կապանքներից ազատված աշխատավոր մասսաները և ժողովուրդներն ունեցան տնտեսական և կուլտուրական զարմանալի վերելք: Դարերով ճնշված ժողովուրդների պոտենցիալ ուժերը պողպակացին. գրագիտությունը թափանցեց մասսաների մեջ, դրարոցների ցանցը տարածվեց ամենուրեք: Առաջնակարգ ին-

դուստրիան և ինտեսիվ, կոլեկտիվ գյուղատնտեսությունը փոխեցին մեծածավալ երկրի հնամենի դեմքը:

Լեհիկյան ազգային ստեղծագործ քաղաքականության շնորհիվ իրավագուրկ ժողովուրդները, այդ թվում նաև հայերը, մեծ հաջողությամբ օգտագործեցին իրենց նորանվան ազատության ընձեռած հնարավորությունները, բարձրացրին իրենց կուլտուրան, տնտեսությունը: Նրանք ունեցան ազգային վերածնունդի մի փառավոր շրջան:

Այս ամենը կատարվեց սոցիալիզմի կառուցման դրոշի տակ:

Սովետների Միությունը դարձավ համայն աշխարհի աշխատավորության հոգևոր հայրենիքը, նրանց ձգտումների և պայքարի ներշնչարանը, նրանց հույսերի և երազների ամրոցը: Սոցիալիզմի գաղափարները տասնապատկեցին նոր կյանքը կառուցողների ուժերը:

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակով բացվեց մի նոր դարագլուխ, լուսավոր էպոխա՝ հղի իր դինամիկ ազդեցությամբ հասարակական և տնտեսական բոլոր մարզերի վերաբերմամբ, կյանքի և կենցաղի բոլոր արտահայտությունների, գիտության, գրականության և արվեստի բոլոր բնագավառների վերաբերմամբ: Մի նոր աշխարհի կառուցում:

Սովետական Միության գոյությունը աշխարհի վեցերորդ մասում՝ բնականաբար կատաղեցրեց հին աշխարհի ռեակցիոն տարրերին: Այդ կատաղությունն իր արտահայտությունը գտավ հիտլերյան խավարամոլության մեջ:

Գերմանական ֆաշիզմն աշխարհում երևաց իբրև բարբարոսական իդեոլոգիայի մի նոր կոմպլեքս՝ պատվաստված բոլոր ժամանակների ամենահետադեմ գաղափարների և թեորիաների վրա: Խճմված և բարդ է այդ «իդեոլոգիկ» բառը: Բանականության գիտական օրենքներին ֆաշիզմը հակադրեց իռացիոնալը, բնագոյականը, մարդկային պատմության տրամաբանական օրենքներին հակադրեց ցեղի, արյունի և ճակատագրի միստիկան: Ժողովուրդների ազատությանը և իրավահավասարությանը հակադրեց գերման ռասայի հորինված գերազանցությունը մյուս բոլոր ժողովուրդ-

ների վրա և նրանց ստրկացնելու և շահագործելու իր անհեթեթ, նողկալի, իբր «բնատուր իրավունքը»: Սոցիալիզմին հակադրեց աշխատավոր դասակարգերի անսահման, կատաղի շահագործումը:

Հիտլերը տարիների ընթացքում պատրաստեց իր ագրեսիան դեմոկրատ, ազատասեր ժողովուրդների և նախ և առաջ Սովետների Միության վրա: Այդ նպատակի համար միլիտարիզացիայի ենթարկեց Գերմանիայի բովանդակ տրնտեսությունը, հասարակական կյանքը, գրականությունը, դաստիարակությունը: Տևտոնական վաչրագությանը և նեցուցյալ ֆաշիստական հորդաները հարձակվեցին եվրոպական պետությունների վրա, կողոպտեցին և գրավեցին նրանց տնտեսությունը և ուսմանական տեխնիկան: Ապա ուխտադրուժ հարձակում կատարվեց մեր Միության վրա՝ ֆաշիզմի ամենամեծ և ամենաուժեղ թշնամու վրա: Զարհուրելի տեղորոժ, ավարտումներով, ջարդերով բնաջնջել խաղաղ բնակչությանը, վտարել նրանց հայրենի երկրից և գրավել նրանց ինչքը և հողերը՝ ահա հիտլերիզմի մեթոդները:

Ֆաշիզմը իր «իդեական կոնցեպցիաներով» ոգևորում է գերման անհագուրդ կապիտալիստներին՝ խոստանալով ազատել նրանց սոցիալական հեղափոխության մղձավանջից, շնորհել ընդարձակ շուկաներ և նոր բարոնատներ կազմելու համար՝ ահագին տերիտորիաներ, իսկ ոճրագործ իր զինվորների անասնական բնազդներին հագուրդ տալու համար՝ բռնաբարությունների և ավազակությունների սանձարձակ ազատություն: Հրաշք-ուսդիոյի դարում մենք վերապրում ենք հոների և գոթերի արյունահեղ արշավանքների և չինգիզխանների սուսկալի խժոժությունների բարբարոսական դարաշրջանները՝ իրենց բոլոր արհավիրքներով և եղեռնումներով:

Սակայն պատմությունը մեզ ուսուցանում է, որ ազատասեր ժողովուրդների գլխով մյան շատ փոթորիկներ են անցել, բայց նրանք հաղթահարել են բոլորին և դուրս են եկել աղետների միջից ավելի հզորացած: Արյունահեղ ճակատամարտերում, դարերի միջով անցկացրեց ազատության իր սերը նաև հայ ժողովուրդը, որը առանձին հաշիվներ ունի հիտլերյան մարդակերների հետ:

Այսօր, Միության անհուն դաշտավայրերում, Հյուսիսային օվկիանոսից մինչև Սև ծովը արյունահեղ կռիվներ են տեղի ունենում մեծագոր կարմիր բանակի և ֆաշիստ զավթիչների միջև: Տեղի են ունենում միլիոնավոր ռազմիկների աննկարագրելի բախումներ, որոնց մեջ գտնվում են նաև հայ ժողովրդի լավագույն զավակները: Այդ մարտերի ելքից կախված է առաջավոր իդեալների, քաղաքակրթության, դեմոկրատ ժողովուրդների ճակատագիրը: Այս ահեղ պատերազմի գրեթե ամբողջ ծանրությունն ընկած է մեծ Միության ուսերի վրա. կարմիր բանակը և թիկունքի աշխատավորները Էպիկական անձնվիրությամբ դիմադրում են գերմանական ճնշումին, ոչնչացնում են թշնամու կենդանի ուժերը և տեխնիկան: Մեծ Միության ժողովուրդների պանծալի պատմության էջերը զարդարվում են նորանոր սխրագործությունների սևմահ դրվագներով, Լենինգրադի, Մոսկվայի, Սևաստոպոլի և Ստալինգրադի պաշտպանության հերոսական Էպոպեայով: Ամբողջ աշխարհը հևհև սպասում է այդ վիթխարի գոտեմարտի ելքին:

Մինչ այդ՝ Սովետական Միության ժողովուրդները բոլոր նվիրվածությամբ պայքարում են թշնամու վայրենի հրոսակախմբերի դեմ, ջախջախելու, ետ շարսելու նրան մեր նվիրական հայրենիքից, պայքարում են արիաբար, պաշտպանելով իրենց իդեալները, իրենց ազատությունը, կուլտուրական-տնտեսական իրականացումները, պայքարում են Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունով ձեռք բերած մեծ հաղթանակը ո՛չ միայն չկորցնելու, այլ մանավանդ հավերժացնելու համար:

Մենք գիտենք, որ իրերի անողոր տրամաբանությամբ հիսլերյան խելացնորությունը անշուշտ դատապարտված է չարաչար խորտակման: Հաղթանակը պրոգրեսի և մեր արդար, սրբազան գործի կողմն է: Աշխարհը կիրկվի քաաներորդ դարի այդ թարախակալած խոցից: Հաղթանակը մարտով կշահեն մեծ, ազատասեր ժողովուրդները, ամենից առաջ Սովետական Միության անվեհեր ժողովուրդները, որոնք կռիվել են Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության բոցերում:

ՓԱՌԱՀԵՂ ՏԱՐԵԴԱՐԶ

(Կարմիր բանակի 25-ամյակի առթիվ)

Կարմիր բանակը ամենաերիտասարդ բանակն է երկրագնդի վրա. 25 տարվա ընթացքում նա անեց, զարգացավ, հասակ քաշեց, հասավ իր ամենատույզ, ամենակորովի տարիքին և դարձավ հզոր բանակ:

Սակայն նա իր էությանը, իր բովանդակությանը, իր գաղափարախոսությանը՝ բոլորովին առանձին է նոր տեղ է գրավում բանակների համաշխարհային պատմության մեջ, և այսպիսով տարբերվում է անցյալի և ներկայի մեջ գործող բանակներից:

Բանակները եղել են և են տիրող դասակարգի սպառազեն բազուկը վերջիններիս ներքին և արտաքին քաղաքականության գործադրման մեջ, պաշտպանելու տերերի սեփականությունը, միշտ ստրկության մեջ պահելու աշխատավոր մասսաները՝ շահագործման համար, կեղեքելու և ջնջելու փոքր ազգությունները, տիրապետելու նոր հողեր ու գաղութներ՝ շուկաներ հարստահարելու համար:

Բանակը եղել է իմպերիալիզմի նեցուկը:

Կարմիր բանակը պատմության մեջ առաջին բանակն է, որ հակադրվեց հինին: Նա բանվորների ու գյուղացիների բանակն է, ազատագրված սովետական ժողովուրդների բանակը: Նա օրինաչափորեն հանդես եկավ պաշտպանելու իր՝ բանվորա-գյուղացիական շահերը, կոպելու շահագործողների դեմ, պաշտպանելու ժողովրդի ազատությունը և նրա աշխատանքը, Սովետների Միությունը՝ թշնամական շրջապատի և առհասարակ, ամեն տիպի աշխարհակալների ընչաքաղց միջամտություններից, հարձակումներից:

Կարմիր բանակի հիմնադիրը եղավ հեղափոխության հանճարը՝ Լենինը: Նա ծնունդ առավ հրի ու սրի, վառողի

ծխի ու թնդանոթների որոտի միջից, երբ կաշվերական Գերմանիայի զորքերը ներխուժեցին քաղաքացիական պատերազմով բռնկված Ռուսաստանի մեջ՝ կողոպտելու և խորտակելու սոցիալիստական հեղափոխության նվաճումները: Նա ծնունդ առավ բանվորների և գյուղացիների ամենակատաղի դիմադրության օրը, ճակատագրական ճգնաժամային պահին՝ փետրվարի 23-ին, 1918 թվին: Նորակազմ կարմիր բանակը՝ տակավին աղքատ, ցնցոտիների մեջ, կիսաքաղց, սակայն թևավորված, ներշնչված վեհ գաղափարներով, հրաշքներ գործեց, ազատության մարտիկները բռնեցին գերմանացիներին և ցարական զորքի ռեակցիոն թափափուկներին իրենց գեներալներով և ատամաններով:

Կարմիր բանակը մեծ Լենինի հանճարեղ կոնցեպցիայի համաձայն 25 տարվա ընթացքում դարձավ սոցիալիզմի առաջամարտիկը աշխարհի մեջ, պաշտպանեց հեղափոխության ձեռք բերած արգասիքները, պաշտպանեց սովետական ժողովուրդներին, անցավ կոիվների բովով, հաղթեց ու հաղթանակեց, և իր արյունով կոեց բանվորա-գյուղացիական զինավառ ուժը և ամրացրեց սովետական իրավակարգը:

Սակայն, 1941 թվին, հունիսի 22-ին դավաճանորեն ենթարկվեց նա մեծագույն փորձությանը: Հիտլերյան հորդան նենգաբար խուժեց Միության սահմաններից ներս, և ծագեց պատմության մեջ՝ մարտնչողների մեծաքանակ բազմությանը, կովի դաշտ դարձած տարածությունների հսկայական մեծությամբ, անորակելի, աննախընթաց, ահեղ, աշխարհացունց պատերազմ: Հիտլերյան ֆաշիստական բանակները՝ զինված գրեթե ամբողջ գրաված Եվրոպայի ռազմական տեխնիկայով, մարդկանց երևակայության մեջ ստեղծված գերմանական ուժի անպարտելիության առասպելով՝ բախվեցին կարմիր բանակին: Հիտլերի ստրատեգիան հույս դրնելով հանկարծակիության և կայծակնային հարձակմանի (բլից-կրիգ) վրա, համոզված էր իր հաջողությանը և սովետների պարտությանը: Սակայն կայծակը դիպավ կարմիր հզոր բանակի ժայռեղեն դիմադրությանը և փշրվեց Մոսկվայի պատերի տակ, Լենինգրադի պատերի տակ: Այդ օրվանից Հիտլերի ռազմական մեքենան հիվանդացավ:

Հիտլերը կատաղությունից մոլեգնեց, անհամար նողկալի ոճիրներով խաղաղ ազգաբնակչության վրա, հրդեհներով, ավերումներով հավիտենապես նշավակեց գերմանական ժողովրդին: Վիրավոր գազանի պես նա դոփում էր մեկ այստեղ, մեկ այնտեղ, բայց իր կարճ խելքով չգիտակցեց, որ Միությունն իր աշխարհագրական դրությամբ, իր անեզր տարածություններով և, որ գլխավորն է, իր հասարակական կյանքի կառուցվածքով անպարտելի է, և նրա անսահման տափաստանները միայն գերեզման կլինեն Հիտլերի արյունարբու զինվորների համար:

Հայրենական պատերազմի ահեղ ճակատամարտերի մեջ կարմիր բանակը ռազմական մեծ փորձ ձեռք բերեց, ուսումնասիրեց հիտլերյան ստրատեգիայի և ռազմական մեքենայի թույլ և ուժեղ կողմերը, մեր զինվորներն անցան կրակի միջով, հանդես եկան նոր մարտնչող կադրեր՝ հմուտ ժամանակակից տեխնիկայի վերջին խոսքին, ստրատեգիային:

Կարմիր բանակը իր տոկոսությամբ, կայունությամբ, դիսցիպլինայով, մարտունակությամբ գերազանցեց թշնամու բանակներին: Մեր բանակի սխրագործություններին, հայրենասիրական անձնագոհություններին նեցուկ դարձավ թիկունքը, որ ոչ միայն կիսեց իր հացը նրա հետ, այլև կիսեց թե՛ զրկանքները, թե՛ զոհաբերումները և պատրաստ՝ կիսելու նաև մահը:

Այս բոլորի հունձը եղավ Ստալինգրադի հերոսական էպոպեան:

Ստալինգրադի անունը սիմվոլ է այլևս:

Ստալինգրադի հաղթանակը լցնում է ամեն մի հայրենասերի սիրտը արդար հպարտությամբ և անհուն շնորհակալությամբ թե՛ հերոս կարմիրբանակայինների հանդեպ, թե՛ նրա զորավարների հանդեպ: Քաղաքակիրթ մարդկությունը, դեմոկրատ ժողովուրդները, որոնք հիացմունքով նայում էին այս դյուցազնական գոտեմարտին՝ նույնպես պիտի լցվեն երախտագիտությամբ այն բոլոր անձնագոհ մարտիկների հանդեպ, որոնք իրենց կյանքով, արյունով մահացու հարված տվին թշնամուն, ամենածանր հարվածը, որ երբևէ ստացել է

գերմանական բանակը, և շողշողուն հեռանկարները սվյն ֆաշիզմի վերջնական կործանման մոտալուտ լինելուն:

Ապագա պատմաբանները և ուսումնասիրողները շատ երկար ժամանակ պիտի կարդան Ստալինգրադի էպոպեայի ոսկե գիրքը, ուսումնասիրեն նրա զարմանալի դրվագները: Ծատ ու շատ երկար ժամանակ Ստալինգրադի հաղթանակը պիտի լինի սովետական ժողովուրդների ներշնչարանը, ոգևորության անսպառ աղբյուրը:

Հիմա կարմիր բանակի, իսկապես, կայծակելովի գրոհի տակ փախչում են ֆաշիստական դիվիզիաները, կորագլուխ փախչում է թշնամին՝ իր անպարտելիության ցնդած միֆը շալակած, անթիվ զոհերի եղեռնով և ժողովուրդների անեծքով ծանրաբեռնված: Կարմիր բանակը ավելում է, մաքրում զարշելի աղտեղությունից մեր գյուղերն ու քաղաքները, մեկը մյուսի ետևից ամեն ժամ, ամեն վայրկյան:

Թշնամին դեռ չի վերջացրել իր արյունոտ ավանտյուրան, դեռ ֆաշիստական մղձավանջը ծանրացած է մեր հայրենիքից գրաված հողերի վրա, թշնամին խեղճության նուպաների մեջ դեռ պիտի կառչի ամեն մի քարի ու մացառի: Ծիվաղ Հիտլերը հայտարարել է իր տոտալ պատերազմի հրեշային պատգամը. «Այս կովում չեն կարող լինել հաղթողներ և պարտվածներ, այլ ողջ պրծնողներ և ոչնչացողներ»:

Սակայն բարոյապես, գաղափարապես, տեխնիկապես հրաշալիորեն զինված կարմիր բանակը վախչունի այդ սպառնալիքից. մարդկության նակատագիրը որոշող ահեղ թրի դաստակը կարմիր բանակի հզոր ձեռքին է:

Մենք՝ Միության քաղաքացիներս և քաղաքակիրթ աշխարհը սրտատրոսի և հավատով հետևում ենք մեր դյուցազնական բանակի հաղթական քայլերին:

Հավիտյան փառք ու պարծանք մեր մեծագույն բանակին, նրա զորավարներին և հավիտենական փառք և երախտագիտություն կովի սուրբ դաշտում ընկած մեր անմահ հերոսներին:

ՀԱՂԹԱՆԱԿՆ ԱՐԳԱՐ ԳՈՐԾԻ ԿՈՂՄՆ Է

Բովանդակ հայ ժողովրդի սիրտն ու միտքը մշտապես իր քաջ զավակների հետն է, իր խիզախ մարտիկների, որոնք հերոսական պայքարի մեջ են թշնամու ավազակային ոհմակների հետ:

Հայրենական այս սրբազան պատերազմի մեջ հայ մարտիկները իրենց հերոսական գործերով ապացուցեցին, որ արժանի որդիներ են մի հին, պատմական ազատասեր ժողովրդի, որ իր երակների մեջ տակավին կրում է մեր սխրագործ նախնիքների արյունը: Հայ մարտիկները աշխարհի առաջ բարձրացրին հայ ժողովրդի պատիվն ու անունը և մեր հնադարյան պատմությունը վսեմացրին նորանոր պանծալի դրվագներով:

Շուտով երկու տարի կլինի, որ Սովետների Մեծ Միությունը իր եղբայրական ժողովուրդներով և քաջարի կարմիր բանակով մի հսկայական գոտեմարտի մեջ է մեր մեծ հայրենիքը ներխուժող թշնամու հետ, մի արյունոտ մեծ վեճի մեջ՝ մարդկության բախտը որոշող:

Մի կողմը կանգնած են ազատատենչ, դեմոկրատ, առաջադեմ ժողովուրդները՝ Սովետական Միությունը, Անգլիան, Ամերիկան և ուրիշները, իսկ հակառակ կողմը՝ խավարասեր ռեակցիոն ֆաշիստական Գերմանիան իր վասալներով, որոնք երազում են աշխարհը ձգել ստրկական նոր կարգի մեջ, հետ տանել պատմության առաջ խաղացող ընթացքը:

Կարմիր փառապանծ բանակը մոտ երկու տարի կովելով թշնամու հետ, ճանաչեց թշնամու ստրատեգիայի գաղտնիքները, ճանաչեց նրա խարդախություններն ու խորամանկությունները, համրեց թշնամու ատամները, և փշրեց այդ ա-

տամները Լեհիճգրադի տակ, Մոսկվայի տակ, Կովկասի դրո-
ների առաջ, Ստալինգրադի փողոցներում:

Մեր անգերազանցելի արտիլերիան, մեր անրոպլանները,
մեր դիպուկ զենքերը, մեր մարտիկների քաջությունն ու տո-
կունությունը ծխի պես ցնդեցրին գերմանական ֆաշիզմի ան-
պարտելիության առասպելը, կաշծակնային կովի հեքիաթը,
հոգեբանական հարձակման խաղերը:

Մեր մարտիկները տեսան կորագլուխ փախչող թշնամու
մեջքը:

Թշնամին դիմակազերծ է, նա հոգեբանորեն պարտված
է, նրա ֆիզիկական վերջնական պարտությունը ժամանակի
հարց է:

Մարդակեր Հիտլերի հաշիվները խճճվեցին, նրա աշխար-
հակալական պլանները տակնուվրա եղան, նա սաստիկ ջը-
ղայնացած է, այս խառնափնթոր քառսից դուրս գալու համար
նա նորից փորձեր պիտի անի, նոր ավանտյուրաներ՝ սա-
կայն դա կլինի նրա օրհասական հոգեվարքի վերջին գա-
լարումները:

Մեր հերոսական կարմիր բանակը՝ իր անձնագոհությամբ
և տոկունությամբ, աջակցությամբ մեր հզոր դաշնակիցների,
խրախուսված ամբողջ առաջավոր մարդկության համա-
կըրանքով և հիացմունքով, կհասցնե թշնամուն մահացու
վերջին հարվածը:

Հաղթանակը արդար գործի կողմն է: Պատմության ըն-
թացքը, որ գնում է դեպի պրոգրեսը և ժողովուրդների ազա-
տությունն ու բարեկեցությունը՝ երկար ժամանակ, ինչ խոչ-
ընդոտներ որ ծագեն, չի կարող կանգ առնել կամ ետ գնալ:

Երանի և հավիտյան փառք նրանց, ովքեր իրենց զոհա-
բերումներով կնպաստեն պատմական առաջխաղաց ըս-
թացքին՝ մարդկության բախտավորությանը և զարգացումին:

ՍԱՍՈՒՆՅԻ ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՄՈՏ

Արագած լեռան հարավային բարձր լանջերի վրա, Թալինի շրջանում 1920 թվականներից, բնակություն են հաստատել Սասունցի հայերը: Նրանք 1914 թվականին, առաջին հիւսիսային ռուսական պատերազմին, Սուլթանական կառավարության կազմակերպած հայկական համատարած ջարդերից ազատվածներն են: Նրանց հայրենիքը՝ Սասուն լեռնաշխարհը հին Հայաստանի (ներկա թրքա Հայաստանի) հնագույն անուններից մեկն է, և նրա ժողովուրդը, սասունցիները, այդ լեռների բազմադարյան բնակիչները: Նրանք համարում են իրենց հայկական էպոսի դյուցազն— հերոս Սասունցի Դավթի ժառանգները. և դեռ ընտանիքներ կան, որոնք Դավթի թոռներն ու ծոռներն են:

Սասունցիները քաջ են, հոգով ու մարմնով առողջ բնավորության տեր մարդիկ են, աշխատասեր, տոկուն, բարոյական խիստ առաքինություններով օժտված:

Թուրք և քուրդ ջարդարար հորդանների դեմ կռվելով, կոտորելով ու կոտորվելով, կարողացան ազատվել բացարձակ բնաջնջումից և հասան ռուսական Հայաստանը: Այժմ Թալինի շրջանի 19 գյուղերը և Աշտարակի շրջանի 2 գյուղերը բացառապես բնակված են սասունցիներով, որոնց թիվը մոտ 10—12000 է:

Համառ ու տոկուն աշխատանքով նրանք այս քարքարոտ լեռնալանջերից ստեղծել են բերրի արտեր և կազմել են բարեկեցիկ և օրինակելի կոլեկտիվ տնտեսություններ:

Այս տարվա հուլիս ամսին ես սասունցիներից հրավեր ստացա հյուր լինելու նրանց մոտ: Սիրով ընդունեցի հրավերը և ամիս ու կես հյուր եղա նրանց մոտ: Եղա 9—10 գյուղերում, եղա նրանց ամառանոցներում՝ (յալլա) լեռան բարձր

արոտավայրերում, ուր նրանք արածացնում են իրենց հոտերն ու նախիրները, և պանիր ու յուղ են շինում: Ընդհուպ ծանթացա կոլտնտեսականների հետ, նրանց աշխատանքի և կենցաղի հետ, մոտիկից ճանաչելով հինավուրց ժողովրդի այս թանկագին մնացորդներին՝ սիրեցի նրանց. հավաքեցի էթնոգրաֆիկ և ֆոլկլորային շատ նյութեր, և շնորհակալ լինելով իմ սիրելի հյուրընկալներից, գոհ բաժանվեցի նրանցից:

Ես ճանաչում եմ մեր շրջանների հին գյուղը և կարող եմ բաղդատություններ անել հին և նոր գյուղի միջև: Ընորհիվ ցարերի հետադիմական պետության վերացման և շնորհիվ սովետական կարգերի և կոլեկտիվ տնտեսության՝ նոր գյուղը անհամեմատ բարձրացել է կուլտուրայես և մտավորայես: Գյուղը նոր դեմք է ստացել — քաղաքատիպ տներ՝ մեծ լուսամուտներով, տախտակամած սենյակներ այլևս բացառություն չեն: Աղջիկները և երիտասարդ տղաները հագնվում են քաղաքացու պես: Ընթերցասեր են և խոսում են գրական լեզվով: Աշխատանքի պրիմիտիվ գործիքները օրեցօր տեղի են տվել ավելի կատարելագործված տեխնիկային: Էլեկտրական լուսավորությունը և նրա ուժի այլ կիրառումները սկսել են անցնել գյուղից գյուղ: Գրագիտությունը համատարած է, ամեն գյուղում դպրոցներ կան, իսկ կենտրոնական գյուղերում լրիվ միջնակարգ դպրոցներ՝ հոյակապ շենքերով:

Մենք պիտի շտապենք ասելու, որ այս աշխարհավեր պատերազմը մեծապես վնասել, ծանր հարվածներ է տվել գյուղերի զարգացմանը՝ բոլոր ասպարեզների մեջ: Երբ գյուղ ես մտնում՝ աչքիդ են զարկում կիսավարտ գեղեցիկ շենքեր, — դրանք դպրոցներ են և կամ այլ ձեռնարկներ: Էլեկտրական ցանցի ծավալումն ընդհատվել է, ջրանցքների, աղբյուրների կառուցումը կանգ առել:

Սասունցիները տեսել են պատերազմի արհավիրքները (1914—1919 թթ.) և այժմ ամբողջ հոգով ձգտում են և աշխատում Հայրենական պատերազմը հաղթանակով պսակված տեսնել՝ որպեսզի կրկին չընկնեն աղետների և ավերածումների մեջ:

Հայրենական պատերազմի կոչին երիտասարդությունն

արիաբար արձագանքել է, և հիմա գյուղերում բացի ծերերից և հիվանդներից ոչ մի առողջ, մարտունակ տղամարդ չի մնացել: Տնտեսական ամբողջ աշխատանքը տանում են կանայք և երեխաները: Տանում են սիրով և եռանդով և այն բարձր գիտակցությամբ, որ իրենց աշխատանքի արդյունքը կհասնի իրենց մարտնչող սիրելիներին կամ նրանց ընկերներին, որոնք ուղղամտաբար կոչում են իրենց և բոլորի ազատության և երջանկության համար:

Աղջիկները, մայրերը իրենց կրծքերի վրա կրում են իրենց եղբայրների և իրենց որդիների լուսանկարները՝ մեղալիոնների մեջ: Նայում են այդ նվիրական պատկերներին, բազմապատկվում է իրենց եռանդը — հնձում են արտերը, կալսում են դեզերը, կալսում են և լցնում պահեստներն ու ամբարները, կթում են կովերն ու ոչխարները, պանիր ու յուղ շինում, մեջքերի վրա դրած ծանր պարկերը ջրաղաց են տանում հացահատիկները: Գիշերները բուրդ են մանում, որ տաք զգեստներ կարեն իրենց ուղղակիների համար: Երեխաները հասկ են հավաքում արտերից և ճանապարհներից, գառներն ու հորթերն են պահում, ջուր են կրում և այլն, և այլն:

Բովանդակ գյուղը հեղինակը սպասում է պատերազմական լուրերին. ճակատից եկած բանակային ճամակը ամբողջ գյուղը կարդում է. հաղթանակի ամեն մի լուր թևեր է տալիս նրանց, ուժ է ներշնչում աշխատելու և ավելի աշխատելու: Եվ հավատով լցված մեր վերջնական հաղթանակի հանդեպ՝ երազում են այն փառավոր, հոյակապ օրը, երբ իրենց սիրելիները հաղթական երգով տուն կդառնան, խաղաղություն բերելով իրենց հետ. — և կավարտվեն թերի շենքերը, կկառուցվեն նոր շենքեր, և ընդհատված կուլտուրայի ընթացքը կսկսվի նորից մտնել իր ստեղծագործ վերելքի մեջ, և բարեկեցությունը կմտնի ամեն մի տան մեջ և ուրախությունը ամեն մի սրտի մեջ:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 28-րդ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Նոյեմբերի 29-ին լրանում է Հայաստանի սովետակա-
նացման 23 տարին:

Ժողովուրդների պատմական կյանքում տեղի են ունենում
այնպիսի իրադարձություններ, որոնք խորտակում են տվյալ
ժողովրդի մինչ այդ իշխող ճակատագիրը և նոր ճակատա-
գիր են կրում՝ նոր պատմություն, նոր դարագլուխ:

Այսպիսի մեծ իրադարձության՝ Հայաստանի սովետակա-
նացման տարեդարձն է, որ տոնում ենք նոյեմբերի 29-ին:
Հայ ժողովուրդը թե՛ Սովետական Հայաստանում, թե՛ ար-
տասահմանում սրտագին խանդավառությամբ դիմավորել է
այս տարեդարձը, իբրև իր ամենամեծ տոնը:

Հայ ժողովուրդը ներկա մարդկության ամենահին և դա-
սական ժողովուրդներից մեկն է. համաշխարհային պատմու-
թյունը նրան վիճակեց աշխարհագրական աննպաստ դիրք
ունեցող մի հայրենիք՝ ընկած հզոր, աշխարհակալ մեծ պե-
տությունների բախման ճանապարհների վրա: Հայ ժողո-
վուրդը դարերով անհավասար կռիվ մղեց իր հայրենիքը
ներխուժող, տիրապետելու ձգտող, ավերող և կոտորող այդ
բռնակալությունների դեմ՝ Պարսկաստանի և Հռոմի, արաբ-
ների և Բյուզանդիայի, սելջուկների, մոնղոլների, օսմանյան
թուրքերի... կյանքի և մահի անողոք կռիվ՝ ազգային գոյու-
թյան, հայրենիքի և կուլտուրայի պահպանման համար, ան-
հավասար այդ դարավոր կռիվի մեջ կորցրեց իր պետականու-
թյունը և ընկավ օտարների լծի տակ, սակայն և այնպես, նա
չկորցրեց ամենից կարևորը՝ ոգին, ազատության սերը,
մարտնչելու կամքը: Ազգային ինքնասիրությամբ երբեք
չհաշտվեց ստրկական վիճակի հետ, մշտավառ կրքով ատեց
տերերին, չընկճվեց երբեք, անխորտակելի հավատով և հույ-

սով նայեց իր արայծառ ապագային և ոգևորված իր էությունը՝ նրա աշխատավոր բազուկը միշտ հերկեց իր հայրենի հողերը, և նրա ստեղծագործ միտքը շարունակեց իր դարավոր կուլտուրայի լուսեղեն ուղին: Նրա հին կուլտուրան, նրա հագարամյակների կենսափորձը թողեցին մի գտվածք, մի բյուրեղացում, մի թանկարժեք նստվածք իր հոգում և իր հայրենիքում: Այդ թանկարժեք նստվածքն այն մեծ նվիրական գանձերն են՝ իր դասական շքեղ լեզուն, իր սքանչելի դուցազնավեպը և հումանիստական աշխարհայացքը և իր հոյակապ ճարտարապետությունը, որոնց նա մշտապես գորգորել էր, պահել ու պաշտպանել անթիվ զոհաբերումներով, իր արյունով և իր կյանքի գնով:

Առաջին իմպերիալիստական պատերազմի ընթացքում սուլթանական և կալգերական ոհմակները բոլոր վայրագությունները ընկան հայ ժողովրդի վրա, իսպառ ոչնչացնելու նրան՝ ոչ միայն նրա ներկա և ապագա գոյությունը, այլև նրա պատմությունը, երկրի երեսից ջնջելու նրա հետքերն ու հիշատակները՝ ոչնչացնելու նրա անցյալը: Այդ ճգնաժամային պահին հայ աշխատավոր ժողովուրդը, ոռու մեծ ժողովրդի օգնությամբ, ապստամբեց ճնշման և շահագործման դեմ և մեր երկրում հաստատեց սովետական իշխանություն: Ահա, այդ փրկարար օրվա տարեդարձն ենք տոնում այսօր:

Հայ ժողովուրդը Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակով վերագտավ իր պետականությունը՝ իր դարավոր տենչերի իրագործումը. իրավահավասար կանգնեց Մեծ Միության հանրապետությունների շարքին: Լենինյան ազգային հանձարեղ քաղաքականությունը նրան ընձեռեց տնտեսական և կուլտուրական զարգացման լայն հնարավորություններ: Այդ քաղաքականությունը դարձավ մեր ժողովրդի հառաջադիմության կովանն ու գրավականը: Բոլոր հոգով նա նվիրվեց հայրենիքի վերածնունդի վսեմ գործին: Դարերով զսպված իր էներգիայի առաջ բացված տեսավ ստեղծելու և բարձրանալու անարգելք ուղիներ:

23 տարիների ընթացքում նա կուլտուրայի բոլոր մարգերում ձեռք բերեց մեծ արդյունքներ՝ պատվաստելով դրանք միշտ մեր հին կուլտուրայի հավերժող գանձերի վրա: Բուժեց

իր քայքայված տնտեսությունը և դրեց նոր, ինտենսիվ հիմքերի վրա: Բացվեցին ֆաբրիկաներ և գործարաններ, ջրանցքները ծաղկեցրին մոնոլիթներից հիշատակ մն լցած անապատները: Կավակերտ և գյուղատիպ շենքերի միջից բարձրացավ նոր Երևանը՝ մեծ պողոտաներով և հոյակապ կառուցվածքներով:

Կրթական մարզում աննախընթաց հառաջադիմություններ ունեցավ Հայաստանը՝ համալսարան իր բոլոր ճյուղերով, կոնսերվատորիա, ակադեմիան, մանկավարժական ինստիտուտներ, անասնաբուժական բարձրագույն դպրոց, ամեն տեսակի ուսումնարաններ և տեխնիկումներ: Համարյա բոլոր գյուղերում դպրոցներ, մոտավորապես 350.000 ուսանող և աշակերտ, մի պատկատելի թիվ, ազգաբնակչության տեսակետից զարմանալի: Նաև հոյակապ օպերա, շքեղ թատրոններ, գրադարաններ, թանգարաններ, կինոստուդիա, կինոներ:

Ողջ Միության մեջ հռչակ վայելող Մատենադարանը, ուր հավաքված են 12.000 հին ձեռագրեր:

Գրքերի հրատարակչության մասին բավական է նշել այն փաստը, որ 23 տարիների ընթացքում շատ ավելի գիրք է լույս տեսել, քան հայ տպագրության օրից մինչև սովետականացումը: Հրատարակվել են գրական-գեղարվեստական-գիտական բազմաթիվ գրքեր:

Հայ ժողովուրդը վայելելով Լենինի մեծագործ կուսակցության ամենօրյա օժանդակությունը, խաղաղության 20 տարիների ընթացքում շարունակում էր իր ստեղծագործ աշխատանքը և իրավացի հավատն ուներ նոր, փառահեղ իրականացումների, երբ վայրագ Հիտլերի կողմից շղթայազերծվեց այս զարհուրելի, աշխարհավեր պատերազմը:

Հայ ժողովուրդն զգաց, որ Հիտլերի հաղթանակով ոչ միայն ոչնչանալու վտանգի տակ են իր կուլտուրական նշվածումները և նոր ձեռք բերած պետականությունը, այլև՝ իր ֆիզիկական գոյությունը: Մեր ժողովուրդը մի մարդու պես կանգնեց Հայրենական պատերազմի դրոշի տակ՝ կովելու նոր մոնոլիթականության դեմ և փրկելու իր հայրենիքը, իր գոյությունը:

23-րդ տարեդարձն էլ, ինչպես մախընթաց երկու տարեդարձները, տոնում ենք պատերազմի պայմաններում: Այս ժամանակաշրջանում հայ ժողովրդի բոլոր բարոյական և նյութական ուժերը կլանված էին և են պատերազմով, ի սպաս դրված նրա անհուն կարիքներից, հաջողությանը, հաղթանակին օժանդակելու համար: Մարտունակ երիտասարդությունը ուզմի զանազան ճակատներում էին և են, իսկ թիկունքի աշխատավորությունը՝ այր և կին, մեծ և պսոիկ լծված են անդուլ, անձնվեր աշխատանքի, հերոսական ջանքեր թափելով՝ ետ չմնալու համար իրենց քաջարի մարտնչող հայրերից, եղբայրներից, որդիներից:

Պատերազմի հետևանքով ընդհատվեց շինարարությունը: Սկսված ջրանցքների՝ Վաղարշապատի, Ախուրյանի աշխատանքները կանգ առան. ընդհատվեցին շատ մեծակառույց ձեռնարկներ, որոնց թվարկումը մեզ շատ հեռու կտաներ, բայց և այնպես, բացարձակ չեղավ այդ ընդհատումը: Այս տարիներում ավարտվեց Լենինականի և շրջապատի գյուղերի համար մաքուր և բարձր որակի ջրի մատակարարումը՝ Լենինականի ջրմուղի կառուցումը և օգտագործումը: Այս բազմազբաղ օրերում կառուցվում է Երևանում Զանգուի (Հրազդանի) վրա մի հույակապ կամուրջ, որ միացնում է գետի բարձրադիր ժայռոտ ափերը միմյանց հետ, և մաս ուրիշ, մանր և երկրորդական կիսավարտ շենքերի լրացումը:

Հայ ուզմիկը սքանչելի կարմիր բանակի շարքերում կռվում է թշնամու դեմ և հերոսանում, կռվում է այն խորին և ճշմարիտ գիտակցությամբ, որ պաշտպանելով Մեծ Միության արևմտյան և հյուսիսային սահմանները՝ նա պաշտպանում է միաժամանակ արևելքի և հարավի սահմանները, որովհետև Մեծ Միության անսասանությունը Հայաստանի անսասանությունն է միանգամայն և Մեծ Միության հաղթանակը Հիտլերի վրա՝ հաղթանակն է միաժամանակ մեր մեծ հայրենիքի բոլոր թշնամիների վրա:

Հայ ժողովուրդը գիտե, որ մոտ է հաղթանակը: Կարմիր մեծագոր բանակը կխորտակե թշնամուն և կվերականգնե խաղաղությունը: Մեր քաջարի մարտիկները հաղթանակով տուն կդառնան, նոր թափով ձեռ կզարկեն աշխատանքին, և

ամեն վտանգից ապահովված՝ հայ ժողովուրդը կդիմն անոր
անոր տնտեսական և կուլտուրական նվաճումների, կբարելա-
վե իր կենցաղը, կհմաստավորե իր ազգային գոյությունը
արվեստով, գրականությամբ՝ համաշխարհային եղբայրության
իդեալներով ներշնչված:

Բոլոր հոգով ցանկանք, որ 24-րդ տարեդարձը տոնենք
խաղաղության օրերում:

1943

ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՐԾԱՆՔՆ ՈՒ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի բացումը համընկնում է Սովետական Հայաստանի 23-րդ տարեդարձի հետ: Այս երկու նշանակալից իրողությունները և տոները հայ ժողովրդի սիրտը ամենուրեք պիտի լցնեն կրկնակի ուրախությամբ և անհուն ցնծությամբ:

Հայաստանը 23 տարիների ընթացքում, շնորհիվ սովետական իրավակարգի և բոլշևիկյան մեծագոր կուսակցության մշտական օժանդակության, մոխիրների միջից բարձրացավ, կառուցեց իր պետականությունը և կազմակերպվեց: Համեմատաբար կարճ ժամանակում կորեց-անցավ զարգացման երկար ուղի: Իր տարեգրքում նշեց հառաջադիմության անթիվ և զարմանալի փաստեր կուլտուրական և տնտեսական գանազան հարցերի մեջ: Ունեցավ իր համալսարանը բոլոր նյութերով, կոնսերվատորիան, նկարչական դպրոցը, մասնագիտական ինստիտուտներն ու տեխնիկումները: Կազմակերպեց թանգարաններ և ճոխ գրադարաններ և այլն, և այլն:

Մայրաքաղաքում՝ Երևանում հավաքվեցին բարձր որակի մտավորականներ, գիտնականներ, արվեստի մարդիկ և պատրաստվեցին գիտական երիտասարդ կադրեր համալսարանի, ինստիտուտների և ակադեմիայի հայկական ֆիլիալի շուրջը: Կատարվեցին տնտեսական և գործնական նվաճումներ գիտության զանազան բնագավառներում և այս ամենը նախապատրաստեցին, հարթեցին ուղին և հասունացրին ակադեմիայի անհրաժեշտությունը:

Սակայն, ինչպես որ Սովետական Հայաստանի իրականացումը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի արդյունքն է, նույնպես էլ հայկական ակադեմիայի հանդես գալը լենինյան ազգային քաղաքա-

կանության արդյունքն է: Առանց այդ պատմական մեծ նախադրյալների, անկարելի էր կենսագործել հայկական ակադեմիայի գաղափարը Հայաստանի տերիտորիայի վրա:

Գերմանական իմպերիալիստների սկսած այս աշխարհավեր պատերազմի օրերում, երբ Հիտլերը բաց թողեց իր արյունարբու հորդաները, խորտակելու Սովետական Միությունը, լծի տակ քաշելու ժողովուրդներին՝ արհամարհելով նրանց ինքնուրույն գոյության իրավունքը, ժխտելով նրանց պատմությունը և կուլտուրական ունակությունները, Հայաստանի ակադեմիայի բացումը մի նոր ջախջախիչ հաղթանակ է խավարակոռ հիտլերիզմի վրա, միաժամանակ սիմվոլիկ և ներշնչող փաստ է մեր Միության անասանության և թե մեր ողջ լուսավոր պետականության:

Հայկական կյանքում ակադեմիայի հիմնարկումը մի հույակապ սկզբնավորություն է՝ հարուստ հեռանկարներով հղի:

Հայ ժողովուրդը ավելի քան երկհազարամյա իր գոյության ընթացքում ստեղծել է իր կուլտուրան, որ դարերի անձնագոհ քաջությամբ պահել, պաշտպանել ու զարգացրել է և հասցրել է մեզ. մենք ստացել ենք մեծ և թանկարժեք ժառանգություններ՝ հին կլասիկ լեզու և նոր աշխարհիկ ճկուն լեզու, հարուստ գրականություն, ճոխ ֆոլկլոր և իմաստուն էպոս, պատկառելի ճարտարապետություն և ժողովրդական սրտագին մելոս:

Մեծ է և բազմակողմանի ակադեմիայի կատարելիք գործը մեր անցյալ ժառանգության գիտականորեն լուսաբանման, վերագնահատման և արժեքավորման տեսակետից:

Նա պիտի համախմբե հայ միտքը և գլխավորե այն: Արդի գիտական մեթոդների լուսարձակի տակ նա պիտի հունավորե հետազոտությունները և ուսումնասիրությունները: Գիտական անսպառ անալիզի բովոյ պիտի անցկացնե մեր բովանդակ կուլտուրան և կազմե նրա սինթեզը՝ հայտարարելով բյուրեղացած, անվիճելի արժեքներ ազգային և համամարդկային իմաստով:

Նա պիտի ճշտե հայ բառերի սեմասիոլոգիան և քերա-

կանությունը, Հայաստանի տոպոնոմիկան պիտի կազմե գիտության բոլոր ճյուղերի ակադեմիկ տերմինոլոգիան:

Նա պիտի լուսաբանե մեր գրականության ղեկավարող գաղափարները և հույզերը, այն, ինչ որ դարերի մեջ եղել է մեր հոգեկան մթնոլորտը: Նա պիտի յուրաքանչյուր գրողի տեղը որոշե մեր գրականության պատմության մեջ:

Նա պիտի որոշե նաև մեր ճարտարապետության ինքնությունը ոճի տեղն ընդհանուր ճարտարապետական արվեստի մեջ, պիտի ցուցաբերե մեր արվեստի կրած ազդեցությունները և նրա հեռագրու ճառագայթումը ուրիշ ժողովուրդների արվեստի վրա:

Նա պիտի սպառիչ հետազոտության ենթարկե հայ պատմությունը՝ շաղկապված համաշխարհային պատմության հետ: Պիտի լուսաբանե մեր պատմության մղիչ ուժերը, նրա պաֆոսը: Պիտի արտացոլե հայ ժողովրդի ձգտումների իմաստը և նպատակը, որոնք կազմում են ժողովրդի պատմական ճակատագիրը:

Նա պիտի մեծ ջանք թափե մաթեմատիկայի, բնական գիտությունների՝ ֆիզիկայի, քիմիայի զարգացման համար Հայաստանում և նրանց գործնական կիրառության, նույնչափ բժշկության, գյուղատնտեսության համար:

Ակադեմիան պիտի սերտ համագործակցության մեջ մտնի եղբայրական հանրապետությունների ակադեմիաների հետ:

Նա ջերմ հարաբերության մեջ պիտի մտնի արտասահմանի հայ առաջադեմ մտքի հետ, պիտի քաջալերե և խրախուսե այնտեղ ապրող հայ գիտնականներին:

Աճեցնելով նոր, երիտասարդ աշխատունակ կադրեր, ընդլայնելով իմացության սահմանները, նա պիտի համընթաց քայլե գիտությունների համամիութենական ակադեմիայի հետ, պիտի աջակցե Միության հզորացմանը և բարձրացմանը, պիտի հասնի՝ մասնակցելու լուծմանը գիտական այն մեծ պրոբլեմների, որոնք դրված են ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի առաջ, ուրեմն և բովանդակ մարդկության առաջ.— այսպիսով, հայ ժողովուրդը կբերե իր միտքը և իր խոսքը ասած կլինի համաշխարհային կուլտուրայի պրոգրեսի մեջ:

Եվ վերջապես, Հայկական ակադեմիայի կուլտուր-պատ-

մական մեծ գործերից առաջնակարգն է՝ բարձրացնել հայ ժողովրդի ինքնաճանաչությունը, խորացնել հայրենասիրությունը, գիտակցական սեր զարգացնել նրա մեջ դեպի իր հայրենիքը, լեզուն, կուլտուրան և հավատ դեպի իր պայծառ ապագան: Ակադեմիան պիտի հանդիսանա մեր ժողովրդի պարծանքն ու հպարտությունը: Նա պիտի լինի մեր կուլտուրայի գագաթը:

Ակադեմիայի հարգելի անդամների վրա ընկած է պատմական խոշոր դեր. սովետահայ հասարակայնությունը և պետությունը նրանց արժանացրել են բարձր կոչումի: Բոլոր ոգևորությամբ և եռանդով պիտի լծվել աշխատանքի՝ արդարացնելու դեպի մեզ տաճած վստահությունը, բայց մանավանդ, հաջողությամբ պսակելու մեծ սկզբնավորությունը:

Այս հանդիսավոր օրը մենք չենք կարող ի լուր ամենի չարտահայտել մեր սրտի անսահման բերկրանքը, որ աշխարհահեղեղ այս պատերազմը վաղուց արդեն բեկվել է ի նպաստ Մեծ Միության:

Մեր քաջարի և պանծալի կարմիր բանակը մեծագույն հաղթանակով, դարերի լուսապսակով կգարդարե մեր հերոսական Էպոխան, և ի կատար կհասցնե մեր նվիրական հայրենիքի անորակելի պայքարը բռնության և չարության ընդդեմ: Ծուտով կբերե նոր ստեղծագործ խաղաղությունը և մեր մեծածավալ հայրենիքի կուլտուրան նոր թափ ու թռիչք կըստանա:

Փա՛ռք մեր անմահ հերոսներին, որ ընկան պարտքի սրբազան դաշտում:

Փա՛ռք մեր աննկուն հերոսներին, որ վանում են վայրագ թշնամուն մեր օջախներից, արտերից ու դաշտերից դուրս:

Բոլոր սրտով ողջունում են Սովետական Հայաստանի գիտությունների ակադեմիայի բացումը:

ՄՂԶԱՎԱՆԶԸ ՎԵՐԶԱՅԱՎ...

Մարդկային հանճարի ամենամեծ գյուտը՝ ոստիոց, բովանդակ երկրագնդի երկայնքով ու լայնքով ավետեց բոլոր ժողովուրդների մարդկային հոգու ամենանվիրական բաղձանքը՝ խաղաղություն:

Չորս տարի շարունակ մենք ամենքս, ուզմի դաշտում ամեն վայրկյան մահվան դեմ հանդիման կանգնած մարտիկները և նրանց մայրերն ու քույրերը, հայրերն ու եղբայրները թիկունքի աշխատանքների մեջ՝ հևիհև սպասում էինք այս մեծ, ամենամեծ իրողությանը:

Վերջապես եկավ խաղաղությունը, եկավ հաղթանակով, բռնությունը, չարությունը հաղթահարելով եկավ խաղաղությունը:

Այսօր այլևս լուեցին մահաբեր թնդանոթները, դադարեցին գործելուց բոլոր մահատիթ գործիքները:

Պատերազմը վերջացավ, այլևս այնպես առատորեն, վայրագորեն չի հնձվում մարդկային կյանքը, ժողովուրդների ծաղիկը՝ երիտասարդությունը:

Մի ծանր բար ընկավ բոլոր մարդկանց սրտերի վրայից. այսօր մարդ ի՛նչքան բախտավոր է շնչում, կարծես այսպիսի գեղեցիկ մայիս երբեք չի եղել երկրիս վրա, արևն ավելի հաշտ ու քաղցր է ժպտում, թռչուններն ավելի անուշ են երգում:

Ո՛վ թափեց մարդկության գլխին այսքան աղետներ, անհուն տանջանքներ, միլիոն-միլիոնավոր զոհեր, ավերումներ, կործանումներ. նոր ժամանակի Աթթիլան՝ Հիտլերը, որ նորագույն տեխնիկայով լիուլի զինված իր հորդաները բաց թողեց Մեծ Միության վրա:

Միության բոլոր ժողովուրդները էլան կանգնեցին իրենց

մեծ եղբոր՝ ոռու ժողովրդի կողքին, և ոռուական անձայր դաշտերում տեղի ունեցան ճակատամարտեր, էպիկական կոիվներ, միլիոնավոր մարտիկների բախումներ, պատմության մեջ եզակի չափերով և ծավալով:

Մեծագոր կարմիր բանակը ծանր տարիների ընթացքում, ահագին տարածությունների մեջ բազմաթիվ ճակատամարտերում հյուժեց, բայքայեց, մաշեց թշնամու կենդանի ուժերն ու տեխնիկան: Մոսկվայի և Լենինգրադի մատույցներում ջախջախեց թշնամուն և, վերջապես, հերոսական Ստալինգրադում փշուր-փշուր արեց նրան: Եվ ապա թշնամուն զարկելով ամենուրեք, մաքրեց ոռուական հողը ներխուժումներից: Կարմիր բանակի հաղթարշավը պսակվեց ֆաշիստների ոճրաբույնը՝ Բեռլինը ծնկի բերելով:

Այսօր Բեռլինի վրա ծփում է Միության դրոշը:

Միության ժողովուրդները ամենադժվարին գործը կատարեցին՝ ֆաշիզմի տապալումը և դեմոկրատիայի հաղթանակը: Մեծ Միությունը՝ իր անթիվ զոհերով ու զոհաբերումներով, իր անպատմելի սխրագործություններով արժանացավ հավերժական փառքի և պատմության շողշողուն բարձունքին:

Հայ ժողովուրդը՝ իր քաջ զավակներով, իր կտրին գորավարներով, իր բոլորանվեր մասնակցությամբ Հայրենական պատերազմում՝ արդար բաժին ունի Միության փառքին և պատմության անմահությանը: Նա հերոսական կարմիր բանակում կոպեց հերոսաբար և հերոսացավ:

Կեցցե՛ մեծ հաղթանակը:

Կեցցե՛ սրբազան խաղաղությունը:

Կեցցե՛ դյուցազնական կարմիր բանակը:

Անշիջանելի փառք մարտի դաշտում ընկած հերոսների:

ՅՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅՍՍՏԱՆԻ 25-ԱՄՏԱԿԸ

Հայ ժողովուրդը ամենուրեք՝ Հայաստանում, Մեծ Միության մեջ և ամբողջ աշխարհում ցրված բազմահազար հայությունը այսօր անհուն ցնծությամբ ողջունում է Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու 25-րդ տարեդարձը, որպես իր նորագույն պատմության ամենանշանակալից տոնը, համազգային հրճվանքի օրը:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման փաստի մեջ հայ ժողովուրդը իրավամբ տեսնում է իր դարավոր երազի իրականացումը՝ իր կորցրած պետության վերահաստատումը, նրա իսկական վերածնունդը:

Պատմական արքիմանների շարքն է մտել վաղուց, որ հայ ժողովուրդը, իր հայրենիքի չափազանց աննպաստ դիրքի պատճառով չկարողացավ մի կաշուն, երկարատև պետություն ունենալ: Նրա հայրենիքը աշխարհակալ հզոր պետությունների կողմից տիրապետելու մշտական օբյեկտ դարձավ, շարունակ ձեռքեձեռք անցավ, ժողովուրդը կոտորվեց, երկիրը հյուծվեց և ավերվեց:

Հայաստանը իբրև ճանապարհների հանգույց, հզոր պետությունների համար ուզմի դաշտ ներկայացավ: Արևելքից և արևմուտքից, հարավից և հյուսիսից իրար դեմ արշավող հորդաներն ու լեգեոնները՝ Պարսկաստանն ու Հռոմը, Արաբիան և Բյուզանդիոնը, մոնղոլներն ու օսմանցի թուրքերը Հայաստանում էին բախվում իրար հետ: Երբեմն Հայաստանը ինքն էլ էր մասնակցում այդ զարհուրելի բախումներին, բայց շատ հաճախ ոտքի կոխան էր լինում և վերստին կոտորվում էր, ավերվում և կողոպտվում: Այդ արշավանքները կրկնվում էին պարբերաբար: Արաբական մի հին պատմիչ շատ դիպուկ է ասել, որ «Հայաստանը մաշվեց խուժող բանակների ձիերի սմբակների տակ»:

Այդ արշավանքների հետևանքով քարը քարի վրա չմը-
նաց Հայաստանում, սակայն անվերջանելի կոտորածները
չկարողացան խորտակել հայ ժողովրդի՝ ապրելու, հարստե-
վելու կամքը, նրա հայրենասիրությունը: Օտար սիրապետու-
թյան ծանր լուծը չկարողացավ ստրկացնել նրան, ընկնել
նրա ոգին և միշտ երագեց իր ազատությունը և իր անկախու-
թյունը: Այդ եղավ հայ ժողովրդի արյունաշաղախ պատմու-
թյան պաֆոսը: Նրա ազգային էպոսի՝ «Սասունցի քաջերի»
էությունը, նրա բանավոր և գրավոր ստեղծագործությունների
մշտաբորբոք կրակը:

Հայ ժողովուրդը անհավասար կոնիվ մղեց հզոր ուժերի
դեմ՝ չունենալով ո՛չ մի պաշտպան, ո՛չ մի օգնող, ինչպես
ունեցան իր բախտակից ժողովուրդները՝ Հունաստան, Սեր-
քիա, Բուլղարիա... Ծատ անգամ փորձեց վերստանալ իր
պետական անկախությունը, բայց նորից և նորից խեղդվեց
իր իսկ արյան մեջ: Սակայն, անմար մնաց նրա կրակը, նրա
ազատության սերը, նրա երագը: Հայ ժողովուրդը հենված իր
հազարամյակների պատմության վրա, հպարտ իր պայքա-
րով և հերոսներով, խանդավառված իր դասական լեզվով և
իր բանաստեղծությամբ, իր շքեղ ճարտարապետությամբ և
իր հինավուրց կուլտուրայով՝ արհամարհեց իրեն իշխող,
բռնակալ նոմանդներին, կերակրեց նրանց իր արդար գու-
թանով, ապրեցրեց նրանց իր արհեստներով և, թշնամու յա-
թաղանի տակ, բայց և այնպես նա չկորցրեց անպարտելի
հավատը իր լուսավոր, ազատ ապագայի հանդեպ:

Եվ հայ ժողովրդի անպարտելի հավատը չխաբեց իրեն:

Երբ առաջին իմպերիալիստական պատերազմի ընթաց-
քին հայ ժողովուրդը նորից անհավասար և մանավանդ օր-
հասակաճ կոնիվ էր մղում իր դարավոր թշնամու դեմ, օգնու-
թյան հասավ ռուս մեծ ժողովուրդը՝ մեծ իր ոգով և իր իդեալ-
ներով: Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունն
իր լույսի մեջ առավ պայքարող հայ ժողովրդին: Իրականա-
ցավ նրա դարավոր երագը, մարմին առավ իր պատմական
հայրենիքի նվիրական հողերի վրա: Կազմվեց Սովետական
Սոցիալիստական Հանրապետությունը՝ իրավա-

հավասար մի անդամը Սովետների Միության մեծ ընտանիքի:

Այս հավերժ անմոռանալի պատմական նշանակալից օրվա 25-րդ տարեդարձն է, որ ազգովին տոնում ենք անհուն ցնծությամբ և խորին գիտակցությամբ: Հայ պետության ըստեղծումով ընդմիշտ գոցվեց հայոց պատմության սև գիրքը, և բացվեց նրա նոր պատմության ոսկե գիրքը: Նոր դարագլուխ ազգային ինքնուրույնության և ձեռնարկության:

Լենինի ազգային հանճարեղ քաղաքականությունը և բոլշևիկյան մեծագործ կուսակցության մշտական օժանդակությունը լայն հնարավորություններ բաց արին հայ ժողովրդի ընդունակությունների առաջ: Դարերով խեղդված էներգիան ազատ ելք գտավ և քնած պոտենցիալը շարժման մեջ մտավ:

Եվ կարճ ժամանակի մեջ կատարվեց մեր պատմության մեջ զուգահեռը չունեցող հարանուն առաջադիմություն՝ կոլտուր-կրթական-գիտական-տեխնիկական ասպարեզներում:

Մեզ շատ հեռու կտաներ թվարկումը այն հրաշքների, որ տեղի ունեցան 25 տարվա շրջանում: Մի նսեմ պատկերացում տալու համար մենք կսահմանափակվենք մի փոքր ծաղկաքաղով:

Հայաստանն ունեցավ իր համալսարանը բազմաթիվ ճյուղերով, իր կոնսերվատորիան, իր նկարչական, երաժշտական, մանկավարժական, ճարտարապետական, երկրագործական և ուրիշ բարձր տիպի դպրոցները, բազմազան տեխնիկումների և դպրոցների մեծածավալ ցանցը, որ ընդգրկում է Հայաստանի գրեթե բոլոր գյուղերը: Ավելի քան 350.000 ուսանող և աշակերտ ներգրավված են կրթական այդ հիմնարկների մեջ:

Թատրոնը նոր թափ ստացավ և ճյուղավորվեց շրջաններում: Շքեղ օպերան և կինոստուդիան կարճ ժամանակում հիանալի արդյունք տվին: Հայաստանի թանգարանները առաջնակարգ տեղ են գրավում Միության մեջ, առանձնապես կերպարվեստի և պատմական հարուստ թանգարանները:

Գրքի հրտարակությունը աննախընթաց չափերի հասավ: Լույս տեսան հայ կլասիկների և նոր հեղինակների բազմա-

թիվ հատորները, հագարավոր գրքեր գիտության և արվեստի վերաբերյալ, թարգմանություններ ուսական և եվրոպական գրականություններից:

Բովանդակ Միության մեջ հռչակ վայելող մեր պետական Մատենադարանում հավաքված են 12 000 հին ձեռագրեր, հնադարյան մագաղաթներ, որոնք հայ ժողովրդի կուլտուրական փառքն են կազմում և մեր մասնագետներին հետազոտությունների անսպառ նյութ են մատակարարում:

Մեր կործանված, հինավուրց քաղաքներում գիտականորեն պեղումներ են կատարվում, և մեր սքանչելի ճարտարապետական կոթողները ուսումնասիրվում են և նոր կառուցումների համար շատ հաճախ օգտագործվում:

Առհասարակ, մեր նոր կուլտուրան զարգանում է և բարձրանում՝ պատվաստվելով հնի և անցյալի վրա. առողջ և օրինաչափ երևույթ, որ միշտ հայտ է գալիս հին կուլտուրա ունեցող ժողովուրդների մոտ: Եվ վերջապես Հայաստանն ունեցավ իր գիտությունների ակադեմիան, որ ծավալում է շատ գնահատելի գործունեություն՝ շնորհիվ իր նշանավոր գիտնականների, որոնց անունները Հայաստանից դուրս, Միության մեջ և արտասահմանում հայտնի են ու հարգված: Ինչ վերաբերում է նյութական-տնտեսական-շինարարական ասպարեզներում Հայաստանի նվաճումներին, իրոք, դրանք շատ-շատ են, և անկարելի է թվել դրանք: Այսօրվա Երևանը զարդարված է գեղեցիկ, հույակապ շենքերով, լայն պողոտաներով, որոնք մայրաքաղաքի տեսք են տալիս նրան: Նա ունի բուսաբանական և կենդանաբանական պարտեզներ, աստղադիտարան, ստադիոններ և այլն: Հայաստանում ամենուրեք կան նոր կառուցումներ՝ ջրանցքներ, ճանապարհներ, հիվանդանոցներ, բուժարաններ, բազմաթիվ ֆաբրիկաներ և գործարաններ:

Հայ ստեղծագործ ժողովուրդը իր կուլտուրական վերելքի մեջ էր, երբ ֆաշիստական Գերմանիան մեր Միության վզին փաթաթեց այս աշխարհավեր պատերազմը: Նա զգաց և ըմբռնեց, որ կործանման սպառնալիքի տակ են գտնվում ո՛չ միայն իր կուլտուրական նվաճումները, այլև իր ֆիզիկական գոյությունը: Նա իր մարտական երիտասարդությամբ, իր ին-

տելիզենցիայով, գյուղացի և բանվոր երիտասարդությամբ միակամ և միասիրտ կանգնեց Հայրենական սրբազան պատերազմի դրոշի տակ:

Արտասահմանի հայերը նույնպես ըմբռնեցին իրենց մայր-հայրենիքին սպառնացող վտանգը, կազմակերպեցին օգնության և հաղթանակի հանձնախմբեր և իրենց նպաստն ու արյունը չխնայեցին մարդկության արդար դատին և իրենց սեփական ժողովրդին:

Հայ մարտիկը քաջաբար կռվեց իր ավագ ուս դյուցազն ժողովրդի կողքին և հերոսացավ սքանչելի կարմիր բանակի հետ: Պարտվեց ֆաշիզմը, փրկվեցին ժողովրդի կյանքն ու ազատությունը:

Այսօր տոնում ենք Հայաստանի վերածննդի 25-ամյակը հաղթանակած խաղաղության հրճվանքի մեջ: Եվ հայ ժողովուրդը այսօր, ավելի քան երբևիցե, հզոր հավատով լի կանգնած է իր լուսավոր ապագայի առաջ, իրեն խանդավառող հայրենասիրական հեռանկարների առաջ:

Նա նույն արիությամբ, ինչպիսին հայտաբերեց ռազմի դաշտում, պիտի բուժի պատերազմից ստացած վերքերը, պիտի շարունակի իր ընդհատված կուլտուր-տնտեսական վերելքը, այսուհետև անարգելք պիտի առաջ ընթանա՝ ներշնչված ազգային և մարդկային վե՛սն իդեալներով:

Թշնամու սրից ազատված, իր հայրենիքից վտարված և աշխարհում ցրված արտասահմանի հայերը այսօր մեզ հետ ցնծության մեջ են. նրանց հայրենակարոտ սիրտը Հայաստանում է, նրանց բաղձանքներն ու հույսերը Սովետական Հայաստանի հայերի հետ են ձուլված: Հայաստանը բոլոր հայերի մայր-հայրենիքն է, ուր ամեն հայ ձգտում ունի ապրելու, վայելելու հայրենիքի քաղցրությունը, աշխատելու և ստեղծագործելու իր հայրենի տան համար, և ո՛չ թե իր ուժերը վատնելու օտարների համար, այլասերման ճանապարհների վրա:

Խոսքս վերջացնելով, մաղթում եմ, որ ծաղկի Սովետական Հայաստանը և բյուր անգամ բոլորի իր պանծալի տարեդարձները:

Այսօր հավաքվել ենք մենք այստեղ ոգեկոչելու հերոս բանաստեղծ Միսաք Մանուշյանին՝ արտահայտելով մեր խորին հարգանքը և հիացմունքը պարտիզանական ինտերնացիոնալ ջոկատների քաջ ղեկավարին, որին 1944 թվի փետրվարի 21-ին Փարիզում գնդակահարեցին գերման ֆաշիստները:

Մանուշյանի մեջ մենք հանդիպում ենք մի իսկական հերոսի՝ օժտված նաև բանաստեղծի ձիրքով: Հերոս՝ իր տարերքով և գիտակցությամբ, հերոս՝ իր գործունեությամբ և իր փառավոր մահով:

Նա 7—8 տարեկան էր, երբ առաջին իմպերիալիստական պատերազմին թուրք բռնապետությունը, գերմանացիներից խրախուսված, աննկարագրելի բարբարոսությամբ հարձակվեց բովանդակ հայ ժողովրդի վրա՝ միլիոնավոր զոհերի արյունով իսկ ջնջելու նրանց՝ հայ ժողովրդի, ազատագրական բաղձանքները, մի բառով՝ հայկական հարցը:

Մանուշյանի հայրը՝ ազնիվ աշխատավոր պարտիզպան, ուրիշ ընթոստների հետ լեռ բարձրացավ կռվելու թուրք ջարդարար ոհմակների դեմ: Մանուշյանը, տակավին մանուկ, իր ընկերների հետ գաղտնի, ռազմամթերք էին հայթայթում իրենց քաջ հայրերին և եղբայրներին: Սակայն ձերբակալվեց հայրը, և կախաղան հանեցին նրան, մայրը փոքրիկ Մանուշյանի աչքի առջև սովամահ եղավ: Այս ամենը տեսավ մանուկ Մանուշյանը, խորապես ապրեց սարսափելի ողբերգության խենթացնող հրեշտությունը և լցվեց վրեժի անմարելի կրակով: Այստեղից արդեն ճակատագրված էր նրա կենսուղին: Վրեժ-խնդիր լինել դաժանագույն թշնամուց՝ իր ծնողների, իր ազգի դահիճներից: Վրեժը կոնց-կոփեց նրա կամքը՝ դարձնելով այն ավելի ամուր, քան երկաթը: Որքան հասակն առնում, աճում էր Մանուշյանը, այնքան աճում էր նրա վրեժը. որքան խորանում և զորանում էր նրա գիտակցությունը, այնքան ավելի զորանում էր նրա կամքը:

Նրա տխուր մանկությունն անցավ Սիրիայի հայ որբա-

նոցներում: Որպես ուշիմ և խոհուն տղա, առաջնակարգ աշակերտ դարձավ և կատարեց գրական առաջին փորձերը:

Իր տխուր մանկությունը լուսավորող և ջերմացնող հուսի առաջին ճառագայթը, որ թափանցեց որբանոցի պատերից ներս՝ դա Խորհրդային Հայաստանի ստեղծման կենսավետ լուրն էր: Այդ եղավ այնուհետև նրա ոգևորության աղբյուրը և գոհաբերման սեղանը:

Տակավին պատանի, նրան տեղափոխեցին Փարիզ, ուր նա պիտի աշխատեր և հայթայթեր իր հացը:

Փարիզ, ի՛նչ խորհրդավոր, հափշտակիչ անուն ազատության պայքարին ճակատագրվածի համար: Փարիզ, դասական հեղափոխության բնավայր, ուր ամեն մի անկյունը ավանդում է ըմբոստության հերոսապատում. ուր սալահատակի քարերը ոտի են կանգնում ընդվզող ամբոխի հետ և հարձակվում թշնամու վրա... Ահա՛ Կառուսելը, ահա՛ Մարատի տունը, ահա՛ Բաստիոնը, Կոմունարների պատը, Ռուտո, Բերանժե, Վիկտոր Հյուգո...

Փարիզի հեղափոխական անցյալը կենդանի ներկա է Մանուշյանի առջև, նա քայլում է փողոցներում հերոսական կերպարների հետ:

Նա գոյության պայքար է մղում, կոպում է ու սովորում, սովորում է և գրում: Ես հաճախ տեսնում էի նրան Փարիզի գրադարաններում՝ գրքերի և թղթերի վրա գլխահակ: Մանուշյանը ուսումնասիրում է կյանքը, այցելում է բանվորական դասախոսությունների և ժողովների: Նա Սովետական Հայաստանի բարեկամների շրջանումն է, երեկույթներում, հանդեսներում: Իր համախոհ ընկերների հետ թերթ է հրատարակում՝ «Ջանք» ապա «Ջանգու»: միշտ Սովետների Միության անձնակեր բարեկամ, կոմունիզմի գաղափարների քարոզիչ և ջատագով:

Մանուշյանը ֆրանսիական կոմունիստական կուսակցության անդամ է. նա իսկական կոմունիստի ողջամտությամբ կարողանում է ազգային և համամարդկային շահերն ու իդեալները ներդաշնակել միմյանց հետ, համատեղել՝ կովել հանուն սոցիալիզմի, կովել հանուն աշխատավոր դասակարգի ազատության, կնշանակել կովել հանուն հայ աշխատավոր

ժողովրդի ազատության: Կովել հանուն Սովետական Միության հաղթանակի, կնշանակե կովել հանուն ոտնահարված ժողովուրդների և իր սիրելի Սովետական Հայաստանի ազատության և երջանկության:

Մանուշյանը արդեն հասուն կամք է և բանականություն, և պարզ է նրա մտապացումը: Նա տեսնում է իր դերը: Նա իր բանաստեղծությունների մեջ արդեն կենսագործել է իր պայքարը. նրա բանաստեղծությունները բացատրություններն են իր հերոսական գործի. նա հոգեպես և տեսականապես արդեն պատրաստ է կովի և մահվան:

Նա գրում է.

Զամիներն անսանձ թող մտրակեն զես,
Շղթայված վագրի գայրույթ է հոգիս,
Կտաղմնավորե ուժովն ամենի
Հսկա փոթորիկն, որ պիտի պայթի:

Եվ պայթեց փոթորիկը: Ֆաշիզմը պատերազմը շրթայագերծեց Եվրոպայում: Սկսվեց համաշխարհային կատաստրոֆան: Ալեկոծվեց միլիոնավոր մարդկանց կյանքը...

Ի՞նչ եղավ Մանուշյանը այս քառսի մեջ... Մանուշը բանտում, Մանուշը ֆրանսիական բանակի կամավոր զինվոր, Մանուշը գերմանական կենտրոնացման ճամբարում, Մանուշը պարտիզանական միջազգային ջոկատների անդամ: Խըրախուսված սովետական պարտիզանների հերոսամարտերից՝ անողոք, կատաղի պայքար ֆաշիզմի դեմ:

Նա ֆաշիզմի մեջ տեսնում էր իր հայրենիքը, իր ծնողներին ոչնչացնող կալգերական գերմանների հին ոգին, ժողովուրդների ստրկացնող չար ոգին, Սովետական Միությունը և իր մտասևեռման կենտրոն Սովետական Հայաստանը ստրկացնել և ոչնչացնել ձգտող հին ոգին:

Ուրեմն գտավ նա իր ազգի և մարդկության թշնամուն, գերմանական ֆաշիզմը:

Հիմա կանգնել է նրան դեմուդեմ:

Ուրեմն պետք է զարկել նրան՝ ամեն տեղ, ամեն ձևով, ամեն միջոցներով. վերջապես եկել է հատուցման ժամը: Եվ 1943 թ. ապրիլին Մանուշը մահաբեր ումբքը, իր սրտի բոլոր խիզախությամբ, նետում է ֆաշիստ սպանների վրա:

Թողում է նրա հերոսական անունը: Այնուհետև նա մի-
ջազգային ինտերնացիոնալ պարտիզանական ջոկատների
ղեկավար է: Տեղի են ունենում զարմանալի սխրագործու-
թյուններ, մեկը մյուսից զարմանալի. նա լեգենդար հերոս է՝
անտեսանելի, անըմբռնելի, սակայն մատուության և դավա-
նանության հետևանքով ձերբակալվում է իր 22 գործակից
ընկերների հետ: Սկսվում է բորենիների դատը, վերջանում է
մահապատիժով:

Մենք սկզբում ասացինք, որ Մանուշյանը իսկական հե-
րոսական նատուրա է: Նրա մեջ ամենից առաջ մենք տեսնում
ենք, որ զգացումը. մտածումը և կամքը միասնական են, ներ-
դաշնակ. մեկը մյուսին շարունակող, որով նա դառնում է ամ-
բողջական՝ առանց երերման, առանց վարանուփի: Կամքը նրա
մեջ տիրական է, կատեգորիկ, հրամայական: Երբ մի անգամ
նա գիտակցաբար վճռում է իր անելիքները, նա այլևս ան-
պարտելի է:

Եվ այս հզոր կամքի շնորհիվ էր, որ նա տոգորված մեծ
իդեալներով. անհավասար ուժերի դեմ պայքարի ելավ և ա-
ռանց ափսոսանքի զոհեց իր մատաղ կյանքը: Նրա տղամարդ
հոգում խեղդվեցին բոլոր եսական, բնազդական մղումները
և հաղթանակեցին հայրենասիրական, աղտորուխտական և ի-
դեալական ֆակտորները: Ինչ որ կատարեց նա, կատարեց
իր ազատ կամքով, առանց արտաքին ճնշումների, միայն իր
հերոսական կամքով:

Եվ հերոսը ամեն պարագայի մեջ, ամեն տեղ հերոս է:
Ահա նա դատարանում՝ խիզախ, հպարտ կեցվածք. ոչ մի ա-
վելորդ խոսք, զուսպ, լցված հերոսի արժանապատվությամբ.
ընկերները նայում են նրան՝ ղեկավարի հայացքին. հայացքով
սաստում է նա, քաջալերում է՝ ամուր լինել, չվախենալ մա-
հից, չշարժել դատավորների գույթը: Երբ հայտնում են մահա-
վճիռը, ոչ մի մկան չի շարժվում նրանց դեմքի վրա. վեհ և
վսեմ կանգնած են նրանք՝ արհամարհանքով լի դեպի դա-
տավորները: Ահա նրա վերջին նամակը՝ կնոջը գրած, մահից
երեք ժամ առաջ. մարդկային հոգու զարմանալի, անջնջելի,
անմահ վավերագիր: Հստակ տրամադրություն, միննույն ժա-

մանակ չափազանց հուզիչ և խորագին զգացումների մի շքե-
ւաղ պոեմա:

Այս զարմանալի անմակից բերում ենք մի կտոր՝ ցույց տա-
լու նրա մեծ հումանիզմը. «...Մի քանի ժամից հետո ես չեմ
լինի այլևս այս աշխարհում: Մենք ժամը երեքին գնդակահար-
ված կլինենք: Սա իմ կյանքում որպես մի արկած թվում է ինձ:

Մահվանս այս պահին ես հայտնում եմ, որ ոչ մի ստեղու-
թյուն չունեմ գերմանական ժողովրդի հանդեպ: Գերմանական
ժողովուրդը և ուրիշ բոլոր ժողովուրդները այս պատերազմից
հետո, որ եթևար չի տևելու, պիտի ապրեն խաղաղության և
կյանակության մեջ:

Բախտավորությո՜ւն բոլորին»:

Այսպես նա մեռավ գեղեցիկ մահով, այն մահով, որ դու-
ցազնական Հելլադան երագում էր և ներբողում. կալոտան-
սիա, — ինչպես կոչում են նրանք, — մեռնել փառքի դաշտում,
ծաղիկ հասակում, մեռնել ի սեր հայրենիքի, ի սեր գաղափա-
րի: Անմահանալով իր ժողովրդի դարերի հիշողության մեջ,
բարձրացնելով ժողովրդի ոգին, հաղթահարելով անասնակա-
նը, գոեհիկը, որ կա մարդու մեջ: Վա՛յ այն ժողովրդին, որ չի
կարող ծնել և կրթել հերոսացման ընդունակ զավակներ: Այդ-
պիսի ժողովրդի վրա հնչում է թաղման տխուր զանգը:

Հայ ժողովուրդը հպարտ է թե՛ անցյալի, թե՛ ներկայի իր
հերոս զավակներով, որոնք կովել են և զոհվել, և պատրաստ
են նույն սիրագործությանը հանուն հայրենիքի և Գվիրական
նպատակների: Հայ ժողովուրդը հպարտ է Մանուշյանով, որի
շիրիմի առաջ գլուխ խոնարհեցին երախտագետ ֆրանսիա-
ցիները և նրա պանծալի անունով փողոց կոչեցին Փարիզում,
մի պատիվ, որ առաջին անգամ տրվում է մի հայի և, շեշ-
տենք, որ նա հայության անունը շատ բարձրացրեց Ֆրան-
սիայի աչքում:

Հայ ժողովուրդը իր պաշտելի հերոսների ոսկե գրքում
սիրով պիտի գրե Միսաք Մանուշյանի անմահ անունը, որով
սերունդները պիտի խանդավառվեն և հպարտանան:

Փա՛րք Մանուշյանի հիշատակին:

22 փետրվարի, 1946

ՀՈԿՏՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՆԾԱԼԻ ՅՑ-ԱՄՅԱԿԸ

Այսօր Սովետների Միությունը և աշխարհի բոլոր բարեկամ դեմոկրատ ժողովուրդները անհուն խանդավառությամբ տոնում են Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության փառապանծ ՅՑ-ամյակը:

Երեսուն տարի առաջ Ռուսաստանի պրոլետարիատը և նրա ազատատենչ ժողովուրդները, բոլշևիկյան կուսակցության և հեղափոխության հանձար Լենինի գլխավորությամբ տապալեցին ցարական միապետությունը և ֆեոդալա-բուրժուական բռնակալությունը և անձայրածիր Ռուսաստանում հաստատեցին սովետների իշխանությունը՝ ստեղծելով Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը:

Հոկտեմբերյան աշխարհացունց հեղափոխության շնորհիվ ահա ՅՑ տարի է, որ երկրագնդի մեկ վեցերորդ մասի վրա գոյություն ունի մի նոր հասարակարգ՝ համաշխարհային պատմության մեջ առաջին անգամ հանդես եկող մի նոր պետականություն՝ սոցիալիստական գաղափարախոսությամբ և սոցիալիստական պրակտիկայով՝ նպատակակետ ունենալով կոմունիզմի վերջնական հաղթանակը:

Ստեղծվեց նոր դեմոկրատիա՝ սովետական իմաստուն կոնստիտուցիայով խարսխված, ուր ցարերի հին կաշարությունը կազմող բոլոր ժողովուրդները իրավահավասար՝ առանց ռասայական խտրությունների, հիմնեցին իրենց ազգային հանրապետությունները և ղեկավարված լենինյան ազգային ստեղծագործ քաղաքականությամբ, ստացան կուլտուրական և տնտեսական զարգացման բոլոր հնարավորությունները, միշտ զորավիզ ունենալով ժողովուրդների եղբայրական դաշն համագործակցությունը:

Եվ այսպես, հայ ժողովուրդը երկարատև տառապանքնե-

րից հետո, շնորհիվ Հոկտեմբերյան հեղափոխության և ուսեղբայրական մեծ ժողովրդի օժանդակության, ձեռք բերեց իր հարազատ պետականությունը հայրենի հողի վրա և սկսեց աննախընթաց իր վերելքը կուլտուրայի և տնտեսության մեջ բնագավառում:

Նա վառ հույսերով նայում է ապագային, որ աշխարհում ցրված տարագիր հայերը պիտի հավաքվեն հայրենիքում՝ միասին կերտելու սոցիալիստական երջանիկ կյանքը:

Սովետների հաստատման առաջին վայրկյանից սկսած հերոսական ջանքերի գնով Մեծ Միությունը ձեռնարկեց մեծածավալ երկրի հիմնական վերանորոգման և վերակառուցման հսկայական գործին: Անթիվ խոշոր նոտներ հաղթահարելու և հնգամյակների փայլուն կենսագործումների հետևանքով սոցիալիստական երիտասարդ պետությունն ունեցավ հոշակապ, խոշոր ֆաբրիկաներ, բազմահարուստ ինդուստրիա և բարձր, արդիական տեխնիկա ու սոցիալիստական գյուղատնտեսություն:

Մեծ Միությունը շնորհիվ իր գիտության և կուլտուրայի բարձր մակարդակի, բազմազգ ժողովուրդների հայրենասիրության, շնորհիվ երկրի բնական ամեն տեսակի հարստությունների, առաջավոր տեխնիկայի և քաջարի բանակի, դարձավ առաջնակարգ պետություն՝ հզոր, առաջադեմ, ոգեշնչված պայծառ հեռանկարներով:

Սովետների Միությունը իր կենսունակության հարցում շատ անգամ է քննություն բռնել և գերազանցապես հաջողել. նորակազմ, տակավին չամրացած, նա շախչախեց հակահեղափոխությունը և օտար երկրների զինված ինտերվենցիան: Սակայն, իր հզորությունը և անպարտելիությունը նա փառապորապես ապացուցեց Հայրենական պատերազմում՝ Հիտլերի տեխնիկապես հարուստ զինված հորդանների դեմ քաջաբար մարտնչելով:

1941 թ. Մոսկվայի պատերի տակ մեն-մենակ փշրեց նա ֆաշիստական դիվիզիաները և Ստալինգրադից մինչև Բեռլին ետ շարտեց՝ փշուր-փշուր անելով հիտլերյան բանակները: Այսպիսով Միությունը նվաճեց անթառամ փառք պատմության բոլոր դարերի համար և փրկեց շատ և շատ ժողո-

վուրդների գոյությունը ֆաշիզմի ռեակցիայի մեջ խավարելուց և ոչնչանալուց: Սակայն, այս հանդիսավոր պահին մենք կանգնած ենք նշանակալից մի նոր իրադրության հանդեպ: Միությունը ահեղ պատերազմների կործանումներից, ավերմունքներից հետո ձեռնամուխ եղավ ստեղծագործ խաղաղ աշխատանքի, երկրի քայքայված տնտեսությունը վերականգնելու և անհամար հրդեհիված, քանդված գյուղերն ու քաղաքները և գործարանները վերաշինելու դժվարին գործին: Չորրորդ հնգամյա պլանի հաջող կենսագործումները նախատեսում են մինչև 1950 թվականը բուժելու մեր կրած ծանր վերքերը և երկրի տնտեսությունը հասցնելու Է՛լ ավելի բարձր մակարդակի:

Բայց համաշխարհային խաղաղությունը վտանգի տակ է: Սովետների Միությունն իր ծննդի առաջին քայլերից խաղաղության է ձգտել և հանդիսացել է համաշխարհային խաղաղության հզոր պաշտպան: Սակայն իմպերիալիզմը առանց պատերազմի չի կարող ապրել և հարստնել. միայն պատերազմի միջոցով նա կարող է ժողովուրդներին ստրկացնել, գաղութացնել և շահագործել:

Երեկվա մեր դաշնակիցները՝ Անգլիան և Ամերիկան այսօր աշխարհի առաջ ներկայանում են իրենց իսկական հոգով՝ ընչաքաղց, շահամոլ և թշնամի հումանիստական կուլտուրային և խաղաղասեր, դեմոկրատ մարդկությանը:

Նոր մղձավանջ են նյութում աշխարհի գլխին, ավելի մոայլ և դաժան, քան հիտլերիզմը. իմպերիալիստական-բուրժուական, նեոֆաշիստական ռեակցիան, որ ձգտում է աշխարհակալության, միահեծան հեգեմոնիայի: Դոլլարով առևում են ժողովուրդների սուվերենիտետը և լծում իրենց տմարդի քաղաքականության կառքին:

Նոր ահեղ պատերազմի հրձիգները զինում են սոցիալիստական երկրի դեմ՝ վաճառված Հուճաստանին, զինում բարբարոս Թուրքիային, որը պատմության մեջ աշխատավոր ժողովուրդների արյունը ծծողի և կոտորողի կլասիկ հոչակ է վայելել, և որոնում են այլ վաճառվող արկածախնդիրների, երկրագունդը նորից թաթախելու արյան մեջ՝ հանուն կապիտա-

լիզմի աննորմալ գերիշխանության: Ո՞ր է գնում քաղաքակրթությունը. ո՞ր է գնում մարդկությունը...

Սակայն Սովետների Միությունը կանգնած է իր վեհ սկզբունքների դրոշը ձեռին, անհողդողդ, հավատարիմ իր պատմական միսիային, որպես խաղաղության պատվար ու պաշտպան, ճնշված, հարստահարված ժողովուրդների ազատության, համաշխարհային եղբայրության գաղափարակիր մարտիկ: Մենք երկյուղ չունենք. ապագան մեր բարեկամն է: Աշխատավոր, դեմոկրատ ժողովուրդները մեզ հետ են. մեզ հետ է պատմության տրամաբանությունը: Ե՛վ մենք, և՛ մեր սերունդները շատ և շատ անգամներ ցնծությամբ պիտի տոնենք Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության տարեդարձները:

Կեցցե՛ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը:

ՈՂԶՈՒՅՆ ՄՈՍԿՎԱՅԻ ՓԱՌԱՊԱՆԾ 800-ԱՄՅԱԿԻՆ

Մոսկվայի պատմությունը բովանդակ ուս ժողովրդի և Ռուսաստանի պատմությունն է: Անբաժան են մեկը մյուսից:

Մոսկվան, կամ, ըստ 12-րդ դարի տարեգրի, Մոսկովը, 1147 թվից, երբ առաջին անգամ հիշատակվում է նրա անունը, մի փոքր բնակավայրից հետզհետե վերածվում է իշխանաձևիստ քաղաքի: Ընդհանրիվ իր աշխարհագրական կենտրոնական դիրքի, նա դառնում է կենտրոնաձիգ մի անպարտելի ուժ, որ հավաքում է իր մեջ և իր շուրջը ուս ժողովրդին, ուս հողերը և դառնում է քաղաքամայրը ուսական հզոր պետության եվրոպական և ասիական մեծածավալ տարածությունների վրա:

Մոսկվան ո՛չ միայն ուս պետության ուժի, անկախության, ուս ժողովրդի միության սիմվոլն է, այլ և նրա ստեղծագործ հանճարի, կուլտուրական նվաճումների:

Մոսկվայում դեռ 14-րդ դարից կուտակվել են ուս արվեստի գործեր, նկարներ, ֆրեսկոներ: Մոսկվայում է կերտվել ուս ճարտարապետական ոճը, ինչպես, օրինակի համար՝ զարմանալի հեքիաթագեղ Վասիլի Երանելիի տաճարը, Կրեմլի աշտարակները, Բաժենովի և Կոզակովի հոշակապ կառուցումները:

Ռուս գիտության և արվեստի բոլոր սկզբնավորումները Մոսկվայից են ծագել: Տպագրությունը առաջին անգամ այնտեղ է սկսվել և առաջին գիրքը այնտեղ է տպվել 1564 թվին: Ինչպես և առաջին լրագիրը այնտեղ է լույս տեսել 1703 թվին և առաջին թատրոնը այնտեղ բացվել: Առաջին ուս համալսարանը այնտեղ է հիմնում մեծ լուսավորիչ գիտնական Լոմոնոսովը: Այդ անդրանիկ համալսարանը վերափոխիչ մեծ դեր է կատարել ուս կուլտուրայի զարգացման մեջ. այդտե-

դից են սնվել ռուս մտքի առաջավոր գերկայացուցիչները, մեծ բանաստեղծներ, վիպասաններ, գիտնականներ, հասարակական անձնավեր գործիչներ:

Մոսկվայում է հավաքվել և հրատարակվել ռուսական հարուստ ֆոլկլորը՝ բիլիաններ, հեքիաթներ: Մոսկվան է կերտել ռուս գրական լեզուն, որ բյուրեղացել է բազմաթիվ բարբառներից և դարձել տիրապետողը: Մոսկվայում են ստեղծագործել ռուս ժողովրդի գրական մեծագույն վարպետները, ռուս ժողովրդի ձգտումների, խոհերի հանձարեղ արտահայտիչները՝ Կոիլով, Գրիբոյեդով, Պուշկին, Գերցեն, Լերմոնտով, Դոստոևսկի, Մայկով, Օստրովսկի և ուրիշները:

Նույնիսկ պետության մայրաքաղաքը Պետրոգրադ տեղափոխելուց հետո դարձյալ Մոսկվան է մնում առաջնորդողը ռուս մտքի, առաջնակարգ գործունը ռուս կուլտուրայի համար:

«Մոսկովյան գրականությունը բարձր է պետերբուրգյանից, ասում է Պուշկինը,— նրա գիտնականությունը, արվեստների սերը և տաղանդները անվիճելիորեն Մոսկվայի կողմն են»: Մոսկվան ռուսական կուլտուրայի մայրն է, ռուս ժողովրդի սիրտը և ուղեղը:

Հայ ժողովուրդը տակավին Իվան 4-րդի ժամանակ իր հայացքը հստակ էր Մոսկվային և իր բախտը ձգտում էր կապել նրա հետ. 19-րդ դարի սկզբում միայն իրականացավ նրա փափագը և մտնելով Մոսկվայի համաստեղության մեջ, սկսեց այնտեղից ստանալ լույս, գիտություն, նոր կուլտուրա: Այնտեղ բացվեց Լազարյան ճեմարանը, այն նշանավոր կրթական հիմնարկը, որն ընծայեց հայ ժողովրդին ռուսական կրթությամբ և արվեստով զինված շատ մտավոր մշակներ, ընտիր ուսուցիչներ, այնտեղ սնվեցին մեր լիբիկայի արտագին երգիչները՝ Սմբատ Ծահագիզ, Հ. Հովհաննիսյան, Վահան Տերյան: Մոսկվայում հրատարակվեց Սո. Նազարյանի և անմահ Նալբանդյանի «Հյուսիսափայլ» գրական հանդեսը՝ ներշնչված այն էպոսայի դեմոկրատ, ազատատենչ գաղափարներով, որոնք հայ կյանքը հեղափոխեցին:

Հոկտեմբերյան մեծագործ հեղափոխությունը նոր սկիզբ բացեց Մոսկվայի դարերի հարուստ պատմության մեջ:

Մոսկվան դարձավ սոցիալիզմի առաջին մայրաքաղաքը համայն երկրագնդի վրա:

Սոցիալիստական արդարության և մարդկային սոցիալիստական փոխհարաբերությունների նոր աշխարհը, որ իրականացրեց անմահ Լենինի հանճարը: Նոր հեղափոխական Մոսկվան դարձավ Սովետական Միության՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության մայրաքաղաքը, որի հզորության հետ նրանք բարձրանում են և հզորանում, լուսավորվում և զարգանում:

Հարե՞նական պատերազմում Սովետների Միությունը աննախընթաց հաղթանակ տարավ ֆաշիզմի վրա՝ դա սոցիալիզմի հաղթանակն էր: Սովետական Մոսկվայի պաշտպանությունը սովետների պաշտպանությունն էր:

Միության բոլոր ժողովուրդները ոռու մեծ ժողովրդի հետ իրենց արյունը բերին պաշտպանելու նվիրական Մոսկվան՝ Միության կուլտուրան, նրա վեհ նպատակները, համամարդկային պրոգրեսը և իդեալները: Եվ այս նվիրական զոհաբերման պատճառով Մոսկվան ավելի ևս թանկագին է դարձել մեզ համար, բոլոր ժողովուրդների համար:

Մոսկվան սուկ Միության մայրաքաղաքը չէ, նա աշխարհ-քաղաք է, մեծահարուստ արսեճալ, որից պայքարի զենքեր են ստանում բոլոր նրանք, ովքեր ձգտում են տիեզերական խաղաղության, արդարության և երջանկության:

Մոսկվան նոր մարդկության աշխարհ-քաղաք է, իրանդավառ՝ գալիք հաղթանակներով, անպարտելի՝ իր կամքով, անշեղելի իր ընթացքով՝ լուսավոր ապագայի մեջ:

Բոլոր սրտով ողջունում են մեծահամբավ Մոսկվայի 800-ամյակը և ցանկանում են պանծալի հորելլարին հավերժական փառք և հզորություն:

ԽՈՍՔ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՅՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՆՅԵՐԱՆՍՈՒՄ

Թանկագին ընկերներ.

Խաղաղասերների Համամիութենական կոնֆերենցիային, որ տեղի է ունենում Մեծ Միության հզոր մայրաքաղաքում՝ Մոսկվա, ես, որպես հայկական պատվիրակության անդամը, պատիվ ունեմ բերելու հայ աշխատավորության և մտավորականության ողջույնները, և մանավանդ հայ ժողովրդի զգացմունքներն ու մտածումները պատերազմի և խաղաղության նկատմամբ:

Հայ ժողովուրդը, թերևս աշխարհի բոլոր ժողովուրդների մեջ ամենից շատ վնասված, տուժած, տանջվածն է, բացարձակ զոհը անընդհատ պատերազմների, որոնք կատարվել են իր հայրենիքում և նրա շուրջը: Հայաստանը՝ աշխարհագրական դժբախտ ճակատագրով ընկած էր աշխարհակալ, մեծ պետությունների բախման ճանապարհների վրա՝ Հռոմի և Պարսկաստանի, արաբների, սելջուկների և Բյուզանդիայի, ցարական Ռուսաստանի և օսմանյան թուրքերի միջև, նրանց զարհուրելի պատերազմների մեջ, Չինգիզ-խանի, Լենկ-Թեմուրի, Ծահ-Աբբասի արշավանքների տակ, ջարդվել է, կոտորվել, կողոպտվել, ավերվել, գերեվարվել, նվազել է և տասնորդվել և ցրվել է աշխարհով մեկ:

Ինչպես մեր ժամանակ, հենց առաջին իմպերիալիստական պատերազմում, Գերմանիայի խրախուսանքով և Անտանտի պետությունների լուր համաձայնությամբ սուլթանական Թուրքիան կոտորեց հայ ժողովրդին: Կողոպտելով վանեց հազարամյակների իր հայրենիքից դուրս մի հին, դասական ժողովրդի, և դեռ Թուրքիան չավարտած իր քաղաքական ծրագիրը՝ ամբողջ հայության բնաջնջումը, վրա հասավ փրկարար կարմիր բանակը և կանգ առավ արյունոտ հունձը:

Մահամերձ Հայաստանը դարձավ սովետական ժողովուրդների ընտանիքի մեջ որպես հավասար անդամ: Երե-

սուն տարուց ի վեր նա իբրև Սովետական Սոցիալիստական հանրապետություն, վայելում է օգնությունն ու պաշտպանությունը ոռու մեծ ժողովրդի և եղբայրական հանրապետությունների: Վայելում է սովետական կարգերի բարիքները. բարձրանում է և հզորանում Սովետական Միության հետ:

Ստեղծագործ խաղաղության մեջ նա բուժում է իր ծանր վերքերը՝ 1915—20 թվականների աղետներից, կոտորածներից ստացած, վերաշինում է իր ավերված հայրենիքը և լեհինյան ազգային քաղաքականության լույսի տակ զարգացնում է ձևով ազգային իր կուլտուրան և բոլոր սրտով մասնակցում է սոցիալիզմի կառուցմանը, մարդու և աշխատանքի ազատագրմանը և հումանիզմի հզորացմանը:

Հայ ժողովուրդը պատմությունից ընդհանրապես, և իր պատմությունից մասնավորապես, անհերքելի իմաստություն է ձեռք բերել, որ պատերազմները մեծ աղետներ, քայքայումներ, անչափելի վնասներ են բերում և՛ մեծ ազգերին, և՛ ամբողջ մարդկությանը: Խավարի և ռեգրեսի մեջ են գցում քաղաքակրթությունը, իսկ փոքր ժողովուրդներին բերում են միայն կործանում, ոչնչացում, մահ... Խաղաղությունն է միայն, որ բերում է կյանք և բարիք, լույս և երջանկություն:

Եվ հայ փորձված ժողովուրդը իր ողջ էությանը, իր բոլոր անկեղծությամբ միշտ խաղաղության պաշտպանն է և թշնամի պատերազմի:

Ֆաշիզմին ջախջախելուց հետո, որին իր հերոսական մասնակցությունը բերեց նաև հայ ժողովուրդը, բոլոր տառապած ժողովուրդները հավատացած էին, որ պատերազմները եթե չվերացան ընդմիշտ, գոնե սկիզբ է առնում մի երկարատև խաղաղության շրջան, մարդկության ընդհանուր բարօրության մի նոր դարագլուխ, ազգերի եղբայրացման, հումանիստ, դեմոկրատ քաղաքականության նվիրական էպոխա: Սակայն իմպերիալիզմը՝ կապիտալիզմը, ե՞րբ է ձգտել խաղաղության, մարդկության: Նրա տարերքը պատերազմն է, նրա համաշխարհային շուկան՝ ժողովուրդների ջարդն ու թալանը, շահագործման տիրապետությունը, գաղութների ստրկացումը... Եվ այսօր մարդկության գլխին կախված է մի նոր ավելի արյունահեղ պատերազմի սար-

տանի, մի զարհուրելի կոշմար՝ անգլո-ամերիկյան իմպերիալիզմի բռունցքը՝ զինված մահաբեր գազերով, միկրոբներով, ատոմային ռումբերով: Երեկվա բարեկամը՝ Ամերիկան, երեկվա իր անձնագրի դաշնակցի՝ Սովետական Միության դեմ դանակ է սրում. պլացդարմներ գրավում, ռազմական աերոդրոմներ է շինում, դրամի ուժով ժողովուրդներ է բաշում իր ետևից, գնում և նրանց անկախությունը, զինում, լարում է Սովետների Միության և դեմոկրատ ժողովուրդների դեմ, թշնամական օղակով շրջապատում է նրանց: Կաշառում է աշխարհում ցրված սրիկաներին, աֆերիստներին, ամեն տեղ սնուցում է ռեակցիա և ռեակցիոներներին. սրում է այդ գիշատիչների, ոճրագործների ատամները՝ աշխարհը ձգելու անհուն թշվառության մեջ, աշխարհավեր պատերազմի մեջ:

Դողարի ուժով և դողարի համար:

Ամերիկացին դողարին դողարից ավելի արժեք է տալիս. ամերիկացու համար դողարը միատիկա է, տիեզերական սուբստանցիա, դողարոլատրիա, ամենակարող, աստվածագոր... Սակայն այս ամենակարող դողարն անկարող եղավ ազնիվ մարդկանց, հումանիստական իդեալներ ունեցող ժողովուրդներին գնելու: Անկարող եղավ բարոյական ուժի հանդեպ: Խաղաղության անխորտակելի ժայռին դիպավ և փշրվեց:

Բայց Ամերիկան գիտե Հիտլերի լեզվով էլ խոսել՝ մարդկությանը «նոր կարգ տալ՝ բարոյական արդար նորմաներ, նոր աշխարհայացք»:

Ամերիկան նոր կարգ է տալիս: Որտեղի՞ց է հանում նոր պատերազմների տախտակները—միլիոնատերերի բանկերից, մոնոպոլիստների կասսաներից, Լինչի կոդեքսից:

Մարդը տալիս է այն, ինչ որ ունի. ի՞նչ ունի Ամերիկան: Նրա ունեցածը Հիտլերից ստացած այն կոտորած սուրն է, որ հենց կոտրվել է Հիտլերի սրտում:

Ես երբ աչքերս բացի, աշխարհում ո՛չ տելեֆոն կար, ո՛չ կինո, բայց կյանքիս ընթացքում տեսա մարդկային հանճարի սխրագործություններ՝ հիվանդությունների բուժման

գարմանակի գյուտեր, իքս-նատագայթ, ավտոմոբիլ, սավառ-
նակ, ուադիո և ատոմային էներգիայի ձեռքագատումը:

Այս սքանչելի գյուտերը վկայում են մարդկային հան-
ճարի գիտակցությունը տարերքի վրա, հաստատում են
մարդկության հաղթանակը բնության ուժերի վրա և խոս-
տանում են աշխարհին երջանկություն և բարօրություն:

Բայց Ամերիկայի պատերազմի հրձիգները, ագրեսոր-
ները, սպառնում են ժողովուրդների ստեղծագործ աշխա-
տանքին, ժողովուրդների ազատությանը, ուզում են շղթա-
յից արձակել մի զարհուրելի պատերազմ, ուր նորից տաս-
նյակ միլիոն երիտասարդներ և ժողովրդյան զանգվածներ
ռումբերի տակ կտոր-կտոր լինեն, սովով և համաճարակնե-
րով, որբերով և այրիներով լցվեն գյուղերն ու քաղաքները,
որպեսզի կարողանան շահել, հարստանալ, տիրապետել և
իրենց իմպերիալիստական տիրապետությունը հարստե
դարձնել:

Մենք կոչ ենք անում ամբողջ երկրագնդի առաջավոր
մարդկանց և կանանց, դեմոկրատներին և հումանիստներին,
սրտին ու մտքին՝ բոլոր նրանց, որոնց համար թանկ են
մարդկային կյանքը, մարդկային հանճարը, համախմբվել
համաշխարհային խաղաղասիրական շարժման մեջ: Մենք
կոչ ենք անում բոլոր դեմոկրատ և ազատաբաղձ ժողո-
վուրդներին Սովետների Մեծ Միության հետ միասին, որ խա-
ղաղության հզոր պաշտպանն է, պայքարելու պատերազմի
հրձիգների ոհմակի դեմ, չթողնելու, որ նրանք իրենց եսա-
կան շահերի համար աշխարհը մխրճեն նոր արյունահեղու-
թյունների և կործանումների մեջ, որ անարգելք խաղան
մարդկության ճակատագրի հետ:

Մենք խաղաղություն ենք ուզում, որովհետև սիրում ենք
մարդկությունը, սիրում ենք մեր մայրերին և մեր երեխանե-
րին, մենք խաղաղություն ենք պահանջում, և թող իմանան
պատերազմի հրձիգները, որ մենք կարող ենք նրանց խելքի
բերել, եթե նրանք չուզենան լսել խղճի և բանականության
ձայնը, նրանց ուժի դեմ բարձրացնելու մեր վեց հարյուր
միլիոն մարդկանց հաղթելու կամքն ու հզորությունը, հա-
նուն խաղաղության ամբողջ աշխարհի մեջ:

**ՊԱՅՔԱՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՐԶԻԳՆԵՐԻ ՉԵՄ՝
ՀՍ.ՆՈՒՆ ԱՌԱՋԱԳԵՄ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ**

Երկրորդ համաշխարհային պատերազմը նոր վերջացած, ռազմադաշտում ընկած զինվորների գերեզմանների առաջին կանաչը դեռ նոր բուսած՝ Ամերիկայի և Անգլիայի իմպերիալիստները մարդկության առաջ ցցեցին երրորդ համաշխարհային պատերազմի ուրվականը:

Միլիոնավոր երիտասարդ կյանքերի ոչնչացումը, միլիոնավոր որբերի և այրիների թշվառությունը, սովն ու կարիքը, անթիվ գյուղերի և քաղաքների հրդեհումն ու ավերումը, այս աներևակայելի աղետը չհագեցրեց կապիտալիստների, մոնոպոլիստների ծարավը, ընդհակառակը՝ նրանք ախտասացին, որ վերջացավ պատերազմը, որը չափազանց նպաստավոր պայմաններ է ընձեռում նրանց հարստանալու, միլիարդներ դիզելու:

ԱՄՆ-ի իմպերիալիզմը հենված տեխնիկայի և դրվարի ուժի վրա՝ տենչում է մարդկությունը նետել մի նոր, ավելի մեծ աղետի մեջ՝ համաշխարհային տիրապետության համար:

Սակայն նրա այդ հրեշային ցանկության դեմ կանգնած է մի գերհզոր ուժ, մի նվիրական զորություն՝ խաղաղության գաղափարը, խաղաղության տենչն ու սերը, խաղաղության համար վճռականորեն պայքարելու պատրաստակամությունը, որը բխում է բոլոր աշխատավոր ժողովուրդների սրտից՝ բովանդակ երկրագնդի բոլոր կողմերում:

Ամբողջ աշխարհի խաղաղության համար ստեղծագործ, հումանիստական խաղաղության համար պայքար է ծավալված ամենուրեք՝ պայքար պատերազմի հրձիգների դեմ, անգլո-ամերիկյան ագրեսորների դեմ և նրանց գործակից, դրվարով գնված մանր ու խոշոր ռեակցիոն պետու-

թյունների դեմ: Ամբողջ աշխարհի խաղաղության պայքարն՝ իրերի տրամաբանությամբ գլխավորում է Սովետների Մեծ Միությունը, որը պատմության ասպարեզ մտնելու իր առաջին իսկ օրերից խաղաղության ջատագով էր և նրա համար մարտնչող:

Սովետական Միությունը՝ խաղաղության այդ արթուն պահակը, ժողովուրդների համագործակցության դարբնոցն է, աշխատավորների բարօրության ստեղծողը: Նա այդ վեհ նպատակներին է ծառայեցնում իր ձեռքի տակ եղած հզոր ուժերը, իր ծաղկող գիտությունը, որը նրան հնարավորություն տվեց տիրապետելու ատոմային զենքի գաղտնիքին: Սակայն Սովետական Միությունը մնում է ատոմային զենքն արգելելու իր հաստատ որոշման վրա՝ ատոմային էներգիան խաղաղ նպատակներով օգտագործելու համար:

Խաղաղության գործում Սովետական Միությանն աջակցում են նոր դեմոկրատիայի երկրները, ազատատենչ ժողովուրդները և աշխատավորական զանգվածները, առանց ազգերի, ցեղերի և դավանանքների խտրության, միլիոնավոր մարդիկ, հարյուր միլիոններ:

Մոնոպոլիստական, իմպերիալիստական Ամերիկայի և նրա բլոկի ոտքի տակից հողը սահում է. գազագում է ամերիկյան գանգատերը, սպառնում է խաղաղությանը, փրփուրը բերանին հայտնում է աշխարհին, որ գտել է մի թույն՝ եղած թույներից հիսուն անգամ ավելի ազդեցիկ, որի 150 գրամը, խառնված ջրմուղի ջրին, կարող է սպանել 70 հազար բնակիչ ունեցող մի քաղաք: Զինված այդ թույնով, նաև ատոմային ռումբերով՝ սպառնում է ջնջել ժողովուրդներին, որոնք չեն ցանկանում հարստացնել նրա անհատակ քսակը:

Ամերիկյան այսօր դոլլարի ուժով գլխավորում է համաշխարհային ռեակցիան և անցյալով, պատմությամբ հարուստ Անգլիային, Ֆրանսիային, Իտալիային քշում է դեպի միջնադար, դեպի վայրենացում, դեպի նախամարտ... Նա իր տեխնիկան ո՛չ թե գործադրում է թշվառությունը, հիվանդությունները վերացնելու, բնության ուժերը մարդկանց երջանկությամբ ծառայեցնելու համար, այլ ձգտում է հումա-

նիստական կուլտուրան ոչնչացնել և ժողովուրդներին քաշել դոլլարի լծի տակ:

Սակայն պատմության ընթացքն այլ է. բոլոր իմպերիալիստների, աշխարհակալների վերջը պարզ է՝ անկում և մահ: Խելակորույս վազքը պատերազմի ետևից մոտեցնում է նրանց մահը:

Խաղաղության գործը բոլոր մարդկանց, բոլոր ժողովուրդների գործն է, ո՛ւմ համար թանկ է իր հայրենիքի բարգավաճումը և ազատությունը, իր մայրերի և երեխաների կյանքը: Բայց քի՛չ է խաղաղություն ցանկանալը, խաղաղությունը պետք է նվաճե՛լ և նվաճել պայքարո՛ւմ:

Խաղաղության բարեկամ բոլոր ժողովուրդների միահամուռ կամքը խելքի կբերի Ամերիկայի ոճրամիտ ավանտյուրիստներին:

Խաղաղության կողմնակիցների համաշխարհային կոնգրեսն իր Մշտական կոմիտեի երրորդ սեսիայում ընդունված կոչով պահանջում է անպայման արգելել ատոմային զենքը իբրև մասսայական ոչնչացման զենք և սուաջարկում է բոլոր բարեմիտ մարդկանց՝ ստորագրել այդ կոչը:

Մեր սրտագին բաղձանքն է, որ աշխարհում ցրված մեր հայ եղբայրներն ու քույրերն իրենց ամուլը դնեն այս պատմական կոչի տակ՝ հանուն իրենց ժողովրդի ապագայի և բովանդակ մարդկության եղբայրության ու հումանիստական կուլտուրայի:

ԽՈՍԹ ՏԱՐԵՄՈՒՏԻ

Վաղը թևակոխում ենք քսաներորդ դարի երկրորդ կեսը: Հենքը հավատում էին, թե երկրագունդը իր թավալման ընթացքում մի պահ կանգ է առնում՝ հետադարձ հայացք ձգելու անցած ուղու վրա: Երբ մենք էլ մեր անընդհատ հոսող կյանքի մեջ մի պահ ետ ենք նայում, տեսնում ենք, որ քսաներորդ դարի կեսը, անցած հիսուն տարիները մարդկային պատմության ամբողջ տարեգրքի ամենափայլուն էջերն են: Քսաներորդ դարը հավերժացած է հրաշալի գյուտերով, որոնք իրավունք են տալիս մարդուն հավատալու իր բանականության և կամքի հզորության, իր հանճարի անսպառ ու անդադար զարգացման և բնության դեմ իր մղղած պայքարի մեջ տարած հաղթանակների նկատմամբ: Աերոպլանի, ինքնաթիռի և ռադիոսնթել հեռագրի այս ամենաբանաստեղծական գյուտերը իսկական հրաշքներ են, մարդկության դարավոր երազանքների իրականացումներ:

Իհարկե, անթիվ են տեխնիկայի զանազան ասպարեզներում մեր կիսադարի նվաճումները, բժշկության մեջ՝ միկրոսպան, անտիբիոտիկ դեղերի և սերումների բարեբեր գյուտերի հաջողությունները, զարմանալի են նյութի էության հետազոտությունները, ատոմի բաղադրիչ մասերի հայտնագործումը, որոնք կոչված են մոտ ապագայում ամբողջապես փոխելու համաշխարհային տնտեսությունը, զորեղացնելու մարդկությունը շարժիչ ուժի և ջերմության աներևակալելի, անսպառ հարստություններով: Սակայն այդ հոյակապ, շքեղ կիսադարը արատավորվեց իմպերիալիստ գիշատիչների կողմից հրահրված զարուհուրելի, արյունահեղ պատերազմներով և ազատաբաղձ փոքր ժողովուրդների անմարդկային կոտորածներով:

Այս կիսադարը բացվեց ռուսական առաջին հեղափոխությունով, որ սասանեց ցարիզմի գահը: Նրան հաջորդող ռեակցիան չկարողացավ ոչնչացնել ծնունդ առած այն հեղափոխական փոթորիկը, որն ուռճացավ, խորացավ և պսակվեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունով: Վերջնականապես տապալվեց ցարիզմը, բուրժուա-կալվաճատիրական հասարակարգը, ազատագրվեցին աշխատավոր մասսաները և ցարիզմի կողմից ստրկացված ժողովուրդները:

Հոկտեմբերյան հեղափոխությունը ցնցեց ամբողջ աշխարհը, ծայր առան հեղափոխական շարժումներ զանազան երկրներում: Նա ազատության պատգամ տվեց Ասիայի գաղութային երկրներին: Չինական հեղափոխությունը, որ իր թափը ստացել էր Հոկտեմբերից, անգլո-ամերիկյան իմպերիալիզմի և ներքին ռեակցիայի ուժերի դեմ երկարատև ու ծանր մաքառումներից հետո հասավ փառապանծ հաղթանակի: Ազատագրվեց չինական հսկա ժողովուրդը և դարձավ միևնույն, անխորտակելի հզոր ուժ՝ համաշխարհային դեմոկրատիայի հաղթանակի համար:

Մենք թևակոխում ենք դարի երկրորդ կեսը մի վսեմ և մեծակշիռ ավանդով, խաղաղության կողմնակիցների համաշխարհային շարժման ավանդով, որ պիտի քաջությամբ տանենք մինչև իր վերջնական նպատակը՝ պատերազմի տեսական և պրակտիկ ջախջախումը: Արյունուռուտ ֆաշիզմը ջախջախվելուց հետո, անգլո-ամերիկյան իմպերիալիստներն ու մոնոպոլիստները ձգտում են ֆաշիստական փշրված բեկորներից վերստեղծել միևնույն ուժ, թեղանդթային միս՝ դիմադրելու խաղաղության ու դեմոկրատիայի առաջընթացին, հարատև դարձնելու աշխատավորության շահագործման սխտեմը: Սակայն նրանց դեմ անպարտելի կանգնած է սովետական հզոր տերությունը՝ խաղաղության կողմնակիցների բազմամիլիոն բանակներով, դեմոկրատական երկրներին ժողովուրդներով:

Խաղաղության նվիրական դրոշը մեր կիսադարից փոխադրում ենք երկրորդ կեսը նույն նշանաբանով՝ խաղաղությունը կուլտուրայի, առաջադիմության և բոլոր բարիքների

ստեղծողն է, իսկ պատերազմը՝ մահ սփռող, ավերող և քաղաքակրթությունը ոչնչացնող:

Սոսքս մասնավորելով հայ իրականության մասին, ինչպես միշտ, այժմ էլ պիտի ասեմ, որ Հոկտեմբերյան հեղափոխության իրողությամբ հայ ժողովուրդը վերստացավ իր կորցրած պետականությունը, մեր ժողովրդի համար սկսվեց փայլուն վերածնունդ: Հայաստանը զորեղացավ, բարձրացավ օրեցօր՝ դառնալով արդիական ինդուստրիալ երկիր և մեր լայնատարած հայրենիքի ժողովուրդների եղբայրական ընտանիքում դարձավ առաջադեմ գաղափարների և համաշխարհային խաղաղության համար մղվող պայքարի անձնավեր մարտնչող: Դարերով մերժված մեր ուժերը վերագարծեցին, տնտեսության և գիտության ասպարեզներում ձեռք բերինք փայլուն հնչողություններ, վերընձյուղվեց մեր ճարտարապետությունը՝ ստեղծելով հրաշակերտներ:

Գնաս բարև ասելով քսաներորդ դարի առաջին կեսին, ոտք ենք դնում երկրորդ կեսը՝ նոր եռանդով և վառ հավատով մեր տնտեսական և կուլտուրական նվաճումները շարունակելու համար:

Նոր տարեմուտին ամբողջ արտով մաղթում եմ ողջ աշխարհին երկարատև և կայուն խաղաղություն:

Մաղթում եմ մեր աշխատավորությանը՝ առողջություն, հաջողություն և երջանկություն, մեր ուսանողությանն ու աշակերտությանը՝ անվերջ սովորելու, միշտ բարձրանալու աննկուն ջանք, մեր ինտելիգենցիային՝ գիտնականներին, գյուտարարներին, բժիշկներին, արվեստի մարդկանց՝ անըսպառ եռանդ, ստեղծագործելու անընդհատ վերելք, մեր ընկեր գրողներին՝ ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Մաղթում եմ Սովետական Հայաստանին բարեկեցություն և առաջադիմություն տնտեսության բոլոր բնագավառներում:

Մաղթում եմ մեր Մեծ Միությանը՝ ավելի հզորություն՝ իրականացնելու Լենինի անմահ պատգամները:

Ընդհանրապես՝ նոր տարի:

1950

ՌԻԿՐԱԻՆԱՑԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ

Ամեն մի գերդաստան, ամեն մի օջախ ունի իր մեծ ու ամսնոսանալի տոնական օրերը: Եվ, ինչպես հարկն է, այդ ժամանակ սեղանի շուրջն են հավաքվում մեծերն ու փոքրերը՝ լուսափայլ ու ցնձալի դեմքերով, հնչում են հիացագին խոսքերը, ծորում են երգերը, բորբոքվում է պարը... Սովետական ժողովուրդն էլ ունի իր մեծ տոնահանդեսները:

Այդ երբեք չի եղել անցյալում:

Տոնում են **ժողովուրդները**: Յնձում են **ժողովուրդները**:

Ես ուզում եմ այս մեծ օրը՝ Ռուսաստանի հետ Ուկրաինայի վերամիավորման 300-ամյակի այս տարեդարձին դիմել ձեզ, իմ թանկագի՛ն ուկրաինացի բարեկամներ, և ձեր միջոցով ողջույնի ջերմ խոսքեր հղել Ուկրաինայի տաղանդավոր, չքնաղ, պոետական մեծ ժողովրդին:

Ուկրաինա...

Նա թանկ է իմ սրտին իբրև ռազմիկների ու հաղթողների երկիր, իբրև փառապանծ տափաստանների և՛ բուռն գետերի երկիր, իբրև անմահ երգերի և բարձրահունչ բանաստեղծությունների երկիր: Ուկրաինա... Երբ ես թափանցում եմ նրա պատմությունը, զգում եմ, թե որքա՛ն մտածություն կա նրա և իմ Հայաստանի ճակատագրի միջև: Նույնն են եղել մեր ոսոխները և նույնը՝ մեր տենչանքները: Մեր երկուսի անկաշտ բարեկամը նույն ռուս մեծ մարդն է: Այդ նա՛ Ուկրաինային կյանքի կոչեց, այդ նա Արագածի բարձունքներին տվեց փայլ և Դնեպրին՝ ժպիտ: Իմ ընկերներ, ուկրաինացի բարեկամներ: Մեծ բախտավորություն է այդպիսի եղբայր ունենալ: Ինձ վիճակվել է մի շարք անգամներ լինել Ուկրաինայում և՛ անցյալ, և՛ մեր օրերին: Ձե՛զ է, որ պիտի պատմեմ Ուկրաինայի մասին... Բայց նա, ով գեթ մի անգամ տե-

սել է մեծագոր Ռենայրը, նա երբեք չի մոռանա այդ հրաշալի երկիրը, նրա անհուն երկինքը, գմբուխտե արոտները, դաշտերի անեզրությունը, բուրումնավետ դալարիքը... Երբեք չեն մոռացվի ուկրաինացու երգերը՝ թախծալի և ուրախ, բայց միշտ անապական, ինչպես ժողովրդի հոգին: Եվ հիշողությանս մեջ իմ ժողովրդի երգերի հետ մեկտեղ ցայսօր ապրում և հնչում են այդ երգերը, որ ես լսել եմ շատ տարիներ առաջ: Ուկրաինայի պոեզիան աշխարհում ամենահարուստներից մեկն է: Նա սքանչելի է իր խորությամբ, հոգեցունց իր անկեղծությամբ: Իմաստուն Սկովորոդան և խոովահույզ Շևչենկոն, անզուգական Լեսյան և բոցաշունչ Ֆրանկոն— այդ ձեր նվիրական հարստությունն է, ուկրաինացի բարեկամներ, որն այսօր և մե՛րն է: Սովետական Ուկրաինայի բանաստեղծների գործերը հարազատ ու թանկ են իմ ժողովրդին, որովհետև այն կյանքի պոեզիա է, մաքառման պոեզիա, հաղթանակի պոեզիա:

Թո՛ղ նա հավիտյան ու հավատարմորեն ծառայի մարդուն— աշխատավորին, ժողովուրդների եղբայրության գործին:

Թո՛ղ ուկրաինայի քնարի հնչյունները զրնգան համայն աշխարհով մեկ:

Երջանիկ լինե՛ք, ուկրաինացի բարեկամներ՝, ձեզ ցանկանում եմ նոր եռանդ, նոր հաղթանակներ, և՛ թող կեցցե՛ ձեր ոգեշնչման անսպառ աղբյուրը՝ թող կեցցե՛ ժողովուրդը, թող կեցցե՛ կյանքը:

1954, մայիս

ԶՐՈՒՅՑ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ես ծնվել եմ անցյալ դարի երկրորդ կեսին: Այժմ 20-րդ դարի երկրորդ կեսն է: Ինչպես տեսնում եք, կյանքի բավական մեծ ճանապարհ եմ անցել: Եթե նստենք մի օր գրուցենք, այնքա՛ն բան կունենամ ձեզ պատմելու... Եկեք, այսօր մի փոքր գրուցենք գիտության մասին:

Գիտությունը մեծ ուժ է, գիտությունը լույս է, որ լուսավորել է մարդկության միտքը՝ սկսած հնագույն դարերից մինչև մեր հոյաշեն ներկան: Գիտությունը խանձարուրում գտնվող թոթով երեխայի պես է եղել, որ հզորացել է, հզորացել է, դարձել տիեզերաուժ մի կարողություն, աշխարհը վերափոխող, նորն ստեղծող, չեղածը իրականություն դարձնող կախարդական գործության մի ուժ...

Իմ մանկությունն անցել է Ալազյազի հայացքի տակ: Թիկն տված իր գմբուխ գահին, աստղերի մեջ ու ամպերից վեր, ադամանդե թագը գլխին՝ Արագածը տեսնում էր, թե ինչպես էր հեզ մի ժողովուրդ տքնում օրնիբուն, ինչպես էր գիշերները տներում առկայծում մոմը կամ նրագը, ինչպես էին աղ ձեռք բերելու համար մարդիկ օրեր շարունակ չարչարվում: Հիշում եմ, սալերով Ղազարապատ գյուղից մերոնք գնում էին Կողբ և աղ բերում: Սպասում էինք նրանց վերադարձին, բայց նրանք չկայի՛ն ու չկային: Ահա մի օր էլ հեռվում, փոշու ամպի մեջ, երևում է սալաշարը: «Եկա՛ն, եկա՛ն», — ուրախ գոշում էինք, որ աղ ենք ունենալու: Ծոնչոցով գյուղ էին մտնում սալերը, որոնց ժողովուրդն անվանում էր «քոռ սել»: Ես կարծում էի, թե այդ Կողբը, երևի, աշխարհի ծայրին է գտնվում, որ մարդիկ օրեր շարունակ գնում էին և օրեր էին տևում, մինչև վերադառնում էին: Երբ մեծացա,

իմացա, որ «աշխարհի ծայրին» գտնվող Կողբը մեր գյուղից այնքան էլ հեռու չի եղել...

Իմ կյանքի ընթացքում ես տեսա, թե ինչպես ճարպե մոմին ու ճրագին փոխարինեց էլեկտրական պայծառ լույսը, «քոռ սելին» փոխարինեցին գեղեցիկ ավտոմեքենաները, ճեպընթաց գնացքները... Իմ աչքի առաջ ստեղծվեցին ուղիղն, հեռախոսը, էլեկտրակայանը, ատոմային էներգիան, նրա ուժով աշխատող էլեկտրակայանը... Այո՛, մարդը հրաշքներ գործեց: Նա չտեսնված հրաշքներ է գործում սովետական երկրում:

Մեզ մոտ շատ մասնագիտություններ կան՝ բոլորն էլ լավ, բոլորն էլ հարգված: Եթե ես երիտասարդանայի և նոր կյանք մտնեի, նորից կդառնայի բանաստեղծ, որ զրնգուն ձայնով երգեի սովետական հրաշագործ մարդուն:

Մեր գիտությունը ծառայում է ժողովրդին, նրա բարեկեցության և կուլտուրայի բարձրացմանը: Մեծ է սովետական գիտության նշանակությունը: Այն լուծում է բնության գաղտնիքները: Նրանով զինված մարդը մուտք է գործում տիեզերական անպարփակ աշխարհը: Իմ հերոսներից մեկը, արաբ հոչակավոր բանաստեղծ Աբու-Լալա Մահարին, ինքն իրեն հարցնում է.

«... Աշխարհն էլ, ասե՛ն մի սեբիաթ լինի՝ անսկիզբ.

անվերջ. հրաշք դյութական,

Եվ ո՞վ է հյուսել հեթիաթն այս վսեմ, հյուսել

աստղերով, բյուր երաշքներով...»:

Ի՞նչ իմանար արաբ բանաստեղծը, որ իրենից դարեր հետո սովետական նշանավոր գիտնական Վիկտոր Համբարձումյանը պիտի պատասխանի նրա հարցերին: Մեր գիտնականներն ապացուցում են, թե ինչպես են միգամածություններից ծնունդ առնում նոր աստղեր, ինչպես են առաջացել երկրագունդը, մոլորակները: Նրանք էլեկտրոնային միկրոսկոպով տեսնում են ո՞չ միայն մանրագույն օրգանիզմները՝ բակտերիոֆագները, այլև ուսումնասիրում են նյութի մոլեկուլների ձևերը: Ալքիմիկները չէին կարող երազել անգամ այն մասին, ինչին հասել են սովետական գիտնականները: Հիմա

մենք ստանում ենք նոր, բնության մեջ չեղած էլեմենտներ: Մենք արտադրում ենք կաուչուկ, դեղեր, ներկեր, պայթուցիկ նյութեր, մետաղների նոր ձուլվածքներ: Պենիցիլինի, ստրեպտոմիցինի և այլ անտիբիոտիկների միջոցով մենք պայքարում ենք մահացու հիվանդությունների դեմ: Մեր գյուղատնտեսները հացահատիկների նոր սորտեր են անեցնում, օվկիանոսագետները թափանցում են ստորջրյա աշխարհը:

Իմ աչքի առաջ են հայտնագործվել Հյուսիսային և Հարավային բևեռները: Բայց գտնելը քիչ էր, պետք էր ուսումնասիրել: Ահա և սովետական խիզախ գիտնականներն այժմ ուսումնասիրում են ծայրագույն հյուսիսը: Իսկ մի այլ տեղ՝ Ղազախստանում, Ալթայում, մարդիկ նվաճում են դարեր շարունակ խոպան մնացած հողերը:

Այս բոլորի համար, իմ պատանի՝ բարեկամներ, անհրաժեշտ է գիտություն: Դպրո՛ցն է այն տալիս ձեզ: Լա՛վ սովորեցե՛ք, բարեխիղ՛ն: Հիշեցե՛ք, որ գիտությանը տիրապետելու համար անհրաժեշտ է համատ աշխատանք: Գիտությունը սիրում է նրա՛նց, ովքեր սիրով են մոտենում իրեն, ովքեր դատում են և ոչ թե անգիր անում, ովքեր ունեն երևակայություն, փորձեր են կատարում, խիզախում են և կարդո՛ւմ են, կարդում...

ԲԱՐԻ ԺԱՆԱՊԱՐՀ

Դարձյալ մի քանի օր, և դուք, հայ արվեստի ու գրականության տասնօրյակի մասնակիցներ, Մոսկվայում ցույց կտաք, թե հայ ժողովուրդն ինչ հոգևոր կուլտուրայի տեր է այսօր:

Աշխարհին ցույց կտաք այսօրվա գեղարվեստական կուլտուրան մեր հինավուրց ժողովրդի, որ անհնարին կորոպով մաքառել է դարեր՝ պահպանելու համար իր ինքնությունը, լեզուն, մշակույթը, ոգին. ժողովուրդ, որին պատմությունը վիճակել էր իր մշակույթն ստեղծել արհավիրքների մեջ, զենքի շառաշի ժխորում, անվերջանալի եղեռների մեջ: Եվ դարավոր մաքառումի կնիքը դրոշմված է մեր ժողովրդի բովանդակ հոգևոր կուլտուրայի վրա՝ Սասնա ծռերի անմահ էպոսը, Խորենացի, Եղիշե, Աբովյան, Կոմիտաս...

Թեպետ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհումն էլ քաջության շատ գործեր կան արված՝ գրելու և հիշատակելու արժանի,— երախտավոր պատմահայր Խորենացու՝ հինգերորդ դարում ասած այս խոսքի հաստատումը եղավ հայ ժողովրդի կյանքը մահ այդ դարից ի վեր, մեկուկես հազարամյակ:

Եվ մեր օրերում, երբ հայ ժողովուրդը վստահ ու համարձակ իր բախտը մեկընդմիջտ կապել է սոցիալիստական հասարակությանը և կառուցում, շենացնում է իր հինավուրց երկիրը, մենք կարող ենք կրկնել քերթողահայր Խորենացու խոսքը: Հիրավի, մեր ժողովուրդն այսօր անում է գրվելու և հիշատակության արժանի գործեր բոլոր ասպարեզներում, մահ հոգևոր կուլտուրայի ասպարեզում:

Մեր արվեստագետները՝ երաժիշտներ, գրողներ, նկարիչ-

ներ, դերասաններ, երգիչներ՝ իրենց մեծ նախորդների ավանդույթներով զարգացնում են մեր հայրենաշունչ կուլտուրան, նոր ժամանակների, նոր հասարակության պահանջների համեմատ: Ահա՛ այդ կուլտուրան է, որ պիտի ներկայանա տասնօրյակի ընթացքում:

Կասկած չունեն, որ բոլորդ էլ հրճվանքի մեջ եք այդ առթիվ, ուրախ եք ներկայացնելու հայ գեղարվեստը: Դա, հիրավի, մեծ պատիվ է: Պատիվ է իսկապես լինել հայ մեծ արվեստագետների ժառանգորդը՝ Սայաթ-Նովա, Ադամյան, Սունդուկյանց, Սուրենյանց, Կոմիտաս, Պապայան, Աբելյան...

Մաղթում եմ, որ դուք հանդես գաք այդ պատվի խորին գիտակցությամբ:

Գիտցեք, որ այդ մեծ պատիվը մեծ էլ պարտք է դնում ձեզ վրա՝ արժանի լինել այն կուլտուրային, որին պատկանում եք. լինել նույնքան հայրենակներ, վարքի մեջ՝ անաչառ, ժողովրդին ծառայելու մեջ՝ անձնվեր, նույնքան վսեմ ու ազնիվ, որքան ձեր մեծ նախորդները:

Մաղթում եմ, որ վառ ու բորբոք պահեք հայրենական ազնիվ կուլտուրայի ջահը, այն կուլտուրայի, որ ընդդեմ բոլոր արհավիրքների, ժողովուրդը պահեց, և ոտխն անկարող եղավ խլել նրանից:

Կուլտուրան մնաց անկողոպտելի: Եվ դա պահեց ժողովրդին: Ժողովուրդն էլ պահեց իր կուլտուրան: Եվ նրանք, ձեռք-ձեռքի, աշխարհակործան հողմերի միջով եկան հասան սոցիալիստական պետականության, մի դարաշրջանի, որ ողողված է Լենինի լույսով:

Ահա՛ անհնարին դժվարությամբ ժողովրդի պահպանած, սրբազործած հոգևոր կուլտուրայի պանծացումը պիտի լինի տասնօրյակը:

Լա՛վ գիտցեք, որ ձեր հանդիսատեսը պիտի լինեն ոչ միայն Մոսկվան ու մոսկվացին, այլև մեր Հայրենիքի բոլոր ժողովուրդները, այլև աշխարհի մյուս ժողովուրդները, այլև երկրագնդի վրա սփռված հայ ժողովրդի զավակները: Այդպես է, քանի որ Մոսկվան այսօր տեսանելի է մեր մոլորակի բոլոր ծայրերից:

Բաժան եղավ ու անագործուն հայ ժողովրդի պատմա-

կան ճակատագիրը: Սուլթանական Թորքիան հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, ձգտումները խեղդեց անլուր ջարդերով, և բյուրավոր հայություն, հալածական ու հայրենազուրկ, ապաստան գտավ աշխարհի չորս բուրբը: Եվ ամեն մի հայրենասեր հայ, կրելով իր մեծագին գանձը՝ հայրենասիրական ոգին, ուր էլ որ լինի, կարոտ աչքերով նայում է իր հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին:

Հայ գեղարվեստի տասնօրյակը՝ համամիութենական այդ հանդեսը, տոն պիտի լինի և՛ նրանց համար, մեր սփյուռքի հայության համար: Ի՛նչ մեծ հպարտություն և սփոփանք պիտի գտնեն նրանք, տեսնելով, թե հայ ժողովուրդն ի՛նչ գուրգուրանքով է պահպանել մեր պանծալի նախնիների ժառանգությունը, ի՛նչ նոր արժեքներ է ավելացրել արդեն ստեղծված գանձերին:

Մաղթում են, որ տասնօրյա հանդեսին ձեզ մշտական ուղեկից լինի և՛ այդ գիտակցությունը:

Հիշեցեք իմ խոսքերը, որ ես, իմ փորձի ու տարիների իրավունքով, մաղթում եմ ձեզ՝ փառքով կատարեցեք ձեր ազնիվ գործը, և ես հպարտ կլինեմ ձեզանով:

Թո՛ղ աշխարհը տեսնի, որ Խորհրդային Հայաստանում հավերժանում է մեր մեսրոպատառ գրականությունը, մեր հայրենաշունչ գեղարվեստը:

Բոլոր սրտով մաղթում եմ ձեզ բարի ճանապարհ և բարի վերադարձ, իմ սիրելի հարազատներ, զավակներ:

ՓԱՆՔ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻՆ

Մեր երկրագնդի արհեստական արբանյակը, որ սովետական գիտությունը ստեղծեց և նետեց երկնային տարածությունների մեջ, մարդկային հանճարի ամենամեծ հաղթանակն է: Այս զարմանահրաշ հայտնագործումը նոր դարագլուխ բացեց տիեզերքի ճանաչողության մեջ: Մարդը ազատագրվեց երկրի ձգողական ուժից, որից ձերբազատվելը թվում էր անհնար: Սակայն, այսօր նա կանգնած է տիեզերական տարածություններում մոլորակից մոլորակ ճանապարհորդելու նախաստեփն:

Աշխարհը խանդավառվեց սովետական գիտության և տեխնիկայի՝ նախընթացը չունեցող՝ հավերժական հաղթանակով: Անսահմանորեն բարձրացավ Սովետական Միության հեղինակությունը, նույնիսկ թշնամիների խոստովանությամբ:

Փա՛նք մեր սովետական հանճարեղ, ստեղծագործ գիտնականներին:

1957, հոկտեմբեր

ՀԱՅՐԵՆՆԻՔԸ ԱՄԵՆ ԲԱՆՆՅ ԹԱՆԿ Է

Իմ սիրելի երեխաներ.

Ամեն անգամ, երբ խոսք է բացվում հայրենիքի մասին, իմ սիրտը լցվում է համայնապարփակ սիրով, ու հոգիս պատում է մի անսահման ջերմ զգացում: Ո՛չ Վեներտիկի սուրբ Մարկոսի մարմարակերտ հրապարակը, ո՛չ Բեռլինի գոթական շենքերը, ո՛չ էլ Փարիզի հրաշալիքները չեն կարող փոխարինել այն վսեմ ու նվիրական զգացումին, ինչ ես ապրեցի, երբ, աշխարհե-աշխարհ երկար դեպքումներից հետո, ոտք դրի իմ սուրբ ու անճման հայրենի հողի վրա: Ես նորից լսեցի Ախուրյանի մեղմիկ կարկաչը, ոտիների անուշ սոսափը, հիացա իմ կարոտած զմրուխտ Ալագյազով ու կապտակոհակ Սևանի ջրերով, Ծիրակի դաշտում զգացի նոր, սոցիալիստական կյանքի շունչն ու ավյունը:

Հոկտեմբերի մեծ արևով վերածնված իմ հայրենիքում տեսա աշխարհաշեն կառուցումներ, որոնք կմրցեն Փարիզի հրաշակերտ շինվածքների հետ, ուրախացա իր կյանքի տերը դարձած բանվորի ու գյուղացու վաստակով: Հայրենիքը ինձ համար ամեն բանից թանկ է ու վսեմ:

Դու՛ք էլ, իմ սիրելի՛ բալիկներ, լինե՛ք ոռու, ուկրաինացի, ադրբեջանցի թե՛ վրացի՝ սիրեցե՛ք մեր հայրենիքը, մեր ժողովրդին:

Ամբողջ կյանքում ծառայեցե՛ք մեծ Լեհինի ստեղծած պետությանը, որի համար անձնվիրաբար կովել են ձեր հայրերն ու մայրերը:

Երազեցե՛ք, խիզախեցե՛ք, կառուցեցե՛ք նորը, նվիրականը՝ կոմունիստական հասարակարգը:

1957, հոկտեմբեր

ՇԱՆՈՒԿԱՐՈՒԹՅՈՒՆԵՐ

Ավետիք Իսահակյանի Երկերի վեցհատորյակի հինգերորդ հատորը ընդգրկում է բանաստեղծի հուշերն ու հողվածները: Գրանք հրատարակության պատրաստելիս հիմք են ընդունված բանաստեղծի օրոք լույս տեսած քառհատորյակի չորրորդ հատորը (1951), վերջին մեկհատորյակը (1955), առանձին ղեպքերում՝ հեղինակային հրապարակումները պարբերականներում, անտիպների համար՝ ինքնագրերը: Հաշվի են առնված նաև տպագրված տեքստերի վրա Վարպետի կատարած շտկումները: Այս հրատարակությամբ Իսահակյանի Երկերի ժողովածուի մեջ առաջին անգամ են ներառված հետևյալ ստեղծագործությունները. «Շուշանիկ Կուրդինյան», «Հովհաննես Մասեհյան», «Հանդիպում Մաքսիմ Գորկու հետ», «Անմահ Սայաթ-Նովա», «Երվանդ Շահապիկ», «Տարաս Շևչենկո», «Անմահ Թումանյանը», «Հովհաննես Թումանյանի մասին (խտացումներ)», «Փարիզի հայ ուսանողական միությունը», «Սասունցի կոլտնտեսականների մոտ»:

Իսահակյանի հուշերի ու հողվածների հրատարակությունն առաջին անգամ է օժտվում ծանոթագրություններով, որոնցում տրված են մատենագիտական տեղեկություններ, տվյալներ երկերի ստեղծման շարժառիթների վերաբերյալ և ըստ հնարավորության ճշտված են նրանց գրության ժամանակն ու վայրը:

ԻՄ ՀՈՒՇԵՐԻՑ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ (էջ 7)

Գրել է Երևանում, 1948 թ. դեկտեմբերի 30-ին:

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ (Ալիշանյան Քերովբե Պետրոսի, 1820—1901) Մխիթարյան միաբան: Անվանի բանասեր և պատմաբան, բանաստեղծ: Ալիշանի գրչին են պատկանում չափածո գործեր: Նրա գիտական մեծարժեք աշխատություններից են «Այրարատ», «Շիրակ», «Սիսվան», «Սիսսական», «Հայբուսակ», «Հին հավատք» և ուրիշ գործեր: Գիտնական և բանաստեղծ Ալիշանը մեծապես նպաստեց հայագիտության վարգաճմանը:

ԵՍԱՅԻ ՏԱՅԵՑԻ — 1900-ական թվականների Մխիթարյան միաբաններից:

ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ (1870—1944) — Վենետիկի մխիթարյաններից, բանասեր, պատմաբան և ազգագրագետ:

ԹԵՐԶՅԱՆ (Պողոս-Պետրոս ԺԴ Թերպյան) — հայ կարդինալ (1885—1931) — քաղաքական կյանքի ասպարեկում հայտնի է 1890-ական թվականներից մինչև 1910-ական թվականների վերջը Թուրքիայում հայերի կոտորածների դեմ եվրոպական մեծ պետություններին ուղղած դիմումներով: 1919 թ. Հռոմի պապը նրան կանչում է Հռոմ, տալիս կարդինալություն և արգելում քաղաքական խնդիրներով զբաղվել:

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ (էջ 15)

Գրել է 1945 թ.: Առաջին անգամ հրատարակվել է 1946 թ. «Իմ հուշերից» գրքում, Երևան, Հայպետհրատ, 1946, էջ 71—79:

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ (Խրիմյան-Ղրիմյան Մկրտիչ Հովհաննեսի, 1820—1907) — հասարակական-քաղաքական գործիչ: Կաթողիկոս ամենայն հայոց (1896—1907): Խմբագիր-հրատարակիչ, մանկավարժ, գրող:

ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼ — Քրիստոսի տասներկու առաքյալներից: Համարվում է Հայաստանի առաջին քարուպիչը:

ՊԵՏՐՈՍ ՂԱՓԱՆՅԻ (XVII դարի վերջեր—1784) — բանաստեղծ: Ծագումով Սյունիքից: 1772 թվին Կոստանդնուպոլսում հրատարակել է բանաստեղծն իր գիրքը «Երգարան» վերնագրով:

ԳՐԻԳՈՐ ԱՂԹԱՄԱՐՅԻ (XV դարի վերջ—VII դար) — բանաստեղծ: Եղել է Աղթամարի կաթողիկոս (1512—1544):

ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ (1683—1768) — քանաստեղծ: Ապրել է Կոստանդնուպոլսում: Հանդես է եկել որպես բանաստեղծ, կոմպոզիտոր, հրատարակիչ և բանասեր: Առավել հայտնի է տաղերով, որոնք ունեցել են մի բանի հրատարակություն:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ (XVI դար) — բանաստեղծ: Քուչակի կյանքի մասին ստույգ տեղեկություններ չկան: Ապրել է Վանի մոտ Խառակոնիս գյուղում:

ՕՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ (1834—1887) — արևմտահայ հասարակական գործիչ և դիվանագետ, Ալգային սահմանադրության հեղինակներից մեկը: Միհրդատ փաշայի հետ կապել է Թուրքիայի 1876 թվականի սահմանադրությունը:

ՀԵԿԿԵԼ ԷՌՆԱՍ (1834—1919) — գերմանացի դարվինիստ-կենսաբան: Ենայի համալսարանի պրոֆեսոր:

ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆ (էջ 24)

Գրել է Սևանում, 1937 թ. օգոստոսի 28-ին, Պ. Պոռշյանի ծննդյան 100-ամյակի առթիվ և հրատարակել նույն օրերին:

Տպագրվում է ըստ Գրականության և արվեստի թանգարանի հեղինակային ինքնագրի: Վերականգնված են նախորդ հրատարակությունների բոլոր հապավումները:

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ (էջ 32)

Գրել է Երևանում, 1941 թ. մարտի 11-ին, Ղ. Աղայանի ծննդյան 100-ամյակի առթիվ, որը նշվել է Հայաստանում 1941 թ. մարտ-ապրիլին: Մամուլում հրատարակվել է այդ օրերին:

ՄՈՒՐԱՅԱՆ (էջ 39)

Գրել է 1955 թ. մարտին, Մուրացյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ: Առաջին անգամ հրատարակել է «Գրական թերթում», 1955 թ. № 11-ում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (էջ 44)

Գրել է 1944 թ. հոկտեմբերին, Հ. Հովհաննիսյանի ծննդյան 80-ամյակի և մահվան 15-ամյակի առթիվ: Հրատարակվել է նույն օրերին:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ (էջ 50)

Գրել է 1948 թ. մարտին, Հ. Թումանյանի մահվան 25-րդ տարելիցի առթիվ և հրատարակել նույն օրերին:

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՄԱՀ ՀԻՇԱՏԱԿԻՆ (էջ 86)

Գրել է 1949 թ. Կոմիտասի ծննդյան 80-ամյակի առթիվ և հրատարակել նույն օրերին:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ (էջ 70) — Գրել է 1934 թ. մարտի 1-ին, Թ. Թորամանյանի մահվան անմիջական տպավորության տակ, Փարիզում: Հրատարակել է նույն օրերին: Ավետիք Իսահակյանը 1942 թ. նոյեմբերի 2-ին գրած «Հայ ճարտարապետը» բանաստեղծությունը նվիրել է մեծ ճարտարապետ Թ. Թորամանյանի հիշատակին:

ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ — Անի մայրաքաղաքի մայր տաճարի վանահայրը 1890—1910-ական թվականներին, որին Ավ. Իսահակյանը անվանել է «Անիի վանահայր սքանչելի Միքայել վարդապետ»:

ԼԵՈ (էջ 80)

Գրել է 1933 թ. Փարիզում, Լեոյի մահվան առաջին տարեկիցի առթիվ և հրատարակել նույն օրերին:

ՍՏԵՓԱՆ ՈՍԿԱՆ (1835—1901) — արևմտահայ ազատամիտ հրապարակախոս: Խմբագիր Փարիզում հրատարակված «Արևելք» (1855—1856), «Արևմուտք» (1859 և 1864—65) նաև այլ ֆրանսուկերու պալլեթերակների:

ՆԱՐ-ԴՈՍ (էջ 87)

Գրել է Նար-Դոսի մահվան կապակցությամբ, Փարիզում, 1933 թ. օգոստոսին և հրատարակել նույն օրերին:

ԱԼԵՔՍԱՆԴԻ ՍՊԵՆԴԻԱՐՈՎ (էջ 91)

Առաջին անգամ հրատարակվել է Ավ. Իսահակյանի «Իմ հուշերից» գրքում. Երևան, Հայպետհրատ, 1946, էջ 66—70:

ԳԵՎՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ (էջ 96)

Գրել է 1940 թ.: Առաջին անգամ հրատարակվել է Ավ. Իսահակյանի «Իմ հուշերից» գրքում: Երևան, 1946, էջ 62—65:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԸՆԿԵՐՈՋՍ ՀԻՇԱՏԱԿԻՆ (էջ 100)

Գրել է 1937 թ. ապրիլի 11-ին, Ալեքսանդր Ծատուրյանի մահվան քսանամյակի առթիվ, որը նշվել է ապրիլի 13-ին, և հրատարակել նույն օրերին:

ՀԱԿՈՒՔ ՀԱԿՈՒՅՑԱՆ (էջ 102)

Գրել է Երևանում, 1937 թ., Հ. Հակոբյանի մահվան առթիվ, որը տեղի է ունեցել Թիֆլիսում, 1937 թ. նոյեմբերի 13-ին, և հրատարակել նույն օրերին:

ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԹԱՄԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ (էջ 107)

Գրել է Փարիզում, 1936 թ. փետրվարի 20-ին՝ Ալեքսանդր Թամանյանի մահվան օրը, Երևանից այդ լուրն առնելու տպավորության տակ:

ԻԿԹՈՒՄ — հույն ճարտարապետ դասական շրջանի, աշխատել է մեր թվականությունից առաջ հինգերորդ դարի երկրորդ կեսին: Կայիք-բատուսի հետ կառուցել է Աթենքում Պարթենոնը (447—432 թվականներին), որը հին Հունաստանի դասական ճարտարապետության պսակն է:

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ (էջ 112)

Գրել է 1938 թ.: Տես. Ավ. Իսահակյան, «Իմ հուշերից», Հայպետհրատ, Երևան, 1946, էջ 29—37:

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՂՈՒՆՅԱՆ (էջ 121)

Գրել է 1939 թ.: Առաջին անգամ հրատարակվել է «Գրական թերթ», 31 հունվարի 1975 թ., № 5:

ՉԱՐԵՆՑԻ ՀԵՏ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ (էջ 124)

Գրել է 1957 թ. սեպտեմբերին՝ մահվանից մեկ ամիս առաջ, 82 տարեկան հասակում: Առաջին անգամ հրատարակվել է «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին (Չարենցի հետ)» գրքում. Երևան, 1961, էջ 19—20:

ՍԱՐՅԱՆՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻՆՆ Է (էջ 126)

Գրել է 1955 թ.: Տես. Ավ. Իսահակյան, Երկեր չորս հատորով, հատոր չորրորդ, Երևան, 1959, էջ 161—164:

ԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԳԻՔՈՐԸ» (էջ 131)

Գրել է Թիֆլիսում, 1910 թ. և հրատարակել նույն թվականին:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ (էջ 133)

Համբույրով ու կարոտով նրա անմահ հիշատակին:

Գրել է Վենետիկում, 1923 թ. ապրիլի 5-ին, Թումանյանի մահվան առթիվ և հրապարակել նույն օրերին:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՍԵՀՅԱՆ (էջ 137)

Գրել է 1922—24-ին, Վենետիկում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԾԵՐՈՒՆԻ ՄԱՍԵՀՅԱՆ (1864—1931) — Դիվանագետ, մշակութային գործիչ, թարգմանիչ: Եղել է Պարսկաստանի դեսպանը Գերմանիայում, Անգլիայում, Ճապոնիայում և այլու՝ 1885 թվականից մինչև մահը: Վիլյամ Շեքսպիրի (1564—1616) երկերի նշանավոր թարգմանիչը, որը հարստացրեց հայ թարգմանական արվեստը: Մասեհյանը կատարել է թարգմանություններ նաև գերմաներենից, ֆրանսերենից, սլաոնականներից:

Մասեհյանը Ավ. Իսահակյանի մտերմագույն բարեկամներից էր:

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՅԻ «ՍԵՎ ՑԵԼԵՐԻ ՍԵՐՄՆԱՑԱՆՆԸ» (էջ 140)

Գրել է Փարիզում, 1934 թ. նոյեմբերի 3-ին, Ա. Բակունցի «Սև ցելերի սերմնացանը» գրքի հրատարակության առթիվ, որը Երևանում լույս էր տեսել 1933 թ. վերջերին:

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆԻ ՄԱՀՎԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻՆ (էջ 142)

Ելույթ հայֆիլիարմոնիայի դահլիճում, Ա. Պուշկինի մահվան 100-ամյակի առթիվ հրավիրված հանդիսավոր նիստում, 1937 թ. փետրվարի 11-ին: Տպագրվել է նույն օրերին:

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ (էջ 148)

Գրել և հրապարակել է Մ. Գորկու ծննդյան 70-ամյակի օրերին՝ 1938 թ. մարտին: Տես. Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու չորս հատույթով, հատոր չորրորդ, Հայպետհրատ, Երևան, 1951, էջ 145—147:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՀԵՏ (էջ 152)

Գրել է 1938 թ.: Առաջին անգամ հրապարակվել է «Երևան» օրաթերթում, 1961 թ. հոկտեմբերի 31-ին, № 256-ում:

Գրել է 1939 թ.: «Սասունցի Գավիթ» էպոսի հապարակյալի տոնալյատարության առիթով: Կարդացել է Գ. Սունդուկյանի անվան թատրոնում ՍՍՀՄ Գրողների միության վարչության պլենումում, 1939 թ. մեյտեմբերի 16-ին: Հրատարակվել է նույն օրերին:

ԼԻՎՐԵՍԿ — գրքային, ֆրանսերեն լիվրե-գիրք բառից:

ՀՆԴԿԱԿԱՆ ՎԵԴԱՆԵՐ — հին հնդկերեն վեդա՝ իմացություն բառից: Հին հնդկական գրական հուշարձաններ, ունեն շուրջ 2500 տարվա պատմություն: Այրել են պարզացման ու ձևավորման մի տևական շրջան: Վեդաներից են գոյացել Ռիգվեդան՝ Հիմների վեդան և մյուս հավաքածուները գրական այդ մեծ երկի, որը համաշխարհային արժեք ունի:

ՋՐԱԴԱՇՏ — կիսաառասպելական հիմնադիրը պարսկական վրադաշտականություն կրոնի: Այրել է մեր թվականությունից վեց դար առաջ: Ոմանք ենթադրում են, թե այրել է մեզանից վեց-յոթ հավար տարի առաջ:

ԱՎԵՍՏԱ — Չրադաշտի գիրքը: Կոչվում է նաև՝ Չենդ-Ավեստա:

«ՊԱՐՄԻՖԱԼ» — չափածո ասպետական վեպը գերմանական բանաստեղծ Վոլֆրամ ֆոն-Էշենբախի (1170—1220): «Պարսիֆալը» միջին դարերի առավել աչքի ընկնող էպիկական մի երկ է: Գլխավոր հերոսի անունն է Պարսիֆալ:

ՆԻԿՈՒՍՅ ՅԱԿՈՎԼԵՎԻՉ ՄԱՌ (1864—1934) — լեզվաբան, արևելագետ, կովկասագետ, հայագետ, հնագետ:

ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ — պատմիչ տասներորդ դարի, որը գրի է առել տեղեկություններ արաբ բռնակալների դեմ հայ ժողովրդի ապստամբությունների: Խուրթի (Սասունի) լեռնաստանի հերոսական ըմբոստությունների, այդ ըմբոստությունների կազմակերպիչ ու հերոս Խուրթեցի Հովնանի մասին: «Սասունցի Գավիթ» էպոսի էությունը հասկանալու համար անգնահատելի նշանակություն ունի Արծրունու պատմագիրքը:

ՌՈՒՍՏԱՄ — «Շահ-Նամե» դյուցազներգության գլխավոր հերոսը:

ՍՎՅԱՏՈԳՈՐ — ռուսական ժողովրդական հերոսական ասքերի՛ գլխավոր կերպարներից մեկը:

ԵՋՆԻԿ ԿՈՂԲԱՅԻ — Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից ու գործակիցներից: Թարգմանիչ, փիլիսոփա: Կողբացու «Եղծ աղանդոց» փիլիսոփայական գիրքը հայ հին գրականության գոհարներից է:

ՍՏԵՆԿԱ ՌԱԶԻՆ — (17-րդ դար) — ռուսական գյուղացիական ապստամբական ապստամբությունների առաջնորդ: Ժողովրդական սիրված հերոս, ժողովրդական ապստամբության երգերի անսպառ նյութ:

ՆԱԶԱՏՈՒՐ ԱՔՈՎՅԱՆԸ ԵՎ «ՎԵՐՔ ՀԱՅՅԱՏԱՆԻ»-ն (էջ 172)

Գրել է 1940 թ.: Կարդացել է Ն. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծման հարյուրամյակին նվիրված հանդիսավոր երեկոյին: Առաջին անգամ հրատարակվել է «Գրական թերթում», 1940 թ. մարտի 1-ին:

ԽՈՍՔ ՀՈՔԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻՆ (ԵՐԵՎԱՆՈՒՄ) (էջ 179)

Ասել է 1940 թ. դեկտեմբերի 23-ին, Գ. Սունդուկյանի անվան թատրոնում կապվակերպված հոբելյանական հանդիսավոր ժողովում՝ իր վաթսուհինգամյակի նշման օրը: Հրատարակվել է նույն թվականին:

ԽՈՍՔ ՀՈՔԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻՆ (ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ) (էջ 184)

Ասել է 1941 թ. հունվարի 7-ին, իր վաթսուհինգամյակի հոբելյանի հանդիսավոր ժողովում, պետական թատրոնում: Հրատարակվել է նույն օրերին:

ՄՏՔԵՐ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (էջ 190)

Գրել է 1941 թ. գարնանը՝ ապրիլ-մայիսին, Մոսկվայում հայ գրականության տասնօրյակի կապակցությամբ, և հրատարակել նույն օրերին:

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՕՐՅԱԿԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ (էջ 194)

Գրել է 1941 թ. Մոսկվայում հայ գրականության տասնօրյակի անցկացման առթիվ, որը տեղի է ունեցել 1941 թ. մայիսի 10—20-ը, Մոսկվայում: Հրատարակվել է նույն օրերին:

ԲԻԼԻՆԱ — ռուսերեն: Նշանակում է հերոսական ասք:

ԿՈՒԻԼՈՎԻ ԱՌԱԿՆԵՐԸ (էջ 200)

Գրել է 1943 թ.: Առաջին անգամ հրատարակվել է Ի. Ա. Կոխովի առակները (հատընտիր) գրքում («Հայպետհրատ, Երևան, 1944»), որպես նախաբան:

Գիրքը խմբագրել է Ավ. Իսահակյանը:

ԱՆՏՈՆ ՉԵՆՈՎ (էջ 208)

Գրել է 1944 թ. հունիսին, Ա. Չենովի մահվան քառասունամյակի առթիվ, և հրատարակել նույն օրերին:

ԴԵՄԻՐՃՅԱՆԻ «ՎԱՐՂԱՆԱՆՔ»-ը (էջ 217)

Դ. Դեմիրճյանի երկհատորանոց «Վարդանանք» պատմավեպի 1944 թ. ֆետրվարին Երևանում հրատարակված առաջին հատորի գրախոսական: Հրատարակվել է 1944 թ. սկզբներին:

ԱՆՄԱՀ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ (էջ 223)

Գրել է 1945 թ. սեպտեմբերի սկզբներին, Սայաթ-Նովայի մահվան 150-ամյակի առիթով, և հրատարակել նույն օրերին:

ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻՉ (էջ 226)

Գրել է 1946 թ.: Առաջին անգամ հրատարակել է սեղմ առաջաբանով բանասեր Աբաս Իսահակյանը Լենինականի քաղաքային «Բանվոր» թերթում (12 հունիսի 1975 թ., № 137): Հոդվածը Ավ. Իսահակյանի 1946-ի հունվարի ողջույնի մատիտագիր խոսքն է, որ կարդացել է Ե. Շահակյուի 90-ամյակի հանդեսում, հոբելյարի ներկայությամբ:

«ՈՒԼԵՆՇՊԻԳԵԼ» ՎԵՊԻ ՄԱՍԻՆ (էջ 230)

Գրել է 1946 թ.: Առաջին անգամ հրատարակվել է «Ուլինշափգել» վեպի Վահե Միքայելյանի ֆրանսերեն բնագրից կատարած թարգմանության հատորում, որը Հայպետհրատը Երևանում լույս է ընծայել Ավ. Իսահակյանի խմբագրությամբ և առաջաբանով: Հոդվածը այդ առաջաբանն է:

ՇԱՐԼ ԹԵՈԴՈՐ ԱՆՐԻ ԴԸ ԿՈՍՏԵՐ (1827—1879) — բելգիացի գրող, գրել է ֆրանսերեն: Սկսել է չափածոյով, որով աչքի չի ընկել: Դիմել է ժողովրդական պրույցներին, հրատարակ հանել 1858 թ. «Ֆլամանդական լեզենդներ» ժողովածուն: Այդ լեզենդների ոգու և արվեստի կատարյալ յուրացումը նախապատրաստեց ապատառենչ, ժողովրդաշունչ «Ուլինշափգել» վեպի ստեղծումը, որի վրա հեղինակը ծախսեց ուղիղ մի տասնամյակ և վեպը հրատարակ հանեց 1867 թ.:

ԲԱՅՄԱՆ ԽՈՍՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ (էջ 239)

Ասել է խոսքը, որպես Հայաստանի գրողների միության նախագահ, Հայաստանի գրողների երկրորդ համագումարի բացմանը՝ 1946 թ. սեպտեմբերի 25-ին, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետա-

կան թափռնում: Հրապարակվել է նույն օրերին: Համագումարը, որը տևեց մինչև սեպտեմբերի 28-ը, նորից Հայաստանի գրողների միության նախագահ է ընտրել Ավ. Իսահակյանին:

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՄԱՀ ՀԻՇԱՏԱԿԻՆ (էջ 247)

Ներածական իմոք Մ. Նալբանդյանի մահվան 80-ամյակի առթիվ հայֆիլիարմոնիայի դահլիճում կազմակերպված երեկոյին: Ասել է 1946 թ. ապրիլի 17-ին: Տպագրվել է նույն օրերին:

ՆԻՉԱՄԻ ԳՅԱՆՁԵՎԻ (էջ 251)

Առաջին անգամ հրապարակվել է Գյանջևու «Լեյլի և Մեջնուն» գրքում, որպես նախաբան (Հայպետհրատ, Երևան—Մոսկվա, 1947): Պոեմը թարգմանել են Մկրտիչ Խերանյանը և Սողոմոն Տարոնցին: Խմբագրել է Ավետիք Իսահակյանը:

ՄԵԾԱՀԱՆՃԱՐ ՊՈԻՇԿԻՆԸ (էջ 258)

Գրել է 1949 թ., Ա. Ս. Պուշկինի ծննդյան 150-ամյակի առթիվ:

ԿԱՐԵԼՈՒՖԻՆՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԷՊՈՍԸ (էջ 262)

Գրել է 1949 թ.: Հողվածը գրված է էպոսի առաջին հրապարակման հարյուրամյակի (1849—1949) առթիվ:

«Էդդա» — իսլանդ ժողովրդի դիցաբանական և հերոսական երգերի էպոսանման հավաքածո՝ 13-րդ դար:

«Միբելունգների երգը» — գերմանական ազգային էպոս՝ 13-րդ դար: Պիսիստրատ (մոտավորապես 600—527 թթ. մ. թ. ա.) — բռնակալ հին Հունաստանում:

Լոնգֆելո Հենրի Վոդսուորթ (1807—1882) — ամերիկացի բանաստեղծ և գրականագետ: Լոնգֆելոյի «Հայավաթի երգը» (1855) նշանավոր պոեմը Հյուսիսային Ամերիկայում ազգային էպոսի նման սիրված երկ է:

ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ (էջ 267)

Գրել է 1949 թ. Վալերի Յակովևիչ Բրյուսովի (1873—1924) ծննդյան 75-ամյակի առթիվ:

ՏԱՐԱՍ ՇԵՎՉԵՆԿՈ (էջ 271)

Գրել է 1954 թ.: Առաջաբանն է Տ. Շևչենկո՝ «Կոբլար» բանաստեղ-

ծությունների ժողովածուի, Երևան, 1954: Վարպետի երկերի ժողովածուներում հրատարակվում է առաջին անգամ:

ՀԱՎԵՐԺ ՍԻՐԵԼԻ ՏԵՐՅԱՆԸ (էջ 278)

Գրել է 1955 թ., Վահան Տերյանի մահվան 35-ամյակի տարելիցին:

ԽՈՎ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՐՁԱՆԻ ՄՈՏ (էջ 280)

Գրել է 1955 թ.:

ՏԵՐ-ՄԱՐՈՒՔՅԱՆ ԱՆԴՐԵԱՍ (1871—1919) — նշանավոր արձանագործ: Հեղինակ խաչատուր Աբովյանի առաջին հայտնի արձանի, որը կանգնեցված է Քանաքեռում, Խ. Աբովյանի տուն-թանգարանի առջև:

ԱՆՄԱՎ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ (էջ 283)

Գրել է 1953 թ. և կարդացել Երևանում, 1953 թ. Հովհ. Թումանյանի տուն-թանգարանի բացման առթիվ: Առաջին անգամ տպագրվել է Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված Իսահակյանի «Մեր գրականության անմահ վառքը» գրքույկում, Երևան, 1969 թ.:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ (էջ 285)

Առաջին անգամ տպագրվել է Ավ. Իսահակյանի «Մեր գրականության անմահ վառքը» գրքույկում, Երևան, 1969 թ.:

ԽՈՍՔ ԻՐ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻՆ (էջ 289)

Գրել է 1955 թ.: Առաջին անգամ Վարպետն այս խոսքն ասել է 1955 թ. հոկտեմբերի 30-ին Երևանում, իր ծննդյան 80-ամյակին նվիրված հոբելյանական հանդեսին:

ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (էջ 297)

Գրել է 1926 թ., Խորհրդային Հայաստան առաջին այցելության անմիջական տպավորության տակ: Առաջին անգամ տպագրվել է «Խորհրդային Հայաստան» թերթում, 1926 թ., № 275:

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ՌԵՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ (էջ 301)

Գրել է 1933 թ. ապրիլի 1-ին, Փարիզում: Կարդացել է Փարիզի հայ ուսանողական միության հանդեսում, 1933 թ.: Առաջին անգամ հրատարակվել է «Սովետական Հայաստան» ամսագրում, 1975, №10: Վարպետի երկերի ժողովածուի մեջ պետեղվում է առաջին անգամ:

ՄՐՏԱԳԻՆ ՈՂԶՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՌԱՊԱՆՑ
15-ԱՄՅԱԿԻՆ (էջ 305)

Գրել է 1935 թ. նոյեմբերի 5-ին Փարիզում, Խորհրդային Հայաստանի հիմնադրման 15-ամյակի առթիվ: Առաջին անգամ տպագրվել է «Գրական թերթ»-ում, 1935, №29:

ՆՐԱՆՅ ՄՈՏ ԵՎ ՄԵԶ ՄՈՏ (էջ 309)

Գրել է 1937 թ. հունվարին, Երևանում: Սովետական Հայաստան վերջնականապես տեղափոխվելուց հետո (1936 թ.) առաջին տպագիր ելույթն է:

ՄԱՆ ՀԵՆՐԻԽ (1871—1950) — գերմանացի գրող, հակաֆաշիստ:

ՄԱԼՐՈ ԱՆԴՐԵ (ծնվ. 1893 թ.) — ֆրանսիացի վիպասան, հնագետ և հուսարակական գործիչ, որպես օդաչու մասնակցել է Իսպանիայի քաղաքացիական պատերազմին և ֆրանսիական հակաֆաշիստական Դիմադրությանը:

ՌԵՆ ԼՅՈՒԴՎԻԳ (իսկական անունը Առնոլդ Ֆիտ ֆոն Հոլսենաու, ծնվ. 1889 թ.) — գերմանացի գրող, հակաֆաշիստ: 1928 թվից Գերմանիայի կոմունիստական կուսակցության անդամ: Մասնակցել է Իսպանիայի քաղաքացիական պատերազմին որպես կոմիստերների ջոկատների պիսվոր: Ապրում է ԳԴՀ-ում:

ՖՈՆ-ՕՍԵՅԿԻ ԿԱՌԼ (1889—1938) — գերմանացի առաջադեմ հրապարակախոս և լրագրող: Հակաֆաշիստական գործունեության համար 1938 թ. մահապատժի է ենթարկվել հիտլերյան համակենտրոնացման ճամբարում:

ՄՈՐԱՆ ՊՈԼ (ծնվ. 1888 թ.) — ֆրանսիացի գրող և դիվանագետ: Գրել է մի շարք վեպեր, նովելներ, նոթեր՝ «XX դարի իրոնիկա» ընդհանուր խորագրով:

ԿԱՐԳՈ ՖՐԱՆՍԻՍ (1886—1958) — ֆրանսիացի վիպասան և բանաստեղծ:

ՖՈՐ ՊՈԼ (1872—1960) — ֆրանսիացի բանաստեղծ, սիմվոլիստ:

ԻՄ ԱՁԱՏ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ (էջ 312)

Գրել է 1937 թ. ապրիլին:

ԿԻՐՊՈՏԻՆ ՎԱԼԵՐԻ ՅԱԿՈՎԼԵՎԻՉ (ծնվ. 1898 թ.) — ռուս սովետական գրականագետ, քննադատ և հրապարակախոս: 1932—1934 թթ. եղել է ՍՍՀՄ գրողների միության քարտուղար: Երևանում հանդես է եկել հայ արդի գրականությանը նվիրված ընդարձակ ելույթով, ուր անդրադարձել է նաև Իսահակյանի ստեղծագործությանը և բանաստեղծի անցած ուղուն:

ԲՈՒԴԴԱ (պայծառամիտ) — ըստ ավանդության հնդկական իշխանապն Սաքիա-Մունի կամ Սիթհարթա Գաուտամա: Ապրել է 563—483 թթ. մ. թ. ա.: Բուդդայական կրոնի և փիլիսոփայության հիմնադիր: Իսահակյանը մի շարք ստեղծագործություններ ունի գրված Բուդդայի կյանքի առասպելական մոտիվներով:

Բուդդիզմ (բուդդայականություն) — կրոն, որ քարոզում է տառապանքներից փրկություն՝ ցանկություններից հրաժարվելու և «բարձրագույն պայծառացման»՝ նիրվանայի հասնելու միջոցով: Առաջ է եկել Հնդկաստանում, ըստ ավանդության, հիմնադիրը Բուդդան է:

Հուդայիզմ — հրեական կրոն: Հրեական կրոնի բնորոշ առանձնահատկություններն են՝ մեկ միասնական աստծո՝ Յահվեի հավատը, մեսիայի (փրկչի) հավատը, հրեաների՝ աստծո ընտրյալը լինելու դոգման:

Պարսկական Մազդակ — կրոնա-փիլիսոփայական թուսմունք, որի հիմնական սկզբնաղբյուրը հին իրանական դուալիստական կրոն վրադաշտականությունն է (կորոսատրիզմը):

ՊԼԱՏՈՆ (մ. թ. ա. 428/427—347) — հին հույնական իդեալիստ-փիլիսոփա, Սոկրատի աջակերտը, օրյեկտիվ իդեալիզմի հիմնադիրը, հեղինակ ավելի քան 30 փիլիսոփայական դիալոգների («Սոփեստ», «Պարմենդիս», «Պետություն» և այլն):

ԼԵՆԻՆԻ ՄԱՀՎԱՆ ԼՈՒՐԻ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (էջ 318)

Գրել է 1939 թ. Երևանում, 1924 թ. վենետիկյան հուշի տպավորության տակ:

ԿՈՒԲԵԼԻԿ ՅԱՆ (1880—1940) — չեխ մեծ ջութակահար: Պրագայում անց է կացվում Կուբելիկի անվան ջութակահարների միջապային վերցույթ:

ԼԵՆԻՆԸ (էջ 320)

Գրել է 1939 թ. հունվարին: Առաջին անգամ տպագրվել է՝ «Գրական թերթ», 1939, № 4:

ԳՐԱԿԻՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ — Գրակոնո Տիբերիոս (163—132 մ. թ. ա.)

և Գրուկոս Գայ (153—121 մ. թ. ա.) — հին Հռոմի առաջադեմ և դեմոկրատ քաղաքական գործիչներ, որոնք ձգտում էին Հռոմում անցկացնել մի շարք առաջադեմ ռեֆորմներ: Տիրերիտանի սպանում են քաղաքական հակառակորդները, Գայը գոհվում է իր ղեկավարած գյուկիսյան ապստամբության ժամանակ:

ԼԵՆԻՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ (էջ 323)

Գրել է 1940 թ.: Առաջին անգամ տպագրվել է՝ «Գրական թերթ», 1940, № 11:

ՖԱՇԻՉՄԸ ՊԻՏԻ ԽՈՐՏԱԿՎԻ (էջ 325)

Գրել է 1941 թ. օգոստոսի 3-ին, Երևանում: Առաջին անգամ տպագրվել է՝ «Սովետական գրականություն», 1941, № 5—6:

ՎԻԼՀԵԼՍ II (1859—1941) — Գերմանիայի կայսր և Պրուսիայի թագավոր 1888—1918 թթ.:

ՌԵՆԱՆ ԷՌՆԵՍՏ (1823—1892) — ֆրանսիացի փիլիսոփա, բանասեր և կրոնի պատմաբան: Ռենանի նշանավոր «Հիշատակ կյանքը» գրքի մասին Իսահակյանը գրել է գրախնդարություն. տես՝ «Վտակ», 1908, Թիֆլիս № 94:

ՖՐԻԴՐԻԽ ՄԵԾ (1712—1786) — Պրուսիայի թագավոր 1740—1786 թթ.:

ՊՈՏՄԱՄԻ ԱԳՐԵՍԻՎ-ՌԵՍԿՅԻՈՆԵՐ ՈԳԻՆ — նկատի ունի 1911 թ. Պետերբուրգում Ռուսաստանի և Գերմանիայի միջև պարսկական գործերի վերաբերյալ կնքված Պոտսդամյան համաձայնագիրը:

ՀՈՒՄԱՆԻՍՏ ՎԱՅՄԱՐԻ ՓՈՒՍԱՐԵՆ — նկատի ունի Վայմարի սահմանադիր ժողովը (1919 լիետրվար—1920 մայիս)՝ հրավիրված Գերմանիայի «ժողովրդական լիազորների» սոցիալ-դեմոկրատական կառավարության կողմից: Այդ ժողովը 1919 թ. հունիսի 31-ին ընդունեց «Վայմարյան կոնստիտուցիա», որը հաստատեց Գերմանիայում կայսրության վերացումը և բուրժուական հանրապետության հիմնումը:

ԱԹԹԻԼԱ (ծննդ. թվ. անհայտ է — մահացել է 453 թ.) — հուների առաջնորդ 434-ից (եղբոր հետ): 445 թ. սպանելով իր եղբորը՝ Բելաշին, դարձավ միահեծան տիրակալ: Աթթիլայի օրոք հունների պետությունը հասավ իր հպորդության գագաթնակետին:

ՄԱՔԻԱՎԵԼ ՆԻԿՈԼՈ ԳԻ ԲԵՐՆԱՐԴՈ (1469—1527) — իտալացի փիլիսոփա և քաղաքական գործիչ:

ՑԵՉԱՐ ԲՈՐՉԻԱ — Մաքիավելու հիմնական աշխատության՝ «Իշխան»-ի (1513) հերոսը, նրա փիլիսոփայական գաղափարների արտահայտիչը:

ԲԵՐԳՍՈՆ ՀԱՆՐԻ (1859—1941) — ֆրանսիացի իդեալիստ փիլիսոփա, ինտուիտիվիզմի հիմնադիրը:

ՍՈՐԵԼ ԺՈՐԺ (1847—1922) — ֆրանսիացի սոցիոլոգ, անայվսոսին-գիկալիզմի տեսաբան:

ԶԵՄՍ ՎԻՅԱՄ (1842—1910) — ամերիկացի հոգեբան և իդեալիստ փի-լիսոփա, պրագմատիզմի խոշորագույն ներկայացուցիչը:

ԳՈՐԲԻՆՈ ԺՈՋԵՖ ԱՐԹՈՒՐ (1816—1882) — ֆրանսիացի սոցիոլոգ, ռասայական տեսության հիմնադիրներից, դիվանագետ և գրող, Նապո-լեոն III-ի գործակալը:

ԶԵՄԲԵՐԼԵՆ <ՌՈՍՏՈՆ ՍՏՅՈՒԱՐՏ (1855—1927) — ռուսոս-սոցիո-լոգ: Ծագումով անգլիացի, ապրել է Գերմանիայում: Վիլհելմ II կայսրի մերձակիցը, ֆաշիզմի ռասիստական տեսության նախակարապետը:

ԱՄՈ Օ., ՌՈՋԵՆԲԵՐԳ — ֆաշիստական գաղափարախոսության տեսա-բաններ, նացիոնալ-սոցիալիստական կուսակցության անդամներ: Դատա-պալուովել են Նյուրնբերգյան պրոցեսում:

ՆՈՐ ՏԱՐՎԱ ՇԵՄՔԻՆ (Էջ 335)

Գրել է 1942 թ., Երևանում: Առաջին անգամ տպագրվել է՝ «Սովետա-կան Հայաստան», 1942, № 1:

ՄԱԿ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՕԿՈՒՊԱՆՏՆԵՐԻՆ (Էջ 337)

Գրել է 1942 թ., Երևանում:

<ԵՐԴԵՐ ՅՈՒՆ ԳՈԹՖՐԻԴ (1744—1803) — գերմանացի լուսավորիչ փիլիսոփա, գրող, զրականագետ: Հիմնական աշխատությունն է՝ «Գաղա-փարներ մարդկության պատմության փիլիսոփայության շուրջը» (1784—1791):

ՇԻԼԼԵՐ ՅՈՒՆ ՖՐԻԴՐԻԿՍ (1759—1805) — գերմանացի հանճարեղ բանաստեղծ և դրամատուրգ, մեծ հումանիստ:

ԿԱՆՏ ԻՄԱՆՈՒԻԼ (1724—1804) — գերմանացի մեծ փիլիսոփա և գիտնական, գերմանական կյասիկ իդեալիզմի նախահայրը:

<ԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ <ԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ (Էջ 339)

Գրել է 1942 թ., Երևանում: Առաջին անգամ տպագրվել է՝ «Սովե-տական զրականություն», 1942, № 5—6:

ԲԻՄՄԱՐԿ ՕՏՏՈ (1815—1898) — գերմանացի իշխան, պետական գործիչ և դիվանագետ: Նրա օրոք տեղի ունեցավ Գերմանիայի միավո-րուժը Պրուսիայի զլխավորությամբ: Գերմանիայի կանցլեր (1871—1890): Ծայրահեղ փիլիսոփա և հետադիմական հայացքների քաղաքական գործիչ:

Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը — 1878 թվի փետրվա-րին Ստամբուլի մոտ՝ Սան-Ստեֆանո վայրում Ռուսաստանի և Թուրքիայի

միջն կնքվեց խնդաղ պայմանագիր, որը նշանավորեց 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտը: Ըստ այդ պայմանագրի Թուրքիայի լծի տակ գտնվող պավոն ժողովուրդները ստանում էին անկախություն, իսկ համաձայն 16-րդ հոդվածի Թուրքիան պարտավորվում էր Արևմտյան Հայաստանում անցկացնել ռեֆորմներ և երաշխավորել ավտոնոմ իրավունքներ:

Բեռլինի ժողովի 61-րդ հոդվածը — Անգլիան և Ավստրո-Հունգարիան, չուպենայով հաշվի առնել Սան-Ստեֆանոյի պայմանագրի համաձայն Ռուսաստանի ստացած արտոնությունները, Գերմանիայի համաձայնությամբ 1878 թ. (հունիս-հուլիս) հրավիրեցին Բեռլինի կոնգրեսը, ուր ռազմական և դիվանագիտական ճնշման ներքո ստիպեցին Ռուսաստանին հրաժարվել Սան-Ստեֆանոյի պայմանագրով ստացած նվաճումներից: Այս կոնգրեսում, ուր նախագահում էր կանցլեր Բիսմարկը, Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը վերափոխվեց Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի, որը և հիմք դարձավ հայ ժողովրդի հանդեպ Թուրքիայի ջարդարարական քաղաքականության:

ՅՈՆ ԴԵՐ-ԳՈՂՅ—գերմանական կայսերական բանակի գեներալ: 1883 թ. գլխավորել է գերմանական ռազմական միսիան Թուրքիայում՝ վերակառուցելու թուրքական բանակը «պրուսական ոգով»: 1909 թվից Թուրքիայի Գերագույն ռազմական խորհրդի փոխնախագահ: 1914 թվից գերմանա-թուրքական կոմիտեի (Բեռլին) նախագահ: Արևմտահայության բռնազաղթի գաղափարի առաջին հեղինակներից:

ԼԻՄԱՆ ֆոն ՍԱՆԴԵՐՄ—գերմանական կայսերական բանակի գեներալ, Դեր-Գուլցի փոխանորդը: 1913 թ. գլխավորեց գերմանական ռազմական միսիան Թուրքիայում: 1914 թ. սկզբից իր ձեռքում կենտրոնացրեց թուրքական պինված ուժերի հրամանատարությունը: Հայերի տեղահանության ու կոտորածների ակտիվ կազմակերպիչ, «Հինգ տարի Թուրքիայում» գրքի հեղինակ:

ՎԱՆԿԵՆՀԱՅՄ—Գերմանիայի դեսպան Թուրքիայում: Գերմանական իմպերիալիզմի շահերի գործակալ:

ԻՄՀՈՖ—գերմանական կայսերական բանակի գեներալ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին եղել է թուրքական բանակի ռազմական խորհրդի անդամ:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԺՈՂՈՎՈՒԴՆԵՐԻ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆՍԱՍԱՆԵԼԻ Է (էջ 346)

Գրել է 1942 թ., Երևանում:

ԶԱՔԱՐԻԱ ՊԱՏՄԻՉ կամ ԶԱՔԱՐԻԱ ԱԳՈՒԼԵՅԻ (1630—1691) — վաճառական-ճանապարհորդ, ծագումով Ագուլիսից, հեղինակ հայտնի «Օրագրի»:

ՇԱՀ-ԱԲԱՍ — ԱԲԱՍ I (1557—1628) — պարսից շահ (1587—1628):

ԱՂԱ ՄԱՀՄԵՂԻ ԽԱՆ ՂԱԶԱՐ (1742—1797) — Իրանի ջահ 1796-ից, Ղաջարական դինաստիայի հիմնադիրը:

ՄԵՐ ԲԱՂՁԱՆՔՆԵՐԸ (էջ 350)

Գրել է 1942 թ., Երևանում, Հոկտեմբերյան հեղափոխության 25-ամյակի առթիվ:

ՀԱՂԹԱՆԱԿԸ ՊՐՈԳՐԵՍԻ ԿՈՂՄՆ Է (էջ 352)

Գրել է 1942 թ., Երևանում:

ՓԱՌԱՀԵՂ ՏԱՐԵԴԱՐԶ (էջ 356)

Գրել է 1943 թ., Երևանում, կարմիր բանակի 25-ամյակի առթիվ: Առաջին անգամ տպագրվել է՝ «Սովետական գրականություն», 1943, № 2:

ՀԱՂԹԱՆԱԿՆ ԱՐԴԱՐ ԳՈՐԾԻ ԿՈՂՄՆ Է (էջ 360)

Գրել է 1943 թ., Երևանում:

ՍԱՍՈՒՆՑԻ ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՄՈՏ (էջ 362)

Գրել է 1943 թ.: Իսահակյանը սերտորեն կապված էր Թալինի ջըրջաթի աշխատավորության հետ, հաճախ էր հյուրընկալվում սասունցիների մոտ: Հոդվածն առաջին անգամ տպագրվել է «ԲԳԿԲ Մարտիկ» թերթում, 1943, №72, Վարպետի երկերի ժողովածուի մեջ տպագրվում է առաջին անգամ:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 23-ՐԴ ՏԱՐԵԴԱՐԶԻՆ (էջ 365)

Գրել է 1943 թ., Երևանում:

ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՐԾԱՆՔՆ ՈՒ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ (էջ 370):

Գրել է 1943 թ. Սովետական Հայաստանի գիտությունների ակադեմիայի բացման առթիվ:

ՄՂԶԱՎԱՆՋԸ ՎԵՐՋԱՅՈՎ... (էջ 374)

Գրել է 1945 թ., Երևանում, Հայրենական պատերազմի հաղթական ավարտի առթիվ:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 25-ԱՄՅԱԿԸ (էջ 376)

Գրել է 1945 թ., Երևանում: Առաջին անգամ տպագրվել է՝ «Սովետական Հայաստան» (ամսագիր), 1945, № 5:

ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇՅԱՆ (էջ 381)

Գրել է 1946 թ. փետրվարի 22-ին, Երևանում:

ՄԱՆՈՒՇՅԱՆ ՄԻՍԱՔ (1906—1944) — ծնվել է Թուրքիայում: Բանաստեղծ-հակաֆաշիստ, ֆրանսիական Դիմադրության հերոս: Հակաֆաշիստական ընդհատակյա «Մանուշյանի խումբ» ինտերնացիոնալ ջոկատի հրամանատար, Փարիզի գերմանական կոմենդանտի սպանության կազմակերպիչ: 1944 թ. փետրվարի 21-ին գերմանացիների կողմից գնդակահարվել է Փարիզում:

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՆՈՒԹՅԱՆ ՊԱՆԾԱԼԻ 30-ԱՄՅԱԿԸ (էջ 386)

Գրել է 1947 թ., Երևանում:

ՈՂՋՈՒՅՆ ՄՈՍԿՎԱՅԻ ՓԱՌԱՊԱՆԾ 800-ԱՄՅԱԿԻՆ (էջ 390)

Գրել է 1947 թ., Երևանում:

ԲԱԺԵՆՈՎ ՎԱՍԻԼԻ ԻՎԱՆՈՎԻՉ (1737—1799) — ռուս ճարտարապետ ռուս ազգային ճարտարապետության հիմնադիրներից:

ԿՈՋԱԿՈՎ ՄԱՏՎԵՅ ՖՅՈՒՌՐՈՎԻՉ (1738—1812) — ռուս ճարտարապետ, ռուսական դասական ճարտարապետության ինդուրագույն ներկայացուցիչ:

ԻՎԱՆ IV (1530—1584) — Ռուսաստանի թագավոր 1547 թվից: Վասիլի III-ի որդին: Պատմության մեջ հայտնի է Իվան Ահեղ անունով:

ԼԱՋՐԱՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ — հայկական բարձրագույն ուսումնական հաստատություն, հիմնադրվել է 1814 թ. Մոսկվայում, Հովհաննես Լապարյանի (1735—1801) ընտանիքի կողմից: Մեծ դեր է խաղացել հայ գրականության ու մշակույթի վարճացման, ինչպես նաև հայ-ռուսական մշակույթների բարեկամական կապերի ամրապնդման գործում: 1921 թ. վերափոխվել է Արևելյան լեզուների ինստիտուտի:

ԽՈՍՔ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ (էջ 393)

Գրել է 1949 թ.: Իսահակյանի ելույթն է հաղաղասերների համամիութենական կոնֆերանսում, որը տեղի ունեցավ Մոսկվայում, 1949 թ. օգոստոսին: Ելույթը բարձր արձագանք գտավ կոնֆերանսի պատգամավորների մոտ, այնուհետև տպագրվեց՝ «Պրավդա», 1949 թ., 30 օգոստոսի, № 242:

ՊԱՅՔԱՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՐԶԻԳՆԵՐԻ ԴԵՄ
ՀԱՆՈՒՆ ԱՌԱՋԱԴԵՄ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ (էջ 397)

Գրել է 1950 թ.:

ԽՈՍՔ ՏԱՐԵՄՈՒՏԻ (էջ 400)

Գրել է 1950 թ.:

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ (էջ 403)

Գրել է 1954 թ.: Երևանում 1954 թ. լույս տեսած «Ուկրաինական քնար» ժողովածուի առաջաբանն է:

ՍԿՈՎՈՐՈՂԱ ԳՐԻԳՈՐԻ ՍԱՎԱԵՎԻԶ (1722—1794) — ուկրաինացի բանաստեղծ-փիլիսոփա, լուսավորիչ դեմոկրատ: Սկովորոզայի բանաստեղծությունների մեծ մասը ժողովված է «Աստվածային երգերի այգին» շարքում:

ՈՒԿՐԱԻՆԿԱ ԼԵՍՅԱ (իսկալյան անունը՝ Լարիսա Պյոտրևնա Կոսաչ-Վվիտկա 1871—1913) — ուկրաինացի բանաստեղծուհի, առաջադեմ, դեմոկրատ մտավորական:

ՖՐԱՆԿՈ ԻՎԱՆ ՅԱԿՈՎԼԵՎԻԶ (1856—1916) — ուկրաինացի գրող, գիտնական և հասարակական գործիչ: Տ.Շևչենկոյի հետևորդը: Պայքարել է լեհական և ավստրիական զավթիչների դեմ: Ապրել է Արևմտյան Ուկրաինայում:

ԶՐՈՒՅՑ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (էջ 405),

Գրել է 1955 թ.:

ԲԱՐԻ ՃԱՆԱՊԱՐՀ (էջ 408)

Գրել է 1956 թ.: Իսահակյանի ուղերձն է Մոսկվա՝ հայ արվեստի տասնօրյակի մեկնող մշակույթի գործիչներին:

ՓԱՌՔ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻՆ (էջ 411)

Գրել է 1957 թ. հոստենբերի 14-ին՝ Երկրագնդի առաջին արբանյակի արձակման առթիվ: Վարպետի գրած վերջին հոդվածն է:

ՀԱՅՐԵՆԻՔԸ ԱՄԵՆ ԲԱՆԻՑ ԹԱՆԿ Է (էջ 412)

Գրել է 1957 թ. հոկտեմբերին: Իսահակյանի ուղերձն է սովետական ժամուկներին: Առաջին անգամ տպագրվել է՝ «Պիոներական պրավդա», 1957, 22 հոկտեմբերի, № 85, Վարպետի մահից հինգ օր հետո:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Խ մ հ ու շ ե ռ ի ց

Ղևոնդ Ալիշան	7
Խրիմյան Հայրիկ	15
Պերճ Պոռոջյան	24
Ղազարոս Աղայան	32
Մուրացյան	39
Հովհաննես Հովհաննիսյան	44
Հովհաննես Թումանյան	50
Կոմիտասի անմահ հիշատակին	66
Ճարտարապետ Թորոս Թորամանյան	70
Լ ե ո	80
Նար-Դոս	87
Ալեքսանդր Սպենդիարով	91
Գևորգ Բաշինջաղյան	96
Երկու խոսք ընկերոջս հիշատակին	100
Հակոբ Հակոբյան	102
Անզուգական Թամանյանի հիշատակին	107
Վահան Տերյան	112
Շուշանիկ Կուրդինյան	121
Չարենցի հետ Վենետիկում	124
Սարյանն ամբողջ աշխարհինն է	126

Ժ օ դ ո վ ու ը ղ և գ ռ ա կ ա ն ու թ Յ ու ն

Հովհաննես Թումանյանի «Գիքորը»-ը	131
Հովհաննես Թումանյան	133
Հովհաննես Մասեհյան	137
Ակսել Բակունցի «Սև ցելերի սերմնացանը»	140
Ա. Ս. Պուշկինի մահվան հարյուրամյակին	142
Մաքսիմ Գորկու ծննդյան 70-ամյակին	148
Հանդիպում Մաքսիմ Գորկու հետ	152
Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին	156
Խաչատուր Աբովյանը և «Վերք Հայաստանի»-ն	172

Խոսք հոբեյանական հանդեսին (Երևանում)	179
Խոսք հոբեյանական հանդեսին (Լենինականում)	184
Մտքեր հայ գրականության մասին	190
Հայ գրականության տասնօրյակը Մոսկվայում	194
Կռիլովի առակները	200
Անտոն Չեխով	208
Դեմիրճյանի «Վարդանանք»-ը	217
Անմահ Սայաթ-Նովա	223
Երվանդ Շահազիզ	226
«Ուլենշպիգել» վեպի մասին	230
Բացման խոսք Հայաստանի գրողների երկրորդ համագումարում	239
Միքայել Նալբանդյանի անմահ հիշատակին	247
Նիզամի Գյանջևի	251
Մեծահանճար Պուշկինը	258
Կարելո-Ֆիննական ազգային էպոսը	262
Վալերի Բրյուսովի հիշատակին	267
Տարաս Շևչենկո	271
Հավերժ սիրելի Տերյանը	273
Խոհ Աբովյանի արձանի մոտ	280
Անմահ Թումանյանը	283
Հովհաննես Թումանյանի մասին	285
Խոսք իր ծննդյան 80-ամյակի հոբեյանական հանդեսին	289

Ժ ո զ ո վ ը ղ ի հ ե տ

Խորհրդային Հայաստանում	297
Փարիզի հայ ուսանողական միությանը	301
Արտագին ողջույն Խորհրդային Հայաստանի փառապանծ 15-ամյակին	305
Նրանց մոտ և մեզ մոտ	309
Իմ ազատ և ստեղծագործ ժողովրդի հետ	312
Լենինի մահվան լուրի տպավորությունը	313
Լենինը	320
Լենինի ծննդյան 70-ամյակին	323
Ֆաշիզմը պիտի խորտակվի	325
Նոր տարվա շեմքին	335
Մահ գերմանական օկուպանտներին	337
Հայրենական պատերազմը և հայ ժողովուրդը	339
Անդրկովկասի ժողովուրդների եղբայրությունը անսասանելի է	346
Մեր բաղձանքները	350
Հաղթանակը պրոգրեսի կողմն է	352
Փառահեղ տարեդարձ	356
Հաղթանակն արդար գործի կողմն է	360

Մասունցի կոլտնտեսականների մոտ	362
Սովետական Հայաստանի 23-րդ տարեդարձին	365
Մեր ժողովրդի պարծանքն ու հպարտությունը	370
Մղձավանջը վերջացավ	374
Սովետական Հայաստանի 25-ամյակը	376
Միսաբ Մանուշյան	381
Հոկտեմբերյան հեղափոխության պանծալի 30-ամյակը	386
Ողջույն Մոսկվայի փառապանծ 800-ամյակին	390
Խոսք խաղաղության կողմնակիցների համամիութենական կոն- ֆերանսում	393
Պայքար պատերազմի հրձիգների դեմ՝ հանուն առաջադեմ կուլտուրայի	397
Խոսք տարեմուտի	400
Ուկրաինացի բարեկամներին	403
Զրույց գիտության մասին	405
Բարի ճանապարհ	408
Փա՛ռք սովետական գիտնականներին	411
Հայրենիքը ամեն բանից թանկ է	412
Ծանոթագրություններ	413

Ավետիք Խահակյան
Երկերի մողովածու վեց հատորով
հատոր 5-րդ

Аветик Исаакян
Собрание сочинений
в шести томах том V
Статьи
воспоминания.

(На армянском языке)


Издательство «Советакан грох», ул. Теряна, 91,
Ереван, 1977

Հրատ. խմբագիր՝ Լ. Ն. Արապյան
Նկարիչ՝ Կ. Թ. Տիրատուրյան
Գեղ. խմբագիր՝ Ան. Վ. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան
Վերստուգող սրբագրիչ՝ Է. Ա. Սեդրակյան

Հանձնված է արտադրության 2/III 1976 թ.: Ստորագրված
տպագրության 5/1 1977 թ.: Թուղթ՝ տպագրական №
84×108¹/₃₂, հրատ, 17,2 մամ.+1 ներդիր, տպ. 13,62 մամ.
22,89 պրայմ. մամ.: Պատվեր 527: ՎՖ 08034: Տպաքանակ 60.
Գինը՝ 2 ռ. 08 կ.:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9,
Տերյան 91: ՀԿԿ Կենտկոմի հրատարակչության տպարան,
Երևան—9, Ավ. Բահակյան փող. № 28.

Типография издательства ЦК КП Армении.
Ереван-9, ул. Ав. Исаакяна, № 28.



10

